

**ՈՍԿԵԲԵՐԱՆ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ**

# **ԾԱՂԱԿԱՔԱՂ**

**(Հատրնաիր յօդուածներ, դասախօսութիւններ  
եւ բանախօսութիւններ)**

**ԱՆԹԻԼԻԱՍ  
2006**

---

*Սոյն հատորը կը հրատարակուի մեկնաստութեամբը*  
**ԳԱԼՈՒՍ ԿԻԼՊԷՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ**  
*This volume is published with the generous donation of the*  
**CALOUSTE GULBENKIAN FOUNDATION**

*Պարտք կը զգամ շնորհակալութիւն յայրնել  
Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, այս գիրքին  
տպագրութեան առիթով իր ցոյց տուած ազնիւ վե-  
րաբերմունքին համար, ինչպէս նաև «Գալուստ Կիւ-  
պլենկեան Հիմնարկութեան» եւ անոր Հայկական  
Բաժնի Տնօրէն Դոկտ. Զաւէն Եկատեանին իր ցու-  
ցաբերած ջերմ ու գնահատելի մօտեցումին համար:*

*Շնորհակալութիւն կը յայրնեմ նաև Կաթողի-  
կոսարանի Տպարանի Տնօրէն՝ Գեորգ. Տ. Նորայր  
Ծ. Վրդ. Աշրգեանին իր բարեացակամ օժանդակու-  
թեան համար գիրքին տպագրութեան առիթով:*



*Կնոջս, զաւսկներուս,  
թոռնիկներուս եւ թոռնուհիներուս*



## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓ ԳԻԾԵՐ ՈՍԿԵԲԵՐԱՆ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆԻ

Ոսկերերան Արգումանեան ծնած է 1924-ին Թուրքիա, Եօզկապոցի ծնողներէ: Տակաւին 40 օրուայ մանուկ՝ փոխադրուած է իր ծնողներուն հետ Պէյրութ:

1958-ին ամուսնացած է նոյնպէս Եօզկապոցի Շաքէ Մահպետեանին հետ եւ ունեցած է չորս զաւակներ:

Վկայուած է ֆրանսական Սէն Ժոզէֆ համալսարանի Արեւելեան դպրութեանց կանառէն սրանալով հայագիտական եւ Արեւելեան ընկերաբանութեան վկայականներ: Ապա՝ շարունակելով իր ուսումը սրացած է նոյն համալսարանի Իրաւաբանական եւ Տնտեսագիտական բաժանմունքէն Առեւտրական Հասարակութիւններու վարչագիտական վկայականը:

2 րարի պաշտօնավարելէ յետոյ իբրեւ ուսուցիչ Յիսուսեան հայրերու Ս. Գրիգոր Լուսաւորիչ Ճեմարանի մէջ, աշխատած է կարճ ժամանակուայ համար ֆրանսական հոգաբարութեան ելեւմտական բաժնին մէջ:

1945-1953 պաշտօնավարած է Սէն Ժոզէֆ համալսարանի մէջ իբրեւ պարասխանաբար քարտուղար Արեւելագիտութեան եւ Արեւելեան ընկերաբարութեան բաժանմունքին, ապա 1953-1975 վարած է նոյն համալսարանի իրաւաբանական, տնտեսագիտական եւ Առեւտրական հասարակութեանց վարչագիտութեան ճիւղերու պարասխանաբար ընդհանուր քարտուղարի պաշտօնը:

1975-ին նշանակուած է նոյն համալսարանի մարդկային եւ ընկերային գիտութեանց բոլոր ճիւղերուն վարչական տնօրէն administrateur եւ միեւնոյն արեւն անդամ համալսարանի տնօրէն խորհուրդին:

Հանգստեան կոչուած է փարիքի բերումով, 1997-ին: Համալսարանի Տնօրէն Խորհուրդը իրեն փուած է ցմահ պատուակալ Վարչական Տնօրէնի փիպոդուր:

Ոսկերերան Արգումանեան իր ընթացիկ աշխատանքներու կողքին, 1956-էն ի վեր ունեցած է ազգային բեղուն գործունէութիւն:

Յաջորդաբար նշանակուած է Լիբանանի թեմի Տնտեսական Խորհուրդի անդամ եւ վարած է մէկէ աւելի անգամներ ազգային վարժարաններու Ուսումնական Խորհուրդի արեւնապետութիւնը: Բազմիցս ընտրուած է Ազգ. Վարչութեան Քաղաքական Ժողովի արեւնապետ: 1963-էն ի վեր եղած է Լիբանանի թեմի պարգամաւոր Մեծի Տանն Կիլիկիոյ Ազգային Ընդհանուր Ժողովին եւ 1965-էն ի վեր անդամ է Լիբանանի թեմի Ազգային Գաւառական Ժողովին, որուն արեւնապետը ընտրուած է 1987-էն մինչեւ 1995:

1963-էն սկսեալ ընտրուած է բազմաթիւ անգամներ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ եւ 2003-ին ընտրուած է նոյն վարչութեան փոխ արեւնապետ: Ան նաեւ երկար փարիներէ ի վեր կը վարէ Կաթողիկոսարանի պատուակալ ընդհանուր հաշուեքննիչի պաշտօնը:

Արեւնապետն է Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կեդրոնի Վարչութեան: Արեւնապետ եղած է Համազգայինի Կրթական Հասարակութիւններու խնամակալութեան եւ երկար փարիներէ ի վեր անդամ է Հաւորդար Գարակէօզեան մանկապարանեկան բժշկա-ընկերային հասարակութեան Լիբանանի Խնամակալութեան:

Ոսկերերան Արգումանեան, չորս անգամ իբրեւ պարգամաւոր, մաս կազմած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Վեհափառ Հայրապետներու կողմէ առաքուած պարգամաւորութեան ի Ս. Էջմիածին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Վեհափառ Հայրապետին մօտ, երկու Աթոռները յուզող փարակարծութիւնները քննարկելու առաջադրութեամբ:

1969-ին պարգամաւոր նշանակուած է Ն.Ս.Օ.Տ.Տ. Խորէն Ա.



Կաթողիկոսի կողմէ, 1986-ին եւ 1988-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի որոշումով, իսկ 1995-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի որոշումով:

1985-ին մասնակցած է Գարեգին Բ. Կաթողիկոսի որոշումով Յովհաննէս-Պօղոս Բ. Սրբազան Պապին փրուած այցելութեան պատուիրակութեան, որմէ ստացած է յիշարակի մեքալ:

1989-էն ի վեր մաս կազմած է նաեւ Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700-ամեակի փօնակարարութեանց կեդրոնական Յանձնախումբին, Էջմիածնի մէջ, լուսահոգի Մեթր Պապիկեանին հետ, իբրեւ աշխարհական ներկայացուցիչներ Կիլիկեան Ս. Աթոռին:

Մասնակցած է զանազան միջազգային եւ միջ-եկեղեցական համագումարներու իբրեւ աշխարհական ներկայացուցիչ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան:


Աշխարակցած է հայ թէ օտար թերթերու եւ պարբերականներու յարկապէս ազգային, կրօնական, փնտեսական եւ ընկերային կալուածներու մէջ:

Յօդուածներ ունի Ազդակ, Հասկ, Սփիւռք, Մասիս, L'Orient-Le Jour, La Revue du Liban, Travaux et jours եւ Փարիզ հրատարակուող Direct թերթերու եւ պարբերականներու մէջ:

Իր համալսարանական ծառայութիւններուն համար, Ոսկերեան Արզումանեան, 1974-ին պարգեւատրուեցաւ Լիբանանեան պետութեան կողմէ Մայրիներու Ազգային կարգի «Ասպետ»ի շքանշանով եւ 1997-ին Լիբանանի Հանրապետութեան նախագահը զինքը պարգեւատրեց Մայրիներու Ազգային կարգի «Մպայի» շքանշանով. 1996-ին ստացաւ նաեւ Սէն Ժոզէֆ համալսարանի Recteur-ի ձեռամբ համալսարանի Արժանեաց շքանշանը:

19 Մարտ 2004-ին իր ազգային ծառայութեան համար, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը իրեն շնորհեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բարձրագոյն ասպիճանի «Իշխանի Կարգի Շքանշան»:





*Տէր և Տիկին Ոսկերեան և Ծաբէ Արզումանեան (1969)*



**Ա Մ Ա Ս**

**ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ**



## Ա. Մ Ա Ս

### ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

- *Հայր Արամ Քէչիչեանի, ներկայիս Կաթողիկոս, ժամանումը Ամերիկայէն իբրեւ նորընտիր Առաջնորդական Տեղապահ Լիբանանի թեմին* ..... 19
- *Գարեգին Բ. Վեհափառի անդրանիկ այցելութիւնը Ս. Նշան եկեղեցի եւ Լիբանանի Ազգային Իշխանութեան Քաղաքի Առաջնորդարանի մէջ* ..... 22
- *Հայեցի դաստիարակութիւնը եւ առհասարակ հայ մշակոյթի արժէքներուն զարգացումն ու տարածումը մեր վարժարաններէն ներս*..... 25
- *Դպրեվանքի նորակառոյց շէնքին բացման հանդիսութիւն* ..... 42
- *Ազգային վարժարաններու ներկայ իրավիճակը (1968)*..... 45
- *Տասնամեակի հանդիսութիւն նուիրուած Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին* ..... 60
- *Յիշատակի հանդիսութիւն Գալուստ Կիւլպէնկեանի մահուան 10-րդ տարելիցին առթիւ*..... 75
- *Դպրեվանքի յիսնամեակի հանդիսութիւն (1982)* ..... 83
- *Reception organisée en l'honneur de S.E. Khatchig Babikian, à l'occasion de sa décoration par Mr. Christian Graeff, Ambassadeur de France au Liban* ..... 93
- *Փրոֆեսէօր Խաչեր Գալուստեանի յիշատակին* ..... 98

- <i>Բանախօսուածիւն ՀԵ ՀՈՄ-ի հրաւէրով...</i> .....	101
- <i>Հայոց եկեղեցի եւ պետութիւն (միջազգային գիտաժողով- խորհրդակցութիւն) Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Սահմանադրութիւնը</i> .....	108
- <i>Présentation de l'ouvrage de Mlle Sylvia Adjemian sur les manuscrits arméniens enluminés du Catholicosnat arménien de Cilicie</i> .....	122
- <i>Հայաստանի Ա. Անկախութեան 76-րդ տարեդարձը</i> .....	125
- <i>Էջմիածին եւ Անթիլիաս շփումներ...</i> .....	137
- <i>Յեղասպանութեան 60-ամեակի առիթով արտայայտուած խօսք</i> .....	141
- <i>Ազգային դիմագիծի պահպանում եւ հայ համալսարանականէն ակնկալուած վերաբերում</i> .....	143
- <i>Ի՞նչ նպաստ կրնայ բերել լիբանանահայութիւնը Սփիւռքի մեր գաղութներու ազգային դիմագիծի պահպանման մէջ...</i> .....	149
- <i>Հակիրճ ծանօթութիւններ վարչագիտութեան դերին մասին...</i> .....	163
- <i>Յիշատակի խօսք Մեթր Խաչիկ Պապիկեանի մահուան քառասունքին առիթիւ</i> .....	183



ԱՐԱՄ ՀԱՅՐ ՍՈՒՐԲ ՔԷՇԻՇԵԱՆԻ  
(ՆԵՐԿԱՅԻՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ)  
ԺԱՄԱՆՈՒՄԸ ԱՄԵՐԻԿԱՅԷՆ ԻԲՐԵԻ  
ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԼԻԲԱՆԱՆԻ ԹԵՄԻՆ

Արժանապատիւ Հայրեր,  
Յարգելի ժողովականներ

*Սրտի խոր գոհունակութեամբ կ'ողջունենք ժամանումը եւ ներկայութիւնը մեր մէջ Գերաշնորհ Հայր Արամ վարդապետ Քէշիշեանի որ ընդառաջելով Ազգ. Վարչութեան Խառն Ժողովի փափաքին անյապաղ վերադարձաւ Միացեալ Նահանգներէն ուր կը պատրաստէր իր Տոբթ. թեզը ստանձնելու համար իր նոր պատասխանատուութիւնները:*

*Լիբանանի թեմը ինչպէս բոլորիս ծանօթ է, Կիլիկիոյ կաթողիկոսութեան ամենակարեւոր թեմն է իր բազմաթիւ եկեղեցիներով դպրոցական ցանցով, ժողովուրդով եւ ազգային, եկեղեցական, մշակութային եւ քաղաքական կեդրոններով:*

*Լիբանանի վերջին ցաւալի դէպքերը որոնք հիմնովին ցնցեցին զայն պատճառ դարձան որ ազգային կեանքը նաեւ խանգարուի իր խաղաղ եւ շինարար ընթացքին մէջ: Ունեցանք շուրջ 60 մեռելներ եւ 200 վիրաւորներ: Բազմաթիւ եկեղեցիներ, կրթական օճախներ, բնակարաններ, խանութներ, արհեստանոցներ եւ արդիւնաբերական կեդրոններ վնասուեցան եւ կամ ամբողջովին քանդուեցան:*

*Այսօր երբ ազգային եկեղեցական եւ քաղաքական պատասխանատու մարմինները մեր վեհափառ հայրապետներու հովանաւորութեամբ եւ հոգածութեամբ թուած են վերակառուցումի եւ վերակենդանութեան աշխատանքներուն աւելի քան երբեք թեմը կարիքը կ'զգայ մնայուն հանգամանքով, բոլորանուէր եւ արդիւնաւէտ առաջնորդի կամ տեղապահի:*

Առաջնորդական նորրնտիր տեղապահ Գերաշնորհ Արամ վարդապետ Քէչիշեանը ծանօթ է կ'ենթադրեմ ձեզմէ շատերուն: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբան, ան ընթացաւարտ է Պէյրուսի Ամերիկեան Համալսարանի աստուածաբանական ճիւղէն Մ.Ա. տիտղոսով եւ ներկայիս կը պատրաստէ Ամերիկայի մէջ իր տքթորայի թեզը:

Ան վարած է պատասխանատու պաշտօններ: Եղած է «ՀԱՍԿ» պաշտօնաթերթի տնօրէն, ապա կաթողիկոսութեան միջ-եկեղեցական յարաբերութիւններու գրասենեակի տնօրէն, պաշտօն զոր կը շարունակէ տակաւին վարել: Մասնակցած է բազմաթիւ միջազգային համագումարներու եւ ժողովներու ուր առիթը ունեցած է ներկայացնելու հայ ժողովուրդի եկեղեցական եւ մշակութային արժէքները եւ անոր ներկայ ձգտումները:

Վստահ ենք որ, շնորհիւ ակադեմիական իր բարձր պատրաստութեան, իր երիտասարդական կորովին, հաղորդական խառնուածքին եւ անձնական գնահատելի այլ արժէքներուն պիտի կարենայ լաւագոյն արժեւորել ազգային իշխանութեան յոյսերը:

Այս առիւտ շնորհակալութիւն կը յայտնեմ արժանապատիւ տէր Վրթանէս աւագ քահանայ թոնթեանին որ նուիրումով կատարեց ցարդ տեղապահի պաշտօնը:

Թոյլ տուէք, յարգելի ժողովականներ որ յարգանքի եւ երախտագիտութեան խօսք ուղղեմ, յանուն ազգային իշխանութեան, մեր բազմիցս երախտաւոր, հոգելոյս, Տաճատ Արք. Ուրֆալեանի անմուռաց յիշատակին որուն ժրաջան եւ անդուլ աշխատանքներուն կը պարտինք մեծ մասամբ մեր եկեղեցիներու պայծառութիւնն ու դպրոցներու ծաղկումը վերջին շրջանին: Արդարեւ ան սրտի ջերմութեամբ, նուիրումով եւ հայրական հոգածութեամբ վարեց Լիբանանի առաջնորդական պաշտօնը անընդմէջ, շուրջ 15 տարի:

Յարգանք իր պայծառ եւ օրհնեալ յիշատակին

Գերաշնորհ Տեղապահ Հայր,

Այս բոլոր քահանայ հայրերը եւ ազգայինները զորս կը գտնէք բոլորուած ձեր շուրջը Լիբանանի թեմի ազգային բարձրագոյն ժողովականութեան մաս կազմող եկեղեցականներ եւ աշխարհականներ են որոնք հաւատարմօրէն կապուած մնացին իրենց պարտականութեան, ի հեճուկս բազմապիսի դժուարութիւններու, վերջին 2

*տարիներուն եւ փորձեցին իրենց կարելիութեան սահմաններուն մէջ վառ պահել ջահը ազգային իշխանութեան:*

*Վստահ եմ որ անոնք իբրեւ հաւատաւոր եւ խանդավառ գործակիցներ պիտի շարունակեն իրենց օգտաշատ աշխատանքը, այս անգամ ձեր նախագահութեան ներքեւ, ի սպաս լիբանանահայ ժողովուրդի ազգային, եկեղեցական եւ մշակութային կարիքներուն:*

*Բարի եկաք գերաշնորհ հայր եւ յաջողութիւն ձեր արժանաւոր եւ պատասխանատու առաքելութեան:*

ԳԱՐԵԳԻՆ Բ. ՎԵՀԱՓԱՌԻ  
ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ  
ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ՝  
ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՀԻԲՐԱՍՐԱՀԻՆ ՄԷՋ

*Վեհափառ Տէր,*

*Սրտի անհուն հրճուանքով եւ որդիական ակնածանքով, յանուն Լիբանանի թեմին ազգային վարչութեան եւ անոր լծակից ազգային բոլոր մարմիններուն, թոյլ տուէք որ ողջունեմ ձեր վսեմափայլ ներկայութիւնը առաջնորդարանի այս համեստ սրահին մէջ:*

*Լիբանանի թեմին շնորհած ձեր անդրանիկ այցելութեան բարեբաստիկ առիթով, լիբանանահայութիւնը առ հասարակ եւ ձեզ շրջապատող ժողովականներն ու յարգարժան հիւրերը յատկապէս կ'ապրին այսօր հոգեկան գոհունակութեան եւ ցնծութեան օր մը:*

*Եթէ ձեզի ծանօթ պատճառներով, ձեր այցելութիւնը չի կատարուեցաւ այն վեհաշուք ընդունելութեամբ զոր պիտի ուզէինք ընել կրնաք սակայն վստահ ըլլալ որ ան բոլորիս պատճառեց վարակիչ խանդավառութիւն մը եւ ազգային հպարտութիւն մը զորս կարելի չէ քողարկել: Առ այդ կը մաղթեմ մեր սիրելի լիբանանին երկնաթոյր խաղաղութիւն եւ հոգիներու միութիւն որպէսզի ան կարենայ շարունակել իր պատմական դերը որ դարերէն կու գայ եւ կը համապատասխանէ իւրայատուկ իր կոչումին:*

*Սովորութիւն է երբեմն, մեծ անձնաւորութիւններու այցելութեան առիթով, բարձրամեծար հիւրը ներկայացնել հիւրընկալներուն: Այս պարագային, սակայն, իբրեւ Աթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ եւ մեր հայրապետը, դուք թէ հիւրն էք եւ թէ տան տէրը: Այս երեւոյթը ինքնին կը բնորոշէ Ձերդ Սրբութեան առանձնայատկութիւնը որուն համաձայն Ձեր անձն ու Ձեր ժողովուրդը կը միախառնուին Ձեր հոգիին մէջ: Ան կը բացատրէ նաեւ այն բոլոր խորագրաց ապրումները զորս կ'ունենաք տառապելով*

ձեր ժողովուրդին ցաւերով ինչպէս նաեւ հրճուելով անոր նուաճումներուն եւ արձանագրած յաջողութիւններուն համար: Եւ արդէն ո՞վ չէ ճանչցած ձեզ, Վեհափառ Տէր: Որո՞նք հոգիին մէջ չեն թափանցած ձեր մշակուած մտքի լուսաշող ճաճանչները: Որո՞նք մտածումներուն մէջ տեղ չեն գտած հայ եկեղեցական եւ մշակութային վերականգնումի ձեր գաղափարները: Ո՞վ ենթակայ չէ եղած ձեր անհատականութեան ճառագայթող հմայքին: Ձեր շուրջ լոյս ու ջերմութիւն բաշխելով դուք կը նմանիք Բոլ Քրտեյի խօսքերով՝ «Վառած ջահի մը որուն ներկայութեան կը գտնուին ապահովաբար լոյս եւ ջերմութիւն»:

Անսակարկ նուիրումի ձեր կեանքին օրինակով ցոյց տուիք ծառայելով բարձրանալու ուղիղ ճանապարհը նամանաւանդ ծառայութեան մէջ գտնելու հոգեկան գոհունակութիւնը:

«Միայն ուրիշներուն համար ապրուած կեանքն է որ կ'արժէ իրապէս ապրիլ» ըսած է Այնշթայն: Եթէ այդ ճիշդ է ուրիշներուն համար ապրելու պարագային, հապա որքան ճշգրիտ է երբ այդ կեանքը ապրուած է մեր հարազատ ժողովուրդին, մեր հայրենիքին եւ մեր եկեղեցիին համար:

Վեհափառ Տէր, այս հանդիսաւոր պահուն երբ Ձեր հայրապետական այցելութեան առիթով մեզի պատիւը կը շնորհէք աւանդական հացն ու աղը միասին բաժնելու թոյլ տուէք յայտնեմ որ ազգային գոյակցութեան Ձեր ճանապարհը պիտի ըլլայ նաեւ մերը: Մնալով հանդերձ բացուած համամարդկային իրաւ արժէքներու առջեւ, պիտի շարունակենք մեր ընթացքը մնալով հաւատարիմ մեր ազգային խղճին եւ կենդանի պահելով շունչը մեր ազգային ոգիին: Այդ պիտի ընենք, համախմբուելով մնայուն արժէք ներկայացնող ազգային հիմնական խարիսխներուն, մեր կաթողիկոսութեան, եկեղեցիներուն, մշակութային եւ քաղաքական կեդրոններուն եւ մանաւանդ մեր կրթական օճախներուն շուրջ որպէսզի անոնց բոցավառումով առաւել լուսաւորուին մեր մթազնած հեռանկարներու դժուարամատչելի ուղիները:

Կրկնելով մեր անխառն ուրախութիւնը Ձեր հայրապետական այցելութեան առթիւ, ներեցէք ինձի Վեհափառ Տէր որ մաղթեմ ձեզի երկար եւ բազմաբեղուն կեանք որպէսզի կաթողիկոսարանը, ունենալէ յետոյ ամրակուռ կառոյցը, դառնայ նաեւ Ն.Ս.Օծութիւն

*Խորէն Վեհափառ Հայրապետին հայրական հոգածութեամբ եւ օգնութեամբ ինչպէս նաեւ աջակցութեամբը Ձեր գործակիցներուն «խկապէս տուն մը, տաք շունչով, հարուստ սեղանով լեցուն, այսինքն մեր ազգին համար սնունդի եւ ուրախութեան աղբիւր» ինչպէս կ'ըսէիք ձեզի յատուկ պերճախօսութեամբ ձեր կաթողիկոսական օժման առթիւ խօսած անդրանիկ քարոզին մէջ:*

*Բարի եկաք Վեհափառ Տէր, Ձեր տանը մէջ:*

4-12-1977

ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՌՀԱՍԱՐԱԿ  
ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԱՐԺԷՔՆԵՐՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ  
ՈՒ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՄԵՐ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԷՆ ՆԵՐՍ<sup>1</sup>

Պիտի ուզէի շնորհակալութեան եւ խորին ակնածանքի խօսք ուղղել մեր Վեհափառ Հայրապետին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Աթոռակից Կաթողիկոսին որուն բարձր ներկայութիւնը այս դասախօսութեան մեծապէս կը պատուէ մեզ՝ բոլորս եւ կը վկայէ իր հայրական հոգածութիւնը հանդէպ հայ համալսարանական ուսանողութեան գործունէութեան նաեւ իր նախանձախնդրութիւնը հայ վարժարաններու կատարելիք ազգային դերին նկատմամբ:

Շնորհակալութիւն Գերաշնորհ հայր Անուշաւան վարդապետին ինչպէս նաեւ Հ.Ե.Հ.Ո.Մ.ի վարչութեան ու անոր ազնուափայլ ատենապետուհիին որոնք կազմակերպելով այս հանդիպումը առիթ ընծայեցին որ բոլորս միատեղ խորհրդածենք մեզ շահագրգռող կարեւոր հարցի շուրջ որ է. «Հայեցի դաստիարակութիւնը եւ առ հասարակ հայ մշակոյթի արժէքներուն տարածումն ու զարգացումը մեր վարժարաններէն ներս»:

*Միրելի բարեկամներ եւ բարեկամուհիներ*

Ուրախ եմ որ այս կարգի կարեւոր հարցի մը քննութիւնը պիտի ընենք միասին թեպետեւ դասախօսութեան ընձեռած սահմանափակ ժամանակին մէջ որովհետեւ քաջ գիտենք որ ազգի մը ապագան կը կերտուի իր երիտասարդ մարդոցմով որոնց սրտին զարկերը կը ճշդեն անոր գոյատեւումը ապահովող շունչին տարողութիւնը:

Բոլորդ ալ լծուած էք արդէն տենդագին աշխատանքի, արուեստի եւ գիտութեան այլ եւ այլ բնագաւառներուն մէջ, մասնագիտութիւն ձեռք ձգելու հեռանկարով:

<sup>1</sup> Դասախօսութիւն տրուած Հ.Ե.Հ.Ո.Մ.ի հրակէրով Մեծի Տանն Կիլիկիոյ վեհարանին մէջ, 1980:

Գիտեմ թէ գանազան համալսարաններէ կու գաք ուր կը ստանաք համապատասխան կազմաւորում: Սակայն ինչքան ալ տարբեր ըլլան ձեր յաճախած համալսարանները, վախճանական իմաստով, բոլորն ալ կը ձգտին նոյն նպատակին: Զամբել ուսանողներուն արժեւորումը մշակոյթ, հանդերձ հիմնական մասնագիտութեամբ եւ թեքնիքով եւ կատարել նաեւ գիտական հետազօտութիւններ:

Մարդուն յառաջացումը (la promotion de l'homme) չի կրնար սակայն ապահովուիլ սոսկ մշակոյթով եւ թեքնիքի մը իւրացումով: Անհրաժեշտ է նաեւ որ ան բացուած ըլլայ հիմնական հարցերու առջեւ որոնք իր գոյութեան գերագոյն իմաստին կապուած իրողութիւններ են: Հոգեւոր եւ բարոյական արժեքներու որոնում եւ գնահատանք, իսկ մեր պարագային նաեւ ազգային պատկանելիութեան ճանաչում եւ արդար իրաւունքներու հետապնդում որոնք առանց մեզ հեռացնելու համամարդկային արժեքներու գիտակցութենէն կ'ամբողջացնեն մեր կազմաւորումը, կը ներդաշնակեն մեր հոգեմտաւոր կառույցքը:

Պէտք չէ սահմանափակուիլ միատեսակ մշակոյթով, կաղապարուած մտքերով եւ իւրացուած մասնագիտութեան մը կեղեւին ներքեւ: Ճիշդ է որ ամէն մասնագէտ կարելի չափով պէտք է խորացնէ իր ընտրած ճիւղը, սակայն ան պէտք է նաեւ օժտէ իր անձը յարակից այլ գիտելիքներով եւ մշակոյթով: Բազմերանգ մշակոյթը եւ զարգացումը կը սատարեն մարդուն ամբողջականութեան եւ հոգեկան միութեան պահպանման, մանաւանդ անոր ուղիղ դատողութեան: Մարդը օտար մշակոյթներու հետ իր ունեցած հաղորդականութեամբ պէտք է վերարժեւորէ ինքզինքը իր շրջապատին մէջ:

Ներկայիս գրեթէ բոլոր համալսարանները իրենց կրթական կառույցքով կը ջանան իրագործել մարդու ներդաշնակ զարգացումը ապահովելու ձգտող ծրագիրներ:

Galbraith իր ճարտարարուեստի զարգացման նուիրուած գրքին մէջ յստակ կերպով կը բացատրէ մասնագիտութեան նեղ սահմաններուն մէջ ամփոփուելու վտանգները:

Edgard Faure մշակոյթի մասին UNESCO ներկայացուցած իր տեղեկագրին մէջ կ'ըսէ թէ համալսարանները պէտք է ուսանողին ապահովեն մշակոյթ, թեքնիք եւ խղճի գարթնում ու գիտակցութիւն:



Սակայն երբ կը խօսինք խղճի մասին պիտի նկատի ունենանք անոր զանազան երանգները, մարդկային խիղճը, ազգային խիղճը, հաւաքական խիղճը եւայլն...

Այն ինչ որ կը վերաբերի ազգային խղճին որ մեր այսօրուայ նիւթին հետ կապ ունի, բազմաթիւ ազդակներ կը սատարեն անոր կենսագործման, ինչպէս ընտանիքը, շրջապատը եւ մանաւանդ դպրոցը ուր ուսման միջոցով աշակերտին կը փոխանցուի մեր մշակութային ժառանգը եւ որուն առողջ ու հայեցի միջնորդութիւն մէջ հայ պատանիին հոգիին մէջ կը բացուին ազգային գիտակցութեան խորունկ ակօսներ:

Ինչպէս գիտէք, դպրոցին դերը անհատին կազմաւորման մէջ անժխտելի է: «Ամէն աշխատանք մանուկին կամ մարդուն վրայ, կ'ըսէ Durkheim, կ'ենթադրէ վախճանականութիւն մը կամ առնուազն ուղղութիւն մը», հարց է սակայն գիտնալ թէ ազգային դիմագիծի պահպանման եւ հայ մշակոյթի տարածման տեսակէտէն մեր վարժարանները կ'իրագործեն արդեօք իրենցմէ ակնկալուած առաքելութիւնը:

Հետաքրքրական պիտի չըլլար միասին քննել մեր դպրոցներուն նպաստը այս մարզին մէջ եւ գնահատել առ այդ անոնց ուժականութիւնը ազգային ծառայութեան տեսանկիւնէն դիտած:

Այս հեռանկարով, պիտի առաջարկեմ որ նախ ամփոփ կերպով տեսնենք Լիբանանի բոլոր վարժարաններուն պարզած ընդհանուր պատկերը, աշակերտութեան թիւին, ուսուցիչներու որակին եւ ձեռք ձգուած արդիւնքներու տեսակէտէն ապա այդ բոլորին մէջ քննենք, բաղդատութեան լոյսին տակ, հայ վարժարաններու պարագան, պետական կրթական ծրագիրի իրագործման բնագաւառին մէջ եւ անոնց բերած նպաստը ազգային ծառայութեան գծով:

Տրուած ըլլալով որ պատերազմի տարիները կ'աղաւաղեն հիմնական հարցերը, պիտի կատարենք այս բաղդատական քննութիւնները հիմնուելով գլխաւորաբար 1973-1974ի վիճակագրական տուեալներուն վրայ:

## Ա.- Լիբանանի Վարժարաններու Պարագան

1) Լիբանանի դպրոցներու թիւը

1973-74ին Լիբանանի մէջ գործող դպրոցներու ընդհանուր թիւը

ներառեալ հայ վարժարանները կը բարձրանար 2793ի որուն 1772ը նախակրթարան եւ 1021ը միջնակարգ եւ երկրորդական: Նախակրթարաններուն 770ը պետական եւ 1002ը ոչ պետական, անհատական վարժարաններ են: Միջնակարգի եւ երկրորդական 1021 վարժարաններու 540ը պետական եւ 481ը ոչ պետական, անհատական հաստատութիւններ են:

2) Աշակերտութեան թիւը

Նոյն շրջանին, աշակերտութեան թիւը կը բարձրանար 782.409ի, որուն 55% արական եւ 45% իգական սեռի կը պատկանին: Երկրորդականի բաժիններուն մէջ այդ համեմատութիւնը կ'ըլլայ 66% արական եւ 34% իգական սեռին համար:

3) Ուսուցչական կազմ

ա) Պետական վարժարաններուն մէջ պաշտօնավարող ուսուցիչներուն ուսման մակարդակը կը ներկայանայ հետեւեալ կերպով.

65% ունին պետական վկայական (պրըվէ- պաքալ- եւ համալս. վկայ.)

35% ունին այլ վկայականներ որոնք պետութեան կողմէ ճանչցուած են իբրեւ համազօր պետական վկայականներու:

բ) Զրիավարժ վարժարաններու մէջ, 83% ունին պետական վկայական, 3.05% մասնագիտական եւ 13.95% ոչ պետական վկայականներ:

գ) Անհատական վճարովի վարժարաններու մէջ պաշտօնավարող ուսուցիչներուն 83.77% ունին պետական վկայականներ, 0.59% մասնագիտական եւ 15.64% ոչ պետական վկայականներ:

Պետական վարժարաններու մէջ, միջին հաշուով, ուսուցիչ գրուիս կայ 17 աշակերտ:

Վճարովի վարժարաններու մէջ այդ միջինը 23% է:

4) Պետական ֆինութեան արդիւնքներուն լիբանանեան րնդհ. միջինը

Պրըվէի քննութեան ներկայացող աշակերտութեան 57.25% յաջողած է: Պաքալորէայի ա. բաժնին համար յաջողութիւնը եղած է 34.06% իսկ բ. բաժնին համար իբրեւ ընդհանուր միջին 3 մասնաճիւղերուն, (փիլիսոփայութիւն, փորձառական գիտութիւն, ուսողութիւն) ան եղած է 61.54%:

5) Տարիքով ուշ մնացած աշակերտներուն պարագան

Լիբանանի նախակրթարաններու աշակերտութեան 65%ը համապատասխան դասարանին համար պահանջուած տարիքէն վեր եղած են: Միջնակարգի մէջ այդ համեմատութիւնը կը բարձրանայ 80.67% իսկ երկրորդականի մէջ 82.53%:

Նախակրթարաններու աշակերտութեան 11.90% նախակրթարանը չ'աւարտած կը լքեն դպրոցը, միջնակարգի աշակերտութեան 44.30% իսկ երկրորդական աշակերտութեան 66% կը լքեն դպրոցը առանց պաքարրիա առնելու:

Միջին հաշուով նախակրթարանի 3 աշակերտէն մէկը միայն կ'անցնի միջնակարգը եւ 11էն մէկը երկրորդական:

Նախակրթարան արձանագրուած 50 աշակերտէն 1ը կ'ստանայ պաքարրիա:

(Տեսնել այս մասին CREIL, կրթական հետազոտութեանց պարբերագիրքը, 1973-74 տարեշրջանի թիւը)

Համալսարաններու աշակերտութիւնը դուրս կը մնայ վերոյիշեալ թիւերէն:

Արդարեւ, 1973-74ին, համալսարաններու աշակերտութեան ընդհանուր թիւը կը բարձրանար 50.803ի, 2313 դասախօսներով: Նոյն տարին տրուած է 5686 վկայական:

## Բ.- Հայ Վարժարաններու Պարագան

1) Լիբանանահայ կրթական հաստատութիւններու թիւը

1973-74ին Լիբանանի մէջ գոյութիւն ունեցող հայ վարժարաններու թիւը կը հասնէր 51ի: Այս գումարէն դուրս կը մնան բնականաբար հայ առեւտրական վարժարանները (Սիմոնեան, Վարժապետեան, Գեպպապեան) ինչպէս նաեւ Հայկազեան գոլէճը եւ հայագիտական հիմնարկները եւ դպրեվանքները:

51 վարժարաններուն 29ը նախակրթարան եւ 22ը միջնակարգ եւ երկրորդական են

51 վարժարաններուն 20 կը պատկանի ազգային իշխանութեան

11 հայ աւետարանական համայնքին

9 հայ կաթողիկէ համայնքին

5 հայ բարեգործ. ընդհ. միութեան

6 անկախ կամ այլ կազմակերպություններու կամ միություններու կապուած վարժարաններն են:

2) Աշակերտութեան թիւ

51 Հայ վարժարանները յաճախող աշակերտութեան թիւը կը բարձրանայ 18526ի որուն 50.31% իգական սեռի կը պատկանին մանկապարտէզի եւ նախակրթարանի մէջ:

Միջնակարգի մէջ համեմատութիւնը 46% է արական սեռին համար եւ 54% իգական սեռին համար:

Երկրորդականի մէջ 50.47% արական եւ 49.53% իգական սեռին կը պատկանին:

3) Հայ վարժարաններու ուսուցչական կազմերը

Հայ վարժարաններու մէջ պաշտօնավարող ուսուցիչներուն թիւը կը բարձրանայ 1105ի:

Անոնց կրթական մակարդակ առ հասարակ կը համապատասխանէ պետական միջինին:

Այսպէս 1105 ուսուցիչներուն 282ը համալսարանական են կամ համազօր վկայական ունի

381ը պաքալորիա վկայական ունի

321ը պրըվէ կամ համազօր վկայական

123ը նախակրթարանի մակարդակ ունին

Այլ խօսքով մեր ուսուցչական կազմերուն 25.50% համալսարանական է

34.40%ը պալաքորիա ունի եւ կամ համազօրագիր

29%ը պրըվէ

11.03ը նախակրթարանի մակարդակ ունի:

Ամփոփելով ըսենք որ 88.90%ը պետական վկայական եւ կամ անոր համազօրագիր ունի եւ 11.03%ը նախակրթարանի մակարդակ ունի:

Մեր ուսուցիչներուն մօտաւորապէս 1/5 օտարահայտակ է: Անոնց միջին տարիքը 45-50 ինչ որ կը նշանակէ թէ տարիքով յառաջացածները աւելի հաւատարիմ կը մնան իրենց կոչումին:

Երիտասարդները յարափոփոխ են: Անոնք երբ նիւթապէս աւելի նպաստաւոր գործ կը գտնեն կը լքեն ուսուցչութիւնը:

Այս պարագան շեշտուած է նախակրթարաններու մէջ եւ բնականաբար յառաջ կու գայ իրենց ստացած անբաւարար վարձատրութենէն:

Հայ վարժարաններու ուսուցիչներուն 41% արական եւ 59% իգական սեռի կը պատականին եւ ամէն մէկ ուսուցչի գլուխ, միջին հաշուով նկատի պէտք է ունենալ 16 աշակերտ:

Վերոյիշեալ տուեալները ցոյց կու տան որ Հայ վարժարաններու ուսուցչական կազմերուն մէջ տիրապետող դիրք կը գրաւեն, թիւի տեսակէտէն ուսուցչուհիները: Մինչդեռ Լիբանանի ընդհանուր պատկերին մէջ ուսուցիչ եւ ուսուցչուհի գրեթէ հաւասար են թիւով:

4) Պետական ֆնուօթեանց արդիւնքները

1972-73ի վիճակագրութիւնները ցոյց կու տան որ Հայ վարժարաններու արձանագրած յաջողութիւնները պետական քննութեանց մէջ եղած են հետեւեալները.-

պաքալորիա ա. բաժին 55%ը ներկայացող թեկնածուներուն

պաքալորիա բ. բաժին 72%ը ներկայացող թեկնածուներուն

պըրվէ 75.70% ներկայացող թեկնածուներուն

Տարիքով ուշ մնացած աշակերտներուն պարագան

Նախակրթարանի Ա. դասարանը արձանագրուած 1754 աշակերտներէն միայն 1209 հասած են ճիշդ դասարան, մնացեալ 545 լքած են զայն եւ կամ փոխադրուած օտար վարժարան:

1209ին 763 արձանագրուած են միջնակարգ որոնց 338ը անցած են երկրորդական, մնացեալ 425ը դադրեցուցած են իրենց ուսումը, կամ ճամբորդած եւ կամ պարզապէս փոխադրուած են օտար վարժարան:

Հայ վարժարաններու մէջ նախակրթարան արձանագրուած 3 աշակերտներէն 1ը կըրոր հաշուով հասած է միջնակարգ, 6էն 1ը երկրորդական:

Նախակրթարան արձանագրուած 22 աշակերտէն 1 միայն ստացած է պետական բ. պաքալորիան:

6) Հայ աշակերտութեան օտար վարժարան յանախելու պարագան

ա.- Նկատողութիւն

Շատ տարօրինակ եւ միեւնոյն ատեն մտահոգիչ երեւոյթի առ-

Ջեւ կը գտնենք զմեզ երբ յետադարձ ակնարկով բաղդատենք անցնող տասը տարիներու ընթացքին (1964-1974) Լիբանանի ընդհանուր աշակերտութեան թիւին հոյովոյթը հայ վարժարաններու թիւին հետ:

1964-1974, Լիբանանի աշակերտութեան ընդհանուր թիւը աճած է 110% համեմատութեամբ իսկ հայ վարժարաններու աշակերտութեան թիւը աճած է 29.40% համեմատութեամբ:

Եթէ Լիբանանի աշակերտութեան ընդհանուր թիւին աճման համեմատութիւնը պահենք նաեւ մեր աշակերտութեան համար այն տեսն պէտք է որ մեր վարժարանները ունենային աւելի քան 30.000 աշակերտութիւն մինչդեռ անոնք ունին միայն 18.526 աշակերտ:

Ո՞ր կը գտնուի ուրեմն մնացեալ աշակերտութիւնը:

Միայլ պիտի ըլլար մտածել որ հայ աշակերտները Լիբանանի աշակերտութեան միջին թիւէն աւելի մեծ համեմատութեամբ կը լքեն դպրոցը ու կ'երթան աշխատելու:

Վերոյիշեալ թիւերը ցոյց կու տան որ ամէն տարի շուրջ 12.000 հայ աշակերտներ հաւանաբար կը լքեն հայ վարժարանները յաճախելու համար օտար վարժարաններ: Երկիրը լքողներուն պարագան դեռ եւս մտահոգիչ համեմատութիւններու չէր հասած 1974ին:

բ.- Նկատողութիւն

1973-74ին Լիբանանի աշակերտութեան թիւը իր բնակչութեան 29% կը կազմէր: Նկատի ունենալով օտարահպատակ ուսանողներուն պարագան ինչպէս նաեւ վիճակագրական որոշ անճշտութիւններ, այս համեմատութիւնը կրնանք հայ բնակչութեան պարագային 23%-ի իջեցնել: Արդէն UNESCO-ի վիճակագրութիւններուն համաձայն, Լիբանանի ընկերային եւ տնտեսական պայմանները ունեցող եւ աճման մօտաւորապէս նոյն չափանիշը պահող երկիրներուն մէջ աշակերտութեան թիւը ժողովուրդի բնակչութեան 24-26.5% է:

Ուրեմն եթէ 1974ին նկատի ունենանք 160.000 հայ բնակիչ իբրեւ սեղմ գնահատում, մեր աշակերտութեան ընդհանուր թիւը պէտք է 36 հազար եղած ըլլար: Եթէ հաշուենք 1000 համալսարանական ուսանող, կը մնայ շուրջ 34.000-35.000 աշակերտութիւն որուն միայն 18-19 հազարին հետքը ունինք հայ վարժարաններուն մէջ:

Ո՞ր են ուրեմն մնացեալները:

*գ.- Նկատողութիւն*

Օտար վարժարաններու բարձրագոյն կարգերու մէջ մանչերը կը կազմեն աշակերտութեան թիւին 55%, մեր մօտ 50.41%: Սա ցոյց կու տայ որ երկրորդականի բաժնին մէջ, աշակերտները առաւելաբար իգական սեռի կը պատկանին: Պէտք է թերեւս հետեւցնել որ ծնողները երկրորդականի բաժնին մէջ իրենց մանչ զաւակները աւելի մեծ թիւով օտար վարժարան կը զրկեն քան թէ իրենց աղջիկները:

*դ.- Նկատողութիւն*

Հայ վարժարաններու աշակերտութեան ընդհանուր թիւին աճը 1/4 է Լիբնանանի վարժարաններու աշակերտութեան ընդհանուր թիւի աճին:

7) Հայերէն լեզուի եւ հայոց պատմութեան պարագան

*ա.- Հայերէն լեզու*

Հայերէնի մակարդակը մեր բոլոր վարժարաններուն մէջ առհասարակ ան չէ ինչ որ էր ասկէ 25 տարիներ առաջ եւ արդէն կաբելի չէ որ ալ ըլլայ նոյնը այս պայմաններուն մէջ:

Հարցին ծանօթ բազմաթիւ յարգելի անձնաւորութիւններ զանազան առիթներով ելոյթներ ունեցան այս մասին, ոմանք հասնելով չափազանցութիւններու:

1) Կրթական ծրագիր եւ դասագիրք

Ոմանք կ'առարկէին թէ կրթականն ծրագիր գոյութիւն չունի ինչ որ բոլորովին ճիշդ չէ:

Գործածուած դասագրքերը պատրաստուած են համաձայն նախապէս կիրարկուող կրթական ծրագիրներուն, աստիճանական յառաջդիմութեամբ: Եւ արդէն բոլոր վարժարաններուն մէջ, հայ թէ օտար, գործածուող բոլոր դասագրքերը կրթական ծրագրի մը հետեւողութեամբ պատրաստուած դասագրքեր են: Անոնք կը պատրաստուին զանազան հեղինակներու կողմէ, կը մատուցուին գործածութեան եւ հրատարակչական տուններ կը ծախեն զանոնք շուկայի վրայ: Ոչ մէկ վարժարան լեզուի ուսուցման համար կրթական ծրագիր կը յանձնէ ուսուցչին, իրրեւ առաջարկ: Ուսուցիչը կը ստանայ դասագիրքը եւ կը դասաւանդէ համաձայն անոր կողմէ բնորոշուած ցուցմունքներու:

Անկախ այս բոլորէն, ազգային իշխանութիւնը իր կարիքներուն համար ունի հայերէն լեզուի եւ հայոց պատմութեան յատուկ կրթական ծրագիր նախակրթարանի համար որուն վերջին տպագրութիւնը եթէ չի սխալիմ կատարուած է 1951ին: Պիտի ըսէք ժամանակավրէպ է: Ճիշդ է:

Սակայն կրթական ծրագիր մը նախ անհրաժեշտ է դասագիրք պատրաստելու համար ինչպէս վերեւ յիշեցինք:

Ակնյայտ է որ աշակերտներուն հայերէնի մակարդակը աւելի ցած է քան այն ինչ որ նախատեսուած էր 1951ի կրթական ծրագրով: Սա կը նշանակէ թէ նահանջ կայ: Այս վիճակը յառաջ կու գայ այն իրողութենէն որ հայ վարժարանները 25 տարիէ ի վեր յաւելեալ ճիգ թափելով պետական վկայականներուն յաջողութիւնը ապահովելու մտահոգութեամբ, նուազ կարեւորութիւն տուին հայերէնին, որ անխուսափելիօրէն տժգունեցաւ:

Արդարեւ նախակրթարանի շաբաթական 36-38 պահերուն 24 կը յատկացուին պետական ծրագրի գործադրութեան եւ միայն 14ը հայերէնի, հայոց պատմութեան եւ հայերէնով դասաւանդուող առարկաներուն համար: Մինչդեռ ասկէ 25 տարի առաջ ճիշդ հակապատկերն էր:

Միջնակարգի եւ երկրորդականի մէջ հայերէն լեզուին յատկացուած պահերը աւելի սահմանափակ են:

Ազգային վարժարաններու նախակրթարաններու պարագային ուր վերջին դասարանին ամսվերջի քննութիւնները կը կազմակերպուին Ուսումնական Խորհուրդի կողմէ, երեւան եկաւ.

- 1) որ աշակերտին մօտ կը պակսի դիտելու կարողութիւնը
- 2) վարժութիւններու պակաս
- 3) ուսուցման մեթոտի բացակայութիւն

Երկրորդականի մէջ աշակերտներուն մօտ նիւթը վերլուծելու եւ համադրելու կարողութիւնը կը պակսի, բացառութիւնները յարգելով:

Աշակերտը իր կրթական խճողուած ծրագիրներու բերումով եւ պետական քննութիւններուն մէջ յաջողելու իր տակնուվրայութեան մէջ մեծ կարեւորութիւն չի տար մայրենի լեզուին եւ մշակոյթին որ հետզհետէ նուազ հրապուրիչ կը դառնայ իրեն:

Ամփոփելով ըսենք, նախակրթարանը եւ միջնակարգը պէտք է



ծառայեն աշակերտին սորվեցնելու համար լեզուն եւ երկրորդակա-  
նը անոր փոխանցելու համար մեր մշակութային գանձերը:

*բ.- Հայոց պատմութիւն*

Հայոց պատմութեան պարագային, նախակրթարաններու մէջ  
դասաւանդութիւնը կը տառապի պատշաճ մեթոտի բացակայութե-  
նէն եւ անշուշտ համապատասխան գրերու չգոյութենէն իսկ միջ-  
նակարգի եւ երկրորդականի մէջ յստակ ծրագրի նաեւ համապա-  
տասխան դասագրքի պակասէն:

Նախակրթարանի մէջ անօգուտ է տղուն միտքը խճողել թուա-  
կաններու անիմաստ շարանով: Պատմութեան դասը, հոն, գլխաւոր  
դէպքերու եւ հարցերու բացատրութեամբ պէտք է դառնայ կենդա-  
նի պահ մը ու ձգտի աշակերտին ներարկել ազգային ոգի իսկ երկ-  
րորդականի մէջ ան պէտք է սատարէ աշակերտը կազմաւորելու  
ազգային ձգտումներուն տեսակէտէն:

#### ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Վերոյիշեալ տուեալներէն ի յայտ կու գան հետեւեալ իրողու-  
թիւնները.

1) Մեծ թիւով հայ աշակերտներ օտար վարժարան կը յաճախեն  
այն մտածումով որ հոն պիտի ստանան աւելի բարձր մակարդակի  
ուսում կարենալ դիւրութեամբ յաջողելու համար պետական  
քննութիւններու եւ մտնելու համալսարան ինչպէս նաեւ պիտի կա-  
րենան աւելի լաւ իւրացնել արարբերէնը ու օտար լեզուները եւ ա-  
պահովել անոնց սահուն գործածութիւնը:

Այն ինչ որ կը վերաբերի ազգային ոգիին, լեզուին ու պատմու-  
թեան, կը խորհին թէ այդ բոլորը կարելի պիտի ըլլայ ապահովել ըն-  
տանեկան մթնոլորտին մէջ եւ կամ ակումբներէն ներս:

Ըսենք առաջին կէտին մասին որ պետական վկայականները ալ  
թապու չեն հայ վարժարաններու մօտ որոնց ձեռք ձգած արդիւնք-  
ները պաշտօնական քննութիւններու մէջ պատիւ կը բերեն իրենց:  
Արարբերէնի ուսուցումը, հոն, այլեւս մտած է ընթացիկ հունի մը  
մէջ եւ աստիճանաբար կը բարելաւուի:

Կը մնայ տակաւին բարելաւել խօսակցական լեզուն (արարբերէն  
կամ օտար լեզու) որուն համար պէտք է կազմակերպել, դասապա-

հերէն դուրս յատուկ աշխատանքներ, արտայայտչական արդի մեթոտներու կիրարկումով (technique de l'expression):

Օգտակար կը նկատենք նաեւ զարկ տալ գրական եւ փիլիսոփայական բաժիններուն որոնց իւրացումը աշակերտին համար դուռը պիտի բանայ համալսարաններու մարդկային գիտութեանց ճիւղերուն: Այս անհրաժեշտ է որպէսզի մեր համալսարանները չ'ընդգրկեն միայն գիտական ճիւղեր այլ կարենան մտնել պետական պաշտօնէութեան մէջ, ուսանին իրաւաբանութիւն, քաղաքական գիտութիւններ եւայլն: Աշխատանքի այս մարգերուն մէջ հայ պաշտօնէութեան թիւը 1%ի հաւասար է չ'ըսելու համար որ հայութիւնը հոն անգոյ է:

Պալով երկրորդ կէտին, ըսենք առանց վարանումի որ հայ աշակերտը հայ վարժարանի մէջ կը գտնէ ապահովաբար հայկական հարազատ միջավայր, ազգային շունչ, կը մնայ հաղորդակից իր պատմութեան ընդմէջէն իր դարաւոր մշակոյթի գանձերուն, մնալով հանդերձ բացուած համամարդկային արժէքներուն եւ օտար մշակոյթներուն առջեւ:

Արդարեւ մայրենի լեզուն եւ ազգային մշակոյթը անհրաժեշտ են որպէսզի ենթական չի խզուի իր պատմական անցեալէն, չի բաժնուի իր հունէն, չի կտրուի իր արմատներէն:

2) Անհրաժեշտ է հայերէն լեզուի եւ հայոց պատմութեան համար ուսումնական նոր ծրագիր մշակել համաձայն մեր արդի պահանջներուն եւ կարելիութիւններուն:

3) Պէտք է արդիականացնել ուսուցման մեթոտները եւ անոր կապակցաբար հրատարակել նոր դասագրքեր հիմնուելով որդեգրուած նոր մեթոտներուն վրայ:

4) Հայերէն լեզուի եւ հայոց պատմութեան դասագրքերը նաեւ ուսուցման մեթոտները, բացի մանկապարտէզէն, կէս դարու հնութիւն կը բուրեն երբ արդէն լեզուներու ուսուցման համար մանկավարժութիւնը մեծ նուաճումներ արձանագրած է եւ բազմաթիւ նոր մեթոտներ իւրացուած են օտար գրեթէ բոլոր վարժարաններու կողմէ:

Ալ անցաւ այն շրջանը ուր ուսուցիչը միակ դերակատարն էր դասարանին մէջ: Կը կարդար ու կը բացատրէր, մինչ աշակերտը կը մնար կրաւորական: Ներկայիս, նախակրթարաններու պարագային

յատկապէս, մանկավարժ ուսուցչին ցուցմունքներով ու թելադրութեամբ, աշակերտները իրենք կը գտնեն պահանջուած ճշդութիւնը ու կը հասնին օրէնքին:

Այս արդէն մեզ կ'առաջնորդէ ուսուցիչներու կազմաւորման հարցին: Եթէ մանկավարժական արդի մեթոտները օգտակար են համապատասխան դասագրքերու պատրաստութեան համար, ասոնց գործածութիւնը կ'ենթադրէ բնականաբար պատրաստուած եւ որակաւոր ուսուցչական կազմ քանի որ կարելի չէ գեղջել պետական կրթական ծրագրին յատկացուած պահերը ի նպաստ հայերէնի ինչպէս նաեւ կարելի չէ առաւել եւս խճողել դասապահներուն թիւը: Ուրեմն՝ նուազագոյն պահերով անհրաժեշտ է առաւելագոյն արդիւնքը տալ եւ անիկա մեթոտով, համապատասխան դասագրքերով եւ մանկավարժ ու ատակ ուսուցչական կազմով:

Պիտի առարկուի մեզի որ այդ բոլորը կ'ենթադրէ լայն պիւտճէ երբ մեր վարժարանները զուրկ են անկէ:

Պատասխանս պիտի ըլլայ այն որ որակը եւ պիւտճէն իրարու շողկապուած հարցեր են: Երբ որակ կայ, արդիւնք կայ, աշակերտութեան թիւը կ'աւելնայ եւ ալ պիւտճէի անբաւարարութեան հարց չի մնար: Դժուարութիւնը առաջին 3-5 տարիներու համար է: (Ս. Խանամիրեան գոլէճի պարագան որ 260 աշակերտէն բարձրացաւ 450ի եւ իր պիւտճէն փոխանակ տարեկան 50-60 հազար բացի ունեցաւ 100 հազար յաւելում):

4) Կայ նաեւ այս բոլորէն դուրս ուրիշ կարեւոր ազդակ մը հայեցի դաստիարակութեան համար:

Մաղթելի է որ մեր դպրոցներէն ներս պահուին կոչում ունեցող ուսուցիչները, ստեղծուի միջնորոտ, տրուի աշակերտութեան ազգային շունչ եւ ան գօտեպնդուի ազգային ոգիով առանց սակայն հասնելու այլամերժութեան որմէ պէտք է միշտ խոսափիլ:

Եզրակացնելով ըսենք որ շատ բան կախում ունի ուսուցիչէն, դաստիարակէն, տնօրէնէն: Կարելի չէ տկար ուսուցչական կազմէ պահանջել աւելին քան այն ինչ որ ի վիճակի է տալու:

Պիտի գիտնանք վերջապէս որ կրթութեան բնագաւառին մէջ, ինչպէս այլուր, հրաշքներ չկան: Կը հնձենք ինչ որ կը ցանենք: Տասը տարիներ առաջ կը խօսէինք մօտաւորապէս այս հարցերուն շուրջ,

տասը տարի ետքը պիտի դարձեալ խօսինք նոյն թերացումներու մասին եւ թերեւս պատկերը ըլլայ աւելի ողբերգական եթէ մինչ այդ բան չէ փոխուած:

Չի բաւեր քննադատել եւ կարծիքներ տալ: Բոլոր յաջողութիւնները արդիւնք են վճռական քայլերու, հաւաքական ու կազմակերպուած աշխատանքի, նուիրումի եւ մանաւանդ հաւատքի:

Մեր ուսուցչական կազմերը պէտք է մենք պատրասենք մեր միջոցներով, ճշդ ենք գոյութիւն ունեցող 5-6 մեթոտներուն յարմարագոյնը մեր լեզուին եւ պատմութեան ուսուցման եղանակը որդեգրելու համար, պատրաստենք որոշուած մեթոտներուն համապատասխանող դասագրքեր:

Ահա այն ամբողջութիւնը որ կրնայ փրկել հայեցի դաստիարակութեան եւ հայ մշակոյթի տարածման դերը մեր վարժարաններէն ներս որոնք միեւնոյն ատեն օտար վարժարաններու հետ մրցակցութեան մէջ մտնող կրթական միաւորներ պէտք է ըլլան պետական քննութիւններու եւ օտար լեզուներու մէջ յաջողութեան տեսակէտէն որպէսզի օտար վարժարան յաճախող մեր աշակերտութիւնը վերադառնայ հայ վարժարան ու չի զրկուի հայ լեզուի ու մշակոյթի գանձերէն:

Անհրաժեշտ է նաեւ քաջալերել եւ թիկունք կանգնիլ հայագիտական հիմնարկներուն որպէսզի անհետացող հայերէնագէտները փոխարինուին նորերով:

Պէտք է յարակցաբար այս բոլորին, կազմակերպել հայագիտական ասուլիսներ, բանասիրական հանդիպումներ, հրատարակել հայագիտական հանդէս մը, թերեւս ասոնց համար յարմար վայրը Անթիլիասի վանքն է: Այդ մէկը կը ձգեմ Վեհափառ Հայրապետին գնահատումին եւ բարձր դատողութեան:

Փակելէ առաջ խօսքս կ'ուզեմ աւելցնել նաեւ որ մեր վարժարանները պէտք չէ բաւարարուին միայն աշակերտին յաջողութեամբը պետական քննութիւններուն մէջ եւ հայերէն լեզուի ու հայոց պատմութեան ուսուցումով այլ օգտագործելով կրթութեան ուժականութիւնը պէտք է դրոշմեն աշակերտին ազգային դիմագիծ, ջամբեն գիտակցութիւնը իբրեւ սփիւռքահայ, իրեն սահմանուած սրբազան պարտականութեան եւ զայն կասուցանեն հոգածու տէր ու պաշտպան մեր դարաւոր մշակոյթին, հոգեւոր եւ բարոյական արժէքներուն ու պատմական անկորնչելի իրաւունքներուն:

*Դպրոցը, ինչպէս կ'ըսէ կրթական հարցերու մեծ մասնագէտ մը, հաստատութիւն մըն է անքակտելի կերպով կապուած կեանքին ու անով իսկ մարդկային ընկերութեան պահանջներուն ու ես պիտի աւելցնէի, մեր պարագային՝ նաեւ ազգին ու եկեղեցւոյ ծառայութեան:*

29-3-80

## Cérémonie d'Inauguration du nouveau Séminaire

Son Excellence Monsieur le Président de la République représenté ici par son Excellence M. Victor Cassir, Ministre de l'Economie Nationale.

Sainteté  
Excellences  
Révérends Pères  
Mesdames et Messieurs

Au nom du Comité exécutif central du Catholicossat arménien de Cilicie, permettez-moi de vous souhaiter la bienvenue à la cérémonie d'inauguration de son nouveau Séminaire.

Ce séminaire planté sur le flanc de cette montagne libanaise, terre d'accueille, d'amour et de paix, en dépit des vicissitudes de cette période douloureuse de son histoire les jeunes vocations de la communauté arménienne pour leur assurer une formation humaniste, la connaissance et l'amour de la vérité conduisant l'homme à Dieu.

S'attachant à des finalités supérieures à la simple existence transcendant toutes les valeurs humaines, ce séminaire entend offrir à ses étudiants un milieu favorable à leur épanouissement en les stimulant à nourrir leur foi et en répondant aux problèmes que pose leur vocation sur le double plan moral et spirituel.

Il leur transmet aussi parallèlement à leur formation l'héritage culturel et spirituel de leurs ancêtres auquel s'ajoute celui du peuple libanais créant ainsi une source d'enrichissement intellectuel et culturel.

Mais leur programme ne s'arrête pas là. Les séminaristes étant les futurs serviteurs de Dieu et des hommes apprendront entre autres au fil de leurs études à mieux connaître le Liban et à œuvrer dans l'exercice de leur sacerdoce pour que celui-ci retrouve la paix, panse ses

blessures et continue à s'atteler à son développement culturel, économique et social pour le grand bien de tous ses fils.

Il est très important que des personnes qui par leur vocation s'attachent essentiellement à la conscience puissent quelques fois rallier à cette conscience les symbioses du spirituel et du temporel.

En inaugurant la nouvelle construction du Séminaire du Catholico-cat arménien de Cilicie, nous avons la ferme conviction de consolider notre attachement à cette chère patrie et d'affermir notre foi dans sa pérennité.

A cette occasion, je vous prie Monsieur le Ministre de bien vouloir transmettre à Son Excellence Monsieur le Président de la République, Cheikh Amine Gemayel, nos remerciements pour la marque d'honneur et d'intérêt qu'il nous a témoignée ayant bien voulu présider et assister en personne à la première partie cette cérémonie inaugurale et d'accepter vous-même, Monsieur le Ministre nos sincères remerciements.

Nous ne saurions procéder à cette inauguration sans exprimer nos sentiments de vive gratitude et de profonde estime envers sa Sainteté le Catholicos Karékine II qui malgré ses multiples occupations et les ennuis de santé qu'il a eus depuis un an n'a cessé de s'en occuper de près pour réaliser un projet qui naguère était un rêve et qui sans ses efforts pourrait encore demeurer dans le domaine du possible.

Nous adressons également nos vifs remerciements à Son Excellence Mgr. Datev Sarkissian, ancien directeur du séminaire et depuis 3 mois Prélat des Arméniens de Californie, à Los Angeles qui, tout au long de la construction, a fait preuve de patience et de persévérance dans le travail et a prêté main forte pour l'achèvement de la construction.

Merci enfin à toutes les personnalités civiles ici présentes, à la communauté arménienne, à tous ceux qui par leur aide financière ou par leur labeur et leur dévouement ont concouru à la réalisation de cette construction.

Encore une fois merci à tous.

**ԴՊՐԵՎԱՆՔԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՇԷՆՔԻՆ  
ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ**

Ն. Վսեմափայլ Տերութիւն, Հանրապետութեան Նախագահ, Շէյխ Ամին  
ժըմայել գոր կը ներկայացնէ այս հանդիսութեան վսեմաշուք Տիար  
Նախարար Վիկտոր Քասիր  
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ  
Գերաշնորհ Սրբազան Հայրեր  
Գերապատիւ եւ Արժանապատիւ Հայրեր  
Յարգելի հանդիսականներ

*Սրտի խոր բերկրութեամբ ներկայ կ'ըլլանք այսօր Մեծի Տանն  
Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ղարեվանքին նորակառոյց շէնքին  
բացման հանդիսութեան:*

*Տակաւին մօտիկ անցեալին, ղարեվանքին Պիքֆայա փոխադ-  
րութիւնը եւ անոր տեղաւորումը կրթական արդի պահանջներուն  
գոհացում տուող շէնքի մը մէջ փայփայտած երազ էր լուկ իսկ այ-  
սօր ան հանրութեան կը ներկայանայ իբրեւ կենդանի իրականու-  
թիւն:*

*Եթէ ան չունի մեր հայրենի հողը իբրեւ հիմ եւ մեր բնութիւնը  
իբրեւ ֆիզիքական շրջապատ, ան ունի սակայն հայութեամբ օծուն  
միջնորդութեան եւ անոր սիւները խարսխուած են հայ ժողովուրդի  
սրտին մէջ:*

*Կեանքի եւ յաւիտենականութեան յարաբերութիւնները քննար-  
կող, կեանքէն դէպի յաւիտենականութիւն առաջնորդող ճանա-  
պարհը լուսաւորող եւ զայն իմաստաւորող եկեղեցւոյ սուրբ հայրե-  
րուն խորհրդածութիւններն ու գոհաբանութիւնները հոգեկան  
սնունդ են այս կրթական հաստատութեան մէջ:*

*Հայ ժողովուրդի հազարամեայ կեանքը, անոր մահասարսուռ  
մաքառումները եւ պատմութեան մրրիկներուն դէմ անվհատ  
կանգնելու եւ իր արդար իրաւունքներուն տիրանալու անընկճելի*



կամքը առօրեայ ապրում են հոն: Հայ մտքի բուրաստանները ախօսող եւ զանոնք մեր հանճարին ամենաջինջ ահուենքներէն որոգող լոյսի տաճարն է այդ: Վերջապէս դպրեվանքը կրթական այն օճախն է որ ուսանողին կ'ապահովէ մարդկայնական կազմաւորում եւ անոր կը ջամբէ համամարդկային եւ հոգեւոր արժէքներու խոր գիտակցութիւն:

Արդարեւ անոր ութամեայ կրթական ծրագիրը աւարտող ուսանողը երբ վերջնականապէս կ'ընտրէ կուսակրօն կեանքը, ընտրած կ'ըլլայ ծառայութեան եւ նուիրումի ճամբան, շարունակ տալու ճամբան: Ու ան կու տայ իր սրտէն, իր մտքէն հոգեկան մխիթարութիւն բաշխելով իր ժողովուրդին եւ վառ պահելով անոր հոգևոյն մէջ ազգային գիտակցութեան անթեղուած կրակը:

Իսկ անոնք որոնք կ'ընտրեն նետուիլ կեանքի գուպարին մէջ, իրենց հետը կը տանին դպրեվանքի դաստիարակութիւնը իբրեւ ժառանգ եւ կը ծառայեն իրենց կարգին իրենց ընտրած բնագաւառին մէջ:

Եթէ այսօր Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռին թեմերն ու եկեղեցիները կը ծաղկին ու կաթողիկոսութիւնը իր թեմակալ եպիսկոպոսներով եւ յատկապէս իր գահակալին մտքի լուսափայլ ճաճանչներով կը ճառագայթէ միջազգային եկեղեցական եւ քաղաքական ատեաններու մէջ անիկա կը պարտինք նախ եւ առաջ դպրեվանքին, իրենց կրթութեան օրրանին եւ հոն պաշտօնավարող հոգեւորական թէ աշխարհական մտքի մշակներուն:

Այս առթիւ յանուն Ազգ. Կեդրոնական Վարչութեան քաղաքական ժողովին պարտք կը զգամ շնորհակալութեան խօսք ուղղելու Ն. Վ. Տէրութիւն Հանրապետութեան Նախագահ, Շէյխ Ամին ժրմայէին որ սիրով յանձն առաւ հովանաւորել այս հանդիսութիւնը ինչպէս նաեւ շնորհակալութիւն կը յայտնենք պրն. Նախարար Վիկտոր Գասիրին որ կը ներկայացնէ Ն. Վսմափայլ Տէրութիւնը:

Մեր շնորհակալութիւնները եւ երախտագիտական ամենախոր զգացումները կը յայտնենք Վեհափառ Հայրապետին, Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին որ հակառակ իր բազմազբաղ վիճակին եւ վերջին տարուայ առողջական խանգարումներուն, իր անմիջական հոգածութեան առարկան դարձուց դպրեվանքը եւ անոր նոր շէնքին կառուցումը:

*Թող ներքև մեզի ըսելու որ առանց Ն. Սրբույթեան աշխատանքներուն այս հոյակապ շինութիւնը կրնար դեռ եւս երկար առեն երազի սահմաններուն մէջ մնալ:*

*Շնորակալութեան խօսք ունինք Տ.Տ. Տաթեւ Սրբազան Արք. Սարգիսեանին, նախկին Տեսուչ Դպրեվանքի, այժմ թեմակալ Առաջնորդ Ամերիկայի արեւմտեան թեմին որ օրը օրին ապրեցաւ դպրեվանքի շինութեամբ արծարծուած բոլոր տաղտուկները եւ ճիգ ու քրտինք չի խնայեց զայն իրագործուած տեսնելու համար: Յարգանք իր վաստակին:*

*Շնորհակալութեան խօսք ունիմ բոլոր նուիրատուներուն ինչպէս նաեւ եկեղեցականներուն եւ աշխարհականներուն ու յատկապէս ճարտարապետ պրն. Բարգէն Այվազեանին եւ յանձնակատար պրն. Սարգիս Խաչերեանին որոնց նուիրումն ու համբերատար աշխատանքը նպաստեցին շինութեան բարւոք աւարտին:*

*Վերջապէս Պիքֆայայի դալարագեղ լանջքին վրայ կանգնած այս գեղակերտ դպրեվանքը պիտի մնայ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմութեան մէկ կենդանի վկայութիւն մը իր շնորհագարդ գահակալին անհամար գոհաբերութեան եւ նուիրումին եւ մեր ժողովուրդի սիրոյն ու գուրգուրանքին հանդէպ այս կրթական եւ հոգեւոր ազգային հաստատութեան:*

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ  
ՆԵՐԿԱՅ ԻՐԱՎԻՃԱԿԸ (1968)<sup>2</sup>

*Միրելի Բարեկամներ*

*Խօսիլ ազգային վարժարաններու մասին կը նշանակէ շօշափել մեր գաղութահայ կեանքը հետաքրքրող շատ կարեւոր հարցերէն մէկը:*

*Եթէ կ'ընդունինք որ գաղութներու մէջ մեր հիմնական գործը ազգապահպանումն է ապա ուրեմն հայ դպրոցը կը հանդիսանայ անվիճելի կռուան մը ազգային արժէքներու, մեր լեզուին, պատմութեան եւ մեր աւանդութեանց պահպանման տեսակէտէն:*

*Հայ վարժարաններու մէջ տրուած հայեցի դաստիարակութեամբ հայ մանուկը հաղորդակից կ'ըլլայ իր ժողովուրդին ստեղծագործ հանճարին ու իր հոգիին մէջ կը դրոշմուի անկորնչելի կերպով ազգային արժէքներու խոր գիտակցութիւնը:*

*Հոն է որ ան պիտի գտնէ իր մտքի լուսաւորութեան անհրաժեշտ գիտելիքներու կողքին իր ազգային անհատականութիւնը զարգացնող նպաստաւոր միջավայր:*

*Ապագայնացման եւ օտարամոլութեան յորձանքներուն կռիւծք տալու համար հայ աշակերտը պէտք ունի գինուելու իր ազգային աւանդութիւններով, ոգեւորուելու իր նախնիքներու սխրագործութիւններով եւ մանաւանդ գօտեպնդուելու հաւատքի ոյժով, հաւատք իր բարոյական եւ ազգային իրաւ արժէքներու, հաւատք իր գոյութեան իսկ իմաստ տուող իր ազգային առաքելութեան եւ վերջապէս հաւատք իր ժողովուրդին յաւերժութեան:*

*Պատմութիւնը կը վկայէ որ ժողովուրդի մը գոյատեւման հիմնական ազդակներէն մին եղած է իր լեզուին պահպանումը:*

*Բոլորիս ալ ծանօթ է որ հայկական հոծ գաղութներ կորսուած*

<sup>2</sup> Դասախօսութիւն տրուած Զաւարեան Ուսանողական Միութեան, 1968:

են առ յաւելտ անոր համար որ կորսնցուցած են նախ իրնեց տոհմային նկարագիրը ապա իրենց լեզուն:

Այդ գաղութներէն մնացած են լոկ արձանագրութիւններ, ձեռագիրներ, եկեղեցւոյ քանդակներ իբրեւ յիշատակարան անհետացած անցեալէն:

Այսօր եւս նոյն ճակատագիրը կը սպառնայ մեզի զանազան երանգներով եթէ տէր չի կանգնինք մեր պատասխանատուութիւններուն ու չի գուրգուրանք մեր մշակոյթի եւ լեզուի օրրաններուն վրայ:

Անցնելով մեր օրուայ նիւթին, պիտի ուզէի նախ ուրուագծային պատկեր մը տալ հայ ազգային վարժարաններուն ներկայ վիճակէն, որոնել անոնց մէջ թերին եւ տեսնել թէ ինչ կարելի է ընել անոնց վիճակը բարելաւելու համար:

Ա.– Ազգային վարժարաններու վարչական Կառոյցքը

Ազգային վարժարանները տեսակ մը ծխական վարժարաններ են: Անոնց պատասխանատու մարմիններն են նոյն շրջանի թաղականութիւնները, ըստ ազգային սահմանադրութեան: Թաղականութիւնները, համախորհուրդ ուսումնական խորհուրդին, կը նշանակեն հոգաբարձու մարմիններ որոնք կը զբաղին դպրոցով: Այս վերջինները հաշուետու են թաղականութեան այն ինչ որ կը վերաբերի պիւտճէական հարցերուն իսկ ուսումնական խորհուրդին կրթական եւ դաստիարակչական խնդիրներու համար:

Ուսումնական խորհուրդը որ կը բաղկանայ 7 հոգիէ մեր ազգային վարժարաններու գերագոյն մարմինն է: Ան կը նշանակուի քաղաքական ժողովի կողմէ եւ հաշուետու է անոր:

Ուսումնական խորհուրդը իր կարգին կը նշանակէ խնամակալութիւններ այն դպրոցներուն համար որոնք ունեն թաղականութեան ենթակայ չեն:

Դպրոցներու տնօրէնները պատասխանատու են կրթական հարցերուն նկատմամբ ուսումնական խորհուրդին: Թաղականութիւնները եւ կամ խնամակալութիւնները չեն կրնար զանոնք փոխել, գործէ արձակել առանց ուսումնական խորհուրդի հաւանութեան:

Ամէն դպրոց իր սեփական միջոցներով կը պարտի փակել իր պիւտճէն, հակառակ պարագային ուսումնական խորհուրդը, քննե-

լէ յետոյ հաշիւները, որոշ յատկացումներ ընելով կը փակէ գայն: Դժբախտաբար ուսումնական խորհուրդին նիւթական միջոցներն ալ սահմանափակ են:

Վարչական գետնի վրայ մեր դպրոցները ենթակայ են պետական օրէնքներուն ինչպէս նաեւ ազգային իշխանութեան կողմէ մշակուած յատուկ կանոնադրութեան: Մէկը միւսին լրացուցիչն է: Այս կանոնադրութիւնը որ վաւերացուեցաւ 1965ին կը ճշդէ մեր ուսուցիչներուն իրաւունքներն ու պարտականութիւնները ինչպէս նաեւ պատասխանատու մարմիններուն իրաւասութիւնները:

Ուսումնական խորհուրդը իր տրամադրութեան տակ ունի կրթական քննիչ մը որուն իրաւասութիւնները ճշդուած են նոյն կանոնադրին մէջ: Ան ամիսը 1 անգամ, առնուազն կ'այցելէ մեր բոլոր վարժարանները ստուգելու համար թէ մեր ծրագիրը լիովին կը գործադրուի՞ թէ ոչ: Կանոնաւոր կերպով տեղեկագիր կը ներկայացնէ Առաջնորդ Ս. Հօր եւ ուսումնական խորհուրդին:

Բ.– Լիբանահայ Ազգային Վարժարաններու Աշակերտութեան Թիւր

1) Լիբանանի մէջ գոյութիւն ունին 23 ազգային վարժարաններ որոնց մէկը գոտ երկրորդական է, 2ը լման կարգերով վարժարաններ են (մանկապարտէզ, նախակրթարան եւ երկրորդական բաժին) 1ը միջնակարգ է եւ մնացեալ 19ը նախակրթարան որոնց մէջ նոյնպէս 3 վարժարաններ նախակրթարանի ամբողջական բաժինները չունին:

Մեր 23 վարժարաններու աշակերտութեան թիւն է 1960-61 տարեշրջանին համար 5389 հոգի: Որոնց 2705 մանչ, 2694 աղջիկ: Ասոնց 323ը երկրորդական բաժինն են, իսկ 5066 նախակրթարան ներառեալ մանկապարտէզը (շուրջ 2000):

2) Ազգային Վարժարաններու Աշակերտութեան Թիւին համեմատութիւնը հայ վարժարաններու աշակերտութեան եւ Լիբանանի մէջ գտնուող բոլոր վարժարաններու աշակերտութեան թիւին հետ:

Լիբանանի մէջ գոյութիւն ունեցող հայ դպրոցները ունին շուրջ 20.000 աշակերտ ինչ որ ցոյց կու տայ թէ ազգային վարժարանները ունին այդ աշակերտութեան 1/3ը:

Լիբանանի մէջ գտնուող անհատական վարժարաններու աշա-

կերտութեան ընդհանուր թիւն է 336.705 իսկ պետական վարժարաններու աշակերտութեան թիւն է 203.534, ընդհանուր գումար 540.339, ինչպէս ըսինք այս թիւին 20.000ը հայ վարժարաններ կը յաճախեն միայն:

Վերոյիշեալ թիւերէն կարելի է հետեւցնել որ հայ վարժարան յաճախող աշակերտներու թիւը կը ներկայացնէ շուրջ 3% Լիբանանի ընդհանուր աշակերտութեան, իսկ ազգային վարժարաններ յաճախողներուն թիւը 1%:

Եթէ պահ մը ընդունինք որ Լիբանանի մէջ ներկայիս կը բնակին շուրջ 2.200.000 ժողովուրդ եւ աշակերտութեան թիւը ըլլալով 540.319 ուրեմն Լիբանանի բնակչութեան 24.5%ը դպրոց կը յաճախէ:

Այս համեմատութենէն ներշնչուելով, եթէ ընդունինք որ Լիբանանի մէջ կ'ապրին շուրջ 140-150 հազար հայութիւն, ուրեմն բնական է որ մենք պէտք է ունենայինք 34-35 հազար աշակերտութիւն, որուն կէսն իսկ մեր վարժարաններուն մէջ չեն:

Ինչ կը ցուցնէ այս պատկերը.-

1) Ան ցոյց կու տայ որ մենք մեծ թիւով աշակերտներ ունինք օտար վարժարաններու մէջ:

2) Նկատի ունենալով որ մեր նախակրթարաններու առաջին դասարանին աշակերտութեան հազիւ թէ 1/3ը կը մնայ վերջին դասարան, հայ աշակերտութեան մեծ տոկոսը իր ուսումը կը լքէ կամ նախակրթարանի սեղաններուն առջեւ եւ կամ աւելի քիչ համեմատութեամբ երկրորդական վարժարաններու առաջին դասարաններուն մէջ:

Նախակրթարանի աշակերտները, 9-10 տարեկան, ձգելով դպրոցը կը նետուին արհեստանոցներ ուր անզոյճ վարպետներու ձեռքերուն ներքեւ աւամայ կը կորսնցնեն թէ իրենց բարոյական կառոյցը եւ թէ իրենց նկարագիրը:

Ահա հիմնական հարց մը գոր կը յանձնեմ ձեր խորհրդածութեան:

Գ.- Ուսուցչական կազմ

Ազգային վարժարաններու մէջ պաշտօնավարող ուսուցիչ-ուսուցչուհիներուն թիւն է 1966-67 տարեշրջանին համար 301: Ան եղած է 280՝ 1963-64ին, իսկ 298՝ 1965-66ին:

*Անոնց բոլորն ալ դասաւորուած են ըստ պետական օրէնքին եւ մեր կանոնագրութեան:*

*Պետական վկայական ունեցողները 2 տարի դերավարժ ըլլալէ յետոյ կը դառնան cadré եւ կը ստանան հետեւեալ կերպով:*

*Brevet ունեցողը 205 լ.ո.*

*Terminal ունեցողը 232.5 լ.ո.*

*B.A. կամ համալսարանական վկայական ունեցողը 355 լ.ո.*

*Licence կամ M.A. ունեցողը 505 լ.ո.*

*Առաջին երկուքը կը ստանան 27.5 ոսկիի յաւելում մը ամէն 2 տարին անգամ մը:*

*B.A. ունեցողը կը ստանայ, 35 ոսկիի յաւելում մը, իսկ Licence կամ M.A. ունեցողը 45 ոսկի ամէն երկու տարին:*

*Վկայական չունեցող ուսուցիչներուն նուազագոյն թոշակն է 145 լ.ոսկի որուն վրայ կ'աւելնայ 15 լ.ոսկի, 2 տարին անգամ մը եթէ դպրոցը ճրիւղավարժ է, այլապէս կը դառնայ cadré եւ կը դասաւորուի 7րդ աստիճանով ու կը ստանայ 205 լ.ոսկի:*

*Ազգային իշխանութեան կանոնագրութիւնը աւելի բարեացակամ է այս ուղղութեամբ:*

*Պետական վկայական չունեցող ուսուցիչները կը դասաւորուին 3 կարգի:*

*Ա. Կարգին կը պատկանին երկրորդական վկայական ունեցողները անոնց կը վճառուի 205 լ.ոսկի*

*Բ. Կարգին կը պատկանին միջնակարգ ուսում ստացողները անոնց կը վճառուի 175 լ.ոսկի*

*Գ. Կարգին կը պատկանին միջնակարգէն վար ուսում ստացողները, անոնց կը վճառուի 145 լ.ոսկի:*

*Ա. Կարգի պատկանող ուսուցիչները կը ստանան 2 տարին անգամ մը 20 լ.ոսկի, իսկ Բ. եւ Գ. կարգերու պատկանողները 15 ոսկի, երբ դպրոցը ճրիւղավարժ է, այլապէս պիտի ստանային հարկադրաբար 27.50 լ.ոսկի: Ամուսնացած ուսուցիչները կը ստանան 15 լ.ոսկի իրենց տիկնոջ համար եթէ այս վերջինը չ'աշխատիր եւ 15 լ.ոսկի ամէն մէկ զաւակին համար:*

*Ազգային Վարժարաններու Պիւտնէն*

*Ազգային վարժարաններու պիւտնէն 1966-67 տարեշրջանին*

բարձրացաւ 979.832 ոսկիի: Ան 1962-63ին հազիւ թէ կը հասնէր 550-600 հազարի: Ուրեմն 4 տարուայ ընթացքին ան աւելի քան 379.832 ոսկիի յաւելում կրած է:

Ասիկա արդիւնքն է մէկ կողմէն պետական օրէնքներու գործադրութեան ինչպէս նաեւ միւս կողմէ ազգային իշխանութեան ցոյց տուած յարաճուն հետաքրքրութեան: 1962-63ին կային 60-90 ոսկիով պաշտօնավարող ուսուցիչներ, այսօր նուազագոյն սակն է 145 լ.ոսկի:

Մեր վարժարաններու 15 հատը ձրիավարժ են, 5 հատը ձրիավարժ ըլլալու պայմանները չեն ամբողջացներ, իսկ 3 հատը ազատ են, ոչ ձրիավարժ: Պէտք է աւելցնել որ ձրիավարժ ըլլալու իրաւունքը կը պատկանի միայն այն վարժարաններուն որոնք նախակրթարանի պետական հինգամեայ ծրագիրը կը գործադրեն: Ձրիավարժ վարժարանները լիբանանցի եւ արաբական երկիրներու քաղաքացի աշակերտներու հաշույն պետութենէն կը գանձեն 50 լ.ոսկի ամէն մէկ աշակերտի գլուխ, պայմանաւ սակայն որ աշակերտներէն 34 ոսկիէն աւելի չի գանձեն, 29 ոսկի իբրեւ կրթաթոշակ, 2 ոսկի իբրեւ բժշկական ծախս եւ 2 ոսկի դասարաններու ջերուցումին համար: Դպրոցները այս գումարին վրայ կ'աւելցնեն 15-20 ոսկի իբրեւ մոտքի տուրք եւ կամ այլ ծախսերու մասնակցութիւն: Բնականաբար այս յաւելեալ գանձումէն պետութիւնը տեղեակ չի մնար: Միջին հաշուով նախակրթարանի աշակերտի մը հաշույն դպրոցը կը գանձէ 115-120 ոսկի որուն միայն 55-60ը աշակերտէն:

Թէեւ պետութիւնը կը պարտադրէ մեզի որ նախակրթարանի աշակերտներէն 34 ոսկիէն աւելի չի գանձուի, այսուհանդերձ մեզ ազատ կը թողու մանկապարտէզին համար որուն նպաստ չի վճարեր ինքը:

Մանկապարտէզի աշակերտութենէն դպրոցը կրնայ գանձել իր յարմար դատած սակով: Մանկապարտէզը որուն ուսուցչուհիները համեմատաբար քիչ կը վճարուին, եւ ուր աշակերտութեան թիւը բարձր է յաճախ, նախակրթարանի բացը կը գոցէ:

Եթէ հաշիւ մը ընենք, պիտի տեսնենք թէ ամէն մէկ աշակերտ, դպրոցին կ'արժէ 115-140 ոսկի: Կարգ մը դպրոցներ իրենց պիւտձէն կը հաւասարակշռեն առանց դժուարութեան մինչ ուրիշներ ստիպուած են ձեռնարկներ ընելու:



1966-67ին մեր բոլոր դպրոցներու (23 վարժարան) համար, ընդհանուր բացը եղած է 43.429 ոսկի միայն:

Պէտք է աւելցնել այս առթիւ որ պետութիւնը որոշ պարտադրանքներ կը ներկայացնէ դպրոցները ճիշտօրէն ճանչնալու համար:

1) Նախ պէտք է պետական կրթական ծրագիր մշակել որմէ յետոյ կրնանք մեր ուզած այլ նիւթերը դասաւանդել: Այս մէկը անշուշտ մեր ալ փափաքն է:

2) Ամէն մէկ դասարանի մէջ 40 հոգիէ աւելի աշակերտ չլցնել, ինչ որ թէ մանկավարժական եւ թէ առողջապահական տեսակէտէն օգտակար որոշում մըն է:

3) Կը պահանջէ որ 1965-66էն ասդին գործի կոչուած բոլոր ուսուցիչները ունենան առնուազն պետական Brevet մը եւ կամ անոր համագոր նկատուած պետական վկայական մը:

Այն ուսուցիչները որոնք 1965-66էն առաջ արդէն կը պաշտօնավարեն գերծ են այս սեղմումէն:

Ազգային իշխանութիւնը կրցաւ պետութեան հետ կարգադրել որ պետական ծրագրին մաս չի կազմող նիւթերը դասաւանդող ուսուցիչները ենթակայ չըլլան այս օրէնքին, օրինակ՝ հայերէնի ուսուցիչները, պատմութեան, կրօնքի...: Պետութիւնը, բացառիկ կարգադրութեամբ մեզի պաշտօնապէս արտօնեց այդ եւ այս որոշումէն օգտուեցան նոյնպէս միւս հայկական վարժարանները: Այդ վաւերացումները photocopyները ապակիի տակ դրինք եւ դրկեցինք բոլոր վարժարաններուն որպէսզի պետական քննիչներու անտեղի դիտողութենէն գերծ կացուցուինք:

Ազգային վարժարաններու տուած արդիւնքը պետական քննութեանց մէջ

Ազգային վարժարանները 1967ին ներկայացած են 222 աշակերտ պետական սէրթիֆիքայի եւ 19 պետական պրովէի: Ներկայացած 222 աշակերտութեան 52ը համապատասխան դասարաններէն վեր եղող դասարաններու կը պատկանին: Նախակրթարանի բաժնին պատկանող գուտ (222-52) 170 աշակերտութիւն ներկայացած է:

Ասոնց արդիւնքը հետեւեալն է.-

222 աշակերտութեան 65ը յաջողած են, ուրեմն 29.27%ը, իսկ

Եթէ լոկ նախակրթարանի աշակերտութեան յաջողութեան համեմատութիւնը փնտռենք, պիտի տեսնենք որ 170 աշակերտութեան միայն 20ը յաջողած են ինչ որ ցոյց կու տայ 10.75%:

Այս պատկերն իսկ խափուսիկ է, քանի որ մեր բոլոր նախակրթարանները իրենց վերջին դասարաններուն աշակերտութիւնը չեն դրկած պետական քննութեանց: Եթէ նկատի ունենանք Տրդ դասարանի այն աշակերտները, որոնք քննութեան չեն ներկայացած միւսներուն հետ պիտի ունենանք հետեւեալ պատկերը.-

$170+90=260$  7.10%, իսկ պետական միջինը համեմատաբար 41.74%:

Պրըվէի պարագային 1967ի միակ վարժարանը որ պրըվէի աշակերտութիւն ներկայացուցած Ս. Յակոբեանն է: Ներկայացած 10 աշակերտութեան 9ը յաջողած են ինչ որ կ'ընէ 90% յաջողութիւն պետական միջին համեմատութիւնն է պրըվէի համար 28.94%:

Ըստ պետական վիճակագրութեանց Լիբանանի մէջ գործող ազատ (սեփական) վարժարաններուն մէջ կը գտնուին 900 նախակրթարան, 207 միջնակարգ եւ 191 երկրորդական վարժարան:

1966ին ներկայացած 46.696 աշակերտի վրայ 19.514ը յաջողած են *certificat*-ի ինչ որ կ'ընէ 41.71%:

Եթէ առնենք ազգային վարժարաններու վերջին դասարաններու աշակերտութեան թիւը, շուրջ 240, պիտի տեսնենք որ մեր նախակրթարաններուն մօտ համեմատութիւնը կը պակսի:

Այս կը ցուցնէ որ մեր նախակրթարանները չեն արդարացներ իրենցմէ սպասուած ակնկարութիւնը: Վերջին հաշուով ընդունելով հանդերձ որ անհրաժեշտ է մեր գաւակներուն տալ հայեցի դաստիարակութիւն, չենք կրնար, այսուհանդերձ չի պահանջել որ անոնք երկրի լեզուն սորվին եւ ստանան առնուազն *certificat* մը: Մանաւանդ ըստ նոր օրէնքի, ոեւէ մէկը չի կրնար *brevet*-ի ներկայանալ եթէ 4 տարի առաջ չէ յաջողած *certificat*-ի քննութեան: Նոյնպէս ոեւէ մէկը չի կրնար *baccl.*-ի արձանագրուիլ եթէ երկու տարի առաջ չէ յաջողած *brevet*-ի, այս օրէնքը ի գօրու չէ այն դպրոցներուն համար որոնք ամբողջական *lycée*-ի բնոյթ կը կրեն, այսինքն ունին մանկապարտէզ, նախակրթարան, միջնակարգ եւ երկրորդական: Այս օրէնքը ի գօրու է անոնց որոնք իրենց ուսումը կը շարունակեն գանազան վարժարաններու մէջ: Ինչ որ է հայ աշակեր-

տին պարագան: Եթէ Ազգ. վարժարաններու նախակրթարան յաճախող աշակերտ մը չի յաջողի *certificat*-ի չի կրնար ուսումը շարունակել մինչեւ որ կրկնելով կամ դպրոց փոխելով գայն չառնեն: Ուրեմն կը տեսնէք թէ պարզապէս մեր դպրոցներու մակարդակը բարձրացնելու մտահոգութիւններ չունինք միայն այլ մեր դպրոցները յաճախող աշակերտներուն ապագան չի խորտակելու հարց մը կայ: Ծնողքը կը գիտակցին այս իրողութեան եւ իրենց արդար պահանջն է որ մենք կարենանք անպայման յաջողցնել, գոնէ տրամաբանական համեմատութեամբ, մեր նախակրթարաններուն վերջին կարգին աշակերտները պետական *certificat*-ի մէջ, այլապէս մեր դպրոցները հետզհետէ պիտի պարպուին իրենց լաւագոյն աշակերտներէն եւ հոն պիտի մնան միայն անոնք որոնք արդէն յոյս չունին յաջողելու եւ ոչ ալ տրամադրութիւն՝ շարունակելու:

Ազգային իշխանութիւնը մտահոգ այս կացութենէն, իր մասնաւոր ուշադրութեան նիւթ դարձուցած է դպրոցներու պարագան: Թէպէտ ան ճիգ չի խնայեր, սակայն արդիւնքը տակաւին մխիթարական ըլլալէ շատ հեռու է:

Հետեւեալ ցուցատախտակը կը բացատրէ թէ ինչպէս մեր դպրոցները հետզհետէ պարպուելէ յետոյ սկսան կամաց կամաց վերստին լեցուիլ առանց սակայն հասնելու հոն ուր պէտք է որ տեսնէինք զանոնք:

1955-56	5436
1957-58	4729
1960-61	4386
1962-63	4093
1965-66	5280
1966-67	5389

Որոնք են այն գլխաւոր պատճառները որոնց համար մեր դպրոցները ցարդ գոհացուցիչ արդիւնք չի տուին, բացի պրըվէի քննութիւններէն որոնց արդիւնքը շատ գնահատելի է:

Ըստ մեզի պատճառները հետեւեալներն են.-

1) Որակեալ ուսուցիչներու պակաս

2) Լաւ մշակուած ծրագրի եւ մեթոտի պակաս

3) Դպրոցներու նիւթական վիճակը՝ ըսել կ'ուզեմ ֆիզիքական, առարկայական

**4) Ազգային վարժարան յաճախող աշակերտներուն պատկանած ընկերային միջավայրը**

Որակեալ Ուսուցիչներու Պակաս

Նախքան 1964-65 բարեկարգութիւնները եւ պետական նոր օրէնքներու եւ ազգային իշխանութեան կանոնադրութեան գործադրութիւնը մեր դպրոցներու մէջ, պաշտօնավարող 270 ուսուցիչ-ուսուցչուհիները կը ներկայանային կրթական հետեւեալ մակարդակով.-

6 հոգի բարձրագոյն ուսման մակարդակով

38 հոգի երկրորդական ուսման մակարդակով

63 հոգի միջնակարգ ուսման մակարդակով

163 հոգի միջնակարգէն վար

Այսօր պատկերը կը ներկայանայ հետեւեալ կերպով

22 համալսարանական (բարձրագոյն ուսում ստացած)

100 երկրորդական որոնցմէ 25 պաքալ- ունեցող

82 միջնակարգ որոնցմէ 22 պրովէ ունեցող

91 միջնակարգէ վար

Ուրեմն,

	1962-63	1966-67
համալսարանական	2.12%	7.5%
երկրորդական	13.45%	35%
միջնակարգ	26%	24%
նախակրթարան	55%	33.5%

Անշուշտ, ասով կը բացատրուի դպրոցներու պիւտճէներուն կրած չուրջ 50% յաւելումը:

1962-63

120 ուսուցիչ-ուսուցչուհիներ կը ստանային 60-90 ոսկի, այսօր կը ստանան 160 ոսկի

33 ուսուցիչներ կը ստանային 90-100 ոսկի, ներկայիս կը ստանան 175 ոսկի

36 ուսուցիչ-ուսուցչուհիներ կը ստանային 110-140, այսօր կը ստանան 175-200

27 ուսուցիչ-ուսուցչուհիներ կը ստանային 140-150, այսօր կը ստանան 200-225 ոսկի

65 այլ ուսուցիչներ ստացած են նոյնպէս յաւելումներ 20 մինչեւ 100 ոսկի:

Տնօրէնները կը ստանան 450-675 ոսկի

Կատարուած յաւելումները եղած են 15-19% համեմատութեամբ նախորդ սակերու:

Կարելի է դիւրութեամբ նշմարել որ մեր սակերը աւելի բարձր են քան պետական սակերը, այսուհանդերձ անոնք կը մնան տակաւին շատ հեռու գոհացուցիչ ըլլալէ: Անոնք նոյնիսկ անբաւարար են:

Վերոյիշեալ վիճակագրութենէն երեւան կու գայ որ մեր ուսուցչական կազմին կրթական մակարդակը բաւական բարելաւուած է, սակայն վախճանական իմաստով, եթէ արդիւնքէն պիտի դատենք ու նկատի ունենանք պետական certificat մէջ մեր արձանագրած արդիւնքը, պատկերը յուսադրիչ չէ:

Ծրագրի եւ մեթոտի պակաս

Մեր դպրոցները կը գործադրեն ներկայիս լիբանանեան կրթական ծրագիրը: Սակայն իբրեւ երկրորդական լեզու ոմանք կ'առնեն Փրանսերէնը ուրիշներ անգլերէնը: Տրուած ըլլալով որ մեր վարժարանները ձրիավարժ յայտարարած ենք, հետեւաբար ստիպուած ենք հաւատարմօրէն պահել եւ գործադրել հնգամեայ դասընթացը: Այս յառաջ կը բերէ խճողում կրթական ծրագրի մէջ: Արաբերէն, հայերէն, Փրանսերէն, ազգ. պատմութիւն եւայլն: Պէտք է ուրեմն բարեփոխել մեր կրթական ծրագիրը: Ազգային իշխանութեան մէջ շատ մը յարգելի ազգայիններ կ'ընդվզին երբ հարց դառնայ արաբերէն լեզուին յատկացուած պահերը աւելցնել ի վնաս այլ դասերու: Հայերէնի, ազգային պատմութեան, կրօնքի, թուաբանութեան, աշխարհագրութեան եւ գիտութեան հայերէն լեզուով ուսուցումի ինչ որ կրկնութիւն յառաջ կը բերէ: Տակաւին այս հարցը պահանջուած լուծումը չէ գտած: Որոշ հասկացողութիւններ ցոյց տրուեցան սակայն գանազան տեսակէտներու կողմնակիցներուն միջեւ:

Լաւագոյն կարգադրութիւնը այն եղաւ որ նկատի ունենալով մեր ծրագիրներուն խճողեալ հանգամանքը եւ հայ աշակերտին արաբական միջավայրէն հեռու մնալը, մանկապարտէզի եւ նախակրթարանի միջեւ ստեղծուեցաւ նոր դասարան մը՝ նախապատրաստական: Այդ դասարանը պիտի ունենայ յատուկ ծրագիր: Արաբերէնի լայն տեղ տրուեցաւ: Հոն է որ մանկապարտէզէն եկող փոք-

ըիկ աշակերտը պիտի վարժուի արաբերէն խօսակցութեան, պիտի լսէ պատմութիւններ արաբերէն եւ պիտի շարունակէ արդէն մանկապարտէզի մէջ սորված իր սկզբնական արաբերէնը: Բնականաբար հայերէն լեզուն, պատմութիւնը, եւ երգը կը մնան հիմնական դասեր: Սակայն շեշտը դրուած է առաւելաբար արաբերէնի վրայ:

Այս ձեւով նախապատրաստական դասարանէն ելած աշակերտ մը աւելի լաւ պիտի իւրացնէ նախակրթարանի արաբերէն ծրագիրը:

Եւ ան հինգ տարիէն, այսինքն 12 տարեկանին ապահովաբար պիտի դիմէ դէպի certificat քննութիւնները:

Այս բոլորը կը մնան ծրագիր եթէ դպրոցի պատասխանատուները պատշաճ գիտակցութեամբ չի հետապնդեն աշխատանքները եւ արդիւնքներէն մեկնելով եզրակացութիւններու չի յանգին:

Ամէն մէկ դպրոց պէտք է ունենայ իր արաբերէնի պատասխանատու ուսուցիչը որուն պարտականութիւնն է հետեւիլ արաբերէն լեզուի ուսուցումին: Ֆիշեր կը պատրաստէ, վիճակագրութիւններ կ'ընէ եւ կը տեղեկագրէ տնօրէնութեան որուն կը կցէ նոյնպէս իր առաջարկները: Աշխատանքը պէտք է ըլլայ հետեւողական եւ միշտ բաղադրական այլ վարժարաններու համապատասխան դասարաններուն հետ: Պէտք չէ որ մենք կղզիացած աշխատանքներ տանին:

Ըսենք նոյնպէս Մեթոտ՝

Այդ մեր դասագրքերու պարագան է: Մեր դպրոցներու մէջ գործածուած դասագրքերը մեծ մասամբ ժամանակավրէպ են իրեն մեթոտ: Ներկայիս լեզուներու ուսուցման համար կը գործածուին մեթոտ active, կը մեկնին բառէն հասնելով վանկին, ապա եւ վանկէն տառին:

Մեր դասագրքերը գրաւիչ չեն, անոնք աշակերտութեան ոչ երեւակայութիւնը կ'աշխատցնեն ոչ իր ճաշակը կը նրբացնեն եւ կը զարգացնեն ոչ իսկ անոր յիշողութիւնը կը մարզեն ու կը խթանեն:

Նախակրթարաններու դասագրքերը պէտք է ըլլան իրենց տառերով, պատկերներով, նիւթերու ընտրութեամբ աստիճանաւորուած (progressive)՝ մեր դպրոցներուն մէջ, ա. եւ բ. դասարաններուն գրքերուն համար գործածուած են նոյն տառերը ինչ որ 4-5ին համար:

Պատկերները պէտք է ըլլան գրաւիչ, հետաքրքրական եւ մա-

նուկին մտքին հասունութեան հետ համապատասխան եւ մանա-  
լանդ անոր երեւակայութիւնը սրող:

Եթէ մեզի առարկուի որ անհատներ ի վիճակի չեն գոյութիւն  
ունեցող գիրքերէն աւելին ընելու որովհետեւ անիկա ծախս կը պա-  
հանջէ եւ անոնք ապահով չեն որ կարենան սպառումի միջոցով դի-  
մագրաւել հսկայական ծախսերը, կարելի է ըսել որ այդ գործը  
պէտք է ըլլայ ազգային իշխանութեան հովանաւորութեամբ եւ  
կարգադրութեամբ:

Կարելի է մրցումի ձեւով պարտականութիւն տալ քանի մը  
մասնագէտներու որ գան եւ իրենց տրուած նիւթին վերաբերեալ ա-  
ռաջարկներ ներկայացնեն: Յանձնախումբ մը կը քննէ, կ'ընտրէ եւ  
լաւագոյնները ընտրելէ յետոյ կը համադրէ: Այդ գործերուն համար  
պէտք է վարձատրութիւն նախատեսել բնականաբար: Ազգ. իշխա-  
նութիւնը իր ծախսերով կը հրատարակէ եւ զանոնք գործադրու-  
թեան կը դնէ իր դպրոցներէն ներս:

Երբ նկատի կ'ունենանք որ ամէն մէկ գրքէն տարին առնուազն  
400-700 օրինակ կը վաճառուի, կը խորհիմ որ յատկացուած գումար-  
ը վտանգի չենթարկուիր:

Մեր Դպրոցներուն Ֆիզիքական (materiel) Պայմանները

Մեր դպրոցները բազմատաս օտար վարժարաններուն շատ  
խեղճ պայմաններու տակ են: Ի բաց առեալ քանի մը վարժարաննե-  
րէ որոնք ներկայանալի են, մնացեալներուն դասարանները կը  
մնան շատ փոքր իսկ փակերը պզտիկ: 20 մ.ք. դասարանի մը մէջ  
յաճախ կը թիւմուին 30-40 աշակերտներ: Ամէն մէկ աշակերտին 1/2  
մ.ք. տարածութիւն պահելով: Մինչդեռ պահանջուած տարածու-  
թիւնն է 1 1/2 մ.ք.: Փակերը նոյնպէս կը տարբերին 200-500 մ.ք. մի-  
ջեւ մինչդեռ անոնք պէտք է ըլլան առնուազն 1000 մ.ք.: Չի խօսինք  
հիւղաւաններու մէջ մեր ունեցած դպրոցներու մասին ուր երբ ձմե-  
ռը անձրեւէ, դասի պահուն, ոչ կարելի է բան մը իմանալ եւ ոչ եւս  
իմացնել:

Ազգ. վարժարան յաճախող աշակերտութեան մեծ մասը կու  
գայ հայ ժողովուրդի նիւթապէս համեստ եւ տկար մասէն: Աշա-  
կերտութեան մեծ մասը իր պահերը փողոց կ'անցնէ ուր կը խաղայ  
ենթակայ ամէն տեսակի տգեղ օրինակներու ազդեցութեան: Տան

մէջ շատեր կը բնակին մէկ սենեակի մէջ, իրենց ծնողներու հետ, միջոց իսկ չունին առանձին դաս սորվելու: Անփափականկատ այցելուներ արգելք կը հանդիսանան մանուկին դաս սորվելուն եւ այս վերջինը պարտադրաբար ներկայ կ'ըլլայ իրմէ մեծերու խօսակցութիւններուն, որոնք ափսոս, միշտ ալ անոր բարոյական կառոյցքը ամրացնելու կոչուած չեն:

Ի՞նչ պէտք է ընել:

Ըստ մեզի հետեւեալ պայմանները հրամայական պահանջքի մը բնոյթը կը կրեն.-

1) Ուսուցիչներու կրթական մակարդակի բարձրացում

Այդ ընելու համար անհրաժեշտ է նիւթական լայն միջոցներ ունենալ եւ ուսուցիչներուն վճարել ոչ միայն պետական սակերուն համաձայն այլ այնքան որքան պէտք է արժանավայել կեանք ապահովելու համար անոր գայն փրկելով առօրեայի նիւթական դժնդակ պայմաններէն: Ուսուցչութիւնը պէտք է դառնայ կոչում ունեցողներուն համար ասպարէզ եւ ոչ թէ պատահականօրէն անգործ մնացած մարդոց պատսպարան:

Ազգային իշխանութիւնը մեծ ճիգ կը թափէ եւ կ'ընէ իր կարելին: Ազգ. տուրքերու գումարը որուն ցարդ միայն 40% կը յատկացուէր ուսումնական խորհուրդին, 2 տարիէ ի վեր կը յատկացուի անոր 80%ը: Կանաչ կիրակիի հանգանակութիւնը դժբախտաբար շատ արդիւնաւէտ չէ: Ան հազիւ թէ ուսումնական խորհուրդին կ'ապահովէ 9-12 հազար ոսկի տարեկան:

Ուսումնական խորհուրդը իր կարգին կը վճարէ կրթական քննիչի ամսաթոշակները, գործէ արձակուած ուսուցիչներուն հատուցումի 1/3ը եւ հնարաւորութեան սահմաններուն մէջ օգնութեան կը հասնի պիւտճէն չի հաւասարակչող աղքատ վարժարաններուն, անշուշտ յետ հաշիւներու խիստ քննութեան:

2) Բոլոր դպրոցներու մէջ ունենալ արաբերէն լեզուի պատասխանատու ուսուցիչներ օգնական տնօրէնի հանգամանքով:

3) Հսկել կարելի եղածին չափ որ դպրոցները թաղականութեանց կամայականութեան չ'ենթարկուին: Այս մարմինները կրնան օգտակար ըլլալ դպրոցներու մատակարարութեան եւ խնամակալութեան համար պայմանաւ սակայն որ հեռու մնան անձնական



նկատումներէ: Դպրոցներու կրթական ուղեղը պէտք է ըլլայ ուսումնական խորհուրդը, որուն որոշումները պէտք է գործադրուին անվիճելի կերպով:

4) Պահանջել մեթոտիկ աշխատանք հետապնդուած եւ հետեւողական կերպով, մանկարկաժական ու արդիական ըմբռնումներուն համաձայն:

5) Միացեալ դասագիրքերու ձեւի որդեգրում: Մէկ գրքին մէջ աշակերտը պէտք է գտնէ ընթերցանութիւն, հայոց պատմութիւն, քաղաքակրթութեան պատմութիւն, կրօն, լեզու, եւայլն: Այս համադրութիւնը պէտք է ըլլայ ուսումնասիրուած եւ դասարանէ դասարան ներդաշնակ:

6) Աշխատիլ վերջապէս որ մեր դպրոցները իբրեւ շինութիւն ըլլան գեղեցիկ, գրաւիչ, մաքուր եւ արժանի կրթարան կոչուելու:

7) Եւ իբրեւ ընդհանուր յայտարար նիւթական լայն միջոցներ գտնել թիկունք կանգնելու համար ամէն տեսակի բարեկարգութեան առիթ տուող ծախսերուն:

Ահա սիրելի բարեկամներ, իր ամփոփ գիծերուն մէջ, պատկերը մեր ազգային վարժարաններուն: Որքան ալ երկար խօսինք այս մասին քիչ պիտի ըլլայ որովհետեւ այս հարցը աղերս ունի մեր ազգային գոյութեան իսկ հետ:

Զկայ անհատական թէ հաւաքական ճիգերու աւելի լաւ օգտագործում քան այն ինչ որ կ'ըլլայ կրթական գործերու համար:

Լիբանան, ուր օտար վարժարաններ եւ սեփական վարժարաններ կը վիտան, կը յատկացնէ այսուհանդերձ իր պիւտճէին 16.20% կրթական նախարարութեան: Այսինքն 101.500.000 տոլար:

Պէտք է որ ազգովին մեր ուշադրութեան եւ հետաքրքրութեան առարկան դարձնենք մեր ազգային վարժարանները:

Վստահ կրնանք ըլլալ, որ երբ անոնք սկսին լաւ արդիւնք տալ, այն ատեն մեր հարցը պիտի դառնայ միմիայն դասարաններ աւելցընելու հարց:

Մակայն ինչ կ'արժեն ժողովներու եւ հաւաքոյթներու մէջ առնուած որոշումները եթէ մենք բոլորս ազգովին գիտակից պարտաճանաչութեամբ չիւրացնենք զանոնք եւ չի համագործակցինք:

ՏԱՍՆԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ ՆՈՒԻՐՈՒԱԾ  
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Վեհափառ Տէր,  
Գերաշնորհ, Գերապայծառ, Գերապատիւ,  
Արժանապատիւ Հայրեր եւ Վերապատուելիներ  
Յարգարժան Պետական Երեսփոխաններ  
Սիրելի Հանդիսականներ,

1976 թուին, Երջանակայիչատակ Խորէն Ա. Կաթողիկոս նկատի ունենալով իր առողջական ծանրակշիռ վիճակը, մասնագէտ բժիշկներու թելադրութեամբ եւ յետ խորհրդակցութեան Ազգ. Կեդրոնական Վարչութեան Խառն Ժողովին հետ, 20-1-1977 կոնդակով կը յայտնէր վարչական գործերէ հեռու մնալու իր որոշումը եւ կը թելադրէր որ իր կենդանութեան Աթոռակից Կաթողիկոս մը ընտրուի որուն կարենայ փոխանցել Կաթողիկոսական պաշտօնին բոլոր պատասխանատուութիւնները:

Այնուհետեւ ազգային պատգամաւորական ժողովին կը մնար յարմարագոյն եկեղեցականը ընտրել իբրեւ Աթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռին վարելու համար Աթոռին եւ անոր թեմերուն ծանր եւ բազմատեսակ գործերն ու ազգային-եկեղեցական կեանքը:

Արդարեւ Մայիս 22, 1977-ին, ուրեմն ասկից ճիշդ 11 տարի առաջ, Անթրիիասի Մայր Տաճարին մէջ առ այդ հաւաքուած Պատգամաւորական Ժողովը, միաձայնութեամբ կ'ընտրէր Ամերիկայի Արեւելեան թեմի բազմավաստակ Առաջնորդ Գերաշնորհ Տէր Գարեգին Արք. Սարգիսեանը որուն Հայրապետական օծումը կը կատարուէր Մայիս 29-ին Երանաշնորհ Տ.Տ. Խորէն Ա. Կաթողիկոսի ձեռքով ներկայութեամբ հաւատացեալներու խուռն բազմութեան: Արարողութեան կը մասնակցէին Կիլիկիոյ Ս. Աթոռի եւ Մայր Աթոռ Էջմիածնի միաբանութեանց պատկանող Եպիսկոպոսներ եւ Արքեպիսկոպոսներ:

Ճիշդ 10 տարի յետոյ, քաղաքակիրթ ժողովուրդներու գիտակցութեամբ Ազգ. Կեդրոնական Վարչութեան Խառն Ժողովը կ'որոշէր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բոլոր թեմերու մէջ տօնել իր արժանընտիր Հայրապետին գահակալութեան տասնամեայ Յորելեանը իբրեւ երախտագիտութեան արտայայտութիւն անոր բազմարդիւն գործունէութեան:

Ոմանց համար 10 տարին կարճ ժամանակամիջոց մըն է բարձրաստիճան անձնաւորութեան մը կամ հաստատութեան մը կեանքին մէջ որպէսզի յատուկ յիշատակութեան արժանի նկատուի: Սակայն ինչպէս գիտէք, տարիներու երկարաձիգ շարանը չէ միայն որ կ'արժեւորէ ապրուած կեանք մը, կատարուած աշխատանք մը եւ զանոնք կը դարձնէ բացառիկ գնահատանքի առարկայ այլեւ իրագործուած ակներեւ արդիւնքն է որմէ կ'օգտուին հաւաքականութիւններ առաւել եւս ամրապնդելու համար իրենց իւրայատուկ գոյութիւնը եւ հզօրացնելու համար իրենց հաւատքը ի խնդիր իրենց ձգտումներու իրականացման:

Ժողովուրդներու պատմութեան մէջ շրջաններ կան որոնք թէպէտ կարճ եւ սահմանափակ տարածք ունին ժամանակի մէջ բայց յայտնաբերելով նոր անկիւնադարձեր, մեծ նուաճումներ, ցայտուն իրագործումներ, դարձած են յատուկ մատնանշումի առարկայ իբրեւ յիշատակելի հանգրուան, գօտեպնդիչ երեւոյթ: Նոյնն ալ է ազգային թէ եկեղեցական բացառիկ եւ առաքելատիպ անձերու համար ինչպէս է այսօր պարագան հայ ժողովուրդի երախտաւոր հովուապետ, Գարեգին Բ. Կաթողիկոսին, որուն կեանքը անթուլ ճիգերու եւ խոյանքներու գումարով կը յատկանշուի:

Արդարեւ 41 տարիներ առաջ, Գարեգին Բ. Կաթողիկոս, աւագանի անուկով Նշան, աշակերտ էր Քեսապի Ազգ. Միացեալ վարժարանի: Տեսնելով իր հօր այդ օրերու գործազուրկ վիճակը, հակառակ այն իրողութեան որ ինք դասարանին միշտ առաջինը կը հանդիսանար, կ'ուզէ վերջ տալ ուսման ու մտնել դերձակատուն արհեստ սորվելու համար որպէսզի ամէնակարճ ժամանակամիջոցի մէջ հնարաւորութիւն ունենար իր նիւթական օգնութիւնը բերելու ընտանիքի յարաճուն պէտքերուն ու այդ ընթացքով թեթեւցնելու իր հօր տակաւ աճող մտահոգութիւնները:

Հայրը սակայն խելացի մարդ, զգալով իր սղուն հոգեկան

խոռովքն ու մտահոգութիւնները ինք եւս կը մտատանջուէր ու կը տառապէր որովհետեւ իրեն համար յստակ էր որ Նշանը այդ կ'ուզէր առաջնորդուած ընտանիքին եւ հօր հանդէպ իր ունեցած գոհողութեան ոգիէն սակայն այդ չէր որ կը ցանկար իր սրտին խորը:

Օգտագործելով առիթ մը ուր Օգոստոսի տօթակէզ տաքուն հայր ու տղայ կը գտնուին տան պատշգամին վրայ, հայրը կը փորձէ համոզել իր տղան որ շարունակէ ուսումը: Սակայն Նշան կը մնայ անդրդուելի: Նոյն պահուն, նշմարելով գիւղին Տէր Հայրը, հայրը վեր կը կանչէ գայն սուրճ մը առնելու, այն հաստատ ակնկալութեամբ որ Տէր Հայրը օգնութեան կը հասնի իրեն համոզելու համար Նշանը որ փոխէ իր որոշումը:

Իմանալով հօրը տուած բացատրութիւնները, ինչպէս նաեւ Նշանին առարկութիւնները եւ պատճառաբանութիւնը, Տէր Հայրը պահ մը մտածելէ յետոյ, խօսքը Նշանին ուղղելով կ'ըսէ. թոյլ տուէք որ հոս մէջբերեմ Վեհափառ Հայրապետին «Խորհէ եւ Մտիր» գրքին համապատասխան գլուխէն անցք մը.

«... Տէր Հայրը ձեռքը մօրուքին տարաւ մտածկոտ կերպար մը հագաւ եւ գիւտ մը բրած ըլլալու ուրախութեամբ, հաստատ, համոզիչ շեշտով ըսաւ.

- Լաւ, քանի այս դպրոցը չես ուզեր շարունակել, ուրիշ դպրոց մը դրկե՞նք քեզի.

- Ո՞ւր, - ըսի, - փութկոտութեամբ:

- Անթիլիաս:

- Ո՞ւր է Անթիլիասը:

- Պէյրութի մօտ տեղ մը:

- Ի՞նչ պիտի ուսանիմ:

- Լաւ ուսում կ'առնես, - ըսաւ, եւ անմիջապէս աւելցուց չփախցնելու համար յանկարծական հետաքրքրաշարժութեանս այդ առիթը, - ուսում առնելէ ետք, եթէ ուզես վարդապետ կ'ըլլաս, եթէ չուզես ուսուցիչ, մտաւորական կը դառնաս եւ բարձր դպրոցներու մէջ ալ ապագային կը պաշտօնավարես:

- Լաւ, կ'երթամ, - ըսի ու անմիջապէս նայեցայ հօրս, որուն դէմքին գիծերը յանկարծ փոխուեցան եւ քիչ անգամ տեսնուող ժպիտը վերադարձաւ, գուլալ ջուր խմած մարդու գոհունակութեան զգացումը արեւու լոյսին պէս տարածելով ողջ մարմնին վրայ, ու մին-

չեւ այսօր չգիտցայ թէ «լաւ կ'երթամ» բառերը մտքէն ծնան թէ ներքին զգայարանքէ մը, մտածումէ, տրամաբանութեան ոյժէն ալեյի խոր եւ զօրաւոր, որ երբեմն մարդուն մէջ կը յայտնուի տեսակ մը հանդարտ ու մեղմ հոսող աղբիւրէն յանկարծ դուրս եկող ուղիւի մը նման»։ Կը փակեմ մէջբերումը։

Եւ ահա այսպէս իր հայրենի բնաշխարհը, Քեսապը ձգելով, պատանի Նշանը կու գայ Անթիլիաս ուր ուսման ծարաւին յագուրդ տալու կրքով, ինչպէս եւ ապագայի անորոշ հեռանկարներով կը մտնէ Դպրեվանք։ Հոն իր ուշիմութեամբ եւ ժրաջանութեամբ երջանկայիշատակ Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսի բացառիկ գնահատանքին կ'արժանանայ։

1952-ին կ'աւարտէ Դպրեվանքը եւ կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի վերակոչուելով Տ. Գարեգին Աբեղայ ի յիշատակ նորոգ հանգուցեալ Տ.Տ. Գարեգին Ա. Կաթողիկոս Յովսէփեանցի։

Դպրեվանքի մէջ կը ստանձնէ հսկիչի պաշտօն որուն աւերթեր կը դասաւանդէ գանազան նիւթեր եւ կը պատրաստէ ու կը ներկայացնէ վարդապետական իր աւարտաճառը նիւթ ունենալով «Հաստանեայց Եկեղեցոյ Աստուածաբանութիւնը ըստ շարականներուն» եւ 1955 Յունիս 5-ին կը տիրանայ վարդապետական աստիճանին։

Այնուհետեւ Գարեգին Բ. Վեհափառը կը գտնենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան վերջին 35 տարիներու պատմութեան մայր էջին վրայ։ Իբրեւ ողջամիտ միաբան, նախանձախնդիր այս Աթոռի գոյութեան եւ անկախութեան, Գարեգին Վեհափառ իր դրական աջակցութիւնը կը բերէ հոյլ մը այլ միաբաններով Զարեհ Ա. Կաթողիկոսին, անոր ընտրութեան տագնապալի օրերուն։ 1956-ին կը նշանակուի Դպրեվանքի Տեսուչ եւ Սեպտեմբեր 14, 1957-ին կը մեկնի Օքսֆորտի համալսարանը ուր կը սորվի դասական հին լեզուները, լատիներէնը եւ յունարէնը եւ Աստուածաբանական բաժնին մէջ կը ստանայ Աստուածաբանական բարձրագոյն ուսում։ Ուսման աւարտին կը ներկայացնէ իր աւարտաճառը իբրեւ նիւթ ունենալով «Քաղկեթոնի Ժողովը եւ Հայոց Եկեղեցին», գիտական այս ուսումնասիրութիւնը արժանանալով քննիչ յանձնախումբի բարձր գնահատանքին, Գարեգին Վարդապետ կը ստանայ իր ընտրած ճիւղին համապատասխան համալսարանական վկայական։

Անթիլիաս վերադարձին, իրեն կը վստահուի յաջորդաբար գանազան պատասխանատու պաշտօններ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հետգհետէ ծաւայող գործունէութեանց մէջ:

Կը վերստանձնէ Դպրեվանքի տեսչութիւնը զոր կը վարէ ձեռներէցութեամբ ու կը փոխադրէ Պիքֆայայի վանքը:

Հետեւելով Երջանկայիչատակ Զարեհ Ա. Վեհափառի ցուցմունքներուն եւ ապա քաջալերուելով Խորէն Ա. Վեհափառի խրախուսանքէն կը մասնակցի միջ-եկեղեցական ժողովներու եւ միջագային մակարդակով համագումարներու:

Ներկայ կ'ըլլայ, իբրեւ ղէտ եւ Կիլիկեան Ս. Աթոռին ներկայացուցիչ, Գերաշնորհ Արտաւազդ Սրբազանին հետ, Վատիկանի տիեզերական երկու յաջորդական ժողովներուն: Շփումներ կ'ունենայ եւ կապեր կը հաստատէ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին մաս կազմող եկեղեցական պետերու հետ անհրաժեշտ հողը պատրաստելու համար Մեծի Տանն Կիլիկիոյ անդամակցութեան այդ ժողովին:

1962-ին Երջանկայիչատակ Զարեհ Վեհափառը, հեռատես քաղաքականութեամբ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի անդամ արձանագրելու դիմում կը ներկայացնէ: Առ այդ պարտականութիւն կու տայ Գարեգին Վարդապետին որ պէտք եղած աշխատանքը տանի ու շփումներ յառաջացնէ արդէն իսկ անդամ եղող զանազան եկեղեցիներու պետերուն հետ, որպէսզի հարցը առանց խոչընդոտի հասնի իր յաջող լրումին:

1962-ի Օգոստոսին ժողով պիտի գումարուէր Փարիզի մէջ: Հոն էին Խորհուրդի անդամ եկեղեցիներու ներկայացուցիչները: Հոն էր նաեւ Գարեգին Վարդապետը լծուած տենդագին աշխատանքի: Ժողովին ատենապետը յետ քննութեան, կ'աւետէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան իբրեւ լիիրաւ անդամ ընդունուիր Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին մէջ որ կը հաշուէ ներկայիս շուրջ 310 անդամ եկեղեցի աւելի քան 400 միլիոն հաւատացեալներով:

Գարեգին Վարդապետին ամէնաերջանիկ պահերէն մէկն էր այդ: Լուրը կը փոխանցէ Անթիլիաս: Վանք կը վերադառնայ, Զարեհ Վեհափառը գինքը կ'ընդունի լայն ժպիտով ու գրկաբաց:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մասնակցութիւնը Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին ձեւական չի մնար: Գարեգին Վարդապետ կը մասնակցի բոլոր կարեւոր համաժողովներուն: Զանազան օտար լեզուներով կը քարոզէ ու կը դասախօսէ աշխարհի մեծ ոստաններուն մէջ:

Իր մշակուած մտքի ճառագայթումը եւ ժրաջան գործունէութիւնը Ե.Հ.Խ.էն ներս, առիթ կու տան Գարեգին Վարդապետին որ իրեն վստահուի բազմաթիւ պատասխանատու պաշտօններ: Ուփսայլի մէջ կ'ընտրուի անդամ Կեդրոնական եւ Գործադիր Մարմիններուն իսկ Նայրոպիի համաժողովէն ետք կ'ընտրուի Ե.Հ.Խ.-ի Փոխ-ատենապետ պատիւ բերելով իր եկեղեցւոյ եւ իր ազգին: Իսկ ներկայիս, տարիներէ ի վեր Վեհափառ Հայրապետը Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի երեք նախագահներէն մէկն է:

1963-ին Գարեգին Վարդապետ ծայրագոյն Վարդապետի աստիճան կը ստանայ իսկ 1964-ին Խորէն Ա. Կաթողիկոսը զինքը Եպիսկոպոս կ'օծէ ու կը ձեռնադրէ Արտաւազդ Ծ.Վ. Թրթռեանի հետ: 1973-ին կը ստանայ արքութեան տիտղոս:

1971-էն սկսեալ Գարեգին Սրբազան կը հրաւիրուի եկեղեցւոյ վարչութեան բարձրագոյն պաշտօններու: 1971-ի Փետրուար 24-ին կը կոչուի Իրանա-Հնդկաստանի Հայրապետական Պատուիրակի ապա Առաջնորդի պաշտօնին ուր կը մնայ 2 1/2 տարի: Գարեգին Սրբազան խանդավառութեամբ կը փարի պաշտօնին: Մեծ թափով յառաջ կը տանի շինարարական գործերը: Կը կազմակերպէ թանգարանը, կը դասաւորէ մատենադարանը, կ'արդիականացնէ տպարանը, կը բանայ երիտասարդական կեդրոնատեղին եւ կ'աւարտէ ծերանոցի կառուցումը:

1973 Յունուար 21-ին կը նշանակուի Առաջնորդական Փոխանորդ ապա Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւելեան թեմին եւ կը մնայ հոն մինչեւ իր Աթոռակից Կաթողիկոս ընտրուիլը: Հոն եւս կը տանի օգտաշատ գործունէութիւն: Լիբանանի հայութեան օժանդակելու աշխատանքներու մէջ (1976-77) վճռական դեր կ'ունենայ իր աշխոյժ եւ հետեւողական գործունէութեամբ կապ հաստատելով պատասխանատու անձնաւորութիւններու հետ:

1977-ի Մայիս 22-ին, ինչպէս տեսանք, Գարեգին Սրբազան Աթոռակից Կաթողիկոս կ'ընտրուի եւ կ'օծուի Մայիս 29-ին:

Զինուած 25 տարուայ կրօնաւորի թանկագին փորձառութեամբ իբրեւ հետեւանք իր տարած բազմատեսակ եւ լայնածիր գործունէութեան, բազմալեզու եւ բանիբուն հոգեւորական, օժտուած խորաթափանց մտքով, լայն մշակոյթով եւ իր ազգին ծառայելու անյազ տենչով, Գարեգին Սրբազան բարձրանալով Մեծի Տանն Կիլիկիոյ դարաւոր եւ փառաւոր գահը կը ստանձնէ անոր պատմական պատասխանատուութիւնը: Ճիշդ է որ վեհաշուք Աթոռը Գարեգին Բ. Կաթողիկոսին կու տայ նոր հեղինակութիւն եւ փայլք սակայն փոխադարձութեան սկզբունքով, Վեհափառին ճառագայթող անձը, իր վայելած միջ-եկեղեցական եւ միջազգային վարկն ու համբաւը արտացոլելով Աթոռին վրայ, առաւել եւս կ'ամրապնդեն Աթոռին դիրքն ու հմայքը ի սպաս անոր կատարելիք դերին եկեղեցական թէ ազգային կալուածներէն ներս:

Վեհափառին վերջին 10 տարիներու ընթացքին կատարած կրօնական, ազգային, մշակութային, յարաբերական, շինարարական, ընկերային եւ վարչական ծառայութիւնները որոնք մեծ մասամբ երեւան կու գան Ս. Աթոռին արձանագրած իրագործումներու ընդմէջէն պսակումն են իր ներկայի եւ մասամբ անցեալի լայնածաւալ գործունէութեան ներքին թէ արտաքին բնագաւառներէն ներս:

Կարելի է գանոնք համախմբել հետեւեալ չորս գլուխներու տակ.

Հոգեւոր եւ կրօնական ծառայութիւն

Ազգային-մշակութային գործունէութիւն

Միջ-եկեղեցական, միջազգային եւ միջ-թեմական յարաբերութիւններ

Շինարարական, ընկերային եւ վարչական իրագործումներ:

1.- Հոգեւոր եւ կրօնական ծառայութեան լուսարձակին տակ կ'իյնան յատկապէս Դպրեվանքի եւ կրօնական դաստիարակութեան գարգացման եւ լուսաւորման նուիրուած ճիգերը: Արդարեւ Դպրեվանքը որուն համար արդարօրէն ըսուած է որ արտասահմանի հայութեան կենսատու աւիչն է, Վեհափառ Հայրապետի ուշադրութեան գլխաւոր առարկան դարձած էր արդէն 1956-էն ի վեր երբ առաջին անգամ ստանձնեց անոր տեսչութիւնը: Վեհափառը ոչ



միայն մնացողն ներկայութիւն եղաւ հոն իր պաշտօնավարած շրջանին այլեւ մղիչ ոյժ եւ ուղեցոյց հանդիսացաւ այն բոլոր սերունդներուն հոգեւորական թէ աշխարհական որոնք վայելեցին իր շունչին ջերմութիւնը, մտքին խորութիւնը եւ ազգային ըմբռնումներու բիւրեղացումը եւ հարագատութիւնը:

Դպրեվանքը, Վեհափառին համար սոսկ կրօնագիտութեան եւ եկեղեցական ուսմանց վայր մը չէ, այլեւ պատասխանատու եւ գիտակից մարդու պատրաստութեան դարբնոց է: Ինչպէս պիտի ըսէր իր բառերով, «Աստուծոյ ու Ազգին, աւետարանի ու մեր մշակոյթին սիրովը, անոնց ծառայելու յօժարակամ ու ինքնանուէր տրամադրութեամբը պրկուած եւ իրենց կեանքը պատասխանատուութեան զգացումին ղեկովը առաջնորդող սերունդի մը դարբնոցն է Դպրեվանքը»:

Դպրեվանքին դերին մաս կը կազմէ նաեւ իրաւ մարդը պատրաստելու հարցը որ տարիներ շարունակ Վեհափառին մտածումներուն եւ մտատանջութեան առանցքը դարձած է:

Հայոց լեզուի եւ մշակոյթի հանդէպ իր ունեցած սէրը եւ նախանձախնդրութիւնը անվիճելի իրողութիւններ են:

Ուղղելով իր խօսքը Դպրեվանքներուն, կը մէջբերեմ Վեհափառին խօսքը. կ'ըսէ «Այս Դպրեվանքը, ամբողջ ժողովուրդի աչքին, կայ անոր համար որ քրիստոնէական կրօնքի ուսուցումի կողքին, հայոց լեզուն, հայոց մշակոյթի մեզի համար դառնան գերագոյնը, ամէն բանէ վերը»:

Այս հեռանկարով պատրաստուած եկեղեցականները երբ մանաւանդ առիթ կ'ունենան իրենց գիտութիւնը եւ կազմաւորումը ամբողջացնելու համալսարանական բարձրագոյն ուսումով կը դառնան աներկբայօրէն Լիբանանի, թէ արտասահմանի այլ երկիրներուն մէջ, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ճառագայթումին նպաստող որակեալ տարրեր:

Այսպէս Գարեգին Վեհափառը խորապէս համոզուած Դպրեվանքի եկեղեցական եւ ազգային կարեւոր դերին մասին ինչպէս էր պարագան իր երջանկայիշատակ նախորդներուն, ամբողջ կարելին ըրաւ որպէսզի ան օժտուի մարդկային գնահատելի ոյժերով իրեւ դաստիարակ եւ դասախօս եւ ունենայ հոգեւոր եւ մանկավարժական պահանջներուն զոհացում տուող արդիական շէնք մը հեռու Անթիլիասի ժխորէն:

Այսօր Պիքֆայայի դալարագեղ բլուրներու լանջքին հաստատուած Դպրեվանքը ուր ուսում կը ստանան 59 աշակերտներ, օժտուած իր գրադարանով, հիւրանոցով, սրահով, խաղավայրով եւ ներքին բոլոր յարմարութիւններով, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատիւ բերող իրագործում մըն է զոր կը պարտինք Յորեւար Վեհափառին հետեւողական ջանքերուն:

Կրօնական դաստիարակութեան ծիրէն ներս Վեհափառ Հայրապետի յատուկ կարգադրութեամբ տարիներ շարունակ Անթիլիասի մէջ տեղի ունեցան կրօնական դաստիարակութեան նուիրուած դասախօսական շարքեր ուղղուած ժողովուրդին ի խնդիր մեր եկեղեցական ու մշակութային ժառանգին ծանօթացման: Կիրակնօրեայ վարժարանները շարունակուեցան նոր թափով եւ խանդավառութեամբ:

2.- Մեր ազգային պատմական իրաւունքներուն պաշտպանութեան եւ հետապնդման տեսակէտէն, Վեհափառ Հայրապետի միջեկեղեցական եւ միջազգային յարաբերութիւնները թոյլ տուին որ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կարենայ օգտակար ծառայութիւն մատուցանել օտար պատասխանատու շրջանակներէն ներս:

Արդարեւ Մակի Մարդկային Իրաւունքներու Ենթայանձնախումբին մէջ ուր կը քննուէր հայ ցեղասպանութեան հարցը եւ ուր Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը իրաւունք ունէր ներկայացուցիչ մը ունենալու ղէտի հանգամանքով, Վեհափառի միջամտութեամբ որոշուեցաւ որ հայ մը ըլլայ այդ ներկայացուցիչը որպէսզի հնարաւոր ըլլայ մեզի ներկայութիւն մը ունենալ այդ ատեանին մէջ:

Նոյնպէս Ե-Հ-Խ-ը որոշեց իր հրատարակած պարբերագիրքէն թիւ մը յատկացնել հայութեան: Վեհափառը կարգադրեց որ անոր պարունակութիւնը պատրաստուի Կաթողիկոսարանի ձեռքով, քննուի Խորհուրդին կողմէ նշանակուած մասնագէտի մը կողմէ, ապա հրատարակուի իրենց միջոցներով:

Այս գրքոյկը տպուեցաւ «Armenia» մակդիրին տակ, բազմաթիւ լեզուներով եւ ղրկուեցաւ Ե-Հ-Խ-ին կողմէ կարեւոր եկեղեցական եւ քաղաքական միջազգային հաստատութիւններու եւ անձնաւորութիւններու, բոլորին ծանօթացնելով մեր ճշմարտութիւնը եւ մեր անանցանելի իրաւունքները:

Վանդուվորի մէջ կայացած իր 6-րդ ընդհանուր ժողովին, 24/7-10/8/1986, Ե.Հ.Խ.ը իւրացուց հայ ցեղասպանութիւնը պաշտօնապէս ճանչցող բանաձեւ մը, պարտականութիւն տալով կազմակերպութեան ընդհանուր քարտուղարութեան որ պարտն ու պատշաճը տնօրինէ տեղեակ պահելու համար բոլոր եկեղեցիները այս որոշումին մասին եւ ի հարկին անհրաժեշտ ճիգ չխնայելու որպէսզի այդ իրողութիւնը ճանչցուի ամէն տեղ ուր ան խնդրոյ առարկայ կը դառնայ:

1987-ին, Սթրազպուրկի եւրոպական համայնքի Երեսփոխանական Ժողովին մէջ, ուր պիտի քննուէր հայկական ցեղասպանութեան իրողութիւնը հաստատող բանաձեւի առաջարկ մը, նպաստաւոր դիրքորոշում ճշդուեցաւ ի շահ մեր դատին: Այս խրախուսիչ արդիւնքին մէջ վճռական դեր ունեցաւ Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետի ազդու միջամտութիւնը Յովհաննէս-Պօղոս Բ. Սրբազան Պապի եւ Ե.Հ.Խ. ընդհ. քարտուղար Էմիլիօ Քասթրոյի մօտ:

Գարեգին Վեհափառ Ազգ. Կեդր. Վարչութեան հետ համախորհուրդ յստակ դիրք ճշդեց հայրենիքը լքող եւ արտագաղթող հայերու կապակցութեամբ եւ առ այդ իր տեսակէտը փոխանցեց Վազգէն Ա. Վեհափառին եւ այլ պատասխանատու անձնաւորութիւններուն որպէսզի չի քաջալերուի այդ երեւոյթը:

Ղարաբաղի տխուր դէպքերու առիթով, Գարեգին Վեհափառը յայտնեց Վազգէն Վեհափառին Կիլիկիոյ Ս. Աթոռին եւ անոր ժողովուրդին զայրոյթը կատարուածին համար եւ անոր հոգեկան միութիւնը հայրենի մեր ժողովուրդի տագնապին եւ ցաւին:

Գարեգին Վեհափառ կը գնահատէ զրքի եւ մշակոյթի դերը ժողովուրդի կեանքին մէջ:

Անթուլ աշխատանք տարաւ հայ գրքի տարածման համար կազմակերպելով ամէն տարի հայ գրքի ցուցահանդէս Անթիլիասի վանքին մէջ ուր բազմահարիւր գրասէր անձեր եկան ծանօթանալու նոր հրատարակութիւններու եւ անոնցմով ճոխացնելու իրենց գրադարանը:

Մեկենասներ գտաւ հրատարակելու համար զանազան հեղինակներու երկասիրութիւնները ինչպէս նաեւ ազնիւ նուիրատուներ որոնց տրամադրած գումարները Ֆոնտերու վերածուելով առիթ տուին որ ամէն տարի անոնց եկամուտներով հրատարակուին սակաւագիւտ դարձած գրական կամ պատմական գրքեր:

Անթիլիասի տպարանը ներկայիս, շնորհիվ Վեհափառ Հայրապետի ջանքերուն, օժտուած է ամենաարդիական տպագրական մեքենաներով եւ համապատասխան սարքաւորումներով եւ կարելի է անվարան ըսել որ Լիբանանի հայ իրականութեան մէջ գտնուող լաւագոյն տպարաններէն մէկն է:

Մշակութային եւ կրթական մարզէն ներս Վեհափառ Հայրապետը կը հետապնդէ նաեւ գրական, պատմական եւ բանասիրական աշխատանքներուն զարգացումը Կաթողիկոսարանէն ներս: Յարատեւութեամբ կը հրատարակուի «Հայագիտական Հասկ»ը որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն Լիբանանէն թէ սփիւռքէն մեծ թիւով մտաւորականներ, գրողներ եւ բանասէրներ:

1987 Հոկտեմբերէն ի վեր, հայ ուսուցիչ պատրաստելու կոչումով Մանկավարժական Կեդրոն մը կը գործէ արդէն Կաթողիկոսարանէն ներս շնորհիվ Խաչեր Գալուստեան հիմնադրամին:

Մտքի եւ գրչի մարդ է միեւնոյն ատեն Վեհափառ Հայրապետը: Արդարեւ աւելի քան 19 հայերէն կամ օտար լեզուներով խմբագրուած գրքեր լոյս տեսած են արդէն իր հեղինակութեամբ: Բազմաթիւ յօդուածներ հայերէն, անգլերէն, ֆրանսերէն լեզուներով ու մանք նաեւ թարգմանուած այլ լեզուներու խորք տուած են հայ թէ օտար զանազան ամսաթերթերու եւ պարբերագիրքերու:

3.- Վեհափառ Հայրապետը կարեւորութիւն կու տայ միջ-եկեղեցական եւ միջազգային յարաբերութիւններուն այն սպասումով որ անոնք կրնան դրական հետեւանքներ ունենալ մեր ժողովուրդի շահերու տեսակէտէն: Այս հեռանկարով անցնող տասը տարիներու ընթացքին այցելեց բազմաթիւ երկիրներ եւ օգտակար հանդիպումներ ունեցաւ օտար եկեղեցական թէ քաղաքական բարձրաստիճան անձնաւորութիւններու հետ ամէն տեղ իր հետը տանելով հայ ժողովուրդի պատմութիւնն ու մշակոյթը ծանօթացնելու ինչպէս նաեւ հայ ժողովուրդի արդար իրաւունքներու տէր կանգնելու իր առաջադրանքները:

Յաճախ այցելեց Լիբանանի վսեմաշուք նախագահ Ամին ժըմայէլին որ միշտ ալ առիթ գտաւ փոխադարձելու իր այցելութիւնը:

1980-ին այցելեց ժընեւ եւ Սթրազպուրկ, 1981-ին Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան, Լիզպոն: Ինչպէս նաեւ Քէնթրըպըրիի Արքեպիսկոպոսին, Լոնտոն: 1982-ին, Զուլիցերիոյ Բողոքական եկե-

դեցիներուն: 1983-ին յատուկ պատուիրակութեամբ, բաղկացած Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամներէն եւ պետական հայ երեսփոխաններէ այցելեց Սուրիոյ վսեմաշուք նախագահ Հաֆեզ էլ-Ասատին եւ Սրբազան Պապին: Նոյն տարին այցելեց Ամերիկայի Միացեալ Նահանգներու վսեմաշուք նախագահ Ռոնալտ Բեկընին: 1984-ին յատուկ հրահանգով այցելեց Գերմանիոյ Աւետարանական եկեղեցիները: Պաշտօնական այցելութիւն տուաւ Տանըմարքայի Լուտերական եկեղեցիներուն:

Ներկայ եղաւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի եւ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի Գործադիր եւ Կեդրոնական Մարմիններու Ժողովներուն Գանատա, Կիպրոս, Աւստրալիա, Եգիպտոս:

Այցելեց նաեւ Մարոնիներու, Յունաց, Ասորիներու եւ Ղպտիններու Պատրիարքներուն:

Այս այցելութիւնները գրեթէ միշտ փոխադարձուեցան կամ ենթականերու եւ կամ անոնց ներկայացուցիչներու փոխ այցելութեամբ: Վերջին անգամ Ս. Աթոռը ընդունեց Ամենապատիւ Կարտինալ Վիրայրանտար որ եկած էր յատուկ պատուիրակութեամբ, Սրբազան Պապին անունով, փոխադարձելու Վեհափառին այցելութիւնը:

Իր մտքին եւ սրտին մէջ կարեւոր տեղ ունին Ս. Էջմիածինը եւ անոր շնորհագարդ Գահակալ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը որուն հետ հանդիպում ունեցաւ Փարիզի մէջ, 1984-ին քննելու համար երկու Աթոռները յուզող կարգ մը հարցեր:

Իր յարաբերութիւնները Վազգէն Ա. Վեհափառին հետ եղան միշտ սիրալիր, անկեղծ եւ յարգալիր: Վազգէն Վեհափառը երբեք բացակայ չեղաւ Գարեգին Վեհափառի քարոզներուն եւ պատգամներուն մէջ:

Կապեր պահեց եւ հովուական այցելութիւն տուաւ թեմերուն, նոր շունչ եւ կորով ներշնչելով անոնց: Հետեւեցաւ անոնց գործունէութեան, տեղեակ մնաց անոնց ղեկարութիւններուն եւ ի հարկին ուղեցոյց եղաւ հարկ եղած պահուն:

Այս բոլոր յարաբերութիւնները Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ապահովեցին նոր վարկ եւ անոր տուին յաւելեալ հմայք որպէսզի ան անվարան շարունակէ իր պատմական դերակատարութիւնը

սփիւռքի մէջ եւ կատարէ իր յանձնառութիւնը ի շահ հայ եկեղեցւոյ եւ մեր պանծալի ժողովուրդին:

4.- Անցնող այս շրջանին Կաթողիկոսարանը ծաղկեցաւ յաւելեալ շինարարական, ընկերային եւ վարչական գնահատելի իրագործումներով:

Անկախ Դպրեվանքի գեղակերտ շէնքէն, վերակառուցուեցաւ եւ ամբողջացաւ Պիքֆայայի հովոցը իբրեւ ամարանոց Վեհափառին եւ միաբանութեան: Անթիլիասի մէջ նորոգուեցաւ եւ նոր շինութիւններով ամբողջացաւ միաբանական թաղը, նորոգուեցան Մայր Տաճարը եւ Վեհարանը որոնք լուրջ վնասներու ենթարկուած էին ինկած ուղմբերու հետեւանքով:

Ուսումնասիրութեան գործնական ընթացքի մէջ է թանգարանի մը շինութիւնը:

Շնորհիւ Վեհափառ Հայրապետի դիմումին Պ. Վաչէ Մանուկեանի ազնիւ բարերարութեամբ, գնուեցաւ Տպպայայի կալուածը ուր ներկայիս կը գործէ Եղիշէ Մանուկեան երկրորդական վարժարանը:

Վեհափառը մօտէն կը զբաղի Կաթողիկոսարանի կապուած ընկերային հաստատութիւններով ինչպէս Ճիպէյի որբանոցը ուր կառուցուեցան նոր շինութիւններ, Բիւզանդ եւ Անժէյ Թիւթիւնճեան ծերանոցը, Օր. Լէյլա Գարակէօզեանի հոգատարութեամբ շինուող Ֆանարի ժողովրդային բնակարանները: Թեւ ու թիկունք կը կանգնի իր կողմէ հիմնուած Հայաստանեայց Եկեղեցւոյ Հայ Ուսանողներու Միութեան:

Գործակցութեամբ Բողոքական համայնքին կը զբաղի Ազունիէի հիւանդանոցով եւ ծերանոց-կուրանոցով:

Շնորհիւ Վեհափառի ունեցած յարաբերութիւններուն, Կաթողիկոսարանի Կեդրոնական Վարչութիւնը կրցաւ կարգադրել որ Հայասէր Զուկցերիացիներու Միութեան պատկանող Յունաստանի ծերանոցը փոխանցուի հայութեան եւ մնայ Կաթողիկոսարանի հակաշիւրին տակ:

Վեհափառ Հայրապետը երեւան բերաւ կազմակերպչական բացառիկ կարողութիւններ: Վերակազմակերպուեցան Դիւանատունը, հաշուապահութիւնը, գրատունը եւ Հասկի վարչութիւնը:

Արդարօրէն կարելի է ըսել որ վերջին 30 տարիներու ընթացքին,

չնորհիւ իր շնորհագարդ Կաթողիկոսներու լուսամիտ եւ հեռատես քաղաքականութեան եւ յատկապէս Գարեգին Ա. Վեհափառի անխոնջ աշխատանքներուն եւ Կեդրոնական Վարչութիւններու գործակցութեան, Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կը բոլորէ ճառագայթումի եւ վերածնունդի շրջան մը:

Վեհափառը իրապաշտ եւ գործի մարդ է: Շատ չի հաւատարմեծ տեսութիւններու: Իրեն համար կարեւորը ապրուած կեանքի շօշափելի իրականութիւնն է, դաշտի վրայ կատարուած յարատեւ աշխատանքը յանձնառու կեցուածքը եւ ձեռք ձգուած արդիւնքներն են որ կը ծառայեն իրրեւ չափանիշ ոեւէ գնահատանքի: Իրեն համար ապագան ինքնին գոյավիճակ մը չէ, ան կը կերտուի:

Իր մօտ ամէն ինչ մտածուած եւ անհրաժեշտ խորացումով ուսումնասիրուած ու բաղդատութեան լոյսին տակ քննուած կը գտնէք: Զգացական գեղումներու մէջ չի կորսուիր, սակայն կը մնայ միեւնոյն ատեն սրտի մարդ: Կ'ապրի ժողովուրդին հետ որ իր մեծ ընտանիքն է, ժողովուրդին համար որուն ուրախութիւնն ու ցաւերը, խնդրավառութիւնն ու մտահոգութիւնները, ընկրկումներն ու վճռակամութիւնը իր ապրումներն են եւ գանոնք կ'արտայայտէ ամէն առիթներով, խօսքով եւ գրչով: Իր սրտի տրոփը, երակներուն կշռոյթը կը հետեւին իր ժողովուրդի իրավիճակին, տազնապին կամ գոհունակութեան, ուրախութեան:

Վեհափառ Հայրապետը կը նոյնանայ նշանաւոր հեղինակի մը այն խօսքին հետ, թէ մեծ են այն մարդիկ որ կը մտածեն մտքով սակայն կը գործեն եւ կը յարաբերին սրտով:

Վեհափառը կը հաւատայ ապրուած սիրոյ յաղթանակին, միութեան հրամայականին եւ ծառայելու հաճոյքին ինչպէս իր նախորդները յատկապէս իր մեծ առաջնորդը Երջանկայիշատակ Զարեհ Կաթողիկոսը որ իր կեանքի օրինակով պատկերացուց այս գաղափարները: Արդարեւ ինչ կ'արժէ կեանքը երբ պարպուած է սէրէն ինչ կ'արժէ սէրը երբ առանց կեանքի է:

Վեհափառը կը սիրէ ծառայել: Ան կու տայ իր մտքէն, իր սրտէն, իր հոգիէն մինչեւ իսկ իր թանկագին առողջութիւնը գոհելով այդ ճանապարհին վրայ: Ծառայելը իրեն համար իր առաքելութեան ճշմարիտ ուղին է եւ իր համոզումները իր կեանքի մղիչ ոյժն են: Ի գուր տեղ չէ որ Այնշիթայն ըսած է. «Կ'արժէ այս կեանքը ապրիլ ուրիշին ծառայելու համար»:

Իրեն համար եկեղեցականը եւ ազգայինը գուգահեռ կ'ընթա-  
նան: Չի կրնար ծառայել մէկուն անտեսելով միւսը: Եկեղեցւոյ կը  
ծառայէ ամբողջական նուիրումով ու հաւատքով սակայն անոր ըն-  
ձեռած միջոցները կը գործածէ յօգուտ իր ժողովուրդին:

Եթէ ճիշդ է որ խաւարին մէջ պէտք է հաւատալ լոյսին, դժուա-  
րութիւններու մէջ պէտք է յուսալ ելքի կարելիութիւններուն նաեւ  
ճիշդ է որ այդ պահերուն պէտք է պրկուած կամքով լծուիլ աշխա-  
տանքի եւ ճշդել մեր ուղղութիւնը որպէսզի լուսածագին գմեզ  
գտնենք ապահով փերու վրայ:

Վեհափառը կը հաւատայ հայոց աշխարհի լոյսին, հայ ժողո-  
վուրդի արդար իրաւունքներու հատուցումին եւ այս համոզումով  
բոցավառ ջահի մը նման կը ճառագայթէ լուսաւորելով Կիլիկիոյ  
Կաթողիկոսութեան պատմական առաքելութեան սրբազան ուղին:

Վեհափառ Տէր, դուք որ ձեր գրութիւններով, պատգամներով  
եւ կեանքի կենդանի օրինակով կ'ուզէք ցոյց տալ իրական իմաստը  
կեանքին, նամանաւանդ հայու կեանքին ու ճշդել մեր գիտակցու-  
թեան եւ յանձնառութեան հորիզոնները, աշխարհի մը մէջ ուր  
մարդիկ եւ պետութիւններ անտարբեր են ուրիշներու ցաւերուն եւ  
իրաւագրկումներուն, դուք որ նոյնախառնած էք Ձեր անձը Ձեր  
ժողովուրդի կեանքին հետ անոր տառապանքին եւ երազներուն  
մէջ, թոյլ տուէք որ իբրեւ երախտագիտական զգացում յայտնենք  
Ձեզի մեր խոր մեծարանքը եւ մեր անկեղծ ու հարազատի սէրը  
նման այն բիւրեղացած կաթիլին որ կու գայ մեր էութենէն ու կը  
ծորի մեր կեանքի մայր երակներէն մեր գոյութեան էատարրին մէջ  
որ մեր սիրտն է:

Կը մաղթենք ի խորոց սրտէ որ Աստուած Ձեզի պարգեւէ երկար  
եւ քաջառողջ կեանք լի նոր տասնամեակներով եւ ինչու չէ յիսնա-  
մեակով որպէսզի կարենաք շարունակել աստուածահաճոյ եւ ազ-  
գօգուտ Ձեր ծառայութիւնները ի սպաս հայ եկեղեցւոյ, հայ մշա-  
կոյթին, հայութեան անկորնչելի դատին եւ ի փառս յաւերժական  
մեր ժողովուրդին:

22 Մայիս 1988



ՅԻՇԱՏԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ  
ԳԱԼՈՒՍՏ ԿԻԲԼՊԷՆԿԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ  
10-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻՒՅՑՈՒՄ<sup>3</sup>

20 Յունիս 1955ին հոլանդ իր շունչը կ'աւանդէր 86 տարեկան ծերունագարդ հասակին մէջ, քարիւղի աշխարհահռչակ դէմք եւ հայ ժողովուրդի հանճարեղ գաւակ Գալուստ Սարգիս Կիւլպէնկեան:

Ան մեռաւ Փորթուկալի մէջ, ուր եկած էր հաստատուելու իր կնոջ Նուարդին հետ 1942ին, իր մահուանէ ճիշդ 13 տարի առաջ: Իր կինը մեռած ըլլալով 1952ին, ան կը թողուր իր ետին իր անդրանիկ մանչ գաւակը Նուպար Սարգիս Կիւլպէնկեան ծնեալ 2//1896ին եւ իր աղջիկը Ռիթա Կիւլպէնկեան, ծնեալ 2/7/1900ին, կինը Գէորգ Լորիս Եսայեանի որոնցմէ ունէր մանչ թոռնիկ մը՝ Միքայէլ Եսայեան:

Գալուստ Կիւլպէնկեան իր մահուամբ թողուց հսկայ հարստութիւն մը: Սակայն որպէսզի իր ժառանգութիւնը յուժապէտս չի գործածուի եւ մսխումի առարկայ չդառնայ, ան խորհեցաւ ի լաւագոյնս օգտագործել զայն: Համամարդկային եւ բարոյական արժէքներու հաւատացող եւ ազնուագոյն իտէալներու հետամուտ մարդ, իր կենդանութեան՝ օրինական հիմունքներու վրայ դրաւ այդ թողոնին բարւոք օգտագործման եղանակը: Եւ առ այդ, ձգեց իր ժառանգորդներուն եւ առ որ անկ է, իր կողմէ բծախնդրութեամբ, մանրամասնօրէն եւ երկար ժամանակուայ ընթացքին ուսումնասիրուած եւ պատրաստուած կտակ մը գոր ստորագրած էր 18 Յունիս 1953ին:

Կտակը

Կտակը կը բաղկանար 25 յօդուածներէ:

Առաջին 9 յօդուածներով կտակարարը կը ճշդէր իր օրինական

<sup>3</sup> Խօսուած՝ Ս. Եղիա Եկեղեցւոյ հանդիսարահին մէջ, 1966-ին:

ժառանգորդներուն, ազգականներուն, պաշտօնեաներուն, հաստատութեանց եւ այլ անհատներուն տրուելիք նիւթական գումարները:

Այսպէս իր տղուն Նուպար Սարգիս Կիւլպէնկեանին կը թողուր պատրաստ գանձելի 1 միլիոն տոլար եւ 1.5 միլիոն տոլարի շահարկելի այլ դրամագլուխ մը:

Իր աղջկան Ռիթային եւ փեսային, Գէորգ Եսայեանին, երկուքին միատեղ կու տար նոյնպէս 1 միլիոն տոլար տրամադրելի գումար եւ 1.5 միլիոն տոլարի շահարկելի այլ դրամագլուխ:

Իր թոռնիկին կը թողուր 200 հազար տոլար պատրաստ գումար եւ 200 հազար տոլարի շահարկելի այլ դրամագլուխ:

Պատրաստ գումարները վճարելի էին կտակին բացումէն սկսեալ մինչեւ 6 ամսուայ ժամանակամիջոցի ընթացքին:

Ձանազան կենսաթոշակներ կ'ապահովէր իր մնացեալ ազգականներուն ինչպէս նաեւ իրեն գործակից եւ ծառայող պաշտօնեաներուն:

Կը յայտնէր նոյնպէս որ հարկ տեսնուած պարագային վերոյիշեալ 3 հոգիները կրնան 2 այլ անձեր եւս առնել իրենց հետ ինչպէս նաեւ եթէ իրենցմէ ոեւէ մէկը չ'ուզէ եւ կամ չկարենայ մասնակցիլ, հիւանդութեամբ կամ մահով եւ կամ այլ պատճառով, այդ պարագային միւս երկուքը կրնան փոխանորդ մը նշանակել:

Կտակարարի մահուան, վերոյիշեալ 3 անձերը իրաւասու են հիմնարկութեան անունով յանձն առնելու բարերարին բոլոր ստացուածքները, շարժուն եւ անշարժ կալուածները, կը պարտին գանոնք մակագրել, դասաւորել եւ գործադրութեան դնել համաձայն կտակի տրամադրութեանց:

Այն պարագային երբ կտակէն օգտուող ոեւէ անձ դժգոհութիւն յայտնէ անոր օրինակութեան շուրջ եւ կամ մերժէ ընդունիլ գայն ու անոր բարուք գործադրութեան դէմ խոչընդոտներ յառաջացնէ, նշանակուած 3 անձերը իրաւասու են ջնջուած նկատելու կտակին այն բոլոր յօդուածները որոնք կը վերաբերին այդ անձին եւ հետեւաբար կրնան ամբողջովին գրկել զինքը ժառանգութենէ:

Բարերարը ամէն տեսակի հաւանական վէճերուն առաջը առնելու համար նախատեսած էր այս բոլոր մանրամասնութիւնները:

Ան կ'աւելցնէր նոյնպէս որ կտակը պիտի գործադրուի ըստ անգլիական օրէնքներուն իսկ Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութիւնը կը մնայ ենթակայ փորթոլքալեան օրէնքներուն անոր համար որ ան փորթոլքալեան մնայուն հաստատութիւն մը կը դառնար:

Իր մահուամբ, ծնունդ առաւ Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութիւնը: Զայն գլխաւորող 3 անձերը մշակեցին 30 յօդուածներէ բաղկացած ծրագիր կանոնագիր մը զոր վաւերացնել տուին փորթոլքալեան կառավարութեան թիւ 40-590 հրամանագրով:

Այս հրամանագիրը կը հաստատէր ու կը սահմանէր հետեւեալները:

1) Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութիւնը փորթոլքալեան մարդասիրական հաստատութիւն մըն է: Եւ հետեւաբար ենթակայ է փորթոլքալեան օրէնքներու: Ան կը վկայէ բարոյական անձնաւորութեան իրաւունք եւ կը գործէ ըստ իր ծրագիր-կանոնագրի տրամադրութեանց:

2) Ան կը հետապնդէ բարեսիրական, կրթական, գիտական եւ արուեստի հայող նպատակներ:

3) Անոր եկամուտները կը գոյանան իր ծրագիր-կանոնագրի ծրղ յօդուածին մէջ նախատեսուած միջոցներով:

4) Կը կառավարուի յանձնախումբի մը կողմէ որ կրնայ բաղկանայ 3-9 անդամներէ որուն մէկը հիմնարկութեան նախագահն է: Անդամներուն մեծամասնութիւնը կը պարտի փորթոլքալեան հպատակութեան պատկանիլ:

5) Անոր տարեկան մուտքերն ու ելքերը կը քննեն պաշտօնական քննիչ յանձնախումբի մը կողմէ ըստ ծրագիր-կանոնագրին:

6) Անոր եկամուտները գերծ են շահատուրքէ:

7) Պատասխանատու յանձնախումբը արտօնուած է հիմնարկութեան պատկանող կալուածներ ծախելու եթէ այդ անհրաժեշտ նկատուի իր ծրագիրներուն իրագործման համար:

Այս հրամանագրին 4րդ յօդուածը ուր կ'ըսուէր թէ վարչութեան անդամներուն մեծամասնութիւնը պէտք է որ փորթոլքալեան հպատակութիւն ունենայ պատճառ դարձաւ որ Լորտ Redcliffe մերժէ ստանձնել կտակի միջոցով իրեն յանձնուած պատաս-

խանատուութիւնը: Արդարեւ փորթուքայեան կառավարութիւնը չվաւերացուց հիմնարկութեան ծրագիր-կանոնագիրը այնքան ատեն որ այդ հիմնական պայմանները մաս չկազմեցին անոր ծրագիր-կանոնագրին: Այս պարագային Տոթթ. Փերթիկան եւ Պ. Եսայեան երկուքով միայն զբաղեցան կտակի գործադրութեան եւ հիմնարկութեան վերաբերեալ բոլոր գործերով:

Ամփոփ պատկեր մը Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան ծրագիր-կանոնագրէն.-

Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութիւնը կը վայելէ բարոյական անձնաւորութեան հանգամանք եւ կը կառավարուի իր ներկայ ծրագիր կանոնագրով որ ենթակայ է փորթուքայեան օրէնքներուն:

Ան փորթուքայեան մնայուն հիմնարկութիւն մըն է, եւ անսահմանափակ ժամանակի մէջ: Իր կեդրոնը կը գտնուի Լիզպոն: Կրնայ սակայն այլ երկիրներու մէջ ճիւղեր ունենալ:

Նպատակ.-

Հիմնարկութիւնը կը հետապնդէ բարեսիրական, կրթական, գիտական եւ արուեստի հայոց նպատակներ:

Անոր գործունէութիւնը չի սահմանափակուիլ միայն փորթուքայի մէջ այլ կրնայ տարածուիլ ամէն այն տեղ որ իր վարչութիւնը յարմար կը նկատէ:

Ան կը պարտի նկատի ունենալ եւ հաւատարմօրէն գործադրել կտակով յայտնուած բարերարին կամքը:

Եկամուտները.-

Հիմնարկութեան եկամուտները կը գոյանան այն բոլոր դրամագլուխներէն եւ ստացուածքներէն զորս ձգեց բարերարը:

Հիմնարկութիւնը կրնայ նոյնպէս նուէրներ ընդունիլ անձերէ եւ կամ հաստատութիւններէ:

Վարչութիւն.-

Հիմնարկութիւնը կը ղեկավարուի մարմնի մը կողմէ որ բաղկացած է 3-9 անձերէ որուն մէկը կը ղառնայ անոր նախագահը:

Տրուած ըլլալով որ հիմնարկութիւնը փորթուքայեան է, հարկ է որ անոր վարչութեան անդամներուն մեծամասնութիւնը կրէ փորթուքայեան հպատակութիւն:

Այնքան ատեն որ հիմնադիր-բարերարէն ուղիղ սերած անձեր կը գտնուին, անոնցմէ մէկը կը դառնայ վարչութեան մնայուն անդամ:

Վարչութիւնը կրնայ ներկայացուցիչներ պահել Փորթուքայէն դուրս ըստ գործի պահանջին:

Վարչութիւնը կրնայ խորհրդատու յանձնախումբեր կազմել եւ օգտուիլ անոնց տեղեկութիւններէն եւ խորհուրդներէն:

Վարչութիւնը կրնայ նշանակել ընդհանուր քարտուղար մը եւ քարտուղարներ վարչական գործերը վարելու համար:

Վարչութեան անդամներէն ոեւէ 2ը կրնան ստորագրել վարչութեան անունով եւ կամ ոեւէ մէկը կրնայ արտօնուիլ վարչութեան կողմէ ստորագրելու համար անոր անունով:

Բարերարին կտակով նշանակուած վարչութեան անդամները իրենց պաշտօնները կը պահեն ցկեանս ինչպէս նաեւ այն անդամը որ բարերարէն սերած է:

Միւս անդամները 5 տարուայ համար են եւ 5 տարի յետոյ անպայման փոփոխելի:

Վարչութեան անդամներուն թոշակները կը վճարուին համաձայն կտակին տրամադրութեանց:

Ելեւմտական հսկողութիւն.–

Վարչութիւնը պարտաւոր է ամէն տարի պատրաստելու իր ելեւմտից կշիռը եւ ճշգրիտ հիմնարկութեան ստացուածքները: Անոր համար ան կը դիմէ հաշուապահական անուանի գրասենեակներու այնպէս ինչպէս յիշատակուած է կտակին մէջ:

Բաց աստի քննիչ յանձնախումբ մը, կազմուած պետական բարձրաստիճան պաշտօնատարէ մը եւ ելեւմտագէտներէ կը քննէ հիմնարկութեան ծախսերն ու եկամուտները եւ կը տեղեկագրէ վարչութեան: Բացի պետական բարձրաստիճան պաշտօնեայէն, միւս ելեւմտագէտները կը փոխուին ամէն 3 տարին:

Վերոյիշեալ տեղեկագիրը կը հրատարակուի հիմնարկութեան ծախսով: Յանձնախումբը կը վճարուի իր աշխատանքներուն համար, վարչութեան կողմէ: Այդ վճարումները կրնան փոփոխութեան ենթարկուիլ ամէն 3 տարին:

Տեղեկանալէ յետոյ հիմնարկութեան ծրագիր-կանոնագրի հիմ-

նական տրամադրութանց, տեսնենք հիմա, թէ հանգուցեալ բարերարին թողօնը, իր մահուան, ինչ կը ներկայացնէր:

Հիմնարկութեան կողմէ հրատարակուած պաշտօնական տեղեկագիրներէն երեւան կու գայ որ առաջին տարին իսկ, հիմնարկութեան փոխանցուած գումարներն ու ինչքերը կը ներկայացնեն հետեւեալ պատկերը:-

- |  |  |
|--|--|
| 1) Արուեստի գործեր որոնք կը գտնուին բարերարին մօտ        |  |
| 2) I.P.C. 5% իրաւունքը որ իբրեւ դրամագլուխ կը ներկայացնէ | 7.365.520 սթերլին                              |
| 3) Անշարժ կալուածներ                                     | Փարիզի մէջ կալուածներ<br>Տոպիլի մէջ կալուած մը |
| 4) Շարժուն կալուածներ                                    |  |
| Պատրաստ գումար ոսկի                                      | 15.761.050 սթերլին                             |
| Եւ դրամատան մէջ պահ դրուած                               |  |
| Շահարկութեան դրուած դրամագլուխ                           | 8.325.375 սթերլին                              |
| 5) Գանձելի գումարներ                                     | 1.215.875 սթերլին                              |
| Այլ գումարներ  | 3212 սթերլին                                   |
| 6) Վճարելի հաշիւներ                                      | 1.056.937.50 սթերլին                           |

20/Յուլիս/1955

Շնորհիւ իր ղեկավար մարմնին, Գալուստ Կիւպէնկեան հաստատութիւնը կրցած է իր եկամուտները տարուէ տարի բարձրացնել եւ հետեւաբար բարձրացնել նոյնպէս բաժնուած գումարները:

1955-1963 բաժնուած նպաստներուն գումարը հասած է 1.245.850 սթերլինի:

Ինչպէս երեւան կու գայ հաշուեքննիչ մարմնի ներկայացուցած տեղեկագրէն, հիմնարկութեան շարժուն եւ անշարժ ստացուածքներուն գումարը բացի արուեստի գործերէն որոնք 1951 Դեկտ.ին հասած են 45.402.512 սթերլինի 1967ի վերջաւորութեան բարձրացած էին 108.454.837 սթերլին հակառակ տարուէ տարի շարունակաբար վճարուած նպաստներու:

Բարերարին փափաքը այն էր որ այս հաստատութիւնը մնայ

տեւական: Այդ իսկ պատճառով խնամակալները կը խորհին աւելցընել եւ բարձրացնել անոր դրամագլուխը:

Մինչեւ 1967ի վերջաւորութեան բաշխուած նպաստներուն գումարը եղած է 35.264.225 սթերլին, ինչ որ կ'ընէ տարեկան միջին հաշուով շուրջ 3 միլիոն սթերլին:

- Որոնց 19% բարեսիրական նպատակներու
- 14.5% արուեստի գործերուն
- 52.5 կրթական օժանդակութիւններու
- 14% գիտական նպատակներու

Վերոյիշեալ գումարներուն շուրջ 48% ծախսուած է Փորթուքալեան կարիքներուն, իսկ մնացեալը բաժնուած է հետեւեալ կերպով:

- Հայ համայնքին 11.40%
- Անգլիոյ եւ Անգլիական հասարակապետութեան 11.31%
- Իրաքի եւ Միջին Արեւելքի 19.23%
- Այլ երկիրներու 10.06%
- Ընդամէնը 15.264.225 սթերլին

Ինչպէս տեսանք իր կտակին մէջ, կտակարարը ոչ մէկ գրաւոր յանձնարարութիւն չէ ձգած հիմնարկութեան պատասխանատուներուն ճշդելով թէ իր ժողովուրդը պէտք է օգտուի առաւելաբար իր նպաստներէն:

Հիմնարկութեան խնամակալները, տրուած ըլլալով որ հիմնարկութիւնը, ինքը, փորթուքալեան հաստատութիւն մըն է, առաւելագոյն տոկոսով եկամուտները կը բաշխէ փորթուքալեան կարիքներուն:

Անգլիան եւ անգլիական հասարակապետութեան պատկանող երկիրները գ տեղը կը գրաւեն նպաստներու բաշխման կարգով:

Խնամակալութիւնը այսպէս որոշած է անոր համար որ բարերարը անգլիահպատակ եղած է:

Բ. տեղը կը գրաւէ բաշխուած նպաստի կարեւորութեան կարգով Իրաքը եւ Միջին Արեւելքը: Խնամակալ մարմինը այս կարգադրութիւնը ըրած է նկատի ունենալով որ հիմնարկութեան եկամուտները գլխաւորաբար այդ երկիրներէն կը գոյանան:

Գ. կարգի վրայ հայ համայնքը անոր համար որ բարերարը հայ եղած է:

Դ. կարգի վրայ կու գան մնացեալ երկիրները:

Այսօր Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութիւնը մարդասիրական պատկառելի հաստատութիւն մը դարձած է որուն բարիքները կը հասնին երկրագունդի ամենահեռաւոր երկիրները եւ որուն բաշխած նպաստը, այս վերջին տարիներու ընթացքին արդէն իսկ անցած է տարեկան 5 միլիոն սթերլինը:

Միայն 1957ին աւելի քան 70 պետութիւններէ դիմումներ հասած են հաստատութեան եւ ան համաձայն մեծ բարերարի կտակին եւ հաւատարիմ անոր մարդասիրական սկզբունքներուն փորձած է ընդառաջել անոնց իր միջոցներուն ներած չափով:

Օրինակ մը տալու համար յիշենք անցողակի կերպով որ 1963-1965 տարածուող ժամանակշրջանին մէջ աշխարհի 5 ցամաքամասերը օգտուած են անոր նպաստներէն հետեւեալ կերպով:-

Եւրոպան	489.950 սթերլին
Ամերիկեան երկիրներ	275.000 սթերլին
Ափրիկէն	29.000 սթերլին
Ասիան	15.000 սթերլին
Ովկիանեան	2.862 սթերլին

Եթէ պատահեցաւ որ հայ ժողովուրդը այս վերջին դարուն, իր պատմութեան սեւ օրերուն կարիքը ունեցաւ օտարներու նիւթական ազնիւ օժանդակութեան, կարելի է անվարան ըսել որ շնորհիւ Գալուստ Կիւլպէնկեանին ան առատօրէն վերադարձուց զայն:

Եւ այսօր, իր ծննդեան հարիւրամեակին, մարդկութեան մեծ բարերարներու պատմութեան մէջ, բարձրադիր պատուանդանի վրայ կը ներկայանայ «մեծանուն հայ»ը, իբրեւ անսպառ աղբիւր լոյսի, սփոփանքի եւ այլ բարիքներու:

Նշանաւոր հեղինակ մը ըսած է. «Մեծ են այն մարդիկը որոնք կը մտածեն իբրեւ գործի մարդ եւ կը գործեն ու կը վերաբերին մարդոց հետ իբրեւ սրտի մարդ»:

Գալուստ Կիւլպէնկեան կը միացնէր անկասկած այս երկու յատկութիւնները իր անձին մէջ:

Մեծ էր մտքով եւ մեծ մեռաւ հոգիով եւ սրտով:

Յարգանք իր խնկելի յիշատակին:



ԴՊՐԵՎԱՆՔԻ  
ՅԻՍՆԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ (1982)

Կիրակի 21 Մարտ 1982, ժամը 11-ին  
Սինեմա գերմանիկ

Մեծաշուք Տիար Դատական Նախարար  
Ներկայացուցիչ Նորին Վսեմափայլ Տիրութիւն,  
Հանրապետութեան Նախագահ, Էլիաս Սարգիսին

*Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Լիբանանի թեմը՝ մեծապէս զգացուած է սիրոյ եւ գնահատանքի այն արտայայտութեանէն զոր ցոյց տուաւ Նորին վսեմութիւնը, բարեհաճելով ընդունիլ հովանաւորութիւնը Դպրեվանքի յիսնամեակին նուիրուած այս հանդիսութեան եւ ձեր ներկայութեամբը պատուել մեզ, կը խնդրէ ձերդ ազնուութենէն որ հաճիք փոխանցել Նորին Վսեմութեան մեր անխառն յարգանքները ու երախտագիտութիւնը եւ ընդունիլ Դուք եւս մեր խոր շնորհակալութիւնները*

Վեհափառ Հայրեր,  
Ամենապատիւ Հոգեւոր Տիրոջ ներկայացուցիչ Գերապայծառ Տէր,  
Վերապատուելի Հայր, նախագահ Միջին Արեւելքի Աւետարանական  
Եկեղեցիներու Խորհուրդին  
Գերաշնորհ, Գերապատիւ,  
Արժանապատիւ եւ Վերապատուելի Հայրեր  
Առաքինազարդ բոյրեր  
Յարգելի հանդիսականներ

*Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Լիբանանի թեմի ազգային իշխանութիւնը մեծ հանդիսութեամբ կը տօնէ այսօր դպրեվանքի հիմնադրութեան յիսնամեայ յորելեանը: Դէպքերու բերու-*

մով տարիով մը յապաղած այս տօնակատարութիւնը առիթ կ'ըն-  
ծայէ լիբանահայութեան որ աւելի մօտէն ծանօթանայ կաթողիկո-  
սարանի սիրտը հանդիսացող այս հաստատութեան եւ առ այդ ար-  
տայայտէ իր գնահատանքն ու երախտագիտութիւնը ի տես կա-  
տարուած եւ կատարուող այս աստուածահաճոյ եւ հանրանուէր  
ծառայութեան:

Յիսուն տարի ազգային եկեղեցական ծառայութեան մէջ, թէ-  
պէտեւ ժամանակի սահմանումով երկար չըջան մը չէ, սակայն այդ  
խսկ տարածքը բաւարար եղաւ արդարացնելու համար այն յոյսերը  
զորս իր հիմնադիրները եւ անոնց աջակից հայ ժողովուրդը դրած  
էին իր վրայ:

Հաստատութեան վիճակագրութիւնները ցոյց կու տան որ ութը  
հարիւր պատանիներ եւ երիտասարդներ ցարդ անցած են Դպրե-  
վանքէն որոցմէ մէկ մասը եղած է շրջանաւարտ:

Ուշագրաւ են անոնցմէ.

3 կաթողիկոսներ (երանաշնորհ Զարեհ Ա., Խորէն Ա. եւ Գա-  
րեգին Բ. Աթոռակից կաթողիկոս)

23 եպիսկոպոսներ եւ արքեպիսկոպոսներ

52 վարդապետներ

95 քահանաներ

Դպրեվանքի արգասիքը հանդիսացող եկեղեցականներու հոյը,  
ըլլան անոնք կուսակրօն կամ ամուսնացեալ քահանայ միակ ար-  
դիւնքը չեն անոր բազմաբեղուն գործունէութեան: Կան նաեւ  
աւարտական կամ թերաւարտ աշխարհական բազմաթիւ մտաւո-  
րականներ որոնք կը ծառայեն ազգին իբրեւ կրթական մշակներ,  
մամուլի սպասարկուներ եւ գրողներ: Բազմաթիւ տնօրէններ եւ  
ուսուցիչներ կը կրեն դրոշմը Դպրեվանքի հայաշունչ դաստիարա-  
կութեան ու ազգային-եկեղեցական ոգիին: Ուրիշներ, լծուած ա-  
զատ ասպարէզի մէջ, վարելով դպրապետի պաշտօն կամ մասնակ-  
ցելով իբրեւ ժողովական հայ կրթական եւ ընկերային միութիւն-  
ներու, կը բերեն այդ ուղիներով իրենց բաժինը ազգային ծառայու-  
թեան:

Տօնել համազգային շուքով ազգային-եկեղեցական կարեւոր  
հաստատութեան մը յիսնամեայ յոբելեանը, կը պարտադրէ անխու-  
սափելիօրէն մեզի, որպէսզի մեր դատողութեան եւ գնահատանքին

մէջ ըլլանք առարկայական, աչքէ անցնենք, գէթ թուուցիկ ակնարկով, անոր հիմնադրութեան տուն տուող պատճառները, այն պայմանները որոնց մէջ ան ծնունդ առաւ, ապա՝ հանգրուանային կերպով անոր բարգաւաճման հոլովոյթին կապուած գանազան երեւոյթները:

Մեծ եղեռնէն յետոյ, ջարդուած եւ տարագիր հայութեան վերապրող խլեակները, օգտուելով 1918-ի գինադադարի պայմաններէն եւ դաշնակից բանակներու ներկայութենէն, վերադարձան հայրենի աշխարհ, վերագրաւելու իրենց պապենական հողերն ու ինչքերը եւ կեանք ու շունչ տալու մոխրացած օճախներուն: Հաւատարիմ իր շինարար բնագոյն՝ հայութիւնը լծուած էր վերականգնումի գործին եւ տակաւ կը փորձէր վերակազմակերպել իր կեանքը երբ յանկարծ վրայ հասաւ քեմալական ապստամբութիւնը որուն հետ իր կնքած Անգարայի դաշինքով, 30 Հոկտ. 1921-ին, Ֆրանսա կը խոստանար քաշել իր բանակները Կիլիկիայէն գորպիտի լքէր ամբողջութեամբ Թուրքիոյ:

Հիասթափ եւ ուղեկորոյս ու երկրորդ ջարդի արհաւիրքը իր սրտին, Կիլիկիոյ հայ բնակչութիւնը կրկին պարպեց իր շէները եւ լքելով իր բոյնը, վերստին առաւ գաղթականի ցուպը իր ձեռին ու եկաւ կայք հաստատելու արաբական հիւրընկալ եւ ասպնջական երկիրներուն մէջ, մատնուած անմխիթար գոյավիճակի:

Կիլիկիոյ շնորհագարդ Սահակ Բ. Կաթողիկոս Խապայեան, 1921-ին, վերջնականապէս լքելով Սիսը, ուր կը գտնուէր 800 տարուայ պատմական Սուրբ Աթոռը եւ հետեւելով իր տեղահան ժողովուրդին կը փոխադրուէր Հալէպ ուսկից կ'անցնէր Պէյրութ ապա Երուսաղէմ եւ Կիպրոս:

Տիրող անորոշ կացութեան մէջ, Ս. Աթոռին անկայուն վիճակին հետ գինքը կը մտատանջէր գլխաւորաբար գաղթահայութեան անկազմակերպ եւ ցան ու ցրիւ վիճակը: Կը հաւատար որ հայրենի բնագաւառներէն դուրս, եկեղեցին կը հանդիսանայ միակ վարչական կեդրոնական հաստատութիւնը որուն շուրջ կարելի է համախմբել գաղթահայութիւնը եւ կազմակերպել ազգային, կրթական ու ընկերային կեանք:

Սակայն ո՞վ պիտի փոխարինէր նահատակուած առաջնորդները, եկեղեցականներն ու կրթական մշակները:

Հոգեւոր պատրաստութեան նախկին նշանաւոր կեդրոնները, Ս. Էջմիածնի, Արմաշի, Սիսի Դպրեվանքները փակուած էին: Երուսաղէմի հայոց վանքին կապուած ժառանգաւորաց վարժարանը 1924-ին կը վերաբացուէր, սահմանափակ թիւով աշակերտութեամբ:

Ահա այս մթնոլորտին մէջ, ընկճուած՝ խոր մտահոգութիւններու ներքեւ, Սահակ Բ. Կաթողիկոս իր 79 տարիքին կը հրատարակէր պատմական նշանաւոր իր կտակը, 24 Փետրուար 1928-ին:

Պարոն Բիւզանդ Եղիայեան, բազմավաստակ ուսուցչապետ եւ նախկին ներքին տեսուչ Դպրեվանքի որ մօտէն ծանօթ է այս իրադարձութիւններուն իր «Ժամանակակից Պատմութիւն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, 1941-1972» մեծածաւալ գրքին մէջ կը գրէ ի մէջ այլոց, վերոյիշեալ կտակի մասին ու կ'աւելցնէ. «Շփոթ այս կացութեան դիմաց, ինքզինքը պատասխանատու զգալով ազգին ու պատմութեան առջեւ, Սահակ Կաթողիկոս կը դնէր հարցումը. «Ի՞նչ պիտի ըլլայ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ ապագան» ու կը հայցէր ազգային հասուն մտքերու խորհուրդն ու թելադրութիւնը»:

«Արթնամիտ Հայրապետին հարցումին անմիջապէս ու լայն արձագանքով կը պատասխանէր սփիւռքահայութիւնը՝ իր մամուլով, մտաւորականութեամբ եւ վարչական պատասխանատու մարմիններով:

«Սփիւռքի հայութեան վերականգնումի ու պահպանութեան համար անհրաժեշտ էր ամրացնել ու բարգաւաճ վիճակի բարձրացնել Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը՝ իր նուիրապետական վարչակարգով, դպրեվանքով ու մշակութային գործունէութիւններով:

«Եւ այս աշխատանքին մէջ կաթողիկոսին անմիջական գործակից նոր ոյժ մը ապահովելու իմաստութեամբ, ազգային առաջնորդ ղէմքեր կը թելադրէին որ Բարգէն Եպս. Կիւլէսէրեան, Արմաշի Դպրեվանքէն, Աթոռակից ընտրուի, ինչ որ յօժար կամքով կը կատարէր Սահակ Կաթողիկոս 1928-ի Յուլիսին»:

Այնուհետեւ Սահակ Բ. Կաթողիկոս եւ իր Աթոռակից Բարգէն Կաթողիկոս կը լծուին Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ թեմերու վերակազմութեան աշխատանքին:

Կը մնար սակայն հիմնականը: Կաթողիկոսարանը վայր մը չու-  
նէր ուր կարենար հաստատուիլ:

Այդ շրջանին Ամերիկեան նպաստամատոյց ընկերակցութիւնը  
արդէն լուծարքի ենթարկած էր իր որբանոցները: Անթիլիասը պար-  
պուած էր որբերէն, սակայն կալուածները դեռ եւս կը մնային իր  
սեփականութիւնը:

Խորհրդակցութեամբ իր Աթոռակիցին եւ Ամերիկահայ ազգա-  
յիններու հետ, Սահակ Բ. Կաթողիկոս, պաշտօնական դիմում կա-  
տարեց ամերիկեան նպաստամատոյց կեդրոնին, Նիւ Եորք, որպէս-  
զի իրեն տրամադրուի Անթիլիասի կալուածը ուր պիտի հաստատէր  
Ս. Աթոռը եւ Դպրեվանքը:

9 ամսուայ բանակցութիւններէ յետոյ, 1930-ին, Ապրիլ 10-ին,  
հիմնարկութիւնը կը յայտնէ որ իր Անթիլիասի կալուածը Կիլիկիոյ  
Կաթողիկոսութեան տրամադրութեան տակ կը դնէ 5 տարուայ հա-  
մար, տարեկան 1 տոլար անուանական վարձքով, նաեւ իր կողմէ  
մասնակցելով տարեկան 7000 տոլար յատկացումով մը բացուելիք  
Դպրեվանքին պահպանութեան համար, պայմանաւ որ հայեր եւս  
մասնակցին անոր ծախսերուն, տարեկան 5000 տոլարով:

Ամերիկահայ բարերար Յարութիւն Կիւլպէնկեանի եւ Միհրան  
Գարակէօզեանի մասնակցութեամբ եւ ուղղութիւններով կը կազ-  
մուի Կիլիկիոյ ուսումնարանի Ամերիկահայ Յանձնաժողովը որ լրբ-  
ջօրէն կը լծուի աշխատանքի եւ կ'ապահովէ Կիլիկիոյ Ս. Աթոռին եւ  
Դպրեվանքի պահպանութեան համար ականկալուած 5000 տոլարը:

Հետագային, Բարգէն Բ. Աթոռակից Կաթողիկոսի վախճանու-  
մէն յետոյ (1936), Սարաճեան Կաթողիկոս, այն ատեն Արքեպիսկո-  
պոս, 1939-ին վերջնականապէս կը գնէ Անթիլիասի կալուածները  
Նիիր Իսթ Ֆաունտէյշընէն եւ ազգային սեփականութիւն կը դար-  
ձընէ զանոնք շնորհիւ Սիմոն եւ Մաթիլտ Գայրզճեաններու նուիր-  
րատուութիւններուն եւ 1940-ին կը կառուցանէ Ս. Գրիգոր Լուսա-  
ւորիչ Մայր Տաճարը՝ Սարգիս Գնաճեանի նուիրատուութեամբ:

Այսպէսով, Կիլիկիոյ վտարանդի Կաթողիկոսութիւնը կ'ունե-  
նայ իր մնայուն վայրը Լիբանանի հիւրընկալ ամերիկացի վրայ, Ան-  
թիլիասի ծովեզերքը եւ իր շրջափակէն ներս կը վերականգնէ իր  
Դպրեվանքը, մայրիներու շուքին տակ:

1930-ին, հիմնարկուած Դպրեվանքը պէտք ունէր սակայն ներք-

նապէս կերտուելու եւ ամրապնդուելու: Անհրաժեշտ էր մշակել օր-  
ուայ պահանջներուն համապատասխանող կրթական ծրագիր,  
զայն համակարգել հետեւողական աշխատանքով եւ ջամբուած ու-  
սումին խորք եւ մակարդակ տալ: Սա կը նշանակէր արդէն Դպրե-  
վանքը օժտել մարդկային որակաւոր ոյժերով:

Համաձայնութեամբ կաթողիկոսարանի եւ Ամերիկայի Յանձ-  
նաժողովին, նոյն տարին վերատեսչութեան կը կոչուի Շահէ եպիս-  
կոպոս Գասպարեան (այն ժամանակ վարդապետ), հին արմաշական  
մը որ ուսումը կատարելագործած էր Պոսթոնի Քէմպրիճի աստ-  
ուածաբանական դպրոցին մէջ, միաժամանակ Հարվըրտ համալսա-  
րանէն ստանալով պսակաւոր աստուածաբանութեան վկայականը:

Դպրեվանքի ներքին տեսուչի պաշտօնին կը կոչուի բազմավաս-  
տակ կրթական մշակ եւ գրագէտ Բիւզանդ Եղիայեան որ այն ատեն  
կը գտնուէր ժընեւ ուր կը վարէր ուսուցիչ-դաստիարակի պաշտօն:

Բազմաթիւ այլ վաստակաւոր մտաւորականներ ու  
գրագէտներ ինչպէս Շահան Պէրպէրեան, Տոքթ. Յ. Թօփճեան,  
Խորէն Գաբիկեան, Տասնապետեան, Սիմոնեան... եւ այլն  
պաշտօնավարութեան կը կոչուին ապահովելով անոր գիտական  
վարկ եւ մակարդակ:

Այսպէս, ուսուցչական կազմը յարմարագոյն անձերով օժտուե-  
լէ յետոյ, Դպրեվանքը կ'ամրապնդէ իր ինքնութիւնը ինչ որ կ'ապա-  
հովէ իր ապագայ փթթումն ու ծաղկումը:

Անտարակոյս յետ պատերազմական այդ շրջանին, տարագիր  
հայութեան համար ոչ մէկ ծառայութիւն չէր կրնար աւելի օգտա-  
կար եւ սփոփարար նկատուիլ քան այս մէկը:

1932-ին, Դպրեվանքը կու տայ իր առաջին պտուղը: Մասնաւոր  
դասարանին պատկանող 6 ուսանողներ որոնք նախապէս արդէն  
երկրորդական վարժարան աւարտած ըլլալով Դպրեվանք ընդուն-  
ուած էին, կրօնական, հայագիտական եւ մանկավարժական լրա-  
ցուցիչ ուսում ստանալու համար, կը ստանան իրենց վկայականնե-  
րը: Ասոնցմէ ոմանք կը դառնան ուսուցիչ եւ ուրիշներ կը ստանձ-  
նեն քահանայական պաշտօն:

1935-ին եւ 1936-ին Դպրեվանքը կու տայ կանոնաւոր ընթացա-  
ւարտներու առաջին երկու հունձքերը որոնց մէջէն 7 երիասարդներ  
կը կոչուին կուսակրօն եկեղեցականութեան: Այս խումբին կը

պատկանին Զարեհ Ա. Կաթողիկոս, Դերենիկ Եպիսկոպոս Փոլատեան, Խորէն Ա. Կաթողիկոս եւ Ղեւոնդ Արքեպիսկոպոս Չէպէյեան: Այսուհետեւ ամբողջ 50 տարի, ան կը շարունակէ իր ընթացքը, Հայաստանեայց Եկեղեցւոյ եւ Հայ ժողովուրդի ծառայութեան կոչելով կուսակրօն եկեղեցականներ եւ քահանաներ ինչպէս նաեւ ուսուցչական եւ մշակութային կեանքի նուիրուած աշխարհականներ:

Անցնող 50 տարիներու ընթացքին, եթէ Դպրեվանքը սփիւռքահայութեան եկեղեցական եւ ազգային կարիքներուն գոհացում տուող կեդրոնական հաստատութիւնը եղաւ, գայն կը պարտինք առաջին հերթին այս տեսլապաշտ երիտասարդներուն որոնք նիւթականացած այս դարուն մէջ, հոգեկան ու մարդկային արժէքները ամէն բանէ գերիվեր դասելով, լքեցին աշխարհիկ կեանքի պերճանքն ու շուայտութիւնները եւ իրենց բոլորանուէր անձը ի սպաս դրին Հայաստանեայց Եկեղեցւոյ պատմական առաքելութեան:

Չայն կը պարտինք գլխաւորաբար Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Վեհափառ Հայրապետներուն որոնք իրենց սիրոյն եւ բացառիկ հոգածութեան առարկան դարձուցին Դպրեվանքը: Իրենց լուսամիտ եւ հեռատես քաղաքականութեամբ հետեւեցան մեծ հայրապետներու օրինակին եւ կարեկիութեան սահմաններուն մէջ, միջոցներ ստեղծեցին որպէսզի կուսակրօն տրամադրելի ոյժեր երթան արեւմտեան մեծ ուստաններ, համալսարանական լրացուցիչ կազմաւորում ստանալու:

Չայն կը պարտինք վերատեսուչ եպիսկոպոսներուն եւ վարդապետներուն որոնք ձեռնհասութեամբ եւ մանաւանդ պաշտօնի խոր գիտակցութեամբ Դպրեվանքը վերածեցին ոչ միայն հոգեւորականներու պատրաստութեան համար անհրաժեշտ գիտելիքներու փոխանցման վայրի, այլ ազգային նկարագիր կերտելու դարբնոցի:

Չայն կը պարտինք զինքը կենսաւորող ուսուցիչներուն որոնք իրենց մտքի լոյսով եւ սրտի ջերմութեամբ կրցան հաղորդել ապագայ նուիրեալներուն՝ սէրը համամարդկային իրաւ արժէքներուն, գնահատանքը հայ ժողովուրդի ստեղծագործ հանճարին եւ մշակոյթին, վեհութիւնը ծառայութեան ճամբով արդիւնաւորելու իրենց կեանքը:

Եւ վերջապէս գայն կը պարտինք հայ ժողովուրդին որուն արդար գնահատանքին եւ հոգածութեան առարկան կը մնայ ան:

Դպրեվանքը սակայն ինքնակեղրոն չի մնաց: Ան կենդանի ներկայութիւն եղաւ սփիւռքահայ եկեղեցական եւ ազգային կեանքի զանազան բնագաւառներուն մէջ:

Իրմով Կիլիկեան Թեմերը կազմակերպուեցան, ունեցան առաջնորդներ, վարդապետներ եւ քահանայ հայրեր ու վերակենդանացան:

Իրմով կեանք ու աւիշ ստացան Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ վարժարանները անգամ մը եւս հաստատելով իմաստասէրին այն մտածումը թէ «Լոյսը ցոլացնելու մէջ աւելի մեծ արժանիք կայ քան միայն զայն ընդունելու մէջ»:

Ան դրական նպաստ բերաւ հայ ժողովուրդի եկեղեցական եւ մշակութային դարաւոր ժառանգին, ինչպէս նաեւ պատմական իրաւունքները միջազգային ունկնդրութեան փոխանցելու աշխատանքին մէջ: Արդարեւ Դպրեվանքէն շրջանաւարտ բազմաթիւ բարձրագոյն հոգեւորականներ մաս կազմելով Միջ-Եկեղեցական Համաշխարհային Խորհուրդի ժողովներուն որ կը համախմբէ աւելի քան 300 եկեղեցիներ, շուրջ 250 միլիոն հաւատացեալներով եւ որուն գործադիր կեղրոնական մարմինն փոխ ատենապետն է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Աթոռակից Կաթողիկոս, միջազգային վարկ եւ շահեկանութիւն կ'ապահովեն հայ եկեղեցւոյ եւ հայ ժողովուրդին:

Դպրեվանքը ներկայ է Միջին Արեւելեան Եկեղեցիներու Խորհուրդին մէջ որուն գործադիր մարմինն մաս կազմելով Տ. Արամ Եպս. Քէչիչեան, Առաջնորդ Լիբանանի Հայոց, Հայաստանեայց Եկեղեցին արժանի հեղինակութեամբ իր ինքնութիւնը կը հաստատէ նաեւ այս մարզերէն ներս:

Ան ներկայ է մեր կրթական հաստատութիւններուն մէջ ուր ծառայող դպրեվանեցի տնօրէններն ու ուսուցիչները մեր մատղաշ սերունդի մտքերուն մէջ կը բանան ազգային գիտակցութեան եւ մշակոյթի խորունկ ակօսներ:

Վերջապէս ան ներկայ է մեր եկեղեցիներու մէջ ուր Դպրեվանքի հոգեւոր մթնոլորտին մէջ թրծուած քահանայ հայրեր կը փոխանցեն մեզի քրիստոնէական հաւատքի կենարար լոյսը:

Դպրեվանքը, այսօր սփիւռքահայ կեանքի մէջ ամուր կերպով խարսխուած հիմնարկութիւն մըն է:

Յիսուսն տարուայ չափահասութեամբ, բայց միշտ կենսունակ,



ան կը շարունակէ փոխանցել հայութեան՝ կտակը մեր վաղեմի պատմական վանքերու եւ հոգեւոր համալսարաններու: Կը քայլ անսայթաք, հայ ազգը յաւերժութեան առաջնորդող ղժոռարին ճանապարհով, դէպի հորիզոնները մեր նորագոյն պատմութեան:

Սփիւռքեան տարածքին մէջ ան մեր ազգային գոյութիւնը պայմանաւորող կարեւոր ազդակներէն մէկն է:

Իմաստաւորելով իր գոյութիւնը Աստուծոյ եւ ժողովուրդին ծառայելու կոչումով, ան կը մնայ կապուած իր ժողովուրդին որ կը հանդիսանայ իր բնական նեցուկը:

Ինչպէս սիրտը կը տազնապի եւ ի վերջոյ կը դադրի տրոփելէ երբ թոքերը չի կարենան անհրաժեշտ թթուածինը հայթայթել, նոյնպէս Դպրեվանքը կրնայ կորսնցնել իր աշխուժութիւնը եւ կանգ առնել իր սլացքին մէջ եթէ մենք ազգովին թեւ ու թիկունք չի կանգնինք իրեն:

Չի մոռնանք ժողովրդական իմաստութիւնը որ կ'ըսէ «գետակը կը դադրի հոսելէ երբ կը կտրուի իր ակունքներէն»:

Յիսնամեակը վերջակէտ մը չէ: Ան հանգրուան մըն է միայն կեանքի ուղիին վրայ: Ան օղակ մըն է որ կը բարդուի թաւալող տարիներու երկարածիգ շղթային վրայ: Անոր ոգեկոչումը պէտք է ըլլայ, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ենթակայ թեմերուն համար, նոր գրգիռ մը առաւել եւս հետաքրքրուելու իրմով իսկ հիմնարկութեան համար ներշնչարան մը, խթան մը ի խնդիր անդրագոյն յաջողութիւններու:

Յորելինական այս հանդիսութեան առիթով, յանուն Լիբանանի Թեմի Ազգային Վարչութեան, կը խոնարհինք յիշատակին առջեւ մեզմէ առ յաւէտ բաժնուած, բայց հոգիով միշտ ներկայ երանաշնորհ կաթողիկոսներուն որոնց վճռակամութիւնը եւ տեսլապաշտ ոգին որոշադրիչ դեր ունեցան այս հաստատութեան գոյութեան եւ զարգացման մէջ:

Կը խոնարհինք յիշատակին առջեւ բոլոր նախկին տեսուչներուն, հոգեւորական եւ աշխարհական ուսուցիչներուն որոնց հաւաքական ճիգերուն շնորհիւ Դպրեվանքը դարձաւ կրօնական եւ ազգային լուսաւորութեան ջահ մը:

Ազգային Կեդրոնական Վարչութիւնը իր խորագրաց երախտագիտութիւնը կը յայտնէ Վեհափառ Հայրապետներուն պատմական

այն գնահատելի դերին համար գոր Դպրեվանքը, շնորհիւ իրենց հայրական հոգատարութեան, կը շարունակէ կատարել ի փառս Աստուծոյ եւ ի ծառայութիւն հայութեան:

Շնորհակալութիւն Դպրեվանքի ներկայ վերատեսուչ սրբազան հօր ինչպէս նաեւ հոգեւորական եւ աշխարհական ուսուցիչներուն որոնց նուիրումով ան կը շարունակէ ճառագայթել եկեղեցական, մշակութային, ազգային ու միջազգային բնագաւառներէն ներս:

Յարգանք Կիլիկիոյ Կաթողիկոսութեան:

Փա՛ռք եւ պատիւ հայ ժողովուրդին:

Խաղաղութիւն եւ բարգաւաճ կեանք մեր սիրելի Լիբանանին:

RECEPTION ORGANISÉE EN L'HONNEUR  
DE S.E. KHATCHIG BABIKIAN

Sainteté - Béatitude  
Monsieur le représentant de S.E. le  
Président de la chambre des députés  
Monsieur le représentant de S.E. le  
Président du Conseil  
Monsieur le Président  
Monsieur l'Ambassadeur de France  
Excellence  
Mes Révérends Pères  
Mesdames et Messieurs,

C'est avec plaisir et honneur que je prends la parole au nom du Comité exécutif Central du Catholicossat Arménien de Cilicie pour vous souhaiter à tous, la bienvenue à cette rencontre organisée en l'honneur de son Président, S.E. Monsieur Khatchig BABIKIAN qui, comme vous le savez, vient de recevoir, il y a deux semaines, par les propres mains de S.E. Monsieur Christian GRAEFF, Ambassadeur de France au Liban, les insignes d'officier de la Légion d'honneur.

Cette marque d'honneur faite à M. BABIKIAN en reconnaissance des services qu'il a rendus et qu'il continue à rendre au développement de la langue et de la culture françaises et au raffermissement de l'amitié Libano-Française rejaillit sans conteste, à travers sa personne, sur le Liban auquel il est plus que jamais attaché au milieu des événements douloureux et sanglants qui le paralysent et sur la Communauté Arménienne qu'il ne cesse de servir avec ardeur, dévouement et fidélité depuis des décennies.

Eminent Juriste, fin lettré, polyglotte comme il en est peu, homme politique chevronné et de haut rang, M. BABIKIAN a occupé et occupe encore des charges de hautes responsabilités sur le triple plan

communautaire, Libanais et International.

Plusieurs fois Président du Comité Exécutif Central du Catholico-cat Arménien de Cilicie dont la juridiction s'étend du Liban à la Syrie, à Chypre, à l'Iran, aux pays du Golfe, à la Grèce, aux Etats-unis et au Canada, Président de plusieurs commissions arméniennes à vocation Sociale, membre actif du bloc parlementaire arménien, député depuis 1956, sans interruption membre actif du bloc parlementaire arménien, tour à tour Ministre de la Réforme, de la Santé, de l'Information et de la Justice, Président de la Commission parlementaire du Plan, de la Construction, de l'Industrie et du Pétrole, Vice-Président de l'Association Internationale des parlementaires de Langue Française, Président de l'Association Libanaise de Management, M. BABIKIAN est, à juste titre, une figure de proue dans la vie publique Libanaise et une image de marque dans la Communauté Arménienne.

Monsieur le Président HELOU, ainsi que les hautes personnalités officielles que nous avons l'honneur de compter parmi nous, ce soir, nous en donnons par leur honorable présence le gage et l'assertion.

Le rayonnement de sa personnalité dépasse effectivement les dimensions locales et régionales. Ses activités débordantes loin de le lasser accroissent son dynamisme et lui donnent une vigueur à toute épreuve.

Monsieur l'Ambassadeur de France, la Communauté arménienne dont les liens traditionnels d'amitié avec la France remontent à des dates très éloignées, se voit honorée par cette distinction. Elle est heureuse de vous accueillir et votre présence au Catholico-cat est un témoignage de cette amitié qui nous touche profondément et pour laquelle nous vous remercions. Aussi, voudrions-nous vous prier de bien vouloir transmettre à S.E. M. le Président de la République Française, l'expression de notre gratitude.

Nous remercions également, M.M. les représentants des hautes personnalités officielles, M. le Président HELOU, leurs excellences les évêques, les Ministres et les députés ainsi que les éminentes personnalités religieuses et civiles et vous tous qui avez bien voulu par votre présence donner un éclat particulier à cette rencontre exprimer votre estime au digne récipiendaire et nous assurer de votre sympathie à cette occasion.

Encore une fois merci à tous.

ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ՎԵՀԱՐԱՆԻՆ ՄԷՋ  
Ի ՊԱՏԻՒ ՄԵԹՐ ԽԱՉԻԿ ՊԱՊԻԿԵԱՆԻ

Վեհափառ Տէր  
Հոգեւոր Տէր  
Ն. Վսեմափայլ Տէրութիւն Պրն. Նախագահ,  
Մեծարգոյ Ներկայացուցիչ Խորհրդարանի Նախագահ  
Գերաշնորհ եւ Գերապայծառ Հայրեր  
Վսեմաշուք պարոն Դեսպան Ֆրանսայի, Մեծարգոյ Ներկայացուցիչ  
Պրն. Վարչապետին  
Գերապատիւ եւ Բարձրաշնորհ Հայրեր  
Յարգելի Ներկաներ,

*Յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդրոնական Վարչութեան բարի գալուստ կը մաղթեմ ձեր բոլորին:*

*Ինչպէս ծանօթ է արդէն ձեզի, այս հանդիպումը կազմակերպուած է ի պատիւ Կ. Վարչութեան ատենապետ Մեթր Խաչիկ Պապիկեանի, Ֆրանսական կառավարութեան կողմէ անոր պատուոյ լէգէոնի, սպայի կարգի շքանշանի տուչութեան առիթով:*

*Պարգեւատրումը կատարուեցաւ ձեռամբ Ֆրանսայի դեսպան, վսեմաշուք Տիար Քրիստեան Կրաֆի առ ի վարձատրութիւն այն գնահատելի ծառայութիւններուն զորս Մեթր Պապիկեան մատուցած է եւ կը շարունակէ մատուցել ի խնդիր Ֆրանսերէն լեզուի եւ մշակոյթի տարածման եւ զարգացման ինչպէս նաեւ Լիբանանի եւ Ֆրանսայի բարեկամական կապերու ամրապնդման:*

*Այս պատիւը, անկասկած, իր անձին ընդմէջէն կ'երթայ նաեւ Լիբանանին որուն կապուած է ան ոեւէ ատենէ աւելի ի տես ներկայի քաղաքական, տնտեսական եւ ընկերային դժնդակ պայմաններուն, ինչպէս նաեւ հայ համայնքին որուն անթուլ եւ անսակարկ ծառայողն է երկար տարիներէ ի վեր:*

Համբաւաւոր իրաւագէտ, բազմածաւալ զարգացումի եւ քաղաքական գնահատելի փորձառութեան տէր անձնաւորութիւն, ծանօթ բազմաթիւ օտար լեզուներու, Մեթր Պապիկեան վարած է ու կը վարէ բազմաթիւ պատասխանատու պաշտօններ ազգային, լիբանանեան եւ միջազգային բեմերու վրայ:

Ան բազմիցս եղած է եւ ներկայիս է ատենապետ ազգային կեդրոնական վարչութեան, ատենապետ կաթողիկոսարանի ժողովրդային տուներու վարչութեան, ինչպէս նաեւ Բիւզանդ եւ Անժէլ Թութիւնճեան ծերանոցի շինութեան յանձնախումբերուն, փոխատենապետ հայասէր գուլիցերիացիներու Արմենօֆաս ընկերակցութեան, ատենապետ Գոմարէսի, ազգային եւ պետական երեսփոխան 1956էն ի վեր անընդմէջ, եղած է յաջորդաբար վերակազմութեան, առողջապահական, տեղեկատուութեան եւ դատական նախարար: Նախագահ երեսփոխանական յանձնախումբերու, փոխ-նախագահ Ֆրանսախօս երկիրներու երեսփոխանական միջազգային ընկերակցութեան, նախագահ վարչագիտական ուսմանց լիբանանեան ընկերակցութեան:

Վերոյիշեալ պատասխանատուութիւններու լոյսին տակ, յստակ կերպով կը բնորոշուին, Մեթր Պապիկեանի կարեւոր դերակատարութիւնը եւ վայելած վարկը ազգային, լիբանանեան եւ միջազգային մակարդակներու վրայ:

Իր ճառագայթող անհատականութիւնը տեղական եւ շրջանային շրջագիծէն անցնելով ստացած է միջազգային տարածք: Իր այլազան պարտաւորութիւնները ոչ միայն չեն ընկճեր գինքը այլ իրեն կու տան յաւելեալ աշխոյժ եւ վճռակամութիւն:

Վսեմաշուք պարոն դեսպան, հայ համայնքը որուն բարեկամական աւանդական կապերը Ֆրանսայի հետ կու գան հեռաւոր անցեալէ, ինքզինքը պատուուած կ'զգայ այս պարզեւատրումով: Ան ուրախութեամբ կ'ընդունի ձեզ եւ ձեր ներկայութիւնը կաթողիկոսարանի մէջ որմէ խորապէս տպաւորուած ենք, խօսուն գրաւականն է այդ բարեկամութեան: Պիտի խնդրէի որ ընդունէիք մեր շնորհակալութիւնները եւ հաճէիք փոխանցել Ն. Վ. Տէրութիւն, Ֆրանսայի հանրապետութեան նախագահին մեր երախտագիտութիւնը:

Շնորհակալութիւն կը յայտնենք նաեւ Ն. Վսեմութիւն նախա-

զահ Շարլ Հելուին, Գերաշնորհ եւ Գերապայծառ եպիսկոպոսներուն, Պ. Նախարարներուն եւ երեսփոխաններուն ինչպէս նաեւ եկեղեցական եւ աշխարհական երեւելի անձնաւորութիւններուն եւ ձեր բոլորին որ ձեր ներկայութեամբ ուզեցիք յաւելեալ փայլք տալ այս հաւաքին, յայտնել ձեր գնահատանքը եւ շնորհաւորութիւնները արժանաւոր պարգեւատրեալին եւ պատուել մեզ:

Շնորհակալութիւններ



## ՓՐՈՖԵՍԷՐ ԽԱՉԵՐ ԳԱԼՈՒՍՏԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Երախտարժան Փրոֆեսէօր Խաչեր Գալուստեանի մահուան 20-ամեակի առիթով գինքը ճանչցողներէն եւ սիրողներէն յանձնախումբ մը կազմուած է որ լծուած է գրական յուշարձան մը կանգնելու ազնիւ գաղափարին գործադրութեան աշխատանքին:

Առ այդ ի շարս ուրիշներուն, վերոյիշեալ յանձնախումբը դիմած է նաեւ ինծի խնդրելով որ գրեմ իր մասին իբրեւ կրթական մշակ: Դժբախտաբար իմ ծանօթութիւնս Պ. Գալուստեանի հետ շատ սահմանափակ էր: Ճանչցած էի գինք աւելի իր համբաւովը, իբրեւ տարիներու կրթական մշակ, տնօրէն, հմուտ մանկավարժ եւ հոգեբան: Այսուհանդերձ պատեհութիւնը ունեցայ անգամ մը իրեն հետ տեսակցելու եւ խորհրդակցելու գինքը մօտէն հետաքրքրող հարցի մը շուրջ որ հայ ուսուցիչ պատրաստելն էր աւելի ճիշդը հայկական ուսուցչանոց մը ունենալը:

Արդարեւ 1982ին Ազգային Իշխանութեան Ուսումնական Խորհուրդի ատենապետն էի: Այդ շրջանին Ուսումնական Խորհուրդը մտադրած էր ազգային վարժարաններու ուսուցիչները վերաորակաւորել յատուկ կրթական ծրագրով: Դասընթացքը կը ծրագրէր դասեր կազմակերպել հայ լեզուի, գրականութեան, հայոց պատմութեան կրօնքի, աշխարհագրութեան եւ վերջապէս կրթական ծրագրի մաս կազմող բոլոր առարկաներուն կապակցութեամբ: Ուսումնական Խորհուրդը կը մտածէր նաեւ ընդհանուր մանկավարժութեան, մանուկներու հոգեբանութեան եւ մանաւանդ մեթոտաբանութեան դասեր կազմակերպել: Հոգեբանութեան դասերուն համար կը փնտռէինք հայերէն լեզուով դասաւանդել գիտցող ուսուցիչ մը, եւ ահա օր մը հեռաձայնային խօսակցութիւն մը ունեցայ Պ. Գալուստեանին հետ որ կ'ուզէր ինծի հետ հանդիպում մը ունենալ իմացած ըլլալով որ մանկավարժութեան եւ մանուկներու

հոգեբանութեան դասաւանդ ուսուցիչ կը փնտռենք մեր վարժարաններուն ուսուցիչները վերաորակաորելու համար:

Մեր հանդիպումը եղաւ համալսարանի գրասենեակիս մէջ, շատ հաճելի միջնորոտով: Իրեն պարզեցի Ուսումնական Խորհուրդի ծրագիրը եւ առ այդ անոր հետապնդումը:

Պ. Գալուստեանը յայտնեց որ իր փնտռածը աւելի ծաւալուն դասընթացքներ կազմակերպելով, պատրաստել է ապագայ հայ ուսուցիչը: Ներկայիս լաւագոյն պարագային, մեր դպրոցներու մէջ պաշտօնավարել ուզող թեկնածուներէն կը պահանջուի ուսումնական հաստատութեան մը կողմէ համապատասխան վկայագիր մը: Ասոնք բաւարար չեն: Ուսուցիչութիւնը նախ կոչում է ապա համապատասխան նախապատրաստութիւն կը պահանջէ:

Ներկայիս ուսուցչութեան նուիրուիլ ուզող երիտասարդ-երիտասարդուհիներէն՝ որոնք երկրորդական ուսման վկայական կը կրեն, կը պահանջուի որ մանկավարժութիւն եւ հոգեբանութիւն ուսանին այն մտահոգութեամբ որ ապագայ մարդը կերտելու ամէնազնուագոյն եւ միեւնոյն ատեն ամէանդժուար այս ասպարէզը կը պարտադրէ թեկնածուներուն որ անկախ իրենց ուսումնական եւ մասնագիտական պաշարէն, գիտնան ընտելանալ աշակերտներու հոգեկան աշխարհին, ծանօթանալու արուեստին եւ ատակ ըլլալ արդի մեթոտաբանութեամբ, ուսումը սիրցնելու եւ գիտելիքները հեշտօրէն փոխանցելու: Անառարկելի իրողութիւն մըն է որ ուսուցիչը կը կամաւորէ ու կը դասաւորէ աշակերտին ուղեղը եւ կ'ուղղէ անոր ձգտումներն ու հոգեկան թռիչքները:

Ըսի այդ բոլորին համաձայն ենք: Մենք եւս կը խորհինք որ ուսուցիչը պէտք է նաեւ սորվելու եւ սորվեցնելու եղանակը գիտնայ ու ամէն նիւթի յատուկ մեթոտով փորձէ անոր փոխանցումը դարձնել դիւրամատչելի եւ իրացումը հեզասահ:

Պ. Գալուստեան աւելցուց որ ուսուցիչը պէտք է նաեւ ծանօթանայ մանուկին հոգեկան աշխարհը յուզող հարցերուն, փորձէ թափանցել անոր հոգեկան բաւիղներէն ներս եւ հետելի անոր աճման հոլովոյթին ընկերացող դժուարութիւններուն եւ մանաւանդ սորվեցնէ սիրել աշակերտը եւ ինքզինք սիրցնել տալ անոր. արդարեւ սիրոյ եւ գուրգուրանքի ճամբով պէտք է մանուկը ուղղել կ'ըսէ արդի մանկավարժութիւնը:

Մեր շատ հետաքրքրական խօսակցութեան արդիւնքը այն եղաւ որ երբ Պ. Գալուստեանին յայտնեցի որ տիրող նիւթական անձուկ պայմաններու մէջ ազգ. վարչութեան ուսումնական խորհուրդը ի վիճակի չէ, ուսուցչանոց մը կերտելու, այսուհանդերձ կը փոխանցեմ ձեր մտահոգութիւնը ժողովին: Պ. Գալուստեան շնորհակալութիւն յայտնեց այս օգտաշատ տեսակցութեան համար եւ մեկնեցաւ:

ժամանակ մը վերջը, լուսահոգի Գարեգին Բ. Հայրապետը պատմեց ինծի թէ ողբացեալ Խաչեր Գալուստեանի տիկինը եւ տղան՝ Շահէն, եկած են զինքը տեսնելու ըսելու համար որ իրենց ողբացեալ ամուսինին եւ հօրը յետ մահու կամքը կատարելու համար պատրաստ են յիսուն հազար ամերիկեան տոլար տրամադրելու որպէսզի անոր տարեկան եկամուտով հայ ուսուցիչ պատրաստելու նուիրուած ուսուցչանոց մը կանգնէ կաթողիկոսարանի հովանաւորութեան ներքեւ: Վեհափառ Հայրապետը չափազանց զգացուած եղած առաջարկէն, յետ խորհրդակցութեան կը յայտնէ որ պատրաստ է անհրաժեշտ սենեակները տրամադրելու համեստ ուսուցչանոց մը կանգնելու համար:

Առ այդ խորհրդակցական ժողովի կը հրաւիրէ իր հովանաւորութեամբ, հանգուցեալին տիկինը, Տիկին Վանուհին եւ Պ. Շահէ Գալուստեանները, ողբացեալ Հայկ Թիւլպեանը, ՊՊ. Գրիգոր Շահինեանը, Ժիրայր Դանիէլեանը, Հայր Արշաւիր Գաբուճեանը, Օրդ. Մանուշակ Պօյաճեանը եւ զիս: Վեհափառ Հայրապետը եւ ժողովը համաձայն գտնուեցան որ Պ. Գրիգոր Շահինեանին վստահուի ծրագրուած համեստ ուսուցչանոցին վարիչ տնօրէնի պաշտօնը:

Պ. Շահինեան որ արդէն Լիբանանեան Համալսարանի դասախօս էր ազնուութիւնը ունեցաւ կատարուած առաջարկը ստանձնելու: Յանձնախումբը դարձաւ խնամակալ մարմին ու շնորհիւ Վեհափառ Հայրապետին ցուցմունքներուն եւ հոգածութեան կեանք առաւ հայ ուսուցիչ պատրաստելու նուիրուած նորափթիթ Խաչեր Գալուստեան Մանկավարժական Կեդրոնը:

Մայիս 2005

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ Հ.Ե.Հ.Ո.Մ.Ի  
ՀՐԱԲԵՐՈՎ ՎԵՀԱՐԱՆԻ ԴԱՀԼԻԾԻՆ ՄԷՋ

Գերապատիւ Առաջնորդ Հայր Սուրբ,  
Գերապատիւ Հայրեր,  
Յարգելի Պետական Երեսփոխան,  
Պատուարժան ներկաներ,  
Սիրելի ՀԵՀՈՄականներ

*«Ինչպէս հայ համալսարանական մը կրնայ օգտակար ըլլալ իր ժողովուրդին եւ որոնք են ազգային հաստատութիւններէն ներս ծառայելու կարելիութիւնները իբրեւ ազգայի ասպարէզ»:*

*Թոյլ տուէք նախ շնորհաւորեմ ՀԵՀՈՄի վարչութիւնը որ հայ համալսարանական ուսանողները շահագրգռող այսքան շահեկան եւ այժմէական հարցազրոյց մը կազմակերպած է:*

*Սիրելի ՀԵՀՈՄականներ,*

*Գիտեմ թէ գանազան համալսարաններէ կու գաք ուր կ'ստանաք ձեր ընտրութեան համապատասխանող կազմաւորում: Սակայն ինչքան ալ իրարմէ տարբեր ըլլան ձեր յաճախած համալսարանները, վախճանական իմաստով, բոլորն ալ կը ձգտին նոյն նպատակին՝ ջամբել ուսանողութեան մշակոյթ, հանդերձ հիմնական մասնագիտութեան մը, ու թեքնիքի եւ վարժեցնել գանոնք հետագօտութիւններու:*

*Մարդու յառաջացումը (la promotion de l'homme) չի կրնար սակայն ապահովուիլ սոսկ մշակոյթով եւ արհեստավարժութեամբ: Անհրաժեշտ է նաեւ որ ան բացուի իր գոյութիւնը իմաստաւորող հիմնական հարցերու առջեւ՝ ինչպէս բարոյական արժէքներու որոնում եւ գնահատում իսկ մեր պարագային, ազգային պատկանելիութեան գիտակցութիւն եւ մեր արդար իրաւունքներու հետապն-*

դուժ: Ասոնք կ'ամբողջացնեն մեր կազմաւորումը եւ կը ներդաշնակեն մեր հոգեմտաւոր կառոյցքը:

Պէտք է սահմանափակուիլ միատեսակ մշակոյթով ու մնալ կաղապարուած մտքով, իւրացուած մասնագիտութեան մը կեղեւին ներքեւ: Ճիշդ է որ ամէն մասնագէտ կարելի չափով պէտք է խորացնէ իր ընտրած ճիւղը, սակայն պէտք է նաեւ ան օժտէ իր անձը յարակից այլ գիտելիքներով եւ մշակոյթով: Բազմերանգ զարգացումը կը սատարէ մարդու ամբողջականութեան եւ հոգեկան միութեան պահպանման, մանաւանդ անոր ուղիղ դատելու կարողութեան: Մարդը զանազան մշակոյթներու հետ իր ունեցած ծանօթութեամբ կը վերարժեւորէ ինքզինքը իր շրջապատին մէջ:

Ներկայիս գրեթէ բոլոր համալսարանները իրենց կառոյցքներով կը ջանան իրագործել մարդու ներդաշնակ զարգացումը ապահովելու ձգտող կրթական ծրագիրներ:

Golbraith ճարտարարուեստի զարգացման նուիրուած իր գրքին մէջ յստակ կերպով կը յայտնէ մասնագիտութեան նեղ սահմաններու մէջ ամփոփուելու վտանգները:

Edgard Faure մշակոյթի մասին Unesco-ի ներկայացուցած իր տեղակազրին մէջ կ'ըսէ թէ համալսարանները պէտք է ուսանողին ապահովեն մասնագիտութեան կողքին մշակոյթ, թեքնոլոգի մանաւանդ խղճի զարթնում եւ գիտակցութիւն:

Երբ կը խօսուի խղճի զարթնումի եւ գիտակցութեան մասին, կը տարուինք մտածելու մեր հաւաքական խղճի, մեր ազգային խղճի ու գիտակցութեան մասին որոնց իւրացումը մեզի կու տայ ազգային դիմագիծ:

Բազմաթիւ ազդակներ կը սատարեն ազգային դիմագիծի իւրացման եւ պահպանման:

Նախ ընտանիքը որուն շունչը կը պայմանաւորէ մեր դիրքաւորումը:

Ապա դպրոցը ուր ուսման միջոցով կը փոխանցուի մեր մշակութային ժառանգը:

Եւ վերջապէս մեր միջավայրը, շրջապատը որոնց առողջ եւ հայեցի մթնոլորտին մէջ հայ երիտասարդի հոգիին մէջ կը բացուին ազգային գիտակցութեան մշտանորոգ ակօսներ: Եւ այս բոլորը մեզ կ'առաջնորդեն ազգային դաստիարակութեան ըմբռնումին եւ իւրացումին:

Հայ համալսարանականը պէտք է նախանձախնդիր ըլլայ իր ազգային դաստիարակութեան գոր պիտի աշխատի փոխանցել իր շրջապատին:

Արդարեւ, հայրենիքէն դուրս որ երկիրներու մէջ ալ ապրինք, ենթակայ ենք բնութեան անյեղլի օրէնքին, փոքրամասնութեանց վիճակուած ճակատագրին: Ըլլանք տկար կամ զօրաւոր փոքրամասնութիւններ պիտի չկարենանք շատ երկար տոկալ ժամանակի եւ օտար միջավայրի տարրալուծող ազդեցութեան: Եթէ չփորձենք պաշտպանել զմեզ:

Արդի ժողովրդավարութեան մէջ կ'ըսէ նշանաւոր ընկերաբան եւ քաղաքական գիտութեանց Փարիզի համալսարանի նախկին դասախօս Emmanuel Mounier, «Յեղային կամ ազգային փոքրամասնութիւններու խաղաղ գոյակցութիւնը բնակչութեան մնացեալ հատուածներուն հետ, կ'առաջնորդէ միաձուլումի, իսկ անոնց իրերամերժ դիրքաւորումը իբրեւ հետեւանք կրօնական եւ մշակութային տարբերութիւններու յառաջ կր բերէ հակադրութիւն»:

Եթէ ասիկա ճիշդ է ընկերաբանական հասկացողութեամբ, անհրաժեշտ է որ անրնդմէջ պայքարինք պահելու համար մեր ազգային դիմագիծը, մեր ինքնութիւնը յատկապէս մեր գաղութներուն մէջ ուր հայութիւնը կը վայելէ ազատութեան հովանիին ներքեւ որոշ դիւրութիւններ եւ հանդուրժողութիւն երբ այլամերժութեան ցրցուն դիրքաւորումներ չկան:

Պէտք է նաեւ գիտնալ որ յաջողելու համար չի բաւեր միայն վկայականներ ունենալ որքան ալ անոնք նախադուռը նկատուին յաջողութեան: Չի բաւեր նոյնիսկ գործի մէջ մասնագիտութիւն ձեռք ձգել, դրամ վաստկիլ եւ հարստութիւն դիզել:

Արդարեւ սոսկ դրամի, դիրքի, պատիւներու տիրացումը անպայմանօրէն յաջողութիւն չեն կրնար նկատուիլ քանի որ անոնք չեն կրնար ըլլալ կեանքի նպատակ:

Անոնք օգտակար միջոցներ են օգնելու համար անհատին որ իրագործէ զինքը ազնուացնող եւ իրեն հոգեկան գոհացում տուող ձգտումները:

Կարեւորը մարդու մը համար այդ բոլորէն անկախ եւ այդ բոլորէն վեր իր ուրոյն կեանքը երջանկացնելն է իր բնատուր ճիրքերու գարգացումով եւ անոնց օգտագործումով, ողջախոհութեամբ,

պարկեշտ նկարագրով, եռանդուն աշխատանքով, հոգեկան բաւարարութեամբ եւ մանաւանդ խոհալով:

Իմաստասէր մը կ'ըսէ.- «Եթէ կ'ուզէք յաջողիլ ձեր կեանքին մէջ, աշխատանքը ձեր կեանքի ընկերը դարձուցէք, շատ լաւ ըրէք ինչ որ պարտիք ընել, փորձեցէք ըլլալ լաւագոյնը ձեր ընտրած ասպարէզին մէջ եւ մանաւանդ ունեցէք խոհալ մը որուն համար կարենաք ի հարկին յանձն առնել տառապիլ եթէ նոյնիսկ անհրաժեշտ ըլլայ»:

Արդարեւ խոհալը ձեր կեանքը կ'իմաստաւորէ: Զեզ կը դնէ երջանկութեան հունին մէջ: Անով կ'ունենաք հոգեկան ապրումներ եւ ձեր կեանքին թուիչք տուող երազներ:

Խոհալի ձգտումը որ մեր առօրեային մաս պէտք է կազմէ, հեռու կը պահէ ձեզ հանգստապաշտութենէ, շռայլութենէ, պերճամուտութենէ որոնք կը մեռցնեն ձեր բարոյական առաքինութիւնները: Խոհալը մարդը կ'ազնուացնէ ու կը տարանջատէ սովորական մահկանացուներէն:

Եւ իբրեւ հայ ինչպէս կրնանք երջանիկ զգալ զմեզ եթէ գուրկ ենք ազգային գիտակցութենէ, եթէ չունինք ծառայելու ոգի, տեսլական կամ ազգային ընդհանրական շահերու կապուած երազներ:

Ինչպէ՞ս կրնանք զմեզ երջանիկ զգալ եթէ չունինք հոգեկան բաւարարութիւնը մաքառումներու, պայքարներու եւ խոյանքներու ի խնդիր մեր ազգային իրաւունքներու տիրացման, մեր ազգային գոյատեւման, մեր եկեղեցական եւ մշակութային արժէքներու պահպանման:

Պէտք է մեր նիւթական եւ ֆիզիքական պահանջներուն գոհացում տուող միջոցներու կողքին մտածենք նաեւ մեր մարդկային խղճին եւ մեր ազգային խղճին պահանջներուն բաւարարութիւն տուող պայմաններու մասին:

Պէտք է տէր կանգնինք մեր ինքնութեան ու կապուած մնանք մեր արմատներուն որոնք երեւան կը հանեն մեր ազգային եւ բարոյական դիմագիծը, մեր հոգեկան եւ բարոյական արժէքները որոնցմէ ներշնչուելով կը բեղմնաւորենք մեր ներկան եւ կը պատրաստենք մեր ապագան:

Պէտք է գուրգուրանք մեր լեզուին, դպրոցներուն եւ եկեղեցիներուն վրայ իբրեւ միջնաբերդ հայապահպանման: Ահա խոհալի

պատկերացում մը որուն հետապնդումը կը պահանջէ մեզմէ որ ըլլանք յանձնառու եւ կազմակերպուած:

Յանձնառուն այն է որ ունի պարտականութեան գիտակցութիւն եւ ծառայելու ոգի:

Յանձնառուն ինքզինքը պատասխանատու կ'զգայ այն ծառայութեան համար որ կրնայ կատարել ի շահ իր ազգին, իր հայրենիքին եւ իր շրջապատին:

Յանձնառութեան այս ոգին է որ ձեր մէջ պէտք է ճառագայթէ:

Արդարեւ ժողովուրդի մը ապագան կը կերտուի ներկայ ատաղձով, իր երիտասարդութեան տեղ հասնելու վճռակամութեամբ եւ անխորտակելի կամքով:

Պէտք է գիտնանք տալ մեր ժողովուրդին մեր մտքէն, մեր ժամանակէն, մեր նիւթական կարելիութիւններէն, մեր շունչէն եւ մանաւանդ մեր սրտէն: Զմոռնանք որ միայն տալու պայմանով մարդ կը յաջողի իր ծրագիրներուն մէջ:

Պէտք է խուսափիլ անտարբերութենէն որ աղբիւրն է ջրատիչ տրամադրութիւններու որոնք կ'առաջնորդեն դէպի դանդաղ մահ մեր հոգեմտաւոր արժէքներուն:

Պատմութիւնը անողոք է եւ անփառունակ ճակատագիր կը ճշդէ այն ժողովուրդներուն հանդէպ որոնք կը մնան կրաւորական, դիտող, համակերպող եւ ի վիճակի չեն պայքարելու պահելու համար իրենց ինքնութիւնը եւ հաւաքական անհատականութիւնը:

Ֆրանսացի նշանաւոր գրագէտ Պերնանոս ըսած է՝ «Պէտք չէ սպասել որ ապագան պարտադրուի մեզի, պէտք է գայն կերտել», պէտք է գիտնանք դիմաւորել ի հարկին հոսանքն ի վեր, պահելու համար սփիւռքահայութեան ազգային դիմագիծը եւ գայն դարձնելու համար յանձնառու: Պատմութիւնը կը կերտուի յանձնառու մարդոցմով:

Պէտք է սակայն մեր աշխատանքը կատարենք հաւատքով ու կազմակերպուած: Պայքարը առանց կազմակերպուած հաւաքական ճիգերու կը դառնայ պարագայական խանդավառութիւն ու զեղում եւ կը մնայ անհետեւանք:

Ժողովուրդի մը մտաւորական տարրն է որ ուղեցոյց կ'ըլլայ անոր յառաջդիմութեան:

Մեր կառույցները ընդարձակ եւ բազմազան են: Անոնք կ'ընդ-



գրրկեն մեր ազգային կեանքի եկեղեցական, կրթական, տնտեսական, կալուածական, դաստաստանական, դաստիարակչական, բարեսիրական եւ վարչական բնագաւառներ: Այդ կառույցները կրնան կենսաւորուիլ իրենց ծառայական ընթացքին մէջ երբ հոն աշխատող անձերը գիտակից եւ զարգացած տարրեր ըլլան ու իրենց գիտութիւնը եւ կազմաւորումը դնեն ի սպաս հանրութեան եւ հասարակական շահերու:

Համալսարանական երիտասարդ-երիտասարդուհիներու ամենամատչելի ասպարէզը կրթական մարզն է ուր միշտ ալ վկայեալ, ծառայասէր եւ յանձնառու ուժերու պէտք կայ: Միայն ազգային վարժարանները աւելի քան 300 ուսուցիչ-ուսուցչուհիներ ունին որոնց մէկ մասը համալսարանաւարտ են: Մեր երկրորդական եւ միջնակարգ դասարաններու համար համալսարանականներ կը պահանջուին: Պարագան նոյնն է մնացեալ հայկական վարժարաններուն համար:

Գալով անոնց վարձատրութեան, անոնց թոշակները կը ճշդուին համաձայն պետական պաշտօնեաներու եւ ուսուցիչներու օրէնքին: Կ'ստանան ընկերային յատկացումներ եւ ունին ընկերային ապահովագրութիւն:

Կան նաեւ գրասենեակային մասնագիտական աշխատանքներ, որոնց համար համալսարանական կազմաւորումը անհրաժեշտ կը նկատուի, ինչպէս Ուսումնական Խորհուրդը, Տնտեսական Խորհուրդը, Ընկերային Ծառայութեան գրասենեակը Առաջնորդարանի մէջ եւ այլ գրասենեակներ ու տեսչութիւններ Կաթողիկոսարանի մէջ:

Ոմանք թերեւս տարուին մտածելու որ ընկերութիւններու մէջ աշխատիլ, անկախ նիւթական վարձատրութեան նկատմանէն, իրենց անհատականութեան աւելի վարկ կ'ապահովէ քան թէ ազգային հաստատութիւններու մէջ պաշտօնեայ ըլլալը:

Կը խորհիմ որ բոլորովին ճիշդ չէ այս մտածումը: Նախ յայտնեմ որ անհատական հաստատութիւնները աւելի չեն վճարեր քան ազգային հաստատութիւնները, յարգելի են անշուշտ բացառութիւնները, յետոյ ազգային գրասենեակները կազմակերպուած աշխատատեղիներ են ուր գոյութիւն ունին կարգ ու կանոն եւ մանաւանդ աշխատանքի ներքին կանոնագրութիւն:

Չմոռնանք ըսելու որ մարդ ինք կ'արժեքը իր ունեցած պաշտօնը իր լրջութեամբ, աշխատանքով եւ մանաւանդ լաւ յարաբերութիւններ պահելու կարողութեամբ: Գրասենեակը չէ որ պաշտօնական վարկ կը հայթայթէ այլ հոն աշխատող պաշտօնեան է որ իր կարողութիւններով կ'արժեքը գայն եւ կը դարձնէ յարգանքի արժանի:

Մակայն ինչպէս վերեւ յիշեցինք պայման չէ որ մէկը ազգային մեքենայի մէջ պաշտօնեայ ըլլայ ծառայելու համար: Ունինք բազմաթիւ կառույցներ որոնց կարելի է մասնակցիլ իբրեւ ժողովական եւ ձեր ծառայութիւնը բերել ազգային գործերուն:

Անոնք որոնք աւարտած են իրենց ուսումը եւ տրամադրութիւն ունին ծառայելու կրնան դիմել Առաջնորդարանի դիւանապետին որ կը փոխանցէ ենթակներուն անունները Առաջնորդ հայր սուրբին ի նկատառում եւ կամ կաթողիկոսարանի դիւանապետ պարոն Խաչիկ Տէրէյեանին:

Արդարեւ Ազգ. Իշխանութիւնը պէտք ունի համայնարանաւարտ երիտասարդ-երիտասարդուհիներու օգտուելու համար անոնց մասնագիտութենէն, երիտասարդական կորովէն ու վարակիչ խանդավառութենէն: Եթէ նոյնիսկ ժամանակ ու միջոց չունին մաս կազմելու մարմիններու, թող փորձեն զօրավիզ կանգնիլ կատարուած աշխատանքներուն յայտնելով ի հարկին իրենց թելադրանքը, դիտողութիւնը կամ գնահատանքը:

Ահա սիրելի ՀԵՀՈՄականներ, ծառայելու ընդարձակ կարելիութիւններ: Փոխանցեցէք ձեր ազգային դիմագիծը ձեր շրջապատին: Մնացէք յանձնառու ու կողմնակից կազմակերպուած աշխատանքի, դարձէք հոգածու եւ տէր ու պաշտպան մեր դարաւոր մշակոյթին, հոգեւոր եւ բարոյական արժէքներուն, պատմական անկորնչելի իրաւունքներուն եւ մեր սիրելի ու պանծալի հայրենիքին:

8/5/1999

## ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Թուականէս 137 տարի առաջ, ուրեմն 1863-ի Մարտ 17-ին կայսերական հրովարտակով, Սուլթան Ապտիւլ Ազիզ պաշտօնապէս կը ճանչնար ու կը վաւերացնէր հայ ազգային-եկեղեցական կեանքը հիմնովին կազմակերպելու կոչուած կանոնադրութիւն մը որուն հեղինակները օրին գայն կոչեցին Ազգային Սահմանադրութիւն:

Ժողովրդավարական սկզբունքներու վրայ հիմնուած այս կանոնադրութիւնը որուն համաձայն եւ որոշ պատշաճեցումներով կազմակերպուած է ու կը ղեկավարուի ներկայիս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր թեմերով, կը սահմանէ ազգին ու անհատին փոխադարձ իրաւունքներն ու պարտաւորութիւնները եւ բազմաթիւ յօդուածներով կը ճշդէ ազգային-եկեղեցական կեանքի ղեկավարութեան մեքենականութիւնը այլ խօսքով գործընթացը:

Պատշաճեցումները կատարուած են գլխաւորաբար նոյն շրջանի Թուրքիոյ քաղաքական իշխանութեան եւ ներկայի մեր թեմերու տեղական իշխանութեանց վերաբերող մասերուն վրայ, այսպէս Օսմանեան կայսրութեան տեղ պէտք է իմանալ մեր թեմերու քաղաքական տեղական իշխանութիւնները, պատրիարքին տեղ, կեդրոնին մէջ կաթողիկոսը իր վարչական պատասխանատուութիւններու սահմանին մէջ իսկ թեմերու մէջ՝ առաջնորդները:

Թեմերու պարագային, ազգային սահմանադրութեան մէջ յիշուած գաւառական ժողովը կը կոչուի ներկայիս թեմական ժողով կամ ազգ. երեսփոխանական ժողով: Ազգային սահմանադրութեան մէջ յիշուած խորհուրդներու կամ մարմիններու մաս կազմող անդամներուն թիւը կը պատշաճեցուի ըստ կարելիութեան եւ պահանջին:

Այս պատշաճեցումները ոեւէ մէկ ձեւով խնդրոյ առարկայ չեն դարձներ ազգային սահմանադրութեան հոլթիւնը, խորքը:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կանոնադրութիւնը մեծապէս ներչնչուած է ազգային սահմանադրութենէն եւ պատշա-

ճեցուած անոր: Ազգային սահմանադրութիւնը, ներկայիս, ի զօրու է Լիբանանի, Սուրիոյ եւ Կիպրոսի թեմերուն մէջ: Մնացեալ թեմերու կանոնադրութիւնները կը պատրաստուին թեմական ժողովներու կողմէ բայց ի զօրու կը դառնան յետ ազգ. կեդրոնական վարչութեան քննութեան եւ ազգ. ընդհանուր ժողովի վաւերացման որ կը հսկէ անոր կառոյցներուն եւ ոգիին վրայ որոնք պէտք է ներշնչուած ըլլան ազգ. սահմանադրութեան ոգիէն եւ իրենց հիմնական սկզբունքներու մէջ հակասական չըլլան ազգ. կեդրոնական վարչութեան կանոնադրութեան հետ:

Ազգային սահմանադրութեան պատրաստութեան տուն տուող ազդակները

Ազգային սահմանադրութիւնը արդիւնք է 19-րդ դարու առաջին կիսուն Օսմանեան կայսրութիւնը մտահոգող եւ ցնցող քաղաքական դէպքերու հոլովոյթին ինչպէս նաեւ, նոյն շրջանին, Պոլսոյ ազգային կեանքը յուզող սուր պայքարին ընդմէջ մէկ կողմէ ամիրաներուն եւ միւս կողմէ արհեստաւորներուն ու վաճառականներուն, այսպէս կոչուած էսնաֆներուն որոնց եկան հետզհետէ միանալու եւրոպական կրթութիւն ստացած եւ ֆրանսական յեղափոխութեան ազատական գաղափարներով սնած ու տոգորուած երիտասարդ մտաւորականներ:

ժամանակի սղութեան պատճառով, զանց կ'առնեմ մանրամասն կերպով անդրադառնալ նոյն շրջանին թուրքիոյ մէջ կատարուած քաղաքական իրադարձութիւններուն եւ ազգային ներքին կեանքը յուզող սուր պայքարին:

1853-ին Եւրոպա ուսած երիտասարդներու խումբ մը, Նահապետ Ռուսինեան, Գրիգոր Օտեան, Նիկողոս Պալեան, Տքթ. Սերվիչէն, Իւրթիւնճեան եւ ուրիշներ ձեռնամուխ եղած էին ազգային կեանքի հասարակական եւ կրօնական գործերու վերաբերեալ կանոնադրութեան մը մշակման գոր կ'աւարտեն 1857-ին եւ կը ներկայացնեն պետութեան պահանջքին վրայ 1855-ին կազմուած խառն ժողովին: Այս առաջին փորձը կը մերժուի պետութեան կողմէ 1895-ին անոնք կը ներկայացնեն ազգային ժողովին բարեփոխուած կանոնադրութիւն մը: Ան ալ կը մերժուի ամիրաներու, եկեղեցականներու եւ պահպանողական տարրերու կողմէ: Վերջապէս 1860-1863 կատարուած քանի մը բարեփոխութիւններէ յետոյ ազգային սահ-

մանադրուժիւնը վերջնականապէս կը վաւերացուի ինչպէս վերեւ յիշեցինք 17 Մարտ 1953-ին եւ անյապաղ գործադրութեան կը դրուի ժողովուրդին ներշնչելով յառաջդիմութեան, բարեկարգութեան եւ յարաբերական ազատութեան մեծ յոյսեր:

## **Ազգային Մահմանադրութեան Բնոյթը**

Ազգային սահմանադրութիւնը բաղկացած է 6 հիմնական սկզբունքներէ որոնք անփոփոխելի են եւ 5 գլուխներէ, 99 յօդուածներով:

### **Հիմնական սկզբունքներ**

Ա.- Ազգին ամէն մէկ անհատը առ ազգը պարտաւորութիւններ ունի: Ազգն ալ իր կողմէն առ ազգային ամէն մէկ անհատ պարտաւորութիւններ ունի: Դարձեալ ամէն մէկ անհատ իրաւունքներ ունի ազգէն եւ Ազգն անհատներէն:

Ուստի Ազգն ու ազգայինները փոխադարձ պարտքով կապուած են իրարու հետ այնպէս որ մէկուն պարտաւորութիւնը միւսին իրաւունքն է:

Բ.- Ազգայիններուն պարտականութիւնն է ազգին կարիքներուն համար պահանջուած ծախսերուն մասնակից ըլլալ, իւրաքանչիւրը իր կարողութեան չափովը: Ազգին խնդրած ծառայութիւններուն յօժարակամ ըլլալ եւ անոր ըրած տնօրէնութեանցը սիրով հնազանդիլ:

Ազգայիններուն այս պարտաւորութիւնները Ազգին իրաւունքն են:

Գ.- Ազգին պարտականութիւնն է ազգայիններուն բարոյական, մտաւորական եւ նիւթական պէտքերուն հոգ տանիլ: Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութիւնը եւ աւանդութիւնը անարատ պահել: Մարդկութեան հարկաւոր եղած ուսումը հաւասարապէս, թէ մանչերու եւ թէ աղջկանց ջամբել:

Ազգային հաստատութիւնները պայծառ պահել:

Հասոյթները օրինաւոր կերպով աւելցնել եւ ծախսերը իմաստութեամբ տնտեսել: Ազգային ծառայութեանց մշտնջենապէս նըւիրեալ անձերուն կացութիւնը բարւոքել: Կարօտեալներու խնամք

տանիլ: Ազգայիններու մէջ ծագած վէճերը արդարասիրութեամբ խաղաղել եւ վերջապէս ազգային յառաջդիմութեան համար աշխատիլ:

Ազգային այս պարտաւորութիւնները ազգայիններու իրաւունքն են:

Դ.- Ազգը փոխանորդաբար ներկայացնողը եւ այս փոխադարձ պարտաւորութեանց վրայ հսկող իշխանութիւնը Ազգային վարչութիւն կը կոչուի որուն յանձնուած է թրքահայոց ներքին գործերու տնօրէնութիւնը, Օսմանեան տէրութեան կողմէ յատուկ արտօնութեամբ, սահմանադրութեան միջոցաւ:

Ե.- Վարչութիւնը ազգային ըլլալու համար, պէտք է երեսփոխանական ըլլայ:

Զ.- Երեսփոխանական վարչութեան հիմը իրաւունքներու եւ պարտաւորութեանց սկզբունքն է, որ արդարութեան սկզբունքն է, իր ոյժը ձայնի բազմութեան մէջ կը կայանայ որ օրինաւորութեան սկզբունքն է:

## Գլուխ Ա.

### Ազգային Կեդրոնական Վարչութիւն

Յօդ. 1-7 Պատրիարքներու ընտրութիւն եւ հրաժարում

Առաջին այս 7 յօդուածներով, սահմանադրութիւնը կը ճշդէ պատրիարքին իրաւասութիւնները ինչպէս նաեւ անոր ընտրուելու եղանակը:

Յօդ. 8-12 Պատրիարքներու պաշտօնն ու պարտաւորութիւնները

Պատրիարքի պարտաւորութիւնն է սահմանադրութեան սկզբունքներուն համեմատ վարուիլ եւ հսկել անոր անշեղ գործադրութեան:

Ան իրեն եկած գործերը կը ղրկէ ի քննութիւն այն ժողովին որուն կը վերաբերի: Իր բացակայութեան տրուած ժողովի մը որոշումները պարունակող թուղթերը դեռ չստորագրած, կրնայ անոնց վրայ իր դիտողութիւնը արձանագրելով վերադարձնել ժողովին եւ խնդրել անոր կրկին քննութիւնը: Այս վերաքննութենէն յետոյ

պարտաւոր է զանոնք ստորագրել եթէ տրուած որոշումը սահմանադրութեան տրամադրութեանց համաձայն գտնէ:

Պատրիարքը կրնայ սահմանադրութեան սկզբունքներուն համեմատ չվարուող եկեղեցական մը, վարժապետ մը, եկեղեցւոյ, վանքի, դպրոցի կամ ազգ. հիւանդանոցի գործակալ մը պաշտօնէն հանելու առաջարկութիւն ընել ձեռնհաս ժողովին կամ խորհուրդին:

Պատրիարքը իրաւունք չունի ինքնին լուծել եւ փոխել կրօնական եւ քաղաքական ժողովները եւ անոնց վերաբերեալ խորհուրդները: Բայց երբ տեսնէ թէ անոնցմէ մէկը սահմանադրութեան սկզբունքներուն հակառակ ընթացքի մէջ է, առաջին անգամ բացատրութիւն կ'ուզէ այդ ժողովին կամ խորհուրդին ատենապետէն, երկրորդին իմաց կու տայ անոր ապօրինի ընթացքին համար եւ ի կանոնապահութիւն կը հրաւիրէ զայն իսկ երրորդին ընդհանուր ժողովին կը դիմէ եթէ անբաստանեալ ազգային ժողովներէն մին է կամ քաղաքական ժողովին կը դիմէ, եթէ խորհուրդներէն մէկն է եւ պատճառները ցուցնելով, ամբաստանեալ ժողովին կամ խորհուրդին լուծումը կ'առաջարկէ:

*Յօդ. 13 Պատրիարքարանի Դիւանատուն*

Պատրիարքը ունի դիւանատուն մը որ ունի թղթակցութեան գրասենեակ մը, արձանագրութեան գրասենեակ մը որ ազգային ժողովներու եւ խորհուրդներու վերաբերեալ ատենագրութիւններով եւ թուղթերով կը զբաղի եւ ազգահամարի գրասենեակ մը ուր կը պահուի ազգայիններու վիճակագրութիւնը, այսինքն ծննդեան, ամուսնութեան եւ վախճանման վերաբերեալ արձանագրութիւնները:

*Յօդ. 17-23 Պատրիարք Արքայ Երուսաղէմի*

Այս յօդուածներով կը ճշտուին հանգամանքն ու իրաւասութիւնները պատրիարքին, անոր ընտրութիւնը ինչպէս նաեւ եթէ հակականոնագրային ընթացքի մէջ է անոր հանդէպ ըլլալիք ամբաստանութիւնը եւ ի հարկին հրաժարեցումը: Ս. Երուսաղէմի պատրիարքը պէտք է ըլլայ միաբանութեան եպիսկոպոսներէն եւ կամ վարդապետներէն: Ան պէտք է 35 տարեկանը լրացուցած ըլլայ: Ան պէտք չէ գատուած ըլլայ միաբանութենէն:

*Յօդ. 24–35 Ազգային կրօնական ժողով*

Կրօնական ժողովը կը բաղկանայ 14 բանիբուն եկեղեցականներէ որոնք գոնէ 30 տարին բոլորած ու առ նուազն 5 տարիէ ի վեր ձեռնադրուած պիտի ըլլան: Կրօնական ժողովի անդամները կ'ընտրուին ազգ. ընդհ. ժողովին կողմէ:

Պաշտօնավարութեան շրջանը 2 տարի է: Անմիջապէս վերընտրելի չեն: Բայց 2 տարի ետք կրնան վերընտրուիլ: Կրօնական ժողովի պաշտօնն է ազգային կրօնական գործերուն ընդհանուր տեսչութիւնը: Թէ վարդապետ ձեռնադրելու համար թէ քահանայ օծելու համար հրամանը ազգային կրօնական ժողովը կու տայ: Սակայն մինչեւ որ եկեղեցւոյ մը քահանաները ու թաղական խորհուրդը նոր քահանայ ձեռնադրել տալու կարեւորութիւնը չտեսնեն եւ գրաւոր կերպով չտեղեկագրեն կրօնական ժողովին, ձեռնադրութեան հրաման չի տրուիր:

*Յօդ. 36–43 Քաղաքական ժողով*

Քաղաքական ժողովը կը բաղկանայ ազգային գործերու եւ պետութեան օրէնքներու տեղեակ 20 անդամներէ: Քաղաքական ժողովի անդամները գաղտնի քուէարկութեամբ եւ քուէի բացարձակ առաւելութեամբ ազգ. ընդհանուր ժողովի մէջ կ'ընտրուին:

Քաղաքական ժողովը 2 տարին անգամ մը ամբողջութեամբ կը լուծուի, իր անդամները անմիջապէս վերընտրելի չեն: Բայց կրնան վերընտրուիլ 2 տարի յետոյ:

Քաղաքական ժողովին պաշտօնն է ազգին քաղաքական գործերուն ընդհանուր տեսչութիւնը: Քաղաքական ժողովը իրեն եկած գործերը որ խորհուրդին վերաբերեալ ըլլան, այն խորհուրդին կը յանձնէ քննուելու համար եւ մինչեւ որ անոր կարծիքը չ'առնէ չի կրնար գործադրութեան ձեռնարկել: Թէպէտ իրաւացի պատճառներով կրնայ հերքել մէկ խորհուրդին առած որոշումը, բայց ինքնին ուրիշ տնօրինութիւն չի կրնար ընել այն նիւթին վրայ ու կը պարտաւորուի դարձեալ նոյն խորհուրդին յանձնել գործը:

Քաղաքական ժողովը եթէ տեսնէ որ խորհուրդներէն մէկը ազգ. սահմանադրութեան սկզբունքներուն հակառակ ընթացքի մէջ է առաջին անգամ բացատրութիւն կ'ուզէ նոյն խորհուրդի ատենապետէն, երկրորդ անգամին անոր գրով ազդարարութիւն կ'ը-



նէ ի կանոնապահութեան իսկ երրորդ անգամին գայն կը լուծէ: Այս պարագային սակայն պէտք է բացատրութիւն տայ ազգ. ընդհ. ժողովին:

Յօդ. 44-51 Քաղաքական ժողովի կողմէ կազմուած ազգային խորհուրդներն ու հոգաբարձութիւնները

Քաղաքական ժողովը կը նշանակէ ու կը հաստատէ 4 խորհուրդներ եւ 3 հոգաբարձութիւններ:

Խորհուրդներ՝

- 1) Ուսումնական խորհուրդ
- 2) Տնտեսական խորհուրդ
- 3) Դատաստանական խորհուրդ
- 4) Վանօրէից տեսչութեան խորհուրդ

Հոգաբարձութիւններ՝

- 1) Երեւմտից
- 2) Կտակաց
- 3) Հիւանդանոցի

Տեսչութիւն՝ (հետագային աւելցուած)

Կալուածոց տեսչութիւն

Ուսումնական Խորհուրդ

Կը բաղկանայ 7 ուսումնական աշխարհականներէ: Կը նշանակուի քաղաքական ժողովի կողմէ, վերընտրելի է: Պաշտօնավարութեան ժամանակաշրջանը երկու տարի է: Կը վարէ ազգային դատարակութեան եւ կրթութեան ընդհանուր տեսչութիւնը: Կը հսկէ վարժարաններու բարեկարգութեան, կը հրատարակէ գիրքեր եւ կը կազմակերպէ ուսուցչաց յատուկ դասընթացքներ:

Տնտեսական Խորհուրդ

Կը բաղկանայ 7 տնտեսագէտ աշխարհականներէ: Կը նշանակուի քաղաքական ժողովին կողմէ: Պաշտօնավարութեան ժամանակաշրջանը 2 տարի է: Վերընտրելի է:

Անոր պաշտօնն է ազգային բոլոր հաստատութիւններուն եւ կալուածներուն մատակարարութեան ընդհանուր տեսչութիւնը: Ան պարտաւոր է հսկել ու հոգ տանիլ անոնց բարեկարգութեան:

Դատաստանական Խորհուրդ

**Նախագատ Ատեան.-** Կը բաղկանայ 7 անձերէ, 4 եկեղեցական եւ 3 աշխարհական, որոնք պէտք է իրաւագէտ ըլլան, ամուսնացեալ եւ քառասուն տարին լրացուցած: Կը նշանակուի քաղաքական եւ կրօնական խառն ժողովի կողմէ: Պաշտօնավարութեան ժամանակաշրջանը 2 տարի է: Վերընտրելի է: Կը զբաղի ընտանեկան հարցերու քննութեամբ, ի հարկին անոնց առընչուած դատերով եւ կ'արձակէ համապատասխան վճիռներ:

**Վերաքննիչ Ատեան.-** Կը բաղկանայ 7 անձերէ: 4 եկեղեցական եւ 3 աշխարհական, որոնք կ'ընտրուին քաղաքական եւ կրօնական խառն ժողովին կողմէ: Պաշտօնավարութեան ժամանակաշրջանը երկու տարի է: Վերընտրելի է:

Վանօրէից Խորհուրդ

**Վանքերը Ազգին սեպհական ստացուածքն ըլլալով, Ազգին կը վերաբերի անոնց մատակարարութեան, հասոյթներուն եւ ծախսերուն ընդհանուր տեսչութիւնը եւ քննութեան իրաւունքը:**

**Ամէն վանք իրեն համար յատուկ կանոններ կ'ունենայ: Այդ կանոնագրութիւնը կը պատրաստուի խառն ժողովի կողմէ իւրաքանչիւր վանքի միաբանութեան կարծիքը առնելէ յետոյ:**

**Վանօրէից խորհուրդը կը բաղկանայ 7 անձերէ զոր քաղաքական ժողովը կ'ընտրէ քուէի առաւելութեամբ:**

**Վանօրէից խորհուրդի պաշտօնն է իւրաքանչիւր վանքի կանոններուն գործադրութեան հսկել ու ստուգել անոնց ծախսերուն ու հասոյթներուն եւ կանոնաւորել զանոնք:**

**Վանօրէից խորհուրդը կ'ընտրէ վանականներուն մէջէն իւրաքանչիւր վանքի մատակարարութեան պաշտօնի համար պէտք եղած անձերը որոնք վանահօր նախագահութեամբ կը տնտեսեն վանքը համաձայն ներքին կանոններուն եւ հաշուետու են վանօրէից խորհուրդին:**

Ելեւմտից Հոգաբարձութիւն

**Ելեւմտից հոգաբարձութիւնը կը բաղկանայ 7 հաշուագէտ անձերէ զոր քաղաքական ժողովը կ'ընտրէ քուէի առաւելութեամբ:**

**Ելեւմտից հոգաբարձութեան պաշտօնն է ազգային կեդրոնական սնտուկին տնտեսութիւնն ու տոմարակալութիւնը:**

Կտակաց Հոգաբարձութիւն

Կտակաց Հոգաբարձութիւնը կը բաղկանայ 7 անձերէ որոնց 4-ը աշխարհական եւ 3 եկեղեցական են ընտրուած խառն ժողովի կողմէ (կրօնական եւ քաղաքական):

Այս Հոգաբարձութեան պաշտօնն է ազգային կտակներու տնօրէնութիւնը:

Հիւանդանոցի Հոգաբարձութիւն

Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը կը բաղկանայ 9 անձերէ ընտրուած քաղաքական ժողովի կողմէ: Ասոնց 2-ը վկայեալ բժիշկներ պէտք է որ ըլլան:

Կալուածոց Տեսչութիւն

Կը բաղկանայ 7 անձերէ: Կը նշանակուի քաղաքական ժողովի կողմէ: Պաշտօնավարութեան շրջանը երկու տարի է: Վերընտրելի է: Կը վարէ ազգապատկան կալուածներու ընդհանուր տեսչութիւնը:

Թաղական Խորհուրդ

Իւրաքանչիւր եկեղեցի կ'ունենայ թաղական խորհուրդ մը բաղկացած 7-11 անձերէ: Թաղականութեան անդամները կ'ընտրուին եկեղեցւոյ ծովին պատկանող ազգայիններուն կողմէ: Պաշտօնավարութեան շրջանը 4 տարի է: Վերընտրելի է: Թաղականութեան պարտականութիւնն է հսկել եկեղեցւոյ եւ ընդհանրապէս ծովին ազգային-եկեղեցական գործերուն: Թաղականութիւնը կը գործէ յատուկ կանոնադրութեամբ, եւ համարատու է քաղաքական ժողովին: Թաղական խորհուրդի կողմէ ուսումնական խորհուրդին կ'առաջարկուի ազգային ծխական վարժարաններու հոգաբարձութեան անդամներու անուններ: Թաղական խորհուրդը կը նշանակէ եկեղեցւոյ Տիկնանց միութիւնը, աղքատախնամ եւ բանկալի մարմինները: Ան իր ժողովուրդէն կը գանձէ թաղական տուրք (իւղագին):

Ամէն թաղական խորհուրդ պարտաւոր է ունենալ իր թաղին ազգայիններուն ծնունդներուն, ամուսնութիւններուն եւ վախճանման արձանագրութիւնները:

Ամէն ազգային որ 20 տարին լրացուցած է եւ դատաստանապէս

զրկուած չէ իրաւունք ունի մասնակից ըլլալու թաղական խորհուրդի անդամներու ընտրութեան:

Ազգային Ընդհանուր Ժողով

Յօդ. 57-62 Կազմութիւն եւ Պարտաւորութիւն

Ազգային Ընդհանուր Ժողովը 140 երեսփոխաններէ բաղկացած է (Լիբանանի մէջ 42), 1/7 եկեղեցական եւ 6/7 աշխարհական: Կաթողիկոսի ընտրութեան պարագային այս համեմատութիւնը կ'ըլլայ հետեւեալը՝ 1/3 եկեղեցական եւ 2/3-ը աշխարհական, համաձայն կեդրոնական վարչութեան կանոնադրութեան:

Ընդհանուր Ժողովի պաշտօնն է կաթողիկոսը, պատրիարքը, առաջնորդները, ազգային գլխաւոր պաշտօնատարները եւ կրօնական ու քաղաքական ժողովներու անդամները ընտրել ու ազգային ժողովներու վարչութեան հսկել: Այդ ժողովներուն ձեռնհասութենէն վեր համարուած գործերը որոշել ու վճռել եւ ազգային սահմանադրութիւնը անփոփոխ պահել:

Ընդհանուր Ժողով կը գումարուի 2 տարին անգամ մը: Ան մտիկ կ'ընէ ազգային վարչութեան կրօնական եւ քաղաքական ժողովներու տեղեկագիրները: Կ'ընտրէ անոնց անդամները յաջորդ 2 տարուայ համար եւ կը զբաղի այն բոլոր օրակարգերով որոնց համար գումարուած է ժողովը:

Ընդհանուր Ժողով կը գումարուի նոյնպէս ազգային սահմանադրութեան վերաքննութեան համար:

Ընդհանուր Ժողովը կը գումարուի կաթողիկոսին կողմէ կրօնական եւ քաղաքական ժողովներուն համահաճութեամբ: Թեմերու մէջ առաջնորդներուն կողմէ:

Յօդ. 63-68 Ընտրութիւն եկեղեցական եւ աշխարհական երեսփոխաններու

Քաղաքներու մէջ գտնուող եկեղեցականները պատրիարքի կամ առաջնորդներուն հրաւերով ժողովի կը հրաւիրուին եւ գաղտնի քուէարկութեամբ ու քուէի բացարձակ առաւելութեամբ ազգային ընդհանուր ժողովի եկեղեցական անդամները կ'ընտրեն: Թէ եպիսկոպոսներէն, թէ վարդապետներէն եւ թէ քահանաներէն ընտրուողները 30 տարին լրացուցած պէտք է ըլլան եւ գոնէ 5 տարի առաջ ձեռնադրուած եւ ոեւէ դատաստանի տակ չգտնուին:

Եկեղեցական եւ աշխարհական երեսփոխաններու պաշտօնը տասը տարի կը տեւէ եւ 2 տարին անգամ մը 1/5-ով կը նորոգուի:

Աշխարհական երեսփոխան ընտրելու իրաւունքին հիմք կը բռնուի ազգային տուրքը եւ անձնական արժանիքը: Ընտրելի են անոնք որոնք 30 տարին լրացուցած են:

Ընտրուելու իրաւունքէն զրկուած են՝

1) Քրէական յանցանքով դատապարտուածները

2) Ազգային գործերու մատակարարութեան մէջ նենգութեամբ բռնուած եւ ազգային ժողովներէն մէկուն կողմէ դատապարտուած անձերը

3) Պետական դատարաններու կողմէ պատժուածները որոնց պատիժին պայմանները դեռ չեն լրացած

4) Խելագարութեան պատճառաւ անբաւական դատուածները

Զանազան այլ յոդուածներով կը բացատրուի ու կը ճշդուի ընտրութեան եղանակը թաղերու մէջ եւ անոր ստուգումը:

Յօդ. 85-89 Ժողովավարական ընդհանուր կանոններու մասին կը խօսուի:

Յօդ. 90-93 կը խօսուի ազգային տուրքի մասին եւ Յօդ. 90-ով կը բացատրուի անոր էութիւնը:

Յօդ. 90 Ամէն ազգային անհատ որ չափահաս է եւ վաստակի ու շահի տէր, պարտական է տուրքով մասնակից ըլլալ ազգային ծախսերուն:

Այս տուրքը տարեկան է եւ իւրաքանչիւր անհատի կարողութեան համաձայն կը ճշտուի անոր սակը տնտեսական խորհուրդի կողմէ:

Նուազագոյն եւ առաւելագոյն սակերը կը ճշտուին Ազգային Ընդհանուր Ժողովի կողմէ:

Յօդ. 94-98 Ազգային Գաւառական վարչութիւն

Առաջնորդը Գաւառական (կամ թեմական) Ժողովին նախագահն է եւ անոր գործադիր իշխանութիւնը կը վարէ:

Իր պարտաւորութիւնն է ազգային սահմանադրութեան գործադրութեան հսկել:

Առաջնորդը կը բնակի ազգային առաջնորդարանի մէջ: Հոն է որ կը կեդրոնանան առաջնորդական վիճակին պատկանող ժողո-

վուրդին ազգահամարի տոմարները: Առաջնորդին ընտրութիւնը նման է կաթողիկոսի ընտրութեան: Գաւառական (թեմական) ընդհանուր ժողովի կողմէ կ'ընտրուի եւ իր ընտրութեան տեղեկագիրը կը ղրկուի տեղւոյն խառն ժողովին միջոցաւ կաթողիկոսին: Կաթողիկոսը կեդրոնական վարչութեան խառն ժողովին հաճութեամբ կ'անուանէ առաջնորդը եւ պետութեան իմաց կու տայ:

Գաւառական (թեմական) ժողովները կեդրոնական վարչութեան ժողովներուն տրամադրութեանց համեմատ պիտի կազմուին եւ պաշտօնները յար եւ նման են:

Գաւառական (թեմական) ժողովներու անդամներուն թիւը կը ճշտուի իւրաքանչիւր գաւառի հայ բնակչութեան թիւին համաձայն:

*Յօդ. 99 Վերաբնութեան սահմանադրութիւն.*

Ազգային սահմանադրութեան հիմնական սկզբունքները անփոփոխելի են: Բայց երբ փորձառութեամբ զանազան փոփոխութիւններ անհրաժեշտ նկատուին, ընդհ. ժողովը սահմանադրութեան հաստատումէն 5 տարի յետոյ, խառն յանձնախումբ մը կը նշանակէ կրօնական եւ քաղաքական ժողովներէ 3-ական անդամ, 4 տեսուչ խորհուրդներէ 2-ական անդամ եւ ասոնցմէ զատ ընդհանուր ժողովին մէջէն կամ դուրսէն 6 հոգի, ընդամէնը 20 հոգի:

Այս յանձնախումբը կը սահմանէ անհրաժեշտ դատուած փոփոխութիւնները գորս ընդհանուր ժողովը վաւերացնելէ ետք՝ կաթողիկոսին կը ներկայացուի եւ կը գործադրուի:

Ազգային սահմանադրութիւնը Պոլսոյ մէջ գործադրութեան դրուելէ յետոյ, ազգ. կեդրոնական վարչութեան գլխաւոր մտահոգութիւնն էր զայն անյապաղ գործադրութեան դնել նոյնպէս գաւառներուն մէջ:

Կեդրոնական վարչութիւնը անոր գործադրութիւնը գաւառներուն մէջ ղիւրացնելու համար պատրաստեց սահմանադրական հրահանգներ որոնց մէջ ոչ միայն ընտրական գործողութիւնները այլ եւ գաւառական ընդհ. ժողովի, վարչութեան, առաջնորդի եւ զանազան խորհուրդներու պաշտօնն ու պատրաստութիւնները մանրամասն գրուեցան: Այս հրահանգները կը բխին ազգային սահմանադրութեան ընդհանուր ոգիէն ու տարրէն եւ կը նկատուին անոր մէկ գործնական արտայայտութիւնը եւ լրացուցիչ մասը:

Կարելի է ազգային սահմանադրութիւնը ուսումնասիրել առանց նկատի ունենալու հետազային լոյս տեսած հրահանգները որոնք ժամանակի ընթացքին, գործադրութեամբ, ստացան օրէնքի ոյժ:

Եզրակացութիւն

Ազգային սահմանադրութեամբ ժողովուրդը իր սեպհականութիւնը կը հռչակէ ազգային եկեղեցական հաստատութիւնները ու ինքը կը տնօրինէ զանոնք ազատօրէն եւ հաւասար իրաւունքներով ընտրուած իր ներկայացուցիչներով, այսինքն ժողովրդական ղեկավարութեամբ:

Արդարեւ ազգային ընդհանուր ժողովը որ գերագոյն մարմինն է ազգային իշխանութեան, կազմուած է ժողովուրդին կողմէ ընտրուած երեսփոխաններէ: Ան կը մարմնաւորէ ժողովուրդին կամքը ու կը գործէ յանուն ժողովուրդին:

Իշխանութեան փոխանցումի սկզբունքով, ժողովուրդէն քաղած իշխանութիւնը, ան կը փոխանցէ իր կարգին իր կողմէ կազմուած մարմիններուն որոնք կ'որոշեն ու կը գործադրեն համաձայն սահմանադրութեամբ ճշտուած իրաւասութիւններուն:

Բոլոր ժողովները աստիճանական կարգով հաշուետու են իրենցմէ գերադաս մարմիններուն:

Ազգային սահմանադրութիւնը իբրեւ քաղաքական վարչաձեւ կը նմանի ժողովրդավար վարչաձեւերու երեսփոխանական դրութեան: Ան կը նախատեսէ իշխանութեան բաժանում հետեւեալ կերպով.

1- Օրէնսդիր իշխանութիւն՝ որ կը պատկանի ազգ. ընդհանուր ժողովին.

2- Գործադիր իշխանութիւն՝ որ կը պատկանի կրօնական եւ քաղաքական ժողովներու.

3- Դատական իշխանութիւն՝ որ կը պատկանի դատաստանական խորհուրդին.

Ամփոփելով եզրակացնենք՝

1) Ազգային սահմանադրութիւնը ժողովրդավարական հիմքերու վրայ պատրաստուած կանոնագրութիւն մըն է.

2) Ան հիմնովին կազմակերպեց ու բարեկարգեց ազգային եկեղեցական կեանքը.

3) Ան ժողովուրդին կու տայ քաղաքական կեանքի հասկացողութիւն ու անոր կը պարտադրէ կազմակերպուած դրութիւն հասարակական գործերու մէջ.

4) Հիմնուած ըլլալով ազատութեան եւ հաւասարութեան զոյգ սկզբունքներու վրայ, ժողովուրդին մէջ կը զարգացնէ հաւաքական ազատութեան, իրաւունքներու պաշտպանութեան եւ արդարութեան գաղափարը որոնք յատուկ են ազատատենչ եւ քաղաքակրթուած ժողովուրդներու:



PRÉSENTATION DE L'OUVRAGE  
DE Mlle SYLVIA ADJEMIAN  
SUR LES MANUSCRITS ARMÉNIENS ENLUMINÉS  
DU CATHOLICOSSAT ARMÉNIEN DE CILICIE

Sainteté  
Béatitude  
Excellences  
Révérends Pères  
Mesdames, Messieurs,

Au nom du Comité Exécutif Central du Catholicossat arménien de Cilicie, permettez-moi de vous souhaiter la bienvenue à la présentation de l'ouvrage de Mlle Sylvia Ajémian sur les manuscrits arméniens enluminés du Catholicossat arménien de Cilicie.

Cet ouvrage préfacé par sa Sainteté le Catholicos Karékine II Sarkissian est le fruit de plusieurs années d'études et de recherches effectuées par Mlle Sylvia Ajémian qui l'a présenté, avant sa publication, il y a quelques années, à l'Université Paris IV, à la Sorbonne, dans le cadre d'une thèse de doctorat d'état.

L'ayant brillamment soutenue, elle a mérité les éloges devant un jury composé d'éminents professeurs byzantinologues et arménologues de renommée mondiale, elle a obtenue la mention très bien avec les éloges du jury.

Mlle Sylvia Ajémian, profondément versée dans la connaissance de l'enluminure en général et des miniatures arméniennes en particulier est déjà connue par ses savants articles et ses travaux de recherche par les milieux culturels à Beyrouth où elle dirige le Musée Sursok. Son érudition, sa formation scientifique et sa méthode rigoureuse de

classement des miniatures et de leur comparaison avec d'autres provenant des divers centres lui ont valu le mérite d'être une des plus brillantes figures dans le domaine des études iconographiques et de l'analyse de l'art chrétien du moyen-Orient.

Mettant en relief les manuscrits arméniens enluminés du Catholicossat Arménien de Cilicie dont quelques uns datent du 13<sup>ème</sup> siècle, elle rend, sans conteste, un éminent service à l'Histoire de l'enluminure et au rayonnement de l'art et de la culture arménienne au monde scientifique.

En effet, la Cilicie a été un important centre de l'enluminure arménienne. Un nombre considérable de manuscrits enluminés y ont vu le jour et l'art médiéval de la miniature et de l'enluminure ornant les marges des manuscrits y a atteint son apogée.

Malheureusement après plusieurs siècles de conservation jalouse en dépit des destructions des envahisseurs, ces trésors d'art ont été sacagés et détruits lors du génocide arménien en début de ce siècle. Les rares manuscrits, débris de l'héritage culturel et artistique inestimable que le Catholicossat de Cilicie réussit à sauver en 1915 ont été transférés de Sis (ancien siège du Catholicossat) à Alep avant de regagner définitivement le catholicossat d'Antélias où ils constituèrent le fonds de manuscrits arméniens.

Plus tard, grâce aux efforts louables des catholicos successifs, ce fonds s'enrichit au fil des années et compte aujourd'hui 223 manuscrits.

La publication de cet ouvrage après 15 ans de guerre et de désolation s'associant à d'autres manifestations culturelles qui se produisent actuellement au Liban, constitue, à juste titre, les prémices d'un renouveau de la vie artistique et culturelle que le Liban a jadis connue et à laquelle nous aspirons tous. En effet, le Liban ne peut être lui-même qu'en s'efforçant de se dépasser.

Nous saisissons cette occasion pour remercier de tout cœur Mlle Sylvia Ajémian et lui souhaitons plein succès dans sa noble carrière.

Nous remercions la direction de la Fondation Calouste Gulbenkian dont l'importante donation a facilité la publication de cet ouvrage.

Sans doute, l'attachement aux valeurs culturelles et spirituelles et la propulsion de sa Sainteté le Catholico Karékine II Sarkissian, sont-ils à la base de cette réalisation.

Nous remercions les hauts dignitaires ecclésiastiques et les hautes personnalités M. Le président Charles Hérou, MM. les Ministres, dont la présence ce soir, dans cette maison, est un témoignage qui nous touche profondément. Nous remercions enfin tous ceux qui ont bien voulu répondre à notre invitation et nous honorer de leur présence.

Nous vous remercions encore.

le 31-10-1991

ՀԱՅԱՍՏԱՆԻ Ա. ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ  
76-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ<sup>4</sup>

Գերաշնորհ Արքայազան Հայր  
Արհիպատիւ Գերապայծառ Տէր  
Վսեմաշուք պարոն Նախարար  
Վսեմաշուք պարոն Հաւատարմատար Հայաստանի Հանրապետութեան  
Յարգելի Պետական Երեսփոխաններ  
Արժանապատիւ հայրեր եւ Առաքինագարդ քոյրեր  
Յարգարժան հանդիսականներ

*Թուականէս ամիս մը առաջ, հայ ժողովուրդը իր բոլոր հատուածներով, սփիւռքի թէ հայրենիքի մէջ, պատշաճ յարգանքով եւ վերանորոգ ուխտով ոգեկոչեց 20րդ դարու առաջին ցեղասպանութեան, հայկական մեծ եղեռնի, 79 ամեայ տարեդարձը:*

*Հաւաքուած ենք այսօր տօնելու համար Հայաստանի հանրապետութեան հիմնադրութեան 76րդ տարեդարձը եւ ոգեկոչելու յիշատակը այն հերոսներուն որոնք իրենց արեան գնով կերտեցին ապրիլեան եղեռնէն ճիշդ 3 տարի յետոյ մեր պատմութեան նուիրական փառքերէն մին, Մայիս 28ը:*

*Ազգերու պատմութեան մէջ դէպքեր ու թուականներ կան որոնք գրուած են արիւնով եւ որոնց յիշատակը կը տօնուի տարուէ տարի, տասնամեակէ տասնամեակ, դարէ դար, վերածուելու համար խորհուրդի եւ ազգային վերակենդանութեան ու գիտակցութեան անսպառ աղբիւրի:*

*Հայաստանի հանրապետութեան ծագումը որ կը գուգադիպի Մայիս 28ի Սարդարապատի յաղթանակին հետ, պսակումն է ազատութեան ու անկախութեան սիրոյն թափուած ծով արիւններու,*

<sup>4</sup> Բանախօսութիւն Յակոբ Տէր Մելքոնեան սրահին մէջ, 1994-ին:

անհամար գրկանքներու եւ կեանքի ու մահուան գիրկընդխառն գոյամարտին:

Ան մեր վերջին 600 տարուայ պատմութեան ազգային մեծագոյն նուաճումն է:

Ան դարերու խաւարին մէջէն անցնող եւ մեր նախնիքներէն մեզի փոխանցուող հայու ազատատենչ բնագոյն վերայատնուածիւնն է:

Պատմութիւնը կը վկայէ որ ժողովուրդի մը գոյութիւնը, անոր յառաջդիմութիւններն ու նուաճումները պայմանաւորող գլխաւոր ազդակներէն մին եղած է ընտրանի տարրի մը ներկայութիւնը:

Ընտրանին անհրաժեշտօրէն ուսեայր չէ ոչ ալ հարուստը: Ընտրանին այն է որ ունի մաքուր նկարագիր, յարգանք բարոյական եւ հոգեւոր արժէքներու, խոր գիտակցութիւն իր պարտականութեան ու մանաւանդ գոհողութեան ոգի:

Անոր բազկերակին կշռոյթը ճշդուած է իր ժողովուրդի սրտի զարկերուն վրայ որուն յաջողութիւններն ու նուաճումները ինչպէս նաեւ տառապանքն ու գրկանքները կը պայմանաւորեն իր հոգեկան ապրումները:

Ահա այդպիսի ընտրանիի վարակիչ օրինակով է որ հայ ժողովուրդը, անխտիր մասնակցեցաւ մայիսեան անհաւասար ճակատամարտներուն ու արեան գնով վերակերտեց, հոգ չէ թէ սահմանափակ տարածութեամբ, դարերով սպասուած ու երագուած իր ազատ ու անկախ հայրենիքը:

Արդարեւ համաշխարհային առաջին պատերազմի ընթացքին, հայ ժողովուրդը ապրեցաւ իր պատմութեան ամենամղձաւանջային շրջանը:

Երիտասարդ թուրքերու կառավարութեան կողմէ կազմակերպուած թրքահայերու մասսայական ջարդերը որ աւելի քան մէկ ու կէս միլիոն անմեղ հայերու կեանքը արժեցին ինչպէս նաեւ թրքահայ մտաւորականութեան տեղահանութիւնը, աքսորը ապա եւ մարդկային միջոցներով խողխողումը, Թուրքիոյ հայ բնագաւառները պարպած էին իրենց հայ բնակչութենէն: Ամայութիւն կը տիրէր թրքահայաստանի ամբողջ տարածքին վրայ:

1917 Փետրուարին ծագեցաւ ռուս յեղափոխութիւնը, որ տապալեց ցարական իշխանութիւնը եւ երկրին ղեկը յանձնեց ռուս

ազատական եւ ընկերվարական տարրերով: Ասոնք ռուսական կայսրութեան սահմաններուն մէջ գտնուող ոչ ռուս ժողովուրդներուն հանդէպ որդեգրեցին ազատական քաղաքականութիւն եւ անջատ պետութիւն կազմելու իրաւունք տուին միայն Ֆենլանտացիներուն, լեհերուն եւ հայերուն:

Հոկտեմբեր 25, 1917ին վրայ հասաւ Պոլշեւիկեան յեղափոխութիւնը որուն կարգախօսն էր «Անմիջական գինադադար»...

Վառ առնուեցան ազատական տարրերը:

Էրզրումի ճակատին ռուս զինուորները նետելով իրենց հրացանները փախան դէպի տուն, քայքայման վիճակի մէջ ձգելով Կովկասի ռուս բանակը որ գրաւած էր թրքահայաստանի մէկ մասը:

Ռուս բանակին կազմալուծումէն յառաջ եկած քաղաքական եւ զինուորական այս պարապուկեան իբր հետեւանք, Կովկասի մէջ գործող քաղաքական կուսակցութիւնները մերժեցին յարիլ այդ նոր իրաւակարգին եւ ստեղծեցին Անդրկովկասեան ժամանակաւոր կառավարութիւն (Մէյմ) բաղկացած վրացիներէ, հայերէ եւ ազրպէյճանցիներէ: Հայերն ու վրացիները կ'ուզէին ժամանակաւոր կերպով կապուած մնալ Ռուսիոյ, դաշնակցային կապերով:

Անդրկովկասեան առժամեայ կառավարութիւնը ռուսական բանակի մնացորդներով եւ իր սեփական միջոցներով կ'ուզէր բանակ մը ստեղծել որ կարենար պահել թրքական ճակատը: Դժբախտաբար ազրպէյճանցիները մերժեցին կռուիլ իրենց ցեղակից թուրք եղբայրներուն դէմ:

Ռուսական բանակին մէջ գտնուող 150.000 հայ զինուորներէն ոմանք մեռած էին եւ ուրիշներ ցրուած: Անոնցմէ կարելի եղաւ միայն 35 հազար հոգինոց բանակ մը յառաջացնել որ պիտի պաշտպանէր թրքահայաստանի ճակատը 400 ք.մ. տարածութեան վրայ:

Դաշնակից բանակները հասած էին Պաղտատ եւ կը հաշուէին 400.000 զինուոր: Դժբախտաբար անոնք չկատարեցին իրենց պարտականութիւնը շփում չի պահելով հայերուն հետ Վանի վրայով: Այսպէսով հայ բանակի վրայ մնաց կռուի ամբողջ ծանրութիւնը:

Թուրքերը օգտուելով ստեղծուած կացութենէն ուզեցին ոչ միայն վերագրաւել ռուսական բանակներու տիրապետութեան տակ գտնուող թրքահայաստանի հողամասերը այլ եւ առաջնորդուելով երիտասարդ թուրք ղեկավարներու համաթուրանական երազով, ծրագրած էին գրաւել նաեւ արեւելեան Հայաստանը եւ միանալ

իրենց ցեղակից Ազրպէյճանին: Այս հեռանկարով իրենց լաւագոյն զօրաբաժինները կեդրոնացուցած էին այս ճակատին վրայ:

1918 Փետրուար 17ին անոնք գրաւեցին Էրզրումը: Ապրիլ 15ին ինկալ Կարսը: Թուրք բանակները կատաղի յարձակումներով կը յառաջանային դէպի Ալեքսանդրապոլ (այսօրուայ Կիւմրին) աւերելով եւ մոխրակոյտի վերածելով իրենց ճամբուն վրայ հանդիպած բոլոր հայ գիւղերը: Ալեքսանդրապոլի գրաւումէն վերջ, անոնք իրենց լաւագոյն զինուորականներէն Վէհիփ փաշայի հրամանատարութեամբ ուղղուեցան երեք թեւի վրայով դէպի Երեւան:

Կարսի եւ Ալեքսանդրապոլի անկումէն յետոյ յուսահատական վիճակ կը տիրէր Արարատեան դաշտի մէջ: Երկիրը լեցուած էր բազմահազար գաղթականներով որոնք թափուած էին գիւղերու եւ քաղաքներու ճամբաներուն վրայ: Պարենաւորման տազնապը հետզհետէ կը սաստկանար եւ համաճարակ հիւանդութիւնները սկսած էին աւեր գործել:

Այս պայմաններու մէջ թուրքերու ընդհանուր յարձակումը յառաջ բերաւ աննկարագրելի իրարանցում եւ սարսափ: Դիմադրութիւնը շատերուն կը թուէր անհնարին եւ բնակչութիւնը կը պատրաստուէր փախուստի: Բայց ո՞ր փախչիլ: Թիֆլիսի եւ Պազուի ճամբաները թուրքերու ձեռքն էին ինկած: Շարուր-Նախիջեւանը նոյնպէս մահմետականներու ձեռքն էր: Իսկ հարաւէն եւ արեւմուտքէն կը յառաջանար թուրք բանակը:

Վրացեան կ'ըսէ. «Այս պայմաններու մէջ փախուստը հաւասար էր մահուան ինչպէս եւ անձնատուր ըլլալը: Ելք չկար: Ելքը դիմադրութիւնն էր, կռիւր: Քանի որ մահը անխուսափելի է, գէթ պատուով մեռնիլ: Մահ կամ ազատութիւն, ուրիշ փրկութիւն չկար»:

Էրզրումի անկումէն վերջ, ժողովուրդը դիմած էր Արամ Մանուկեանին եւ զայն հռչակած Տիքթաթօր: Քաղաքի զօրամասերը երդում ըրած էին հնազանդիլ իրենց նոր Տիքթաթօրին: Այնուհետեւ Արամը ստանձնած էր ու ձեռնհասութեամբ կը վարէր Արարատեան դաշտի հայ ժողովուրդի ճակատագիրը:

Յեղափոխական մարտերու մէջ թրծուած դաշնակցական ղեկավար, վճռակամ եւ ուժեղ կամքի տէր, ան իր լայն ժողովրդականութեամբ եւ կենսունակութեամբ կրցաւ զօրաշարժի ենթարկել Արարատեան դաշտի մէջ գտնուող ողջ հայութիւնը որ սպարապետ Նա-

զարբէկեանի եւ գորավար Սիլիկեանի սրտառուչ կոչերուն անսալով գնաց ճակատ թշնամուոյն դէմ կռուելու:

Ծեր, երիտասարդ, պատանի, կին, օրիորդ, հոգեւորական թէ աշխարհական բոլորն ալ միատեղ, մէկ սիրտ, մէկ հոգի վազեցին ճակատ ուր կատարելիք ունէին:

Լինելու ու չլինելու պահը հնչած էր հայութեան համար: Լըք-ուած վրացիներէն եւ ազրպէյճանցիներէն ինչպէս նաեւ դաշնակիցներէն, հայերը մնացած էին առանձին ու կը մղէին կենաց ու մահու կռիւ որմէ կախում ունէր իրենց ազգային գոյութիւնը: Եթէ պարտուէին մայիսեան կռիւներուն գուցէ մենք դադրէինք ազգ մնալու իրականութենէն:

Հայը զգաց անէացումի սարսուռը եւ վճռեց մարդկօրէն ապրիլ եւ կամ մեռնիլ: Անոր ազատատենչ ոգին խլրտաց իր մէջ:

Հայոց բանակը ազգային դրօշի ներքեւ, շուրջ 12.000 հոգի, Մայիս 21-29 տեղի ունեցաւ կատաղի ճակատամարտներ թուրք աւելի քան 35 հազար հաշուող թարմ ոյժերուն դէմ որոնց կը միանային նաեւ թուրք եւ քիւրտ խուժանները:

Ամէնէն կարեւոր եւ պատմական նշանակութիւն ունեցան կ'ըսէ Խատիսեան երկու ճակատամարտներ՝ Սարդարապատի մէջ Մայիս 24-29 եւ Ղարա-Գիլիսայի մէջ Մայիս 25-29: Սարդարապատի հերոսներն էին Դրօ եւ Զօր. Սիլիկեան:

Զրահուած երկաթեայ կամքով եւ հայ ժողովուրդի յաւերժութեան հաւատքով, Ղարա-Գիլիսայի, Բաշ-Ապարանի եւ Սարդարապատի մէջ, հայ կտրիճները ցոյց տուին այնպիսի դիմադրութիւն զոր կարելի չեղաւ խորտակել եւ պատմութեան վճիռը փոխուեցաւ ի նպաստ հայութեան: Թուրքերը ջախջախուած փախուստի դիմեցին եւ հայ հեծելազօրքը հալածեց զանոնք մինչեւ Ալեքսանդրապոլ:

Երեւանը փրկուած էր: Փրկուած էր նաեւ հայութիւնը: 1918 Մայիս 28ի Սարդարապատի ճակատամարտին յաղթանակի օրն իսկ, Թիֆլիսի մէջ, Ազգային Խորհուրդը որոշեց յայտարարել Հայաստանի անկախութիւնը եւ հաշտութեան պատուիրակութիւն ղրկեց Պաթում:

Թէպէտեւ Հայաստանի անկախութիւնը ազգային խորհուրդի կողմէ Մայիս 30ին յայտարարուեցաւ, անոր ծագումը սակայն տեղի ունեցաւ Մայիս 28ին:

Նախապէս արդէն Անդրկովկասեան առժամայ կառավարու-



Թիւնը (Մէյմը) լուծուելու վրայ էր: Վրաստանը միակողմանի կերպով Մայիս 28ին յայտարարած էր անկախութիւն: Ագրպէյճանը նոյնը ըրած էր Մայիս 27ին:

Մայիս 30ին Օսմանեան եւ Հայկական պատուիրակութիւններուն միջեւ սկսուած բանակցութիւնները վերջացան Պաթումի դաշնագրով որ ստորագրուեցաւ Յունիս 4ին:

Համաձայն այդ դաշնագրին թուրք կառավարութիւնը պաշտօնապէս կը ճանչնար Հայկական նոր պետութիւնը: Առաջին միջազգային դաշնագիրն էր այդ զոր կ'ստորագրէին անկախ Հայաստանի ներկայացուցիչները:

«Տուեալ պայմաններու տակ, կ'ըսէ Վրացեան, ազատ եւ անկախ Հայաստանի մը իրականացումը հրաշքի համագօր երեւոյթ էր»:

Ալեքսանդր Խատիսեան որ կը նախագահէր Հայկական պատուիրակութեան, Պաթումի դաշնագրի առիթով կատարուած բանակցութեանց ընթացքին, կը մէջբերէ թուրք պատուիրակութեան պատասխանատուներուն ցեղապաշտ արտայայտութիւնները ու կ'ըսէ. «Այստեղ Վէհիփ փաշայէն ու Խալիլ պէյէն լսեցինք շատ մը բաներ որ այսօր ալ վաղն ալ առաջնակարգ նշանակութիւն պիտի ունենան հայ ժողովուրդի բախտին համար: Յոյց տալով քարտէսը եւ նկարագրելով թրքական ձգտումները Վէհիփ փաշան ըսաւ.-

«Դուք կը տեսնէք որ ճակատագիրը կը քաշէ Թուրքիան արեւմուտքէն արեւելք: Մենք հեռացանք Պալքաններէն, կը հեռանանք նաեւ Ափրիկէէն, բայց մենք պէտք է տարածուինք դէպի արեւելք: Հոն է մեր արիւնը, մեր կրօնքը ու լեզուն եւ անիկա տարրերային ձգողութիւն ունի: Մեր եղբայրները Պագու, Տաղստան, Թուրքիստան եւ Ագրպէյճան են: Մենք պէտք է ճամբայ ունենանք դէպի հոն եւ դուք հայերդ կանգնած էք մեր այդ ճամբուն վրայ: Պահանջելով Վանը դուք կը փակէք մեր ճամբան դէպի Պարսկաստան: Պահանջելով Նախիջեւանն ու Չանգեզուրը դուք արգելք կ'ըլլաք մեզի իջնելու Քուրի հովիտը եւ երթալու Պագու: Ղարսն ու Ախալքալաքը կը փակեն մեր ճամբան դէպի Ղազախ ու Գանձակ: Դուք պէտք է մէկ կողմ քաշուիք եւ մեզի ճամբայ տաք: Ահա թէ ուր է մեր հիմնական վէճը...»:

1919 Մայիս 28ին Հայկական խորհրդարանը հռչակեց միացեալ եւ անկախ Հայաստանի պատմական աքտը:

Թէպէտեւ քաղաքական դէպքերու նպաստաւոր դասաւորումը մեծ դեր ունեցաւ այս բոլորին մէջ, այսուհանդերձ այդ հրաշքը չէր կրնար իրականանալ եթէ ազատատենչ հայութիւնը վճարած չըլլար անոր գինը:

Հայ ժողովուրդի երեք հազարամեայ պատմութեան մէջ մէկէ աւելի անգամներ պատահած են նման երեւոյթներ:

Արդարեւ ազատատենչ ժողովուրդները միշտ ձգտած են իրենց ազատութեան եւ անկախութեան:

Ազգեր ու ժողովուրդներ չեն կորսուիր երբ գիտեն նուիրուիլ, կռուիլ ու եթէ հարկ ըլլայ մեռնիլ հայրենիքի ազատութեան համար: Կը կորսուին այն ժողովուրդները որոնք կը վախնան մահէն: Կ'ապրին անոնք որոնք կ'արհամարհեն զայն:

Իր վերջին թագաւորին մահէն 525 տարի յետոյ, հայ ժողովուրդը մոխիրներու եւ աւերակներու տակէն յարուստիւն կ'առնէր եւ կը կերտէր իր պետականութիւնը ազատ ու անկախ հայրենիքի մէջ:

Ան տէր էր իր ճակատագրին ինչպէս բոլոր ազատ երկիրները եւ իր գաւակներուն հաւաքական ճիգերով ու գոհողութիւններով կը լծուէր շինարար աշխատանքի ստեղծելու համար հոգեկան եւ ֆիզիքական այն բաղձալի մ'թնոլորտն ու գոյավիճակը որոնց շնորհիւ պիտի կարենար ազատ ապրիլ, պահպանել իր հարազատ ինքնութիւնը, զարգացնել իր ինքնուրոյն մշակոյթը համաձայն իր առանձնայատկութիւններուն բերելով այսպէս իր դրական մասնակցութիւնը մարդկային քաղաքակրթութեան ծաղկումին:

Շուրջ 600 տարուայ ստրկութենէն յետոյ, Հայաստանի նորակերտ հանրապետութեան հիմնադիրները, տակաւին սուրբ իր պատեանին մէջ չդրած, կը գտնուէին նոր ու հրատապ հրամայականներու առջեւ: Անոնք գերմարդկային միջոցներով, կրցան կարճ ժամանակամիջոցի մէջ յառաջացնել պետական կառոյցք եւ կազմակերպել բանակ, ապահովեցին ժողովուրդին կեանքը եւ ինչքը եւ մանաւանդ լծուեցան սովի եւ համաճարակի առաջքը առնելու անյետաձգելի աշխատանքին:

Անկախ Հայաստանի կառավարութիւնը այս բոլոր մտահոգութիւններուն մէջ չմոռցաւ մտքի լուսաւորութիւնը եւ մշակոյթը: Հիմնեց պետական համալսարան մինչեւ իսկ պետական երաժշտանոց:

Նորաստեղծ պետութիւնը ունեցաւ իր դիւանագիտական ներկայացուցիչները աշխարհի չորս ծագերուն վրայ եւ ազգային դրօշակը սիգապանծ ծածանեցաւ այլ տէրութիւններու դրօշակներու կողքին, հպարտութեամբ լեցնելով արտասահմանի հայութեան կուրծքերը:

Հայրենիքի կառուցումը քայլ առ քայլ կը զարգանար Փիզիքական, մարդկային, մշակութային, տնտեսական, գինուորական եւ քաղաքական բնագաւառներուն մէջ:

Շնորհիւ օրուայ լուսամիտ, հեռատես եւ յանդուգն պետական պատասխանատու անձնաւորութիւններուն, Հայաստանի հայ ազգաբնակչութիւնը հասաւ իր բնակիչներու թիւին 85% համեմատութեան, բան մը որ ապագայի աննպաստ իրադարձութիւններու պարագային պիտի ապահովէր ազգային գոյատեւումը:

Այնուհետեւ միջազգային քաղաքական դէպքերը գահավէժ ընթացք առին:

10 Օգոստոս 1920ին դաշնակիցներու եւ Թուրքիոյ միջեւ ստորագրուած Սեւրի դաշնագիրին յօդուած 88ով Հայաստանը իրաւականօրէն կը դառնար անկախ պետութիւն եւ անոր սահմաններուն ճշդումը կը ձգուէր Ամերիկայի նախագահ Վիլսոնին որ գայն պաշտօնապէս յայտարարեց Նոյեմբեր 22ին: Դժբախտաբար սակայն գործնական գետնի վրայ չգործադրուեցաւ: Ոչ միայն չկիրարկուեցաւ այլ կարգ մը դաշնակիցներու օգնութեամբ աւերակներու տակէն բարձրացող նոր Թուրքիան մերժեց ճանչնալ գայն եւ գէնքի դիմեց նորաբողբոջ Հայաստանի հանրապետութեան դէմ իր հողային պահանջներուն գոհացում ստանալու դիտաւորութեամբ:

Սեւրի դաշնագիրը մնաց մեռեցալ գիր եւ անոր յաջորդող Լոզանի դաշնագիրը կնքուած Թուրքիոյ եւ դաշնակիցներու միջեւ, 24 Յուլիս 1923ին, ոեւէ յիշատակութիւն չունենալէ զատ Հայաստանի հանրապետութեան կապակցութեամբ նոյնիսկ հայկական օճախի մը գոյութեան մասին ակնարկութիւն չ'ընէր: Քանի մը յօդուածներ միայն կը յիշուին Թուրքիոյ հայ փոքրամասնութիւններուն առընչութեամբ:

Փաստօրէն կ'ըսէ, Ժան-Բիէր Ալէմ, Հայաստանի պատմութեան նուիրուած իր գրքին մէջ, դաշնակիցները, առաջնորդուած շահադիտական նպատակներով, լքած էին երեկուայ իրենց փոքրիկ դաշ-

նակիցը ինչպէս արդէն կը վկայէ Անգլիացի Լորտ Քըրզոն (Curzon), իր իսկ բեռնով, երբ կ'ըսէ թէ «Մոսուլի քարիւղը աւելի կշռած էր քան հայ արիւնը»:

Ապա Հայաստանը՝ մէկ կողմէ թուրք բանակներու եւ միւս կողմէ համայնավար Ռուսիոյ բանակներու ճնշումին տակ, կորսնցուց իր անկախութիւնը եւ Մայիս 28 դարձաւ պատմութիւն:

Ան դարձաւ անցեալ, բայց անոր յիշատակը մնաց ամէն մէկ հայու հոգեւոր հետ շողախուած կենդանի իրականութիւն եւ խիզախ ներշնչումներու ու ազգային գիտակցութեան անսպառ աղբիւր:

Գնաց անկախութիւնը բայց մնաց հայ պետականութիւնը, հայրենիքը ուր հայր ի հեճուկս իր վրայ ծանրացող սովետական ճնշիչ լուծին, շէնցուց իր գիւղերն ու քաղաքները եւ լուսաւորեց զանոնք իր հանճարեղ մտքի ճառագայթումով:

Հայաստանի Հանրապետութեան ծագման եւ հայ անկախ պետականութեան կերտման պատմական տուեալները մեզ կ'առաջնորդեն հետեւեալ խորհրդածութեանց.-

1) Սարգարապատի յաղթանակը որուն շնորհիւ ազգային խորհուրդը կրցաւ որոշել Հայաստանի հանրապետութեան ծագումը գուտ հայու գործ է: Օտարը ոչ մէկ դեր ունեցած է անոր մէջ եւ իբրեւ այդ ան կը պատկանի համայն հայութեան:

2) Ան ազգային միացեալ կամքի եւ հաւաքական պայքարի բուն արտայայտութիւն եւ արդիւնք է: Հայ ժողովուրդը միակամ կրցաւ ծառանալ իր դարաւոր թշնամիին դէմ եւ իր պատմութեան ճակատագրական մէկ վայրկեանին երբ կենաց ու մահուայ հարց կար, իր անխորտակելի կամքով շրջեց պատմութեան ընթացքը:

3) Հայաստանի հանրապետութեան ծագումը ամբողջական նուիրումի արդիւնք է: 1918ի ճակատամարտներուն ինչպէս նաեւ անոր նախորդող տասնամեակներուն, հայր բերաւ գերագոյնը, իր գոհողութեան, տուաւ իր կեանքը որպէսզի իրականանան իր դարաւոր երազները:

4) Մայիս 28ը հայութեան տուաւ ազգային պետականութիւն, հայ ազգաբնակչութեան ջախջախիչ մեծամասնութեամբ հայրենիք մը եւ մեր ազգային ու քաղաքական ձգտումներուն համար մնայուն, հիմնական եւ ամուր կռուան մը:

5) Մեր ներկայ հայրենիքը որ սովետական իրաւակարգի փլուզումէն յետոյ թօթափեց համայնավար լուծը 1991ին եւ նոյն տարուայ 21 Սեպտեմբերին վերագտաւ ուրոյն պետականութեամբ իր ազատ ու անկախ գոյավիճակը, իր գոյութիւնը կը պարտի Սարգարապատի, Ղարաքիլիսէի եւ Բաշ Ապարանի հերոսներուն:

Պետական պատասխանատուները պաշտօնապէս ճանչնալով իբրեւ պատմական իրողութիւն 1918 Մայիսի 28ին հռչակուած ազատ եւ անկախ Հայաստանը եւ որդեգրելով երագոյն դրօշակը իբրեւ պետական դրօշ գովելի իմաստութիւնը ունեցան ներկայ գոյավիճակը կամրջելու նախահամայնավար շրջանին, առաջին անկախ հանրապետութեան հետ, գայն նկատելով ուղիղ շարունակութիւնը անոր:

Անգամ մը եւս կրկնուեցաւ հայու փրկարար հրաշքը եւ հայ ժողովուրդը հրճուանքով ու ցնծութեամբ ողջունեց ազատագրուած իր ազատ ու անկախ հայրենիքը եւ գրակարաց դիմաւորեց անոր դիւանագիտական ներկայացուցիչները արտասահմանի մէջ: Նորանկախ Հայաստանը ունեցաւ իր ներկայացուցիչը Միացեալ Ազգերու Կազմակերպութենէն ներս եւ հայ երագոյնը, սկսաւ արդարօրէն ծածանիլ այլ անկախ տէրութիւններու դրօշակներու կողքին հպարտութեան անվերապահ զգացումով տոգորելով բոլոր հայերուն սրտերը:

Սփիւռքի հայութիւնը որ «ամբողջական հայութիւն, ամբողջական հայրենիքի մէջ» լոգունգը իրեն համար նուիրական կարգախօս կը նկատէ, հոգեպէս կապուած զգալով մայր հայրենիքին, կ'ապրի իբրեւ հաւատարիմ քաղաքացի գինքը հիւրընկալող երկիրներուն մէջ:

Անիրաւուած եւ խորապէս վիրաւորուած մեծ պետութիւններէն, առանձնացած միջազգային քաղաքական բեմի վրայ, ան կը շարունակէ տէր կանգնիլ իր ազգային արդար իրաւունքներուն եւ անբռնաբարելի եւ անժամանցելի դատին:

Իր պատմութեան դառն փորձառութիւնը սորվեցուցած է իրեն որ օտարներէն չկայ յոյս: Միջազգային քաղաքական յարաբերութիւնները կը մշակուին հիմնուելով փոխադարձ շահերու վրայ եւ քաղաքական կեանքի մէջ չկան մնայուն բարեկամութիւններ:

Ան սորված է նաեւ որ ժողովուրդ մը իր անհատականութեան մէջ պէտք է փնտռէ ու գտնէ անհրաժեշտ հոգեկան ոյժն ու կորովը յաղթահարելու համար իր գոյութեան սպառնացող վտանգները եւ վերապրելու համար իր էութիւնը ցնցող փոթորիկներէն յետոյ:

Ու ան կը հաւատայ, պատմութիւնը վկայ, որ ոչ մէկ ժամանակ ոչ մէկ ժողովուրդի պատմական արդար իրաւունքները տեւականօրէն ռինակոխ կ'ըլլան այնքան ատեն որ այդ ժողովուրդը գիտէ յամառօրէն կառչիլ անոնց, դիմադրել ու դառնալ ատակ խոյանքներու եւ նուիրումի: Աշխարհի ներկայ վիճակը ցոյց կու տայ այդ պատկերը: Մեր ժամանակակից պատմութիւնն ալ հարուստ է գաղափարապաշտ, մտաւորական եւ մարտական երիտասարդութեան նուիրումով ի խնդիր մեր պատմական իրաւունքներու ճանաչման եւ իւրացումին:

Արդարեւ ժողովուրդն է որ պատմութիւն կը կերտէ սերունդէ սերունդ, դարէ դար:

Այսօր ալ Արցախի հերոսական գոյամարտը, լինելու կամ չլինելու, անոր օրհասական պայքարը լաւագոյնս երեւան կը բերեն մեր ժողովուրդին արհաւանական մարտունակ ոգին եւ 1918ի մայիսեան կռիւներու ոգեշնչող օրինակը ընդդէմ թշնամիներու որոնք հաւատարիմ իրենց համաթուրանական ծրագիրներուն կը փորձեն ամէն միջոցներով կուլ տալ խաղաղ ժողովուրդի հայրենական ու պատմական հողերը: Սա պատմութեան անյեղի օրէնքն է որ կը կրկնուի դժբախտաբար 75 տարի յետոյ նոյն դերակատարներով:

Մայիս 28ի արիւնով գրուած եւ մեզի փոխանցուած կտակը ծանր այլ վեհ յանձնառութիւն մըն է մէն մի հայու վզին:

Խուսափիլ այդ յանձնառութենէն կը նշանակէ ուրանալ մեր ինքնութիւնը, մեր անցեալը: Կը նշանակէ անգիտանալ այն վսեմ իտէալը որուն համար մեր բոլոր նահատակները զոհուեցան, կը նշանակէ մեռցնել ազատատենչ այն ոգին որուն պահպանման համար սերունդներ ամբողջ մաքառեցան:

Այս յանձնառութիւնը պէտք է ըլլայ գիտակցութիւն գոր պարտինք վերանորոգել մեր խղճին մէջ եւ դարձնել մնայուն ներկայութիւն: Ան պէտք է ըլլայ հաւատք որուն ներգօր եւ մղիչ ազդեցութեան ներքեւ պարտինք լարել մեր բոլոր ոյժերը եւ ղնել զանոնք ի սպաս մեր հայրենիքին եւ ազգային գերագոյն շահերուն: Վերջա-

պէս ան պէտք է ըլլայ հաւաքական ինչպէս կտակը, ինքը, կը պատկանի համայն հայութեան:

Եթէ կ'ուզենք յաջողիլ մեր ազգային ձգտումներուն մէջ, պէտք է գիտնանք հեռու կենալ ուժացումի, քաղքենիացումի եւ անտարբերութեան հետզհետէ տիրապետող եւ կործանարար ազդեցութիւններէն ու զօրացնենք մեր հայրենի պետութիւնը, ամրապնդենք անոր ազատութիւնն ու անկախութիւնը ազգային միութեան շարախով, զայն դարձնենք անսասան ժամանակի յորձանուտներուն դէմ, որպէսզի ան կարենայ կուրծք տալ մեր գոյութեան սպառնացնող ամէն տեսակի վտանգներուն:

Արդարեւ տիրող քաղաքական անորոշ ու բարդ կացութիւնը տնտեսական դժնդակ պայմանները ինչպէս նաեւ Մայիս 28ի կտակը կը թելադրեն որ հայ ժողովուրդը մէկ սիրտ, մէկ հոգի, հաւաքաբար տէր կանգնի իր ճակատագրին ինչպէս էր պարագան 1918 Մայիս 28ին եւ միասնական ոգիով լծուի շինարար աշխատանքի ու ծաղկեցնէ իր հայրենիքը շարունակելով հանդերձ հետապնդել յարմարագոյն եղանակով հայու պատմական իրաւունքները:

Ահա այն ատեն մեր դարաւոր երազները, կը դառնան գօտեպնդիչ իրականութիւն եւ հայ ժողովուրդը կը հասնի իր իտէպլին, իրաւ յաղթանակին ի գոհունակութիւն եւ ի հրճուանս յատկապէս մայիսան ճակատարմատներուն պատուոյ դաշտին վրայ նահատակուած ինչպէս նաեւ մեր ազատագրական պայքարին գոհ գացած յայտնի եւ անյայտ բոլոր հերոսներու հոգիներուն:

Յարգանք մայիսեան նահատակներուն եւ ազատ ու անկախ հայրենիք կերտող ռահվիրաներու խնկելի յիշատակին, որոնք պիտի մնան առ յաւիտ առասպելական դէմքեր հայոց պատմութեան մէջ ու դառնան նոր սերունդներու համար վերանորոգ կեանքի եւ նոր խոյանքներու առաջնորդող բոցավառ ջահեր:

Յարգանք ազատագրութեան ճանապարհին իրենց կեանքը գոհաբերած հին եւ նոր բոլոր հերոսներուն:

Փա՛ւք ու պատիւ Հայաստանի հանրապետութեան, մեր յաւերժական հայրենիքին եւ անոր հրայրքովը կենսաւորող մեր անգուգական ժողովուրդին:

28/5/1994

## ԷԶՄԻԱԾԻՆ-ԱՆԹԻԼԻԱՍ ՇՓՈՒՄՆԵՐ

*Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը վերջերս այցելեց Հայաստան, Հայ Եկեղեցւոյ համար վարչակազմակերպչական կանոնադրութեան մը պատրաստութեան շուրջ Վազգէն Ա. Կաթողիկոսին հետ խորհրդակցելու նպատակով:*

*Այս առիթով, «Ազդակ» օրաթերթը պատուիրակութեան անդամներէն Ազգային Կեդրոնական Վարչութեան ատենադպիր Ոսկերեան Արզումանեանի հետ ունեցած է տեսակցութիւն մը, զոր կու տանք ստորեւ:*

– Պր. Արզումանեան, որոնցմէ՞ բաղկացած էր ձեր պատուիրակութիւնը:

– Պատուիրակութիւնը բաղկացած էր Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ Մեսրոպ Արք. Աշճեանէ, Լիբանանի Թեմի Առաջնորդ Արամ Եպս. Քէշիշեանէ եւ ինձմէ:

– Ի՞նչ առաջնութիւն վստահուած էր պատուիրակութեան:

– Վազգէն Ա. Կաթողիկոս զանազան նամակներով յայտնած էր Գարեգին Բ. Կաթողիկոսին, որ ծրագրած էր վարչակազմակերպչական կանոնադրութիւն մը պատրաստել Հայաստանեայց Եկեղեցւոյ համար եւ, առ այդ, նշանակած ըլլալով յանձնախումբ մը, կը խնդրէր, Գարեգին Բ. Կաթողիկոսէն՝ Կիլիկիոյ Աթոռին տեսակէտները:

*Մեծի Տանն Կիլիկիոյ Գահակալ Կաթողիկոսը եւ Ազգային Կեդրոնական Վարչութեան Խառն Ժողովը, հանգամանօրէն քննելէ ետք եղած առաջարկը, ունեցան խորհրդակցութիւններ, որոնք յստակ կերպով կը պատկերացնէին Աթոռին տեսակէտները: Գարեգին Բ. Վեհափառը նշանակեց պատուիրակներ՝ կաթողիկոսութեան տեսակէտները անհրաժեշտ բացատրութիւններով Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին փոխանցելու համար:*



- Պատուիրակութիւնը ե՞րբ մեկնեցաւ Էջմիածին եւ քանի՞ օր մնաց հոն:

- Պատուիրակութիւնը Էջմիածին գտնուեցաւ շաբաթ՝ 5 Յուլիսին եւ հոն մնաց մինչեւ Շաբաթ՝ 12 Յուլիս: Պատուիրակութեան անդամներէն Մեսրոպ Արքեպիսկոպոս, Չորեքշաբթի, 2 Յուլիսին, արդէն ժամանած էր Հայաստան:

- Ի՞նչ մթնոլորտի մէջ տեղի ունեցան հանդիպումները:

- Պէտք է ըսել, որ պատուիրակութիւնը շատ ջերմ ընդունելութիւն գտաւ Էջմիածնի մէջ: Վազգէն Ա. Վեհափառ Հայրապետը իր հայրական հոգածութեամբ եւ սրտի ջերմութեամբ ընդունեց մեզ: Մեր կեցութիւնը դիւրացնող լաւագոյն պայմանները շնորհուեցան մեզի եւ Վազգէն Ա. Վեհափառին բարեհաճ կարգադրութեամբ նաեւ կրցանք այցելել բազմաթիւ վանքեր եւ պատմական վայրեր, որոնց համար մեր խորին շնորհակալութիւնները յայտնեցինք Ն.Ս. Օծութեան:

Հանդիպումներն ու խօսակցութիւնները տեղի ունեցան անկեղծ ու յարգալիր մթնոլորտի մէջ:

- Ի՞նչ եղաւ արդիւնքը ձեր հանդիպումներուն:

- Պատուիրակութիւնը Վազգէն Ա. Կաթողիկոսին փոխանցեց Կիլիկիոյ Ս. Աթոռին տեսակէտները՝ առաջարկուած վարչակազմակերպչական միաձոյլ կանոնադրութեան մը առընչութեամբ: Տեղի ունեցան գաղափարներու փոխանակութիւն՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ Միութիւնը ամրապնդող միջոցներու կապակցութեամբ: Պատուիրակութիւնը առաջարկեց աւելի սերտ գործակցութիւն, Հայաստանեայց Եկեղեցւոյ Միութեան շօշափելի արտայայտութեան համար:

- Վազգէն Ա. Կաթողիկոսէն զատ ուրիշ ժողովականներ ներկայ եղա՞նք այդ հանդիպումին:

- Այո, Վազգէն Ա. Կաթողիկոսին կողքին ներկայ էին նաեւ Միոն Արք. Մանուկեան՝ ատենապետ Հոգեւոր Խորհուրդի, Ներսէս Եպս. Պօզապալեան՝ դիւանապետ կաթողիկոսարանի եւ Պարգեւ Շահապազեան՝ ընդհանուր քարտուղար Միջ-Եկեղեցական արտաքին յարաբերութիւններու:

– Ձեր տեսակետները ընդունուեցա՞ն:

- Վազգէն Ա. Կաթողիկոս լայն հասկացողութեամբ լսեց մեր տեսակէտները: Յարմար դատեց, որ իր պատասխանը փոխանցէ Գարեգին Բ. Վեհափառին, խորհրդակցելէ ետք Հոգեւոր Խորհուրդի եւ կանոնադրութեան պատրաստութեան համար իր կողմէ նշանակուած Յանձնախումբի անդամներուն հետ, յառաջիկայ Սեպտեմբերէն ետք:

– Նախապէս գտնուա՞ծ էք Հայաստան:

- Այո, 1969-ին, դարձեալ մաս կազմելով Ս. Էջմիածին զրկուած պատուիրակութեան մը, այժմու Կիլիկեան Աթոռի գահակալ եւ այդ օրերու Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դրան Եպիսկոպոս Գարեգին Արք. Սարգիսեանի հետ: Հոն մնացած էի շուրջ շաբաթ մը:

– Ի՞նչ է ձեր տպաւորութիւն առ հասարակ Էջմիածնի եւ Հայրենիքի մասին:

- Պէտք է նախ ըսեմ, որ շատ ուրախացանք՝ տեսնելով Վազգէն Ա. Կաթողիկոսը առողջ եւ կայտառ վիճակի մէջ: Առիթը ունեցանք Կաթողիկոսարանի կատարած աշխատանքներուն իրազեկ ըլլալու: Մեծ գնահատանքով եւ հիացումով նկատեցինք, որ վերջին 15 տարիներու ընթացքին հսկայ իրազործումներ կատարուած են հոն՝ թէ՛ Էջմիածնի վանքէն ներս եւ թէ՛ Հայաստանի գանազան շրջաններու մէջ:

Ս. Էջմիածնի մէջ կատարուած են վերանորոգութիւններ եւ շինարարական աշխատանքներ: Թանգարանն ու գանձարանը հոյակապ իրազործումներ են, ուր ցուցադրուած են դարերու հնութիւն կրող սրբազան մասունքներ, եկեղեցական սպասներ եւ զգաստներ, իւղանկարներ, հին դրամներ, գորգեր եւ թանկարժէք այլ առարկաներ, որոնք կը պատկանին հայ ժողովուրդի մշակութային գանձերուն:

Նորութիւն էր նաեւ գեղակերտ եւ պերճ սարքաւորումով օժտուած հիւրանոցը, ինչպէս նաեւ Բիւրականի լանջին վրայ (Հայկաչէն) Վեհափառ Հայրապետին ամարանոցը՝ թաղուած գունագեղ պարտէզներու մէջ եւ եզերուած մշտահոս առուով:

Ձանազան շրջաններու մէջ նորոգուած են եւ տակաւին կը նորոգուին եկեղեցիներ եւ վանքեր, որոնք այսպէսով դուրս կու գան իրենց կիսաքանդ ու լքուած վիճակէն, կը ճառագայթեն հայ հան-

ճարին արգասիքը եւ կը ցոյացնեն հայ ժողովուրդի հաւատքը:

Անոնք ըլլալով պատմական արժէք ներկայացնող հին կառոյցներ, կը վայելեն նաեւ պետութեան հոգատարութիւնը: Կարգ մը հին վանքեր եւ եկեղեցիներ, վերանորոգուելէ ետք, շնորհիւ Վազգէն Ա. Վեհափառ Հայրապետի ճիգերուն, դարձած են գործող եկեղեցիներ, ուր կը գտնուին վանահայր մը եւ այլ եկեղեցականներ:

Ս. Էջմիածնի Մայր Տաճարը, որ 5-րդ դարու կառոյց մըն է, դարձած է զբօսաշրջիկներու հետաքրքրութեան եւ հիացումի առարկան: Ամէն շաբաթ աւելի քան 1500 հոգի կու գան Ռուսաստանէն եւ այլ երկիրներէ, գլխաւորաբար արեւելեան Եւրոպայէն, հիանալու համար անոր կառոյցի գեղեցկութեան եւ հնամենի ու իր ժամանակին համար գրուի-գործոց այս ճարտարապետութեան վրայ:

Ս. Էջմիածնի վանքէն ներս, ամէն տեղ կը զգանք Վազգէն Ա. Կաթողիկոսին աչքը: Ամէն մէկ շէնքին մէջ, ամէն մէկ առարկայի վրայ կայ իր շունչը, իր միտքը եւ իր աշխատանքը: Ս. Էջմիածինը ծաղկուն վիճակի մէջ է՝ շնորհիւ տարուած յարատեւ խնամքին եւ հոգածութեան:

Կառուցային գեղեցկութիւնները աւելի տեսանելի դարձած են՝ շնորհիւ գանոնք շրջապատող հիանալի պարտէզներուն:

Այս գեղեցիկ ամբողջութիւնը կը կենսաւորուի ժրաջան միաբաններով եւ յատկապէս հոգեւոր ճեմարանով՝ Դպրեվանքով, որ կը հաշուէ շուրջ 35 ժառանգաւորներ եւ ունի որակեալ ուսուցչական կազմ:

Ուրախութեամբ նշմարեցինք, որ մեծ իրագործումներ կատարուած են նաեւ մայր հայրենիքին մէջ, ու ժողովուրդին կեանքի մակարդակը զգալապէս բարելաւուած է վերջին 15 տարիներուն: Նկատեցինք, որ շատեր անձնական ամարանոցներ ունին, իսկ ուրիշներ, սաստիկ տօթէն խուսափելու համար, կը բարձրանան գիւղեր, ու վարձած են բնակարաններ:

Չեմ ուզեր յամենալ այս մարզին մէջ, քանի որ մենք չէինք գացած հոն իբրեւ զբօսաշրջիկներ եւ, հետեւաբար, կրնանք դուրս մնալ մեր նիւթէն: Բայց պարտք կը զգամ յայտնել, որ այն կարգ մը վայրերը, ուր այցելեցինք, հպարտութեամբ տեսանք, թէ որքա՛ն պայծառ իրագործումներ արձանագրուած են՝ թէ Երեւանի, թէ՛ Ս. Էջմիածնի եւ թէ՛ այլ վայրերու մէջ: Կը զգայի, որ հայրենիքը յառաջդիմութեան մէջ էր եւ ուրախ սրտով վերադարձայ տուն:

## ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 60-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԱԾ ԽՕՍՔ

Թուականէս 50 տարի առաջ, իր հայրենի բնագաւառին մէջ, պապենական հողերուն վրայ ապրող խաղաղասէր եւ շինարար ժողովուրդ մը կ'ենթարկուէր ամենասահմակեցուցիչ եւ քստմնելի արարքներու, տեղահանութիւն, բռնաբարում, թալան, ջարդ ու կոտորած: Ան կ'անցնէր հուրէ ու սուրէ ի գործադրութիւն երիտասարդ թուրք կառավարութեան կողմէ հայաջնջման կանխամտածուած ծրագրի: 1.5 միլիոնէն հայեր եւ ընտրանի մտաւորականութիւն մը զոհ գացին այդ դիւալին ծրագրին եւ «մնացորդացը» ճրրուեցաւ ի սփիւռս աշխարհի կայք հաստատելու համար հիւրընկալ երդիքներուն տակ:

Ազգերու նորագոյն պատմութեան մէջ այս առաջին ցեղասպանութիւնն էր որ տեղի կ'ունենար համաձայն ՄԱԿի կողմէ առնուած ցեղասպանութիւնը բնորոշող Դեկտ. 9 1948ի որոշման:

Հայ ժողովուրդը ամէն տարի Ապրիլ 24ին զգացուած երկիւղածութեամբ կը խոնարհի իր մեծ եղեռնի զոհերուն յիշատակին առջեւ:

«Նահատակներուն արիւնը սերմ է» ըսած է լատին պատմիչ մը:

Այդ սերմը անոնց կտակն է զոր անոնք իրենց կեանքին ամենախաւար մէկ օրը, յաւիտենական բաժանումի ըրպէին մեզի փոխանցեն իրենց մահասարսուռ վերջին նայուածքով: Մեզմէ կախում ունի անոր բեղմնաւորումը: Մենք ենք որ գիտակից աշխատանքով եւ վճռակամութեամբ կենսայորթ աւիչը պիտի հայթայթենք անոր որպէսզի նահատակներուն անաւարտ երազը իրականութեան կերպարանք ստանայ:

Չի բաւեր սակայն ոգեկոչել նահատակներուն յիշատակը: Ներկայ դարը երազանքի եւ լոկ ծրագիրներու դար չէ: Ան աշխատանքի եւ գործունէութեան դար է: Ան յանդուգն իրագործումներու եւ

մեծ յոյսերով դուռ կը բանայ: Մենք պէտք է ձգենք անցեալի լացն ու սուգը եւ կառչինք շինիչ ու բեղմնաւոր աշխատանքի: Պէտք է տէր կանգնինք մեր ոսկեղնիկ լեզուին, մեր բազմերանգ մշակոյթին եւ ազգային ժառանգին ու ցոյց տանք մեր դարաւոր ոսոխին որ ան ընթացք տալով իր գազանաբարոյ բնագոյներուն թէպէտ կրցաւ աւերել մեր տուները, քանդել մեր օճախները եւ կոթողները, մոխիրի վերածել մեր կայքը, խոշտանգել ու ջարդել մեր անմեղ եւ անզէն ժողովուրդը, բայց չի կրցաւ փճացնել մեր մշակոյթը, չի կրցաւ յաղթահարել մեր հայ մնայու եւ հայ ապրելու անխորտակելի կամքը: Փաստը՝ այդ մոխիրներուն տակէն իբրեւ փիւնիկ վերածնեալ մեր հայրենիքը եւ ներկայ ողջ հայութիւնը որ այսօր՝ կանգ առած քաղաքական աշխարհի առջեւ կը դիմէ մարդկութեան խղճին հատուցում պահանջելու իր բռնաբարուած իրաւունքներու եւ անմեղ գոհերուն համար:

Մարդիկ կրնան մեռնիլ բայց իրենց գաղափարները եւ ոգին կը մնան անմահ: Այդ էր Վարդանանց նշանաբանը, այդ եղաւ մեր նահատակներուն պատգամը:

Գոտեպնդուած այս հաւատքով, պէտք է գիտնանք մեր հաւաքական ճիգերուն մէկտեղումով անոնց յիշատակը առօրեայ ապրում դարձնել եւ անոնց սուգը վերածել մեր ազգային սրբազան դատին ի նպաստ նոր ոստումներու եւ նոր խոյանքներու ներշնչարանի եւ մղիչ ոյժի:

Ահա այս է պատգամը վաթսուներամեակին:

ԱԶԳԱՅԻՆ ԴԻՄԱԳԻԾԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ  
ԵՒ ՀԱՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆԷՆ  
ԱԿՆԿԱԼՈՒՄԾ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ<sup>5</sup>

Գերապատիւ Հայր Սուրբ  
Սիրելի ՀԵՀՈՄականներ

Պիտի ուզէի նախ շնորհաւորել Հ.Ե.Հ.Ո.Մ-ի վարչութիւնը որ հայ համալսարանական ուսանողները շահագրգռող այսքան շահեկան եւ այժմէական հարցազրոյց մը կազմակերպած է:

Բազմաթիւ ազդակներ կը սատարեն ազգային դիմագիծի պահպանման ինչպէս ընտանիքը, որուն շունչը կը պայմանաւորէ ապագայ երիտասարդութեան դիրքաւորումը, դպրոցը ուր ուսման միջոցով կը փոխանցուի մեր մշակութային ժառանգը, շրջապատը, որուն առողջ եւ հայեցի մթնոլորտին մէջ հայ երիտասարդի հոգիին մէջ կը բացուին ազգային գիտակցութեան մշտանորոգ ակօսներ: Եւ այս բոլորը կը կազմեն ազգային դաստիարակութիւն:

Հայ համալսարանականը պէտք է միշտ վառ պահէ իր ազգային դիմագիծը եւ զօտեպնդուի ազգային ոգիով առանց սակայն հասնելու այլամերժութեան որմէ պէտք է խուսափիլ, եւ աշխատիլ զայն փոխանցել իր շրջապատին:

Արդարեւ որ երկիրներու մէջ ալ ապրինք, հայրենիքէն դուրս, ենթակայ ենք բնութեան անյեղյի օրէնքին, փոքրամասնութեանց վիճակուած ճակատագրական բախտին, ըլլանք տկար կամ զօրաւոր փոքրամասնութիւններ պիտի չկարենանք տոկալ ժամանակի եւ օտար միջավայրի տարրալուծող ազդեցութեան:

Ազատ ժողովրդականութեան մէջ կ'ըսէ, նշանաւոր ընկերաբան եւ քաղաքական գիտութեանց Փարիզի համալսարանի նախկին դա-

<sup>5</sup> Դասախօսութիւն ՀԵՀՈՄականներուն:

սախօս, Emmanuel Mounier, «ցեղային կամ ազգային փոքրամասնութիւններու խաղաղ գոյակցութիւնը մնացեալ բնակչութեան հետ կ'առաջնորդէ միաձուլումի, իսկ անոնց իրերամերժ դիրքաւորումը իբրեւ հետեւանք կրօնական եւ մշակութային տարբեր ըմբռնումներու յառաջ կը բերէ հակադրութիւն»։ Եթէ ասիկա ճիշդ է ընկերաբանական հասկացողութեամբ, անհրաժեշտ է ուրեմն անընդմէջ պայքարիլ պահելու համար մեր ազգային դիմագիծը, մեր ինքնութիւնը, յատկապէս ազատ աշխարհի մեր գաղութներուն մէջ ուր հայութիւնը կը վայելէ հաւասարութեան սկզբունքով կեանքի դիւրութիւններ եւ ուր այլամերժութեան ցցուն դիրքաւորումներ չկան։

Յաջողելու համար չի բաւեր միայն վկայականներ ունենալ որքան ալ անոնք նախադուռը նկատուին յաջողութեան։ Չի բաւեր նոյնիսկ գործի մէջ մասնագիտութիւն ձեռք ձգել, դրամ վաստակիլ գիտնալ եւ հարստութիւն դիզել։

Կարեւորը մարդու մը համար այդ բոլորէն անկախ ու այդ բոլորէն վեր իր կեանքը կարենալ երջանիկ դարձնելն է, յաջողիլն է իր ուրոյն կեանքին մէջ, իր բնատուր ձիրքերու գարգացումով, իր ողջախոհութեամբ, պարկեշտ նկարագրով, եռանդուն աշխատանքով, հոգեկան բաւարարութեամբ եւ մանաւանդ իտէալով։

Արդարեւ սոսկ դրամի, դիրքի, պատիւներու տիրացումը անպայմանօրէն յաջողութիւն չեն կրնար նկատուիլ քանի որ անոնք չեն կրնար ըլլալ կեանքի նպատակ այլապէս մարդու կեանքը պիտի վերածուէր բոլորական եւ անասնական գոյավիճակի։

Անոնք օգտակար միջոցներ են օգնելու համար անհատին որ իրականացնէ զինքը ազնուացնող եւ իրեն հոգեկան գոհացում տուող ձգտումներու։

Հոգին եւ ազգային խիղճը ունին նաեւ իրենց պահանջքը եւ մեզ կը դնեն պարտաւորութիւններու եւ պատասխանատուութիւններու առջեւ որոնց անգիտացումը մեր ներաշխարհը կը պահէ մնայուն խռովքի մէջ։ Ոեւէ գիտակից անհատ չի կրնար ինքզինքը երջանիկ զգալ այնքան ատեն որ չէ բաւարարուած իր հոգին։

Իմաստասէր մը կ'ըսէ, «եթէ կ'ուզէք յաջողիլ ձեր կեանքին մէջ, աշխատանքը ձեր կեանքի ընկերը դարձուցէք, շատ լաւ ըրէք ինչ որ

պարտիք ընել, փորձեցէք ըլլալ լաւագոյնը ձեր ընտրած ասպարէզին մէջ եւ մանաւանդ ունեցէք իտէալ մը որուն համար կարենաք ի հարկին յանձն առնել տառապիլ եթէ նոյնիսկ անհրաժեշտ ըլլայ այդ»:

Սակայն որպէսզի այդ յաջողութիւնը ձեզ դնէ երջանկութեան հունին մէջ, անհրաժեշտ է որ ունենաք հոգեկան ապրումներ, ձեր կեանքին թռիչք տուող երազներ եւ վերջապէս վեհ իտէալներ:

Իտէալի ձգտումը հեռու կը պահէ ձեզ հանգստապաշտութենէ, շուայութենէ, պերճամոլութենէ, որոնք կը մեռցնեն ձեր հոգեկան առաքիլութիւնը: Իտէալը մարդը կ'ազնուացնէ, կը տարանջատէ սովորական մահկանացուներէն եւ անոր կեանքը կ'իմաստաւորէ:

Եւ իբրեւ հայ ինչպէս կրնանք երջանիկ գգալ գմեզ եթէ գուրկ ենք ազգային գիտակցութենէ, իտէալէ, եթէ հունինք ծառայելու ոգի, տեսլական կամ ազգային ընդհանրական շահերու կապուած երազներ:

Ինչպէս կրնանք գմեզ երջանիկ գգալ եթէ հունինք հոգեկան բաւարարութիւնը մաքառումներու, պայքարի, եւ խոյանքներու, ի խնդիր մեր ազգային իրաւունքներու տիրացման, մեր ազգային գոյատեւման, մեր եկեղեցական եւ մշակութային արժէքներու պահպանման:

Պէտք է մեր նիւթական եւ ֆիզիքական պահանջներուն գոհացում տուող միջոցներու կողքին մտածենք նաեւ մեր մարդկային խղճին եւ մեր ազգային խղճի պահանջներուն բաւարարութիւն տուող պայմաններու մասին:

Պէտք է տէր կանգնինք մեր ինքնութեան ու կապուած մնանք մեր արմատներուն որոնք երեւան կը հանեն մեր ազգային եւ բարոյական դիմագիծը, մեր հոգեկան արժէքները որոնց ներշնչումով կը բեղմնաւորենք մեր ներկան եւ կը պատրաստենք մեր ապագան:

Պէտք է գուրգուրանք մեր լեզուին, դպրոցներու եւ եկեղեցիներու վրայ իբրեւ միջնաբերդ հայապահպանման եւ ըլլանք յանձնառու:

Յանձնառուն այն է որ կը ճշդէ իրեն համար վսեմ առաքելութիւն ազգային ընդհանուր շահերու նկատմամբ ունի պարտականութեան գիտակցութիւն եւ ծառայելու ոգի:

Յանձնառուն ինքզինքը պատասխանատու կ'գգայ այն ծառա-



յութեան համար որ կրնայ կատարել ի շահ իր ազգին, իր հայրենիքին եւ իր շրջապատին:

Յանձնառութեան այս ոգին է որ ձեր մէջ պէտք է բոյն շինէ: Արդարեւ ժողովուրդի մը ապագան կը կերտուի ներկայ ատաղցով, իր երիտասարդութեան տեղ հասնելու վճռակամութեամբ եւ անխորտակելի կամքով:

Պէտք է խուսափինք անտարբերութենէ որ աղբիւրն է ջլատիչ տրամադրութիւններուն որոնք աներկբայօրէն կ'առաջնորդեն դէպի դանդաղ մահ մեր հոգեմտաւոր արժէքներուն:

Եթէ կ'ուզէք չափել ժողովուրդի մը ազգային շունչին տարողութիւնը, կ'ըսէ ուրիշ գրագէտ մը, մտիկ ըրէք անոր երիտասարդութեան սրտին զարկերը:

Պէտք է գիտնանք տալ մեր ժողովուրդին մեր մտքէն, մեր ժամանակէն, մեր նիւթական կարելիութիւններէն, մեր շունչէն եւ մանաւանդ մեր սրտէն:

Եթէ կ'ուզէք յաջողիլ ձեր կեանքին մէջ, յիշեցէք յայտնի մտաւորական եւ գրագէտ Michel Kouaï-ի խօսքը, «միայն տալու պայմանով է որ մարդ կը յաջողի իր կեանքին մէջ եւ կը ճանչնայ իսկական երջանկութիւն»:

Պատմութիւնը անողոք է, անփառունակ ճակատագիր կը ճշդէ այն ժողովուրդներուն հանդէպ որոնք կը մնան կրաւորական, դիտող, համակերպող եւ ի վիճակի չեն պայքարելու պահելու համար իրենց ինքնութիւնը եւ հաւաքական անհատականութիւնը:

Նշանաւոր Փրանսացի գրագէտ Պերնանոս ըսած է, «պէտք չէ սպասել որ ապագան պարտադրուի մեզի այլ պէտք է գայն կերտել»:

Պէտք է գիտնանք դիմաւորել հոսանքն ի վեր, պահել սփիւռքահայութեան դիմագիծը եւ դարձնել գայն յանձնառու: Պատմութիւնը կը կերտուի յանձնառու մարդոցմով պէտք է սակայն աշխատինք հաւատքով ու կազմակերպուած կերպով: Պայքարը առանց կազմակերպուած հաւաքական ճիգերու պարագայական խանդավառութեան եւ գեղումի դուռ կը բանայ ու կը մնայ անհետեւանք:

Երբ ժէնէրալ Տը Կոլին հարց կը տրուի թէ ինչու հօր Փրանսան լքելով Ալժիրիան, անկախութիւն տուաւ անոր այն շրջանին ուր 1.5 միլիոն Փրանսացիներ կ'ապրէին հոն ուր կը գտնուէր շուրջ 700 հազար գինեալ Փրանսական բանակ:

Ան կը պատասխանէ՝ որովհետեւ նկատեցի որ բոլոր ալճերացի ղեկավարները համաձայն էին իրարու հետ եւ հաւաքաբար ու կազմակերպուած կերպով կը պայքարէին իրենց գերիշխանութեան տիրանալու համար:

Մեր կառույցները ընդարձակ են: Անոնք կ'ընդգրկեն մեր ազգային կեանքի եկեղեցական, կրթական, տնտեսական, կալուածական, դաստիարակչական, բարեսիրական եւ վարչական բնագաւառներ: Այդ կառույցները կրնան կենսաւորուիլ իրենց ծառայական ընթացքին մէջ երբ հոն աշխատող անձերը գիտակից եւ զարգացած տարրեր ըլլան ու իրենց գիտութիւնը եւ կազմաւորումը դնեն ի սպաս հանրութեան եւ հասարակական շահերու:

Համալսարանական երիտասարդ-երիտասարդուհիներու ամենադիւրին ասպարէզը ուսուցչական մարզն է ուր միշտ ալ վկայեալ, ծառայասէր եւ յանձնառու ուժերու պէտք կայ: Եթէ նոյնիսկ ժամանակ չունենաք ձեր գործօն մասնակցութիւնը բերելու ազգանուէր աշխատանքներու, անտարբեր մի կենաք փորձեցէք ձեր մասնակցութեամբ ազգային եւ մշակութային խորք ունեցող ձեռնարկներու մասնակից ըլլալ եւ քաջալերել կազմակերպիչները ձեր ներկայութեամբ, գնահատանքով եւ կամ ձեր ղիտողութեամբ: Վարչական կառույցները պէտք ունին նաեւ պատրաստուած համալսարանական երիտասարդ-երիտասարդուհիներու: Վարձատրութիւնները կ'ըլլան համաձայն պետական եւ ընդհանրական սակերու:

Ազգային կառույցներէն դուրս կան նաեւ հայկական այլ բարեսիրական, մշակութային կառույցներ որոնք կրնանր պէտք ունենալ համալսարանական երիտասարդներու, միայն ազգային վարժարանները 300է աւելի ուսուցիչ-ուսուցչուհի ունին որոնց մէկ մասը համալսարանական է: Մեր երկրորդական եւ միջնակարգ դասարաններուն համար համալսարանականներ կը պահանջենք:

Սակայն ինչպէս վերեւ ըսենք անհրաժեշտ չէ որ մէկը ազգային մեքենայի մէջ պաշտօնեայ ըլլայ ծառայելու համար: Ունինք բազմաթիւ մարմիններ որոնք կ'գրադին կրթական, տնտեսական, կալուածական եւ վարչական գործերով: Կարելի է մաս կազմել անոնցմէ մէկուն համաձայն ձեր մասնագիտութեան եւ ձեր ծառայութիւնը բերել ազգային գործերուն:

Անոնք որոնք տրամադրութիւն ունին եւ աւարտած են իրենց

ուսուժը կրնան դիմել Առաջնորդարանի դիւանապետին որ կը փոխանցէ ձեր անունները Առաջնորդ հայր սուրբին: Երբ պահանջք ներկայացուի, Առաջնորդ հայր սուրբը նկատի կ'ունենայ ձեր տրամադրութիւնը:

Ազգային իշխանութիւնը պէտք ունի համալսարանաւարտ երիտասարդ ուժերու: Պէտք է աշխատող մեքենային մէջ նոր եւ թարմ իւղ աւելցնել որպէսզի աւելի լաւ դառնայ: Երիտասարդ համալսարանականները կրնան նորութիւն բերել հարցերը ըմբռնելու եւ լուծելու եղանակին մէջ եւ մանաւանդ կենսունակութիւն ներշնչել երբեմն մաշած կազմերուն:

Արդարեւ ազգային իշխանութիւնը պէտք ունի համալսարանաւարտ երիտասարդ-երիտասարդուհիներու օգտուելու համար անոնց մասնագիտութենէն, երիտասարդական աւիւնէն ու վարակիչ խանդավառութենէն:

Եթէ նոյնիսկ ժամանակ ու միջոց չունիք մաս կազմելու մարմիններուն, փորձեցէք, անտարբեր մի կենաք եւ փորձեցէք քաջալերել կազմակերպիչները:

Ահա սիրելի ՀԵՀՈՄականներ ծառայելու ընդարձակ կարելիութիւններ: Փոխանցեցէք ձեր ազգային դիմագիծը ձեր շրջապատին: Մնացէք յանձնառու ու կազմակերպուած աշխատանքի կողմնակից, դարձէք հոգածու տէր ու պաշտպան մեր դարաւոր մշակոյթին, հոգեւոր եւ բարոյական արժէքներու: Պատմական անկորնչելի իրաւունքներու եւ մեր սիրելի ու պանծալի հայրենիքին:

ԻՆՉ ՆՊԱՍՏ ԿՐՆԱՅ ԲԵՐԵԼ  
ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՍՓԻՒՌՔԻ  
ՄԵՐ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԴԻՄԱԳԻԾԻ  
ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԷՋ ԵՒ ԻՆՉ ԿԱՐԵԼԻ Է ՍՊԱՍԵԼ  
ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԷՆ<sup>6</sup>

Ա.– Ի՞նչ նպաստ կրնայ բերել Լիբանանահայութիւնը Սփիւռփի մեր գաղութներու ազգային դիմագիծի պահպանման մէջ:

*Նշանաւոր արեւելագէտ եւ բանասէր Բոլ Բիթրըզ կ'ըսէր՝ «իր պատմութեան գրեթէ բոլոր շրջաններուն հայ ժողովուրդի թիւը աւելի եղած է իր հայրենիքէն դուրս քան իր հայրենիքին մէջ»: Որքան ալ վիճելի ըլլայ այս վարկածը, ան գոնէ ճիշդ է 1915ի մեծ եղեռնին յաջորդող շրջանին համար եւ առնուազն կը նշանակէ որ հայ ժողովուրդը միշտ ալ ունեցած է գաղութներ, այլ խօսքով սփիւռք:*

Արդարեւ իր պատմութեան ամենահեռաւոր ժամանակներէն ի վեր Հայաստանը, իր աշխարհագրական դիրքին բերումով, դարձած է կռուախնձոր եւ անվերջ պատերազմներու թատերավայր գինքը շրջապատող հզօր դրացիներու միջեւ: Այս գոյավիճակը պատճառ եղած է որ ժողովուրդին մէկ մասը հարկադրաբար լքէ իր հայրենի բոյնը եւ հեռանայ անկէ այլուր փնտռելու համար խաղաղ կեանք: Ան հեռացած է իր հայրենիքէն պարզապէս խուսափելու համար ներխուժող վայրագ հորթաներու կոտորածներէն, ջարդերէն եւ այլ դժբախտութիւններէն:

Պատահած է նաեւ որ մեծ երկիրներու բնակիչներ ալ լքեն իրենց երկիրը եւ տեղաւորուին ուրիշ վայրեր, սակայն այդ եղած է կամ անոր համար որ մայր հայրենիքին սահմանները նեղ եկած են աճող բնակչութեան պահանջներուն եւ կամ պարզապէս այդ երկիրները

<sup>6</sup> Դասախօսութիւն տրուած Լ.Օ.Խ.ի Պուլղուրճեան սրահին մէջ:

իրենց վաճառականութեան եւ ազգային ճարտարարուեստի զարգացման համար կատարած են նուաճումներ ինչպէս է պարագան Փիւնիկէյի՝ իր քարթափով, հին Հռոմի՝ իր արեւելեան նահանգներով, միջին դարու Վենետիկի եւ Ճենովայի դքսութիւններուն փոքր Ասիոյ եւ Միջին Արեւելքի իրենց վաճառաշահ կեդրոններով, Փորթուքայի, Սպանիոյ, Հոլանտայի, Անգլիոյ, Ֆրանսայի եւ այլ պետութիւններու՝ իրենց գաղութներով:

Փոքր Ազգերու պարագային, ինչպէս հայութեան, ժողովուրդը լքած է իր մայր հայրենիքը, հալածուած պատերազմներէ, ջարդերու սարսափներէ եւ կամ պարզապէս սովէն ու այլ աղէտներու մղձաւանջէն: Գաղթող բնակչութիւնը հեռացած է մայր հայրենիքէն աւելի փախստական, սարսափահար իր հետը տանելով սարսաղեցիկ դժբախտութիւններու պատկերը, լքելով իր ստացուածքները, տունը, տեղը, կալուածները եւ երբեմն ալ ընտանիքէն մէկ մաս (Տեսնել այս մասին՝ Արշակ Ալպոյաճեանի «Պատմութիւն Հայ Գաղթականութեան» պատմական ուսումնասիրութիւնը, Փրոֆ. Տոտոմեանցի «Հայոց Դերը Համաշխարհային Մշակոյթի Մէջ» գիրքը, տեսնել նաեւ գրական երկասիրութիւններու մէջ, միջնադարեան շրջանին եւ յատկապէս 15րդ դարուն մէջ, Թրկատինցի, Ե. Կիւրճեանը, եւ այլն):

Բոլորիս ալ ծանօթ է որ անցեալին ունեցած ենք հայահոծ գաղութներ Ռուսաստանի, Լեհաստանի, Հունգարիոյ, Հնդկաստանի մէջ որոնք համաձայն մեր ձեռք ձգած տեղեկութիւններուն ունեցած են դպրոց, եկեղեցի, մամուլ, կրթասիրած եւ մշակութային միութիւններ, պատրաստած են ձեռագիր գրքեր, հետագային ունեցած են տպարան, մշակած են արուեստներ: Սակայն ժամանակի ճմլոց եւ փոշիացող գլանէն չեն խուսափած եւ կորսնցուցած են նախ իրենց լեզուն ապա իրենց տոհմիկ աւանդութիւնները եւ վերջապէս իրենց ինքնութիւնը:

Փրոֆ. Տոտոմեանց կ'ըսէ.- «Շահ Աբբասի օրով, Հայաստանէն պարտադրաբար Պարսկաստան փոխադրուած 25.000 հայ ընտանիքներ տեղաւորուեցան Սպահանի արուարձանը կազմելով Նոր Զուղան ուր անոնք գտան կրօնի ազատութիւն եւ առանձնաշորհումներ, տրուած Շահ Աբբասի կողմէ: Հետագային սակայն, անոնք ստիպուեցան թողուլ իրենց նորակազմ ընտանեկան բոյները

երը վերոյիշեալ Շահին յաջորդները հալածելով քրիստոնեաները կեղեքեցին նաեւ հայերը իրենց կրօնքին պատճառով: Այն ատեն հայերը գաղթեցին խմբովին եւ ցրուեցան ամբողջ Ասիոյ մէջ՝ Հնդկաստան, Աֆղանիստան, Պելուճիստան, Ճավա, Սումատրա, Ֆիլիպեան կղզիներ մինչեւ իսկ Չինաստան ու Ճաբոն: Ուրիշներ Եւրոպա ուղղուեցան, մինչեւ Հոլանտա, ուր, Ամսթերտամի մէջ, մինչեւ անցեալ դարուն հայ եկեղեցի մը գոյութիւն ունէր: Ամսթերտամի հայերը բաւական կարեւոր դեր կատարեցին մշակութային տեսակէտով, քանի որ Աստուածաշունչի առաջին հայ տպագրութիւնը ինչպէս նաեւ ուրիշ հոյակապ գործերու հրատարակութիւնը այդ քաղաքի մէջ տեղի ունեցած են»:

Այս գաղութներէն սակայն մեզի կը մնան ներկայիս պատմական ազօտ տեղեկութիւններ, արձանագրութիւններ, եկեղեցիներու քանդակներ եւ ձեռագիրներ իբրեւ յիշատակ առյաւէտ կորսուած մեր ժողովուրդի բեկորներէն:

Այսօր եւս եթէ սովետական սփիւռքն ալ ի մտի ունենանք, հայ ժողովուրդի թիւը արտերկրի մէջ եթէ ոչ աւելի գոնէ մօտաւորապէս նոյնն է ինչ որ է ներկայիս Հայաստանի հողին վրայ (չուրջ 3.300.000): Ան ցրուած է արեւելքէն արեւմուտք աւելի քան 50 երկիրներու մէջ չուրջ 3 միլիոնէ աւելի բնակչութեամբ: Ասոնք կ'ապրին իբրեւ փոքրամասնութիւն համաձայն գիրենք հիւրընկալող երկիրներու բարեացակամութեան եւ օրէնքներուն:

Կարգ մը գաղթօճախներու մէջ արտօնուած է պահել դպրոցներ ուր հայրենի լեզուի, հայոց պատմութեան եւ կրօնի ուսուցումը հիմնական տեղ կը գրաւեն կիրարկուող կրթական ծրագիրներուն մէջ ինչպէս է պարագան Լիբանանի, ուրիշ երկիրներու մէջ, տեղական պայմաններու պարտադրանքին հետեւանքով ազգային կրթութեան առնչուող առարկաներու ուսուցումը խիստ սահմանափակ է, իսկ այլ տեղեր ան գրեթէ գոյութիւն չունի:

Սակայն որ երկիրներու մէջ ալ ըլլանք, ենթակայ ենք բնութեան անյեղի օրէնքին, փոքրամասնութեանց վիճակուած ճակատագրական բախտին, ըլլանք տկար կամ զօրաւոր փոքրամասնութիւններ պիտի չի կարենանք տոկալ երկար ատեն օտար միջավայրի, ժամանակի եւ պայմաններու տարրալուծող ազդեցութեան:

Ազատ ժողովրդավարութեան մէջ կ'ըսէ, նշանաւոր ընկերաբան

եւ քաղաքական գիտութեանց Փարիզի համալսարանի նախկին դասախօս, էմմանուէլ Մուսիէ, «ցեղային կամ ազգային փոքրամասնութիւններու խաղաղ գոյակցութիւնը մնացեալ բնակչութեան հետ կ'առաջնորդէ միաձուլումի, իսկ անոնց իրերամերժ դիրքաւորումը իբրեւ հետեւանք կրօնական եւ մշակութային տարբեր ըմբռնումներու յառաջ կը բերէ հակադրութիւն», եթէ ասիկա ճիշդ է ընկերաբանական հասկացողութեամբ, անհրաժեշտ է ուրեմն անընդմէջ պայքարիլ պահելու համար մեր ազգային դիմագիծը յատկապէս ազատ աշխարհի մեր գաղութներուն մէջ ուր հայութիւնը այլամերժութեան ցցուն դիրքաւորումներու ենթակայ չէ:

Արդարեւ եթէ քննական ակնարկ կը նետենք վերջին 70 տարիներուն մեր գաղութներուն կրած հոլովոյթին վրայ, պիտի նշմարենք որ անոնց մէջ շատեր պիտի կորսնցնէին իրենց ինքնութիւնը եւ դառնային զանգուած գուրկ տեսլականէ եթէ չըլլային վերջին 30 տարիներու ընթացքին միջին արեւելքը ցնցող քաղաքական դէպքերը որոնց հետեւանքով արտագաղթող հայութիւնը կենսաւորեց այլապէս խամրող այդ սերունդները անոնց ներարկելով նոր աւիշ, վերագարթնում եւ բանայով անոնց կեանքէն ներս ազգային գիտակցութեան նոր ակօսներ: Այս է պարագան հիւսիսային Ամերիկայի, Գանատայի, Աւստրալիոյ, Ֆրանսայի խօսելով միայն կարեւորագոյններու մասին որոնք յաջորդաբար ընդունեցին 1947-48ին Պաղեստինէն գաղթող հայերը, 1952-58ի նասրական շարժումի օրերուն Եգիպտոսի ծաղկող գաղութէն աւելի քան 30.000 հայեր, 1958ի իրաքեան յեղափոխութենէ յետոյ, իրաքահայ գաղութի կարեւոր մէկ մասը, 1961էն յետոյ մեծ թիւով սուրիահայեր, 1975էն յետոյ լիբանանահայեր եւ 1978էն յետոյ իրանահայեր:

Այսուհանդերձ, եթէ նոյնիսկ շնորհիւ տարուած աշխատանքներուն հնարաւոր ըլլայ վերոյիշեալ գաղութներու մէջ ազգային դիմագիծը յարաբերաբար աւելի երկար ժամանակամիջոցի մէջ պահել, պատմական իրողութիւն է սակայն որ սփիւռքի գոյատեւումը ինքնանպատակ չի կրնար ըլլալ: Լեհաստանի, Ռումանիոյ եւ Հունգարիոյ մեր գաղութները լաւագոյն օրինակներն են: Չենք կրնար սփիւռքը ընդունիլ իբրեւ հոգեկան հայրենիք եւ բաւարարուիլ անով: Սփիւռքը իմաստ պիտի չունենար առանց օր մը հայրենիքին հետ կամրջուելու մեր յոյսին: Եւ ճիշդ անոր համար է որ պէտք է

ան պահուի այնքան ատեն որ հայրենիքը չի գտնուիր մեզ ազատօրէն հիւրընկալելու պայմաններուն մէջ, այնքան ատեն որ հայ ժողովուրդը տէրը չէ իր սեփական ճակատագրին, այնքան ատեն որ հայ ժողովուրդը չէ տիրացած իր պատմական անկորնչելի իրաւունքներուն:

Սակայն, պիտի հարցուի մեզի, որքան ժամանակուայ համար եւ ինչպէս պահել սփիւռք մը որ ինչպէս վերեւ տեսանք միջավայրի ջլատիչ ազդեցութիւններու հետեւանքով ենթակայ է ամէնուրեք, ուշ կամ կանուխ, կորսնցնելու իր ազգային դիմագիծը: Ի՞նչ փոյթ ապահովել Ֆիզիքական գոյատեւումը սփիւռքին երբ ան տակաւ կը կորսնցնէ իր լեզուն, իր ասանդութիւնները, իր անհատականութիւնը, իր ոգին, իր երազները:

«Հաւաքականութիւն մը, կ'ըսէ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս, կը դատապարտուի անհատներու սոսկ ամբոխ մը, գումար մը ըլլալու խեղճ ու մարդկային գոյավիճակին, եթէ ինքզինքը չի հասկնայ իբրեւ համայնական անձնաւորութիւն»:

Սփիւռքի գոյատեւումը իբրեւ հայ հաւաքականութիւն, կը պահանջէ կապուած մնալ մեր արմատներուն: Ըմպել մեր պատմութեան ջինջ ակունքներէն, տէր ըլլալ մեր ինքնութեան, մեր հաւաքական ճակատագիրն ակելի լաւ արժեւորելու համար մեր մշակոյթը, մեր քաղաքակրթութիւնը, մեր հոգեկան արժէքները, մեր տենչերը, վերջապէս մեր ազգային անբասիր դիմագիծը որուն ներչնչումով կը բեղմնաւորենք մեր ներկան եւ կը պատրաստենք մեր ապագան գործօն եւ յանձնառու մասնակցութեամբ: «Մառը արմատով է ծառ», ըսած է Խրիմեան Հայրիկը:

Անցեալը մերժող, արմատներէն կտրուող, հայու ոգիէն պարպուող դիրքաւորում մը մեզ կ'առաջնորդէ չորացումի եւ ազգային տեսակէտէ կորստեան:

Կարենալ կապելու համար սփիւռքահայը իր արմատներուն անհրաժեշտ է հրահրել անոր ազգային-եկեղեցական եւ մշակութային զգայնութիւնը, տալ իբրեւ հայ գոյատեւելու յոյսը եւ դարձնել զայն պահանջատէր:

Հայ երիտասարդութիւնը պէտք ունի ներկայիս այս կարգի վսեմ իտէալներու եւ կազմակերպուած աշխատանքի:

Որքան ալ դժուար ըլլան հայապահպանման եւ պահանջատիրա-



կան մեր աշխատանքները եւ հնարաւոր չի թուի մեր ձգտումներուն անմիջական իրագործումը, անհրաժեշտ է պայքարիլ եւ տոկալ: Պատմութիւնը անողոք է եւ դժխեմ ճակատագիր կը ճշդէ այն ժողովուրդներուն հանդէպ որոնք կը մնան կրաւորական, դիտող, համակերպող եւ ի վիճակի չեն պայքարելու պահելու համար իրենց ինքնութիւնը եւ հաւաքական անհատականութիւնը:

Նշանաւոր Փրանսացի գրագէտ Պերնանոս ըսած է, «պէտք չէ սպասել որ ապագան պարտադրուի մեզի այլ պէտք է զայն կերտել»:

Պէտք է գիտնանք թիավարել հոսանքն ի վեր, պահել ազգային դիմագիծը սփիւռքահայութեան եւ դարձնել զայն յանձնառու: Պատմութիւնը կը կերտուի յանձնառու մարդոցմով:

Ներկայիս արտասահմանի մէջ վերազարթնում կայ ինչպէս տեսանք, վերեւ, շնորհիւ միջին արեւելքէն նոր գաղթող հայութեան, դպրոցներ կը բացուին, եկեղեցիներ կը բարձրանան, ակումբներ կեանքի կը կոչուին, համատարած ոգեւորութիւն եւ նախանձախնդրութիւն կը նշմարուի պահելու համար ազգային դիմագիծը:

Սակայն չի մոռնանք որ ձուլման վտանգը անդիմադրելի է այն փոքրամասնութիւններու համար որոնք կազմակերպուած չեն:

Եւ պայքարը առանց կազմակերպուած հաւաքական ճիգերու պարագայական խանդավառութեան արդիւնք կը դառնայ միայն ու կը մնայ անհետեւանք:

Երբ ժէնէրալ Տը Կոլին հարց կը տրուի թէ ինչո՞ւ հօր Ֆրանսան լքելով Ալթերիան, անկախութիւն տուաւ անոր այն շրջանին ուր 1.5 միլիոն Փրանսացի կ'ապրէր հոն ու կը գտնուէր աւելի քան կէս միլիոն հաշուող Փրանսական բանակ:

Ան կը պատասխանէ, «որովհետեւ նկատեցի որ բոլոր ալճերացի դեկավարները համաձայն էին իրարու հետ եւ հաւաքաբար ու կազմակերպուած կերպով կը պայքարէին իրենց գերիշխանութեան տիրանալու համար»:

Սակայն ինչ կերպով պէտք է կազմակերպել պայքարը, անհրաժեշտ է վառ պահել զայն ու հսկել անոր հետեւողականութեան վրայ:

Այս մասին գանազան աւիթներով արտայայտուած կարծիքները գրեթէ կը նոյնանան:

Սփիւռքի հայապահպանումը եւ հայուն պահանջատիրական դիրքաւորումը պէտք է կազմակերպուին ազգային-եկեղեցական-մշակութային հաստատութիւններու եւ քաղաքական կուսակցութիւններու դերակատարութեամբ:

Այս աշխատանքներուն համար հիմնական ազդակներ են եկեղեցին, դպրոցը, մամուլը, մշակոյթը եւ մեր քաղաքական կուսակցութիւնները:

Տրուած ըլլալով Լիբանանի իւրայատուկ աշխարհագրական դիրքը որ կը բացատրուի մեր հայրենիքին մօտ ըլլալու պարագայով, ինչպէս նաեւ այն իրողութեամբ որ ան շրջապատուած է մեր կրօնական տարբեր ըմբռնումներ ունեցող ժողովուրդներով եւ քաղաքական ներքին կառոյցքը հիմնուած համայնքային դրութեան վրայ որուն շնորհիւ կը պահենք մեր վարժարանները ուր կը գործադրենք պետական կրթական ծրագրի կողքին ազգային կրթական ծրագիր համաձայն մեր բաղձանքին, այս բոլորին համար ուրեմն Լիբանանի հայութիւնը կարեւոր դերակատարութիւն ունի հայապահպանման մեր ճիգերուն մէջ համասփիւռքեան մակարդակով:

Նախ ան արդարօրէն կը նկատուի արտասահմանի հայութեան սիրտը: Հոս է որ կը գտնուին բացի Էջմիածնէն, եկեղեցական եւ ազգային իշխանութեանց բարձրագոյն կեդրոնները իրենց դպրեվանքներով, եկեղեցիներով, քաղաքական կուսակցութիւններու վարիչ մարմինները համապատասխան կառոյցքով, ակումբներով եւ մամուլով, մշակութային միութիւններու կեդրոններ իրենց հրատարակչականով եւ մեր մտաւորականութեան կարեւոր մասը:

Աւելի քան 45 վարժարաններ հայ լինել եւ հայու դարաւոր իրաւունքներու տէր կանգնիլ կը սորվեցնեն 16.000 աշակերտութեան: Բողոքող բազմահազար մանուկներու շրթունքներուն վրայ ամէնօրեայ ժպիտ ու երգ է մեր լեզուն, աղօթք է մեր սուրբ հայրերուն կրօնը:

Հայ բնակչութիւնը ապրելով համախումբ եւ կազմելով երկրի ընդհանուր բնակչութեան 1/20ը, համեմատութիւն մը որ աշխարհի ոեւէ մէկ երկրի մէջ գոյութիւն չունի, նկատի առած Լիբանանի փոքր տարածութիւնը եւ բնակչութեան սահմանափակ թիւը, 3.100.000 , 10.452 ք.յ.ի վրայ (մինչ Ամերիկայի մէջ այս համեմատութիւնը 1/500է ցրուած, աւելի քան 9 միլիոն ք.ք.ի վրայ), թոյլ կու տայ իրեն պահել մեր լեզուն, ազգային ոգին, մեր տոհմիկ աւան-

դուլթիւնները, դարերէն եկող եւ սերունդէ սերունդ փոխանցուող մեր ապրելու յոյսը, գոյատեւելու կամքը ու կիրքը:

Լիբանանը մայր հայրենիքէն դուրս այն բացառիկ գաղութն է գոր կարելի է կոչել նաեւ արտաշխարհի հայութեան ճառագայթող օճախը: Անհրաժեշտ է ուրեմն որ ան յաւելեալ ջերմութիւն տայ եւ լոյս սփռէ մեր միւս գաղութներուն:

Ըսինք որ հայապահպանման գործը ամէնէն առաջ կը պահանջէ կազմակերպութիւն ապա գոհողութիւն ու պայքար: Լիբանանի դերակատարութիւնը այդ մարզերուն մէկ հետեւեալ կերպով կը յայտնաբերուի:

1- Եկեղեցական բարձրագոյն կեդրոնները կը պատրաստեն անհրաժեշտ հոգեւոր անձնակազմը արտասահմանի մեր եկեղեցիներու պայծառութեան համար որոնք պատմական իրողութեամբ եղած են ու կը մնան այն դարաւոր ու հաստաբուն հարստութիւնը որուն նուիրեալները հաւասարապէս մաքառած են կրօնի եւ հայրենիքի ազատութեան ու ապահովութեան համար եւ որուն բոցին մէջ ու կամարներու խորհուրդներուն ներքեւ միախառնած է ազգայինը եւ կրօնականը:

2- Հայագիտական բարձրագոյն հիմնարկները կը պատրաստեն կրթական մշակներ վարելու համար արտասահմանի մեր վարժարանները եւ մտաւորականներ՝ առաջնորդելու համար հայ կեանքը քանի որ մարդկային ոյժը ամենակարեւորն է մեր պայքարի դաշտին վրայ:

3- Մամուլը եւ հրատարակութիւնները կը ծառայեն արտասահմանի հայ կեանքի հետ հոգեկան կապեր հաստատելու եւ պատրաստելու ենթահողը մեր ազգային ձգտումներուն:

4- Մեր քաղաքական կազմակերպութիւնները որոնք մեր ազատագրական պայքարի առաջնորդներն ու մարտիկները հանդիսացան կրնան պատրաստել գործիչներ նուիրուելու համար արտասահմանի քարոզչական եւ կազմակերպական աշխատանքներուն:

5- Վերջապէս Լիբանանի յարաբերաբար ազատ միջավայրը թոյլ կու տայ մեր ազգային-եկեղեցական եւ քաղաքական ղեկավարութեան հետապնդելու հայ դատի աւրնչուած մեր ծրագրումներն ու գործունէութիւնը:

Արդարեւ 1983ի Յունուարին տեղի ունեցած ազգային ընդհա-

նուր ժողովը ի ներկայութեան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բոլոր թեմերու կրօնական եւ աշխարհական պատգամաւորներու ի շարս այոց պարտականութիւն տուաւ Ազգ. Կեդրոնական Վարչութեան նորընտիր քաղաքական ժողովին որպէսզի մասնաւոր կարեւորութեամբ զբաղի հայեցի դաստիարակութեան ու հայ ժողովուրդի մշակոյթի ծանօթացման եւ տարածման աշխատանքներուն համասփիւռքեան մակարդակով:

Նախորդ Ազգ. Կեդրոնական Վարչութիւնը նոյն մտածողութեամբ կազմակերպած էր արդէն հայերէն լեզուի, հայոց պատմութեան եւ հայ մշակոյթի նուիրուած 6 շաբթուայ դասընթացք Պիք-Փայայի դպրեվանքին մէջ: Ամերիկայի արեւելեան թեմէն 6 երիտասարդներ հետեւեցան այս դասընթացքներուն, յատուկ կրթական ծրագրի վրայ եւ առաջադրութեամբ դասախօսներու եւ մասնագէտ ուսուցիչներու: Դժբախտաբար Լիբանանի անապահով վիճակը չի թոյլատրեց որ աւելի մեծ թիւով երիտասարդներ օգտուին այս պատեհութենէն:

Ազգային Կեդրոնական վարչութիւնը, ներկայիս, իր մասնաւոր ուշադրութեան առարկան դարձուցած է այս հարցը: Ան կ'ուսումնասիրէ յատուկ դասագրքեր եւ քասէթներ պատրաստելու ծրագիր մը յօգուտ այն հայերուն որոնք դժբախտաբար կորսնցուցած են արտասահմանի մէջ, իրենց մայրենի լեզուին ծանօթութիւնն ու գործածութիւնը:

Այս հրատարակութիւններ կը հետապնդեն 2 նպատակ.–

1) Հայերէն սորվեցնել սփիւռքի այն հայերուն որոնք միայն օտար լեզուով կը հասկնան եւ կ'արտայայտուին:

2) Անոնց ծանօթացնել իրենց գործածած լեզուներով հայ մշակոյթի գանձերը:

Արդէն հրատարակուեցաւ երիտասարդ մտաւորական պ. Յ. Քիւրքճեանի կողմէ պատրաստուած դասագիրք մը որուն նպատակն է հայերէն սորվեցնել անգլիախօս երիտասարդներուն եւ չափահասներուն մակագրուած «ձեռնարկ հայերէն լեզուի»: Ասոր կ'ընկերանան 5 քասէթներ հնչաբանութեան ուսուցման համար որպէս անմիջական մեթոտ:

Կաթողիկոսարանը յաջորդաբար հրատարակեց ու կը շարունա-

կէ հրատարակել «հայագիտական հասկ» մեծածաւալ տարեգիրքը որուն շուրջ հրաւիրուած են համախմբուելու Վեհափառ Հայրապետի նախանձախնդրութեամբ գաղութիս գրեթէ բոլոր մտաւորականները առանց խտրութեան:

**Ջարեհ Եպս. Ազնաւորեանի** գլխաւորութեամբ եւ կազմակերպութեամբ տեղի ունցաւ Յ տարիէ ի վեր հայ մշակոյթի եւ հայ եկեղեցական պատմութեան նուիրուած դասախօսութիւններու շարք մը որոնք մեծ ունկնդրութիւն վայելեցին: Կը ծրագրուի համազարկով մակարդակով հայերէնի եւ հայոց պատմութեան ուսուցիչներ պատրաստել եւ արդէն իսկ ասպարէզի մէջ գտնուողներուն վերաորակաւորման դասընթացքներ կազմակերպել Անթիլիասի կամ Պիքֆայայի դպրեվանքին մէջ:

Կաթողիկոսարանը ինչպէս նաեւ զանազան հրատարակչականներ եւ մշակութային միութիւններ զնահատելի աշխատանք կը կատարեն հրատարակելով կամ վերահրատարակելով հայերէն գրքեր եւ զանոնք տարածելով սփիւռքի մէջ:

Ձեռներէցութեամբ եւ հովանաւորութեամբ Վեհափառ Հայրապետի, ամէն տարի կը կատարուի հայ գրքի օրը կաթողիկոսարանի մէջ ուր կը ցուցադրուին եւ գրասէր հասարակութեան կը ծանօթացուին բազմահարիւր նոր հրատարակութիւններ:

Մշակութային միութիւններ եւ քաղաքական կազմակերպութիւններ եռուն աշխատանք կը տանին Լիբանանի մէջ եւ զանազան առիթներով մտաւորականներ կ'ուղարկեն արտասահման հոն ուր պէտք է եւ կարելի է, դասախօսութիւններով եւ այլ ելոյթներով վառ պահելու համար ազգային ոգին եւ սերտացնելու համար միջհայկական յարաբերութիւնները սփիւռքի մէջ:

Վեհափառ Հայրապետը իր հովուապետական այցելութիւններով առաւել եւս կ'ամրապնդէ ժողովուրդին կապը իր եկեղեցոյ եւ ազգին հետ:

Բ.– Ի՞նչ կարելի է սպասել մեր հայրենիքէն սփիւռքի մեր գաղութներուն հայեցի դիմագիծի պահպանման համար:

Հայերնիքի դերակատարութիւնը անհրաժեշտ է մեր ազգային ձգտումներուն իրականացման տեսակէտէն: Ինչպէս զաւակ մը որը կը դառնայ առանց հօր, կամ մօր, նոյնպէս արտասահմանի հա-

յութիւնը ինքզինք որբացած պիտի գգայ եթէ ամբողջութեամբ կտրուի մայր հայրենիքէն:

Դարերու ընթացքին պայքարած ենք եւ այնքան ատեն որ մեր հողերուն վրայ կը գտնուէինք տոկացած ենք ամէն տեսակի վտանգներուն դէմ: Տեսած ենք աւերիչ եւ կործանարար յորձանուտներ, Լենկ Թիմուրներ, Ճենկիզ Խաներ, Այբ Ասլաններ, Օսմանցիներ: Մնացած ենք օտար ժողովուրդներու տիրապետութեան տակ, երբեմն երկար ժամանակով, սակայն մնացած ենք հայ որովհետեւ ունէինք նախ մեր հողը մեր ոտքերուն տակ ապա մեր աւանդութիւնները, մեր լեզուն, մեր կրօնը: Հողին ոյժը անգնահատելի է:

Սակայն արմատախիլ սփիւռքահայութիւնը, հեռու իր պատմական բնավայրէն կտրուած իր աւանդութիւններէն, իր լեռներու եւ անթնթախոր ձորերու խորհուրդներէն, առանց գոյութիւն ունեցող հայրենիքի մը իրականութեան իմաստ պիտի չունենար ու պիտի դատապարտուէր ստոյգ կերպով կորստեան: Արդարեւ, ինչպէս վերեւ ըսինք, սփիւռքը կը պահուի գոյութիւն ունեցող հայրենիքի մը համար ինչ ալ եղած ըլլայ անոր քաղաքական վարչաձեւը: Հայրենիքի գոյութիւնն է որ կ'իմաստաւորէ մեր բոլորիս ձգտումները, մեր պայքարը:

Սակայն ի՞նչ կարելի է սպասել մեր հայրենիքէն նկատի առած իր գոյութեան ներկայ պայմանները:

Հայրենիքը պէտք է խաղայ հոգածու մօր մը դերը հանդէպ արտասահմանի հայութեան: Պէտք է ինքզինքը տէր գգայ անոր եթէ նոյնիսկ իրաւական տեսակէտէ ի վիճակի չէ այդ ընելու քանի որ սփիւռքահայութիւնը կը պատկանի գանազան այլ հպատակութիւններու:

Հայրենիքը կրնայ, եւ արդէն իսկ կ'ընէ, մշակութային կապեր հաստատել արտասահմանի հայութեան հետ, ղրկել մտաւորականներ իր նուաճումները ծանօթացնելու եւ անով առաւել յոյս եւ հպարտութիւն ներշնչելու համար սփիւռքահայութեան եւ գօտեպնդելու գայն: Կրնայ ղրկել երգիչներ, երգչախումբեր, պարախումբեր վառ պահելու համար մեր տոհմիկ աւանդութիւնները եւ սէրը մեր մշակութային գանձերուն նկատմամբ: Պէտք է ղիւրութեամբ հիւրընկալել հայրենաբաղձերը, անոնք որոնք ծարաւն ու-

նին իրենց հայրենիքը ճանչնալու ոչ միայն գիրքերով ու պատմութեամբ այլ ներկայութեամբ մեր պատմական բնաշխարհին մէջ:

Մեծ թիւով հայ ուսանողներ եւ ուսանողուհիներ կը յաճախեն հայրենի համալսարանները: Ասիկա ինքնին գնահատելի օժանդակութիւն եւ ծառայութիւն մըն է սփիւռքահայութեան համար:

Չի մոռնանք որ մինչեւ 1958, արտասահման ունէ կապ չունէր մայր հայրենիքին հետ: Ան ամբողջութեամբ կղզիացած էր: 1936ին կազմակերպուած ներգաղթէն յետոյ որ տեղի ունեցաւ գլխաւորապէս Յունաստանէն, ունեցանք նաեւ մեր բոլորիս ծանօթ ներգաղթը 1946-47 տարիներուն: Սակայն մինչեւ 1958 ունէ անձի չի թոյլատրուեցաւ Հայաստան մտնել ինչպէս նաեւ ունէ մէկը չի կրցաւ դուրս գալ այն տեղէն: Մինչեւ իսկ հայրենիքի լուրերը շատ սահմանափակ կերպով կը ստանայինք արտասահմանի մէջ: 1958ին Աշոտ Այթունեանի երգի ու պարի անսամպլը կու գայ Եգիպտոս ապա Պէյրութ:

Այնուհետեւ բացուեցան մայր հայրենիքին դռները ընդունելու համար հայրենաբաղձ այցելուներ, իսկ աւելի ուշ, Հայաստանէն կրցան դուրս գալ, արտասահմանէն դրկուած հրաւերներու հիման վրայ հայաստանաբնակ հայեր այցելելու համար իրենց հարազատներուն, ինչպէս նաեւ հայրենի մտաւորականներ կենդանի կապ ստեղծելու համար հայրենիքին հետ:

Ուրեմն հայրենիքին եւ սփիւռքահայութեան յարաբերութիւնները սկսան մշակուիլ եւ զարգանալ 1958էն յետոյ միայն:

Աւելորդ չեմ գտներ հոս նկատել տալ որ հայրենի կապերը արտասահմանի հայութեան հետ ոչ միայն բաղձալի են այլ բարոյական պարտաւորութիւն են: Ճիշդ է որ արտասահմանի հայերը սովետական քաղաքացիներ չեն, սակայն իբրեւ բացարձակ մտածողութիւն, կարելի է ըսել որ անոնք սեռած ըլլալով նոյն ժողովուրդէն եւ ունենալով նոյն պատմական անցեալը կը պատկանին նոյն ազգին: Այնպէս ինչպէս ունէ այլ պետութիւն պարտաւոր կ'զգայ իր հպատակներուն Ֆիզիքական եւ կրթական ապահովութեամբը զբաղելու, երկրէն ներս թէ դուրս, նոյնպէս մեր հայրենիքը առնուազն բարոյական պարտաւորութիւն ունի, իբրեւ տէրը հայութեան, ընելու գոնէ այն ինչ որ հնարաւոր է ներկայ պայմաններուն մէջ սփիւռքահայութեան ազգային եւ կրթական ձգտումներուն

սատարելու համար: Այն ճիգը որ արտասահմանի հայութիւնը կը ցուցաբերէ իր ազգային դիմագիծը պահելու համար, կ'ընէ համոզումով, հաւատքով եւ գոհողութեամբ: Ան մասամբ հայրենի պետութեան դերը կատարած կ'ըլլայ այս գետնի վրայ ուր անկասկած բարոյական լուրջ պարտաւորութիւններ ունի կատարելիք հայրենիքը:

Օտար մեծ պետութիւններ շահադիտական գանազան հաշիւներէ թելադրուած, իրենց լեզուի եւ մշակոյթի տարածման եւ ծանօթացման համար վիթխարի յանձնառութիւններու տակ կը մտնեն, մեծ գումարներ կը ծախսեն, կրթական նպաստներ կը բաշխեն, օտարներուն ճրիաբար իրենց լեզուն կը սորվեցնեն, մանկավարժական արդի մեթոտներով, տեսողա-լսողական սարքաւորումներով, շարժապատկերներով, ձայներիզներով, եւ ինչու մեր հայրենիքը պիտի չընէր զայն իր ժողովուրդի բեկորներուն համար որոնց հաւաքական ճիգերը հայեցի դիմագիծի պահպանման տեսակէտէն տեղ տեղ անբաւարար են սպասուած արդիւնքը ձեռք ձգելու համար:

Ըմբռնելով հանդերձ մեր հայրենիքին գործնական դժուարութիւնները, կ'ակնկալենք որ ան կրթական եւ մշակութային գետնի վրայ աւելի դրական օժանդակութիւն բերէ նախ սփիւռքի եւ հայրենիքի կապերը ամրապնդելու տեսակէտէն ապա այս կամ այն ձեւով նեցուկ կանգնելու համար վերոյիշեալ մեր ընդհանրական ճիգերուն:

Վերջացնելու համար այս գրոյցը պիտի ուզէի ըսել որ սփիւռքի ազգային դիմագիծը կը դալկանայ ու կը դատապարտուի կորսուելու եթէ կազմակերպուած աշխատանք չի տարուի հայապահպանման եւ պահանջատիրական կալուածներէն ներս բան մը որուն ազգային եւ կուսակցական մարմինները լծուած են արդէն:

Իրագործելի աշխատանքին մէջ կարեւոր բաժին ունի լիբանանահայութիւնը քանի որ ան առանց յաւելեալ ճիգի կը վայելէ արդէն երկրին համայնքային կառույցին հետեւանքով յարաբերական ազատութիւններ որոնցմով անկաշկանդ կը վարէ իր ազգային կեանքը, կը պահէ իր վարժարանները ուսկից կրնան դուրս գալ ապագայ մտաւորականներ, գործիչներ լծուելու համար մեր ծրագիրներու իրագործման:



Հայրենիքի գոյութիւնը ինքնին մեր ազգային ձգտումները իմաստաւորող հաստատ կռուանն է:

Հայրենիք մը եւ քաղաքակրթութիւն մը ժողովուրդի մը մասնիկները իրարու միացնող աներեւոյթ կապեր են, անոր անցեալն ու ապագան են, անոր մեծութիւնն ու յոյսն են:

Անմահ է մարդկային այն ընկերութիւնը, կ'ըսէ պատմաբան մը, որ ունի հայրենիք եւ քաղաքակրթութիւն եւ որոնց էապէս կը հաւատայ ու կառչած կը մնայ:

Ահա այս տեսլականով կ'ակնկալենք որ մեր հայրենիքը շնորհիւ արտասահմանի հետ իր ունեցած մշակութային կապերու շարունակէ զարգացնել իր դերակատարութիւնը այն ճանապարհին վրայ որուն հորիզոնները, օր մը, մեր երազներու իրականացումով, պիտի միացնեն զինքը հայրենաբաղձ սփիւռքին ունենալու համար ամբողջական հայութիւն, մէկ ու ամբողջական հայրենիքով:

**ՀԱԿԻՐՃ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԱՐՉԱԳԻՏՈՒ-  
ԹԵԱՆ ԴԵՐԻՆ ՄԱՍԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՄԸ ԿԱՄ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՄԸ ԿԵԱՆՔԷՆ ՆԵՐՍ**

Ի՞նչ է վարչագիտությունը: Ի՞նչ պետք է հասկնալ վարչագիտու-  
թիւն յղացով վարչագիտութեան դերը հաստատութեան մը կեանքէն  
ներս:

Ա.– Գործունէութեան կազմակերպում:

- I) Կառոյցներու ճշդում – օրկանիկրամ
- II) Աշխատանքի կազմակերպութիւն
- III) Աշխատանքի նախաձրագրի պատրաստութիւն  
– բլանաւորում

Բ.– Հաստատութեան գործունէութիւնը:

- I) Հարցերու լուծում
- II) Որոշում առնելու եղանակը
- III) Փոխ-յարաբերութիւններ շրջապատին հետ  
եւ քարոզչական աշխատանք

Գ.– Հաստատութեան տնօրէնին կամ պատասխանատուին  
աշխատանքի դասաւորումը:

- I) Ժամանակի լաւագոյն օգտագործում  
եւ աշխատանքի մեթոտ
- II) Ժողովներ եւ հանդիպումներ  
Եզրակացութիւն

Դ.– Վարչական գիտելիքներու կիրարկում հայ կեանքէն ներս:

Հակիրճ ծանօթութիւններ վարչագիտութեան կարեւոր դերին մա-  
սին հաստատութիւններու կեանքէն ներս:

Վարչագիտութիւնը գանազան մեթոտներու համախմբում մըն է որոնց շնորհիւ, հաստատութեան մը մէջ, պատասխանատու մարմիններ կամ անձեր յանձնառութիւն կ'ստանձնեն իրենց տրամադրութեան տակ գտնուող միջոցներու, յատկապէս մարդկային ոյժի օգտագործումով, հետապնդելու եւ գործադրելու ծրագիրներ որոնք կը ձգտին առաջնորդել տուեալ հաստատութիւնը իր առաջադրած նպատակներու իրագործման:

Ան աւելի արուեստ մըն է քան թէ գիտութիւն մը ընդունելով հանդերձ որ օգտագործուած մեթոտներէն ոմանք ինչպէս աշխատանքի համակարգումը տնտեսական չափագիտութիւնը, (économetrie) ծրագիրներու ֆինանսաւորումը կը հիմնուին գոտ գիտական տուեալներու վրայ յատկապէս արդիւնաբերական մարզին մէջ:

Վարչագիտութեան մեթոտներու կիրարկումը կը պահանջէ որ ոեւէ մէկ հաստատութիւն, ընկերութիւն կամ կազմակերպութիւն ունենայ իր կանոնագրութիւնը (Statuts) որուն հետեւողութեամբ կը կազմուի իր իւրայատուկ կառոյցը (Structure)

## Ա.- Գործունէութեան կազմակերպում

I) Կառոյցներու ֆիզում – օրկանիկրամ

Պատասխանատու մարմինը կամ հաստատութեան տնօրէնը, իրագեկ ըլլալէ յետոյ միութեան կամ հաստատութեան կանոնագրին, անոր գործունէութեան դաշտին ու տարողութեան, անոր կոչումին եւ հետապնդման նպատակներուն, եթէ արդէն նախապէս կազմակերպուած չէ, կը ճշդէ անոր կառոյցները: Նայած հաստատութեան գործունէութեան ծաւալին եւ բնագաւառին կը մասնահատէ անոր աշխատանքը եւ գայն կ'օժտէ յատուկ սպասարկութիւններով որոնց վրայ կը նշանակէ պատասխանատուներ: Այսպէս, հաստատութիւնը կ'ունենայ վարչական, ելեւմտական, հաշուական, առողջապահական, յարաբերական, թեքնիք, արտադրողական եւ այլ սպասարկութիւններ:

Ամէն սպասարկութիւն իր կարգին, համաձայն գործի տարողութեան եւ պահանջներուն կը կազմակերպուի ու կ'ունենայ անհրաժեշտ պաշտօնէութիւնը եւ սարքաւորումը:

Իշխանութեան աստիճանական դասաւորումին համար պատասխանատու-մարմինը կամ տնօրէնը կը կազմէ օրկանիկրամը (organigramme) որ հաստատութեան մէկ մանրանկարն է որմէ երեւան կու գայ զանազան սպասարկութիւններու տեղը ընդհանուր կառուցքին մէջ եւ անոնց ենթակայութիւնը իրենցմէ գերիվեր հեղինակութեան մինչեւ որ հասնին տնօրէնին, գործադիր գերագոյն մարմնին, հոսկ ուրեմն ընդհանուր ժողովին:

Օրկանիկրամը ցոյց կու տայ ի յառաջագունէ թէ ամէն սպասարկութեան մէջ քանի պաշտօնեայի տեղ կայ, ինչ մակարդակով եւ ինչ պաշտօնով: Տնօրէնը կամ պատասխանատու-մարմինը ուշադիր կ'ըլլայ որ պաշտօնեայ մը պակսելու պարագային անմիջապէս ուրիշ մը գայ անոր տեղը, համաձայն օրկանիկրամին իսկ երբ օրկանիկրամին բոլոր պահանջներուն գոհացում տրուած է, նոր պաշտօնեաներ չեն վարձուիր առանց գործադիր գերագոյն մարմնին հաւանութեան:

## II) Աշխատանքի կազմակերպութիւն

Վարչագիտութեան կարեւոր դերերէն մէկը աշխատանքի կազմակերպութիւնն է: Արդարեւ աշխատանքի կազմակերպութիւնը վերջին 75 տարիներու ընթացքին բացառիկ կարեւորութիւն ստացաւ:

Մարդ կրնայ հարց տալ թէ որոնք են այս երեւոյթին խոր արմատները եւ թէ ինչու աշխատանքի կազմակերպութիւնը որուն սկզբունքները եւ հիմնական մեթոտները ոեւէ նոր գիւտի արդիւնք չեն, մասնագէտներու հետաքրքրութեան առարկան դարձած է եւ լայնածաւալ գրականութիւն յառաջ բերած է:

Բացատրութիւնը պէտք է փնտուել (թեքնիք) արհեստագիտական բնագաւառին զգալի յառաջդիմութեան մէջ որուն հետեւանքով այն եղաւ որ պզտիկ սահմանափակ տարողութեամբ միաւորներ տեղի տուին մեծ արդիւնաբերական խմբաւորումներու ուր մասնագիտութեան, մրցակցութեան, նախատեսութեան, համակարգումի հարցերը կենսական բնոյթ ստացան: Այսպէս աշխատանքի կազմակերպութիւնը որ կրնար մեծ կարեւորութիւն չունենալ փոքր արհեստանոցներու մէջ ուր ան կը կատարուէր աւանդական կառուցներով, հետզհետէ արժէք ստացաւ արդիւնաբերական վիթխարի խմբաւորումներու մէջ:

Թէյլոր (Tailor) որ կոչուած է հայրը աշխատանքի գիտական կազմակերպութեան, ցոյց կու տայ դարուս սկիզբը լոյս տեսած իր գրքին մէկ թէ ինչպէս իր առաջարկած աշխատանքի նոր կազմակերպութեամբ նոյն թիւով գործաւորներ 3 անգամ աւելի արդիւնք ցուցաբերած են:

Թէյլոր կը շեշտէ որ այս դարուս մէջ մարդիկ ոեւէ ատենէ աւելի իրարու կապուած են քանի իրագործումները կը կատարուին հաւաքական աշխատանքով գոր պէտք է կազմակերպել:

Ֆայոլ, (Fayol) Փրանսացի երկրաչափը գրեթէ նոյն բաները կ'ըսէ ու կը գործադրէ նոյն շրջանին եւ իր առաջարկած կազմակերպութեամբ 3 կամ 4 անգամ աւելի արդիւնք կը ստանայ:

Մարդիկ սակայն կը տարուին մտածելու որ արդեօ՞ք կազմակերպչական նոր մեթոտները գործաւորէն յաւելեալ աշխատանք ու յոգնութի՞ւն կը պահանջեն: Ըստ տրուած բացատրութիւններու հարցը միայն կազմակերպչական է: Գործաւորը նոյն յոգնութեամբ յաւելեալ արդիւնք կու տայ: Սկզբունքը կորսուած ժամանակները եւ աւելորդ շարժումները անհետացնել եւ միօրինակ շարժումներ յառաջացնել է: Նոյն մարդը նոյն շարժումները կ'ընէ եւ յաւելեալ թիւով արտադրութիւն կ'ապահովէ: Այլ խօսքով մարդը, ինքն ալ կը դառնայ մեքենայ եւ մեքենականացած հսկայ կառույցի մը մէկ մասնիկը:

Ի՞նչպէս այս նոր կառույցներու մէջ որոնք կը ձգտին առաւելագոյն արդիւնքներ ապահովել, կարելի պիտի ըլլայ պահպանել ամէն մէկ մարդու անհատականութիւնը եւ ազատութիւնը, պահելով հանդերձ հաւաքականութեան ուժականութիւնը: Այս ալ այլ հարց է որ առնչուած է աշխատանքի կազմակերպութեան բարոյական երեւոյթին որուն անհրաժեշտ է կարեւորութիւն տալ:

Ինչպէս տեսանք, աշխատանքի կազմակերպութիւնը ինքնանպատակ չէ, ան կը հետապնդէ յստակ հեռանկար: Անիկա արուեստ է եւ ոչ գիտութիւն: Ան կը շահագործէ տրամադրելի կորսուած միջոցները միայն առանց ծանրաբեռնելու աշխատաւորը: Նշանաւոր հեղինակ մը Միշէլ Քրոզէն (Michel Crosin) ըսած է. «Հաստատութիւնները իբրեւ որակ իրարմէ զանազանողը հոն կատարուող աշխատանքի կազմակերպութիւնն է»:

Որոնք են աշխատանքի կազմակերպութեան գլխաւոր սկզբ-  
բունքները

Աշխատանքի կազմակերպութեան գլխաւոր սկզբբունքները հե-  
տեւեալներն են.-

1) Կազմակերպել կը նշանակէ համակարգել

Այս երեւոյթը հիմնական է: Արդարեւ ոեւէ մեքենայ չի կրնար  
աշխատիլ, ոեւէ ապրող մարմին չի կրնար շարունակել գոյատեւել,  
ոեւէ մարդկային ընկերութիւն չի կրնար հաւաքական գործ կատա-  
րել եթէ իրենց տրամադրութեան տակ դրուած միջոցները չեն հա-  
մակարգուած իրենց գործունէութեան ծիրէն ներս որպէսզի բոլորը  
ձգտին նոյն եւ մէկ նպատակին:

Անշուշտ էական տարբերութիւն մը կը նշմարենք ապրող պա-  
տահական էակի մը եւ իրարու հետ գործակցող անձերու միջեւ:

Առաջինին պարագային եթէ մարմինը առողջ է կը նշանակէ որ  
անհամար քիմիական, բնախօսական, կենսաբանական, եւ Ֆիզիքա-  
կան գործընթաց մը կայուն հաւասարակշռութիւն կու տայ, այլ  
խօսքով ոեւէ խանգարիչ պատճառ մը անմիջապէս յառաջ կը բերէ  
համապատասխան հակազդեցութիւն: Վերահաստատելու համար  
հաւասարակշռութիւնը անհրաժեշտ է յաւելեալ ճիգ թափել:

Բայց մարդկային ընկերութեան մէջ պարագան նոյնը չէ որով-  
հետեւ մտքերու եւ կամքերու համակարգումը ոչ բնական է եւ ոչ  
անմիջական: Ընդհակառակը յաճախ երեւան կու գան տարակար-  
ծութիւններ, շահերու բաժանում, անհատական հաշիւներ որոնք կը  
ձգտին երկբեղկում յառաջ բերել խումբերու մէջ եւ ճիշդ անոր հա-  
մար անհրաժեշտ են իշխանութիւնը, օրէնքը, կարգ կանոնը նաեւ  
օրինազանցերու նկատմամբ համապատասխան պատիժներ: Արդա-  
րեւ մարդկային ընկերութեան մէջ համակարգումի պակասը յառաջ  
կը բերէ անհաւասարակշռութիւն, ցնցում եւ վնասակար հետե-  
ւանքներ: Խոլսափելու համար այդ բոլորէն անհրաժեշտ է որ ընկե-  
րութիւններ եւ հաստատութիւններ օժտուին վարչական կազմա-  
կերպութեամբ, կարեւորութիւն տրուի մարդոց ընտրութեան եւ  
աշխատանքը պէտք է տնօրինուի խելացի եւ պատշաճ եղանակով:

2) Կազմակերպել կը նշանակէ նախատեսել

Այս երկրորդ գաղափարը մեծ կարեւորութիւն ստացաւ աշխա-

տանքի արդի կազմակերպութեան մէջ: Արդարեւ ճարտարարուեստը կը պահանջէ որ աշխատանքի բոլոր ծրագիրները գործադրութեան դրուելէ առաջ քննուին յատուկ գրասենեակներու կողմէ եւ բլանաւորուին իրենց ամենայետին մանրամասնութիւններուն մէջ:

Նախատեսութիւնները այսօրուրնէ ցոյց կու տան վաղուայ դժուարութիւնները եւ առիթ կու տան որ անհրաժեշտ միջոցառումները նկատի առնուին կանխելու համար ամէն անհաճոյ անակընկալ:

Նաբոլէոն ըսած է. «Մարդոց 3/4ը կարելոր գործերով կը զբաղին այն ատեն միայն երբ պէտքը կը զգան անոր, երբ արդէն ուշ է»:

Նախատեսութիւնը անհրաժեշտ է ամէն մակարդակի վրայ: Եթէ կ'ուզէք ընկերութեան մը կազմակերպութիւնը չափել, դիտեցէք թէ որ չափով ան ճշգրիտ է իր աշխատանքին մէջ, լաւ գործածութեամբ իր նախատեսութիւններուն:

Նախատեսութիւնները տեղ պէտք է գտնեն բլանաւորումի, պիւտճեակի անհրաժեշտ, շուկայի ուսումնասիրութիւններու տնտեսական պայմաններու եւ այլ բնագաւառներու մէջ:

3) Կազմակերպել կը նշանակէ ընտրել գլխաւորաբար երկու անյարմարութիւններու, այլ իստով երկու անպատեհութիւններու միջեւ:

Այս բացատրութիւնը իմաստութիւն եւ համեստութիւն կը պարունակէ:

Պէտք է գիտնալ որ իտէալ ընտրութիւն մը չկայ որ ամէն կէտերու մէջ ալ ենթակային շահ ապահովէ: Դժուարը չափելն է ներկայացուած գանազան առաջարկներուն առաւելութիւններն ու թերութիւնները:

Ընտրութեան այս արուեստը, յատկապէս ճարտարարուեստի պարագային վերածուած է ներկայիս գիտութեան որ կը կոչուի «Recherche opérationnelle» եւ որուն իրական անունը պէտք է ըլլայ որոշումներու եւ ընտրութեան գիտական պատրաստութիւն: Անով կարելի է յարմարագոյն ընտրութիւնը ընել դժուար եւ բարդ հարցերու միջեւ: Ասիկա գուտ մաթեմատիկական հաշիւներու վրայ հիմնուած գնահատում մըն է որ կրնայ վստահաբար գործատիրոջ ցոյց տալ լաւագոյն ընտրութիւնը:

III) Աշխատանքի նախաձրագրի պատրաստութիւն – բլանաւորում

Պատասխանատու մարմինը կամ տնօրէնը կը պատրաստէ գործունէութեան նախաձրագիրը եւ բլանաւորումը գորս կը ներկայացնէ իր գերադաս մարմնին առ ի քննութիւն եւ վաւերացում:

Ներկայացուած նախաձրագիրը կ'ընդգրկէ հաստատութեան ներկայ եւ ապագայ գործունէութեան նախագիծը որ կը ձգտի իրագործել 3 թիրախներ:

1) Կան ծրագիրներ որոնք կը վերաբերին հաստատութեան գործունէութեան ընդարձակումին եւ ծաղկումին, հետեւաբար կ'ենթադրեն նիւթական եւ մարդկային ոյժի նոր ներդրումներ:

Այս ծրագիրները պատրաստութիւնը կը կարօտի երկար ժամանակամիջոցի (1-2 տարի) որովհետեւ անհրաժեշտ են մասնագիտական ուսումնասիրութիւններ եւ հետազօտութիւններ:

2) Կան ծրագիրներ որոնց նպատակն է, սեմինարական աշխատանքներով եւ խորհրդակցութիւններով որոնել նոր ռազմավարութիւն բարելաւելու համար հաստատութեան գործընթացը եւ գայն դարձնելու համար աւելի արդիւնաւետ: Ասոնց պատրաստութիւնը եւս կը պահանջէ որոշ ժամանակամիջոց բայց աւելի սահմանափակ, 4-5 ամիս առաւելագոյն 1 տարի:

3) Եւ վերջապէս կան ընթացիկ աշխատանքի կապուած թիրախներ որոնք կը ներկայացնեն առնուած որոշումներու գործադրութիւնը եւ անոնց բարւոք իրականացումը:

Պատասխանատու մարմնին կամ տնօրէնին պարտականութիւնն է ուրեմն հսկել որ իր տրամադրութեան տակ դրուած մարդկային ոյժով, գործամիջոցներով, աշխատանքի մեթոտներով, հաստատութեան կառույցները մնան գործօն, հետապնդելու համար վերոյիշեալ 3 թիրախները եւ առաջնորդելու համար գայն իր նպատակներուն իրագործման:

Սակայն ինչ կը նշանակէ բլանաւորել: Ե՞րբ հաստատութեան մը գործը բլանաւորուած կը նկատուի:

Բլանաւորել կը նշանակէ կանխաւ որոշել թէ ինչ պէտք է կատարուի, ինչպէ՞ս, ե՞րբ եւ որո՞ւ կամ որոնց կողմէ: Բլանաւորումը թոյլ կու տայ որ յարաբերականութիւն մը գոյութիւն չ'ունենայ



ներկայ իրավիճակին եւ ակնկալուած նոր կացութեան միջեւ: Ան թոյլ կու տայ նաեւ կատարել իրագործումներ որոնք առանց բլանաւորումի կրնային չըլլալ:

Ճիշդ է որ բոլոր բլաններն ալ իրագործման ընթացքին կրնան խոչնդոտներու հանդիպիլ, սակայն բլանի բացակայութիւնը աւելի վատ անդրադարձներ կրնայ ունենայ հաստատութեան կեանքին մէջ, քանի գործը կը ձգուի բախտի, պատահականութեան:

Բլանաւորումը կը պահանջէ որ յստակ ուղղութիւններ ճշդուին իբրեւ գործընթաց եւ թէ որոշումները հիմնուին հետապնդելի նպատակներու, ծանօթ իրողութիւններու եւ կարելի միջոցներու վրայ:

Բլան մը գործնական է երբ հետապնդուած նպատակները յստակ են եւ իրական: Հետապնդուած նպատակները պէտք է ծրագրուին ի մտի ունենալով հաստատութեան տկար եւ զօրաւոր կէտերը:

Բլանաւորումը պէտք է դիւրացնէ հաստատութեան մը հետապնդած նպատակներու իրագործումը:

Բլան մը գոյութիւն ունեցած կ'ըլլայ հաստատութեան մը մէջ երբ անոր ընդունման մասին որոշում կայացած է պատասխանատու մարմնին կողմէ: Շատ մը կազմակերպութիւններ կը կարծեն որ աշխատանքի բլան ունին երբ իրենց տրամադրութեան տակ բլանի ուսումնասիրութիւններ կան միայն:

Բլանաւորումին պէտք է ընկերանայ հակակշիռը, հետապնդումը: Չկայ օգտակար բլանաւորում առանց հակակշիռի: Վարչագիտութեան մէջ բլանաւորում եւ հակակշիռ գուգահեռ կ'ընթանան:

Արդարեւ աշխատանք մը որ բլանաւորուած չէ, կարելի չէ գայն հակակշռել, քանի որ հակակշիռը կ'ենթադրէ որ աշխատանքը կատարուած ըլլայ սահմանուած ժամանակամիջոցի մէջ, նախատեսուած ձեւով:

Այս բոլորին հետ, ներկայ գիտութիւնը կը յանձնարարէ որոշ ճկունութիւն որպէսզի երբ գործունէութեան ընթացքին սխալներ նշմարուին կարելի ըլլայ զանոնք սրբագրել: Վերջին հաշուով մարդիկը կը կառավարեն բլանը եւ ոչ թէ հակառակը:

Ամփոփելով այս գլուխը կ'ուզեմ յիշել նշանաւոր մասնագէտ եւ հեղինակ Մարսէլ Բուարիէն (Marcel Poirrier) որ կ'ըսէ այս մասին. «առանց բլանաւորումի կազմակերպութիւն մը կամ հաստատու-

Թիւն մը կը նմանի նաև ու մը որ դեկ չունի: Առանց բլանաւորումի կազմակերպութիւնը տեղ չհասնիր որովհետեւ մարդիկ չեն գիտեր անոր ճշգրիտ թիրախը եւ ուղեգիծը»:

Բլանները կրնան հաստատութեան ընդհանուր գործունէութիւնը ընդգրկող երկարաշունչ բլաններ ըլլալ ինչպէս նաեւ կարճ ըլլալ աւելի ստորադաս մակարդակներու վրայ: Մէկը միւսը չի խաչաձեւեր: Կարելորը գործունէութիւնը պէտք է կազմակերպել համաձայն համապատասխան բլանաւորումի որուն հետեւանքով վերջ կը տրուի յաճախակի փոփոխութիւններու եւ անորոշութեան, պատասխանատուներուն ուշադրութիւնը կը կեդրոնացուի նպատակակէտներու վրայ, խնայողութիւն կ'ըլլայ եւ վերջապէս գործունէութիւնը աւելի հեզասահ կերպով կը հակակշռուի:

#### Բ. Հաստատութեան կամ կազմակերպութեան գործունէութիւնը

##### 1) Հարցերու լուծում

Ուէլ հաստատութիւն անկասկած կրնայ հարցեր ունենալ եւ այդ շատ բնական երեւոյթ է: Հարց յառաջ կրնայ գալ ընդհանրապէս երբ հաստատութիւնը վնասելու ընթացքին մէջ կը գտնուի:

Պատասխանատու մարմինն կամ տնօրէնին դերը հարցերը նախ դասաւորել է ըստ անոնց կարելորութեան հաստատութեան շահերուն նկատմամբ: Յետոյ, կացութեան վերլուծումով, իրական հարցը երեւան հանել է ստեղծուած իրավիճակի մէջէն:

##### Օրինակ. Ի՞նչ է ճիշդ խնդիրը

Ի՞նչ է անոր ծաւալը, տարողութիւնը

Ի՞նչ կրնան ըլլալ անոր հետեւանքները

ո՞վ ինդրոյ առարկայ է, ե՞րբ, ո՞ւր, ինչպէ՞ս, ինչո՞ւ

Ի՞նչ յաւելեալ տեղեկութիւններ պէտք է նկատի ունենալ

Առաջին անգամ պէտք է հարցին իրական պատկերը երեւան բերել: Գտնել բուն պատասխանատուները, դերակատարները, ճշդել անոնց պատասխանատուութիւնը:

Ուրեմն հետեւալ 3 սկզբունքներէ պէտք է մեկնիլ հարցի մը պատճառը գտնելու համար.

##### 1) Փնտռել պատճառները, բացատրութեամբ

2) Չմոռնալ որ հարց մը կրնայ բազմաթիւ պատճառներ ունենալ

3) Փնտռել ամենակարեւորը եւ ջանալ ազդել անոր վրայ

Պէտք է գգուշանալ.-

- Արագ որոշում առնելէ

- Ունէ մէկ ձեւով եզրակացութեան յանգելէ

- Իսկ երբ որոշում պիտի առնուի, պէտք է ճշդել սրբագրութեան, աշխատանքի գործընթաց մը

- Առնուած որոշումները երբ գործադրութեան պիտի դրուին պէտք է որ անոնք ծրագրուած ըլլան

- Պէտք է հիմնուիլ զօրաւոր կէտերու վրայ

- Աշխատանքը բլանաւորել

- Գործածել ի հարկին փոքրիկ քայլերու քաղաքականութիւնը

- Շահագործել առիթները

- Գիտնալ որ կարելի է սխալիլ

- Հետամուտ ըլլալ կատարելագործումի քաղաքականութեան

II) Որոշում առնելու եղանակը

Պատասխանատու մարմինն կամ տնօրէնին գործունէութեան մաս կը կազմէ որոշում առնելը: Արդարեւ կառավարել կը նշանակէ յարմարագոյն որոշումը առնելու արուեստը գիտնալ:

Որոշումներուն տուն տուող պատճառները երկու տեսակ են:

Որոշումներ կան որոնք հիմնական ուղղութիւններ ճշդող որոշումներ են. օրինակի համար, ուսումը շարունակելու, ասպարէզ ընտրելու, բնակավայր փոխելու, աշխատանքի եղանակը կամ ժամանակամիջոցը փոխելու, գործը փոխելու որոշումներ:

Որոշումներ կան որոնք գործի ընթացքին ստեղծուած դժուարութիւնները հարթելու, հարցերը լուծելու կամ եղած առաջարկներու մէջ լաւագոյնը ընտրելու որոշումներ են: Այս կարգի որոշումներ առնելը յաճախ կը ներկայանայ տնօրէնին:

Որոշում առնելու եղանակը նոյնպէս երկու տեսակ է: Կան որոշումներ որոնք կ'առնուին հիմնուած օրէնքներու, կանոնագրութեանց եւ ականդական սովորոյթներու վրայ եւ կան որոշումներ որոնք կ'առնուին հիմնուած անձնական փորձառութեան եւ դատողութեան վրայ: Տնօրէնի մը մշակուած ըլլալը, բազմակողմանի

զարգացում ունենալը մեծապէս կը նպաստէ այս կարգի որոշումներու պարագային:

Գործի ընթացքին ստեղծուած հարցերու նկատմամբ առնուելիք որոշումները կը պահանջեն նաեւ շրջահայեցողութիւն եւ մեթոտ:

Որոշել կը նշանակէ ընտրել լաւագոյնը առաջարկուած կամ նկատի առնուած բազմաթիւ լուծումներու մէջ կարենալ իրագործելու համար հետապնդուած նպատակը:

Սակայն, ինչպէս բոլորս ալ գիտենք, կարծուածին չափ ալ դիւրին չէ ընտրելը: Յաճախ հարցերը յստակ կերպով չեն ներկայանար եւ առիթ կու տան շփոթի: Ասոր համար ուղիղ որոշում մը առնելու համար պէտք է հետեւիլ գործընթացի մը որ 6 հանգրուաններէ կը բաղկանայ:

1.- Հարցը լաւ հասկնալ:

Այս կը նշանակէ որ պէտք է լաւ վերլուծել կացութիւնը, գատորոշել հականը երկրորդականէն: Առ հասարակ հարցերու մէկ կարեւոր մասը սխալ հասկացողութենէ յառաջ կու գայ: Պէտք է գործածել ինչո՞ւ հարցականը: Այս հարցումով կը մօտենանք խնդրին իրական արմատներուն: Պէտք է քննել հարցին կապը հաստատութեան գործունէութեան հետ որպէսզի ոեւէ մէկ բարեփոխութեան պարագային չստիպուինք նոր հարցեր ստեղծելու:

2.- Պէտք է լաւ գիտնանք մեր հետապնդած նպատակը եւ մեր թիրախները: Ոեւէ ատեն իրարու հետ անկապակից եւ աններդաշնակ թիրախներ պէտք չէ գուգահեռաբար հետապնդել:

3.- Պէտք է ընտրենք համաձայն որոշ չափանիշի որպէսզի գիտնանք թէ մեր հետապնդած նպատակը ինչ արժէք կը ներկայացնէ:

4.- Պէտք է նկատի ունենալ կարելի բոլոր լուծումները, ցանկագրել զանոնք, նոյնիսկ անոնք որոնք հակառակ են ընթացիկ սովորութիւններու: Պէտք է տեսնել թէ ուրիշներ ինչ ըրած են նմանօրինակ պարագաներու մէջ: Պէտք է գնահատել ամէն մէկուն նիւթական եւ բարոյական անդրադարձները հաստատութեան վրայ ինչպէս եւ առաւելութիւնները:

5.- Գնահատել մարդկային ոյժը, հաստատութեան սարքաւորումները, մեքենակազմը, նիւթական կարելիութիւնները:

6.- Առնել վերջապէս յարմարագոյն որոշումը, այսինքն ան որ կը ծառայէ լաւագոյնս մեր նպատակին իրագործման:

Եթէ վերոյիշեալ բոլոր կէտերը նկատի առնուած են, ընտրութիւնը հեշտ կը դառնայ եւ որոշումը կը հաղորդուի առ որ անկ է առ ի գործադրութիւն:

Պէտք է սակայն միշտ ի մտի ունենալ որ ընտրուած միջոցառումները համապատասխան ըլլան հետապնդուած թիրախին:

Բոլոր հաստատութիւններու մէջ ալ կարելի չէ բացարձակապէս ճիշդ նախատեսութիւններ ընել: Երբեմն լուրջ հարցեր կրնան ծագիլ: Տնօրէնը պարտաւոր է համապատասխան որոշումներ առնել: Բայց որպէսզի այդ որոշումները հեզասահ կերպով գործադրուին, օգտակար է որ տնօրէնը հաղորդէ գանձնք իր մեծաւորներուն, տնօրէն խորհուրդին որոնց կարծիքը կ'առնէ ապա գործադրութեան դնելէ առաջ կը բացատրէ իր ստորադասներուն առնուած որոշումներուն օգտակարութիւնը:

Երբեմն առնուած որոշումները սխալ եւ վնասակար հետեւանքներ կրնան ունենալ: Այդ կը նշանակէ որ որոշումները ճիշդ չեն, պէտք է հետեւաբար բարեփոխել գանձնք եւ սրբագրել:

Ամփոփելով ըսնեք որ պատասխանատու մարմին մը կամ տնօրէն մը երբ որոշում կ'առնէ նկատի կ'ունենայ ի հարկին տիրող օրէնքները, իր տրամադրութեան տակ գտնուող գործամիջոցները, շահագրգրեալ անձերուն տեսակէտները, հաստատութեան հետապնդած թիրախները եւ անոր գերագոյն շահը:

Որոշումը տրամաբանական գործընթացի մաս կը կազմէ: Անոր պէտք է հետեւի սակայն գործադրութիւնը որմէ յետոյ անհրաժեշտ է նաեւ հսկողութիւն անոր ուղիղ եւ անթերի կիրարկումին վրայ ի հարկին պատժամիջոցները նախատեսելով անսաստողներուն:

Պատասխանատու մարմին մը կամ տնօրէն մը երբ կը նկատէ որ որոշումի մը գործադրութիւնը գանազան պատճառներու հետեւանքով պիտի չկիրարկուի, աւելի լաւ է որ այդ որոշումը չ'առնէ որպէսզի իր հեղինակութիւնը խնդրոյ առարկայ չդառնայ որովհետեւ որոշում մը որ առնուած է եւ չէ գործադրուած անիմաստ է, բացի դատական հարցերու պարագային: Որոշումը ինքնանպատակ չէ:

III) Փոխ-յարաբերութիւններ շրջապատին հետ եւ քարոզչական աշխատանք

Գործին ընթացքը կը պարտադրէ որ տնօրէն մը կամ պատասխանատու մարմին մը առօրեայ հաղորդակցութեան մէջ մտնէ իր շրջապատին հետ ըլլայ այդ իր գործակիցներուն եւ կամ ըլլայ օտարներուն հետ:

Իր առօրեայ աշխատանքը կը պահանջէ որ իրագէկ ըլլայ հաստատութիւնը շահագրգռող նորութիւններու մասին եւ մանաւանդ հաստատութեան կարեւոր սպասարկութիւններու գործունէութեան մասին:

Նախօրոք ճշդուած ժամերուն կ'ընդունի կարեւոր պատասխանատուները, եթէ ոչ ամէն օր գոնէ շաբաթը անգամ մը, ոմանք ամիսը անգամ մը, որպէսզի գրաւոր կամ բերանացի ամփոփ գեկոյց մը ունենայ հաստատութեան ելեւմուտքին, սնտուկի կացութեան, ընդհանուր գործառնութեան եւ այլ կարեւոր հարցերու մասին:

Կ'որոշէ յանձնախմբային ժողովներ, սեմինարներ, այն հարցերուն համար որոնք հաւաքական ուսումնասիրութիւն կը պահանջեն: Կ'ստանայ գործունէութեան կիսամեայ կամ տարեկան տեղեկագիր գլխաւոր սպասարկութիւններէն եւ իր կարգին կը փոխանցէ նոր հրահանգներ առ որ անկ է, ընդհանուր քարտուղարի միջոցաւ:

Ընդհանուր քարտուղարը կամ ատենադպիրը որ կը հսկէ առ հասարակ բոլոր անցուղարձերուն զինքը տեղեակ կը պահէ օրը օրին, իր հասողութեան տակ եղած հարցերէն:

Տնօրէնը կամ հաստատութեան պատասխանատուն պէտք ունի ուրեմն հաղորդակցութեան մէջ մնալու գործերուն առնչակից մարդոց հետ: Ունի ըսելիքներ եւ լսելիքներ:

Երբ ի պաշտօնէ, մարդոց հետ պիտի խօսի, անհրաժեշտ է նկատի ունենալ հետեւեալները.

- Ի՞նչ մակարդակի մարդու հետ է իր խօսակցութիւնը

- Ո՞րչափով խօսակից անձը տեղեակ է արծարծուած հարցին մասին

- Ո՞րչափով շահագրգռուած է հարցով

Այս հարցումներու պատասխանէն կախում ունի իր խօսելու եղանակը: Պէտք է խօսի՝

*Սովորակա՞ն լեզուով թէ մասնագիտական ոճով:*

*Խօսակցութեան մէջ կարելի եղածին չափ պէտք է յստակ ըլլալ: Ոեւէ բացատրութիւն որ կը տրուի տրամաբանական հիմք պէտք է ունենայ: Օգտակար է խօսակցութիւնը զարգացնել աստիճանաբար, մէկ մակարդակէն միւսը, որովհետեւ բազմաթիւ հարցեր յըստակ թուելով տնօրէնին կրնան ծանօթ չըլլալ խօսակիցին:*

*Ապահով ըլլալ որ խօսակիցը լաւ հասկցած է իր ըսածը: Ասոր համար կարելի է հարցումներ ուղղել խօսակիցին եւ մղել գայն որ բացատրութիւններ պահանջէ ի հարկին:*

*Ամէն մէկ հարցի համար խօսիլ առանձնաբար: Չխօսիլ բազմաթիւ հարցերու մասին միատեղ:*

*Շատ կարեւոր է տնօրէնի մը համար մտիկ ընել գիտնալ: Լաւ մտիկ ընել կը նշանակէ առժամաբար մոռնալ անձնական տեսակէտը եւ փորձել մտնել խօսակիցին տրամաբանութեան մէջ:*

*Խօսակցութեան մը ընթացքին երբ երկար է նիւթը, պէտք է մերթ ընդ մերթ ճշդել եւ ամփոփել ըսուածը առանց գայն փքացնելու կամ նոսրացնելու: Յստակացնել մութ կէտերը ապա շարունակել:*

*Խօսելու պահուն պէտք է վստահ ըլլալ որ խօսակիցը կը լսէ ըսուածը: Պէտք է զգուշանալ միայլար եւ միօրինակ խօսակցութենէն որ ձանձրացուցիչ է:*

*Ձայնի եւ խօսքի հակակշիռին պէտք է ընկերակցի նայուածքը: Նայուածքը կապն է երկու խօսակիցներուն: Ան կշիռք կու տայ հաղորդակցութեան: Նայելով կարելի է զգալ դիմացինին դէմքին վրայ ուրուագծուող արտայայտութիւնը, յետոյ ան կ'ստիպուի լրջութեամբ հետեւիլ:*

*Կարեւոր է նաեւ հագուածքը որ պէտք է համապատասխան ըլլայ պարագաներուն:*

*Տնօրէնին կամ պատասխանատու մարմնին այս յարաբերութիւնները մշակելու պատասխանատուութիւնը կրնայ ի հարկին յանձնել յարաբերական յանձնախումբի մը նշանակուած պատասխանատու մարմնին կողմէ որ համաձայն տնօրէնին կամ վարչութեան առած որոշումներուն կապ կը հաստատէ այլ հաստատութիւններու պատասխանատուներուն կամ բացառիկ անձնաւորութիւններու հետ անոնց հետաքրքրութիւնը հրաւիրելու եւ ի հարկին*

անոնց օժանդակութիւնը հայցելու համար ի խնդիր կազմակերպութեան կամ հաստատութեան ծրագրած գործունէութեան յաջողութեան:

Յարաբերական յանձնախումբը, ամէն գործունէութենէ առաջ, պարտի ճշդել իր ուզածը եւ իր ընելիքը: Իր խօսակցութիւնները պէտք է ընդգրկեն այնպիսի ծաւալներ որոնք իրենց նիւթէն դուրս են: Իր ներկայացուցչական հանգամանքը նկատի ունենալով, յանձնախումբը պէտք է բաղկանայ անձերէ որոնք կարելի չափով լայն ծանօթութիւններ ունենան օտար շրջանակներու հետ եւ որոնց բարեհամբոյր արտայայտութիւնը հաղորդականութիւն ստեղծէ խօսակիցին մօտ:

Յարաբերական յանձնախումբը պարտի տեղեկագրել իր տեսակցութիւններու արդիւնքի մասին իրեն պարտականութիւն տուող պատասխանատու մարմնին:

#### **Գ.- Հաստատութեան տնօրէնին կամ պատասխանատու անձին աշխատանքի դասաւորումը**

1) Ժամանակի լաւագոյն օգտագործում եւ աշխատանքի մեթոտ

Տնօրէն մը կամ պատասխանատու անձ մը իր ժամանակը արդիւնաւէտ կերպով կ'օգտագործէ հետեւեալ մեթոտով

1) Գործերու եւ ժամադրութիւններու առաջնահերթութիւնը ճշդել համաձայն անոնց կարեւորութեան հաստատութեան շահերուն կապակցութեամբ:

2) Ամէն երեկոյ տուն երթալէ առաջ թուղթի վրայ պատրաստել յաջորդ օրուայ աշխատանքի ծրագիրը:

Տուն մեկնելէ առաջ, արագ ակնարկով, վերլուծել ինչ որ կատարուած է օրուայ մէջ եւ ինչ որ պէտք էր կատարուել եւ չէ եղած ապա նախատեսել յաջորդ օրուայ աշխատանքի ծրագիրը:

3) Օրուայ ժամանակացոյցին մէջ զանազանութիւն դնել: Առիթ տալ որ միջոց ըլլայ անակնկալ հարցեր քննելու եւ կամ այցելուներ ընդունելու:

4) Կարելի եղածին չափ թուղթերով չխճողել աշխատանքի սեղանը: Պէտք է փճացնել աւելորդ թուղթերը եւ դասաւորել մնացեալը: Ոեւէ հարցի մասին երբ նոր գաղափար մը յղացուի, օգտակար է



զայն արձանագրել եւ դասաւորել համապատասխան թղթածրարին մէջ:

5) Տնօրէնները կամ պատասխանատուները առ հասարակ իրենց ժամանակին 30% ժողովներով կամ տեսակցութիւններով անցնելով, անհրաժեշտ է որ անոնք արդիւնաւէտ ըլլան:

Պէտք է խուսափիլ անիմաստ ժողովներէն: Ժողովը պէտք է ծրագրուի, օրակարգը պատրաստուի եւ ուսումնասիրուի նախքան ժողովի դրուիլը: Ժողովի սկիզբի եւ վերջաւորութեան ժամերը պէտք է ճշդուին եւ յարգուին: Տնօրէնը կամ պատասխանատուն պարտի ճիգ թափել որ ժողովը եզրակացութեան յանգի քննուած առարկաներու կապակցութեամբ:

6) Տնօրէն մը կամ պատասխանատու մը պէտք է գիտնայ ի հարկին ոչ ըսել երբ դիմում մը ընդունելի չէ: Այդ ոչը հարցը ներկայացնող անձին դէմ չէ բնականաբար այլ հաստատութեան շահերուն նախանձախնդրութեամբ առնուած որոշում մըն է:

7) Պէտք է յարգել ուրիշներուն ժամանակը եթէ կ'ուզենք որ անոնք ալ յարգեն մեր ժամանակը: Ժամանակը հաստատութեան շահերուն կապուած արժէք մըն է որուն պէտք է կարեւորուն տալ: Պէտք է գայն լաւ օգտագործել ընդունելով հանդերձ որ գործի պահերէն դուրս հանգիստի եւ հաճոյքի պահերն ալ հարկաւոր են առողջութեան եւ նոյնիսկ յաջորդ օրուայ գործին համար:

8) Պէտք է կատարելագործել իր կարողութիւնները ընթերցանութեամբ, հետաքրքրութիւններով, խօսակցութեամբ, ճամբորդութեամբ:

9) Վերջապէս, պէտք է գիտնալ իշխել ժամանակին վրայ եւ թոյլ չտալ որ ժամանակը պատահմունքներու ազդեցութեամբ մեզ դասաւորէ մեր չնախատեսած փոփոխութիւններու վրայ:

## II) Ժողովներ կամ հանդիպումներ

Պատասխանատու մարմին մը կամ տնօրէն մը ժողովներ կը կազմակերպեն ծրագրելու համար գործունէութեան նախագիծ մը, քննելու եւ վերլուծելու համար կատարուած աշխատանքները, հարցեր լուծելու, ուղղութիւններ ճշդելու եւ որոշումներ կայացնելու համար ի խնդիր հաստատութեան հետապնդած նպատակներու իրականացման:

Պատասխանատու մարմինը կամ տնօրէնը կը պատրաստեն օրակարգը: Համաձայն ժողովականներու կարելիութեան եւ քննելի հարցերու պահանջքին, կը ճշդէ օրը, ժամը, վայրը:

Համաձայն հաստատութեան կանոնագրութեան կամ սովորութիւններուն, ժողովի հրահրագիրին կ'ընկերանան արձանագրուած օրակարգերու թղթածրարը եւ այլ վաւերագրեր եթէ կան՝ առնուազն ժողովէն քանի մը օր, կամ քանի մը շաբաթ, երբեմն ամիս մը առաջ:

Ժողովին ատենապետը կամ պատասխանատու մարմինը պարտի ժողովէն առաջ օրակարգի վրայ արձանագրուած նիւթերու կապակցութեամբ լուսաբանութիւններ ունենալ որպէսզի յատակ ըլլայ իրեն, թէ ժողովին ինչ ուղղութիւն պէտք է տրուի: Այն ժողովը որուն օրակարգի նիւթերը նախապէս ուսումնասիրուած չեն, կրնայ օգտակէտ չըլլալ որովհետեւ ակնկալուած լրջութեամբ եւ խորացումով հարցերը չեն լուծուիր:

Ժողով մը օրինաւոր կը նկատուի երբ իր ներկայ անդամներուն թիւը մեծամասնութիւն կը կազմէ այսինքն ընդհանուր թիւէն կէս առաւել մէկը: Կարգ մը պարագաներուն, համաձայն կանոնագրութեան, անհրաժեշտ է ժողովականներուն թիւին 2/3ը: Երբ ներկաները պահանջուած մեծամասնութիւնը չեն ներկայացներ, ժողովը կ'ստանայ խորհրդակցական բնոյթ եւ հոն առնուած որոշումները ի գօրու չեն մինչեւ որ օրինաւոր ժողովի մը բովէն անցնին:

Ստուգելէ յետոյ ներկաներուն թիւը, ատենապետը ժողովը բացուած կը յայտարարէ:

Օրակարգի առաջին նիւթը կը կազմէ նախորդ ժողովի ատենագրութեան ընթերցումը եւ վաւերացումը որմէ յետոյ կը քննուին ատենագրութենէ բխած հարցերը:

Եթէ ատենագրութիւնը առնուազն 24 ժամ առաջ ղրկուած է ժողովականներուն ան չկարդացուիր ժողովի ընթացքին: Այսուհանդերձ եթէ ժողովը փափաք յայտնէ, մեծամասնութեան կարծիքով, որ կարդացուի, կը կարդացուի: Ատենապետը հարց կու տայ ժողովին թէ ոեւէ առարկութիւն կայ ատենագրութեան մասին, եթէ ոչ ան վաւերացուած կը նկատուի:

Ատենագրութեան վաւերացումէն յետոյ, ատենապետը կը խնդրէ որ կարդացուին նամակները որմէ յետոյ կը ներկայացնէ իր

գեկոյցը, կատարած աշխատանքներուն, տեսած անձերուն եւ այն բոլորին համար որ նորութիւն է եւ կապ ունի հաստատութեան գործունէութեան հետ:

Ժողովին անդամները մեծամասնութեան ձայնով կրնան օրակարգի վրայ արձանագրել տալ այն հարցերը որոնք հաստատութիւնը կը շահագրգրեն եւ որոնց լուծումը կ'ակնկալուի: Այս մասին նկատի ունենալ կանոնագրութեան տրամադրութիւնները:

Ատենապետը արձանագրութեան կարգով, կը ներկայացնէ օրակարգի վրայի հարցերը առ ի քննութիւն եւ համապատասխան լուծում: Ներկայացնելէ վերջը հարց մը, խօսք կ'առաջարկէ ժողովականներուն եւ իրենց կարծիքը կը խնդրէ: Եթէ պատահի որ կարգ մը ժողովականներ լուր մնան, ատենապետը կը հարցնէ անոնց թէ ինչ է իրենց կարծիքը: Եթէ ժողովը տարակարծիք ըլլայ հարցին լուծումին նկատմամբ, ատենապետը կամ տնօրէնը ամփոփ կերպով ժողովին կը ներկայացնեն առաջարկուած լուծումները ու առիթ կու տան որ կրկին խօսք առնեն որմէ յետոյ քուէի կը դնեն առաջարկուած լուծումները: Երբ առաջարկ մը երկրորդուած է, հարց կը դրուի ժողովին որ հակառակը մտածող կա՞յ կամ վերապահութիւններ կա՞ն: Եթէ ոչ, ընդունուած կը յայտարարուի առաջարկը, հակառակ պարագային, քուէի կը դրուի եւ մեծամասնութեան ձայնին արժանացող առաջարկը կ'իւրացուի: Եթէ պատահի որ ձայներու հաւասարութիւն ըլլայ, ատենապետը կամ տնօրէնը որ կողմի հետ որ ձայն կու տայ, այդ կողմը կ'ընդունուի քանի որ ատենապետին ձայնը գերակշիռ է:

Երբ ժողովը համաձայն է ատենապետի բանաձեւումին, որոշումը ատենագրութեան մէջ կ'անցնի:

Ատենագրութիւնները կը քննուին ատենադպիրին կողմէ որուն կրնայ օգնել պաշտօնեայ քարտուղար մը: Կարգ մը հաստատութիւններ կը նախընտրեն ատենագրութեան տետրակէն զատ այլ տոմար մը բռնել միայն առնուած որոշումներուն համար: Հոն կ'արձանագրուին թուական կարգով եւ թուագրուած կերպով, յաջորդաբար բոլոր որոշումները: Ամէն մէկ որոշումին տակ կը յիշատակեն ժողովին թուականը:

Երբ հարցի մը քննութիւնը առիթ տայ բանավէճի, ատենապետին պարտականութիւնն է ժողովին յիշեցնել զանազան տեսակէտ-

ներուն մէջ գոյութիւն ունեցող համանման ինչպէս եւ հակադրուած կէտերը աշխատելով որ ժողովը առաջնորդուի դէպի լուծում ի շահ հաստատութեան գերագոյն նպատակներուն:

Երբ խօսակցութիւնները օրակարգի նիւթէն շեղին, ատենապետը ժողովականները կարգի կը հրաւիրէ եւ կը խնդրէ որ մնան միայն օրակարգի սահմաններուն մէջ:

Նոյն հարցի մասին, ժողովական մը կրնայ միայն երկու անգամ ձայն առնել, իսկ եթէ առաջարկ բերող է կրնայ աւելի ձայն առնել: Ամէն պարագայի տակ եթէ ժողովական մը պնդէ երկուքէ աւելի ձայն ունենալ, ատենապետը ժողովին կարծիքը կ'առնէ եւ անոր համաձայն կ'որոշէ:

Ատենապետ մը երբ իր տեսակէտը պիտի յայտնէ, կը խնդրէ որ պահ մը փոխ-ատենապետը կամ ատենադպիրը վարէ ժողովը մինչեւ որ ինքը խօսի: Ատենապետը պէտք չէ շատ պնդէ իր տեսակէտին վրայ, պէտք է ձգէ որ ժողովը մեծամասնութեան կարգով համապատասխան որոշում առնէ:

Ատենապետը կ'աշխատի որ ժողովները որոշեալ ժամերուն սկսին եւ նոյնպէս որոշեալ ժամերուն վերջանան: Ուշ եկող եւ կամ կանուխ մեկնիլ ուզող ժողովականները արտօնութիւն կը խնդրեն ատենապետէն:

Ժողովներու ընթացքին ատենապետին պարտականութիւնն է յարգել հաստատութեան կանոնադրութիւնը եւ համերաշխ մթնոլորտի մէջ առաջնորդել զանոնք եզրակացութեան, ընդունելի լուծումներ գտնելով օրակարգի վրայ արձանագրուած բոլոր հարցերուն:

### **Եզրակացութիւն**

Փակելէ առաջ այս գրոյցը, թոյլ տուէք որ ըսեմ քանի մը խօսքով որ վարչագիտութեան ասպարէզը շատ ընդարձակ է: Հիմնական սկզբունքները նոյնը ըլլալով հանդերձ բոլոր պարագաներուն, ամէն ճիւղի կամ մարզի համար կ'առաջարկուի յաւելուածաբար մասնաշատուկ ծանօթութիւններ եւ մեթոտներ:

Հաստատութիւն կառավարող մարմինը կամ անձը կրնայ ի հարկին անոր գործունէութեան հետ առնչուած բոլոր հարցերուն մասնագէտը չըլլալ: Բնաւ երբէք: Սակայն ան առնչակից բոլոր

Հարցերու մասին բաւական ծանօթութիւններ պարտի ունենալ ըլլան անոնք տնտեսական, հաշուական, կազմակերպչական, ընկերային, իրաւաբանական, արդիւնաբերական եւայլն:

Իր լայն ծանօթութիւնները, փորձառութիւնը հաստատութեան գործունէութեան այլ եւ այլ մարզերուն կապակցութեամբ, իր հաւասարակշռուած եւ բարոյական արժանիքներով օժտուած անձնաւորութիւնը, իր մշակուած միտքը թոյլ կու տան իրեն որ կարենայ կառավարել, տեղին որոշումներ առնել, եւ վերջապէս առաջնորդել հաստատութիւնը առանց ցնցումներու իր նպատակներու եւ առաջադրանքներու իրականացման:

ՅԻՇԱՏԱԿԻ ԽՕՍՔ ՄԵԹՐ ԽԱՉԻԿ ՊԱՊԻԿԵԱՆԻ  
ՄԱՀՈՒԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՔԻՆ ԱՌԹԻԻ

Քառասուն օրեր կը բաժնեն մեզ այն տխուր պահէն, երբ համազգային սուգի մէջ մեզմէ առյաւէտ կը բաժնուէր բոլորիս սիրելի եւ յարգելի մեթր Խաչիկ Պապիկեան՝ դառնալու համար յաւիտենականութեան ճանապարհորդ:

Սուգի մէջ էին այն օրը յատկապէս, իր հարազատներն ու բարեկամները, Լիբանանի պետութիւնը, խորհրդարանը, հայ երեսփոխանական պլոքը, փաստաբաններու կաճառը, հայութիւնը եւ բոլոր լիբանանցիները, որոնք կը կորսնցնէին անգուգական հայր մը, ճկուն քաղաքագէտ մը, խորհրդարանի լուսամիտ եւ պերճախօս ատենաբանը, լեզուագէտ եւ մշակուած իրաւագէտը, հրապարակագիրն ու հրապարակախօսը, ազգային ժողովներու բանիմաց եւ հաւասարակշռուած ժողովականը, ազգային բարերարը եւ Ազգային Կեդրոնական Վարչութեան ակելի քան 30 տարուան հմուտ եւ անխոնջ ատենապետը:

Ճանչցած եմ գինք շուրջ կէս դարէ ի վեր, նախ՝ իրաւաբանական համալսարանի մէջ, ուր իր փայլուն նիշերով եւ բացառիկ իմացականութեամբ հիացում կը պատճառէր իր դասընկերներուն եւ դասախօսներուն, ապա՝ իբրեւ պետական երեսփոխան ու բազմիցս նախարար, մանաւանդ՝ Ազգային Կեդրոնական Վարչութեան մէջ, ուր իր գործակիցը ըլլալու հաճոյքը ունեցայ շուրջ 30 տարի:

Հիացմունքով կը նկատէի իր փայլուն մտքի ճառագայթումը, ինչպէս նաեւ՝ հարցերը վերլուծելու եւ արտայայտուած կարծիքները համադրելու իր արտակարգ կարողութիւնը: Ան մեծ ճարտարութեամբ կը վարէր ազգային ժողովները: Չէր ընկրկեր դժուարութիւններու առջեւ: Բոլոր հարցերուն համար կը փորձէր յարմարագոյն լուծում մը առաջարկել՝ շնորհիւ իր այլազան փորձառութիւններուն:

Ան նշանաւոր էր իր մշակուած եւ խորաթափանց մտքով, կրթութեամբ եւ միեւնոյն ատեն՝ վճռակամութեամբ: Գիտէր կեցողութեամբ ճշդել եւ իմաստուն ու հաւասարակշռուած դատողութեամբ ժողովը կ'առաջնորդէր յստակ ու բանաձեւուած եզրակացութիւններով: Բժախնդիր էր խառնուածքով: Կը սիրէր կարգն ու կանոնը: Սխալները չէր ներեր:

Մեթր Պապիկեան, այսպէս կը կոչէինք զինք, երկխօսութեան եւ համակեցութեան մարդն էր: Երկխօսութիւն՝ մշակոյթներու, տընտեսագէտներու, կրօններու եւ համայնքներու միջեւ, որոնց մէջ որեւէ բան իրեն օտար եւ անծանօթ չէր: Հաւասարապէս կը յարգուէր բոլոր շրջանակներու մէջ, ուր կը պահէր մեծ թիւով բարեկամներ, բայց ամէն տեղ իր անձին մէջ խորապէս արմատացած ազգասիրութիւնը տիրական դեր կը կատարէր: Ան ամէնուրեք կը պաշտպանէր Լիբանանի եւ հայութեան շահերը:

Իբրեւ փոխ ատենապետ Ֆրանսախօս եւ պետութիւններու խորհրդարանականներու ընկերակցութեան, ուր ան անվիճելի ներկայութիւն էր, հրաւիրուեցաւ Ֆրանսական պետութեան կողմէ, Ֆրանսական Յեղափոխութեան 200ամեակին առթիւ, խորհրդարանի բացման խօսքը կատարելու, ուր չմոռցաւ յիշելու, ինչպէս միշտ, հայութիւնը:

Օժտուած էր արտակարգ յիշողութեամբ: 30-40 տարի առաջուան դէպքերը կը պատմէր իրենց մանրամասնութեամբ եւ իր տեսած ու ծանօթացած դէմքերը պայծառութեամբ կը զանազանուէին իր մտքին մէջ. անոնց մասին իր ունեցած ծանօթութիւնները հարազատութեամբ կը պատկերացնէր:

Հաճոյք էր իրենց հետը ժողովի նստիլը: Իր ներկայութիւնը շահեկան էր խօսակիցներուն համար, որոնք միշտ իր մօտ կը գտնէին տեղեկութիւններու անգնահատելի շտեմարան մը:

Իրատես եւ առարկայական մօտեցում կը ցուցաբերէր մեր աթոռը եւ համայնքը յուզող քաղաքական եւ տնտեսական այլազան խնդիրներու կապակցութեամբ: Մեր ապրած մօտիկ անցեալի բախտորոշ տարիներուն, հանրային եւ հասարակական գործերու մէջ ցուցաբերեց բարոյական անբասիր դիմագիծ, քաղաքական հոտառութիւն եւ հասունութիւն, իրականութիւնը եւ ցանկալին իրարու հետ չչփոթելու յստակ կարողութիւն, շրջահայեացութիւն եւ մա-

նաւանդ՝ հայութեան շահերուն եւ իրաւունքներուն պաշտպանութեան նկատմամբ առողջ եւ անսակարկ մօտեցում:

Իր ժողովուրդին ծառայելու եւ նուիրուելու ոգի ունէր, որուն ցուցանիչներէն մէկը վեհափառ հայրապետին հովանաւորութեան տակ իր հիմնած բարեսիրական հիմնարկն էր, որուն յատկացուց իր հարստութեան կէսը, ինչպէս նաեւ իր բերած նիւթական գնահատելի օժանդակութիւնը՝ կաթողիկոսարանի շինարարական ծրագիրներուն:

Նրբաճաշակ ու ընդարձակ զարգացումի տէր մարդ էր: Այնպէս ալ վարուեցաւ իր գաւակներուն հետ, որոնց տուաւ բարձրագոյն ուսում եւ մասնագիտութիւն: Սկզբունքի տէր էր եւ յանձնառու: Իր ստանձնած պարտականութիւնները ամենայետին մանրամասնութեամբ կը հետապնդէր: Ներկայ կ'ըլլար Կեղրոնական Վարչութեան բոլոր ժողովներուն, բացի իր հիւանդութեան վերջին երկու ամիսներուն, երբ պարտադրաբար զամուսն կը մնար անկողին, բայց հաղորդակցութեան մէջ մտնելով վեհափառ հայրապետին հետ՝ կը հետեւէր կատարուած աշխատանքներուն: Կենդանի օրինակ մըն էր պարտաճանաչութեան, ճշդապահութեան եւ նուիրումի: Ունէր մեծ մարդոց յատուկ վսեմ ու ազնիւ նկարագիր:

Իր մահով Լիբանանը եւ մասնաւորաբար հայութիւնը կորսնցուցին յարգանք պարտադրող հայրենասէր մը, միջազգային մակարդակով ականաւոր դէմք մը, չափաւորական քաղաքագէտ մը, սկզբունքի տէր եւ կեցուածք ունեցող անձնաւորութիւն մը, իմաստուն եւ բազմավաստակ իրաւագէտ մը, մանաւանդ՝ մեծ հայ մը:

Ինչպէս 19րդ դարու յայտնի մտաւորական եւ գրագէտ Մատթէոս Մամուրեան ըսած է՝ «Դամբաններ կան, որոնք օրրան են», անկասկած մեթր Խաչիկ Պապիկեանի կեանքի օրինակը ներշնչումի աղբիւր պիտի դառնայ բարձրացող սերունդներու համար եւ իր յիշատակը անջնջելի պիտի մնայ բոլոր զինք ճանչցողներուն մօտ:

Յարգանք իր անմոռանալի եւ թանկագին յիշատակին:



**Բ. Մ Ա Ս**

**ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ**



## Բ. Մ Ա Ս

### ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ

- *Լիբանանահայ կրթական իրագործումները  
վերջին տասնամեակին*..... 203
- *Ֆրանսերէնը ընտրել թէ անգլերէնը իբրեւ օտար  
առաջին լեզու Լիբանանի հայ վարժարաններուն մէջ*..... 219
- *Հայեցի դաստիարակութիւն եւ պետական  
կրթական ծրագիր* ..... 228
- *Մարդկային դրամագլուխ եւ ազգային  
դաստիարակութիւն*..... 237
- *Պետական կրթական ծրագիրները կ'ազդեն  
աշակերտին հայեցի դաստիարակութեան վրայ* ..... 240
- *Լիբանանեան պատերազմի հետեւանքները Լիբանանի  
կրթական կեանքէն ներս* ..... 246
- *Կրթական հարցեր - ո՞ւր կ'երթայ հայ աշակերտութիւնը*..... 261
- *Պէտք է կարեւորութիւն ընծայել  
դասաւանդութեան որակին եւ ոչ քանակին* ..... 271
- *Արուեստից եւ արհեստից վարժարանի  
անհրաժեշտութիւնը մեր ազգային կեանքին մէջ*..... 275
- *Սուրէն Խանամիրեան ու Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան  
գոյէճներու տարեփակի հանդիսութիւն (1975-1976)* ..... 280
- *Հայեցի դաստիարակութեան, ազգային դպրոցներու  
եւ առհասարակ հայկական մշակոյթի արժէքներու  
տարածման եւ զարգացման հարց* ..... 286

- <i>Լիբանանահայ ուսանողը</i>	
<i>Համալսարանական ուսման սեմին .....</i>	290
- <i>Ուսանողական հարցեր Լիբանանի մէջ.....</i>	295
- <i>Հայեցի դաստիարակութեան եւ հայերէն լեզուի</i>	
<i>նահանջը սփիւռքեան ներկայ իրականութեան մէջ.....</i>	313

## ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԸ ՎԵՐՋԻՆ ՏԱՍՆԱՄԵԱԿԻՆ<sup>7</sup>

Կարենայլ առարկայօրէն խօսելու համար կրթական իրագործումներու մասին, օգտակար կը նկատեմ նախ լաւ ճշդել նիւթը եւ անոր տարողութիւնը որովհետեւ «կրթութիւն»ը իր լայն առումով կ'ընդգրկէ այն բոլոր ասպարէզները որոնք կը ձգտին անհատին կամ հաւաքականութեան մտաւոր, բարոյական եւ ֆիզիքական զարգացումը ապահովել, այլապէս կրթական իրագործումներու ուսումնասիրութիւնը պիտի պահանջէր քննարկումը այն հաստատութիւններուն եւ կազմակերպութիւններուն գործունէութեան որոնց գոյութիւնը սերտօրէն կապուած է կրթական կալուածին մաս կազմող այս կամ այն առարկային հետ:

Այս հակիրճ ուսումնասիրութիւնը կը շօշափէ կրթութեան դպրոցական երեւոյթները եւ հետեւաբար կրթական իրագործումները: Հոս կը պատկերացնեն մեր դպրոցական վիճակին հոյովոյթը վերջին տասնամեակին, յատկապէս նախակրթարաններու, միջնակարգի եւ երկրորդականի բաժիններուն համար: Պիտի փորձենք ուրեմն զանազան վիճակագրական տուեալներու լոյսին տակ վերլուծել մեր կրթարաններուն արձանագրած իրագործումները 1963-64-էն 1972-73 եւ վեր հանել այդ իրողութիւններէն բխած ազգային-կրթական զանազան հարցեր:

Առ այդ օգտագործած եմ կրթական նախարարութեան, իւնէսքոյի, կրթական հետազօտութեանց եւ ուսումնասիրութեանց պետական կեդրոնի, հայ համալսարանաւարտներու միութեան եւ Առաջնորդարանի վիճակագրական տախտակները:

---

<sup>7</sup> Դասախօսութիւն՝ կազմակերպուած Ուսումնական Խորհուրդին կողմէ 1974-ին:

Լաւ ըմբռնելու համար հայ վարժարաններուն արձանագրած իրագործումները վերջին տասնամեակին, անհրաժեշտ կը նկատեմ ամփոփ պատկեր մը տալ Լիբանանի կրթական ընդհանուր վիճակի մասին 1963-64ին եւ 1972-73ին տեսնել հայ վարժարաններուն գրաւած տեղը այդ ամբողջութեան մէջ, ապա բաղդատել զայն ընդհանուրին հետ:

Ուսումնասիրութեան բաղդատական ձեւը, կը թուի ըստ իս, մեզ առաջնորդել աւելի ընդունելի եզրակացութիւններու, որովհետեւ այն ինչ որ ճիշդ է եւ իրողութիւն Լիբանանի, առհասարակ, ընդհանուր աշակերտութեան եւ բնակչութեան համար իբրեւ կեանքի ընկերային, բարոյական եւ նիւթական պայման, գրեթէ ճիշդ է նաեւ մեր վարժարանները յաճախող հայ աշակերտներուն եւ անոնց ծնողներուն համար, մանաւանդ երբ բաղդատութիւնը ընենք շրջանային տարողութեամբ:

Պիտի քննենք ուրեմն աշակերտութեան թիւին, դպրոցներու կրթական մակարդակին, անոնց պիւտձէին, ուսուցիչներու թիւին եւ որակին հորովոյթը վերոյիշեալ ժամանակաշրջանին մէջ:

## 1) Վիճակագրական տուեալներ

Ա.– Դպրոցներու թիւ

Լիբանանի մէջ գտնուող դպրոցներու ընդհանուր թիւը, ներառեալ հայ վարժարանները, 1963-64ին կը բարձրանար 2729ի որոնց 2288ը նախակրթարան իսկ 441ը միջնակարգ եւ երկրորդական էին:

Նախակրթարաններուն 1048ը պետական իսկ 1240ը ոչ պետական իսկ միջնակարգի եւ երկրորդական 441 վարժարաններուն 225ը պետական եւ 216ը ոչ պետական էին:

1971-72ին դպրոցներու թիւը հասաւ 2793ի որոնց 1772ը նախակրթարան եւ 1021ը միջնակարգ եւ երկրորդական:

Նախակրթարաններուն 770ը պետական եւ 1002ը ոչ պետական էին իսկ 1021 միջնակարգ եւ երկրորդական վարժարաններուն 540 պետական եւ 481 ոչ պետական էին:

Ընդհանուր յաւելում, 64 վարժարան, այսինքն 25%:

Հայ վարժարաններու պարագան հետեւեալ պատկերը կը պարզէր․-

1963-64ին ունէինք 46 օրինաւոր վարժարաններ որոնց 25ը գուտ նախակրթարաններ էին իսկ 21ը կը հասցնէին մինչեւ միջնակարգի վերջաւորութեան կամ մինչեւ պաքալորիա:

1971-72ին վերոյիշեալ թիւը կը հասնէր 51ի, այսինքն 5 վարժարանի յաւելում որուն մէկը երկրորդական եւ չորսը նախակրթարան:

Բ.- Աշակերտութիւն

1.- Աշակերտութեան ընդհանուր թիւ

1963-64ին Լիբանանի աշակերտութեան ընդհանուր թիւն էր բացի համալսարաններու աշակերտութենէն 371.239:

1972-73ին այս թիւը բարձրացաւ 728.409ի արձանագրելով 357.170 աշակերտի յաւելում, այսինքն 93%:

Նոյն տարիներուն, 1963-64ին, բոլոր Հայ վարժարանները յաճախող աշակերտներուն թիւն էր 14.315 իսկ 1972-73ին ան բարձրացած էր 18.526ի, արձանագրելով 4211 աշակերտի յաւելում, այսինքն 29.40% միայն:

Վերոյիշեալ աշակերտութեան թիւին մաս չեն կազմեր համալսարան յաճախող Հայ ուսանողութիւնը եւ թեքնիք Հայ վարժարաններու ինչպէս Սիմոնեան, Վարժապետեան, առեւտրական վարժարաններու աշակերտութիւնը:

2.- Աշակերտութեան թիւը համաձայն սեռին

1971-72ի մանկապարտէզի եւ նախակրթարանի Լիբանանի ընդհանուր աշակերտութեան 55% արական եւ 45% իգական սեռի կը պատկանէին: Միջնակարգի մէջ այս համեմատութիւնը ցոյց կու տար 58% արական սեռի եւ 42% իգական սեռին պատկանող աշակերտութիւն: Իսկ երկրորդականի մէջ, 65% արական եւ 35% իգական սեռի կը պատկանէին:

Տրուած ըլլալով սակայն որ վերոյիշեալ գումարներուն մաս կը կազմէ գաւառներու աշակերտութիւնը, որպէսզի մեր ընտրած բաղդատական ձեւը աւելի եզրակացուցիչ ըլլայ, պիտի առնենք Պէյրութի աշակերտութեան բաղկացումը նոյն տարին:

Պէջրութի մանկապարտէզներու եւ նախակրթարաններու աշակերտութեան 50% իգական սեռի կը պատկանին: Միջնակարգի մէջ այդ համեմատութիւնը նոյնն էր, 50% արական եւ 50% իգական, իսկ երկրորդականին մէջ 66% արական եւ 34% իգական սեռի կը պատկանէին:

Նոյն տարին, հայ վարժարաններու աշակերտութեան բաղկացումը կը ներկայացնէր հետեւեալ պատկերը:

Մանկապարտէզ եւ նախակրթարան, 50.31% արական եւ 49.69% իգական, միջնակարգ 45% արական եւ 55% իգական իսկ երկրորդական 50.47% արական եւ 44.53% իգական սեռի կը պատկանէին:

Գ.- Ուսուցչական կազմ

1963-64ին, ուսուցիչներու ընդհանուր թիւն էր 15.065, իսկ 1972-73ին 33.485, յաւելում՝ 18.420:

1972-73ին պետական վարժարաններու ուսուցիչներուն ուսումնական մակարդակը կը ներկայանար հետեւեալ կերպով:

65%ը ունէին պետական, ակադեմական վկայականներ, (պրըվէ, պալաքորիա, լիսանս), մնացեալ 35% ունէին զանազան այլ վկայականներ որոնց համար պետութիւնը համազօրագիր տուած էր:

Զրիավարժ վարժարաններուն մէջ, 83% ուսուցիչներուն ունէին պետական վկայականներ, 3.35% մասնագիտական եւ 13.65% ոչ պետական վկայականներ:

Վճարովի վարժարաններուն մէջ, պետական վկայական ունեցողները կը ներկայացնէին ուսուցչական կազմին 83.97%ը, մասնագիտական վկայական ունեցողները 0.59% եւ ոչ պետական վկայական ունեցողները 15.44%:

Հայ վարժարաններու մօտ, նոյն տարուայ համար հետեւեալ պատկերը կը պարզուէր:

Համալսարանաւարտ 25%, պետական պաքալորիա եւ երկրորդական վարժարանէ վկայեալ 34%, պրըվէ եւ համազօր 29%, իսկ 12% պրըվէյի մակարդակէն վար:

Պետական վարժարաններու մէջ ամէն մէկ ուսուցչի գլուխ կար 11 աշակերտ, իսկ հայ վարժարաններու մէջ 16 աշակերտ: Լիբանանի ընդհանուր միջինն էր 23 աշակերտ, ուսուցչի գլուխ:



1970-71ին, ուսուցչական կազմին 51% արական եւ 49% իգական սեռի կը պատկանէին: Իսկ հայ վարժարաններուն մէջ 41% արական եւ 59% իգական սեռի կը պատկանէին:

Հայ վարժարաններուն մէջ ուսուցիչներուն 70% միայն մնայուն էին եւ 30% այցելու: Անոնց 19.5% օտարահայտակ էր եւ 80.5% լիբանանցի:

Դ.–Քննութեանց արդիւնք

1.- Պետական քննութիւններ

1965-66ին պրըվէի քննութեան ներկայացող Լիբանանի ամբողջ աշակերտութեան 37.03% միայն յաջողեցաւ: Հայ վարժարանները նոյն տարին ապահոված էին 55.83% յաջողութիւն:

Ա. պաքալորիայի քննութեան մէջ, յաջողութիւնը եղած էր, ամբողջ Լիբանանի համար 12.02%, հայ վարժարաններու համար ան եղած էր 50%:

1969-70ին պրըվէի քննութեան ներկայացող ընդհանուր աշակերտութեան յաջողութեան միջինը եղած էր 57.25%, հայ վարժարաններու աշակերտութեան յաջողութեան միջինը եղած էր 75.70%: Այս համեմատութիւնը սակայն կէսով պէտք է իջնէ քանի որ համաձայն մեր ձեռքը անցած վիճակագրութիւններու, համապատասխան դասարանի աշակերտութեան թիւէն 45.80% միայն ներկայացած է քննութեան:

Ա. պաքալորիայի պարագային, լիբանանեան ընդհանուր միջինը եղած է 22.55%, իսկ հայ վարժարաններու համար այդ եղած է 55.38%: Հոս եւս անհրաժեշտ է ճշդում մը ընել: Հայ վարժարաններու համապատասխան դասարանին 14.28% միայն ներկայացած է քննութեան ինչ որ կը նշանակէ որ վերոյիշեալ համեմատութիւնը 7 անգամով պէտք է նուազեցնել (Տես՝ հայ համալսարանականներու միութեան պատրաստած վիճակագրական տախտակները): Զի մոռնանք նաեւ որ ոչ հայ վարժարաններէն շատեր կը դիմեն նոյնպէս գտումի քաղաքականութեան ինչ որ մեզի կ'արտօնէ պահել հայ վարժարաններու յաջողութեան համեմատութիւնը նոյնութեամբ:

Ազգային վարժարանները որոնք իրենց աշակերտութիւնը 100% տոկոսով ներկայացուցած են պետական քննութիւններուն, նոյն տարին, պրըվէյի մէջ ստացան 41.30% եւ պաքալորիայի մէջ 55.38%

յաջողութիւն:

2.- Տարիքով ուչ մնացող աշակերտներուն պարագան

1972-73ին Համաձայն պետական վիճակագրական տուեալներուն, Լիրանանի նախակրթարաններու ընդհանուր աշակերտութեան 55% Համապատասխան դասարանին Համար պահանջուած տարիքէն վեր եղած է: Միջնակարգի մէջ այս Համեմատութիւնը եղած է 80.67%, իսկ երկրորդականի մէջ 82.53%: Այս տուեալները գրեթէ նոյնն են Իւնէսքոյի կողմէ կատարուած հետազոտութեանց արդիւնքին հետ:

Ճշդուած է նոյնպէս որ նախակրթարաններու աշակերտութեան 11.90% նախակրթարանը չեն աւարտեր, միջնակարգի աշակերտութեան 44.30%, իսկ երկրորդականի 55% նոյնպէս չեն աւարտեր իրենց բաժինները: Նախակրթարանի 3 աշակերտէն մէկը միայն կ'անցնի միջնակարգ եւ 11էն մէկը երկրորդական: Նախակրթարանի 50 աշակերտներէն մէկը միայն կը ստանայ Ա. պաքալորիա:

Հայ վարժարաններուն մէջ, 1971-72ին նախակրթարանի Ա. դասարան արձանագրուած 1754 աշակերտներուն 1209 միայն Հասած են ճրդ դասարան, մնացեալ 545 հոգիները լքած են զայն տակաւին նախակրթարանի վերջին դասարանը չի հասած:

Նախակրթարանի Ա. դասարանին 1754 աշակերտներէն միայն 753ը Հասած են ու արձանագրուած միջնակարգ որոնց 338 անցած են երկրորդական եւ 425 լքած դպրոցը:

Հայ վարժարաններուն մէջ 3 աշակերտներէն մէկը միայն Հասած է միջնակարգ, 7էն մէկը միայն երկրորդական, նախակրթարանի Ա. դասարանը արձանագրուած 25 աշակերտներէն մէկը միայն ստացած է պետական Ա. պաքալորիա:

Ե.- Պիւտնէական

1970-71 Հայ 51 վարժարաններուն 18ը իրենց պիւտնէն Հաւասարակշռած են, 20ը բաց ունեցած են (430.743 լ.ոսկի) եւ մնացեալ 13ը շահ ապահոված են (540.963.75), Հայ վարժարաններուն ընդհանուր պիւտնէն բարձրացած է, 1970-71 տարեշրջանին Համար, 5.59.778 լ.ոսկի:

Բաց ունեցած են փոքրաթիւ աշակերտութիւն ունեցող վարժա-

րանները, ի մասնաւորի այն պարագային երբ անոնք երկրորդական բաժին ալ ունեցած են: Զրիավարժ վարժարաններէն ոմանք չեն կրցած իրենց պիւտճէն հաւասարակշռել: Այս երեւոյթը ընդհանրական է երբ խնդրոյ առարկայ վարժարանին աշակերտութեան թիւը 250էն վար է:

Նախակրթարաններու մէջ ամէն աշակերտի գլուխ ծախսը կը բարձրանայ, ճրիավարժ ըլլալու պարագային, 200-240 լ.ոսկիի, իսկ վճարովի ըլլալու պարագային 400-600 լ.ոսկիի, միջնակարգի մէջ այդ կ'ըլլայ 700-900 լ.ոսկի իսկ երկրորդականի մէջ 1000-1200 լ.ոսկիի: Զրիավարժ վարժարաններու մէջ, աշակերտը կը վճարէ 34 լ.ոսկի միայն որուն վրայ կ'աւելցուի երբեմն զանազան այլ ծախսերու համար շուրջ 25-30 լ.ոսկի, իսկ պետութեան նպաստը նախակրթարանի աշակերտներուն համար 1972-73, 85 լ.ոսկի էր անձ գլուխ: Ներկայիս 135 լ.ոսկի:

## 2) Հաստատումներ

ա.- Հայ աշակերտութեան կարեւոր մէկ թիւին օտար վարժարան յանախելու պարագան

Վերոյիշեալ տուեալները ցոյց կու տան մեզի որ 1963-64-էն մինչեւ 1972-73 մեր դպրոցներու թիւը աւելցած է 11%, իսկ մեր աշակերտութեան թիւը 29.40% համեմատութեամբ: Աշակերտութեան թիւին աճը տարօրինակ կերպով աւելի ցած է քան Լիբանանի ընդհանուր աշակերտութեան թիւին աճը որ ինչպէս տեսանք անցնող 10 տարիներուն համար եղած է 110%: Այս պարագան շատ ակնբախ է եւ մտահոգիչ:

Հիմնուելով վիճակագրական տեղեկութիւններուն վրայ եւ նկատի ունենալով աշակերտութեան ընդհանուր թիւին աճին տուրք, 1972-73ին մեր վարժարանները պէտք է որ ունենային 30.817 աշակերտ փոխան 18.526ի ինչ որ կը նշանակէ որ անցնող տասը տարիներու ընթացքին անոնք կորսնցուցած են 13.135 աշակերտ:

Կայ նաեւ երկրորդ մօտեցում մը հայ աշակերտութեան թիւին առնչութեամբ:

1972-73 ուսումնական տարեշրջանին մէջ Լիբանանի աշակերտութիւնը իր բնակչութեան թիւին 29.90% կը ներկայացնէր: Եթէ

այս թիւէն հանենք օտարահպատակները եւ արաբական երկիրներէն եկած աշակերտութեան մէկ մասը (50%) քանի որ հայ համայնքն ալ ունի արաբական այլ երկիրներու հպատակութիւնը կրող աշակերտներ, վերոյիշեալ համեմատութիւնը կը վերածուի 23.57%: Եթէ 0.57 վերագրենք վիճակագրական տուեալներու անբաւարարութեան կամ անճշդութեան, կու գանք այն եզրակացութեան որ հայ աշակերտութիւնը պէտք է հայ բնակչութեան մօտաւորապէս 23% ներկայացնէ:

Եթէ ընդունինք պահ մը որ օտար վարժարան յաճախող հայ աշակերտութեան թիւը զանցառելի է, այն ատեն հիմնուելով հայ վարժարան յաճախող աշակերտութեան թիւին վրայ պիտի հասնինք այն ապշեցուցիչ եզրակացութեան որ հայ բնակչութեան թիւը Լիբանանի մէջ 80.700 հոգի է ինչ որ բացարձակապէս անճիշդ է:

Եթէ մեկնինք այն իրողութենէն որ հայ բնակչութեան թիւը նուազագոյն 150 կամ 170 հազար է, մենք պիտի ունենանք, 170 հազար ըլլալու պարագային 39.100 աշակերտ, իսկ 150 հազար ըլլալու պարագային 36.800 աշակերտ որոնց դժբախտաբար միայն 18.596ը հայ վարժարան կը յաճախեն: Այս թիւին մէջ նկատի չէ առնուած առեւտրական հայ թեքնիք վարժարաններու աշակերտութիւնը (Սիւմոնեան, Վարժապետեան եւայլն):

Ներկայիս հայ վարժարան յաճախող աշակերտութիւնը Լիբանանի հայ բնակչութեան 10-11% կը կազմէ որմէ կարելի է հետեւցընել որ հայ աշակերտութեան մօտաւորապէս կէսը օտար վարժարան կը յաճախէ: Եւ կարելոր մաս մը գրեթէ բնաւ դպրոց չի յաճախեր: Ահաւասիկ ահաւոր կացութիւն մը որուն մասին պէտք է ազգովին անդրադառնանք:

Մեր ուշադրութիւնը գրաւեց նաեւ ուրիշ կէտ մը:

Հայ վարժարաններու միջնակարգի եւ երկրորդականի բաժիններուն մէջ, արական սեռի պատկանող աշակերտութեան թիւը նուազ է քան իգական սեռինը: Ան աւելի քիչ է նաեւ բաղդատած լիբանանեան ընդհանուր միջինէն: Այս երեւոյթը ցոյց կու տայ որ կամ հայ ծնողները ուրիշներէն աւելի նախանձախնդիր են իրենց 12-18 տարեկան աղջիկները դպրոց դրկելու, կամ նախակրթութենէ յետոյ, անոնք իրենց մանչերը կը դրկեն օտար վարժարան եւ կամ պարզապէս մանչերու մէկ մասը դպրոցը կը լքէ եւ իր մատղաշ տա-

րիքին մէջ աշխատելու կ'երթայ: Ահա թէ ինչպէս կը բացատրուի օտար վարժարաններու միջնակարգի եւ երկրորդականի բաժիններուն մէջ մանչերու համեմատութեան 56% ըլլալը եւ հայ վարժարաններուն մէջ այդ համեմատութեան 50.41%-ի վերածուիլը:

Որքան ալ անճիշդ թուին վերոյիշեալ ենթադրութիւնները այն ինչ որ կը վերաբերի Լիբանանի հայ բնակչութեան թիւին, իրողութիւն է սակայն որ հայ վարժարաններու աշակերտութեան թիւին աճը լիբանանեան ընդհանուր միջինին 1/4 է միայն: Սա կը նշանակէ որ հայ ծնողներու մէջ կան տակաւին շատեր որոնք նիւթական պատճառներու համար իրենց զաւակները բնաւ դպրոց չեն դրկեր, իսկ ուրիշներ հետեւելով օգտապաշտ գաղափարներու, կը յամառին իրենց զաւակները դրկել օտար վարժարան այն մտածումով որ հոն անոնք կը ստանան ուսում եւ դաստիարակութիւն համաձայն ժամանակին եւ տեղական պայմաններու պահանջին: Անոնց համար իրենց զաւակներուն պետական վկայական ստանալը եւ ապագայի հեռանկարով գործ ապահովելու ձգտող ստոյգ առաւելութիւններ ձեռք ձգելը առաջնահերթ մտահոգութիւն է: Շատ կարեւոր կը նկատեն նաեւ օտար լեզուներու լաւ ճանաչումը եւ անոնց սահուն գործածութիւնը: Այն ինչ որ կը վերաբերի ազգային դաստիարակութեան, լեզուին, պատմութեան, ոգիին, այս բոլորին համար կը խորհին թէ պէտք եղած միջնորդութիւնը եւ միջոցը ունին տան մէջ, իրենց զաւակներուն հայերէն սորվեցնելու եւ ազգային հայ ակումբները մնացած բացը կ'ամբողջացնեն: Հայ վարժարաններու մէջ տրուած օտար լեզուներու ուսուցումը անբաւարար կը գտնեն եւ անոնց յաջողութիւնը պետական քննութիւններու մէջ կասկածելի: Այս առարկութիւններով կը դիմեն ինքնարդարացումի:

Պէտք է ազգովին պայքարինք այս մտայնութեան դէմ: Մեր պայքարը սակայն պէտք է ըլլայ դրական եւ շինիչ: Պէտք է փորձենք նախ սրբագրել մատնանշուած վերագրումները, եթէ ճիշդ են ապա լուսափանել հայ հասարակութիւնը:

Ինչպէս երեւան կու գայ վերեւ յիշուած վիճակագրական տրեւելներէն հայ վարժարաններու յաջողութեան միջինը պետական քննութեանց մէջ աւելի բարձր է քան պետական ընդհանուր միջինը, իսկ այդ բոլորին մէջ ազգային վարժարաններուն ձեռք բերած միջինը պետական պրովէի եւ պաքալորիայի մէջ, աւելի բարձր է թէ

պետական միջինն էլ թէ հայ վարժարաններու ընդհանուր միջինն էն: Այս իրողութիւնը դժբախտաբար ծանօթ չէ մեր ժողովուրդին:

Թող ներուրի մեզի եթէ յայտնենք որ մեր կրթական քարոզչութիւնը, լաւագոյնին ձգտելու իր աշխատանքին մէջ, դուրս կ'ելլէ երբեմն իր հունէն եւ տեղի տալով ամբոխավարութեան կը դիմէ բացասական միջոցներու ու կը դառնայ վնասակար, շարունակ քննադատելով մեր կրթական հաստատութիւնները: Քննադատութիւնը օգտակար է երբ ան արդար է ու մտածուած եւ երբ մատնանշուած թերիին կողքին կը յայտնաբերուի նաեւ այն ինչ որ ճիշդ ու լաւ է: Թերթերուն մէջ, երբեմն այս առնչութեամբ գրուած յօդուածներէն ոմանք երբ շեշտը կը դնեն միայն ու միայն հայեցի դաստիարակութեան անհրաժեշտութեան վրայ մերժելով անկէ դուրս ոեւէ դրական արժէք, կը սատարեն պարզապէս մեր դպրոցները ամլութեան դատապարտելու կոչուած անգիտակից եւ վնասաբեր աշխատանքի: Այդ ծայրահեղ գաղափարները սխալ կը մեկնաբանուին մեր ժողովուրդին կողմէ որուն մէկ կարեւոր մասը իր գաւազը կը դրկէ օտար վարժարան որովհետեւ ան կը նկատէ իր կարդացածովն ու իր լսածովը որ հայ վարժարանները, իր գաւազին կերտումին նպաստող, ուսումնական եւ կրթական ոեւէ դրական այլ արժէք չունին տալիք բացի հայեցի դաստիարակութենէն: Մեր քարոզչական աշխատանքները պէտք չէ ժողովուրդը սխալ տպաւորութիւններու տակ թողուին: Մենք հիմնովին կը հաւատանք հայեցի դաստիարակութեան առաջնահերթութեան, բայց կը հաւատանք նոյնպէս որ պէտք չէ գանց առնենք պետական կրթական ծրագիրը:

բ.-- Հայերէն լեզուի մակարդակը մեր վարժարաններուն մէջ

Հայերէնի մակարդակը հայ վարժարաններու մէջ, բացի մի քանի վարժարաններէ դեռ եւս անբաւարար է: Պետական վկայականներու ապահովութեան համար անոնց թափած ճիգը բնականօրէն գիրենք առաջնորդեցին այս իրողութեան որ ողբերգական չէ բնաւ սակայն պէտք է գայն բարելաւել: Արդարեւ պէտք չէ սպասել, իրերու այս կացութեան մէջ ուր մեր ժողովուրդը տակաւին քաջատեղեակ չէ տեղական լեզուին որուն ուսուցումին համար իր կարգին մեծ աշխատանք կը տարուի, որ մեր վարժարանները պատրաստեն հայագէտ աշակերտներ: Անոր համար բարեբախտաբար կան բարձրագոյն հիմնարկներ գորս պէտք է քաջալերել եւ որոնց գոյա-

տեւման պէտք է նեցուկ կանգնիլ: Մեր վարժարանները պէտք է լաւ սորվեցնեն հայերէն լեզուն, գրականութիւնը, մեր աշակերտներուն պէտք է փոխանցեն մեր մշակութային ժառանգը, եւ զանոնք տէր կասուցանեն մեր պատմական ազգային դարաւոր իրաւունքներուն: Այս ոգին հարազատօրէն իր ամբողջ կենդանութեամբ եւ ջերմութեամբ պէտք է փոխանցուի նորահաս սերունդին մեր վարժարաններուն միջոցաւ:

Ըստ մեր հայեցողութեան, հայերէնի մակարդակը բարձրացնելու համար անհրաժեշտ կը նկատենք հետեւեալ իրազործումները:

1) Վերամշակել հայերէն լեզուի եւ հայոց պատմութեան ուսումնական ծրագիրը համաձայն մեր արդի պահանջներուն եւ կարելիութիւններուն եթէ տակաւին այդ եղած չէ:

2) Պատրաստել վերոյիշեալ կրթական ծրագիրներուն ներդաշնակ նոր դասագրքեր, մանկավարժական արդի բմբունումներով:

3) Ունենալ որակեալ ուսուցչական կազմ, հիները վերաորակաւորման դասընթացներու ենթարկելով, իսկ նորերէն պահանջելով հայագիտական բարձրագոյն ուսման վկայական որուն համար պէտք է ճշդել առանձնայատուկ սակ եթէ նոյնիսկ ան պետական ճանաչում չէ ստացած:

Նախակրթարաններու մէջ հայագիտական նիւթերու դասաւանդման համար պէտք է ունենալ միջակ մակարդակի ուսուցչանոց որուն կ'արձանագրուին պրըվէն ստացած աշակերտ-աշակերտուհիներ եւ ուր Յ տարուայ յատուկ պատրաստութեամբ անոնք կ'ուսանին լեզու, պատմութիւն, գրականութիւն եւ ընկերային նիւթերու կողքին հոգեբանութիւն եւ մանկավարժութիւն հանդերձ գործնական աշխատանքներով:

գ.– Ուսուցիչներու պարագան

Հայ վարժարաններու մէջ ուսուցիչներու միջին տարիքը 45 է: Ուսուցչութիւնը հոն ասպարէզ դարձած է առհասարակ տարիքով առաջացած տարրերուն համար: Երիտասարդներու մօտ յարափոփոխ վիճակ մը կայ: Անոնք երբ արժէքաւոր են, կը լքեն ուսուցչութիւնը եւ այլ շահաբեր գործի կը թուին: Այս պարագան ընդհանրացած է նախակրթարաններու մէջ: Ան յառաջ կու գայ ուսուցիչներուն նիւթապէս անբաւարար վարձատրութենէն: Բաղդատմամբ

լիբանանեան ընդհանուր միջինին արական սեռին պատկանող ուսուցիչները աւելի փոքրաթիւ են քան իգական սեռին պատկանողները: Ուսուցչութիւնը աւելի ասպարէզ դառնալու վրայ է իգական սեռին համար: Օտարահպատակները մեր ուսուցչական կազմին 1/5ը կը կազմեն:

Առ հասարակ, հայ ուսուցիչներուն կրթական միջին մակարդակը կը համապատասխանէ պետական ընդհանուր միջինին: Ուշագրաւ երեւոյթ է որ 1105 ուսուցիչներու վրայ ունինք տակաւին 123 ուսուցիչ-ուսուցչուհիներ որոնց մակարդակը միջնակարգէն վար է, այսինքն 9 ուսուցչէն մէկը գրեթէ նախակրթարանի մակարդակ ունի: Բացի քանի մը վարժարաններէ, մանկապարտէզներու մէջ պաշտօնավարող վարժուհիներուն բոլորը չունին մասնագիտական համապատասխան պատրաստութիւն: Հակառակ անոր որ անցնող տասը տարիներու ընթացքին մեծ բարեփոխութիւններ եղած են: Մեր մանկապարտէզները պէտք ունին դեռ եւս մեծ խնամքի: Չի մոռնանք որ մանկապարտէզը դպրոցի մը մուտքն է: Ան պէտք է ըլլայ գրաւիչ, օժտուած արդիական սարքաւորումներով, եւ ունենայ որակեալ ու մասնայատուկ պատրաստութեան տէր ուսուցչական կազմ:

### Եզրակացութիւն

Անցնող վերջին տասնամեակին, Լիբանանի հայ կրթական հաստատութիւնները արձանագրած են որոշ ստոյգ յառաջդիմութիւններ:

Իբրեւ շէնք եւ կառոյցք հինգ նոր վարժարաններ բարձրացուած են: Չեմ խօսիր տակաւին 1974 տարեշրջանի ընթացքին աւարտած վերջին շինութիւններու մասին որովհետեւ ուսումնասիրութիւնը կ'ընդգրկէ 1963-64ին մինչեւ 1972-73 երկարող շրջանը: Բազմաթիւ դպրոցներ վերանորոգուած են վերջնականապէս անհետացընելով գաղթական հայու կեանքը բնորոշող թիթեղաշէն եւ փայտաշէն վարժարաններուն հետքը: Արդարեւ շնորհիւ հայ կրթանուէր մեկենասներուն, հայ բարեսիրական միութիւններուն, Կիւլպէնկեան, Գարակէօզեան եւ այլ ֆոնտերու ազնիւ օժանդակութեան մեր կրթական օճախները աճած են համաձայն օրուայ պա-



հանջքին, վայելուչ ու շքեղ կառույցքով: Անոնցմէ շատեր՝ օժտուած անհրաժեշտ սարքաւորումներով, կրնան մրցակցիլ քաղաքիս լաւագոյն վարժարաններուն հետ: Կը մնան տակաւին կարգ մը նախակրթարաններ որոնք դեռ եւս պէտք ունին բարենորոգութեան եւ մեր ժողովուրդի հոգածութեան:

1972-73ին լիբանանահայ կրթական հաստատութիւնները կը ներկայացնեն հետեւեալ ընդհանուր պատկերը:

**Ակադեմական կարգերով վարժարաններ**

	ընդ-թիւ	նախկթ-	միջ-երկրդ-	աշկտ-թիւ
<b>Ազգ. վարժարաններ</b>				
(կապուած ազգ. իշխ.)	20	16	4	5960
Հայ Կաթողիկէ վարժ.	9	2	7	3995
Հայ Աւետրն. վարժ.	11	6	5	3946
Հ.Բ.Ը.Մ. վարժ.	5	3	2	1830
<b>Անկախ վարժարաններ</b>	6	2	4	2795
<b>Նշան ֆալանճեան</b>				
- Թէքէեան				
- Արմէն Ղարիպ				
- Սահակեան				
- Կենաց վարժ.				
- Լոյսի վարժ.				
<b>ընդհ. գումար</b>	<u>51</u>	<u>29</u>	<u>22</u>	<u>18.526</u>

Վերոյիշեալ գումարներէն դուրս կը մնան հայ առեւտրական վարժարաններու աշակերտութիւնը (Սիմոնեան, Վարժապետեան, Գեպապճեան), Հայկազեան գոլէճի աշակերտութիւնը որ համալսարան է ինչպէս նաեւ հայագիտական բարձրագոյն հիմնարկներու ուսանողութիւնը (Հայկազեան, Յիսուսեան եւ այս տարի սկսաւ Համազգայինի Հայագիտական բարձրագոյն հիմնարկը):

Գրեթէ բոլոր հայ վարժարանները ապահոված են, իրենց աշակերտութեան համար, բժշկական խնամք: Ազգային վարժարանները ունին նաեւ ատամնաբուժական կեդրոն որ կ'զբաղի աշակերտներուն եւ ուսուցիչներուն ակուաներու դարմանումով: Բազմաթիւ

վարժարաններ կը վայելեն հոգեբան-մանկավարժներու օժանդակութիւնը եւ բարիքը, ուսման մէջ ուշացած եւ դասարան կրկնող աշակերտներու պարագաներուն ուսումնասիրութեան եւ դարմանումին համար:

Պետական վկայականները ալ թապու մը չեն հայ վարժարաններուն համար որոնց ձեռք ձգած արդիւնքները պաշտօնական քննութիւններուն աւելի բարձր են քան լիբանանեան ընդհանուր միջիւնը:

Արաբերէն լեզուի ուսուցումը իր կարգին մտած է ընթացիկ հունի մը մէջ եւ աստիճանաբար կը բարելաւուի: Պէտք է սակայն գրական լեզուին կողքին զարգացնել նաեւ խօսակցական լեզուն: Չի բաւեր որ աշակերտը գրել գիտնայ եւ հասկնայ ինչ որ կը կարդայ, պէտք է որ ան կարենայ նաեւ դիւրաւ արտայայտուիլ:

Օտար լեզուներու պարագային, հայ վարժարանները կը ցուցաբերեն դրական արդիւնք: Հոն եւս, սակայն, խօսակցական մասը կը մնայ թերի: Աշակերտին արտայայտուելու կարողութիւնը սահմանափակ է:

Կը մնայ տակաւին այն իրողութիւնը որ մեր երկրորդական վարժարանները ցարդ ի վիճակի չեն եղած աշակերտը առաջնորդել լիբանանեան գրական պաքալորիայի եւ փիլիսոփայութեան: Այս կը պահանջէ յաւելեալ ճիգ արաբերէնի համար եւ մանաւանդ որոշ շահագրգռութիւն աշակերտութեան կողմէ:

Չ'ունինք թեքնիք եւ արհեստագիտական վարժարաններ որոնց մատակարարումը թէպէտ մեծածախս է սակայն անհրաժեշտ են անոնք մեր այն փոքրիկներուն համար որոնք արհեստ կ'ուզեն սորվիլ: Շնորհիւ արհեստագիտական վարժարաններու աշակերտը կը սորվի արհեստ եւ միջոցը կ'ունենայ ստանալու նուազագոյն ազգային կրթութիւն եւ դաստիարակութիւն որուն պէտք ունի ան տակաւին: Չ'ունինք նաեւ առեւտրական վարժարաններ որոնք կ'առաջնորդեն աշակերտը լիբանանեան պետական առեւտրական պաքալորիայի:

Մանկավարտէզներու եւ նախակրթարաններու ուսուցչական կազմերը պէտք ունին խնամուելու: Անհրաժեշտ է աստիճանաբար գտումի ճամբով անկարողները եւ ըստ բախտի ուսուցչութեան կապուած անձերը հեռացնել եւ զանոնք փոխարինել որակեալ տարրերով: Կարելի չէ թոյլատրել որ մեր ուսուցիչներու ընդհանուր թիւին

մէջ, Յի վրայ մէկը տակաւին նախակրթարանի մակարդակ ունենայ: Առաջարկուած բարեփոխութիւնը կը պահանջէ հետապնդուած աշխատանք եւ թոշակներու յաւելում: Կարելի չէ տկար ուսուցչական կազմէ մը պահանջել աւելին քան այն ինչ որ ան կրնայ տալ: Մեր ժողովուրդը պէտք է գիտակցի այս իրողութեան: Վերաորակաւորման դասընթացքը պէտք է պարտադիր ըլլայ եւ յաճախակի: Ուսուցչութիւնը պէտք է դարձնել փնտռուած ասպարէզ:

Մեր դպրոցներուն մէջ, մեծ դեր ունին նաեւ կատարելիք մեր տնօրէնները: Արդարեւ տնօրէնն է ուղեղը եւ մղիչ ոյժը կրթական մեքենային: Ան իր իմաստուն եւ կորովի ղեկավարութեամբ պէտք է գիտնայ գործի լծել ուսուցիչները եւ անոնցմէ արդիւնք պահանջել: Վախճանական իմաստով, պէտք է գիտնանք որ ինչ որ կը ցանենք ան կը հնձենք: Դպրոցներու մէջ հրաշքի պէտք չէ հաւատալ: Ամէն յաջողութիւն հաւաքական աշխատանքի արդիւնքն է:

Մեր վարժարանները պէտք է ըլլան, պահելով հանդերձ հայերէն լեզուի եւ հայոց պատմութեան համար պահանջուած մակարդակը, մրցակցութեան մէջ մտնող միաւորներ օտար լաւագոյն դպրոցներու հետ որպէսզի հայ աշակերտութեան այն գանգուածը որ օտար վարժարան կը յաճախէ - գրեթէ մեր աշակերտութեան ընդհանուր թիւին կէսը - վերադառնայ հայ վարժարան: Յառաջիկայ տասնամեակի նուաճումներէն գլխաւորը պէտք է այս ըլլայ: Առ այդ մեր կրթական քարոզչութիւնը պէտք է դրուի աւելի դրական հիմերու վրայ:

Պէտք է հոս յիշել նոյնպէս բնաւ դպրոց չի յաճախող ինչպէս նաեւ նախակրթարանի Ա կամ Բ դասարանէն ուսումը լքող մանուկներու պարագան որ ահաւոր վիճակ մը կը պարզէ ազգային տեսակէտէն: Ասոնց թիւը, ինչպէս տեսանք, կրնայ հազարներու հասնիլ (աղջիկ թէ տղայ): Խնդրոյ առարկայ հայ ծնողները իրենց գաւակները դպրոց չեն դրկել անոր համար որ չունին պահանջուած նիւթական միջոցները եւ կամ կարեւորութիւն ընծայելով անոնց շարժական 10-15 լ-ոսկի վաստակին գանոնք կը գրկեն ուսումէն ու կը դրկեն աշխատանոց: Ահա այն տխուր պատկերը ի շարս այլ դրական իրագործումներու որ երեւան կու գայ այս ուսումնասիրութենէն:

Փակելի՛ք առաջ խօսքս, աւելորդ կը նկատեմ բացատրել - բազ-

*միցս ըստևած եւ կրկնած - այն կարեւոր դերը զոր մեր վարժարանները կոչուած են կատարելու Սփիւռքի հայապահպանման դժուար գործին մէջ: Կ'ուզեմ սակայն շեշտել որ անոնք պէտք չէ միայն բաւարարուին հայերէն լեզու եւ պատմութիւն սորվեցնելով, այլ օգտագործելով կրթութեան ուժականութիւնը պէտք է հայ աշակերտին տան ազգային դիմագիծ, գիտակցութիւնը իբրեւ սփիւռքահայ՝ իրեն սահմանուած սրբազան պարտականութեան եւ զայն կ'ուսուցանեն հոգածու տէրը մեր մշակութային ժառանգին եւ պատմական անկորրնչելի իրաւունքներուն:*

ՖՐԱՆՍԵՐԻՆԸ ԸՆՏՐԵԼ ԹԷ ԱՆԳԼԵՐԻՆԸ  
ԻԲՐԵՒ ՕՏԱՐ ԱՌԱՋԻՆ ԼԵԶՈՒ ԼԻԲԱՆԱՆԻ  
ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՉ

Անցեալ քսանըփնգ տարիներու ընթացքին եւ յատկապէս վերջին տասնամեակին, հանրային կարծիքը զբաղեցնող եւ լիբանանեան մամուլին նիւթ մատակարարող հարցերէն մէկը եղաւ պետական կրթական ծրագիրներու փոփոխութեան կապակցութեամբ, օտար լեզուներու ուսուցումը լիբանանեան վարժարաններուն մէջ: Թեր ու դէմ կարծիքներ արտայայտուեցան: Ոմանք առաջարկեցին Փրանսերէնը փոխարինել անգլերէնով, ա՛յն պատճառաբանութեամբ որ անգլերէնը աւելի տարածուած լեզու է, թէ ներկայիս արաբական բոլոր երկիրներու մէջ ընդհանրացած օտար լեզուն անգլերէնն է, թէ հոն աշխատող օտար մեծ ընկերութիւնները գլխաւորաբար անգլիախօս են, հետեւաբար աշխատանքի յարաբերութիւններուն բնականոն եւ հեշտ ընթացքին համար անհրաժեշտ է արաբերէնի կողքին անգլերէնը (մանաւանդ որ գայն սորվիլը աւելի դիւրին է Փրանսերէնէն), եւ թէ անգլերէն լեզուով գիտական հրատարակութիւնները աւելի ճոխ եւ առատ են: Ուրիշներ կը պնդեն պահել ներկայ գոյավիճակը, այսինքն՝ Փրանսերէն լեզուն, իբրեւ կրթութեան օտար առաջին լեզու: Վերջապէս, զօրաւոր հոսանք մը կայ ի նպաստ արաբականացումի, որ կը նախատեսէ կրթական բոլոր ծրագիրները, նոյնիսկ գիտական նիւթերը դասաւանդել արաբերէնով, ինչպէս որ ներկայիս պարագան է արաբ միւս երկիրներուն մէջ: Այս պարագային օտար լեզուն պիտի դասաւանդուի իբրեւ լոկ օտար լեզու, ըստ կամս, անգլերէն կամ Փրանսերէն:

Տեսնենք նախ, ամփոփ կերպով, օտար լեզուներուն տեղը Լիբանանի կրթական քաղաքականութեան մէջ եւ առ այդ հայ վարժարաններուն բռնած դիրքը:

**Ա.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ՕՏԱՐ ԼԵՁՈՒՆԵՐԸ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՎԱՐ-  
ԺԱՐԱՆՆԵՐԸ**

**1) ՊԱՏՄԱԿԱՆ ՏՈՒՆԵԱԼՆԵՐ**

Պատմութեան ամենահեռաւոր ժամանակներէն մեզի հասած տեղեկութիւնները կը վկայեն որ Լիբանանի բնակչութիւնը միշտ եղած է բազմալեզու: Ասիկա կը բացատրուի մասամբ Լիբանանի աշխարհագրական դիրքով, անոր քաղաքական եւ տնտեսական կացութենէն բխած պարտադրանքներով, եւ մասամբ պատմութեան ընթացքին այս ժողովուրդին ցուցաբերած վաճառականական եւ մշակութային կոչումով:

Առնելով միայն վերջին 3-4 դարերու ընդգրկած ժամանակաշրջանը, պիտի նկատենք որ 16րդ եւ 17րդ դարերուն, արաբերէնի կողքին, քաղքենի դասակարգը կը հասկնար ու կը խօսէր իտալերէնը, որովհետեւ առեւտրական արդիւնաւէտ յարաբերութիւններ գինք կը կապէին Ճենովայի եւ Վենետիկի: Այդ շրջանին, մեծ կարեւորութեամբ իտալերէն կը դասաւանդուէր Լիբանանի կարգ մը վարժարաններուն մէջ: Բաց աստի, մարոնի վարդապետներ իրենց աստուածաբանական ուսումը աւարտելու համար կը մեկնէին Վատիկան, ուրկէ կը վերադառնային քաջատեղեակ իտալերէնին:

Այս կացութիւնը սակայն շրջուեցաւ 19րդ դարու երկրորդ կէսէն սկսեալ ի նպաստ Փրանսերէնի, հիմնական հետեւեալ երեք պատճառներով:

- Ֆրանսա իր դիւանագիտական յարաբերութիւններով ինքզինք պարտադրած էր Օսմանեան կայսրութեան, իբրեւ պաշտպան հոն բնակող նախ լատին քրիստոնեաներուն, ապա հռովմէադաւան բոլոր քրիստոնեայ համայնքներուն, որոնք սերտօրէն կը կապուէին իրեն:

- Ֆրանսացի միսիոնարներ հետզհետէ տեղ գրաւեցին Օսմանեան կայսրութեան մէջ եւ իրենց ղպրոցներով տարածեցին Փրանսերէնի ուսուցումը:

- Ֆրանսական հսկայ դրամազլուխներ ներխուժեցին Օսմանեան կայսրութեան մէջ, իրենց հակակշռին ներքեւ առնելով անոր տնտեսութիւնը:

Արդարեւ՝ 1867-ին, Սուլթանին Փարիզ այցելութեան առիթով,

Փրանսական կառավարութիւնը անոր առաջարկեց մշակութային եւ կրթական յարաբերութիւններու նոր եղանակ մը եւ յաջորդ տարին իսկ Պոլսոյ մէջ բացուեցաւ Փրանսական Կալաթա-Սերայի լիսէն՝ 600 աշակերտներով: Այս համաձայնութիւնը նպաստեց Օսմանեան կայսրութեան մէջ գործող Փրանսական միսիոնարներու աշխատանքին, որոնց շնորհիւ հիմնուեցաւ աւելի քան 800 վարժարաններ՝ ուր 108.112 աշակերտներ Փրանսերէն կը սորվէին եւ Ֆրանսայէն կրթական նպաստ կը ստանային: (Տէս՝ Ancel, «Manuel historique de la question d'Orient», էջ 260, Paris, 1963).

1830-1840ի ընթացքին, Օսմանեան կայսրութիւնը ողողուեցաւ Փրանսական դրամագլուխներով, որոնց մէջ Ֆրանսայի մասնակցութիւնը անբաղդատելի էր: 1840ին, Օսմանեան պետական պարտքին 60,32%ը կը պատկանէր Ֆրանսային, 14,36%ը Անգլիոյ եւ 21,32%ը Գերմանիոյ: Օսմանեան առեւտրական ընկերութիւններու մէջ՝ օտար դրամագլուխներուն 53%ը Փրանսական էր, 13%ը գերմանական. մէկ խօսքով՝ Փրանսական դրամագլուխները առանձինն օտար ներդրումներուն 2/3ը կը կազմէին: (Տէս՝ Burkhard, «Le mandat français en Syrie et au Liban», էջ 17, 1934, Lyon).

Ուրեմն, երբ Օսմանեան կայսրութեան տարածքին վրայ Ֆրանսայի ձեռք ձգած տնտեսական բացառիկ դիրքին կը յաջորդէր Փրանսերէն լեզուին եւ մշակոյթին ծաւալումը, Լիբանանի բնակչութիւնը, որուն մէկ մեծ մասը քաղաքական եւ գեղացական այլ պատճառներով Ֆրանսայի կապուած էր, չէր կրնար խուսափիլ այս ազդեցութենէն:

Արդէն 1831էն սկսեալ Փրանսացի Յիսուսեան հայրեր եկած էին տեղը գրաւելու 17րդ դարուն Լիբանան հաստատուած իտալացի Յիսուսեան հայրերուն, որոնց գործունէութիւնը դադրած էր 18րդ դարու մէջ: 1831էն առաջ, Լիբանանի մէջ միայն միայն երեք դպրոցներ նպաստ կը ստանային Ֆրանսայէն: 1919ին, Ֆրանսայէն նպաստ կը ստանային 350 վարժարաններ՝ մեծամասնութեամբ նախակրթարաններ, որոնք արաբերէնի կողքին Փրանսերէն կ'ուսուցանէին 15.000 աշակերտներու:

1865էն ետք, այլ միսիոնարներու աջակցութեամբ եւ գործակցութեամբ, իտալական, ամերիկեան, անգլիական, ռուսական եւ գերմանական դպրոցներ եւս բացուեցան Լիբանանի մէջ: (Տէս՝ Ancel, op. cit. էջ 260).

Անկլո-սաքսոն ազդեցութիւնը աւելի տիրազի համայնքին մէջ տեղ կը գրաւէր եւ այդ՝ քաղաքական նպատակներով:

1897ին, Սուրիոյ եւ Լիբանանի մէջ կը գործէին 40է աւելի լուրջ եւ լման կարգերով վարժարաններ, որոնց աշակերտութեան 7000ը Փրանսերէն եւ միայն 1000ը անգլերէն կը սորվէին: (Տէս՝ Ville-neuve, «Les écoles françaises et étrangères en Syrie», p. 187).

Ֆրանսական Հոգատարութեան շրջանին, Փրանսերէնի կարեւորութիւնը այն աստիճան շեշտուեցաւ դպրոցներէն ներս, որ ան գործնապէս երկրին մէջ պաշտօնական առաջին լեզուի հանգամանք կը ստանար: Քրիստոնեայ համայնքներուն համար Փրանսերէնը արմատացած էր եւ դարձած մշակոյթի լեզու, այսինքն՝ այն լեզուն, որուն միջոցով մարդ կը զարգանայ, կը մտածէ, կ'արտայայտուի եւ կը ստեղծագործէ:

Այս շրջանին սակայն, ոչ-քրիստոնեայ համայնքները կը մնային կառչած արաբերէն լեզուին, որմէ հեռանալը իրենց համար կը նշանակէր հեռանալ արաբական հունէն: Ոչ-քրիստոնեայ համայնքներուն այս մտայնութիւնը կ'օգտագործուէր անկլո-սաքսոն պետութիւններու կողմէ՝ սահմանափակելու համար Փրանսական ազդեցութիւնը: 1936-1943ին, երբ երկրին անկախութեան շուրջ համայնքներու միջեւ խօսակցութիւններ եւ քաղաքական միութեան խմորումներ կ'ըլլային, Փրանսերէնի եւ արաբերէնի հարցը հետեւեալ կերպով կը լուծուէր.- Լիբանանեան սահմանադրութեան 10րդ յօդուածով կ'ըսուէր. «Ուսումը ազատ է այնքան ատեն որ ան չի վնասեր պետական կարգուսարքին, բարի վարուց եւ համայնքներու արժանապատուութեան...»: Իսկ 11րդ յօդուածով՝ «Արաբերէնը ազգային պաշտօնական լեզուն է: Յստակ օրէնք մը պիտի ճշդէ այն պարագաները՝ ուր Փրանսերէն լեզուն պիտի գործածուի»:

Այսպէս, անորոշ վիճակի մէջ կը ձգուէր հարցը: Արդարեւ այն յստակ օրէնքը, որուն մասին վերեւ կը խօսուի, լոյս չտեսաւ բնաւ:

## 2) ՆԵՐՎԱՅ ՏՈՒՆԱԼՆԵՐԸ

Կրթական նախարարութեան որոշումով եւ դահլիճի համաձայնութեամբ, Փրանսերէնը ոչ միայն օտար Ա. լեզուն է պետական վարժարաններուն մէջ, այլ մեծ մասամբ Փրանսերէնով կը դասաւանդուին գիտական առարկաները՝ միջնակարգի եւ երկրորդակա-



նի կարգերուն, ինչպէս նաեւ համալսարանի մէջ: Ան գրեթէ պետական անպաշտօն Բ. լեզուն է յատկապէս թեքնիք, գիտական եւ դիւանագիտական մարզերուն մէջ:

Անգլերէն լեզուն ալ, իր կարգին, չմնաց այն վիճակին մէջ, ուր կը գտնուէր 1943ին: Մեծ ճիգեր թափուեցան ամերիկեան պետութեան եւ հաստատութիւններու կողմէ անոր տարածման համար, որուն անկասկած նպաստեց Միջին Արեւելքի մէջ գործառնութիւն ունեցող ամերիկեան եւ անգլիական քարիւղի եւ առեւտրական ընկերութիւններու ներկայութիւնը:

Անձնական վարժարաններու աշակերտութիւնը կրնայ, եթէ ուզէ, գիտական առարկաները անգլերէնով ներկայացնել պետական քննութեանց: Պետութեան ընդգրկած այս քաղաքականութիւնը ազատ կը թողու անձնական վարժարաններու աշակերտութիւնը՝ ընտրելու իրրեւ օտար լեզու Ֆրանսերէնը կամ անգլերէնը:

Առեւտրական մարզին մէջ, Ֆրանսերէնը իրրեւ օտար լեզու գործածող հաստատութիւններուն թիւը, 1943ին, աշխատանքի շուկային 95%ը կը ներկայացնէր եւ անգլերէնը 5%: Ներկայիս, համաձայն մեր ձեռք ձգած ծանօթութիւններուն, այդ համեմատութիւնը 70% է Ֆրանսերէնի համար եւ 30% անգլերէնին: Ֆրանսերէնը կը մնայ թիւ 1 երկրորդ լեզուն՝ ըլլա՛յ գաւառներու եւ ըլլայ քաղաքներու բնակչութեան մօտ: (Տէս՝ Abou Sélim, «Travaux et jours», թիւ 50, 1974, Beyrouth).

Կարգ մը վիճակագրական տախտակներու տեղեկութիւնները կրնան աւելի լուսաբանել տիրող կացութիւնը.

1954ին, Պէյրութի բնակչութեան 42%ը Ֆրանսերէն կը խօսէր եւ կը կարդար, 22%ը անգլերէն: (Տէս՝ Churchill Charles, «The city of Beirut, a socio-economic survey», 1954, Beirut).

1958ին, Լեռնայի բնական բնակչութեան 23%ը Ֆրանսերէն գիտէր եւ 5% անգլերէն:

15 տարի ետք, 1970ին, համաձայն ծրագրի նախարարութեան տուած վիճակագրութիւններուն, կացութիւնը հետեւեալն էր.

Ֆրանսերէն.- Պէյրութ՝ 45.1%, Պէյրութի շրջակայք՝ 35%, այլ քաղաքներ՝ 41.7%, հողագործական շրջաններ՝ 34.1%, ամբողջ Լիբանան՝ 38%:

Անգլերէն.- Պէյրութ՝ 26.6%, Պէյրութի շրջակայք՝ 20.9%, այլ

քաղաքներ՝ 12.1%, հողագործական շրջաններ՝ 6.6%, ամբողջ Լիբանան՝ 15.1%:

Կրթական նախարարութեան վիճակագրութիւնները ցոյց կու տան, այս տարուան համար, որ ընդհանուր աշակերտութեան 87%ը Փրանսերէնը ունի իբրեւ օտար լեզու եւ 13%ը անգլերէնը: Վերոյիշեալ համեմատութեան մէջ 77%ը գիտական նիւթերն ու թուաբանութիւնը Փրանսերէնով կը սորվին: Այս թուանշաններէն ի յայտ կու գայ որ Լիբանանի ընդհանուր աշակերտութեան մօտ Փրանսերէնը վեց անգամ աւելի գործածուած է, քան անգլերէնը: Բաց աստի, Լիբանանի բնակչութեան 15%ը տան մէջ Փրանսերէն կը խօսի ընդհանրապէս, իսկ 15%ը երբեմն: (ՏԵՍ՝ Ministère du Plan, «Enquête sur la population active», 1970).

## Բ.- ԱՐԵՒՄՏԵԱՆ ՕՏԱՐ ԼԵՉՈՒՆԵՐԸ ԵՒ ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ

### 1) ՆԵՐԿԱՅ ՏՈՒԵԱԼՆԵՐ

Հայ Համալսարանաւարտներու Միութեան կողմէ Տոքթ. Զ. Լուռեանի գլխաւորութեամբ կատարուած հարցախոյզ մը, 1970-72ին, ցոյց կու տայ որ Լիբանանի մէջ գոյութիւն ունին հայկական 51 կանոնաւոր վարժարաններ՝ 17.177 աշակերտութեամբ: 36 վարժարաններու մէջ անգլերէնը կ'ուսուցանուի իբրեւ հիմնական օտար լեզու, 11.083 աշակերտներով: Իսկ 15 վարժարաններու մէջ Փրանսերէնը՝ 6094 աշակերտներով: Ֆրանսերէնը իբրեւ հիմնական լեզու առած վարժարանները կ'ուսուցանեն նաեւ անգլերէնը միջնակարգէն սկսեալ, սակայն հակառակը միւս բոլոր վարժարաններուն համար ճիշդ չէ:

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ (1971-72)

Ֆրանսերէն.- Դպրոցի թիւ՝ 15, աշակերտութեան թիւ՝ 6094, համեմատութիւն՝ 32,56%:

Անգլերէն.- Դպրոցի թիւ՝ 36, աշակերտութեան թիւ՝ 11.083, համեմատութիւն՝ 67,44%:

Մինչեւ 1950, բացի Աւետարանական համայնքի պատկանող վարժարաններէն, ուր անգլերէնի կողքին կ'ուսուցանուէր նաեւ տարրական Փրանսերէն մը, գերթէ միւս բոլոր հայ վարժարաններուն համար:

րուն մէջ հիմնական գլխաւոր օտար լեզուն Ֆրանսերէնն էր: Այդ թուականէն սկսեալ զանազան նկատումներով, որոնց մէջ անտարակոյս ապահով գործ մը ձեռք ձգելու մտահոգութիւնը զանց չէր առնուած, բազմաթիւ վարժարաններ հետզհետէ լքեցին Ֆրանսերէնը եւ կապուեցան անգլերէնին:

Այս կացութեան պատճառով անոնք որ Լիբանանեան Պաքալօրէայի պարտադրանքներէն առաջ կրցան Ամերիկեան Համալսարան մտնել, շարունակեցին իրենց ուսումը եւ երբ զայն աւարտեցին, կամ հաստատուեցան Պէյրութ եւ կամ՝ աւելի փայլուն ապագայի հեռանկարներու խայծէն մղուած՝ մեկնեցան Ամերիկա, բարձրագոյն ուսման համար: Սակայն անոնք որ չկրցան պետական Պաքալօրէա ձեռք ձգել՝ ընդունուեցան Ամերիկեան Համալսարան. մաս մը մեկնեցան Ամերիկա, ուր Հայ Սքոլի վկայական մը բաւարար կը նկատուէր համալսարան ընդունուելու համար: Ստիպուեցան արտասահման երթալ նաեւ այն ուսանողները, որոնք Ամերիկեան Համալսարանի գտումի քննութիւններուն եւ կամ Ֆրանսական Համալսարաններու մուտքի քննութիւններուն ձախողեցան:

Այս ուսանողներէն շատերը արտասահման մեկնեցան վերադառնալու առաջադրանքով: Ֆրանսա գացողները, առ հասարակ վերադարձան: Սակայն, ինչպէս կ'ըսէ Փրոֆ. Զահլան, ՄԱԿին դրրկած իր տեղեկագրին մէջ, արտագաղթող ուսանող մը երբ երկու տարիէն աւելի մնացած է արտասահման (յատկապէս Ամերիկա), միայն 25% յոյս կայ որ վերադառնայ:

2) ԳՐԱՆՍԵՐԷՆԸ ԵՒ ԱՆԳԼԵՐԷՆԸ ՄԻԱՏԵՂ ԱՌԱՅ ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ ՊԱՐԱԳԱՆ

Ասոնք կրցան օգտուիլ թէ՛ Ամերիկեան Համալսարան մտնելու պատեհութենէն, ի գին անգլերէնին համար յաւելեալ ճիգ մը թափելու, եւ թէ Ֆրանսական եւ Պետական Համալսարան մտնելու կարելիութենէն: Հոս կ'արժէ աւելցնել որ Ֆրանսական Համալսարան ընդունուելու դժուարութիւնները բաղդատաբար աւելի են, քան Ամերիկեան Համալսարան. յետոյ՝ կրթաթոշակները զգալապէս նուազ եւ մատչելի են:

Գալով Լիբանանեան Համալսարանին, ուր օտար լեզուն ինչպէս վերեւ յիշեցինք, Ֆրանսերէնն է, արձանագրութիւնը բոլորովին

ձրի է: Կան նաեւ պետական թեքնիք եւ արհեստից վարժարանները, ուր դարձեալ պահանջուած օտար լեզուն Ֆրանսերէնն է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

**Փրոֆ. Սէլիմ Ապու կը գրէ.** «Զարմանալիօրէն վերջին 15 տարիներու ընթացքին, Լեռնալիբանանի մարոնիները եւ յատկապէս հայերը մեծ նիգ թափեցին փոխարինելու համար իրենց դպրոցներուն մէջ ֆրանսերէնը անգլերէնով: Դժբախտաբար սակայն, պետական վիճակագրութիւնները ցոյց կու տան որ արտագաղթը, այս շրջաններուն, կեդրոնացած է գլխաւորաբար այս երկու համայնքներուն մէջ»: (Տէս Սելիմ Աբու, «Travaux et jours», թիւ 50, 1974):

**Փրոֆ. Սէլիմ Ապուի այս մեկնաբանութիւնը, որուն ուշադրութեանն անշուշտ վրիպած է այն պարագան որ արտագաղթող հայերուն աչքառու մէկ տոկոսը սուրիահայեր են, որոնք զրկուած ըլլալով Լիբանան տեղաւորուելու եւ հոն կարենալ աշխատելու հնարաւորութիւններէն՝ կը լքեն երկիրը ու կը գաղթեն, կը մնայ այնուամենայնիւ մտահոգիչ երեւոյթ՝ ազգային տեսակէտէ:**

**Անուրանալի է որ անգլերէն լեզուն ներկայիս կը վայելէ միջազգային մակարդակով ճանաչում եւ անիկա շատ աւելի տարածուած է, քան Ֆրանսերէնը:**

**Սակայն, նկատի ունենալով Լիբանանի ներկայ վիճակը օտար լեզուներու նկատմամբ, վերեւ յիշուած վիճակագրական տուեալներու լոյսին տակ, մեր զաւակներուն սորվեցնելով միայն անգլերէնը իբրեւ օտար լեզու, մենք լաւ կերպով կը նպաստենք անոնց արտագաղթին, որուն հետեւանքները ծանօթ են մեր բոլորին:**

**Հայ համայնքին այս ծայրայեղ դիրքաւորումը երկու օտար լեզուներու ընտրութեան մէջ կը նկատենք աղիտաբեր: Մեր երկրորդական վարժարանները պարտին ունենալ երկու օտար լեզու, որպէսզի իրենց աշակերտները որեւէ համալսարանի դուռները թակելու բախտը ունենան եւ չստիպուին գաղթելու՝ երբ Ամերիկեան Համալսարան արձանագրուելու կարելիութիւններէն զրկուած են:**

**Նախակրթարաններու պարագային, եթէ ընտրել պէտք ըլլայ մէկուն կամ միւսին միջեւ, կը նախընտրենք Ֆրանսերէնը իբրեւ**

առաջին օտար լեզու, եթէ ոչ բոլոր վարժարաններուն՝ գոնէ անոնց մէկ մեծ մասին համար, քանի որ Ֆրանսերէն գիտցող մը կրնայ աւելի դիւրութեամբ սորվիլ անգլերէնը: Չմոռնանք նաեւ որ նախակրթարանի աշակերտութեան երեքէն մէկը կը հասնի միջնակարգ եւ տասէն մէկը՝ երկրորդական:

Այն մտայնութիւնը թէ անգլերէն լեզուին ծանօթ երիտասարդ մը աւելի դիւրութիւն կ'ունենայ իր ապագան ապահովելու՝ բոլորովին ճիշդ չէ Լիբանանի համար: Ինչպէս վերեւ յիշեցինք, Ֆրանսերէն լեզուն պահանջող հաստատութիւնները երկրին աշխատանքի շուկային դեռ եւս 2/3-ը կը կազմեն: Բաց աստի, ներկայիս ազատ ասպարէզներու եւ կամ առեւտրական հաստատութիւններու մէջ հետզհետէ կը պահանջուի երկու օտար լեզու անպայման:

Կայ նաեւ այն պարագան որ Լիբանանի ժողովուրդին մէկ կարեւոր մասը զգացական պատճառներով կապուած կը մնայ տակաւին Ֆրանսական մշակոյթին եւ լեզուին: Մեր զաւակներուն, արբերէնի եւ ի հարկին անգլերէնի կողքին Ֆրանսերէն գիտնալը գիրենք աւելի կը կապէ այս երկրին:

Այս հակիրճ ուսումնասիրութեամբ ուզեցինք պարզեպէս որոշ մատնանշումներ ընել, արտագաղթին տուն տուող պատճառներէն ոմանց մասին, թելադրուած ազգային շահերէ: Դժբախտաբար, օրաթերթի նեղ սիւնակները թոյլ չէին կրնար տալ մեզի աւելի խորացնելու հարցը:

## ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ<sup>8</sup>

Սփիւռքի բոլոր հայ վարժարանները կը հետապնդեն երկու հիմնական նպատակ: Հայ աշակերտին տալ ազգային դիմագիծ եւ պետական կրթական ծրագրի ընդմէջէն որոշ կազմաւորում կարենալ կուրծք տալու համար կեանքի պահանջներուն եւ իր տեղը ճշդելու համար մարդկային ընկերութեան մէջ:

Լիբանանի պարագային, առաջին աշխարհամարտէն ետք, երբ արեւմտահայ տարագիր ազգաբնակչութիւնը կայք հաստատեց ասպնջական այս երկրին մէջ, իր Ֆիզիքական գոյութեան առընթեր մտածեց նաեւ ի պատիւ իրեն ազգային դիմագիծի անխաթար պահպանման նախանձախնդրութեամբ, եկեղեցիներ կառուցանել եւ դպրոցներ կանգնել ուր մայրենի լեզուն, հայոց պատմութիւնը կրօնական եւ եկեղեցական դաստիարակութիւնը եւ ազգային մշակոյթը առանցքը կազմեցին կիրարկուող ուսումնական ծրագիրներուն:

Երկրորդ աշխարհամարտէն յետոյ, յատկապէս 1950էն ետք, գաղթական հայութիւնը հետզհետէ տեղաւորուելով դուրս կու գար իր թաղի սահմաններէն զոր կը նկատէր իր ընկերային կեանքին հարազատ միջավայրը եւ ուր կ'ապրէր ինքն իրմով եւ ինքն իր մէջ ամփոփուած ու կապեր կը հաստատէր իր նոր շրջապատին հետ: Վաղուան նիւթական մտահոգութիւնը եւ աւելի բարւոք վիճակի մը հեռանկարները զինքը կը մղէին օգտապաշտ քաղաքականութիւն որդեգրելու եւ առ այդ յաւելեալ կարեւորութիւն ընծայելու տեղական եւ օտար լեզուներու ուսուցումին:

Նիւթապէս աւելի ամրապնդուած, գաղթական հայը իր գաւազներուն ուզեց տալ երկրորդական եւ համալսարանական ուսում եւ

<sup>8</sup> Դասախօսութիւն տրուած Ուսումնական Խորհուրդի կազմակերպութեամբ:

այդ իսկ պատճառով պետական վկայական ապահովելը նկատեց առաջնահերթ մտահոգութիւն:

Ստեղծուած նոր հոգեվիճակը եւ կեանքի նոր դասաւորումը ազգային իշխանութիւնները եւ առհասարակ կրթական կեանքի պատասխատուները դրին նոր հրամայականի մը առջեւ:

Անոնք չէին կրնար անտեսել նոր գոյավիճակը որ արդար էր եւ շարունակել կրթական նախկին դրութիւնը այլապէս կրնային կորսնցնել զգալի տոկոս մը իրենց աշակերտութենէն որ այս պարագային օտար վարժարան յաճախելով պիտի կորսնցնէր հայ վարժարանի շունչը եւ պիտի գրկուէր ազգային դաստիարակութենէ:

Անհրաժեշտ էր ներդաշնակութիւն մը ստեղծել ժողովուրդի պահանջներուն եւ ազգային մտահոգութիւններու միջեւ եւ այդ կրնար ըլլալ կրթական ծրագիրներու վերատեսուծեամբ եւ հոն հարկադրաբար լայն տեղ տալով տեղական անմիջական պահանջներուն համապատասխանող առարկաներու ուսուցման ի վնաս դժբախտաբար հայերէն լեզուին եւ հայերէնով դասաւանդող առարկաներուն:

Միւս կողմէ, Լիբանանի անկախութենէ յետոյ պետական կրթական բազմաթիւ տնօրինումներ, վարչական թէ ծրագրային ալ եւս կամայականութեան առիթ չէին տար: Արդարեւ Լիբանանի կրթական բարեփոխեալ նոր ծրագիրներու ամբողջական գործադրութիւնը նաեւ վարչական այլ պարտադրանքներ հայ վարժարանները կը դնէին դժուար կացութեան մը առջեւ եւ առ այդ կատարուած պարագայական պատշաճեցումները անբաւարար արդիւնք կու տային ոմանց մօտ ազգային կրթական ծրագրի իւրացման տեսակէտէն, իսկ ուրիշներու մօտ պետական կրթական ծրագրի կիրարկման մէջ:

Արդարեւ պետական կրթական ծրագիրները որոնք անկախութենէն առաջ ձեւաւորուած էին հիմնուելով Փրանսական կրթական ծրագիրներու վրայ, 1944-48 ունեցան կարեւոր բարեփոխութիւններ: 1961ին գործադրութեան դրուեցան փորձառական գիտութեանց պաքալորեան, արդի մաթեմատիքը, քաղաքացիական դաստիարակութեան նոր ծրագիրները: 1963էն սկսեալ ուսուցիչներու վերաւորակաւորման մնայուն վարիչ կազմ մը կը կազմակերպէ յատուկ դասընթացքներ որոնց պարտադրաբար պէտք է հետեւէին

կրթական նախարարութեան կապուած բոլոր ուսուցիչ-ուսուցչու-  
հիները: 1971ին լոյս տեսան բարեկարգչական նոր օրէնքներ որոնք  
բարեփոխութիւններ յառաջ բերին, յատկապէս միջնակարգի եւ  
երկրորդականի ծրագիրներուն մէջ: 1976ին նոր յանձնախումբ մը  
նշանակուեցաւ հիմնովին վերատեսութեան ենթարկելու եւ բարե-  
կարգելու համար կրթական ծրագիրները, նախակրթարանէն մին-  
չեւ երկրորդական: Յանձնախումբը բաւական աշխատանք տարաւ  
եւ փորձեց այժմէացնել մասնաւորաբար երկրորդականի կրթական  
ծրագիրը: Յարդ գործնական ոեւէ քայլեր չ'առնուեցան եւ պատ-  
րաստուած աշխատանքն ալ կը մնայ գգրոցներու մէջ փոշեթաթախ:  
Անշուշտ պատերազմն ալ իր կարգին չի նպաստեց վերոյիշեալ բա-  
րեկարգութիւններու փութացման:

1951ին կը հիմնուէր իրանանեան համալսարանը եւ 26 Դեկտ-  
1961ին լոյս կը տեսնէր բարձրագոյն ուսման առնչուած իրանան-  
եան օրէնքը որուն համաձայն Լիբանանի հողի վրայ գոյութիւն ու-  
նեցող ոեւէ համալսարան արձանագրուելու համար իրանանցի  
թեկնածուին պայման էր ունենալ իրանանեան պաքալորիա բ․ մաս  
եւ կամ պաշտօնապէս անոր համագոր ճանչցուած վկայական մը:  
Համագորութեան ճշդումը պիտի կատարէր յատուկ յանձնախումբ  
մը բաղկացած գործող համալսարաններու ինչպէս նաեւ դատական  
եւ կրթական նախարարութեանց ներկայացուցիչներէ: Այս յանձ-  
նախումբը կը գլխաւորուէր կրթական նախարարութեան ընդհա-  
նուր տնօրէնը եւ կամ անոր ներկայացուցիչը: Ընդհանուր սկզբ-  
բունքով համագորագիր կը տրուէր այն բոլոր օտար վկայականնե-  
րուն որոնց շնորհիւ թեկնածու մը կրնար համապատասխան երկ-  
րին մէջ համալսարան արձանագրուիլ: Բացառութիւն կը կազմէր  
իրաւաբանական ճիւղը որուն իրանանցի թեկնածուն կրնար ար-  
ձանագրուիլ համագոր օտար վկայականով միայն մինչեւ Դեկտ-  
1963 որմէ յետոյ ոեւէ համագոր վկայական չէր ընդունուէր:

1965ին Յունիս 8ին լոյս կը տեսնէր թեքնիք պաքալորիայի օրէն-  
քը: Փետր․ 1970ին լոյս կը տեսնէր օրէնք մը որ կը ջնջէր համագո-  
րութեան սկզբունքը վարաչական եւ քաղաքական գիտութեանց  
ճիւղին արձանագրուելու համար:

Վերջապէս 17 Դեկտ․ 1973ին լոյս կը տեսնէր այն օրէնքը որուն  
համաձայն իրանանցի ուսանողներու Լիբանանի մէջ իրենց բարձ-



րագոյն ուսումը ընել ուզողի համար վերջնականապէս կը ջնջուէր համագոր վկայականի դրուժիւնը: Բացառութիւն կը կազմէին անոնք որոնց ծնողքը գոնէ 3 տարիէ ի վեր արտասահման հաստատուած էին գործի բերումով:

1976էն յետոյ պատերազմական վիճակին հետեւանքով լոյս տեսան բացառութիւն կազմող նոր օրէնքներ, ամենավերջինը այս ամառ որ կ'ընդունէր համագոր վկայականի դրուժիւնը մինչեւ 1985 ներառեալ:

1973ի պետական օրէնքին կը հետեւէր կրթական նախարարութեան ընդհանուր տնօրէնին կողմէ դրկուած շրջաբերական մը, որ յիշեցնելէ յետոյ 1961-1973 օրէնքները կ'սպառնար պատժական միջոցներու դիմել անաստող հաստատութեանց նկատմամբ:

Որոշ հեռաւորութեամբ առնուած այս վճռական որոշումները հիմնովին վերջ կը դնէին տակաւին դիւրութիւններ ընծայող համալսարաններուն եւ լիբանանեան պաքալորիան բ. մասը կը դարձնէին բարձրագոյն ուսման արձանագրուելու միակ միջոցը:

Օգտակար կը նկատեմ հոս յիշել ոչ մինչ այդ Ամերիկեան եւ Ֆրանսական համալսարաններու գանազան ճիւղերուն արձանագրուելու համար այն թեկնածուներուն հանդէպ որոնք պաքալորիայ չունէին հասկացողութիւն կը ցուցաբերուէր: Հինէն եկող դժուարութիւններ էին:

Ամերիկեան համալսարանը High school շրջանաւարտ աշակերտները կ'ընդունէր Փրէշմէն եւ այդ ընթացքով ուսանողը կը շարունակէր իր համալսարանական ուսումը: Ասիկա ընդհանրացած էր մանաւանդ այն շրջանին երբ ազատ ասպարէզներու սէնտիքաները լիբանանեան պաքալորիան պարտադիր չէին նկատեր բարձրագոյն ուսման համար:

Ֆրանսական համալսարաններու մէջ կար դարձեալ հինէն եկող օրէնք մը որ բարեփոխուեցաւ 1958ի Ժէնէրալ Տը Կոյի օրով, որուն համաձայն եթէ երկրորդական ուսումը աւարտած անձ մը 21 տարեկան է եւ ցարդ չէ ներկայացած պաքալորիայի քննութեան, եւ կամ եթէ ոեւէ պարագային 25 տարիքը բոլորած է կրնայ արձանագրուիլ համալսարան պայմանաւ սակայն որ յաջողի նոյն համալսարանի մուտքի քննութեան: Այս կարգադրութենէն չէին կրնար օգտուիլ բժշկագիտական ճիւղերու թեկնածուները:

Այս բոլորէն դուրս մէջ ընդ մէջ, կրթական նախարարութեանէն

բխած հրահանգներ կը շեշտեն պետական որոշումներուն ենթարկուելու եւ պետական կրթական ծրագիրը անթերի գործադրելու պահանջքը, յատկապէս ձրիավարժ վարժարաններու պարագային ուր ստոյգ թերացումներ դեռ եւս տեղի կրնային տալ վճարուելիք նպաստի մասնակի կամ ամբողջական կախակայման: Պետական քննիչներ կը մտնեն դասարան կը քննեն դասագրքերը, կ'ընեն հարց ու փորձեր եւ վերջապէս կը հսկեն կրթական ծրագրի գործադրութեան վրայ ու առ այդ կը տեղեկագրեն: Վարչական գետնի վրայ, քննիչները շատ խիստ են ուսուցիչներու հպատակութեան, անոնց ունեցած վկայականներուն եւ մասնագիտութեան նկատմամբ, եւայլն:

Յստակ ձգտում կայ պետութեան մօտ, դպրոցական եւ համալսարանական ուսումը իր ամբողջական հակակշռին ենթարկելու: Իսկ միւս կողմէ, սահմանադրութեան բազմամշակութային տրամադրութիւնները հիմք բռնելով, քրիստոնեայ վարժարաններու խմբակցութիւններ, յատկապէս կաթողիկէ վարժարաններու եպիսկոպոսական յանձնախումբեր ճիգ չեն խնայեր պահելու համար աշխատանքի որոշ ազատութիւն:

Հայ վարժարանները նախքան պետական օրէնքներու գործադրութեան եւ Լիբանանեան պաքալորիա ունենալու անհրաժեշտութենէ բխած մտահոգութեան տասնամեակներ շարունակ գործադրեցին իրենց յատուկ կրթական ծրագիրներ: Ֆրանսական թեքում ունեցող վարժարանները կը ներշնչուէին ֆրանսական վկայականներու առաջնորդող կրթական ծրագիրէն, իսկ անգլերէն թեքում ունեցողները կը գործադրէին հայ սքոլի կրթական ծրագիր որ կ'առաջնորդէ աշակերտը ամերիկեան համալսարանի ֆրէշմէն դասարանի մուտքին: Կային տակաւին ուրիշներ որոնց համար հիմնականը հայերէն լեզու եւ հայ մշակոյթն էր միայն:

Պետական կրթական խիստ հարկադրանքներու իբր հետեւանք հայ վարժարանները աստիճանաբար բարեփոխեցին իրենց կրթական ծրագիրը:

Անհրաժեշտ էր ներդաշնակութիւն մը ստեղծել ժողովուրդի պահանջներու եւ ազգային մտահոգութիւններուն միջեւ եւ այդ կրնար ըլլալ կրթական ծրագիրներու իրագործման համար յատկացուած դասապահերու վերատեսուծեամբ եւ ինչ որ կը նշանա-

կէր հարկադրաբար յայն տեղ տալ պետական ծրագրի անմիջական պահանջներուն համապատասխանող առաջարկներու ուսուցման ի վնաս դժբախտաբար հայերէն լեզուի եւ հայերէնով դասաւանդուող առարկաներու:

Թափուած ճիգերը թէպէտ արդիւնաւէտ եղան պետական վկայականներու ստացման տեսակէտէն, քանի որ հայ վարժարանները յուսախաբ չեն ըրած հայ ծնողները այդ առընչութեամբ եւ ընդհակառակը երբեմն ալ ի պատիւ իրենց փայլուն արդիւնքներ ձեռք ձգած են, սակայն ընդհանուր նահանջ կը նկատուի ազգային ծրագիրներու իւրացման գծով:

Ասիկա արդէն հարցը կը դնէր ազգային մակարդակով կրթական քաղաքականութեան մը մշակման որուն պատրաստութեան համար, ազգային գաւառական ժողովի պահանջքով, համապատասխան մարմիններ գործի լծուեցան եւ 1978ին վաւերացնել տուին, վերոյիշեալ ժողովի կողմէ, կրթական քաղաքականութեան ծրագիր մը որուն մէջ իբրեւ հիմնական սկզբունք կը բնորոշուէին հետեւեալ 2 կէտերը:

ա) «Լիբանանեան կրթական ծրագրի ամբողջական կիրարկում եւ առ այդ հետեւողական աշխատանք աշակերտին ապահովելու համար պետական վկայական:

բ) Ազգային կրթական ծրագրի կարելի գործադրութեամբ, ձգտիլ աշակերտութեան տալ ազգային առողջ դիմագիծ, անոր փոխանցել մեր ազգային-եկեղեցական մշակութային ժառանգը, սորվեցնելով հայերէն լեզու, կրօնագիտութիւն եւ հայոց պատմութիւն»:

Գործնական գետնի վրայ հայագիտական նիւթերու եւ հայերէնով դասաւանդուած առարկաներու տրամադրուած դասապահերու թիւը ինչպէս վերեւ յիշեցինք անխուսափելիօրէն սահմանափակուեցաւ:

Ազգային եւ պետական կրթական ծրագիրներու գոյգ պահանջներուն գոհացում տալու դիտաւորութեամբ առնուած քայլերը, ազգային վարժարաններու մէջ, ներկայիս հետեւեալ պատկերը ցոյց կու տան:

Զրիավարժ վարժարաններու պարագային ուր խիստ հակակշիռ կայ պետական ծրագրի գործադրութեան տեսակէտէն:

36 պահի վրայ, 14ը հայերէնով են, 20ը պետական կրթական

ծրագրին կը հետեւին արաբերէնով կամ օտար լեզուով, 2ը մարգանք, երգ, հայերէնով:

Վճարովի վարժարաններու պարագային ուր դեռ եւս որոշ հանդուրժողութիւն կը վայելենք՝

Նախակրթարանի մէջ.-

36 պահի վրայ, 20ը հայերէնով է, 14ը պետական կրթական ծրագրի կ'առնչուի 2ը մարգանք, երգ, հայերէնով:

Միջնակարգի մէջ.- 36 պահի վրայ, 8ը միայն հայերէնով է եւ մնացեալ 28ը պետական կրթական ծրագրի կը հետեւի հայերէնով կամ օտար լեզուով:

Երկրորդականի մէջ.- 36 պահ է:

Իրերու այս կացութեան մէջ երբ կարելի չէ բարձրացնել հայագիտական նիւթերու յատկացուած դասապահերու թիւը ինչպէս նաեւ կարելի չէ առաւել եւս խճողել դասացուցակը, ազգային իշխանութիւնը իր ճիգերը կ'ուզէ կեդրոնացնել յատկապէս որակի մակարդակով եւ անով իսկ ապահովել նուազագոյն պահերով առաւելագոյն արդիւնք եւ այդ՝ բարելաւելով ուսուցման մեթոտները, արդիականացնելով դասագրքերը եւ օժտելով վարժարանները մանկավարժ ու ատակ ուսուցչական կազմերով ինչ որ մեզ կ'առաջնորդէ հետեւեալ կէտերու իւրացման:

ա) Նախ յստակ կերպով ճշդել ազգային դաստիարակութեամբ մեր ակնկալած արդիւնքը ուսման զանազան հանգրուաններուն՝ նախակրթարան, միջնակարգ եւ երկրորդական, ապա վերագնահատել հայերէն լեզուի, հայոց պատմութեան եւ կրօնքի ուսուցման կրթական ծրագիրները նկատի առած անոնց համար յատկացուած դասապահերու թիւը:

բ) Պատրաստել հայագիտական նիւթերու համար արդիական ըմբռնումով եւ մանկավարժական ներկայ պահանջներուն զոհացում տուող դասագրքեր որոնք ըլլան հաղորդական աշակերտի ներկայ աշխարհին հետ եւ համապատասխան վերոյիշեալ բարեփոխուած կրթական ծրագրին:

գ) Կազմակերպել մանկավարժական կազմաւորման եւ մեթոտաբանութեան նուիրուած պարտադիր դասընթացքներ նախակրթարաններու ուսուցչական կազմերուն համար եւ վերակաւորման դասընթացքներ մնացեալներուն:

դ) Առաջացնել ուսուցչական համագումարներ եւ հոն խորհրդ-  
դակցութեան հրաւիրել ներկաները ազգային կրթական կեանքը  
յուզող հիմնական հարցերու շուրջ:

Սակայն այս բոլորը պիտի չի տան ակնկալած արժէքը եթէ մեր  
վարժարաններէն ներս չի կարենանք ստեղծել անհրաժեշտ ազգային  
միջնորդող առանց հասնելու այլամերժութեան եւ կտրուելու մեր  
չըջապատէն եւ այլ մշակոյթներէն:

Այս բոլորը պիտի մնան ապարդիւն եթէ չի կարենանք ունենալ  
հաւատաւոր ուսուցիչներ որոնք իրենց շունչով պիտի կարենան  
հրահրել աշակերտներուն մէջ ազգային գիտակցութեան ոգին եւ  
ներշնչել անոնց իտէպ առանց որուն բարձրացող սերունդները կը  
դատապարտուին ամլութեան եւ ուժացումի:

Վերջին հաշուով, հրաշքներ չկան կրթութեան բնագաւառին  
մէջ: Կը հնձենք այն ինչ որ կը ցանենք: Եւ այս պարագային պէտք  
ունինք բարեխիղճ մշակին, անոր հասկացողութեան եւ նուիրումին  
եւ մեր կարգին պարտաւոր ենք մեր կողմէ անոր հանդէպ ցուցաբե-  
րել արդար գնահատանք:

Որքան պէտք է լեզուին ու պատմութեան ուսուցումը հայեցի  
դաստիարակութեան համար, նոյնքան եւ անհրաժեշտ է ուսուցչին  
շունչը անոր կենսագործման եւ բեղմնաւորման համար: Արդարեւ  
ազգային առողջ դաստիարակութիւնը պէտք չէ սահմանափակուի  
հայերէն լեզուի եւ հայոց պատմութեան ուսուցմամբ այլ պէտք է  
ձգտի աշակերտը խարսխել իր ինքնութեան վէմին, չի կտրել զինքը  
իր արմատներէն, եւ զայն գօտեպնդել հաւատքի ոյժով հանդէպ իր  
ժողովուրդի արժէքներուն եւ դարաւոր մշակոյթին, վերջապէս  
դարձնել զինքը յանձնառու գիտակցութեան ճամբով եւ ոչ պարա-  
գայական խանդավառութեամբ, արդարեւ պատմութիւնը կը կեր-  
տուի յանձնառու մարդոցմով:

Մեր կրթական հաստատութիւններու առաքելութիւնը պէտք է  
դերեւս վերանայուի այս հորիզոններով եւ ազգային դաստիարա-  
կութեան իմաստը, տեղը եւ սահմանները տեղ գտնեն այս հեռան-  
կարներով առանց որ մեղանչում կատարենք մեր միւս պարտակա-  
նութեան որ է յարգել պետական կրթական ծրագիրը եւ մեր աշա-  
կերտներուն ապահովել պետական վկայականներ:

Ինչպէս գիտէք դպրոցի եւ ուսուցչի դերը անհատի կազմաւոր-

ման մէջ անժխտելի է: «Ամէն աշխատանք մանուկի վրայ, կ'ըսէ Durkheim կ'ենթադրէ վախճանականութիւն մը կամ առնուազն ուղղութիւն մը»:

Կ'ուզենք ըլլալ հետեւողական մեր առաջադրանքներուն նկատմամբ եւ հաշտ մեր ազգային խղճի թելադրութիւններուն հետ կ'ուզենք պատրաստել լաւ եւ յանձնառու հայ, ծանօթ հայ մշակոյթին, հպարտ իր ինքնութեամբ, բայց ոչ կտրուած իրենց շրջապատէն եւ անոր պահանջներէն:

Փակելէ առաջ գրոյցը կ'ուզեմ յիշել կրթական հարցերու մեծ մասնագէտի մը խօսքը որուն համաձայն դպրոցը հաստատութիւն մըն է ազուցուած անքակտելի կապերով կեանքին եւ անով իսկ մարդկային ընկերութեան պահանջներուն ու թոյլ տուէք որ մեր պարագային համար, ես ալ աւելցնեմ «նաեւ ազգին եւ եկեղեցւոյ ծառայութեան»:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ  
ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Պորտէն, Ֆրանսացի տնտեսագէտ մը, 16րդ դարուն ըսած է.  
«Իրական դրամագլուխը մարդկայինն է»: Պէտք եղաւ աւելի քան  
երեք դար, որպէսզի այդ վարկածին ճշգրտութիւնը ապացուցուի:

Արդարեւ, երկարատեւ, մարդիկ մտածած են, մասնաւորաբար  
տնտեսագէտները, որ երկրի մը տնտեսական բարգաւաճումը, որ  
համագօր է ընդհանրապէս ներքին արտադրութեան աճին, ար-  
դիւնք է գոյութիւն ունեցող դրամագլուխին վրայ կիրարկուած  
մարդկային աշխատանքին: Այդ դրամագլուխը կրնայ ըլլալ կալ-  
ուածային, մեքենական, նիւթական կամ մասնագիտական: Սա-  
կայն, ներկայիս, արտադրութեան ազդակներու այս նեղ ըմբռնու-  
մը տեղի տուած է աւելի ընդարձակ հասկացողութեան: «Դրամա-  
գլուխ»ի նախկին պարզ մեկնաբանութեան միացած են նոր երան-  
գաւորումներ, յատկանիշներ, որոնց ունեցած կարեւորութեան հա-  
մար յաճախ կը խօսուի ընկերային դրամագլուխի, հաւաքական  
դրամագլուխի, տնտեսական դրամագլուխի ու մանաւանդ՝ մարդ-  
կային դրամագլուխի մասին:

Բայց ի՞նչ է իսկապէս մարդկային դրամագլուխը:

Մեկնելով այն իրողութենէն, որ մարդը անհրաժեշտ տարր մըն  
է տնտեսական աշխարհի մէջ, յատկապէս արտադրութեան մարզէն  
ներս, տնտեսագէտները կրցած են որոշապէս ճշդել գոյութիւն  
ունեցող կապը ձեռք բերուած արդիւնքներու եւ աշխատող անհատ-  
ներու որակին միջեւ. աւելի պարզ խօսքով, երբ աշխատաւորը ու-  
նեցած է որոշ զարգացում, արդիւնքը եղած է համեմատաբար աւե-  
լի գոհացուցիչ:

Այս դիտանկիւնէն քննելով հարցը, մարդկային դրամագլուխը  
մեզի կը ներկայանայ իբրեւ գումարը աշխատանքի լծուած մարդոց  
կարողականութեան, ճարտարութեան եւ զարգացումին:

Տնտեսագէտները կրցած են հաստատել, որ ընկերութեան մը կամ արդիւնաբերութեան մը արտադրութիւնը 3/5ով կը պատկանի մարդկային դրամագլուխին եւ 2/5ով միայն նիւթական սարքաւորումներու, դրամական ներդրումի, այլ խօսքով՝ նիւթական դրամագլուխին:

Տնտեսագէտները նաեւ կարեւորութեամբ կը շեշտեն այն իրողութիւնը, որ կարելի չէ պարտականութիւն մը կամ գործ մը լաւ կատարել, եթէ ենթական չէ ըմբռնած ի յառաջագունէ այն ծառայութիւնը, որ իր կատարելիք գործը կամ իրագործելիք առարկան կրնան մատուցել մարդկային ընկերութեան: Այս կ'ենթադրէ կրթական որոշ մակարդակ, ուսում, որոնց շնորհիւ թէ՛ արտադրողը եւ թէ՛ ընկալողը կը դառնան գիտակից դերակատարներ:

Մելթոն Ֆրիտման եւ Շարլ Քինտպերժէ քննելով կրթութեան եւ ուսման դերը մարդկային դրամագլուխի կազմաւորման մէջ, խօսելով յատկապէս տնտեսական մարզին մասին, կը յայտնեն, որ ընդհանուր զարգացումը կը նպաստէ սպառողական առարկաներու տարածումին այն հիմնաւորումով, որ ընդհանուր զարգացումով մարդ ձեռք կը ձգէ կեանքի համար անհրաժեշտ հիմնական գիտելիքներ, որոնք ենթական կը դնեն ընկալումի մթնոլորտին մէջ եւ անոր կողմէ տան լայն աշխարհահայեացք, մինչդեռ մասնագիտութիւնը կը սատարէ արտադրողական մարզի բարելաւման, որովհետեւ ան ուղղակիօրէն կը նպաստէ արտադրութեան թէ՛ որակին եւ թէ՛ քանակին:

Ա. Մարշալ «Տնտեսագիտութեան Սկզբունքները» խորագիրով իր գիրքին մէջ կ'ըսէ. «Սպառողական եւ արտադրողական ձեռնարկներու մէջ, զարգացած մարդը ջանալով լաւագոյնս օգտագործել իր կարողութիւնները, անտարակոյս կը սատարէ նաեւ մշակոյթի մակարդակին բարձրացման»:

Այսպէս, արդիւնաբերութեան պարագային որքան զարգացած ըլլան աշխատաւորները, նոյնքան կը նուազին փճացումները, կը պակսին յումպէտս ծախսերը, կ'աւելնան արտադրութեան որակն ու քանակը եւ կ'իրագործուին նոր նուաճումներ: Մէկ խօսքով, շահերը կ'աճին եւ յառաջ կու գայ բարգաւաճում: Մենք արդէն կը նկատենք, որ կարեւոր հաստատութիւններ մասնաւոր դասընթացներով կը ջանան տեւաբար զարգացնել իրենց անձնակազմը, ի



հարկին անոնց շնորհելով որոշ բարելաւում եւ յառաջացում իրենց պաշտօններուն մէջ:

Արդարեւ, վերեւ յիշուած մարդկային դրամագլուխին երկու յատկանիշները (զարգացում եւ մասնագիտութիւն) անվիճելի կարողութիւններ են, որոնց օգտագործումով ծրագրուած աշխատանքները կը կատարուին լաւագոյն արդիւնքով:

Տնտեսագիտական այս բացայայտ իրողութիւնները, յատկապէս այն ինչ որ կը վերաբերի մարդկային դրամագլուխի հիմնական յատկանիշներուն եւ դերին, մտածել կու տան մեզի, թէ որքան կարեւորութիւն պէտք է ընծայել մեր կառույցներու որակական արժէքին: Այս արդէն ինքնին ցոյց կու տայ անհրաժեշտութիւնը մեր ժողովուրդի մշակութային դաստիարակութեան եւ կը մատնանշէ այն կարեւոր դերը, ի շարս այլոց, զոր մեր կրթական հաստատութիւնները կոչուած են կատարելու, ի խնդիր խմորումի մէջ գտնուող մեր մատղաշ սերունդներուն՝ վաղուան մարդկային դրամագլուխին առողջ կազմաւորման, անոնց ներշնչելով իրենց ստանալիք ընդհանուր զարգացումին առընթեր ազգային գիտակցութիւն, մշակոյթի սէր, ծառայութեան եւ յանձնառութեան ոգի եւ պատասխանատուութեան զգացում:

25 Մայիս 1994

## ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐԸ Կ'ԱԶԴԵ՛Ն ԱՇՊԿԵՐՏԻ ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Երկար տարիներ Ազգային Իշխանութեան ինչպէս նաեւ անհատական հայ վարժարաններու տնօրէնութեանց եւ պատասխանատու մարմիններուն մօտ հարց էր գիտնալ թէ ի՞նչպէս պէտք էր ներդաշնակել պետական կրթական ծրագրին գործադրութիւնը հայկական կրթական ծրագրին հետ այլ խօսքով ինչ պէտք էր ընել որպէսզի հայ մանուկը կարենար իւրացնել տեղական լեզուն, յաջողիլ պետական քննութիւններուն, արգելք չունենալու համար, ի հարկին, համալսարան ընդունուելու եւ միւսնոյն ատեն անաղարտ պահել իր ազգային դիմագիծը ստանալով ըստ բաւականին հայեցի դաստիարակութիւն:

Հեշտ չեղաւ ակնկալուած ճիշդ եզրը գտնելը:

Արդարեւ 1943-ին հայ վարժարաններու մէջ, հայկական կրթական ծրագիրը տիրական տեղ կը բռնէր դասացուցակներու մէջ, պետական կրթական ծրագրին յատկացուած դասապահերու թիւը նուազագոյնին իջած էր եւ արդէն պէտք եղած կարեւորութիւնը չտրուելով ան գրեթէ ձեւական դարձած էր:

1952-էն սկսեալ, արաբերէն լեզուի պահանջքը աւելի զգալի դարձաւ եւ հայ վարժարանները սկսան հետզհետէ աւելի կարեւորութիւն տալ պետական կրթական ծրագրին:

1956-ին լոյս տեսած ուսուցչաց օրէնքը եւ ճրիւղարժի դրութեան ընդհանրացումը մղեցին պետութիւնը որ աւելի խիստ հակակշիռ բանեցնէ վարժարաններու վրայ եւ առնէ արմատական որոշումներ, օրինակ մերժել վճարել պետական նպաստը այն վարժարաններուն որոնք պետական կրթական ծրագիր չէին գործադրեր իր ամբողջութեանը մէջ ի հարկին սպառնալով փակել գանոնք: Մեր բոլոր վարժարաններուն ղրկուեցան կրթական քննիչներ որոնց տեղեկագրէն կախում ունէին դպրոցի նպաստին վճարումը

ինչպէս նաեւ զանազան պատժամիջոցներու ենթարկուելու հաւանականութիւնը:

1961-ին լոյս տեսած բարձրագոյն ուսման պետական օրէնքը կը պարտադրէր լիբանանցիներուն որ համալսարան արձանագրուելու համար պէտք էին անպայման ունենալ լիբանանեան պետական պաքալորիայ մերժելով ոեւէ այլ վկայական (Ֆրանսական պաքալորիայ, հայ սքուլ, Ֆրէշմէն...) փոխանցման շրջան մը նախատեսուեցաւ մինչեւ Դեկտ. 1964, որուն ընթացքին անհատական վարժարանները պարտաւոր էին պատշաճեցնել իրենց կրթական ծրագիրները վերոյիշեալ օրէնքի տրամադրութեան հետ:

Այլ տատանելու առիթ չկար: Պետութիւնը յստակ կերպով կը պարտադրէր որ իր կրթական ծրագիրը տարացիօրէն գործադրուէր բոլոր անհատական վարժարաններէն ներս:

Մինչ այդ շաբաթական 36-40 դասապահերուն 12-14-ը միայն օտար լեզուներով էր եւ մնացեալը հայերէնով: 1961-էն յետոյ շրջեցաւ կացութիւնը եւ մենք պարտաւորուեցանք պետական կրթական ծրագրին յատկացնել շաբաթական 20-24 պահ եւ հայկական կրթական ծրագրին 12-14 պահ:

1961-էն մինչեւ 1971-72, Ազգային Իշխանութիւնը մեծ ճիգ թափեց քայլ պահելու համար ստեղծուած նոր կացութեան հետ: Վերադասաւորեց իր դասացուցակները եւ վերարժեւորեց պետական կրթական ծրագրին կապուած նիւթերը որպէսզի պետական քննութիւններու մէջ մեր աշակերտներու ցնցիչ ձախողութիւնները չնրկագեցնեն մեր աշակերտութեան թիւը: Արդիւնքը այն եղաւ որ 10 տարուայ ժամանակամիջոցին մէջ մենք պետական քննութիւններու մէջ պատուաբեր դիրքեր գրաւեցինք եւ մեր աշակերտութեան թիւը անցաւ 6000-ը: 1960-ի պետական սերթիֆիքայի քննութիւններուն մեր յաջողութիւնը 12% էր միայն, իսկ 1971-ին ան բարձրացաւ 68%: Նոյն թուականներուն պետական պաքալորիայի յաջողութեան մեր միջինը եղաւ 72% մինչդեռ Լիբանանի ընդհանուր միջինն էր 31%:

Այս իրավիճակը սակայն ի վնաս հայեցի դաստիարակութեան եղաւ որովհետեւ հայերէնով դասաւանդուող նիւթերու յատկացուած դասապահերուն թիւը պակսեցաւ եւ միւս կողմէ առաւել հետաքրքրութիւն ստեղծուեցաւ պետական վկայականներուն եւ անոնց կապուած դասանիւթերուն շուրջ:

Ուսումնական Խորհուրդը յետ ստուգումի անդրադարձաւ որ հայերէն լեզուի եւ հայ մշակոյթի ուսուցումը հետզհետէ կը ծանծաղի մեր դպրոցներէն ներս եւ թէ մենք կորսնցնելու վրայ ենք այն ինչ որ նախորդ տասնամեակներուն մեր արդար հպարտանքի նիւթը դարձած էր:

Բազմաթիւ խորհրդակցութիւններէ եւ սեմինարներէ յետոյ, Ազգային Իշխանութիւնը իր գաւառական ժողովով վաւերացուց կրթական քաղաքականութեան ծրագիր մը որուն մէջ յստակ կերպով կ'ըսուէր որ մեր վարժարանները օտար վարժարաններու հետ մրցակցութեան մէջ մտնելու միաւորներ պէտք է ըլլան այն ինչ որ կը վերաբերի պետական քննութիւններու եւ թէ միեւնոյն ատեն պարտաւոր ենք յաւելեալ ճիգ թափել որ հայեցի դաստիարակութիւնը պահուի գոհացուցիչ մակարդակի վրայ այլ խօսքով մէկը չգոհել ի շահ միւսին:

Այս կ'ենթադրէր որ լրջօրէն ուսումնասիրուէին այն բոլոր տուեալները եւ կարելի միջոցառումները որոնք կրնային օգտակար հանդիսանալ մեր որոշումին գործադրութեան, այսինքն բարձրացրնել հայերէնի մակարդակը եւ միեւնոյն ատեն փայլուն արդիւնք ձեռք ձգել պետական քննութիւններուն մէջ: Ինչպէ՞ս պէտք էր ըլլալ այդ:

Կարեւորը, անպայման հայերէնի համար կորսուած դասապահերու թիւը վերահաստատել չէր: Արդէն չէինք կրնար ընել այդ անոնց վնասելու պետական կրթական ծրագրի ուսուցման: Ոչ ալ խճողել դասապահերը աւելցնելով անոնց թիւը: Այլ պէտք էր հայերէնի դասապահերուն միջուկ տալ, վերարժեւորել զանոնք եւ դարձնել արդիւնաւէտ: Պէտք էր ծրագրուած կերպով եւ նախապատրաստութեամբ հայերէնի դասապահերը դարձնել կենդանի եւ հետաքրքրական: Պարզ խօսելով կ'առաջարկուէր նուազագոյն դասապահերով առաւելագոյն արդիւնքը ստանալ եւ այդ կրնար ըլլալ միայն մեթոտով, համապատասխան ծրագրով եւ դասազրքերով եւ մանաւանդ մանկավարժ եւ ատակ ուսուցչական կազմերով:

Պետական վերջին կրթական ծրագիրը որ վաւերացուած էր 1970-ին պէտք ունէր փոփոխութեան: Առ այդ 1974-75ին, բազմաթիւ նոր առաջարկներ եղան: Դժբախտաբար բոլորիս ծանօթ դէպքերը առիթ չտուին որ պետութիւնը անոնցմով զբաղի: Ուրեմն ներկա-

յիս, աւելի քան 20 տարի յետոյ, լրջօրէն կը մտածուի նոր կրթական ծրագրի մը մասին, որոշուած է արդէն որ պատմութեան եւ Լիբանանի աշխարհագրութեան դասագրքերը փոխուին թէ իբրեւ բովանդակութիւն եւ թէ իբրեւ ուսուցման մեթոտ: Անոնք պիտի դասաւանդուին արաբերէն լեզուով եւ դասագրքերը պիտի հրատարակուին պետութեան կողմէ միայն: Պետութիւնը նախանձախնդիր է իր իրաւունքներու պաշտպանութեան: Մենք եւս, հիմնուած Լիբանանի Սահմանադրութեան բազմամշակութային կառոյցքին եւ տրամադրութիւններուն վրայ պարտաւոր ենք մեր կրթական ծրագիրները պատշաճեցնել նոր տուեալներուն:

Պէտք է, յստակ կերպով ճշդենք թէ ինչ կ'ուզենք: Ինչ են մեր ակնկալութիւնները հայեցի դաստիարակութեան կապակցութեամբ նախակրթարանի, միջնակարգի եւ երկրորդականի աւարտին, որպէսզի կարենանք պարբերաբար առարկայական գնահատում մը ընել մեր ձեռք ձգած արդիւնքներու մասին: Սա արդէն կ'ենթադրէ մեր կրթական ծրագիրներու վերանայում: Որքան որ գիտեմ Ուսումնական Խորհուրդը հանգամանօրէն քննած էր Ուսումնական Խորհուրդը հանգամանօրէն քննած էր այս հարցը տասնեակ մը տարիներ առաջ: Կրթական ծրագիրները սակայն անշարժ եւ կայուն թափուներ չեն: Անոնք ամէն 5 տարի պէտք է վերանայուին նկատի ունենալով կեանքի եւ կրթութեան հոլովոյթը:

Այսուհանդերձ որքան ալ լաւ ուսումնասիրուած կրթական ծրագիր պատրաստուի, որքան ալ իմաստուն մանկավարժական ուղղութիւններ յանձնարարուին այդ բոլորը ապարդիւն կրնան մնալ եթէ գանոնք գործադրելու կոչուած ուսուցչական կազմերը ոչ պէտք եղած ատաղցը ունին եւ ոչ ալ ոգին: Բոլորս ալ գիտենք որ որակեալ ու գիտակից ուսուցիչ մը երբ նիւթապէս ալ կարելիութեան չափով գոհացում կը գտնէ կրնայ հրաշքներ գործել պահանջկոտ տնօրէնի մը գործակցութեամբ եւ հսկողութեամբ եթէ նոյնիսկ իր օգտագործած դասագիրքերը ամբողջութեամբ չեն համապատասխաներ մանկավարժական արդի ըմբռնումներուն:

Պիտի արարկուի մեզի որ այս բոլորը լաւ գաղափարներ են սակայն անոնց գործադրութիւնը կը կարօտի յաւելեալ պիւտճէի:

Պատասխանս այն պիտի ըլլայ որ երբ դպրոց մը լաւ արդիւնք կու տայ անխուսափելիօրէն իր աշակերտութեան թիւը կ'աւելնայ ինչ որ կը նպաստէ պիւտճէական բացը սահմանափակելու:

Արդարեւ որակ եւ պիւտձէ սերտ աղերս ունին իրարու հետ: Երբ որակ կայ, լաւ արդիւնք կայ եւ աշակերտութեան թիւը աւելնալով պիւտձէական հարցերը իրենց նուազագոյնին կ'իջնեն:

Դիտենք մեր շուրջը եւ տեսնենք որ այլ յարանուանութեանց պատկանող վարժարաններ որոնց աշակերտները կու գան գրեթէ նոյն միջավայրերէն որքան խճողուած են աշակերտութեամբ:

Եզրափակելով գեկոյցս պիտի ուզէի յայտնել որ պարտաւոր ենք պետական կրթական ծրագիրը իր ամբողջութեանը մէջ գործադրել եւ յաւելեալ ճիգ թափելով փորձել լաւագոյն արդիւնքները քաղել անկէ ի շահ մեր ղպրոցներու կրթական մակարդակին եւ վարկին:

Գալով հայկական կրթական ծրագրին, ճշդելէ յետոյ մեր հեռանկարը եւ առ այդ մեր պահանջները, պէտք է յստակ ըլլայ բոլոր պատասխանատուներուն համար (ուսումնական խորհուրդ, տնօրէն, ուսուցիչ...) մեր ակնկալութիւնը նախակրթարանի, միջնակարգի եւ երկրորդականի աւարտին: Ուսումնական խորհուրդը իր միջոցներով եւ իրեն համար թիւր եկած եղանակով պարտի անհրաժեշտ հետեւողականութեամբ հսկել նախակրթարանի եւ միջնակարգի մէջ կատարուած աշխատանքներուն վրայ եւ գնահատել անոնց արդիւնքները տարեկան քննութիւններով կամ մրցանքներով:

Մեր դասագրքերը պէտք է ներդաշնակել մեր կրթական ծրագրին հետ եւ հայեցի դաստիարակութեան ուսուցչական կազմերուն ապահովել, մեր միջոցներով, մանկավարժական կազմաւորում, այլ խօսքով սորվեցնել անոնց դասաւանդութեան մանկավարժական արդի եղանակը եւ ոչ թէ լեզուի եւ պատմութեան նոր դասընթացներ պարտադրել: Այս ուղղութեամբ օտար լեզուներու համար ուղղեցոյց գրքեր կան որոնք կը գործածուին օտար վարժարաններու մէջ պաշտօնավարող ուսուցչական կազմերու պատրաստութեան: Հայերէնի եւ հայոց պատմութեան նոր ուսուցիչներ վարձելու պարագային նախապատուութիւն տալ հայագիտական հիմնարկներէ վկայեալներուն:

Յաճախ կ'արարկուի որ հայ վարժարաններէ շրջանաւարտ աշակերտները տկար են օտար լեզուներու գործածութեան մէջ: Լաւ պիտի ըլլար որ, ինչպէս բազմաթիւ վարժարաններ կ'ընեն, յետ տարեշրջանի աւարտին, օտար լեզուներու ուսուցման յատկացուած

15-20 օրուայ յատուկ դասընթացքներ տրուին աշակերտին խօսակցական եւ արտայայտչական կարողութիւնները զարգացնելու դիտաւորութեամբ (Technique d'expression): Ասիկա օգտակար է աշակերտի կեանքին համար յատկապէս համալսարան մուտքի պարագային: Սակայն պատահականութեան պէտք չէ ձգուի: Յատուկ ծրագիր պէտք է մշակուի մասնագէտ ուսուցիչներու կողմէ եւ հսկողութիւն կատարուի անոր ուղիղ գործածութեան համար: Առանձին նախահաշիւ պիւտճէ մը թոյլ կու տայ գնահատել հաւանական ծախսերը որոնք կ'ապահովուին աշակերտներու կողմէ վճարուած յաւելեալ փոքրիկ գումարով:

4-5-93

## ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ ԼԻԲԱՆԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ ՆԵՐՍ

Դասաւանդութեան բուն նիւթին չանցած պիտի ուզէի գնահատանքի խօսք յայտնել Օգնութեան Խաչի Շրջանային վարչութեան որ հակառակ իր ունեցած ազգային օգտաշատ ծառայութիւններու կարեւոր ցանցին, կ'զբաղի նաեւ հանրային դաստիարակութեան նուիրուած գովելի աշխատանքներով:

Գնահատանքի յատուկ խօսք ունիմ դաստիարակչական յանձնախումբի ազնիւ տիկիներուն որոնք նուիրումով կը կազմակերպեն այս դասախօսութիւնները:

Շնորհակալութիւն կը յայտնեմ ձեր բոլորին որ ի հեճուկս ձեր առօրեայի բազմաթիւ զբաղումներուն եկած էք այստեղ ունկնդրելու կրթական հարցերու առնչուած այս գրոյցը:

Լիբանանի ցաւալի դէպքերը անցնող 16 տարիներու ընթացքին շատ ողբալի անդրադարձներ ունեցած երկրին ընդհանուր վիճակին վրայ:

Անոնք ոչ միայն աւեր ու փլուզում, ջարդ ու մահ սփռեցին, առ հասարակ բոլոր շրջաններուն մէջ, ոչ միայն աստիճանաբար այլակերպեցին ժողովուրդին կենցաղը, խաթարեցին անոր աւանդութիւնները, քանդեցին անոր զարգացման եւ բարգաւաճման ծրագիրները եւ ցնդեցուցին անոր երազները այլ եւ յաճախ պարտադիր տեղահանութեամբ ու արտագաղթով արմատախիլ ըրին անոր մէկ մասը, վտանգելով նոյնիսկ անոր ազգային եւ մշակութային ինքնութիւնը:

Բնակչութեան կարեւոր մէկ տոկոսը ձգելով իր հարազատները, տունը, գործը, ինչքերը եւ հայրենիքը ապաստան որոնեց օտար բայց աւելի ապահով երգիքներու տակ մինչ հոս մնացողները յանձնուած կոյր եւ անվերջ պատերազմի մը ճիրաններուն եւ քմահաճոյքին եւ յաճախ զրկուած ամենակենսական միջոցներէ եւ ամենա-



տարրական ծառայութիւններէ կը պայքարէին պահպանելու համար իրենց օրհասական գոյութիւնը եւ ուրիշներ յարգելու համար իրենց նուիրական համոզումները:

16 տարիներու եղբայրասպան կռիւները չէզոքացուցին պետական սպասարկութիւնները, ապահովութեան դրութիւնը, քանդեցին երկրին Ֆիզիքական ներքին կառոյցները, տնտեսութիւնը, արտադրողական կարողականութիւնը եւ ամլութեան դատապարտեցին մարդկային շինարար ու ստեղծագործ ոյժը: Աւելին՝ անոնք խանգարեցին անոր կրթական գործունէութիւնը եւ ժխտական դեր ունեցած ուսման եւ դաստիարակութեան բնագաւառէն ներս որ ամենակարեւոր կռուաններէն մէկն է ազգի մը գոյատեւման:

Արդարեւ մանուկներու հոգեվիճակը խորապէս ցնցուեցաւ իրենց աճման ամենազգայուն մէկ ժամանակաշրջանին: Անոնք սորվեցան ատելութիւն, տեսան մահ, իրենց խնդուքները եղան արիւնաթաթախ, իրենց քունը խանգարուեցաւ, միտքը խաթարուեցաւ, չկրցան ուրախ երազներ տեսնել, վերջապէս բնականոն կերպով չմեծցան:

Հոգեբանները կ'ըսեն թէ պատերազմի մանուկները կ'ըլլան կարգապահ եւ խաղաղասէր ինչպէս եղաւ պարագան Գերմանիոյ, սակայն եղբայրասպան կռիւներու մանուկները կը դառնան ընդհակառակը ռիսկալ եւ յարձակապաշտ որովհետեւ անոնց աճումը կը կատարուի սանձարձակ եւ անբնական պայմաններու մէջ: Անոնց մտային աշխատանքը անկանոն է, ընտանեկան կապերը եւ յարաբերութիւնները խանգարուած են եւ բարոյական սկզբունքներու ըմբռնումը խախտած: Անոնցմէ շատեր անհաւասարակ շիռներ են ու կը դիմեն յաճախ ծայրայեղութիւններու որովհետեւ իրենց շրջապատին մէջ գտնուող որոշ թիւով չափահաս մարդոց կեանքին օրինակը թելադրիչ է այդ ուղղութեամբ երբ արդէն այդ նոյն չափահասներու հոգիին խորը կուտակուած են ամէն կարգի վայրագութիւններու, ատելութեան եւ քստմնելի արարքներու տխուր եւ ընդվզեցուցիչ պատկերներ:

Ինչպէս մեծերու պարագային, պատանիներու մտաւորական հետաքրքրութիւնները տեղի կու տան գոյատեւելու հրամայականին: Առօրեան կը նկատուի առաջնահերթ եւ անմիջական պահանջք եւ վաղուայ մտահոգութիւնները կը դասուին անապահով եւ անբար-

տոյգ ապագայի շարքին: Կրթական ճիգերը կը դառնան թոյլ եւ նը-  
լազ արդիւնաւէտ ու ակնկալուած արդիւնքները կ'ըլլան տփգոյն:

Անոնք չեն կրնար կեդրոնանալ, խորանալ, բաղդատել եւ դա-  
տել բնականոն պայմաններու իրենց կարողութեամբ: Իրենց ուսու-  
մը յաճախ մակերեսային է որովհետեւ յիշողութիւնն ալ դարձած է  
քմայքոտ, վերջապէս շատ մեծ ճիգ պէտք է կարենալ լրջօրէն սոր-  
վելու եւ իւրացնելու համար:

Ինչպէս կարելի է ենթադրել տուեալ պայմաններու մէջ կրթա-  
կան կեանքը անխուսափելիօրէն պիտի ենթարկուէր լուրջ ցնցում-  
ներու:

Բազմաթիւ վարժարաններ քանդուեցան, ուրիշներ գրաւուե-  
ցան կռուողներու կամ տեղահանուած բնակչութեան կողմէ: Ժո-  
ղովուրդին տեղափոխութիւնը, կեանքի անբնական սղութիւնը եւ  
պետական վարժարաններու անբաւարարութիւնը դժուարութեան  
մատնեց բազմանդամ ծնողներ, որոնցմէ շատեր իրենց զաւակները  
չկրցան դպրոց ուղարկել:

Ստեղծուած քաոսին մէջ եւ յատկապէս անապահովութեան  
պատճառով անհնար էր պետութեան համար նոր վարժարաններ  
բանալ եւ կամ անմիջապէս վերանորոգել կամ վերակառուցել ու-  
րիշներ որոնք զանազան պատճառներով անբնակելի դարձած էին:

Միւս կողմէ բազմաթիւ որակաւոր ուսուցիչներ լքեցին երկիրը  
եւ արտագաղթեցին: Նախակրթարաններու եւ երկրորդականներու  
պարագային կարելի եղաւ զանոնք փոխարինել երբեմն աւելի տկար  
տարրերով սակայն համալսարաններու պարագային որակեալ դա-  
սախօսներու արտագաղթը զգալի բաց մը թողուց կրթական կեան-  
քէն ներս գոր ամբողջացնելը յաճախ եղաւ ի վնաս ուսման մակար-  
դակին:

Համալսարաններու կարգ մը բաժանմունքներու մէջ մեկնող  
դասախօսներու համեմատութիւնը հասաւ 40-50%ի, ուրիշ բաժան-  
մունքներ պարզապէս դադրեցուցին իրենց գործունէութիւնը իբ-  
րեւ հետեւանք անհրաժեշտ մասնագէտներու բացակայութեան:  
Անշուշտ այդ ճիւղերը կը վերաբացուին անմիջապէս որ տրամադ-  
րելի որակեալ նոր մասնագէտներ ի յայտ գան:

Որպէսզի կարելի ըլլայ առարկայօրէն խօսիլ պատերազմի հե-  
տեւանքներու մասին, կրթական կեանքէն ներս, օգտակար կը նկա-

տեմ ձեր ուղադրութեան յանձնել, բաղդատական լոյսին տակ, դպրոցներու աշակերտութեան եւ ուսուցիչներու թուական պատկերը 1974-75ին եւ անոր հորովոյթը մինչեւ 1985-86 եւ ապա մինչեւ 1990-91:

I – Վարժարաններ

Համաձայն պետական վիճակագրութեանց Լիբանանի մէջ գործող վարժարանները (ըլլան անոնք պետական, ճրիավարժ կամ վճարովի) հետեւեալ թուական պատկերը ցոյց կու տան:

1974-75ին Լիբանանի մէջ կը գտնուէին 2486 վարժարան

1977-78ին անոնց թիւը եղաւ 2376 վարժարան

1981-82ին գոյութիւն ունէին 2549 վարժարան

Համաձայն հաւաստի աղբիւրներու

1985-86ին ունեցած ենք միայն 2350 վարժարան

Այս թիւերուն մանրամասնութիւնները գորս զանց կ'առնեմ տալ այստեղ ցոյց կու տան որ 1981-82ին դպրոցներու 52% պետական վարժարաններ են, 22% ճրիավարժ եւ 26% վճարովի: Նախակրթարաններու 48% իսկ երկրորդական վարժարաններուն 32.50 միայն պետական են:

II – Ուսուցիչներ

Համաձայն նոյն վիճակագրութիւններու ուսուցչական կազմերը կը ներկայացնեն հետեւեալ պատկերը:

1974-75 կը պաշտօնավարէին 53.320 ուսուցիչ-ուսուցչուհիներ

1977-78 վերոյիշեալ թիւը իջաւ 42.785ի

1981-82 ան բարձրացաւ 53.950ի

1985-86 կրկին իջաւ 52.300ի

III – Աշակերտութիւն

Աշակերտութեան կրթական պատկերը կը ներկայանայ հետեւեալ ձեւով

1974-75 աշակերտութեան թիւը կը բարձրանար 756.983ի

1977-78 աշակերտութեան թիւը կը բարձրանար 730.374ի

1981-82 աշակերտութեան թիւը կը բարձրանար 769.436ի

1985-86 աշակերտութեան թիւը կը բարձրանար 501.406ի

Վերոյիշեալ թիւերուն մէջ համալսարանական ուսանողութիւնը նկատի առնուած չէ: Արդարեւ 1974-75ին Լիբանանի մէջ կը գործէին 14 բարձրագոյն ուսման հաստատութիւններ որոնց ուսանողութեան թիւը կը բարձրանար 79.073 եւ որուն 31.028 օտար ու 48.045 լիբանանցի էին միայն:

Օտարահպատակներուն 89.25% կը յաճախէին արաբական համալսարան որ կապուած է Աղեքսանդրիոյ համալսարանին:

Եթէ նկատի ունենանք Լիբանանի աշակերտութեան արձանագրած տարեկան աճը, նախապատերազմեան շրջանին որ էր շուրջ 11.250 աշակերտ, կը նշանակէ որ 1975էն 1986 երկարող տարիներու միջոցին բնականոն պայմաններու մէջ աշակերտութեան թիւը պէտք էր աւելնար 112.500 աշակերտով, այսինքն աշակերտութեան ընդհանուր թիւը 1985-86ին պէտք էր ըլլալ 869.483 փոխանակ 501.400ի:

Վերոյիշեալ բաղդատական տախտակներէն կարելի է եզրակացնել հետեւեալը:

1975ի եւ 1977ի միջեւ վարժարաններու թիւը նուազած է: 108 վարժարաններ անգործածելի եղած են:

Ապա 1977էն մինչեւ 1982 օգտուելով յարաբերական խաղաղութենէն եւ կռիւներու ընդմիջումէն, վարժարաններու թիւը վերըստին բարձրացած է: Ան վերագտած է 1975ի թիւը եւ նոյնիսկ քիչ մըն ալ աւելնալով հասած է 2549ի:

Դժբախտաբար սակայն 1983էն 1985 տարածուող ժամանակաշրջանին տեղի ունեցած լեռներու եւ հարաւի կռիւներու հետեւանքով շուրջ 190 դպրոցներ անգործածելի դարձած են եւ փակուած:

Ուսուցիչներու թիւը բնականաբար հետեւած է այս վերիվայրումներուն: 1974-75էն մինչեւ 1985-86 շուրջ 1000 ուսուցիչներ պակասած են ընդհանուր թիւէն:

Իսկ աշակերտութեան թիւը 1975ի եւ 1977ի միջեւ 26.636 հոգի պակսելէ յետոյ, 1981-82 կը վերագտնէ գրեթէ 1975ի թիւը, նոյնիսկ 12.453 աշակերտ աւելնալով, սակայն 1985-86 տախտակները ցոյց կու տան որ 1982-86 երկարաձգուող ժամանակաշրջանին մէջ շուրջ 200.000 աշակերտ պակսած է Լիբանանի վարժարաններէն:

Թուական այս անկումները կը բացատրուին գլխաւորաբար անով որ 1975էն մինչեւ 1986, համաձայն հաւաստի աղբիւրներու ա-

ւելի քան 1.000.000 բնակիչներ լքած են երկիրը եւ գաղթած որոնց մէջ շուրջ 550.000 քրիստոնեայ:

Գալով հայ վարժարաններու մեր տրամադրութեան տակ ունեցած աղբիւրները ցոյց կու տան հետեւեալը:

1974-75ին Լիբանանի մէջ գոյութիւն ունէին 51 հայ վարժարաններ ուր կ'ուսանէին շուրջ 20.000 հայ աշակերտներ: Այս գումարներուն մաս չեն կազմեր հայագիտական բարձրագոյն հիմնարկները եւ համալսարաններու հայ ուսանողութիւնը: Մաս չեն կազմեր նաեւ դպրեմանքներու (Պիքֆայա, Ջմմառ, Ռառուտա (Մխիթարեաններ) ուսանողութիւնը):

1990-91ին Լիբանանի հայ վարժարաններու թիւը եղած է 43 եւ աշակերտութեան թիւը 12.121: Այս գումարին մէջ ներառեալ է կարգ մը հայ վարժարաններու արհեստագիտական բաժանմունքը ինչպէս նաեւ արհեստագիտական սեփական վարժարան մը:

Վերոյիշեալ վարժարանները հետեւեալ թուական պատկերը կը ներկայացնեն:

	վարժ.թիւ	աշակ.թիւ
Ազգային վարժարաններ (առաջնորդարան)	16	3501
Բողոքական համայնփին պատկանող վարժարաններ	9	2450
Կաթողիկէ համայնփին պատկանող վարժարաններ	9	3895
Սեփական եւ Միութեանական վարժարաններ	9	2275
	<hr/>	<hr/>
Ընդհանուր գումար	43	12.121

Այս թիւերէն կարելի է հետեւցնել որ 1975ի եւ 1991ի միջեւ հայ վարժարաններու թիւը նուազած է 8 վարժարանով եւ աշակերտութիւնը 7929 աշակերտով, այսինքն 1975ի իրենց աշակերտութեան թիւէն շուրջ 40%:

Ազգային վարժարաններու աշակերտութեան թիւը որ 1975ին 5976 էր, 1991ին իջած է 3501ի ինչ որ կը նշանակէ որ 2475 աշակերտ պակասած է բաղդատմամբ 1975ի այսինքն 42% համեմատութեամբ:

Աշակերտներու թիւէն այս անկումէն պէ՞տք է արդեօք հետեւցընել որ նոյն համեմատութեամբ հայ քաղաքացիներ լքած են երկիրը ու գաղթած: Չենք խորհիր որ այս ենթադրութիւնը բոլորովին

ճիշդ ըլլայ, որովհետեւ ընտանիքներու տեղափոխութիւնը մեծ դեր ունեցաւ հայ վարժարաններու աշակերտութեան թիւին նուազումին մէջ: Ինչպէս ծանօթ է բոլորին բազմաթիւ ծնողներ ապահովական նկատումներով, տեղափոխուեցան եւ իրենց գաւազները դրկեցին իրենց մօտակայքը գտնուող վարժարան մը երբեմն օտար կամ նոյնիսկ պետական, որովհետեւ իրենց նախընտրած դպրոցներու երթեւեկի սպասարկութիւնը ի վիճակի չէր յանձն առնելու անոնց գաւազներուն փոխադրութիւնը, եւ արդէն ապահովութեան պայմանները թոյլ չէին տար ընելու գայն:

Այս կացութիւնը պատճառ դարձաւ որ բազմաթիւ վարժարաններու աշակերտներու թիւը զգալապէս պակսի ինչպէս է պարագան արեւմտեան կողմի հայ վարժարաններուն նաեւ Հագմիէյի Մխիթարեաններուն: Մինչդեռ ուրիշ վարժարաններ ընդհակառակը աշակերտական թիւի յաւելում ունեցան ինչպէս Անարատ Յղութեան Քոյրերուն Հռիփսիմեանց վարժարանը, Մեսրոպեան եւ Եղիշէ Մանուկեան վարժարանները:

Այնուամենայնիւ հայ դպրոցը կորսնցուց իր աշակերտութեան 40% իսկ ազգային վարժարանները 42% որուն եթէ պատիկ մասը օտար վարժարան կը յաճախէ Լիբանանի մէջ, մնացեալ մեծ մասը արտագաղթած ծնողներու գաւազներ են:

Այն ինչ որ կը վերաբերի ուսուցչական կազմերուն, հայ վարժարաններն ալ կորսնցուցին որակաւոր եւ փորձառու տարրեր: Բարեբախտաբար սակայն շատ չտառապեցան տրուած ըլլալով որ հայ երկրորդական վարժարանները, հայագիտական հիմնարկները եւ դպրեվանքը կրցան անհրաժեշտ ոյժերը հայթայթել:

Հայ վարժարանները, անխուսափելիօրէն, դէպքերու հետեւանքով նիւթական մեծ վնասներու ենթարկուեցան: Պէտք եղաւ վերանորոգել եւ վերաշինել ներքին կառոյցը եւ սարքաւորումները, որոնց համար անոնք դիմեցին հայ ժողովուրդին եւ բարեսիրական հաստատութիւններուն: Բարեբախտաբար ամէն հաստատութիւն այս կամ այն կերպով միջոց մը գտաւ ինքզինքը վերանորոգելու:

Հայ վարժարանները ունեցան պիւտճէական ահաւոր բացեր որոնք յառաջ եկան մէկ կողմէ ծախսերու անսովոր մագլցումով իրրեւ հետեւանք կեանքի տարապայման սղումին եւ միւս կողմէ աշակերտութեան թիւին նուազումով եւ ուսուցչական կազմերու -

Թոշակներուն արդար յաւելումով: Կայ նաեւ այն կարեւոր պարագան որ բազմաթիւ ընտանիքներ ի վիճակի չեղան իրենց նիւթական յանձնարութիւնը յարգելով իրենց գաւակներուն կրթաթոշակը վճարելու: Այս բոլորը ցնցեցին վարժարաններու այլապէս դժուար կերպով հաւասարակշռուած պիւտճէները եւ յառաջ բերին տնտեսական սուր տագնապ: Ինչ որ ալ եղած ըլլար կացութիւնը անհրաժեշտ էր ապահովել ուսուցչական կազմերուն եւ պաշտօնէութեան թոշակները: Հոս եւս ի պատիւ իրեն՝ արտասահմանի հայութիւնը կրցաւ օգնութեան փութալ կարելի միջոցներով եւ թոյլ տալ որ հայ վարժարանները շարունակեն պահել իրենց գոյութիւնը եւ յարգել իրենց յանձնառութիւնները:

Անշուշտ պատասխանատու մարմինները լուրջ հսկեցին այս իրավիճակին վրայ եւ առին համապատասխան քայլեր վստահելով որ ժողովուրդը ի հարկին կը շարունակէ նիւթապէս եւ բարոյապէս տէր կանգնիլ իր կրթական հաստատութիւններուն:

Այս պայմաններու մէջ բնական է որ Լիբանանի կրթական կեանքը տուժած ըլլայ մակարդակի տեսակէտէն տրուած ըլլալով բազմաթիւ տուեալներ գորս վերեւ յիշեցինք որոնց կարգին գլխաւորաբար ան որ կռիւներու հետեւանքով կատարուած ընդմիջումները ջլատեցին աշակերտութեան ճիգը ուսման մէջ եւ կրթական ծրագիրները շատ քիչ համեմատութեամբ կրցան ամբողջովին ուսուցանուիլ: Կարգ մը վարժարաններ ենթարկուեցան տեղափոխութեան եւ այդ իսկ պատճառով գոյատեւեցին յարմարեցումի քաղաքականութեամբ վնաս բերելով աշխատանքի բեղմնաւոր արդիւնքին: Փորձառու ուսուցիչներ մեկնեցան եւ փոխարինուեցան նորերով եւ ամենակարեւորը աշակերտը ինքը կորսնցուց ուսման յատուկ միջոցները, եւ իր ներաշխարհը պայմանաւորուեցաւ կռիւներու առթած սարսափով, արագ ըմբռնումը խափանեցաւ եւ մտային անհրաժեշտ կեդրոնացումը տկարացաւ:

Այսուհանդերձ, հիմա որ խաղաղութիւնը վերջնականապէս վերահաստատուելու ընթացքին մէջ կը թուի ըլլալ, ինչ որ երեւոյթները ցոյց կու տան, պատերազմի հետեւանքով ցնցուած մանուկները աստիճանաբար պիտի վերագտնեն, շնորհիւ իրենց բնածին կենսունակութեան, իրենց հաւասարակշռութիւնը եւ մտային առողջութիւնը:

Այս առթիւ կ'արժէ յիշատակել որ գնահատելի կեցուածք ունե-

ցան վարժարաններու այն բոլոր կրթական պատասխանատուները, տնօրէնները եւ ուսուցչական կազմերը որոնք արհամարհելով ամէն դժուարութիւն եւ վտանգ, երբեմն կեանքի գնով, մնացին պատնէշի վրայ եւ ծառայեցին աշակերտութեան, վաղուայ երիտասարդութեան, ի խնդիր անոնց առողջ կազմաւորման եւ Լիբանանի ու հայ համայնքի անվթար գոյատեւման:

Ներկայիս, Լիբանանի կնճռոտած հարցերու լուծումին այս վերջին հանգրուաններուն ժողովուրդի մտահոգութեան առարկայ դարձած է կրթական ծրագիրներու արաբականացման հեռանկարը: Բազմաթիւ քրիստոնեայ քաղաքական անձնաւորութիւններ եւ կրթական հաստատութիւններու պատասխանատուներ անապահով կ'զգան Լիբանանի մէջ կիրարկուող բազմաձևակութային կրթական քաղաքականութեան շարունակութիւնը երբ արդէն ան նուիրագործուած էր նախորդ սահմանադրութեամբ:

Արդարեւ Լիբանանի ժողովուրդը բաղկացնող ընկերային երկու գլխաւոր հատուածները, մէկը քրիստոնեայ եւ միւսը իսլամ, կը ներկայացնեն երկու տարբեր մշակոյթներ: Քրիստոնեաները ընդունելով հանդերձ արաբականութիւնը կ'ուզեն կապուած մնալ եւրոպական մշակոյթին եւ հեշտ կերպով գործածել արեւմտեան լեզուները յատկապէս ֆրանսերէնը եւ անգլերէնը, իսկ արաբականացումի նոր ալիքը որ կու գայ արաբ երկիրներէ կը ձգտի ընդգրկել մշակոյթի բոլոր կայունները այնպէս ինչպէս որ է ներկայիս արաբ երկիրներու մէջ: Պարզ խօսելով, մտահոգութիւնը այն է որ ծայրայեղ արաբականացում մը կրնայ, իբրեւ հետեւանք, արգելակել օտար լեզուներու ազատ ուսուցումը դպրոցներէն ներս եւ սահմանափակել արեւմտեան մշակոյթի թափանցումի միջոցները:

Բայց ինչո՞ւ այս մտահոգութիւնը եւ ուսկից կու գայ այս վախը:

Բոլորիս ծանօթ է որ Լիբանանի պատերազմը վերջ գտաւ Թայէֆի համաձայնութեամբ եւ անոր գործադրութեամբ: Թայէֆի համաձայնագիրը որ կը վայելէ արաբական լիկայի հովանաւորութիւնը եւ միջազգային մեծ պետութիւններու բարոյական նեցուկը, կ'առաջադրէ փոփոխութեան ենթարկել Լիբանանի սահմանադրութիւնը, ի սպաս լիբանանցիներու բոլոր հատուածներուն քաղաքական եւ ընկերային արդար իրաւունքներու ստացման եւ օտար բա-



նակներու հեռացման: Իբրեւ հետեւանք այդ համաձայնութեան սահմանադրութեան բազմաթիւ յօդուածներ փոխուեցան որոնց կարգին նաեւ անոնք որոնք կը վերաբերին ազգային կրթութեան:

Բարեփոխուած յօդուածներով կը շեշտուի որ նախակրթութիւնը պարտադիր եւ ճրի պիտի ըլլայ Լիբանանի տարածքին վրայ: Պետութեան հակակշիռը աւելի պիտի խստանայ կրթական ծրագիրներու գործադրութեան եւ գործածուած դասագրքերու նկատմամբ: Կրթական ծրագիրները վերանայման պիտի ենթարկուին աւելի սերտացնելու համար ազգային (լիբանանեան) պատկանելութիւնը: Պատմութեան եւ քաղաքացիական դաստիարակութեան դասագրքերը պիտի պատրաստուին պետութեան կողմէ, միօրինակ եւ նոյնանման: Անհատական վարժարաններու գործունէութիւնը համաձայն պետական օրինակներու պիտի ապահովուի պետութեան կողմէ: Մշակութային եւ հոգեւոր ազատութիւնները պիտի յարգուին եւայն...

Մտահոգութիւն յայտնող անձնաւորութիւնները կ'առարկեն որ նոր սահմանադրութեան ներածականին մէջ յիշուած է որ Լիբանանը արաբ երկիր մըն է եւ թէ իբր այդ կը պարտի ճիգ թափել պահելու համար իր արաբականութիւնը:

Անոնց մտավախութիւնները աւելի հիմնուեցան երբ ասկից քանի մը ամիս առաջ արաբական լիկայի կրթական եւ մշակութային մէկ կազմակերպութեան կողմէ (ALESCO) պատրաստուած ծրագիր մը առաջարկուեցաւ լիբանանեան պետութեան որպէսզի ինքն ալ իբրեւ արաբական երկիր եւ անդամ արաբական լիկայի, յարի անոր ինչպէս արաբական լիկայի մաս կազմող մնացեալ բոլոր երկիրները:

Այդ ծրագիրին մէջ, ի շարս այլոց, կ'ըսուի որ արաբական պետութիւնները պարտին արաբականացնել ուսումը բոլոր բնագաւառներէն ներս: Բոլոր առարկաներու, նոյնիսկ գիտական նիւթերու դասաւանդութիւնը պէտք է կատարուի միայն արաբերէն լեզուով եւ յատուկ բժախնդրութեամբ ու աստիճանաբար պէտք է նոյնացնել դասագրքերը արաբական լիկային մաս կազմող երկիրներու մէջ:

Բազմաթիւ կրթական հաստատութիւններու պատասխանատուներ, մշակոյթի մարդիկ, նաեւ քաղաքական անձնաւորութիւն-

ներ աղաղակ բարձրացուցին այս գործընթացին դէմ տեսնելով անոր մէջ լիբանանեան ինքնութեան դէմ մեղանշում մը, մասնաւորաբար մշակութային ինքնութեան դէմ խափանում մը, յատկապէս ժողովուրդի այն հատուածին համար որ մնալով հանդերձ արաբական մշակոյթի ծիրէն ներս կ'ուզէ պահել արեւմտեան մշակոյթի հետ իր ունեցած սերտ կապերը եւ օտար լեզուներու ծանօթութիւնը:

Բարձրագոյն իշխանութիւնները բազմաթիւ ելոյթներով բացատրեցին որ Թայէֆի համաձայնութեան մէջ յստակ կերպով ըսուած է որ ուսումը ազատ պիտի մնայ Լիբանանի մէջ, հետեւաբար այդ վախը անհիմն է:

Կրթական նախարարը իր կարգին զանազան յայտարարութիւններով եւ բացատրութիւններով ուզեց փարատել մարդոց մտքէն այդ մտավախութիւնը: Յանձնախմբային ժողովներ սարքեց ուր ներկայացուց իր բարենորոգչական ծրագիրները եւ փորձեց հաւաստիացնել որ Թայէֆի համաձայնագիրը հիմնական բան չփոխեց մեր կրթական քաղաքականութեան մէջ այլ ընդհակառակը իսթան մը եղաւ կարգ կանոն դնելու համար կրթական նախարարութեան մէջ որ դէպքերու հետեւանքով տարիներէ ի վեր թոյլ եւ լծացած վիճակ ունէր:

Կրթական նախարարը վաւերացնել տուաւ խորհրդարանին կողմէ նախակրթութիւնը ճիշդ եւ պարտադիր դարձնելու ծրագիրը որուն համար բնական եւ անհրաժեշտ են մեծ թիւով պետական վարժարաններ եւ հետեւաբար մեծագումար վարկեր:

Տրուած ըլլալով որ ներկայիս իր տրամադրութեան տակ չունի պահանջուած գումարները, կը ծրագրէ կարգ մը շրջաններուն մէջ նոյն դպրոցը օգտագործել աշակերտներու երկու տարբեր խմբակներու համար, բան մը որ ընթացիկ է նոյնիսկ արեւմտեան տէրութիւններու մօտ: Անոնց մէկ մասը կու գայ առաւօտուն ժամը 7.30-12.30, միւս մասը յետ միջօրէին, 13-17.30:

Կրթական նախարարը որոշած է բարեփոխութեան ենթարկել կրթական ծրագիրները յատկապէս անոնք որոնք կը վերաբերին պատմութեան եւ քաղաքացիական դաստիարակութեան որոնց համապատասխան դասագիրքերը, յետ այսօրիկ, պիտի տպուին պետութեան կողմէ եւ դառնան միակ գործածելի:

Առ ի յիշեցում, յայտնենք որ կրթական ծրագիրներու փոփո-

խուլթեան համար յաճախ պահանջքներ ներկայացուած են, ուսումնասիրութիւններ կատարուած անցեալին եւ նախագիծեր ալ պատրաստուած, սակայն անոնք մնացած են գորոցներու մէջ, փոշեթաթախ, կարգ մը շրջանակներու անհանդուրժողութեան պատճառով:

Վերջապէս կրթական նախարարը որոշած է զբաղիլ համալսարաններով եւ բարձրագոյն կրթութեան կեդրոններով: Անոնք մօտիկ անցեալին թիւով 10 էին միայն մինչ ներկայիս 18 նման հաստատութիւններ կը գործեն Լիբանանի մէջ: Որոշած է ոյժ տալ լիբանանեան համալսարանին, զայն վերակազմակերպել եւ մօտէն հսկել անոր գործունէութեան վրայ:

Իր տուած բացատրութիւններով եւ իր անձին կապուած վարկով որոշ ապահովութիւն ներշնչեց քրիստոնէական հատուածին փորձելով վանել անոր մտքէն արեւմտեան մշակոյթէն հարկադրաբար կտրուած մնալու մղձաւանջը:

Սակայն մտահոգութիւնները ամբողջովին փարատած չեն: Որոշուած նոր օրէնքները եւ արաբական լիկայի մշակութային կազմակերպութեան նախատեսած ծրագիրները բոլորովին համոզիչ չեն թուիր իրենց:

Արդարեւ Լիբանանի ներկայ սահմանադրութիւնը նախկին սահմանադրութեան բարեփոխուած մէկ տարբերակն է հիմնուած Թայէֆի համաձայնութեան վրայ որուն ներածականին մէջ, ինչպէս վերեւ յիշեցինք, յստակ կերպով կ'ըսուի որ Լիբանան արաբ պետութիւն մըն է: Միւս կողմէ արաբական լիկայի մշակութային կազմակերպութեան ծրագիրին մէջ կ'ըսուի որ արաբական երկիրները պարտին ուսումը արաբերէն լեզուով դասաւանդել բոլոր առարկաներուն համար ներառեալ գիտական նիւթերը եւ թէ աստիճանաբար բոլոր դասագրքերը պէտք է միօրինակ ըլլան:

Պարզ խօսելով անոնք կը վախնան որ արտաքին քաղաքական ճնշումներու տակ, հարցին նկատմամբ աննպաստ դիրքաւորում ունեցող պատասխանատուները իւրյատուկ մեծամասնութիւններով, գիշին եւ կորսնցնել տան, Լիբանանին, զինքը արաբական միւս երկիրներէն տարանջատող եւ իր առանձնայատկութիւնը կազմող բազմամշակութային եւ բազմալեզու ըլլալու առաւելութիւնները:

Այն ատեն է որ Լիբանանը պիտի կորսնցնէ յաջս արեւմտասէր հատուածին իր հիմնական արժէքներէն մէկը, զինքը արեւմուտքին մօտեցնող կենսական կապը:

Կ'անդրադառնանք որ 16 տարուայ պատերազմը ոչ միայն քանդեց ու աւրեց մեծ թիւով դպրոցներ, աշակերտութեան թիւը պակսեցուց, որակաւոր ուսուցիչներու մեկնումին պատճառ հանդիսացաւ, կրթական ծրագիրներու լիակատար գործադրութեան արգելքներ յառաջացուց, Լիբանանեան երկրորդական ուսման վկայականին (պաքալորիայի) վարկը արժեզրկեց այն աստիճան որ օտար երկիրներ կը մերժեն ճանչնել զայն իբր այդ, այլ համաձայն կարգ մը մասնագէտներու նոր հարցականներու առջեւ դրաւ Լիբանանի բազմամշակութային դրութիւնը որ աներկբայօրէն կը կազմէ իր մշակութային հասրտութիւններու ամենաջինջ աղբիւրը:

Պետական բարձրաստիճան անձնաւորութիւններ կը բացատրեն թէ անհիմն են այդ մտահոգութիւնները: Մաղթելի է որ այդպէս ըլլայ, բան մը գորցոյց պիտի տայ ապագան:

Այս բոլորին մէջ ինչ պիտի ըլլայ ապագային հայերէն լեզուով դասաւանդուող առարկաներուն ճակատագիրը հայ վարժարաններէն ներս: Արդեօք արաբականացումի հոսանքը պիտի զօրանայ այն աստիճան որ օր մը մենք եւս պիտի պարտադրուինք սահմանափակել մեր ազգային կրթական ծրագիրը, զեղչել անոր գործադրութեան համար յատկացուած դասապահերու թիւը ինչպէս է պարագան դրացի երկիրներու մօտ եւ հետեւաբար նահանջել հայերէն լեզուի եւ հայոց պատմութեան ուսուցման մեր նուիրական առաքելութեան մէջ: Հարցումներ են որոնք այսօր յատուկ զգայնութեամբ մեր մտահոգութեան առարկան կը դառնան:

Մենք դէմ չենք որ առաւել կարեւորութիւն տրուի արաբերէն լեզուի եւ արաբական մշակոյթի ուսուցման: Չենք դժգոհիր երբ պետական կրթական ծրագիրները բարեփոխուին, արդիականան եւ Լիբանանի պատմութեան եւ քաղաքացիական դաստիարակութեան դասագիրքերը պետութեան կողմէ պատրաստուին ըստ իր կրթական քաղաքականութեան:

Այնուամենայնիւ, կ'զգուշանանք ուսման ամբողջական եւ բացարձակ արաբականացումէն որովհետեւ ան կրնայ վնասել մեր բազմամշակութային զարգացման, օտար լեզուներու լայն ծանօ-

թուլթեան եւ մանաւանդ մեր ազգային ինքնութեան ապահովութեան եւ մշակութային ժառանգին անվթար փոխանցման:

Ծանօթ է բոլորիս որ հայ վարժարանները կը կիրարկեն երկու կրթական ծրագիր: Մէկը պետականն է որ աշակերտը կ'առաջնորդէ պետական քննութիւններուն իսկ միւսը հայկական կրթական ծրագիրն է որ կը ձգտի աշակերտին ջամբել անհրաժեշտ ուսումը եւ ոգին իր հայեցի դաստիարակութեան, եւ ազգային դիմագիծի անեղծ պահպանման համար:

Ներկայիս երեւոյթները ցոյց կու տան որ անմիջական վտանգի մը սպառնալիքներուն առջեւ չենք գտնուիր որովհետեւ համայնքային դրուժիւնը բոլորովին ջնջուած չէ թէ ժողովուրդի մտքին մէջ եւ թէ իրողապէս: Ան դեռ եւս ներշնչումի աղբիւր է բնակչութեան կարեւոր մէկ տոկոսին մօտ երկրին հիմնական կառուցքներու ամբողջական տեսակէտէն: Ճիշդ այդ ըմբռնումով լիբանանահայութիւնը կողմնակից եղած է համայնքային դրութեան շարունակութեան անոր մէջ գտնելով մեր եկեղեցական, մշակութային եւ ազգային առանձնայատկութիւններու ապահովութիւնը եւ իր տեսակէտը, օրին, գրաւոր կերպով յայտնած է մեր երեսփոխանական պլոքի միջոցաւ լիբանանեան պետութեան:

Դժուար է բնականաբար ոեւէ ենթադրութիւն ընել ապագայի հաշուոյն միջին արեւելքի ներկայի մեծ վերիվայրումներու եւ քաղաքական խմորումներու շրջանին: Ամէն ինչ կախում ունի երկրին քաղաքական հոլովոյթէն եւ արտաքին ազդակներու միջամտութենէն:

Սրտանց պիտի մաղթէինք որ 16 տարուայ սահմուկեցուցիչ փորձառութենէն յետոյ, Լիբանանի պետական պատասխանատուները գիտակից մօտեցումով, իմաստութեամբ եւ հանդուրժողութեամբ տէր կանգնին Լիբանանի առանձնայատուկ եւ բազմերանգ մշակոյթին ու պինդ պահելով կապը արաբական եւ արեւմտեան մշակոյթներու, առիթ տան որ ան իբրեւ սպասարկու համամարդկային քաղաքակրթութեան շարունակէ, բազմահամայնքային եւ բազմամշակութային իր եզակի առաքելութիւնը:

Մինչ այդ անհրաժեշտ է որ հայ վարժարանները մեծ բծախնդրութեամբ եւ նախանձախնդրութեամբ շարունակեն ըստ առաջուոյն, իրենց ազգային կրթական առաքելութիւնը եւ ամուր կառչին

Համայնքային եւ կրթական իրենց իրաւունքներուն որովհետեւ հայերէն լեզուի ու պատմութեան ուսուցումը եւ հայեցի դաստիարակութեան հարցը մեր հիմնական մտահոգութիւնը եղած ըլլալով սփիւռքի մեր իրականութեան մէջ, Լիբանանը իր համայնքային դրութեամբ եւ բազմամշակութային կերպարով կը մնայ մեզի ինչպէս նաեւ մեր մայր հայրենիքին համար սփիւռքահայութեան ամենակարեւոր գաղթօճախը ուր բարձրացող մեր նոր սերունդները կը կազմաւորուին ու կը թրծուին ազգային անխառն ոգիով, անոնց կը փոխանցուի մեր եկեղեցական եւ մշակութային հարազատ ժառանգը, մեր պահանջատիրական ձգտումները եւ մեր «անկատար» երազները:

## ԿՐԹԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ

### ՈՒՐ Կ՛ԵՐԹԱՅ ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆԸ

*Լիբանանի կրթական հետազոտութեանց գրասենեակի հրատարակած վիճակագրական վերջին տախտակներու քննութիւնը եւ անոնց բաղդատութիւնը Լիբանանի հայ վարժարաններու աշակերտութեան թիւին, քննութեանց մէջ անոր ձեռք ձգած արդիւնքին եւ ուսուցիչներու կրթական մակարդակին հետ՝ մեզի տուաւ յաւելեալ բնորոշիչ յուսաբանութիւններ մեր վարժարաններու իրական վիճակին մասին լիբանանեան կրթական կառոյցին մէջ եւ մեզ առաջնորդեց խորհրդածութիւններու՝ զորս կը յանձնենք հանրութեան:*

#### Ա) ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

##### 1.- ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԹԻՒ

*Համաձայն վերոյիշեալ վիճակագրական տուեալներու եւ մեր տրամադրութեան տակ ունեցած հայ վարժարաններուն համար պատրաստուած վիճակագրական տախտակներու (Առաջնորդարան եւ Հայ Համալսարանաւարտներու Միութիւն), 1963-64 տարեշրջանին, Լիբանանի ընդհանուր աշակերտութեան թիւն էր, բացի համալսարաններու ուսանողութենէն, 371.239: 1972-73ին այս թիւը բարձրացած է 782.409ի արձանագրելով 411.370 աշակերտի յաւելում անցնող տասը տարիներու ընթացքին, այսինքն՝ 110% համեմատութեամբ:*

*Հայ վարժարաններու աշակերտութեան թիւն էր 1963-64ին 14.315, իսկ 1972-73ին՝ 18.526, յաւելում՝ 4211 աշակերտ, այսինքն՝ 29.40%: Ազգային վարժարաններու աշակերտութեան յաւելումը, նոյն շրջանին համար, եղած է 42.50%:*

*Վերոյիշեալ թիւերուն մաս չեն կազմեր համալսարան յաճախող*

հայ ուսանողութիւնը եւ առեւտրական վարժարաններու (Միմոնեան, Վարժապետեան...) աշակերտութիւնը:

1971-72ին Լիբանանի մանկապարտէզներու եւ նախակրթարաններու աշակերտութեան թիւին 55% արական եւ 45% իգական սեռին կը պատկանէին: Միջնակարգի մէջ այս համեմատութիւնը 58% էր ի նպաստ արական սեռին եւ 42% իգական սեռին, իսկ երկրորդականի մէջ 66% արական սեռին եւ 34% իգական սեռին:

Այս համեմատութիւնը կ'ընդգրկէ նաեւ զաւառներուն աշակերտութիւնը: Որպէսզի մեր բաղդատութիւնը հայ վարժարաններու հետ աւելի եզրակացուցիչ ըլլայ, պիտի առնենք Պէյրութի աշակերտութեան համեմատութիւնը, ուր մանկապարտէզներու եւ նախակրթարաններու մէջ աշակերտութեան 50%ը կը պատկանի արական սեռին եւ 50%ը իգական սեռին: Միջնակարգի մէջ պարագան նոյնն է, իսկ երկրորդականի մէջ 66%ը կը պատկանի արական սեռին եւ 34%ը միայն իգական սեռին:

Նոյն տարին հայ վարժարաններու աշակերտութեան պատկերը հետեւեալն էր.

Մանկապարտէզ եւ նախակրթարան՝ 50.31% արական, 49.69% իգական: Միջնակարգ՝ 46% արական եւ 54% իգական: Երկրորդական՝ 50.47% արական եւ 49.53% իգական:

## 2.- ՈՒՍՈՒՑՁԱԿԱՆ ԿԱԶՄ

1963-64ին Լիբանանի ուսուցիչներու ընդհանուր թիւն էր 16.066, իսկ 1972-73ին՝ 33.485, յաւելում՝ 17.419:

1972-73ին, պետական վարժարաններու ուսուցիչներու ուսումնական մակարդակը կը ներկայացնէր հետեւեալ վիճակը.-

65%ը ունէին պետական ակադեմական վկայականներ (պրըվէ, պաքարթէա, լիսանս), մնացեալ 35%ը զանազան այլ վկայականներ, որոնց համար պետութիւնը համագորագրեր տուած էր պետական վկայականներու հետ:

Զրիավարժ վարժարաններու մէջ պաշտօնավարող ուսուցիչներուն 83%ը ունէին պետական վկայականներ, 3.09%ը մասնագիտական եւ 13.65%ը ոչ-պետական վկայականներ:

Վճարովի անձնական վարժարաններուն մէջ ակադեմական վկայական ունեցողները կը կազմէին ուսուցիչներու 83.71% համե-



մատուցիչներ, մասնագիտական վկայական ունեցողները 0.59%ը եւ ոչ պետական վկայական ունեցողները 15%:

Հայ վարժարաններու մօտ, նոյն տարուան համար, հետեւեալ պատկերը կը պարզուէր: Համալսարանական՝ 25%, պետական պաթալօրէա կամ երկրորդականի մակարդակ 34%, պրըվէ եւ համագօր՝ 29%, իսկ 11%՝ միջնակարգի մակարդակէն վար:

Պետական վարժարաններու մէջ ամէն մէկ ուսուցիչի կ'իյնայ միջին հաշուով 17 աշակերտ: Լիբանանի ընդհանուր միջինն է ամէն մէկ ուսուցիչի համար 23 աշակերտ, իսկ հայ վարժարաններուն մէջ անկա 17 է միայն:

### 3.- ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈԼԹԵԱՆՑ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

1965-66ին պրըվէի քննութեան ներկայացող Լիբանանի ամբողջ աշակերտութեան 37.03%ը միայն յաջողած է: Հայ վարժարաններու աշակերտութեան յաջողութեան համեմատութիւնը, նոյն տարին, եղած է 55.83%:

1969-70ին, նոյն վկայականին համար, Լիբանանի ընդհանուր աշակերտութեան յաջողութեան համեմատութիւնը եղած է 67.25%, իսկ հայ վարժարաններու համար ան եղած է 75.70%:

Նոյն տարին, Ա. պաթալօրէայի պարագային, Լիբանանի ընդհանուր միջինը եղած է 22.56%, իսկ հայ վարժարաններուն համար այդ միջինը եղած է 55.38%:

Ազգային վարժարաններու մէջ, նոյն տարին, պրըվէի յաջողութիւնը եղած է 41.30%, իսկ Ա. պաթալօրէայի յաջողութիւնը՝ 65.38%:

### 4.- ՏԱՐԻՔՈՎ ՅԱՊԱՂԱԾ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ՊԱՐԱԳԱՆ

1972-73ին, Լիբանանի նախակրթարաններու ընդհանուր աշակերտութեան 65%ը՝ համապատասխան բաժնին համար պահանջուած տարիքէն վեր եղած է: Միջնակարգի մէջ սոյն համեմատութիւնը եղած է 80.67%, իսկ երկրորդականի մէջ՝ 82.53%:

Ճշդուած է նոյնպէս որ նախակրթարաններու աշակերտութեան թիւին 11.90%ը նախակրթարանը չէ աւարտած, միջնակարգի աշակերտութեան՝ 44.30%ը, իսկ երկրորդականի՝ 66%ը նոյնպէս կը լքեն դպրոցը:

Նախակրթարանի 3 աշակերտներէն մէկը միայն կ'անցնի միջնակարգ եւ 11էն մէկը՝ երկրորդական: Նախակրթարանի 50 աշակերտներէն մէկը միայն կը ստանայ Ա. պաքայօրէս:

Հայ վարժարաններու մէջ, 1971-72ին, նախակրթարանի Ա. դասարան արձանագրուած 1754 աշակերտներուն 1209ը միայն հասած են 5րդ դասարան, իսկ երջիներուն 763ը արձանագրուած են միջնակարգ եւ 338ը հասած են երկրորդական:

Հայ վարժարաններու մէջ 3 աշակերտէն 1ը միայն հասած է միջնակարգ եւ 7 աշակերտէն 1ը՝ երկրորդական: Նախակրթարանի Ա. դասարան արձանագրուած 25 աշակերտներէն 1ը միայն ստացած է պետական Ա. պաքայօրէս:

## Բ) ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ

1.- ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ՕՏԱՐ ՎԱՐԺԱՐԱՆ ՅԱՃԱԽԵԼՈՒ ՊԱՐԳԱՆ

Վիճակագրական վերոյիշեալ տուեալներէն երեւան կու գայ որ 1963-64էն մինչեւ 1972-73, Հայ վարժարաններու աշակերտութեան թիւը աճած է 29.40% համեմատութեամբ, երբ նոյն շրջանին համար Լիբանանի աշակերտութեան աճման միջինը եղած է 110%: Այս պարագան շատ ակնբախ եւ մտահոգիչ երեւոյթ մըն է զոր կ'արժէ վերլուծել:

Արդարեւ եթէ պահենք Լիբանանի ընդհանուր աշակերտութեան աճման համեմատութիւնը պէտք է որ ունենայինք մեր վարժարաններու մէջ, 1972-73ին, 38.817 աշակերտ: Իրողութիւնը այն է սակայն որ ունեցած ենք միայն 18.526 աշակերտ ինչ որ ցոյց կու տայ որ անցնող տասը տարիներու ընթացքին Հայ վարժարանները կորսնցուցած են 13.145 աշակերտ:

Հայ աշակերտներու ընդհանուր թիւին գնահատման համար կայ նաեւ այլ մօտեցում մը:

1972-73ի ուսումնական տարեշրջանին մէջ, Լիբանանի աշակերտութիւնը իր բնակչութեան թիւին 29.90%ը կը ներկայացնէր: Եթէ այս համեմատութենէն դուրս ձգենք ոչ լիբանանցի աշակերտութեան (12%) մէկ մասը, կէսը, տրուած ըլլալով որ Հայ համայնքն ալ ունի արաբական այլ երկիրներու հպատակութիւնը կրող աշա-

կերտներ, վերոյիշեալ թիւը պիտի դառնայ 23.57%: Եթէ 0.57% վերազրեմք վիճակագրական տուեալներու անբաւարարութեան, կու գանք այն եզրակացութեան որ հայ աշակերտութիւնը պէտք է հայ բնակչութեան 23% ներկայացնէ մօտաւորապէս:

Եթէ ընդունինք պահ մը որ օտար վարժարան յաճախող հայ աշակերտութեան թիւը գանցառելի է, հիմնուելով վերոյիշեալ համեմատութիւններու վրայ պիտի յանգինք այն ապշեցուցիչ եզրակացութեան որ հայ բնակչութեան թիւը Լիբանանի մէջ 80.700 հոգի է, ինչ որ բացարձակապէս անճիշդ է:

Եթէ մեկնինք այն իրողութենէն որ հայ բնակչութեան թիւը, նուազագոյն չափով 150-160 հազար է, այն ատեն, 170 հազար ըլլալու պարագային պիտի ունենայինք 39.100 աշակերտ եւ 160 հազար ըլլալու պարագային 36.800, որոնց միայն 18.526ը հայ վարժարան կը յաճախեն: Այս թիւին մէջ նկատի առնուած չէ հայ առեւտրական վարժարաններու (Միմոնեան, Վարժապետեան...) աշակերտութիւնը, որուն գումարը հազարը չի կրնար անցնիլ, ինչպէս նաեւ համալսարան յաճախող հայ ուսանողութիւնը:

1972-73ին հայ վարժարան յաճախող աշակերտութիւնը հայ բնակչութեան 10-11%օր կը կազմէ միայն:

Մեր ուշադրութիւնը գրաւեց նաեւ ուրիշ կէտ մը. հայ վարժարաններու միջնակարգի եւ երկրորդականի բաժիններուն մէջ, արական սեռի պատկանող աշակերտութեան թիւը համեմատաբար նուազ է քան իգական սեռինը: Ան աւելի քիչ է բաղդատած նաեւ լիբանանեան ընդհանուր միջինին: Այս երեւոյթը ցոյց կու տայ հետեւեալը: Կամ այն է որ մեր ծնողները նախանձախնդիր են իրենց 12-18 տարեկան աղջիկները դպրոց դրկելու, կամ նախակրթարանէն յետոյ անոնց մէկ մասը իրենց մանչ զաւակները օտար վարժարան կը դրկէ եւ կամ պարզապէս նախակրթարանէն յետոյ մեծ թիւով մանչեր իրենց ուսումը կը լքեն եւ կ'երթան աշխատելու: Ահա թէ ինչպէս կը բացատրուի միջնակարգ եւ երկրորդական բաժիններուն համար, մանչերու համեմատութեան 66% ըլլալը օտար վարժարաններու մէջ եւ 50.41% ըլլալը հայ վարժարաններուն մէջ:

Որքան ալ անճիշդ թուին վերոյիշեալ ենթադրութիւնները, այն ինչ որ կը վերաբերի Լիբանանի հայ բնակչութեան թիւին, 1972-73ին, իրողութիւնն այն է որ հայ վարժարաններու աշակերտու-

Թեան թիւին աճը լիբանանեան ընդհանուր միջինին հետ բաղադատած կը ներկայացնէ անոր շուրջ 1/4ը միայն, ինչ որ մեզ կ'առաջնորդէ հաստատելու որ հայ ծնողներու մէջ կան տակաւին շատեր, որոնք իրենց գաւակները դպրոց չեն դրկեր, կան որ պետական վարժարաններ կը դրկեն, որովհետեւ հոն ուսումը բոլորովին ձրի է եւ կան որ, հետեւելով օգտապաշտ սկզբունքներու, կը յամառին իրենց գաւակները օտար վարժարան դրկել այն մտածումով որ հոն անոնք կը ստանան ուսում եւ դաստիարակութիւն՝ համաձայն ժամանակին եւ տեղական պահանջներուն: Անոնց համար իրենց գաւակներուն պետական վկայական ստանալը եւ ապագայի հեռանկարներով գործ ապահովելու ձգտող ստոյգ առաւելութիւններու մատուցումը՝ առաջնահերթ մտահոգութիւն է: Շատ կարեւոր կը նկատեն նաեւ օտար լեզուներու լաւ ճանաչումը եւ անոնց սահուն գործածութիւնը: Անոնք անբաւարար կը գտնեն հայ վարժարաններու մէջ ջամբուան օտար լեզուներու ուսումը եւ կասկածելի՝ անոնց յաջողութիւնը պետական քննութիւններու մէջ:

Պէտք է պայքարինք այս մտայնութեան մէջ: Մեր պայքարը սակայն պէտք է ըլլայ շինիչ եւ դրական: Պէտք է նաեւ փորձենք սրբազրել մատնանշուած թերիները եւ վերագրումները եթէ անոնք ճիշդ են. ապա՝ լուսաբանել հայ հասարակութիւնը:

Ինչպէս երեւան կու գայ վերեւ յիշուած վիճակագրական տեղեկութիւններէն, 1971-72 տարեշրջանին, պետական քննութեանց մէջ հայ վարժարաններու արձանագրած յաջողութիւններուն միջինը աւելի բարձր եղած է քան լիբանանեան ընդհանուր միջինը, իսկ այդ բոլորին մէջ ազգային վարժարաններու ձեռք բերած միջինը պետական պրովէի եւ պաքայօրէյայի մէջ արժանի է ամէն գնահատանքի: Այս իրողութիւնները դժբախտաբար ծանօթ չեն մեր ժողովուրդին:

2.- ՀԱՅ ՎԱՐՎԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ ՊԱՇՏՕՆԱՎԱՐՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՊԱՐԱԳԱՆ

Հայ վարժարաններու ուսուցիչներուն միջին տարիքը 45 է: Բաղադատած լիբանանեան ընդհանուր միջինին, արական սեռին պատկանող դասատուները փոքրաթիւ են: Իգական տարրին թիւը գերազանց է: Ուսուցչութիւնը ասպարէզ դառնալու վրայ է իգական սեռին համար: Օտարահպատակ ուսուցիչները ընդհանուրին

մէկ հինգերորդը կը կազմեն: Բացի երկրորդականի եւ միջնակարգի բաժիններէն, նախակրթարաններու ուսուցիչներուն վարձատրութիւնը, որ կ'ըլլայ համաձայն կրթական նախարարութեան ճշդած սակերուն, անբաւարար է: Երիտասարդ արժէքաւոր տարրերը չեն կապուիր այլեւս ուսուցչական ասպարէզին:

Առ հասարակ հայ ուսուցիչներու ուսումնական մակարդակը մօտաւորապէս կը համապատասխանէ լիբանանեան ընդհանուր միջինին: Միջնակարգի եւ երկրորդականի մէջ ան գրեթէ լիբանանեան միջինին հաւասար է, սակայն նախակրթարաններու մէջ տակաւին ունինք միջնակարգի մակարդակէն վար ուսուցիչներ, որոնց համեմատութիւնը ընդհանուր թիւին 11%ն է, այսինքն՝ 9 ուսուցիչի վրայ 1ը միջնակարգի մակարդակէն վար է: Մասնաւոր պակաս մը կայ հայերէնի որակաւոր ուսուցիչներու: Արդարեւ հայերէնի մակարդակը, բացի քանի մը վարժարաններէ, դեռ եւս անբաւարար է: Պետական վկայականներու ապահովութեան համար անոնց թափած սպառիչ ճիգը բնականօրէն զիրենք առաջնորդած է այս իրողութեան, որ ողբերգական չէ, սակայն պէտք ունի խնամուելու եւ բարելաւուելու:

Ըստ մեր հայեցողութեան, հայերէնի մակարդակը բարձրացնելու համար անհրաժեշտ կը նկատենք հետեւեալ իրազործումները:-

1) Վերամշակել հայերէն լեզուի եւ հայոց պատմութեան ուսումնական ծրագիրները համաձայն արդի պահանջներուն եւ կարելիութիւններուն, եթէ դեռ չէ եղած:

2) Պատրաստել վերոյիշեալ կրթական ծրագիրներուն ներդաշնակ նոր դասագիրքեր, հիմնուելով մանկավարժական ներկայ ըմբռնումներուն վրայ:

3) Ունենալ որակեալ ուսուցչական կազմ, հիները վերարժեւորման դասերու ենթարկելով եւ նորերէն պահանջելով հայագիտական բարձրագոյն հիմնարկի մը վկայականը, որուն համար պէտք է ճշդել առանձնապատուկ սակ, եթէ նոյնիսկ այդ վկայականը պետական ճանաչում չէ ստացած:

Նախակրթարաններու պարագային, հայագիտական նիւթերու դասաւորման համար պէտք է ունենալ միջակ մակարդակի վրայ հայ ուսուցչանոց մը, որուն կ'արձանագրուին պետական պրըվէ ստացած աշակերտ-աշակերտուհիները եւ ուր 3 տարուան յատուկ

պատրաստութեամբ անոնք կ'ուսանին հայերէնի եւ օտար լեզուներու, պատմութեան, գրականութեան եւ ընկերային այլ նիւթերու կողքին՝ հոգեբանութիւն, մանկավարժութիւն, մեթոտաբանութիւն, հանդերձ գործնական աշխատանքներու: Այս կարգի թեկնածուներուն եւս կը վճարուի նախաշնորհեալ սակ:

Այն ինչ որ կը վերաբերի բոլորովին տկար տարրերուն, եւ անոնց որ իրենց կոչումին համապատասխան պահանջուած ոգին ցոյց չեն տար, գտումի ճամբով պէտք է հեռացնել զանոնք ուսուցչական ասպարէզէն, որովհետեւ վկայականը առանձին բաւարար չէ, ան գնահատումի տարրերէն մէկն է միայն: Ուսուցիչը պէտք է սիրէ իր ասպարէզը եւ սիրցնէ ինքզինքը իր աշակերտին՝ անոր հանդէպ ցուցաբերելով հետաքրքրութիւն, հասկացողութիւն եւ զոհաբերութիւն: Սովորատի խօսքը այս մասին կը մնայ տակաւին անգերագանցելի: Երբ իրեն հարց կը տրուի թէ ինչո՞ւ այսինչ աշակերտը չ'աշխատիր եւ չի յառաջդիմեր, ան կը պատասխանէ.- «Որովհետեւ ան չի սիրեր իր ուսուցիչը»:

Այս բոլորը կը պահանջեն հետապնդուած աշխատանք, թոշակներու յաւելում եւ հետեւաբար նիւթական կարելիութիւններ: Կարելի չէ տկար ուսուցչական կազմէ մը պահանջել աւելի՛ քան ինչ որ ան կրնայ տալ:

## **ԵՁՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ**

Հայ միջնակարգ եւ երկրորդական վարժարանները փաստը տուին, վերջին շրջանին, իրենց զարգացումին եւ արդիւնաւէտ վիճակին: Անոնցմէ շատերը կրնան մրցիլ քաղաքի լաւագոյն վարժարաններուն հետ, թէ՛ իբրեւ կառույց եւ սարքաւորում եւ թէ՛ իբրեւ բովանդակութիւն եւ վաստակ:

Գրեթէ բոլոր հայ վարժարանները ապահոված են բժշկական խնամք: Ազգային վարժարանները ունին նաեւ ատամնաբուժական կեդրոն, որ կը զբաղի աշակերտներու եւ ուսուցիչներու աւուաններուն դարմանումով: Բազմաթիւ հայ վարժարաններ կը վայելեն հոգեբան-մանկավարժներու աջակցութիւնը, եւ բարիքը՝ ուսման մէջ յապաղած եւ դասարանը կրկնող աշակերտներու պարագաներուն, ուսումնասիրութեան եւ դարմանումին:

Պետական վկայականներ ալ թապու մը չեն հայ վարժարաններուն համար, որոնց ձեռք ձգած միջին արդիւնքը պաշտօնական քննութիւններուն մէջ աւելի բարձր է քան լիբանանեան միջինը:

Արաբերէն լեզուի ուսուցումը մտած է ընթացիկ հունի մէջ: Կը մնայ զարգացնել խօսակցական լեզուն, որովհետեւ աշակերտին արտայայտուելու կարողութիւնը սահմանափակ է տակաւին: Նոյնն է պարագան օտար լեզուներու համար:

Կան տակաւին նուաճումի այլ հանգրուաններ:

Որպէսզի կարենանք օտար վարժարան յաճախող մեր աշակերտութիւնը - գրեթէ կէսը հայ աշակերտութեան ընդհանուր թիւին - վերադարձնել մեր վարժարանները, անհրաժեշտ կը զննք որ անոնք, պահելով հանդերձ ազգային դաստիարակութեան պահանջած մակարդակը, ըլլան օտար լաւագոյն դպրոցներու հետ մրցակցութեան մէջ մտնող միաւորներ եւ գտնուին, ինչ որ կը վերաբերի պետական վկայականներու յաջողութեան եւ օտար լեզուներու ուսուցման, հայ ծնողներու փափաքին գոհացում տալու պայմաններուն մէջ:

Առ այդ, մեր կրթական քարոզչութիւնը պէտք է դրուի դրական հիմերու վրայ: Լաւագոյնին ձգտելու մեր աշխատանքին մէջ երբ շարունակ քննադատենք մեր վարժարանները, հանրային աննրպաստ կարծիք առաջացնելով անոնց շուրջ, անուղղակիօրէն ամլութեան կը դատապարտենք զանոնք:

Քննադատութիւնը ոչ միայն օգտակար է, այլեւ՝ անհրաժեշտ: Պայմանաւ սակայն որ ան ըլլայ արդար, եւ մտածուած եւ մատնանըչուած թերիներու կողքին յայտնաբերուին նաեւ լաւն ու ճիշդը:

Հայ վարժարաններու յառաջդիմութեան նուիրուած աշխատանքներուն մէջ մեծ դեր ունին կատարելիք մեր տնօրէնները որոնք կրթական մեքենային ուղեղը եւ մղիչ ուժը կը հանդիսանան: Անոնք իրենց իմաստուն եւ կորովի ղեկավարութեամբ պէտք է գիտնան գործի լծել ուսուցիչները եւ անոնցմէ արդիւնք պահանջել: Ինչպէս կ'ըսէ փրոֆ. Մայօ, Հրավրտ համալսարանէն, «Տնօրէնին դերը ուրիշները աշխատեցնելով իր գործը կատարել տալու մէջ կը կայանայ»:

Վախճանական իմաստով, պիտի գիտնանք որ ինչ որ կը ցանենք՝ ան կը հնձենք: Դպրոցներու մէջ հրաշքի պէտք չէ հաւատալ:

Ամէն յաջողութիւն հաւաքական ճիգի արդիւնք է: Կրթական պատասխանատու մարմին, տնօրէն, ուսուցիչ, ծնողք եւ մամուլ (որուն քարոզչական դերը պէտք է ստորագնահատել) նոյն տեսլականին պէտք է ծառայեն:

Վերջացնելէ առաջ, աւելորդ կը նկատեմ բացատրել - բազմիցս ըստած եւ կրկնուած - այն կարեւոր դերը, զոր մեր վարժարանները կոչուած են կատարելու Սփիւռքի հայապահպանման դժուար գործին մէջ: Պիտի ուզէի շեշտել սակայն որ անոնք պէտք է բաւարարուին պետական վկայականի ապահովութեամբ, որ անհրաժեշտ է, ինչպէս նաեւ հայերէն լեզուի եւ պատմութեան ուսուցմամբ, որ նոյնքան եւ աւելի կարեւոր է, այլ օգտագործելով կրթութեան ուժականութիւնը պէտք է հայ աշակերտին տան ազգային առողջ դիմագիծ, գիտակցութիւն՝ իբրեւ սփիւռքահայու իրեն սահմանուած սրբազան պարտականութեան պատրաստ, եւ զայն կառուցանեն հոգածու Տէրը մեր մշակութային ժառանգին եւ պատմական անկորնչելի իրաւունքներուն:

Ահա այն մնայուն իրողութիւնները ի շարս այլոց, որոնցմով պէտք է արժեւորուի եւ բացատրուի մեր վարժարաններուն գոյատեւումը:

17 Փետրուար 1975



«ՊԷՏՔ Է ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՒՆ ԸՆԾԱՅԵԼ  
ԴԱՍԱԲԱՆԴՈՒԹԵԱՆ ՈՐԱԿԻՆ ԵՒ ՈՉ ՔԱՆԱԿԻՆ»

Հայ դպրոցը կը գտնուի կրթականօրէն վերակազմակերպուելու անհրաժեշտութեան առջեւ: Իբրեւ շէնք ու հաստատութիւն իր նախնական վիճակէն դուրս գալով՝ հայ դպրոցը հարկադրաբար պէտք է վերանայի իր հայեցի կրթութեան ծրագիրներուն վրայ: Մա՛նաւանդ ազգային կազմակերպուած կեանք մը ստեղծելու արտասահմանի հայութեան ներկայ ճիգերուն տեսանկիւնէն, նորահաս սերունդներու հայեցի պատրաստութեան խնդիրը կը ստանայ հրամայական նշանակութիւն:

Ժամանակի նոր պահանջներուն եւ հասնող սերունդներու նոր հոգեբանութեան հետ, հայեցի դաստիարակութեան ըմբռնումը եւս կը ստանայ նոր բովանդակութիւն: Հայ դպրոցը կրնայ յաջողիլ իր ազգային դերին մէջ ա՛յն ատեն միայն, երբ պատշաճ փոփոխութեամբ ու հայեցի կրթութեան նոր ծրագրումով մը կրնայ քայլ պահել ժամանակին հետ:

Հայեցի կրթութեան ներկայ ծրագիրը արդիականացնելու եւ աւելի արդիւնաւոր դարձնելու առաջադրութեամբ, «Ազգակ» նախաձեռնած է կրթական հարցականի մը քննարկումին: Խմբագրութիւնը պատրաստած է հայեցի կրթութեան մասին չորս հարցումներ եւ տրամադրած է գանոնք գաղութի կրթական թէ հանրային գործիչներուն: Կը յուսանք, որ այդ հարցարանին տրուած պատասխանները կը բովանդակեն անհրաժեշտ կարծիքներն ու վերլուծումները՝ որպէսզի մեկնակէտ ընդունուին հայեցի կրթութեան նոր ծրագրումին համար: Մեր այսօրուան թիւով կու տանք այդ պատասխաններէն առաջինը, որ կը պատկանի Ազգային Ուսումնական Խորհուրդի ատենապետ պր. Ոսկերեան Արզումանեանին:

- Ի՞նչպէս կը սահմանէք ապագայ հայու տիպարը. ի՞նչ դիմագիծ պիտի ունենան մեր ազգային վարժարաններէն շրջանաւարտ

հայ պատանին ու երիտասարդը, իբրեւ քաղաքացի եւ իբրեւ հայութեան համար աշխատող անհատ:

- Ընդունուած ճշմարտութիւն եւ անվիճելի իրողութիւն է որ Սփիւռքի տարածքին վրայ հայ դպրոցը կը հանդիսանայ մեր ազգային գոյութեան հիմնական կռուաններէն մէկը: Որքան ատեն որ մենք կարենանք, շնորհիւ մեր կրթական հաստատութիւններուն, ըլլան անոնք ազգային վարժարաններ կամ անհատական եւ կամ միութենական այլ ձեռնարկներ, անվճար պահել մեր լեզուն ու ջամբել հայեցի դաստիարակութիւն եւ ազգային գիտակցութեան կենդանի ոգի աճող նոր սերունդներուն, այնքան ատեն կը վանենք մեզմէ ուժացումի արհաւիրքը:

Կան սակայն այլ հրամայականներ: Իր պատմութեան կապուած քաղաքական դէպքերու դժբախտ դասաւորումով, Արտասահմանի մէջ՝ հայր քաղաքացին է այն հիւրընկալ երկրին՝ գոր ինք ընտրած է իբրեւ երկրորդ հայրենիք եւ որուն հանդէպ կրնայ միայն երախտապարտ ըլլալ: Այս գոյավիճակէն կը բխին պարտաւորութիւններ եւ իրաւունքներ: Լիբանանի պարագային, ճանչցուած են հայ համայնքին սահմանադրական իրաւունքները: Անկախաբար քաղաքացիական օրինական պարտաւորութիւններէն՝ ունինք նաեւ մեր սեփական շահերը հետապնդելու հարց, անհատական թէ ազգային-հաւաքական տեսակէտէն դիտուած: Հայր իբրեւ ընկերային մէկ տարր, պատկանելով իրեն ծնունդ տուող ընկերային բջիջին, կորիզին, որ այս պարագային իր ընտանիքն է եւ իր սեղմ ազգային միջավայրը (դպրոց, եկեղեցի, ակումբ...), կը պատկանի նաեւ բառին լայն հասկացողութեամբ գինքը շրջապատող միջավայրին, որուն ազդեցութեան տակն է անխուսափելիօրէն եւ որուն հետ աղերս ունի իր անհատականութեան ներդաշնակ գարգացումը:

Հայր չի կրնար շարունակել կղզիացած ապրիլ, ըլլայ իր առօրեայ աշխատանքին վերաբերող յարաբերութիւններու հետեւանքով, ըլլայ իր ընթացիկ կեանքի պահանջներուն թելադրութեամբ. ան կապ պիտի պահէ իր շրջապատին հետ, հաղորդակից պիտի ըլլայ անոր հոգեկան ապրումներուն, նաեւ մտահոգութիւններուն: Կարենալ բարոյապէս եւ նիւթապէս հիմնաւորելու համար իր կեանքը, մինչեւ այն ատեն երբ հնարաւորութիւններ ստեղծուին հայրենիք

վերադառնալու, ան պիտի վերջ տայ գաղթականի հոգեբանութեան լուսանցքային այն գոյավիճակին, որ զանազան բացատրելի պատճառներով յատկանշեց վերջին յիսուն տարուան իր կեանքը Լիբանանի մէջ: Հետեւաբար, վարժարաններու միջոցաւ մենք պէտք է ձգտինք հայր էապէս հայ պահելու մեր վսեմ նպատակին, դրոշմելով անոր հայու անբասիր դիմագիծ եւ, միւս կողմէ, պէտք է նպաստաւոր պայմաններ ստեղծենք հոն՝ զայն դարձնելու համար լաւ լիբանանցի:

- Ի՞նչ ձեւի հայեցի կրթութիւն մը կրնայ նպաստել նորահաս սերունդներուն մօտ վերոյիշեալ տիպարը կերտելու գործին: Հայկական ո՞ր արժէքները եւ դասանիւթերը պէտք է մաս կազմեն մեր ուսումնական ծրագիրներուն:

- Վերոյիշեալ տիպարը կերտելու համար անհրաժեշտ է, ազգային կրթութեան աշակերտը գօտեպնդել ցեղին իրաւ արժէքներուն հանդէպ ցուցադրելիք հաւատքով:

Որպէսզի օտար մշակոյթներու պսպղուն ցոլքերով չկուրանայ, անոր պէտք է ներշնչել հպարտութեան զգացում մը ազգային այն դարաւոր մշակոյթին համար, որ իրեն ժառանգ ձգուած է իր նախնիքներուն կողմէ, եւ մշակութային այն մեծ իրագործումներուն համար, որոնք մեր օրերուն կը կատարուին իր ցեղակիցներուն կողմէ, թէ Մայր Հայրենիքի եւ թէ Սփիւռքի մէջ: Վերջապէս ան պէտք է գիտակից դառնայ մեր ազգային պահանջներուն, մեզմէ կորզուած իրաւունքներուն: Հետեւաբար, հայերէն լեզուն, գրականութիւնը, կրօնը, հայ մշակոյթի պատմութիւնը, հայ Փոլքորը (երգը, պարը) եւ մանաւանդ հայոց պատմութիւնը (հին եւ նոր), պէտք է առանցքը կազմեն մեր կրթական ծրագիրներուն:

- Ընդհանուր առմամբ կրթական ի՞նչ քաղաքականութիւն պէտք է որդեգրել մեր տղոց հայեցի պատրաստութիւնն ու քաղաքացիական դաստիարակութիւնը ներդաշնակ եւ արդիական դարձնելու համար:

- Հիմնուելով վերոյիշեալ սկզբունքային տեսակէտներուն վրայ, կը խորհինք որ մեր կրթական հաստատութիւնները պէտք է ունենան առաքելութիւն, հայր լաւ հայ եւ միեւնոյն ատեն լաւ լիբանանցի պահելու: Ասիկա կ'ենթադրէ որ անոնք պէտք է կիրարկեն կրթական երկու յատուկ ծրագիրներ: Մէկը ազգային, միւսը պետական:

- Որո՞նք են նման քաղաքականութեան մը որդեգրումին առջեւ դրուած հիմնական դժուարութիւնները:

- Պէտք է ընդունիլ որ թէպէտ դժուար է իրագործել վերեւ յիշուած առաջադրութիւնները բայց ոչ անկարելի: Դժուար է անոր համար որ նոյն անձին մէջ կ'ուզենք տեսնել հաւասարապէս երկու էութիւններ: Երկփեղկում միութեան մէջ: Կրնայ մէկուն առաւել զարգացումը խաչաձեւել միւսին ընթացքը: Այս սէմպիոզը, (symbiose) ինչպէս սովորութիւն է ըսել, պէտք է այնպէս մը տրուի որ մէկը միւսը ամբողջացնէ: Երկու կրթական ծրագիրներու գործադրութիւնը մեր աշակերտներուն դասացուցակը մեծապէս կը խճողէ եւ զայն դժուարամարս կը դարձնէ: Պէտք չէ չափազանցել, անհամեմատօրէն ծանրաբեռնելով աշակերտները, եթէ չենք ուզեր որ անոնք իրենց մատղաշ տարիքին մէջ դառնան մտքով եւ գլխով յոգնած տարրեր: Պէտք է կարեւորութիւն ընծայել ջամբուած դասաւանդութեան որակին եւ ոչ քանակին: Ասիկա կը նշանակէ, ինչպէս կարելի է անմիջապէս ենթադրել, որակեալ ուսուցչական կազմ: Մեր աշխատանքները պէտք է զարգացնենք նաեւ այս ուղղութեամբ: Չի բաւեր միայն զարգացած ուսուցիչներ ունենալ: Անոնք պէտք է տիրացած ըլլան մանկավարժական արդիական մեթոտներուն, որպէսզի դասաւանդուած նիւթերը աւելի շուտ եւ հեշտօրէն իւրացուին աշակերտներուն կողմէ: Անոնք պէտք է մանաւանդ ըմբռնեն այս բոլոր մտահոգութիւնները, որոնք տեղ տուին այս հարցադրոյցին: Վերջին հաշուով որակեալ եւ խղճամիտ «արհեստաւորն» է, որ կ'արտադրէ աւելի մաքուր, աւելի արագ եւ աւելի շատ: Այս ալ անշուշտ կ'ենթադրէ նիւթական կարելիութիւններ, որոնց մասին պէտք է մտածենք ազգովին:

ԱՐՈՒԵՍՏԻՑ ԵՒ ԱՐՀԵՍՏԻՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ  
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ  
ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՁ

Աւելի քան 30 տարիներէ ի վեր, պետութիւններու եւ կրթական հաստատութիւններու մօտ, միջնակարգէն ետք իրենց կրթական ծրագիրներուն մէջ այլազանութիւն ներմուծելու յստակ ձգտում մը կայ: Այսպէս, այն երկիրները, ուր համալսարանի մուտքը պայմանաւորուած է պաքայորիայով՝ իբրեւ պետութեան կողմէ ճանչցուած երկրորդական ուսման վկայական, առաջացուած են պաքայորիայի գանազան բաժանմունքներ, որոնց շնորհիւ աշակերտը կրնայ կատարել լայն ընտրութիւններ՝ հետագային իր ընդգրկելիք մասնագիտութեան նկատմամբ:

Պետական պաքայորիա չունեցող երկիրները, Հայ Աքուլի մակարդակէն ետք, նախա-համալսարանական հանգրուանին, կրթական գանազան ծրագիրներով՝ աշակերտը կը պատրաստեն իր ընտրելիք մասնագիտական բարձրագոյն ուսումին:

Այս մտահոգութիւնը կը բացատրուի գլխաւորաբար հետեւեալ երկու պատճառներով.

1) Վերջին 50 տարիներու մանկավարժական եւ հոգեբանական ուսումնասիրութիւնները առաւել եւս հաստատեցին այն տեսակէտը, որ ենթական պէտք է ընտրէ ճիշդ մը, որ եթէ անպայման իր նախասիրածը չէ, սակայն առնուազն ներդաշնակ է իր խառնուածքին, մտային կարողութեան եւ ընդունակութեան, որոնք ստացական չեն: Ա՛լ անցաւ այն ժամանակը, երբ աւանդական ուսմանց մէջ դժուարութիւն ունեցող աշակերտը կ'որակուէր «անխելք», «անմիտ», «ծոյլ», եւ այլն: «Խելացի» եւ «անմիտ» ածականները յարաբերական են: Աշակերտ մը կրնայ չյաջողիլ գիտական նիւթերու մէջ, ինչ որ պատճառ մը չէ զինք ստորագնահատելու, սակայն կրնայ յաջողիլ ուսման այլ բնագաւառներուն մէջ (գրական, պատ-

մական, եւայլն...): Ան կրնայ շահագրգռութիւն չցուցաբերել ո՛չ մէկուն եւ ոչ ալ միւսին նկատմամբ, սակայն մեծ ճամբայ կրնայ կտրել եւ յաջողիլ կեանքի մէջ արհեստագիտական մարզերէն ներս: Կը բաւէ, որ հաստատութիւնները եւ ծնողները առիթը տան անոր, որ վերագտնէ իր բնական միջավայրը, ուր պիտի կարենայ զարգացնել իր անհատակնութիւնը եւ տիրանալ իր խառնուածքին եւ ընդունակութիւններուն համապատասխանող մասնագիտութեան:

1) Համլսարաններու մասնագիտական ուսումը կը հետապնդէ հիմնական երկու նպատակ.

ա.- Հետազօտութիւններ կատարել, նպաստելու համար գիտութեան յառաջդիմութեան, իր բոլոր մարզերէն ներս, ի սպաս մարդկութեան ծառայութեան:

բ.- Մասնագիտական ուսում ջամբել եւ վկայական տալ թեկնածուներուն, որպէսզի կարենան մէկ կողմէ գործ գտնել եւ ապահովել արժանավայել կեանք եւ, միւս կողմէ՝ օգտակար հանդիսանալ ազգային տնտեսութեան բարգաւաճման:

Տնտեսապէս յառաջացած երկիրները, յատուկ սպասարկութիւններու միջոցաւ, կը ճշդեն յառաջիկայ 5-10 տարիներու համար մասնագէտներու իրենց պահանջքը, որուն լոյսին տակ եւ շնորհիւ պետական կամ ընկերութիւններու ընձեռած նիւթական նպաստներուն՝ համալսարանները, իրենց կարգին, կը դասաւորեն իրենց կառույցը՝ խնդրոյ առարկայ մասնագիտութեան կալուածը զարգացընելու համար:

Պատերազմէն առաջ, 1970-1971ին կատարուած վիճակագրութիւն մը հետեւեալ պատկերը կու տար Լիբանանի մէջ գործող համալսարաններէն շրջանաւարտ ուսանողներուն ընտրած մասնագիտութիւններու մասին.

Գրականութիւն, իմաստասիրութիւն, ընկերաբանութիւն եւ քաղաքական գիտութիւններ 52 առ հարիւր:

Իրաւաբանութիւն 16 առ հարիւր:

Տնտեսագիտութիւն, առեւտրական եւ վարչագիտական ճիւղ 10 առ հարիւր:

Ճարտարապետութիւն 7 առ հարիւր:

Բժշկութիւն 6 առ հարիւր:

Այլ գիտութիւններ 8 առ հարիւր:

*Ձանագանք 1 առ հարիւր:*

*Եթէ ուսանողները բաժնենք Արուեստի եւ Գիտութեան բաժանմունքներով, պիտի տեսնենք, որ նոյն տարուան 32-376 ուսանողներուն 81.30 առ հարիւր համեմատութիւնը հետեւած է Արուեստի բաժանմունքին ու 18.70 առ հարիւրը՝ գիտականին:*

*Վերոյիշեալ համեմատութիւնները արդէն ցոյց կու տան, թէ ի՞նչ մեծ անհաւասարակչութիւն կայ ընտրուած նիւթերու եւ երկրին պահանջներուն միջեւ, երբ քաջ գիտենք, որ Լիբանանի անտեսութիւնը շրջանային տարածք ունի: Ասոր հետեւանքը կրնայ ըլլալ անգործութիւն եւ երբեմն ալ արտագաղթ: Առնենք քանի մը օրինակներ:*

*1952-1978 ժամանակաշրջանին, Լիբանանի մէջ արձանագրուած են 4741 երկրաչափ, որոնց 70 առ հարիւրը կը կարծուի, որ արաբական աշխարհի մէջ կը ծառայեն: Վերոյիշեալ թիւը ցոյց կու տայ, որ շուրջ 1400 երկրաչափ կայ մէկ միլիոն բնակչութեան համար: Մինչդեռ, Ամերիկայի, Եւրոպայի, եւ նոյնիսկ Իսրայէլի մէջ ամէն մէկ միլիոն բնակիչի համար գոյութիւն ունի 3500-4500 երկրաչափ:*

*Եթէ Լիբանան շրջանային տնտեսութեան ուղեգիծ որդեգրած չըլլայ, կրնայինք տակաւին բաւականանալ ներկայ ընթացքով:*

*1977ին, Լիբանանի մէջ կը գործէին 598 ատամնաբոյժներ: 1965-1977 երկարող ժամանակաշրջանին արձանագրուած 326 ատամնաբոյժներուն 172ը միայն Լիբանանի մէջ ուսած են, իսկ 154ը արտասահման:*

*1971-1977 ժամանակաշրջանին, Լիբանանի մէջ արձանագրուած են 852 բժիշկներ, որոնց 225ը՝ Սէն Ժոզէֆ համալսարանէն, 95ը՝ Ամերիկեան համալսարանէն եւ մնացեալ 532ը արտասահմանէն վկայուած են:*

*Այս թիւերը ցոյց կու տան Լիբանանի պահանջը եւ հոն գործող համալսարաններու արտադրական անբաւարարութիւնը: Այս համալսարանները դժբախտաբար ո՛չ նիւթական լայն կարելիութիւններ ունին եւ ոչ ալ համապատասխան որակեալ մարդու՝ կարենալ ընդլայնելու համար իրենց ներկայ կառոյցները:*

*Գրական եւ մարդկային գիտութեանց բաժանմունքներու պարագային՝ կը պարզուի ճիշդ հակապատկերը: Այս ճիւղերէն վկայեալները կ'ողողեն հրապարակը, երբ այդ ուղղութեամբ պահանջը սահմանափակ է:*

Լիբանան, նկատի առած իր առանձնայատուկ տնտեսական կոչումն ու որդեգրած քաղաքականութիւնը, ստոյգ պէտք ունի գիտական ճիւղերու կապուած մասնագէտներու, որակեալ միջին անձնակազմերու, կարող քարտուղարուհիներու, միջազգային մակարդակով թարգմաններու, հաշուագէտներու, համակարգիչ մեքենաներու վրայ աշխատողներու եւ, մա՛նաւանդ՝ զարգացած արհեստագէտներու:

Ահա, այս երեւոյթն է, որ մտահոգութիւն պատճառած է պետութեան, եւ կրթական նախարարութիւնը ներկայիս լծուած է ընդարձակ ծրագիրներու մշակումին, առաւել թափ տալու համար Արուեստից եւ Արհեստից վարժարաններուն: Կարեւոր գումարներ նկատի առնուած են, տարածելու համար արհեստագիտական վարժարաններու ցանցը, անմիջապէս որ ապահովութիւնը եւ քաղաքական կայունութիւնը վերահաստատուին երկրին մէջ:

Արդարեւ, Արուեստից եւ Արհեստից վարժարաններու թիւը մեծ համեմատութիւններու հասած է այլ երկիրներու մէջ: Հողամշակութիւնը, ճարտարարուեստը, դրամատնային հիմնարկները, վաճառականութիւնը եւ ծառայութիւնները անընդհատ որակեալ տարրերու պէտք ունին: Անոնք պէտք ունին մասնաւորաբար միջին անձնակազմերու, որոնք արտադրութեան մարդկային ուժականութիւնը կը ներկայացնեն:

Եւրոպայի մէջ աշակերտութեան 40-50 առ հարիւր համեմատութիւնը կը յաճախէ արհեստագիտական վարժարաններ: Միջին արեւելեան երկիրներու մէջ արհեստագիտական ճիւղերուն արձանագրուած աշակերտութեան թիւը համեմատաբար աւելի բարձր է, քան Լիբանանի մէջ: Այսպէս, Յորդանանի աշակերտութեան 14 առ հարիւրը եւ Սուրիոյ աշակերտութեան 20 առ հարիւրը կը հետեւին արհեստագիտական ուսումներու: Մինչդեռ, Լիբանանի մէջ այդ համեմատութիւնը աշակերտութեան 2 առ հարիւր համեմատութիւնն էր 1971ին եւ 4-5 առ հարիւրը՝ ներկայիս:

Լիբանանի մէջ արհեստագիտական ուսումը սկսաւ 1905ին, երբ հիմնուեցաւ Արուեստից եւ Արհեստից վարժարանը: Անիկա զարգացաւ 1948ին եւ իր ներկայ կառոյցներուն տիրացաւ 1967ին:

Արհեստագիտական ճիւղը՝ իր յառաջացուցած տեսական եւ գործնական կազմաւորումով, հիմնական ձեռնհասութիւն կու տայ



աշակերտին, որպէսզի ան կարենայ առանց խարխափումի, երբ գանազան պատճառներով պիտի չուզէր մինչեւ համալսարան հասնիլ, ընդգրկել կարճ ժամանակամիջոցի մէջ իր խառնուածքին եւ ընդունակութիւններուն համապատասխանող շահաբեր եւ գոհացուցիչ ասպարէզներ, որոնք կրնան ըլլալ գրասենեակային գործեր, ինչպէս նաեւ՝ արհեստանոցի աշխատանքներ: Հիմնականը աշակերտին բարոյական կորովը բարձր պահելով, անոր տալն է իր անհատականութիւնը գարգացնող կարելիութիւններ՝ համաձայն իր ընդունակութիւններուն եւ անով իսկ ապահովաբար ճշդել իր տեղը մարդկային ընկերութեան մէջ:

Արուեստից եւ Արհեստից վարժարանները, անոնց համար, որոնք կ'ուզեն պետական թեքնիք պաքալորիայի հասնիլ, կը պահանջեն միջնակարգէն ետք 3 տարուան ուսումը, որմէ ետք 2 տարուան յաւելեալ ուսումով աշակերտը կրնայ խորացնել իր մասնագիտութիւնը եւ ստանալ մասնագիտական բարձրագոյն վկայական (T.S.) եւ կամ փոխադրուիլ համալսարան, ակադեմիական դրութեան, կատարելագործելու համար իր բարձրագոյն ուսումը, իր մասնագիտութեան համապատասխան ճիւղին մէջ:

Այն աշակերտները, որոնք պիտի չուզէին երկարատեւ ուսում ստանալ, պաքալորիա թեքնիքի (B.T.) արձանագրուելով կրնան 1 կամ 2 տարիէն ձեռք ձգել որոշ մասնագիտութիւններ եւ նետուիլ աշխատանքի դաշտ:

Ահա, այս հեռանկարներով է, որ ազգային իշխանութիւնը ծրագրած է իր դպրոցական ցանցին մէջ տեղ տալ Արուեստից եւ Արհեստից վարժարանին, որպէսզի մեր այն աշակերտները, որոնք գանազան պատճառներով պիտի չուզէին համալսարանի ուղղութեամբ շարունակել իրենց ուսումը, կարենան կարճ ժամանակամիջոցի մէջ ստանալ Արուեստից եւ Արհեստից վկայական մը՝ ինքնավստահութեամբ նետուելու համար կեանքի գուպարին մէջ:

Ս. ԽԱՆԱՄԻՐԵԱՆ ՈՒ  
ԼԵՒՈՆ ԵՒ ՍՈՖԻԱ ՅԱԿՈԲԵԱՆ ԳՈԼԷՃՆԵՐՈՒ  
ՏԱՐԵՓԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ (1975-1976)

**ՈՍԿԵՔԵՐԱՆ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆԻ ԽՕՍՔԸ**

*Երփներանգ ծաղիկներու երկու նոր փունջեր եւս քաղուած Ս. Խանամիրեան եւ Լեւոն եւ Ս. Յակոբեան գոլէճներու կրթական անդաստանէն կ'ընծայաբերուին այսօր հայ ժողովուրդին: Թէպէտեւ անոնց փթթումն ու ծաղկումը կատարուեցան արտասովոր պայմաններու մէջ, սակայն անոնք բան չկորսնցուցին իրենց աւանդական յատկանիշներէն, իրենց հաղորդական բոյրէն:*

*Պետական Բ. պաքայօրէյայի քննութեանց մէջ, Ս. Խանամիրեան Գոլէճի աշակերտութեան արձանագրած բացառիկ յաջողութիւնը եկաւ անգամ մը եւս հաստատելու որ գոլէճը, ի հեճուկս տիրող դժնդակ պայմաններուն անցնող երկու տարիներու ընթացքին, շարունակեց մնալ յաջողութեան այն պատուաբեր ընթացքին մէջ, որ իրը եղած էր վերջին տարիներուն: 94% յաջողութեամբ, երբ պետական միջինը եղած է միայն 70%, Սուրէն Խանամիրեան Գոլէճը արդարօրէն կը դասուի ոչ միայն լիբանանահայ այլ ամբողջ Լիբանանի լաւագոյն գոլէճներու կարգին:*

*Լեւոն եւ Ս. Յակոբեան Գոլէճը, որ վաղուց մեզի վայելքը տուած էր նմանօրինակ ապրումներու, առիթը չունեցաւ գայն շարունակելու տրուած ըլլալով որ կրթական նախարարութեան որոշումով Ա. պաքայօրիայի եւ պրըվէի քննութիւնները երկու տարիէ ի վեր առկախուած կը մնան:*

*Այս առիթով կ'ուզեմ իմ գնահատանքս յայտնել մեր գոյգ գոլէճներու խնամակալութեանց, ի մասնաւորի յարգելի տնօրէններուն եւ ուսուցիչներուն, որոնց փութաջանութեան եւ հետեւողական աշխատանքին կը պարտինք գլխաւորաբար ձեռք ձգուած արդիւնքը:*

Շնորհալուրով խօսք ունիմ յատկապէս շրջանաւարտներուն եւ իրենց յարգելի ծնողներուն եւ պարագաներուն:

Շրջանաւարտ աշակերտներու ծնողները իրաւունք ունին հպարտ ըլլալու իրենց զաւակներուն արձանագրած փայլուն յաջողութիւններուն համար, իսկ գոլէճներու խնամակալ մարմինները, տնօրէններն ու ուսուցիչները, ինչպէս նաեւ Ուսումնական Խորհուրդը եւ անոր նախագահ Առաջնորդ Սրբազան Հայրը չեն կրնար չհրճուիլ ի տես այս գնահատելի արդիւնքին:

- Կրթական կեանքին մէջ յաջողութիւնը, առ հասարակ, հետեւանք է հաւաքական ճիգերու մէկտեղումին: Ազգային իշխանութիւն - տնօրէն - ուսուցիչ - աշակերտ - ծնողք փոխ յարաբերութիւններն ու փոխադարձ հասկացողութիւնը, որուն պէտք է աւելցնել նաեւ որակաւոր ուսուցչական կազմի մը եւ հեղինակաւոր տնօրէնի մը ճառագայթող ներկայութիւնը, մեծապէս կը նպաստեն գործին յաջողութեան:

Առ այդ, կ'արժէ շեշտել այն իրողութիւնը որ ազգի մը կեանքին մէջ չկայ անհատական թէ հաւաքական ճիգերու աւելի լաւ օգտագործում քան այն ինչ որ կ'ըլլայ սերունդներու առողջ դաստիարակութեան եւ կրթութեան համար: Ոչ մէկ յաջողութիւն չի կրնար հիմնաւորուիլ առանց համապատասխան մշակոյթի:

Պէտք չէ սակայն շփոթել մշակոյթը շատ բան գիտնալուն հետ: Մշակուած ըլլալ չի նշանակեր, ինչպէս կ'ըսէ յայտնի մտաւորական Փիեռ Թիպէրկէն, ըլլալ շտեմարան մը գիտելիքներու, հոր մը գիտութեան, բառարան մը եւ կամ, աւելի պարզ արտայայտուելով, ամէն բան լսած կամ ամէն բան կարդացած ըլլալ:

Ուսումը անկասկած մշակուելու ամէնէն արագ միջոցն է: Ան կը մարգէ յիշողութիւնը, կը սորվեցնէ տրամաբանել եւ գիտելիքներու որոշ պաշարով մը կ'օժտէ ենթական: Սակայն եթէ հոն կանգ առնենք, կարելի չէ ըսել որ մշակուած միտք մը ունինք:

Մշակոյթը կը կազմաւորէ մարդու դատողութիւնը: Անոր կուտայ քննադատի հայեացք եւ խորաթափանց միտք, զգայնութեանց նրբութիւններ, լայնախոհութիւն: Ան միտքը կը բանայ իմացական եւ մարդկային կեանքը շահագրգռող հարցերու շուրջ, կը հաստատէ ուղիղ եւ մնայուն կապ, իրականութեան լոյսին տակ, մարդուն եւ զինքը շրջապատող անձերու եւ իրերու միջեւ:

Ահա այս է մշակույթին դերը որուն կը ձգտին առ հասարակ կրթական հաստատութիւնները:

Աւելցնենք հոս սակայն որ որեւէ մշակույթ չի կրնար որակեալ նկատուիլ եթէ ան չէ հիմնուած բարոյական արժէքներու գիտակցութեան վրայ:

Որեւէ ազգային մշակույթ հարազատ չէ եթէ իր արմատները չէ տարածած իր ժողովուրդին հոգեկան ենթահողին եւ պատմութեան մէջ, եթէ ան չի սնանիր իր ազգին իրաւ արժէքներու ու հիմնական սկզբունքներու վճիտ ակունքներէն:

Սիրելի շրջանաւարտներ,

Ահա եկաւ վերջապէս հրաժեշտի այն պահը երբ դուք հարկադրաբար պիտի լքէք ձեր վարժարանը, ձեր մանկութեան օրրանը եւ պիտի ընդգրկէք կեանքի նոր ուղիներ: Ձեզմէ շատեր հաւանաբար պիտի շարունակեն իրենց ուսումը եւ ուրիշներ նետուին կեանքի գուպարին մէջ: Քիչ ետք բաժանումի այս խորհրդաւոր պահն ալ պիտի անցնի հեզասահ ու միանայ այս վարժարանին այլ յուշերուն, որոնք տիրական խորքը կը կազմեն ձեր մանկութեան, պատանեկութեան եւ մատղաշ երիտասարդութեան: Այդ խորքը ժամանակի թաւալումին հետ պիտի հետզհետէ հեռանայ ու նմանի բնանկարներու այն մշտնջապատ խորքերուն, որոնք երբ դիտէք՝ կը լարեն ձեր երեւակայութիւնը եւ կ'առաջնորդեն ձեզ երազանքի:

Սակայն ինչպէս բոլոր բնանկարներու մէջ, նաեւ ձեր յիշողութեան պաստառին վրայ կը մնան պայծառ ու ցցուն կարգ մը կէտեր, որոնք մարդկային եւ բարոյական արժէքներու գնահատման ինչպէս նաեւ ազգային գիտակցութեան կապուած ճշմարտութիւններ են, զորս դուք սորվեցաք այս վարժարաններուն մէջ եւ երբեք պիտի չմոռնաք:

Պիտի չմոռնաք վարժարանին հայաշունչ մթնոլորտը, որուն շնորհիւ կազմաւորուեցաւ հաւատաւոր հայու ձեր դիմագիծը:

Պիտի չմոռնաք ձեր տնօրէնը եւ ամէն օր քիչ մը աւելի լաւ պիտի ըմբռնէք իմաստը այն բոլոր յորդորներուն եւ ցուցմունքներուն՝ զորս դուք կը լսէիք իրմէ:

Պիտի չմոռնաք ձեր դաստիարակներն ու ուսուցիչները, որոնք ձեր դպրոցական տարիներու երկայնքին անդուլ աշխատանքով եւ համբերութեամբ դարբնեցին ձեր մէջ «մարդը», կերտեցին նկարա-

գիր եւ ներշնչեցին սէր գեղեցիկին ու բարիին ու փափաքը յարատեւ աշխատանքին եւ ծառայութեան: Յոյց տուին վեհանձնութեան առաջնորդող ճանապարհները, սորվեցուցին ըլլալ պարտաճանաչ քաղաքացի, կրթուած անհատ բացուած համամարդկային դրական արժէքներու եւ երեւոյթներու առջեւ, հայրենասէր եւ գիտակից՝ ազգային բոլոր արժէքներուն նկատմամբ:

Եթէ ճիշդ է որ մանուկն ու պատանին իրենց նկարագրի կազմաւորման մէջ անջնջելի կերպով կը պահեն հետքերը իրենց ապրած միջավայրի ազդեցութեան ինչպէս եւ իրենց ստացած կրթութեան, ուրեմն արդարօրէն կրնանք ըսել որ Սուրէն Խանամիրեան եւ Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Գոյէճները պիտի ապրին ձեր ամէն մէկուն սրտին մէջ - ձեր անձին հետ շաղախուած իբրեւ անբաժանելի գործօն ձեր անհատականութեան:

Ձեր դպրոցը պիտի մնայ առանցքը անցեալի ձեր բոլոր յուշերուն եւ պիտի դառնայ մնայուն ներշնչարանը ձեր անդրագոյն նուաճումներուն:

Դուք հոն գտաք ձեր մտքի զարգացումին սատարող անհրաժեշտ միջոցներ եւ հոգիին ազնուացման նպաստող միջավայր: Այս վարժարաններէն ներս ոչ միայն բազմազան գիտելիքներու ընտիր պաշար մը ամբարեցիք, այլ հաղորդակից դարձաք հայու դարաւոր ստեղծագործ մտքին, հայ մշակոյթին եւ ստացաք ազգային դաստիարակութիւն:

Սակայն այդ բոլորը բաւարար չեն: Ձեր բոլորին ծանօթ է յոյն փիլիսոփայ Սոկրատի պատասխանը երբ իրեն կը հարցնեն թէ ի՞նչ բանը ամենալաւ գիտէ: Անոր պատասխանը հետեւեալը կ'ըլլայ. «Ամենալաւ գիտցած բանս այն է որ դեռ բան չեմ գիտեր»:

Արդարեւ, դպրոցը կը սորվեցնէ սկզբունքներ, աւելի ճիշդը սորվել կը սորվեցնէ: Դուք էք որ ձեր կեանքի ընթացքին պիտի մշակէք ձեր միտքը եւ պիտի զարգանաք անընդհատ: Մի մոռնաք որ մարդ կ'արժէ այն ինչ որ է եւ ոչ թէ այն ինչ որ ունի: Զարգացումին դերը մեր կեանքին մէջ անգնահատելի է: Անոր անդրադարձը կը տեսնենք ամէն մակարդակի վրայ:

1918ի Համաշխարհային Ա. Պատերազմին կը գրէ զօրավար Ֆրանսուա Ժենատրի, երբ մարաջախտ Ֆոշ Վերտէօնի ճակատամարտին հերոսը, առաջնորդեց դաշնակից բանակները վերջնական

յաղթանակի, Կապրիէլ Հանօթօ, Փրանսացի ակադեմական եւ պատմաբան, իրեն հարց կու տայ իմանալու համար թէ իր բազմակողմանի խոր գարգացումը արդեօք դեր ունեցա՞ւ շահելու համար պատմութեան ամենամեծ ճակատամարտներէն մէկը, որ տեւեց 24 ժամ միայն եւ որուն ընթացքին մեռան աւելի քան 600 հազար զինուորներ: Մարաջախտ Ֆոշ կը պատասխանէ.- ընդհանուր գարգացումս օգնեց ինծի կարենալ առնելու համար այս կարգի ծանրակշիռ որոշում մը եւ պատասխանատու քայլ մը:

Ազգային վարժարաններու կրթական առաքելութիւնը չի սահմանափակուիր լոկ ուսում եւ դաստիարակութիւն ջամբելով: Անոնք չեն բաւարարուիր իրենց աշակերտութեան տալով գիտելիքներու պաշար մը եւ մտքի կառոյց, որոնցմով կարենան իրենց ուսումը շարունակել եւ տիրանալ փայլուն ապագայի:

Չի բաւեր նոյնիսկ լաւ հայերէն սորվիլ, ազգային պատմութիւն գիտնալ ու ծանօթ ըլլալ հայ մշակոյթին եւ Հայ Դատին:

Մենք գմեզ թերացած կը նկատենք մեր կրթական պարտականութեան մէջ, եթէ մեր վարժարաններու շրջանաւարտները ըլլան միայն նիւթապէս ապահովուած եւ վարեն կրաւորական եւ լուսանցքային կեանք:

Մենք կ'ակնկալենք որ դառնան գիտակից իրենց պատկանելիութեան, տէր իրենց ինքնութեան եւ յանձնառու:

Հայ երիտասարդը պիտի ըլլայ յանձնառու իր անձին նկատմամբ: Պիտի անվերջ գարգանայ ու մշակուի, պայքարի իր նկարագրային տկարութիւններուն դէմ ու յարատեւ ճիգ թափէ շարունակէ ինքզինք գերազանցելու համար:

Պիտի յանձնառու ըլլայ իր ընտանիքին հանդէպ ու գիտնայ երախտապարտ ըլլալ բոլոր անոնց, ծնողք թէ բարեկամ, որոնց խնամքին կամ ծառայութեան առարկան եղած է:

Պիտի յանձնառու ըլլայ իր ապրած հայրենիքին հանդէպ եւ իբրեւ պարկեշտ քաղաքացի պիտի հաւատարմօրէն յարգէ անոր օրէնքները, սատարէ խաղաղ ու բարգաւաճ կեանքի վերադարձին եւ ի հարկին իր գոհողութեան բաժինը բերէ անոր անկախութեան ամրապնդման:

Վերջապէս ու մանաւանդ պիտի ըլլայ յանձնառու իր ազգային պարտականութեանց նկատմամբ: Պիտի գուրգուրայ իր դարաւոր

մշակույթին վրայ եւ գայն փոխանցէ հարազատօրէն յաջորդ սերունդներուն: Պիտի տէր կանգնի իր ինքնութեան, պահանջատէր ըլլայ իր սրբազան իրաւունքներուն ու պայքարի անոնց տիրացման համար, ինչ գոհողութիւն ալ պահանջէ այդ իրմէ:

Գօտեպնդուած իր ժողովուրդին արժանիքներուն հանդէպ ունեցած հաւատքի ոյժով՝ պիտի կուրծք տայ օտարամոլութեան յորձանքներուն դէմ:

Բայց զգոյշ, այս բոլորը պէտք է ըլլան գործով եւ ոչ խօսքով: Չի բաւեր ծարգիրներ մշակել եւ գանոնք դրբելորել պարզ փափաքի տարագին տակ եւ կամ խօսքերու եւ ճառերու սահմաններուն մէջ: Խօսքերը պէտք է թարգմանուին գործով: Դրական եւ մնայուն արժէք ներկայացնողը գործն է, անդուլ եւ յարատեւ ճիգն է ի խընդիր այն խոչալին, որուն կը ձգտինք բոլորս:

Պէտք է ըլլալ իրատես ու հարցերը քննել գիտական մօտեցումով: Չտարուիլ ամբոխավարութենէ: Առարկայականութիւնը սկզբունք դարձնել եւ դասել ճշմարտութիւնը իր անձէն վեր: Այն ատեն միայն մեր ազգային յաջողութիւնները կրնան ուրուագծուիլ մեր խղճի հորիզոններուն վրայ: Յանձնառու ըլլալով ձեր անձին եւ ազգին հանդէպ, յանձնառու կ'ըլլաք պատմութեան մէջ:

Արդարեւ, պատմութիւնը կը կերտուի յանձնառու անհատներու եւ հաւաքականութիւններու անտեղիտալի կամքով:

Կամ այն է, որ հայ երիտասրաղը պիտի ըլլայ յանձնառու եւ հաւաքական ճիգերով ուղղութիւն տայ իր ազգային ճակատագրին եւ կամ պիտի նմանի դեկը կորսնցուցած նաւակին, որ յանձնուած կոհակներու քմահաճոյքին, օր մը, պիտի նետուի պատահական որեւէ ծովափ:

Եթէ ամրակուռ կամքով, մտածուած աշխատանքով եւ յարատեւ ճիգերով չփորձենք պատմութեան ընթացքը նպաստաւոր հունի մէջ դնել, ան մեզ կը դասաւորէ ազգովին՝ համաձայն իր ընդհանրական հոլովոյթին:

Պիտի վերջացնեմ գրագէտ եւ մտաւորական Պուրսուա - Մասէի խօսքով. «Կեանքը խոստում մըն է, գոր պէտք է յարգել, պտուղ մըն է՝ գոր պէտք է հասունցնել, գործ մըն է մեզի յանձնուած՝ գոր պէտք է աւարտել»:

ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ,  
ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ԵՒ ԱՌՀԱՍԱՐԱԿ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ԱՐԺԷՔՆԵՐՈՒ  
ՏԱՐԱԾՄԱՆ ԵՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑ

Առաջին աշխարհամարտին ետք, երբ արեւմտահայ տարագիր ազգաբնակչութիւնը կայք հաստատեց ասպնջական զանազան օտար երկիրներու մէջ, իր Փիզիքական գոյութեան առնթեր մտածեց նաեւ, ի պատիւ իրեն, ազգային դիմագիծի անխաթար պահպանման նախանձախնդրութեամբ, եկեղեցիներ կառուցանել եւ դպրոցներ կանգնել, ուր մայրենի լեզուն, հայոց պատմութիւնը, կրօնական եւ եկեղեցական դաստիարակութիւնը եւ ազգային մշակոյթը առանցքը կազմեցին կիրարկուող ուսումնական ծրագիրներուն:

Մեծատաղանդ գրագէտներու եւ կրթական մշակներու դասազրքերը երկար ատեն ծառայեցին հայերէնագէտ եւ հայագէտ ուսուցիչներուն՝ աճող նոր սերունդներուն հարազատօրէն ջամբելու համար հայերէն լեզուն, ազգային դաստիարակութիւն, փոխանցելով անոնց ազգային եւ եկեղեցական մշակութային դարաւոր ժառանգը:

Երկրորդ աշխարհամարտին, յատկապէս 1950-էն ետք, գաղթական հայութիւնը հետզհետէ տեղաւորուելով իր բնակած երկիրներուն մէջ, դուրս կու գար սահմաններէն իր թաղին, զոր կը նկատէր իր ընկերային կեանքին հարազատ միջավայրը եւ ուր կ'ապրէր ինքն իրմով եւ ինքն իր մէջ ամփոփուած եւ կապեր կը հաստատէր իր նոր շրջապատին հետ: Վաղուան նիւթական մտահոգութիւնները եւ աւելի բարւոք վիճակի մը հեռանկարները զինք կը մղէին օգտապաշտ քաղաքականութիւն որդեգրելու եւ առ այդ յաւելեալ կարեւորութիւն ընծայելու տեղական եւ օտար լեզուներու ուսուցումին:

Նիւթապէս աւելի ամրապնդուած, գաղթական հայր իր զաւակ-



ներուն ուզեց տալ երկրորդական եւ համայնարանական ուսում եւ այդ իսկ պատճառով պետական վկայական ապահովելը նկատեց առաջնահերթ մտահոգութիւն:

Ստեղծուած նոր հոգեվիճակը եւ կեանքի նոր դասաւորումը ազգային իշխանութիւնները եւ առհասարակ կրթական կեանքի պատասխանատուները դրին նոր հրամայականի մը առջեւ: Եթէ մեր դպրոցները անտեսէին նոր գոյավիճակը եւ պահէին կրթական նախկին դրութիւնը, կրնային կորսնցնել զգալի տոկոս մը իրենց աշակերտութենէն, որ այս պարագային օտար վարժարան յաճախելով պիտի կորսնցնէր հայ վարժարանի շունչը եւ պիտի գրկուէր ազգային դաստիարակութենէն:

Քոյր համայնքներուն վարժարանները վաղուց որդեգրած էին տիրող պայմաններուն համապատասխանող կրթական յատուկ քաղաքականութիւն: Կար նաեւ այն իրողութիւնը, որ կարգ մը հիւրընկալ երկիրներու մէջ հայերէն լեզուի դասաւանդութիւնը կ'ենթարկուէր սեղմումի եւ հայերէն լեզուին յատկացուած դասապահերուն թիւը խստօրէն կը սահմանափակուէր:

Կրթական մարմինները հարկադրաբար աւելի լայն տեղ տուին տեղական անմիջական պահանջներուն համապատասխանող առարկաներու ուսուցման, ինչ որ յառաջ բերաւ կրթական ծրագիրներու խզում, զոր կարելի եղաւ ապագային մասամբ թեթեւցնել ի վնաս դժբախտաբար հայերէն լեզուին եւ հայերէնով դասաւանդուող առարկաներուն:

Այսօր աւելի քան քսան տարուան փորձառութենէ ետք կը նկատենք որ մեր վարժարանները թէպէտեւ յուսախաբ չեն ըներ հայ ծնողները պետական վկայականներու առնչութեամբ, ուր յաճախ փայլուն արդիւնքներ ձեռք կը ձգեն հայ ուսանողները, սակայն անբաւարար արդիւք կու տան ազգային կրթական ծրագրին իւրացման տեսակէտէն եւ հայերէն լեզուն տակաւ կը տժգունի մեր մատղաշ սերունդներուն շրթունքներուն վրայ:

Եթէ կացութիւնը այս է հայ վարժարան յաճախող աշակերտութեան համար, հապա այդ որքան մտահոգիչ է անոնց համար, որոնք օտար վարժարան կը յաճախեն, որուն օտարադրոշմ միջավայրը եւ անկէ բխող հոգեբանական ազդակները բնականօրէն կ'ազդեն անոնց ազգային գիտակցութեան եւ ազգային կեանքի մէջ մասնակից

դառնալու պատրաստակամութեան վրայ: Ամէն պարագայի տակ անոնք գրկուած կը մնան, յաճախ ցաւ ի սիրտ, հայ դարաւոր մշակոյթի գանձերուն վայելքէն:

Այս նահանջը համասփիւռքեան բնոյթ կրած ըլլալով, անհրաժեշտ է որ Ազգային Գերագոյն ժողովը զբաղի անով, երբ տակաւին ուշ չէ, այլապէս տասնամեակ մը տարիներ յետոյ մեզի համար շատ դժուար պիտի ըլլայ, չսելու համար անհնարին, հայերէն լեզուին ատակ ուսուցիչներ գտնելն անգամ:

Տիրող այս կացութենէն երեւան կու գայ որ հետեւողական եւ լուրջ աշխատանքներ կան կատարելիք այս ուղղութեամբ:

Մեր ուսուցչական կազմերը առհասարակ պահանջուած մանկավարժական պատրաստութիւնը չունին:

Մեր դասագրքերը, որոնք ժամանակին լաւագոյններն էին, այսօր սակայն ժամանակավրէպ են: Անոնք չեն համապատասխաներ օրուան պահանջին, թէ իբրեւ խորք եւ թէ իբրեւ ձեւ: Ուսուցիչը առանց լաւապէս սերտուած դասագրքի չի կրնար անհարաժեշտ արդիւնքը տալ:

Մեր կրթական ծրագիրները պէտք ունին հիմնական բարեփոխութեան:

Անհրաժեշտ է որ համասփիւռքեան տարողութեամբ մեր կրթական հարցերու մասնագէտները, հայերէնագէտները ճշդ են ազգային կրթական ծրագրի տեղը հայ աշակերտի ընդհանուր կազմաւորման մէջ եւ առ այդ որոնեն հայերէն մանկավարժական եւ հոգեբանական արդի ճշմարտութիւններուն վրայ հիմնուելով պատրաստեն համապատասխան դասագրքեր:

Մեր ուսուցիչները, մեր կրթական հաստատութիւններու մարդկային դրամագլուխները, պէտք ունին մեր հոգածութեան: Անհրաժեշտ է որ մեր միջոցներով անոնց ապահովենք մանկավարժական եւ հոգեբանական անհրաժեշտ սարքաւորումը, որպէսզի արդի մեթոտաբանութեամբ անոնք ի վիճակի ըլլան սահմանափակ դասապահերու ընձեռած միջոցներով առաւելագոյն արդիւնք տալ աշակերտութեան:

Ընդհանուր նահանջ կայ նաեւ ազգային մշակոյթի այլ մարգերուն մէջ, հակառակ «Համագային»-ի եւ մշակութային այլ միութիւններու եւ հաստատաութիւններու տարած գնահատելի ճիգերուն:

Նորարոժիչները, քաղաքները, օտար մշակույթները հետ հայուն ունեցած սերտ հաղորդակցութիւնը, կեանքի նոր պայմանները, առօրեայի հեւհեւ վազը անտարակոյս մեծ դեր կը խաղան յատկապէս այն պարագային, երբ հայը ազգային առողջ դաստիարակութեամբ չէ խարսխած իր ինքնութիւնը եւ պատկանելիութիւնը:

Երգը, պարը, թատրոնը տակաւին ժողովրդականութիւն կը վայելեն եւ կենսունակ գործօններ կը մնան: Հայ մտաւորականը քաջալերութիւն չգտնելով, նուազ կը գրադի գրական, ազգագրական, բանասիրական, պատմական եւ առհասարակ մշակութային թեմաներով: Անհետացող հայագէտներուն եւ գրագէտներուն տեղը գրաւողները հագուագիւտ են:

Մեծ յոյս ունինք որ Անթիլիասի Կաթողիկոսարանը, իր Դպրեվանքով, գրադարնով, մանաւանդ մարդկային դրամագլուխով պիտի կարենայ շօշափելի ծառայութիւն մատուցանել մշակութի վերոյիշեալ բնագաւառներուն մէջ, եթէ անշուշտ յաւելեալ կենդանութիւն եւ մթնոլորտ ստեղծուի այս ուղղութեամբ վանքէն ներս: Վարչական կառույցներ պատրաստելու մտահոգութիւնները եթէ հրամայական պահանջքի կը համապատասխանէին երէկ, այսօր սակայն անոնք նուազ շեշտուած կը թուին ըլլալ համեմատաբար հետզհետէ լայնցող եւ հրատապ բնոյթ ստացող հիմնական կարիքին:

Ահա կարգ մը նկատողութիւններ, զորս ուզեցի ամփոփ կերպով յարգելի ժողովականներուն ուշադրութեան յանձնել:

Թող ներուի ինծի եթէ երկարեցի հարցադրումը եւ անոր կապուած պատճառաբանութիւնները: Բայց վստահ եմ, որ այս արագ ակնարկիս մէջ մատնանշումներս պիտի լրացուին ձեր բոլորի ընդհանրական մտահոգութիւններէն բխող տեսակէտներու արտայայտութեամբ եւ գործնական ցուցմունքներով:

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԸ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍՄԱՆ ՍԵՄԻՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍՄԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՃԻՒՂԻՆ ՃԻՇԴ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Աշխարհի բոլոր համալսարանները ունին երկու հիմնական առաքելութիւն:

Ա.- Կը ձգտին ուսանողին ջամբել մասնագիտական ուսում, որպէսզի ան կարենայ իր ընտրած կալուածէն ներս գործ գտնել, աշխատիլ եւ ապահովել իր ապրուստը:

Բ.- Խորացած եւ մասնագիտացած ուսումով կը ջանան ուսանողին տալ համապատասխան կազմաւորում եւ գիտական մտքի անհրաժեշտ կառոյց, որպէսզի ան կարենայ լծուիլ հետազոտութիւններու, պրպտումներու եւ գիտական լուրջ աշխատանքներու՝ ի շահ մշակոյթի զարգացման եւ գիտութեան ու մարդկութեան յառաջդիմութեան:

Մարդկային հաւաքականութիւններու, ինչպէս նաեւ միջազգային կազմակերպութիւններու, առեւտրական թէ արդիւնաբերական մեծ հաստատութիւններու մէջ դեկավար դեր ստացողները առհասարակ համալսարանական մասնագէտներն են, որովհետեւ իրենց ստացած բարձրագոյն ուսումը եւ մշակոյթը թոյլ կու տայ իրենց, որ կարողանան ներկայացուած հարցերը վերլուծել, համադրել եւ բաղդատել, որոնցմէ ետք աւելի դիւրին կը դառնայ ճիշդ եւ համապատասխան որոշումներ կայացնելը:

Անհրաժեշտ է սակայն ընտրել գիտնալ պէտք եղած ճիւղը: Արդարեւ, պէտք է ընտրել ճիւղ մը, որ կը համապատասխանէ ենթակային մտային կարողութեան, անոր խառնուածքին եւ ձգտումներուն: Պէտք է նկատի ունենալ նաեւ կրթաթոշակը եւ նիւթական կարելիութիւնները: Պէտք չէ խաբուիլ ճիւղի մը գրաւչութենէն, եթէ ենթական պահանջուած ատաղձը չունի: Պէտք չէ նոյնպէս ընտ-

րել ճիւղ մը միայն անոր համար, որ անոր պատրաստութիւնը համեմատաբար ակելի դիւրին կ'երեւայ, մանաւանդ երբ ի յառաջագունէ ծանօթ է, որ ան աշխատանքի գոհացուցիչ ասպարէզ չ'ապահովեր, այլ խօսքով՝ աշխատանքի շուկային մէջ փնտռուած ճիւղ մը չէ:

Ի՞նչի կը ծառայէ ընտրել ճիւղ մը, ուսանիլ տարիներ, ապա դատապարտուիլ անգործ մնալու: Այս պարագային ենթական կը ստիպուի կա'մ լքելու երկիրը ու գաղթել եւ կամ այլ ասպարէզ ընդգրկել, երբ այդ ուղղութեամբ չունի պահանջուած պատրաստութիւնը եւ կազմաւորումը: Ան պարզեպէս անգործներու եւ վրիպած մարդոց փաղանգը պիտի բազմացնէ:

#### ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹԵԱՆՑ ԿԱՐԵԼԻՈՒԹԻԻՆԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ

Լիբանանի մէջ շուրջ 22 բարձրագոյն ուսմանց հաստատութիւններ կան, որոնց մէկ մասը համալսարաններ են, տրուած ըլլալով, որ մէկէ ակելի ամբողջական կարգերով ճիւղեր ունին եւ կուտան համալսարանական վկայական, իսկ ուրիշներ բարձրագոյն ուսմանց հիմնարկներ են:

Լիբանանի մէջ բազմազան են ճիւղերն ու մասնագիտութիւնները: Կան համալսարաններ, որոնք 40է ակելի վկայականներ կուտան, ինչ որ կը նշանակէ, թէ նոյնքան մասնագիտութիւններ ունին: Անշուշտ Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ ալ ակելի թիւով մասնագիտութիւններ կան, որոնց մէկ մասը սակայն ասպարէզ չունի Լիբանանի մէջ:

Ճիւղերու բազմազանութիւնը կ'ենթադրէ, որ տուեալ երկրին մէջ աշխատանքի համապատասխան շուկայ գոյութիւն ունենայ, եւ համալսարաններն ալ անհրաժեշտ գիտական սարքաւորումներով, մարդուժով եւ նիւթական կարելիութիւններով ապահովուած ըլլան: Ճիւղերը կը բացուին ընդառաջելով երկրին պահանջին: Համալսարանի մը մէջ ճիւղ մը բանալը ինքնանպատակ չէ: Ան պէտք է շրջանաւարտին կարելիութիւն ընծայէ գործ գտնելու եւ աշխատելու եւ կամ համապատասխան մշակոյթը զարգացնելով՝ սատարելու երկրին ծաղկումին եւ յառաջդիմութեան:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾԱԴԱՇՏԸ ԼԻՔԱՆԱՆԻ ՄԷՋ

Դժբախտաբար Լիբանանի գործադաշտը սահմանափակ է եւ համալսարաններու թիւը բարձր: Յաճախ կը նշմարենք, որ կարգ մը ճիւղերէ շրջանաւարտ ուսանողներուն թիւը պահանջուածէն աւելի ըլլալով՝ անգործութիւն յառաջ կը բերէ եւ պատճառ կը դառնայ, որ նոյն ճիւղի վկայականները համեմատաբար թերազնահատուին:

Կազմակերպուած եւ յառաջացած երկիրներու մէջ ծրագրումի նախարարութիւնը կամ հանրային ծառայութեան լծուած վիճակագրութեանց գրասենակը յստակ կերպով ցոյց կու տայ, թէ ի՞նչ է երկրին պահանջը յաջորդ հինգ տարիներու համար եւ համալսարանները ըստ այնմ կը ճշդեն իրենց կրթական քաղաքականութիւնը:

Համալսարաններու կողքին կան նաեւ արհեստից բարձրագոյն հիմնարկներ: Եւրոպայի կարգ մը երկիրներու մէջ, արհեստագիտական ճիւղերուն հետեւող ուսանողութեան թիւը համալսարաններու ուսանողութեան թիւէն երբեմն աւելի բարձր է:

Լիբանանի մէջ համալսարան արձանագրուած ուսանողներու թիւը շուրջ 80 հազար է, որուն մէկ մասը լիբանանցի չէ: Անիկա 60 հազար էր պատերազմէն առաջ համալսարանական ուսանողութեան այս բարձր թիւը յառաջ կու գայ անկէ, որ թէ Արաբական Համալսարանը, որ կապուած է Աղեքսանդրիոյ Համալսարանին (Եգիպտոս) եւ թէ Ամերիկեան Համալսարանը շրջանային կոչում ունին: Անոնք, ուսանող կ'ընդունին Լիբանանէն, ինչպէս նաեւ՝ Միջին Արեւելքի այլ երկիրներէն: Մինչդեռ լիբանանեան համալսարաններու ուսանողութեան ջախջախիչ մեծամասնութիւնը լիբանանցի է: Լիբանանի մէջ աշակերտութեան եւ ուսանողութեան թիւը շուրջ 800.000 է, որուն 16,62 առ հարիւրը համալսարան կը յաճախէ եւ 2,5 առ հարիւրը միայն արհեստագիտական ճիւղեր: Լիբանանի աշխատանքի շուկան զգալի պահանջ ունի ներկայիս արհեստագիտական ճիւղերէ վկայեալներու, որովհետեւ անոնք թէ գործնական ծանօթութիւններ ունին իրենց ընտրած ապրուստին կամ արհեստ մասին եւ թէ տեսական կազմաւորում: Պետութիւնը մեծ շահագրգռուածութիւն ցոյց կու տայ այդ ուղղութեամբ եւ յատուկ ծրագիրներ կը մշակէ:

Ինչպէս ծանօթ է բոլորիս, ներկայիս Լիբանանը իր խաղաղ օրերու խրախուսիչ պայմանները չէ գտած տակաւին: Տնտեսական տագնապ կայ, որ յատուկ չէ միայն իրեն: Առեւտրական ընկերութիւնները եւ առ հասարակ գործերը ակնկալուած ծաւալով չեն զարգանար: Այս պայմաններուն մէջ համալսարանական ուսումը աւարտած ուսանողութեան համար դժուար պիտի ըլլայ դիւրութեամբ գործ ճարել: Այսուհանդերձ երբ սկսելու համար ենթակայները համեստ պայմաններով գոհանան, անպատճառ գործ կը գտնեն: Նկատելի է, որ կարգ մը ճիւղեր շրջանաւարտները կը փնտռուին եւ բարձրօրէն կը վարձատրուին, մանաւանդ երբ անոնք արտասահմանի մէջ կատարելագործած են իրենց մասնագիտութիւնը:

ԿՐԹԱԹՈՇԱԿ ՈՒ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուսանողին միակ հարցը պաքալօրէայի եւ մուտքի քննութեան յաջողիլը չէ: Կան նաեւ այլ դժուարութիւններ, ի մասնաւորի՝ կրթութիւնի յազանդումները մտահոգութիւնը:

Արդարեւ, տասնեակ մը տարիներէ ի վեր, սղաճի հետեւանքով, գրեթէ բոլոր համալսարանները, բացի Պետական Համալսարանէն, տարուէ տարի բարձրացուցած են կրթութիւնի սակերը եւ կը պահանջեն, որ անոնց մէկ մասը վճարուի իբրանանեան թղթակիով, իսկ միւս մասը տոլարով: Անշուշտ այս դրութիւնը նեղ կացութեան կը մատնէ տնտեսական համեստ պայմաններու մէջ գտնուող ուսանողները, ի մասնաւորի անոնք, որոնք ծնողքին եկամուտները սահմանափակ եւ իբրանանեան դրամանիշով են:

Կրթասիրական եւ բարեսիրական հաստատութիւններ կը ջանան օգնել ուսանողներուն՝ կրթանպաստ յատկացնելով արժանաւորին: Սակայն անոնք ալ վերջին տարիներուն, պիւտճէական նկատումներով նուազեցուցին իրենց օժանդակութիւնը: Ոմանք նոյնիսկ մերժեցին առաջին տարուան ուսանողութեան օգնել՝ զանազան բացատրութիւններով: Հետեւանքը այն եղաւ, որ բազմաթիւ ուսանողներ ճարահատ լքեցին ուսումը:

Ասոր անդրադարձը երեւան կու գայ համալսարաններու մէջ, ուր հայ ուսանողութեան թիւը զգալապէս նուազած է բաղդատմամբ նախորդ տարիներուն: Կը կարծենք, որ պատճառներէն մէկը,

եթէ ոչ գլխաւորը, անտարակոյս, նիւթական միջոցներու անբաւարարութիւնն է:

Այս հարցը պէտք է լրջօրէն քննուի պատասխանատու անձնաւորութիւններու կամ մարմիններու կողմէ, եւ համագործակցութեամբ ու թելադրուած ազգային գերագոյն շահերու ըմբռնումէն՝ անհրաժեշտ է յարմարագոյն լուծումը գտնել, որ թէեւ դիւրին չէ, բայց անկարելի ալ չէ: Չմոռնանք, որ ազգի մը ղեկավար տարրը իր մշակուած եւ յանձնառու երիտասարդութեան մէջ պէտք է փնտռել: Արդարեւ, այսօրուան երիտասարդութիւնն է, որ կոչուած է վաղուան առաջնորդը դառնալու:

Կրթաթոշակի մտահոգութենէն զատ, կայ նաեւ համայնարանական նոր միջավայրի մէջ շաղուելու դժուարութիւնը: Առհասարակ հայ ուսանողները, բացի անոնցմէ, որոնք օտար լեզուներ գործածելու յաւելեալ դիւրութիւն ունին, չրսենք՝ այլամերժ են, բայց դիւրաւ շաղուող չեն նոր միջավայրին մէջ:

Առ այդ, մեր երկրորդական վարժարանները պարտին ջանք չինայել կարելի բոլոր միջոցներով, օտար լեզուներով աշակերտներու խօսակցական կարողութիւնը զարգացնել, ի հարկին՝ վերջին երկու տարիներուն, տարեփակէն ետք, Յ-Ա շաբաթ խօսակցական լեզուի դասեր կազմակերպելով, բնականաբար յատուկ ծրագիրով եւ մեթոտով: Այս կարգադրութիւնը որեւէ ձեւով չի վնասեր հայերէն լեզուի ուսուցման եւ հայեցի դաստիարակութեան, որոնք հայ վարժարաններուն կրթական քաղաքականութեան հիմնաքարը կը կազմեն:

Վերոյիշեալ բոլոր կէտերը ցոյց կու տան, որ հայ ուսանողին առողջ եւ գործնական կազմաւորումը մէկէ աւելի հարցեր կը շօշափէ, որոնց լուծումը կը կարօտի ծնողներու, երկրորդական վարժարաններու պատասխանատուներուն, ուսանողներու եւ մեր ժողովուրդին հաւաքական գիտակցութեան ու գործակցութեան:



## ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ

Ատենէ մը ի վեր, Լիբանանեան Համալսարանի ուսանողութիւնը յաճախ դասադուլի կը դիմէ եւ կը մերժէ վերադառնալ դասերուն, մինչեւ որ կրթական նախարարութիւնը կամ իշխանութիւնները գոհացում տան իրենց բոլոր պահանջներուն:

Շարժումը ծայր տուաւ համալսարանի իրաւարանական ճիւղէն, ապա անցաւ մանկավարժութեան ճիւղը եւ, վերջապէս, ընդգրկեց Լիբանանեան Համալսարանի միւս բոլոր ճիւղերը:

Նախորդ տարիներէն աւելի լաւ կազմակերպուած՝ ուսանողները առաջացուցին ուսանողական կեդրոնական մարմին մը՝ Ուսանողական Միութեան Գործադիր Իշխանութիւնը, որուն շուրջ համախմբուեցան բոլորը անխտիր: Իւրաքանչիւր ճիւղ այս մարմնին ներկայացուց իր հարցերը: Ուսանողութիւնը, ամրապնդուած այս մարմինով, սկսաւ իր բողոքը յայտնել զանազան միջոցներով:

Ուսանողները առանձին չմնացին սակայն: Հարցը փոխադրելով ազգային ընդհանուր շահերու ծիրէն ներս, անոնք, քանի մը օրէն, կրցան իրենց կողքին ունենալ բոլոր համալսարաններուն ուսանողութիւնը, որոնց մէկ մասը մասնակցեցաւ շարժումին, իսկ ուրիշներ ներկայացուցին իրենց հարցերը, պահանջելով համապատասխան լուծում:

Որպէսզի ընդհանրացած դասադուլը աւելի լաւ կազմակերպուի եւ չվրիպի իր հիմնական նպատակէն, ուսանողները կազմեցին Կեդրոնական Մնայուն Մարմին մը, որուն պարտականութիւն տրուեցաւ համակարգել բոլոր համալսարաններու դասադուլի աշխատանքները, ծայր տուած շարժումը հասցնելու համար իր նպատակին:

Վերոյիշեալ Կեդրոնական Մարմինը, պատշաճ եղանակով, ներկայացուց ուսանողներուն պահանջները, կրթական նախարարութեան:

Բարեկարգութեան գլխաւոր պահանջները կը խտանային հետեւեալ կէտերուն մէջ.

1.- Անյապաղ ժողովի հրաւիրել Բարձրագոյն Ուսմանց Համալսարանական Խորհուրդը: 1967ին ստեղծուած այս մարմինը, ցարդ որեւէ նիստ չէր գումարած:

2.- Ձնջել 1970 Մարտի կիսուն լոյս տեսած իրաւաբանական արուեստը բարեկարգող օրէնքին ա'յն տրամադրութիւնները, որոնք երկու տարուան մասնագիտական յաւելեալ ուսում կը պարտադրեն, արդէն իսկ վկայուած ուսանողներուն:

3.- Պործ ապահովել համալսարանաւարտ ուսանողներուն:

4.- Տնօրէններ նշանակել Լիբանանեան Համալսարանի ա'յն ճիւղերուն համար, ուր այդ պաշտօնները ներքին զանազան հաշիւներով թափուր կը մնան ցարդ:

Վերոյիշեալ հարցերուն նկատմամբ, Ն.Վ. Հանրապետութեան նախագահը մասնաւոր հետաքրքրութիւն մը ցոյց տուաւ: Նախագահը առանձին տեսակցութիւններ ունենալէ ետք կարգ մը համալսարաններու պատասխանատուներուն հետ, անմիջապէս ժողովի հրաւիրեց 1967ին կազմուած Բարձրագոյն Ուսմանց Համալսարանական Խորհուրդը, որ կը բաղկանայ կրթական նախարարէն եւ բոլոր համալսարաններու նախագահներէն:

Ուսանողներու բացակայութեան, այդ ժողովին մէջ խօսուեցաւ այն բոլոր պատճառներուն մասին, որոնք տուն տուին համատարած այս շարժումին: Նախագահը գտաւ, որ բազմաթիւ հարցեր կան, որոնց լուծումը ո'չ միայն օգտակար է, այլեւ՝ անհրաժեշտ: Խոստացաւ անձամբ ուսումնասիրել զանոնք, հարցերուն ներկայացուցած կարեւորութեան կարգով: Նոյն ատեն, որոշեց յաջորդ նիստին թուականը:

Ուսանողները դժգոհ մնացին այս կարգադրութենէն:

Անոնք կը խորհէին, թէ այդ խոստումները տազնապը սառեցնելու փորձեր էին: Հետեւաբար, կարծրացնելով իրենց դիրքը, անոնք որոշեցին շարունակել պայքարը: Տասը հազար հոգիի հասնող բազմութեամբ, համախմբուեցան Լիբանանեան Համալսարանի իրաւաբանութեան բաժանմունքի բակին մէջ, եւ յետոյ, ցոյց կատարեցին քաղաքի փողոցներուն մէջ:

Քանի մը օր ետք, իրաւաբանական բաժանմունքը բողոքեց ուսանողներուն երկու տարուան յաւելեալ ուսումը ջնջելու առաջարկին դէմ, յայտնելով, թէ մեծ թիւով փաստաբաններ որոշած էին

գործադրուլի դիմել, ջնջումի պարագային: Ըստ իրենց, հարցը կը վերաբերէր օրէնքի մը, որ անցեալ տարի լոյս տեսած էր եւ հետեւաբար, գայն փոխելու խնդիր չէր կրնար ծագիլ:

Ուսանողները, այս անգամ ջղագրգռուած՝ կոչ մը կ'ուղղեն երկրորդական վարժարաններու աշակերտութեան, գանոնք հրաւիրելով մեծ համախմբումի մը, Սէն Ժոզէֆ Համալսարանի իրաւաբանական ճիւղի բակին մէջ: Հաւաքուեցան 15 հազար հոգի (ուսանող թէ՛ աշակերտ) եւ իրարու յաջորդեցին ամբոխավար եւ բոցաշունչ ճառերը: Ապա՝ տողանցեցին, ուղղուելով դէպի Խորհրդարան, պատահեցան անախորժ դէպքեր, ծրագրուած՝ ծայրայեղական տարրերու կողմէ, պետական բարձրաստիճան անձնաւորութեանց դէմ: Դասադուլի Կեդրոնական Մարմինը առժամապէս վերջ դրաւ ցոյցերուն, մինչ Լիբանանեան Համալսարանի բոլոր ճիւղերուն շէնքերն ու գրասենեակները բռնագրաւուեցան ուսանողութեան կողմէ, որուն մարմինները, ուսանողներուն մէջէն, իւրաքանչիւր ճիւղին համար նշանակեցին տնօրէն, վարչական գործադիր քարտուղար, եւ այլն: Համալսարանի տնօրէնութիւնը, այս պայմաններուն մէջ, ուսանողութեան յանձնեց համալսարանին բոլոր բանալիները, որով՝ ուսանողութիւնը ինքզինք հռչակեց համալսարանին տէրն ու տիրականը:

Ուսանողները կրթական նախարարէն կը պահանջէին իրենց մասնակցութիւնը եւս ապահովել՝ համալսարաններու նախագահներու ժողովին, որ կը գումարուէր Հանրապետութեան նախագահին նախագահութեամբ: Կը պահանջէին ներկայ գտնուիլ անպայման, կարենալ պաշտպանելու համար իրենց տեսակէտները:

Հանրապետութեան նախագահը սիրով ընդառաջեց ուսանողներու փափաքին, անոնցմէ երկու ներկայացուցիչ հրաւիրելով յաջորդ նիստին, ապա՝ ճաշի համար վար դրաւ գանոնք:

Այդ նիստին, նախագահը ուսանողութեան յայտնեց, թէ կառավարութիւնը տրամադիր է ջնջելու որոշուած յաւելեալ երկու տարիները եւ այդ իմաստով օրինագիծ մը գրկուած է արդէն երեսփոխանական ժողովին, առ ի քննութիւն եւ պատշաճ տնօրինում: Նոյն ատեն, խնդրեց ուսանողներէն, որ իրենց պահանջները ուսումնասիրուած եւ յստակ կերպով ներկայացնեն իրեն, նկատի ունենալով գանոնք իրագործելու հնարաւորութիւնները:

Տրուած խոստումները գոհացուցիչ նկատելով, Արաբական Հա-

մալսարանի ուսանողութիւնը վերջ դրաւ դասադուլին: Ամերիկեան Համալսարանի ուսանողութիւնը, տեսնելով՝ որ այդ շարժումը պիտի չկարենայ օգտագործել քաղաքական այլ նպատակներու, ինքն ալ վերադարձաւ դասերուն: Իսկ Սէն ժոզէֆ Համալսարանի ուսանողութիւնը, որուն բժշկական ճիւղը բնաւ չէր մասնակցած դասադուլին, տնօրէն խորհուրդին առաջարկով բազմաթիւ ժողովներ գումարեց պատասխանատու ուսուցիչներուն հետ, լրջօրէն ուսումնասիրելու ուսանողութեան պահանջները եւ գանոնք ներկայացնելու համար բարձրագոյն իշխանութեանց:

Արդարեւ, մէկ շաբթուան աշխատանքէն ետք, պատրաստուեցաւ լուրջ տեղեկագիր մը, շուրջ երեսուն էջ, որուն մէջ հարցերը դրուեցան իրենց բնական հունին մէջ: Իբրեւ եզրակացութիւն, առաջարկուեցաւ անոնց լուծման նպաստող զանազան եղանակներ եւ միջոցառումներ, որոնց մէկ մասը անմիջապէս իրագործելու, եւ միւս մասը՝ ժամանակի ընթացքին:

Վսեմաշուք Հանրապետութեան նախագահը, որուն ներկայացուեցաւ պատրաստուած տեղեկագիրը, հաղորդեց պատասխանատուներուն, թէ համաձայն է անոր պարունակութեան եւ որոշած է արդէն գործնական քայլեր առնել այդ ուղղութեամբ: Կրթական նախարարին տրամադրութիւնները նոյն եղած են այդ մասին:

Պարզուած նոր երեւոյթը դրական գտնելով, Սէն ժոզէֆ Համալսարանի ուսանողութիւնը վերջ դրաւ դասադուլին, վստահելով պետութեան խոստումներուն, որոնց մէկ մասը սկսած էր գործնական կերպարանք ստանալ արդէն:

Լիբանանեան Համալսարանի ուսանողութիւնը մնաց առանձին եւ շարունակեց պայքարը:

Ան կը ներկայացնէր աւելի քան 18 կէտերէ բաղկացած պահանջներու ցանկ մը, որուն մէջ կարելի չէր գտնել ուսումնասիրուած որեւէ հարց, ոչ ալ լուծման տրամաբանական առաջարկ: Կրթական նախարարը ընդունեց առաջարկներուն կարեւոր նկատուած մէկ մասը, որոշ մեղմացումներով, ընդունելով նաեւ ուսանողներու մասնակցութիւնը համալսարանի վարչութեան մէջ: Սակայն, ուսանողները անդրդուելի մնացին ու շարունակեցին դասադուլը, պահանջելով, որ անմիջական եւ գործնական որոշումներ առնուին, խնդրոյ առարկայ բոլոր հարցերուն լուծում մը գտնելու համար:

Այդ պահանջները կարելի է ամփոփել հետևեալ կէտերու մէջ:

1.- Ուսումը ձրի դարձնել:

2.- Ձայն դնել ժողովրդավարական հիմերու վրայ (դպրոցներու եւ ուսուցիչներու թիւի յաւելում, դասագիրքերու գիներու նուազում, եւայլն):

3.- Կրթական ծրագրի արդիականցում (անոր պատշաճեցումը լիբանանեան արդի կեանքին):

4.- Գործի ապահովութիւն համալսարանաւարտներուն:

5.- Պայմանադրութեամբ այցելու ուսուցիչներ պաշտօնի կոչելու դրութեան վերացում:

6.- Իրենց ուսման ակարտին, պետական վարժարաններու մէջ, պաշտօնի կոչել մանկավարժութեան եւ գիտութեան ճիւղերու ուսանողները:

7.- Վկայականներու դասաւորում (պետական իւրաքանչիւր գործի համար ճշդել Լիբանանեան Համալսարանի ուսման համապատասխան ճիւղի մը վկայականը եւ գայն դարձնել պարտադիր):

8.- Պարտադիր դարձնել ընկերաբանութեան վկայականը բոլոր անոնց, որոնք պաշտօնի մը համար կը դիմեն Ընկերային Հարցերու նախարարութեան, Ծրագրի նախարարութեան եւ Ընկերային Ապահովագրութեան գրասենեակներուն:

9.- Դադրեցնել բոլոր անձնական դպրոցներուն նպաստները: Աւելցնել պետական վարժարաններուն թիւը, որպէսզի ուղղակի պաշտօնի կոչուին ուսուցչական վկայական ունեցող համալսարանաւարտները:

10.- Խիստ հակակշռի ենթարկել ազատ վարժարանները եւ պահանջել անոնցմէ, որ պաշտօնի կոչեն վկայեալ ուսուցիչներ:

11.- Իրաւաբանութեան ուսանողներուն համար՝ ջնջել որոշուած յաւելեալ 2 տարուան ուսումը:

12.- Ստեղծել գիտական հետազօտութեանց կեդրոններ, մասնագիտական աշխատանքներ տանելու համար:

13.- Ներդաշնակել կրթական ծրագիրը արուեստից վարժարաններու ծրագիրներուն հետ:

14.- Բանալ բժշկական, դեղագործական եւ երկրաչափական նոր համալսարաններ: Բարձրացնել արհեստից եւ արուեստից վարժարաններու մակարդակը համալսարանական մակարդակին:

15.- Բարեկարգել Լիբանանեան Համալսարանի վարչութիւնը:  
ա) Մնայուն դասախօսներու թիւի յաւելում:  
բ) Համալսարանի պիւտճէի անկախութիւն:  
գ) Ղեկավարութեան մէջ տեղ տալ ուսուցիչներու, վերջ դնելու համար մենատիրութեան:

16.- Նկատի ունենալ ուսանողութեան կարծիքը դասացուցակներու եւ քննութիւններու պատրաստութեան եւ արձակուրդի օրերու որոշման առեւն:

17.- Ունենալ ուսանողներու յատուկ շէնք մը՝

- Իր արդիական ճաշարանով,
- Խաղավայրով,
- Մարզական բաժինով եւ սարքաւորումով,
- Զբօսարաններով:

18.- Քատրերու դրութեամբ՝ տալ կարգ մը մենաշնորհներ ուսուցիչներու,

- Զրի երթեւեկ, պետական փոխադրական սպասարկութեանց մօտ,

- Զեղջուած գին՝ երկար ճամբորդութեանց,
- Զեղջուած գին՝ պանդոկներու,
- Զեղջուած գին՝ որոշ ճաշարաններու մէջ:

19.- Լիբանանեան Համալսարանի Ուսանողական Միութիւնը նկատելի ղեկավար կեդրոնը բոլոր ուսանողական եւ աշակերտական միութիւններուն:

Այս պահանջներուն մեծ մասը ընդունուեցաւ սկզբունքային գետնի վրայ եւ այդ ուղղութեամբ մշակուեցաւ նաեւ նախագիծ մը:

Կառավարութիւնը որոշեց, որ՝

1.- Ուսանողութիւնը, որոշ պայմաններով, մասնակցի համալսարանի ղեկավարութեան:

2.- Զնջուի որոշուած յաւելեալ 2 տարիներու ուսումը իրաւաբանութեան ուսանողներուն համար:

3.- Պետական վարժարաններէն ներս նախապատուութիւն տրուի համալսարաններու գիտութեան եւ մանկավարժութեան ճիւղերու շրջանաւարտներուն, պակսեցնելով թիւը այցելու ուսուցիչներուն:

4.- Հաստատուին ուսանողական ճաշարաններ:

5.- Բարեկարգութիւն մտցուի համալսարանի վարչութեան մէջ, նոր տնօրէններու նշանակումով:

6.- Արդիականացուի կրթական ծրագիրը:

7.- Կարգ մը նախարարութեանց մէջ պաշտօն ձեռք բերելու համար՝ նախապատուութիւն տրուի որոշ մասնագիտական վկայականներու:

8.- Ուսումնասիրուի ճրի ուսումի հարցը, գոնէ նախակրթարաններու համար:

Սեղմ գիծերու մէջ, ահաւասիկ ասոնք են Լիբանանեան Համալսարանի ուսանողութեան պահանջներն ու ձեռք բերած յաջողութիւնը:

Այժմ, կը ներկայացնենք Սէն ժոզէֆ Համալսարանի տեղեկագիրը:

Այս տեղեկագիրը հարցերը ամփոփած է գլխաւոր 4 կէտերու մէջ, մէկդի ձգելով ուսանողութեան կարգ մը երկրորդական պահանջները, որոնք ոչ մէկ լուրջ արժէք կը ներկայացնեն:

Այդ հարցերը հետեւեալներն են.

1.- Ճշդել Լիբանանի համալսարաններուն բնոյթը:

2.- Ձրի ուսում:

3.- Համալսարանաւարտներու գործ հայթայթելու պետական յատուկ ծրագիր:

4.- Իրաւաբանութեան ուսանողներուն պարտադրուած 2 տարուան յաւելեալ ուսումի ջնջում, ընթացիկ չորս տարուան ծրագրին մէջ:

Լիբանանի մէջ գոյութիւն ունին բազմաթիւ համալսարաններ, որոնք կը գործեն համաձայն Լիբանանի սահմանադրութեան 10րդ յօդուածին, որ կը հաստատէ ուսման ազատութիւնը:

Այս օրէնքը, բնականաբար, Լիբանանին յատուկ չէ միայն: Աշխարհի բազմաթիւ երկիրներուն մէջ գոյութիւն ունին պետական եւ ոչ-պետական համալսարաններ, որոնք կը ծառայեն ժողովուրդին յառաջդիմութեան, առանց որեւէ կաշկանդումի:

Եթէ Լիբանանի կառավարութիւնը նկատէ, թէ համալսարաններու բազմացումը այլեւս չի համապատասխաներ իր ազգային շահ-

հերոսն, ազատ է փոփոխութեան ենթարկելու սահմանադրութեան համապատասխան յօդուածը, եւ պահանջելու, որ բարձրագոյն ուսման գործը վերապահուի պետական համալսարանին:

Այդ պարագային, մնացեալ բոլոր համալսարանները պիտի փակեն իրենց դուռները:

Եթէ այս պիտի ըլլայ պետութեան դիրքը, շուտով պէտք է առնէ համապատասխան որոշում, որպէսզի 8էն 10 տարուան ընթացքին, կատարուի կեդրոնացման աշխատանքը: Այլապէս, պաշտօնապէս պէտք է յայտարարուի, թէ ներկայ գոյավիճակը յարմարագոյնն է Լիբանանի դարաւոր կոչումին եւ իւրապատուկ դիրքին:

Պետական միակ համալսարան մը ունենալը, ի հարկէ, բազմաթիւ ազատ համալսարաններ ունենալու դրութեան վրայ՝ ազգային իմաստով առաւելութիւն մը չ'ենթադրեր: Բոլոր համալսարանները, ինչ անուն ալ կրեն անոնք, ազգային են, երբ հարցը կը վերաբերի պետական վկայականներու պատրաստութեան, ըստ պետական կրթական ծրագրին: Քննութիւններն իսկ, այդ պարագային, տեղի կ'ունենան պետութեան հսկողութեան ներքեւ: Եթէ Լիբանանի մշակութային հարստութիւնը արժէք մըն է, որմէ կ'օգտուի ան եւ որ կը նպաստէ իր գիտական ու բարոյական ճառագայթումին, կ'արժէ ուրեմն, որ այդ մշակոյթը չգրկուի իր սնուցիչ տարրերէն եւ, հետեւաբար, պահուին անոր տուն տուող բոլոր հաստատութիւնները:

Այս պարագային, սակայն, ընդունելով հանդերձ անոնց անվիճելի օգուտը, եթէ որոշ պատշաճեցումներ եւ համակարգութիւններ չկատարուին կրթական ծրագիրներուն մէջ, համալսարաններու շատութիւնը կրնայ նաեւ վնասակար ըլլալ:

Ասիկա արդէն կ'ենթադրէ ստեղծումը համալսարաններու ընկերակցութեան մը, որուն մաս պէտք է կազմեն բոլոր համալսարանները իրենց ներկայացուցիչներով: Պետութիւնը, այդ պարագային, կը նշանակէ ընդհանուր տնօրէնի պատասխանատուութիւններով ընդհանուր քարտուղար մը, որ, վերոյիշեալ ընկերակցութեան մէջ, կը ներկայացնէ պետութեան յատուկ ուղղութիւնը:

Ուրեմն, այդ մարմինը կ'ունենայ մասնագէտներու մնայուն գրասենեակ մը, ուր, գիտականօրէն կ'ուսումնասիրուին ուսանողական բոլոր հարցերը: Ուսանողները, իբրեւ անդամ, ի պաշտօնէ



մաս կը կազմեն այդ ընկերակցութեան կողմէ ստեղծուած խորհուրդին:

Հանրապետութեան նախագահը եւ կրթական նախարարը համաձայն են վերոյիշեալ տեսակէտին: Կը պահեն համալսարաններու ներկայ թիւը, որ կը նկատուի բարիք մը երկրի համար: Առ այդ, տեղեկագիր մը յանձնուած է համալսարաններու տնօրէնութեանց, որպէսզի, անոնց համաձայնութեամբ, կեանքի կոչեն Համալսարաններու Ընկերակցութիւնը:

Համալսարաններէն առաջ, ցանկայի է, որ նախ երկրորդական վարժարաններն ու նախակրթարանները ճրի դառնան: Եթէ երկրին պիտոճէական դժուարութիւններուն պատճառով կարելի չէ երկուքը միաժամանակ իրագործել, անհրաժեշտ է ա՛ռնուազն նախակրթութիւնը ճրի դարձնել, անխտիր բոլորին համար: Միանգամընդմիջտ պէտք է վերջ դրուի ներկայ դրութեան, երբ համեստ նիւթական պայմաններու մէջ գտնուող ընտանիքներու զաւակները կը յաճախեն պետական վարժարաններ, իսկ բարեկեցիկ եւ հարուստ ընտանիքներու զաւակները անձնական վարժարաններուն մէջ կրթութիւն կը ստանան վճարովի: Ամէ՛ն ընտանիք պէտք է իր զաւակը կարենայ զրկել իր նախասիրած վարժարանը, ճրիաբար: Նիւթական կացութիւնը արգելք պէտք չէ հանդիսանայ: Պետութիւնը պէտք է նպաստներ բաշխէ անհատական կամ համայնքային բոլոր վարժարաններուն, իր անմիջական հակակշռին տակ առնելով անոնց պիտոճէները, ուսուցիչներու աշխատանքը եւ անոնցմէ պահանջուած որակը:

Գալով համալսարաններուն, հարցը պէտք է քննել թուական, ապա՝ որակական իմաստով: Թուական անկիւնէն դիտուած, լիբանանցի ուսանողներու թիւը աւելի չէ, իր ժողովուրդին թիւին հետ համեմատած: Արդարեւ, ըստ պաշտօնական վիճակագրութեանց, 1968-1969 դպրոցական տարեշրջանի ուսանողութեան ընդհանուր թիւը 32376 էր, որուն միայն 13637ը լիբանանցի:

Ուսանողներու այս ընդհանուր թիւը իրականութենէն շատ հեռու է: Բազմահազար օտարահպատակներ կու գան եւ՝ ճրիաբար կամ չնչին վճարումով, համալսարաններու մէջ կ'ուսանին եւ վկայագիր ստանալով կը վերադառնան իրենց երկիրը: Անոնց նպատակը ուսումը չէ անպայման: Անոնք կ'ուզեն օգտուիլ ուսանողի հան-

գամանքէն, ոմանք գինուորական ծառայութենէն գերծ մնալու նպատակով, ուրիշներ ա՛յն առաւելութիւններուն համար, որոնք կ'ընծայուին ուսանողներուն:

Այս պայմաններու տակ, բնական է, որ մէկ տարուան ընթացքին պիտի ունենանք 18.739 համալսարանական օտար ուսանողներ:

Լիբանանի մէջ, պաշտօնի կոչուած աշխատողներուն 25.000ը միայն համալսարանական վկայական ունին: Այս թիւը շատ չէ, բաղդատած բնակչութեան թիւին: Զարգացած այլ երկիրներու մէջ, համեմատութիւնը 2 կամ 3 անգամ աւելի է:

Որակական իմաստով, պիտի տեսնենք, որ համալսարաններու մէջ պաշտօնավարող դասախօսներուն թիւը շատ քիչ է, բաղդատած ուսանողութեան թիւին: Կան հազար դասախօսներ, որոնց մէկ տոկոսը կը զբաղի նաեւ այլ գործերով. մինչդեռ, պէտք էր ունենալ 3-4 հազար հոգի: Այս կը նշանակէ, թէ դասախօսները ի վիճակի չեն համալսարանական կրթութեան կարիքներուն լիովին բաւարարութիւն տալու: Քիչ են նաեւ հետազօտութեանց կեդրոնները:

Ներկայիս, Լիբանանի մէջ, քննութեան ներկայացող լիբանանցի աշակերտներու թիւը 11 հազար է, որուն վրայ աւելցնելով արտասահմանի մէջ ուսանող լիբանանցիներու թիւը (3500), կ'ունենանք տարեկան 14,000 լիբանանցի ուսանող, որոնք կը ներկայացնեն հետեւեալ պատկերը.-

- 4913 ուսանող 36% Գրականութիւն, փիլիսոփայութիւն, ընկերաբանութիւն եւ հասարակական գիտութիւններ:
- 2325 ուսանող 17% Իրաւաբանութիւն:
- 1034 ուսանող 7,5% Տնտեսագիտութիւն եւ վաճառականութիւն:
- 1007 ուսանող 7,3% Զարտարագիտութիւն:
- 772 ուսանող 5,7% Բժշկութիւն:
- 2266 ուսանող 16,6% Գիտութիւն:
- 1323 ուսանող 9,8% Զանազան ճիւղեր:

Կը պարզուի, որ երկրին պահանջներուն համապատասխան բաժանում չէ կատարուած ուսանողներուն մօտ: Այս ընթացքով, քանի մը տարի ետք, ուսանողներու բանակ մը պիտի ունենանք, որոնք պիտի ստիպուին լքել երկիրը ու հեռանալ:

1969 ԹՈՒԱԿԱՆԻՆ ՎԿԱՅԵԱԼՆԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻԻԸ 2556

Այսպէս, արուեստի ճիւղերէն վկայուած ուսանողներուն թիւը, երբ 424 վկայեալներով 1964ին կը ներկայացնէր մօտաւորապէս վկայեալ ընդհանուր ուսանողութեան թիւին 20 առ հարիւրը, 1969ին անիկա կը ներկայացնէր ընդհանուր թիւին 52 առ հարիւրը, 1329 վկայեալներով:

Իրաւաբանութեան ճիւղին մէջ, 1964ին տրուած էր 205 վկայական միայն, 1969ին՝ անիկա բարձրացած էր 417ի:

1969ԻՆ ՏՐՈՒԱԾ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

Երկրին ապագային համար՝ առողջութեան նշան չէ այս հոլովոյթը: Ո՛չ միայն հին համալսարանները ի վիճակի չեն եղած պէտք եղած ուղղութիւնը տալ ուսանողութեան ճիւղերու բաժանումին, այլեւ՝ Լիբանանեան Պետական Համալսարանը, որ բաղդատաբար նոր հաստատութիւն է, չէ կրցած, նոր ճիւղերով թեթեւցնել պարզուող անհաւասարակչուութիւնը: Ինքն ալ ինկած է նոյն սխալին մէջ:

Առ այդ, անհրաժեշտ է ընդհանուր քաղաքականութեան մը որդեգրումը, որուն արդիւնքը ժամանակի կը կարօտի բնականաբար: Սակայն, մինչ այդ, երկրին տնտեսութեան պահանջին համաձայն պէտք է բանալ նոր ճիւղեր, թեթեւցնելու համար ա՛յն ճիւղերը, որոնք շատ խճողուած են եւ անոնց ուսանողները պիտի ապրին անգործութեան տագնապը, իբրեւ հետեւեանք երկրին ներկայ կառոյցին:

Իրաւաբանութեան եւ գրականութեան ճիւղերուն մէջ պէտք չէ պարտադրել մուտքի քննութիւններ, ուսանողութեան թիւը պակսեցնելու դիտաւորութեամբ, ինչպէս կ'առաջարկեն ոմանք: Այդ պիտի ըլլար հակառակ ժողովրդավարական սկզբունքներուն: Որովհետեւ, լաւ պայմաններու մէջ պաքալորիան պատրաստած եւ յաջողած աշակերտը՝ աւելի դիւրութեամբ պիտի անցընէր այդ քննութիւնը, քան այն որ նիւթական միջոցներու անբաւարարութեամբ չէ կրցած բարձրորակ վարժարաններ յաճախել:

Նկատի ունենալով երկրորդական վարժարաններէն եկող ուսանողներուն յաճախ անբաւարար կրթական մակարդակը եւ համալսարանականներու մէջ անոնց ջախջախիչ մեծամասնութեան անըն-

դունակութիւնը, անհրաժեշտ է, որ, իրաւաբանական եւ գիտական ճիւղերուն համար, ինչպէս այդ կ'ըլլայ արդէն բժշկութեան եւ երկրաչափութեան պարագային, նախապատրաստական տարի մը հաստատուի, որուն ընթացքին ուսանողը ինքզինք ամբողջութեամբ կը յատկացնէ ուսման:

Որպէսզի աշխատելու հարկադրանքին տակ գտնուող ուսանողները չզրկուին համալսարանական ուսումէն, պէտք է, որ նախապատրաստական տարուան ուսանողները թոշակ ստանան պետութենէն, իրենց ապրուստին համար: Այդ տարուան ուսման ծրագիրը պիտի ըլլայ, գլխաւորաբար, համալսարանական մեթոտներու ուսուցում եւ ընդհանուր զարգացում: Եթէ ուսանողը յաջողի անցնիլ Բ. դասարան, այն ատեն կրնայ աշխատիլ՝ հոգալով իր ապրուստը եւ ուսանելով միեւնոյն ատեն:

Այն ուսանողները, որոնք Բ. տարիէն սկսեալ, աշխատելու պարտաւորութեան պատճառով, չկարենան լման օրը դասերուն հետեւիլ, պէտք է օգտուին ուսման երկարատեւ մէկ դրութենէն, որ կը նախատեսէ 5-6 տարի, փոխանակ օրինական չորս տարուան: Ամէն պարագայի, ուսման մակարդակը բան մը պէտք չէ կորսնցէ իր արժէքէն:

Այս բոլորը, բնականաբար, ծախսեր կ'ենթադրեն: Լիբանանի կրթական նախարարութեան պիւտճէն, որ 1964ին 54 միլիոն Լ. ոսկի էր, 1969ին՝ բարձրացած էր արդէն 111 միլիոն Լ. ոսկիի, ինչ որ կը ներկայացնէ իր ընդհանուր պիւտճէին 17,6%ը, 1969ին: Նոյն թուականին, այլ երկիրներու մէջ այդ համեմատութիւնը 19% էր, օրինակ՝ Եգիպտոսի մէջ: Լիբանան կրնայ պատիկ ճիգ մը եւս ընել, բարձրացնելու համար իր կրթական պիւտճէն: Սակայն, յաւելեալ եկամուտը պէտք չէ գոյանալ նոր տուրքերու գանձումով, այլ՝ տուրքերու արդար գանձումով: Այլապէս, ուսման ժողովրդավարութիւնը պիտի ըլլար ինքնախաբէութիւն մը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ԱՐՏԱԳԱՂԹԸ

Եթէ ծրագրի նախարարութեան տուած վիճակագրական տախտակները ճիշդ են, պէտք է հետեւցնել ուրեմն, թէ յաջորդ 10 տարիներու ընթացքին, որպէսզի Լիբանանի մէջ անգործութիւն չտիրէ, պէտք է, ամէն տարի, 18 հազար հոգի գաղթեն: Համալսարանա-

կաններն իրենք եւս, եւ անխուսափելիօրէն, պիտի ենթարկուին այս կացութեան:

Ֆրանսացի տնտեսագէտ Մասուրի կատարած ուսումնասիրութենէն երեւան կու գայ, որ Լիբանանի մէջ պաշտօնի կոչուած մարդոց թիւը չի համապատասխաներ կատարուած աշխատանքի արդիւնքին: Պաշտօնեաներ, պետական կամ ազատ ասպարէզներու մարդիկ բաւարար չափով գործ չունին կամ չեն ուզեր աշխատիլ:

Ֆրոֆ. Ջահլան Մակին ՄԱԿէն զրկած իր տեղեկագրին մէջ կ'ըսէ, թէ վերջին երեք տարիներու ընթացքին, լիբանանցի համալսարանաւարտներու թիւը կը հասնի շուրջ 2500ի: Ասոնց մէկ մասը կը մնայ անգործ, որովհետեւ վկայականներուն համապատասխան գործ չի տրուիր անոնց, իսկ ուրիշներ ալ, որոնք որակեալ տարբեր են եւ կ'ուզեն զիտական լուրջ հետազօտութեանց նուիրուիլ, այդպիսի կեդրոններ չգտնելով, դժբախտաբար, կը գաղթեն եւ իրենց արդիւնաւէտ ծառայութիւնը կը մատուցանեն աւելի լաւ կազմակերպուած երկիրներու:

Արդարեւ, երկրին բոլոր զաւակներուն իրաւունքն է հայրենիքին մէջ ապրիլ, եւ պատասխանատուները պարտաւոր են անոնց գործ հայթայթել: Եթէ արտագաղթը հետեւանք է պետութեան անհեռատես քաղաքականութեան, ապա ուրեմն, աններելի է անիկա: Նախընտրելի է թերեւս անգործներու հոյլ մը ունենալ, որովհետեւ, օր մը, անոնք կրնան պոռթկալ եւ ցնցել երկրին կառոյցը ու բարեփոխել զայն՝ շնորհիւ իրենց մասնագիտութիւններուն, քան թէ մատնել զայն մնայուն թմբիրի մը՝ իր լաւագոյն զաւակներուն մեկնումով: Ծանօթ է արդէն բոլորիս, որ օտար երկիրները ինչպիսի խայծերով կը շահագրգռուին եւ կը տանին պատրաստուած երիտասարդները, որոնք սուղ արժած են ո՛չ միայն իրենց ծնողներուն, այլեւ՝ նոյնինքն պետութեան, ժողովուրդին:

Այս բոլորին առաջըր առնելու համար, անհրաժեշտ է, որ երկրին տնտեսական կառոյցը աւելի առողջ եւ արդար հիմերու վրայ դրուի, որպէսզի ժամանակի հոլովոյթով եւ իրարու բնական ընթացքով՝ նոր գործեր բացուին: Առ այդ, պէտք է ստեղծել զիտական հետազօտութեանց կեդրոններ:

Իբրեւ անմիջական միջոցառում, կարելի է խնդրել իւրաքանչիւր նախարարութենէն, որ յաջորդական 4 տարիներու համար

յայտնեն պաշտօնի կարելիությունները իրենց սպասարկութենէն ներս: Այս բոլորը կարելի է ցուցակադրել եւ ուսանողները կրնան, իւրաքանչիւր տարրուան սկիզբը, գիտնալ պաշտօնի կարելիութիւնները պետական գրասենեակներուն մէջ:

ԻՐԱՒԱՔԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒՆ ՊԱՐՏԱԴՐՈՒԱԾ ՅԱՒԵԼԵԱԼ 2 ՏԱՐԻՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԸ

*Հարցը հետեւեալն է.*

Երբ իրաւաբանութեան ուսանող մը իր քառամեայ համալսարանական ուսումը աւարտէ եւ փափաքի աշխատիլ իբրեւ փաստաբան, պարտաւոր է արձանագրուիլ Իրաւաբանական Կաճառին, վճարելով 4000 լ. ոսկի, որուն 1500ը արձանագրութեան օրը, իսկ մնացեալը՝ երկու տարուան փորձառական շրջանէն ետք: Արդարեւ, ան կը պարտի երկու տարուան փորձառական շրջան մը բոլորել եւ, նոյն ատեն, ըստ 11 Մարտ 1970ի օրէնքին, 2 տարուան յաւելեալ մասնագիտական ուսում ստանալ, ինչ որ ուսման ընդհանուր տեւողութիւնը, անուղղակիօրէն, կը բարձրացնէ 4էն 6 տարուան:

Ահաւասիկ այս տրամադրութեան դէմ է, որ կը բողոքեն ուսանողները: Անոնք կ'առարկեն, թէ Իրաւաբանական Կաճառը իրաւունք չունի, յաւելեալ տարիներով եւ պարտադրուած մեծ գումարներով, յուսալքելու ոչ-բարեկեցիկ պայմաններու մէջ գտնուող ուսանողը, մինչեւ իսկ բարոյապէս ստիպելով գայն, որ լքէ իր նախասիրած ապսարէզը:

Տեղեկագիրը կ'ըսէ, թէ Իրաւաբանական Կաճառը իրաւունք ունի համալսարանաւարտներէն պահանջելու աւելի լաւ պատրաստութիւն եւ, հետեւաբար, նաեւ յաւելեալ կարգ մը նիւթերու ուսում, որոնք մաս չեն կազմեր համալսարանական սովորական ծրագրին:

Մակայն, ուսման ծրագիրը կարելի է այնպէս դասաւորել, որ եթէ պահանջուած նիւթերը մեծածաւալ չեն, դասաւանդուին սովորական չորս տարիներու ընթացքին:

Ինչպէս վերը ըսինք, կառավարութիւնը որոշած է ջնջել յաւելեալ 2 տարուան մասնագիտական ուսումը, գայն կցելով չորս տարուան ծրագրին: Այս ուղղութեամբ, օրինագիծ մը արդէն իսկ ներկայացուած է Երեսփոխանական Ժողովին:

Ինչ կը վերաբերի նախակրթութիւնը ճրիարարութեամբ դարձնելու եւ նոր սերունդներուն գործ հայթայթելու խնդրին, պետութիւնը պարտականութիւն տուած է արդէն Ծրագրի նախարարութեան, որ վիճակագրական վերլուծումներով ձեռնարկէ անհրաժեշտ ուսումնասիրութիւններու, որպէսզի կարելի արագութեամբ տրամաբանական լուծում մը գտնուի այս հարցին:

Տրուած մանրամասնութիւնները մեզի կը թելադրեն, որ ուսանողական հարցերը բնորոշենք հետեւեալ 3 կէտերով.

Ա) ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

- Ծէնքերու հարց,
- Կրթական ծրագիր,
- Տնօրէններու նշանակում,
- Մնայուն դասարաններու նշանակում,
- Որակեալ դասախօսներու նշանակում,
- Ուսանողական ճաշարանի, բնակարանի եւ զբօսարանի հարց,
- Ուսանողներու տրուելիք դիւրութիւններ (փոխադրութիւն, շարժանկար, եւ այլն):
- Լիբանանեան Համալսարանը նոր ճիւղերով օժտելու հարց (բժշկութիւն, երկրաչափութիւն, եւ այլն):
- Տրքուէնիի Արհեստից եւ Արուեստից վարժարանները համալսարանական մակարդակի բարձրացնելու հարց:
- Պետական համալսարաններու վարչական մեքենան լաւապէս կազմակերպելու խնդիր,
- Ուսանողութեան մասնակցութիւնը՝ համալսարաններու դեկավար մարմիններուն:

Բ) ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑԻՆ ԸՆԿԵՐՍՅԻՆ ԼՈՒՐՋ ԲՆՈՅԹԸ

- Իր ապագայի գործին առնչութեամբ՝ ուսանողը կ'ապրի անստուգութեան մէջ:
- Այդ ուղղութեամբ, վկայականը ապահովութիւն մը չի ներշնչեր ուսանողին:
- Համալսարանաւարտներ անգործ կը մնան տարիներ շարունակ, կամ կ'աշխատին իրենց մակարդակին անհամապատասխան գործերու մէջ, յուսալքող վճարումներով:
- Ի վերջոյ, յուսահատելով, կը ստիպուին գաղթել, լքելով հայ-

րենական օճախն ու ընտանեկան բոյնը եւ կամ իրենք գիրենք յանձնելով միջազգային հոսանքներու բախտին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Լիբանանեան Համալսարանի ուսանողութիւնը չկրցաւ իր պահանջները վերածել սկզբունքային հարցերու, չկրցաւ զանազանութիւն դնել հիմնականին եւ երկրորդականին միջեւ: Ուսանողները չկրցան իրենց հարցերը ուսումնասիրուած ձեւով եւ ըստ անոնց ներկայացուցած շահեկանութեան ներկայացնել: Կան հարցեր, որոնց կարելի է շուտափոյթ լուծում մը գտնել: Կան, սակայն, ուրիշ հարցեր ալ, որոնց ուսումնասիրութիւնը կը կարօտի երկար ժամանակի: Ուսանողները դիմեցին ծայրայեղութիւններու, պահանջելով՝ որ պետութիւնը գոհացում տայ իրենց բոլոր պահանջներուն, իրագործելի ըլլան անոնք թէ ոչ:

Ըստ երեւոյթին, շարժումը կը կրէր ազդեցութիւնը կարգ մը քաղաքական կուսակցութեանց: Ուսանողները ենթարկուեցան անոնց, առանց սակայն գիրենք շահագրգռող հարցերուն նկատմամբ քաղաքական հասունութիւն ցուցաբերելու: Անոնք չկրցան կամ չուզեցին զանազանել կարեւորը եւ անկարեւորը, անմիջականը եւ հեռաւորը:

Միամտութիւն պիտի ըլլար մտածել, թէ բարձրագոյն ուսման տազնապը կարելի պիտի ըլլար լուծել պետութեան ըրած կարգ մը գիջումներով կամ քանի մը նպաստաւոր կարգադրութիւններով:

Ուսանողութեան կողմէ ներկայացուած վերոյիշեալ հարցերը, իրենց ընկերային եւ տնտեսագիտական բնոյթով, կը շահագրգռեն ամբողջ ընկերութիւն մը, որ, պահանջը կը զգայ բարեշրջելու իր կառույցը, որպէսզի չմնայ աններդաշնակ եւ անյարիր: Ասոնք ազգային լուրջ հարցեր են, տրուած ըլլալով, որ ի յառաջագունէ, իրենց ապագային հետ կապուած խնդիրներ են:

Լուծման կարօտ անյետաձգելի հարցեր կան, եւ կան այլ հարցեր, որոնք երկրի կառույցին փոփոխութեան կը կարօտին: Անհրաժեշտ է թերեւս, որ մենք եւս՝ ղեկավար, ուսուցիչ եւ ուսանող, փոխենք մեր մտածելակերպը լուրջ բնոյթ կրող ընդհանրական հարցերու նկատմամբ:

Այս է պարագան այն բոլոր երկիրներուն, ուր տնտեսութիւնը,



իր գարգացման ուղիին մէջ, աններդաշնակ է ընկերութեան յարա-  
ճուն պահանջներուն հետ: Անհրաժեշտ է պետութեան լուրջ, իմաս-  
տուն եւ հեռատես միջամտութիւնը:

Ուսանողական դասադուլը, ինչպէս ծանօթ է բոլորին, յատուկ  
չէ Լիբանանին միայն: Վերջին հինգ տարիներուն, նոյնն է պարա-  
զան գրեթէ բոլոր երկիրներուն մէջ:

Ըստ երեւոյթին, անիկա ուսանողութեան բողոքի ձայնն է, ուղ-  
ղուած՝ համալսարաններու ղեկավարութեան, ի խնդիր զիրենք շա-  
հագրգուող կարգ մը բարեկարգութեանց: Ըստ էութեան, սակայն,  
ատիկա ծառայումն է ուսանողութեան, երկրին մէջ տիրող ընկե-  
րային, քաղաքական եւ վարչական կարգերուն դէմ:

Այլեւս ուսանողը գիտակից է դարու ցաւերուն, մարդկութիւ-  
նը յուզող բոլոր հարցերուն: Ան իր անձին վրայ կը կրէ ընկերային  
անարդարութիւններու հետեւանքը եւ սրտին մէջ կը պահէ խռովքը  
վաղուան անստոյգ կացութեան: Ան չ'ուզեր այլեւս ապրիլ լուսանց-  
քի վրայ, ինչպէս էր անցեալին:

Ան ոչ մէկ վստահութիւն ունի ղեկավար տարրին վրայ, զոր կը  
նկատէ եսակեդրոն եւ անհաղորդական, ու անատակ՝ իր հարցե-  
րուն դրական լուծում մը բերելու:

Ան կ'ուզէ շրջել պետական վարչական մեքենան, զոր կը գտնէ  
նեխած, եւ կառավարուած մարդոց կողմէ, որոնք ժամանակավրէպ  
են, հետեւաբար կարելի չէ սպասել անոնցմէ արդիւնաւէտ որեւէ  
ձեռներէցութիւն: Ուսանողները կ'ուզեն, որ անոնք լքեն իրենց պա-  
տասխանատուութիւնները եւ յանձնեն իրենց տեղը երիտասարդ սե-  
րունդին, ի մասնաւորի անոնց, որոնք օժտուած են արդիական գա-  
ղափարներով եւ նոր մտայնութեամբ, հաղորդակից ըլլալով դա-  
րուն ընդհանուր հոգեվիճակին, ունենալով գիտական նուաճումնե-  
րու համապատասխանող հայեցի ու լայն հորիզոններ:

Բազմաթիւ են այն հեղինակները, որոնք սնունդ կու տան այս  
մտայնութեան:

«ժողովրդավարութիւնը, - կ'ըսէ Էմմանուէլ Մունիէ, - որ կը թուի  
ըլլալ լաւագոյն դրութիւնը նոր ժամանակներու՝ մարդկային իրաւանց  
եւ ազատութեան պահպանման համար, այն ձեւով, որ կը կիրարկուի  
բոլոր երկիրներուն մէջ, կը ներկայացնէ իսկական ստախօսութիւն մը  
եւ խաբէութիւն մը: Որովհետեւ, ինչ որ ժողովրդավարութիւնը կու

տայ մարդուն իբրեւ ազատութիւն, դրամը եւ անհատներու ազդեցութիւնը գայն կը խլեն անոր ձեռքէն, զինք դարձնելով գերի»:

*Ուրիշ տեղ մը ան կ'աւելցնէ.*

«Այլեւս երիտասարդութիւնը ընտրութիւն չունի կիսամիջոցներու եւ յեղափոխութեան միջեւ: Այլ՝ ունի յեղափոխութեան (որ պէտք է փորձէ իր իրաւ ազատութիւնը եւ մարդկային այլ արժէքներ) եւ արժէքներու ու միջոցներու միջեւ (որոնք կը խեղդեն իր ազատութիւնն ու իրաւունքները): Ահաւասիկ ասոր համար է, որ երիտասարդութիւնը համաձայնութիւն կը յայտնէ մեծ եւ իսկական ժողովրդավարութեան եւ կը հակառակի կեղծիք բուրոյ ժողովրդավարութեան: Բնականաբար, մեծ քանակներու համար անհրաժեշտ են մեծ միջոցներ»:

*Այս մտածումները արձանագրուած են 1934ին, «Democracie et Revolution» գրքին մէջ:*

*Ուսանողութիւնը մարդկային հսկայ ուժ մըն է, որուն պէտք է տեղ բանալ բոլոր մարզերուն մէջ, հայրենիքի ընկերային հետագայ գոյավիճակին եւ տնտեսական կառույցին զարգացման համար:*

*Հետեւաբար, այդ ուսանողութեան պէտք է տալ առողջ եւ կենսունակ դաստիարակութիւն մը, տրուած ըլլալով, որ նոր սերունդը կը բերէ կենսունակութեան աւելնն ու նորութեան շունչը:*

*Սակայն, նոր սերունդն ալ պէ՛տք է գիտնայ, թէ ներելի չէ՞ դիմել բոլոր միջոցներուն անխտիր, բարեկարգութիւններ պահանջելու կամ իրագործելու համար: Ան պէ՛տք է գիտակցի, որ քանդումն ու փլուզումը բացասական միջոցներ են, որոնցմէ պէ՛տք է խուսափիլ ամէն գնով:*

*Այս ուսումնասիրութիւնը կը վերջացնենք Փրանսացի մեծ տեսարան՝ Կրիոթրէյի մտածումով.*

«Անկասկած երիտասարդութիւնը ունի յոյսեր ու գաղափարներ, որոնք կրնան նախորդող սերունդինը եղած չըլլալ, բայց որուն կարողութիւնն ու փորձառութիւնը կարելի է օգտագործել երկրի մը բարգաւաճման ու անոր ժողովուրդին բարօրութեան համար: Իսկ եթէ երիտասարդութիւնը կը պայքարի պարզապէս իր եսն ու անհատականութիւնը ցուցադրելու համար, այդ պարագային, մեր պատասխանը կ'ըլլայ ժխտական, քանի որ ատով իսկ ինք կը դառնայ վնասակար եւ անընդունելի:

**ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ  
ԵՒ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ՆԱՀԱՆՁՐ  
ՍՓԻՒՌՔԵԱՆ ՆԵՐԿԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՁ**

*Ա. աշխարհամարտէն յետոյ երբ թրքահայ տարագիր ազգաբնակչութիւնը կայք հաստատեց ասպնջական զանազան օտար երկիրներու մէջ, իր Ֆիզիքական գոյութեան ապահովութեան առնթեր մտածեց նաեւ, ի պատիւ իրեն, ազգային դիմագիծի անխաթար պահպանման նախանձախնդրութեամբ, եկեղեցիներ շինել եւ դպրոցներ կանգնել ուր մայրենի լեզուն, հայոց պատմութիւնը կրօնական եւ եկեղեցական դաստիարակութիւնը ազգային մշակոյթը, առանցքը կազմեցին կիրարկուող կրթական ծրագիրներուն: Մեծատաղանդ գրագէտներու եւ կրթական մշակներու դասագրքերը երկար ատեն ծառայեցին հայերէնագէտ ուսուցիչներուն, կարենալ հարազատօրէն ջամբելու համար աճող նոր սերունդներուն, ազգային դաստիարակութիւն եւ փոխանցելու համար անոնց հայ ազգային եւ եկեղեցական մշակութային դարաւոր ժառանգը:*

*Բ. աշխարհամարտէն, յատկապէս 1950էն յետոյ, գաղթական հայութիւնը հետզհետէ տեղաւորուելով իր բնակած երկիրներու մէջ, դուրս կու գար իր թաղին սահմաններէն գոր կը նկատէր իր ընկերային կեանքին հարազատ միջավայրը եւ ուր կ'ապրէր ինքնիրմով եւ ինքնիր մէջ ամփոփուած եւ կապեր կը հաստատէր իր նոր շրջապատին հետ: Վաղուայ նիւթական մտահոգութիւնները եւ աւելի բարւոք վիճակի մը հեռանկարները գինքը կը մղէին օգտապաշտ քաղաքականութիւն որդեգրելու եւ առ այդ յաւելեալ կարեւորութիւն ընծայելու տեղական եւ օտար լեզուներու ուսուցումին:*

*Նիւթապէս աւելի ամրապնդուած՝ ան իր զաւակներուն ուզեց տալ երկրորդական եւ համալսարանական ուսում եւ այդ իսկ պատճառով պետական վկայական ապահովելը նկատեց առաջնահերթ մտահոգութիւն:*

Ստեղծուած նոր հոգեվիճակը եւ կեանքի նոր դասաւորումը ազգային իշխանութիւնները եւ առ հասարակ կրթական կեանքի պատասխանատուները դրին նոր հրամայականի մը առջեւ: Եթէ մեր ղարոցները անտեսէին նոր գոյավիճակը եւ պահէին կրթական նախկին դրութիւնը, կրնային կորսնցնել զգալի տոկոս մը իրենց աշակերտութենէն որ այս պարագային օտար վարժարան յաճախելով պիտի կորսնցնէր հայ վարժարանի շունչը եւ պիտի գրկուէր ազգային դաստիարակութենէն:

Քոյր համայնքներուն վարժարանները վաղուց որդեգրած էին տիրող պայմաններուն համապատասխանող կրթական յատուկ քաղաքականութիւն: Կար նաեւ այն իրողութիւնը որ կարգ մը հիւրընկալ երկիրներու մէջ հայերէն լեզուի դասաւանդութիւնը կ'ենթարկուէր սեղմումի եւ հայերէն լեզուին յատկացուած դասապահերուն թիւը խստօրէն կը սահմանափակուէր:

Կրթական մարմինները հարկադրաբար աւելի լայն տեղ տուին տեղական անմիջական պահանջներուն համապատասխանող առարկաներու ուսուցման ինչ որ յառաջ բերաւ կրթական ծրագիրներու խճողում գոր կարելի եղաւ ապագային մասամբ թեթեւցնել ի վնաս դժբախտաբար հայերէն լեզուին եւ հայերէնով դասաւանդուած առարկաներուն:

Այսօր աւելի քան 20 տարուայ փորձառութենէ յետոյ կը նկատենք որ մեր վարժարանները թէպէտեւ յուսախաբ չեն ըներ հայ ծնողները պետական վկայականներու առնչութեամբ ուր յաճախ փայլուն արդիւնքներ ձեռք կը ձգեն, սակայն անբաւարար արդիւնք կու տան ազգային կրթական ծրագրին իւրացման տեսակէտէն եւ հայերէն լեզուն տակաւ կը տժգունի մեր մատղաշ սերունդներուն շրթունքներուն վրայ:

Եթէ կացութիւնը այս է հայ վարժարան յաճախող աշակերտութեան համար հապա այդ որքան մտահոգիչ է անոնց համար որոնք օտար վարժարան կը յաճախեն որուն խորթ միջավայրը եւ անկէ բխող հոգեբանական ազդակները կ'աղաւաղեն անոնց ազգային դիմագիծը եւ ամէն պարագայի տակ անոնք գրկուած կը մնան, յաճախ ցաւ ի սիրտ, հայ դարաւոր մշակոյթի գանձերուն վայելքէն:

Այս նահանջը համասփիւռքեան բնոյթ կրած ըլլալով անհրաժեշտ է որ ազգային գերագոյն ժողովը զբաղի անով երբ տակաւին

ուչ չէ այլապէս տասնամեակ մը տարիներ յետոյ մեզի համար շատ դժուար պիտի ըլլար, չ'ըսելու համար անհնարին, հայերէն լեզուի ատակ ուսուցիչներ գտնելն անգամ:

Տիրող այս կացութենէն երեւան կու գայ որ հետեւողական եւ լուրջ աշխատանքներ կան ընելիք այս ուղղութեամբ:

Մեր ուսուցչական կազմերը առ հասարակ պահանջուած մանկավարժական պատրաստութիւնը չունին:

Մեր դասագրքերը որոնք օրին լաւագոյններն էին, այսօր սակայն ժամանակավրէպ են: Անոնք չեն համապատասխաներ օրուայ պահանջքին թէ իբրեւ խորք եւ թէ իբրեւ ձեւ: Ուսուցիչը առանց լաւապէս սերտուած դասագրքի չի կրնար անհրաժեշտ արդիւնքը տալ:

Մեր կրթական ծրագիրները պէտք ունին հիմնական բարեփոխութեան:

Անհրաժեշտ է որ համասփիւռքեան տարողութեամբ, մեր կրթական հարցերու մասնագէտները, հայերէնագէտները ճշգրէն ազգային կրթական ծրագրին տեղը հայ աշակերտի ընդհանուր կազմաւորման մէջ եւ առ այդ ուռնեն հայրենէն լեզուի եւ հայոց պատմութեան ուսուցման մասնայատուկ մեթոտներ հիմնուած մանկավարժական եւ հոգեբանական արդի ճշմարտութիւններուն վրայ ու պատրաստեն համապատասխան դասագրքեր:

Կայ նաեւ ընդհանուր նահանջ ազգային մշակոյթի այլ մարզերուն մէջ հակառակ համազգայինի եւ մշակութային այլ միութիւններու եւ հաստատութիւններու տարած գնահատելի ճիգերուն:

Նորարարութիւնը, քաղքենիացումը, օտար մշակոյթներուն հետ հայուն ունեցած հեշտ հաղորդականութիւնը, կեանքի նոր պայմանները, առօրեայի հեւ ի հեւ վազքը անտարակոյս մեծ դեր կը խաղան յատկապէս այն պարագային երբ հայը ազգային առողջ դաստիարակութեամբ չէ խարսխած իր ինքնութիւնը եւ պատկանելիութիւնը:

Երգը, պարը, թատրոնը տակաւին ժողովրդականութիւն կը վայելեն եւ կենսունակ գործօններ կը մնան: Հայ մտաւորականը քաջալերութիւն չգտնելով նուազ կ'գրադի գրական, ազգագրական, բանասիրական, պատմական եւ առ հասարակ մշակութային թեմա-

ներով: Անհետացող հայագէտներուն եւ գրագէտներուն տեղը գրա-  
ւողները հագուազիւտ են:

Մեծ յոյս ունինք որ Անթիլիասի կաթողիկոսարանը, իր դպրե-  
վանքով, գրադարանով մանաւանդ մարդկային դրամագլուխով  
պիտի կարենայ շօշափելի ծառայութիւն մատուցանել մշակոյթի  
վերոյիշեալ բնագաւառներուն մէջ: Վարչական կառոյցքներ պատ-  
րաստելու մտահոգութիւնները եթէ հրամայական պահանջքի կը  
համապատասխանէին երէկ, այսօր սակայն անոնք նուազ շեշ-  
տուած կը թուին ըլլալ:

Ահա կարգ մը նկատողութիւններ զորս ուզեցի ամփոփ կերպով  
ուշադրութեան յանձնել յարգելի ժողովականներուն:

Թող ներուի ինծի եթէ երկարեցի հարցադրումը եւ անոր կա-  
պուած պատճառաբանութիւնները:



**Գ. Մ Ա Ս**

**ՏՆՏԵՍԱԿԱՆ-ԸՆԿԵՐԱՅԻՆ  
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ**





## Գ. Մ Ա Ս

### ՏՆՏԵՍԱԿԱՆ-ԸՆԿԵՐԱՅԻՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

- *Ընկերային ապահովագրութեան  
Լիբանանի օրէնքը եւ անոր գործադրութիւնը* ..... 327
- *Լիբանանեան տնտեսութիւնը եւ  
ծրագրային աշխատանք* ..... 341
- *Ընկերային ազդակներու դերը տնտեսական  
բարգաւաճման մէջ* ..... 346
- *Ուղեղներու արտագաղթը. Լիբանանի պարագան* ..... 351
- *Մարդկային դրամագլուխը եւ  
տնտեսական զարգացումը* ..... 367
- *Կրթական քաղաքականութիւն եւ տնտեսական  
բարգաւաճում* ..... 372
- *Գոյապաշտ (Existentialiste) գրականութիւնն  
ու իր ծագումը* ..... 377
- *Les écoles Arméniennes* ..... 383



## ԸՆԿԵՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԷՆՔԸ ԵՒ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆԸ

20րդ դարը կրնայ արդարօրէն նկատուիլ գիտական մեծ նուաճումներու կողքին՝ «ընկերային» գիտակցութեան դար: Արդարեւ, 19րդ դարու երկրորդ կէսէն սկսեալ, երբ ճարտարարուեստը զարգացաւ եւ քաղաքներու բնակչութիւնը անբաղդատելիօրէն աճեցաւ, մէջտեղ եկաւ աշխատաւորներու նոր դասակարգ մը, որուն ապրուստը սերտօրէն կապուած էր այն գործարաններուն, ուր անոնք իրենք կ'աշխատէին: Այս վերջինները յաճախ ծայրայեղօրէն կը շահագործէին աշխատաւորները, անոնց գլանալով ամենատարական իրաւունքներն անգամ: Աշխատաւորը ո՛չ մէկ ապահովութիւն ունէր: Եթէ հիւանդ ըլլար, գործէ կը գրկուէր: Եթէ արկած մը պատահէր աշխատանքի միջոցին եւ վնասուէր աշխատաւորը, ո՛չ միայն իրեն հատուցում չէր վճարուեր, այլեւ գործէ կ'արձակուէր:

Հապա ի՞նչ ըսել այն երկարատեւ (12էն 15 ժամ) ու դժնդակ աշխատանքի մասին, որուն կ'ենթարկուէին անոնք՝ կարենալ քարշ տալու համար իրենց թշուառ կեանքը: Տիրող տարապայման ու անհանդուրժելի մթնոլորտին դէմ բողոքելու համար, մեծ պոռթկումներով տեղի ունեցան գործաւորական խլրտումներ, որոնց իբրեւ հետեւանք, պետական միջամտութեամբ, եւրոպական կարգ մը երկիրներու մէջ որոշուեցան ընկերային ապահովութիւններ, պաշտպանելու համար աշխատաւորը արկածէ, հիւանդութեան եւ ծերութեան պարագային: Անոնք սակայն՝ ժամանակի հոլովոյթին հետ հիմնաւորուեցան, ձեւ ստացան եւ նուիրագործուեցան միայն 20րդ դարու մէջ, աշխատաւորին տալով իրական ընկերային ապահովագրութիւն:

Ընկերային ապահովագրութիւնը իր արդիական ըմբռնումով սկսաւ նախ Ռուսիոյ մէջ 1923ին, Ամերիկայի մէջ՝ 1935ին, Անգլիոյ եւ Ֆրանսայի մէջ՝ 1945-46ին ապա տարածուեցաւ զանազան այլ երկիրներ:

Միջին Արեւելքի մէջ ան սկսաւ Թուրքիայէն՝ 1945ին, ապա Ե-գիպտոսի մէջ՝ 1950ին, բարեփոխութեան ենթարկուելով 1955ին, Իրաքի մէջ՝ 1956ին եւայլն...

Լիբանանի մէջ, աշխատանքի միջազգային գրասենակի մասնագէտ Տոպերնաքի աջակցութեամբ, 1955ին, պատրաստուած էր ընկերային ապահովագրութեան նախագիծ մը, որ վերստին քննութեան ենթարկուելէ ետք, 1959ին, զանազան փուլերէ անցաւ եւ վերջապէս նուիրագործուեցաւ 26 Սեպտեմբեր 1963ին: Ան գործադրութեան դրուեցաւ, իր ստորագրուելէն ճիշդ 18 ամիս ետք, 2 Մայիս 1965ին:

Ընկերային ապահովագրութեան լիբանանեան օրէնքը կը բաղկանայ 87 յօդուածներէ, որոնց 12ը վարչական եւ դատական մասերուն կը վերաբերին, իսկ մնացեալ 75ը բուն ապահովագրութեան:

#### Ա) ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՌՈՅՅՈՒ

Ընկերային ապահովագրութեան հիմնական օրկանը Մատուկն է: Հոն կը վճարուին աշխատաւորներէն եւ գործաւորներէն գանձուած բոլոր գումարները եւ փոխադարձաբար, ան՝ Մատուկը կը վճարէ բոլոր հատուցումները:

Ընկերային ապահովագրութիւնը ինքնավար սպասարկութիւն մըն է, պետական հակալիչուին ներքեւ: Զայն կը հովանաւորէ 14 հոգիներէ բաղկացած վարչական գերագոյն յանձնախումբ մը, որուն մաս կը կազմեն հետեւեալները.

- Պաշտօնեաներու Համագործակցական Միութիւնը՝ 1 ներկայացուցիչով,
- Առողջապահական նախարարութիւնը՝ 1 ներկայացուցիչով,
- Եւելմտական նախարարութիւնը՝ 1 ներկայացուցիչով,
- Գործատէրերու արհեստակցական միութիւնները՝ 4 ներկայացուցիչներով,
- Աշխատաւորներու արհեստակցական միութիւնները՝ 4 ներկայացուցիչով,
- Հողամշակութեամբ զբաղող ձեռնարկները՝ 3 ներկայացուցիչով:

Պետական ներկայացուցիչները կը նշանակուին ուղղակի կառավարութեան կողմէ: Գործատէրերու եւ աշխատաւորներու ներ-

կայացուցիչները կ'ընտրուին կառավարութեան կողմէ՝ իրեն ներկայացուած տասը հոգինոց ցանկին մէջէն: Ներկայացուցիչ կրնան նշանակուիլ միայն անոնք, որոնք նախ լիբանանցի են, ապա տեղեակ արհեստակցական, ինչպէս նաեւ ընթացիկ հարցերուն: Պետական դահլիճը իրաւասու է որեւէ ատեն փոփոխութեան ենթարկելու յանձնախումբին կազմը:

Վարչական այս գերագոյն յանձնախումբին կ'օժանդակէ 3 հոգինոց մասնագէտներու ենթայանձնախումբ մը: Այս վերջինին պարտականութիւնն է հաշիւները քննել եւ, ելեմտական ու մասնագիտական բոլոր հարցերը ուսումնասիրելէ ետք, տեղեկագրել գերագոյն յանձնախումբին եւ կամ տեղեակ պահել ընկերային հարցերու նախարարութիւնը:

Պետական դահլիճը կը նշանակէ նոյնպէս ընդհանուր տնօրէն մը՝ վարելու համար վարչական բոլոր գրասենեակները եւ ազգային Մնտուկին վերաբերեալ բոլոր գործողութիւնները:

Աւելցնենք անմիջապէս, որ վարչական գերագոյն յանձնախումբին անդամները անձամբ պատասխանատու են այն բոլոր վնասներուն համար, որոնց պատճառ կրնան եղած ըլլալ իրենց պաշտօնավարութեան ընթացքին:

#### **Բ) ԸՆԿԵՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Մնտուկը կը պաշտպանէ իր մօտ արձանագրուած աշխատաւորը, անոր կինն ու զաւակները: Կը պաշտպանէ նաեւ անոր հայրն ու մայրը (եթէ 60 տարեկանէն վեր են), ինչպէս նաեւ քոյրն ու եղբայրները, եթէ այս վերջիններուն ապրուստը իրմէ կախեալ է:

Մնտուկը աշխատաւորը կ'ապահովագրէ հետեւեալ չորս պարագաներուն.

- 1) Ընտանիքի ծանրաբեռնում.
- 2) Հիւանդութիւն եւ ծննդաբերութիւն.
- 3) Աշխատանքի արկածներ
- 4) Վերջ ծառայութեան

Վերոյիշեալ ամէն ճիւղ ունի իրեն յատուկ տոմարը, ուր կ'արձանագրուին համապատասխան մուտքերն ու ելքերը:

Ընկերային ապահովագրութեան վերաբերեալ չորս ճիւղերէն կրնան օգտուիլ բոլոր աշխատաւորները, բացի պետական պաշտօնեաներէն, որոնք իրենց յատուկ օրէնքները ունին, երկրագործական աշխատաւորները եւ ծառաները: Երկրագործական աշխատաւորները կրնան սակայն ապահովագրուիլ ապագային արկածներու եւ իրենց արհեստին վերաբերեալ հիւանդութեանց դէմ, եթէ մեքենական աշխատանք կը վարեն: Պետական այն պաշտօնեաները, որոնք քաղաքէն, պարտաւոր են կապուիլ ընկերային ապահովագրութեան Մնտուկին:

1.- Ընտանիքի ծանրաբեռնում

Ամուսնացած, ինչպէս նաեւ գաւակներու տէր աշխատաւորին՝ Մնտուկը կը վճարէ որոշ գումար մը, զոր կը կոչեն ընտանեկան յատկացում: Այս գումարին սակը ճշդուած է պետական օրէնքով:

Այսպէս՝

Իր կնոջ համար, որ չ'աշխատիր, աշխատաւորը կը ստանայ ամսական 15 լ.ո.:

Առաջին գաւակին համար՝ 10 լ.ո.:

Երկրորդ գաւակին համար՝ 9 լ.ո.:

Երրորդ գաւակին համար՝ 8 լ.ո.:

Չորրորդ գաւակին համար՝ 8 լ.ո.:

Այն պարագային, երբ աշխատաւորին կինը չ'աշխատիր եւ ունի հինգ գաւակ, կը ստանայ ուրեմն առաւելագոյն չափով 60 լ. ոսկի: Հինգէն վեր եղող գաւակներուն համար, Մնտուկը բան չի վճարեր: Այն աշխատաւորը, որ մէկէ աւելի կին ունի, կը ստանայ միայն իր առաջին կնոջ համար: Աշխատող կին մը, որուն ամուսինը 60 տարեկանէն վեր է եւ կամ անկարող է աշխատելու, իրաւունք ունի ընտանեկան յատկացումի, իր ամուսնին համար:

Մանչ գաւակներուն համար կը վճարուի մինչեւ 16 տարեկան: 16էն յետոյ, եթէ անոնք իրենց ուսումը շարունակեն, վճարումը կ'ապահովուի մինչեւ 25 տարեկան:

Աղջիկ գաւակներուն համար, Մնտուկը կը վճարէ մինչեւ 25 տարեկան: Իսկ հիւանդ եւ աշխատելու անկարող գաւակներուն համար տարիքի սահմանում չկայ:

2.- Հիւանդութիւն եւ ծննդաբերութիւն

Հիւանդութեան պարագային, Մնտուկը կ'ապահովագրէ աշխատաւորը, անոր կիներն ու զաւակները, նաեւ ընտանեկան պարագաներէն ունէ մէկը (հայր, մայր, եթէ 60 տարեկանէն վեր են), քոյր եղբայր (եթէ տունը մնացած են ու իրենց ապրուստը կախեալ է աշխատաւորէն):

Հիւանդը կը ստանայ բժշկական եւ դարմանական ծախսերուն 70%օր Մնտուկէն:

Հիւանդ աշխատաւորը իր հիւանդութեան պարագային կը ստանայ իր օրավարձը, համաձայն աշխատանքի օրէնքին տրամադրութիւններուն: Ապահովագրութիւնը կը տեւէ 26 շաբաթ: Այսուհանդերձ, այս պայմանաժամը կրնայ 52 շաբաթի բարձրանալ, եթէ ընկերային ապահովագրութեան բժիշկը յարմար դատէ զայն:

Ծննդաբերութեան պարագային, աշխատաւոր կիներ 60 օրուան արձակուրդ կը ստանայ իր օրավարձին 3/4 վճարումով: Ան ապահովագրուած է ծննդաբերութենէն առաջ եւ վերջը ստանալիք խնամքներուն, ինչպէս նաեւ ծննդաբերութեան առթած բոլոր ծախքերուն համար:

Որպէսզի հիւանդ աշխատաւորը բժշկական խնամքի եւ հատուցումի տիրանայ, պէտք է որ ան առնուազն վեց ամիս աշխատած եւ համպատասխան Մնտուկին իր մասնակցութիւնը բերած ըլլայ:

Ծննդաբերութեան պարագային, ապահովագրուած կին մը կրնայ օգտուիլ բժշկական խնամքներէն եւ հատուցում գանձել, եթէ առնուազն տասը ամիսէ ի վեր արձանագրուած է ընկերային ապահովագրութեան:

Օրէնքով, ապահովագրութեան Մնտուկը կը պարտի ամէն ամիս հրատարակել, չրջան առ չրջան, բոլոր բժիշկներուն, դեղարաններուն եւ հիւանդանոցներուն անունները, որոնց հետ համաձայնութիւն գոյացուցած է: Հարկ եղած պարագային, ապահովագրեալ աշխատաւորը կրնայ անվարան դիմել անոնց: Հիւանդանոց պաուկելու պարագային, եթէ հիւանդը, Մնտուկին պայմաններէն դուրս, աւելի բարձր կարգի մէջ կ'ուզէ պաուկիլ, ինքը կը վճարէ տարբերութիւնը:

Մահուան պարագային, երբ այդ մահը աշխատանքի միջոցին պատահած չէ, մահացած աշխատաւորին ժառանգորդներուն կը



վճարուհի 200 լ. ոսկի, իբրեւ թաղմանական ծախս: Այս գումարը կրնայ նույնպէս վճարուիլ այն մարդոց կամ հաստատութեանց, որոնք յանձն կ'առնեն անոր թաղումը:

Ի՞նչպէս աշխատաւոր մը Սնտուկէն կը գանձէ բժշկական խնամքի եւ դեղերու համար իր ծախսած գումարները:

Աշխատաւորը, հիւանդութեան պարագային, Մնտուկին կողմէ ճշդուած բժիշկներուն կը դիմէ, անոնց ներկայացնելով Մնտուկին արձանագրութեան իր քարտը: Բժիշկին կը վճարէ համաձայն Մնտուկի սակերուն եւ անկէ կը ստանայ համապատասխան ստացագիր:

Դեղերու պարագային, դեղարանէն կը գնէ գանոնք, կը վճարէ անոնց գինը փոխան համարժէք ծախսագինի: Հուսկ ուրեմն իր գործատէրէն կ'առնէ վկայագիր մը, որուն մէջ այս վերջինը կը հաստատէ, թէ ան անընդհատ վեց ամիսէ ի վեր աշխատած է իր քովը: Ապա այս բոլոր վաւերացումները միացնելով իր գործածած դեղերու տուփերուն, կը ներկայանայ Մնտուկ, որ իր ըրած ծախքերուն 70%ը կը հատուցանէ իրեն:

3.- Արկածներ եւ արհեստի վերաբերեալ հիւանդութիւններ

Եթէ աշխատաւոր մը արկածի ենթարկուի, անմիջապէս անոր կը տրուի բժշկական եւ դարմանումի անհրաժեշտ խնամքը: Հարկ եղած պարագային, ան հիւանդանոց կը փոխադրուի: Արկածի առաջին օրէն սկսեալ, անոր կը վճարուի իր օրավարձին կամ ամսաթոշակին 3/4ը: Այս գումարին կէսը միայն կը վճարուի, երբ արկածեալը հիւանդանոց փոխադրուած է:

Այս կացութիւնը կը շարունակուի մինչեւ այն ատեն, երբ պատասխանատու բժիշկները կը յայտարարեն, թէ ան առողջացած է (ուրեմն հարցը կը փակուի եւ ալ հատուցումի մասին չի խօսուիր) եւ կամ աշխատելու անկարող է: Այդ պարագային՝

1.-Եթէ արկածեալը ցկեանս չաշխատելու դատապարտուի, իր օրավարձին երկու երրորդը կը ստանայ ցկեանս, իբրեւ կենսաթոշակ: Բաց աստի, եթէ ան յաւելեալ օգնութեան կարօտի եւ կամ իր քովը օժանդակ անձ մը պահելու անհրաժեշտութիւնը տեսնուի, անոր կը վճարուի յաւելեալ գումար մը, որ կրնայ իր օրավարձին մինչեւ կէսին հասնիլ:

2.- Եթէ աշխատաւորը իր աշխատանքի կարողութեան միայն մէկ մասը ցկեանս կորսնցնէ եւ եթէ այդ կորուստը իր կարողութեան 30%ին համապատասխանէ, ցկեանս կենսաթոշակ կը ստանայ, համապատասխան իր կորուստին: Եթէ անկարողութիւնը 30%էն պակաս է, միանուագ կերպով կը ստանայ միայն երեք տարուան հատուցումին համապատասխան գումար:

3.- Եթէ արկածեալը մեռնի արկածի հետեւանքով, անոր ժառանգորդները կը գանձեն արկածեալ աշխատաւորին օրավարձին երկու երրորդը, իբրեւ կենսաթոշակ: Եթէ ժառանգորդը միայն մէկ անձ է, անոր կը վճարուի վերոյիշեալ գումարին 50 առ հարիւրը:

Որո՞նք են մահացող աշխատաւորին ժառանգորդները.

Մահացող աշխատաւորին ժառանգորդներն են.

Ա. կարգի ժառանգորդներ՝ իր կինն ու զաւակները:

Բ. կարգի ժառանգորդներ՝ ենթակային հայրը (60 տարեկանէն վեր եւ աշխատելու անկարող), մայրը, չամուսնացած քոյրը (եթէ անոր ապրուստը իրմէ կախեալ է) եւ իր եղբայրները (եթէ աշխատելու անկարող է ու անոր ապրուստը իրմէ կախեալ է):

Մահացողին կինը կը գանձէ ժառանգին կէսը, մնացեալ մասը կը բաժնուի հաւասարապէս, աստիճանական կարգով:

Զաւակները կը գանձեն մինչեւ 16 տարեկան եւ, դպրոց երթալու պարագային, մինչեւ 25 տարեկան, եթէ մանչ են. աղջիկ ըլլալու պարագային՝ մինչեւ 25 տարեկան:

Եթէ մահացող աշխատաւորին ժառանգորդ կինը վերստին ամուսնանայ, անոր կը վճարուի միանուագ կերպով 3 տարուան կենսաթոշակի համապատասխան գումար մը: Օրէնքը, իր այս տրամադրութեամբ, կ'ուզէ օգնել այրի կնոջ, որպէսզի ան վերամուսնութեան պարագային, նիւթական միջոցներ ունենայ իր ամուսնական ծախսերը հոգալու համար:

4.- Վերջ ծառայութեան

Մնտուկին յարած ոեւէ աշխատաւոր իր տարիներու աշխատանքին վերաբերեալ հատուցումի իրաւունքը կրնայ գանձել հետեւեալ պարագաներու.

ա) Անոր հաշույն պէտք է քսան տարի իր գործատէրերուն կողմէ ընկերային Ապահովագրութեան Մնտուկին վճարում կատարուած ըլլայ,

բ) Երբ ան աշխատելու անկարողութիւնը առնուազն 50 առ հարիւր է, արգելք հանդիսանալով իր աշխատանքին եւ կամ նման այլ աշխատանք վերցնելուն,

գ) Երբ ան բացարձակապէս աշխատելու անկարող է բժշկական վկայագրի հաւաստիացումով,

դ) Երբ աշխատաւորը կին մըն է, որ կ'ամուսնանայ,

ե) Եւ կամ 60 տարին բոլորած այր մըն է: Կնոջ պարագային, տարիքի սահմանը 55 է միայն:

Երբ աշխատաւոր մը վերոյիշեալ պայմանները չէ լրացուցած, սակայն իր ապահովագրութիւնէն քանի մը տարի վերջը, բնական մահով կը մեռնի, անոր ժառանգորդներուն կը վճարուի իր աշխատած տարիներուն համապատասխան հատուցում: Ամէն պարագայի տակ, որքան ալ քիչ եղած ըլլան աշխատաւորին ծառայութեան տարիները, վճարուելիք հատուցումը ենթակային 6 ամսաթոշակէն պակաս չի կրնար ըլլալ: Աշխատաւոր մը իր ողջութեան կրնայ իր ստանալիք գումարին մինչեւ 15% կտակել նախընտրաբար իր ժառանգորդներէն մէկուն:

#### ՀԱՏՈՒՑՈՒՄԻ ՔԱՆԱԿԻՆ ՃՇՌՈՒՄԸ

Հատուցումի քանակը կը ճշդուի հետեւեալ ձեւով.

Վերոյիշեալ պայմաններէն որեւէ մէկը լրացնող աշխատաւորի մը կը վճարուի 1 ամսաթոշակի համապատասխան գումար ամէն մէկ տարուայ ծառայութեան համար: Այս ամսաթոշակը գործէ իր արձակուած թուականին նախորդող ամսուան ընթացքին ստացած թոշակն է:

Եթէ պաշտօնական իր ամսաթոշակէն դուրս կը ստանայ այլ նուէրներ կամ վարձատրութիւններ, ասոնց մէկ տարուան գումարը կը բաժնուի 12ով եւ կը բարդուի իր ստացած վերջին ամսաթոշակին վրայ:

Աշխատաւոր մը, որ 60 տարեկանին հասած ըլլալով իր հատուցումի իրաւունքը կը պահանջէ, կը ստանայ առաջին 20 տարիներու ծառայութեանց հաշուոյն, ամէն մէկ տարուան համար մէկ ամսական, 20էն վեր եղող տարիներուն համար 1½ ամսական: Այս իրաւունքը իրեն կը տրուի այն ատեն, երբ նոյնքան տարիներու համար իր գործատէրը սնտուկին վճարումներ ըրած է անոր հաշուոյն:

*Եթէ աշխատաւոր մը Մնտոկին յարած թուականներուն արդէն 20 տարիէ աւելի ծառայութիւն ըրած է իր գործատիրոջ մօտ, անոր 1/2 ամսաթոշակի յաւելեալ հատուցումը կը հաշուեն իր Մնտոկին յարած թուականէն սկսեալ միայն:*

2. Որո՞նք են այն պարագաները, որոնց ընթացքին աշխատաւոր մը իր ազատ կամքով գործը կը լքէ եւ միեւնոյն ատեն առանց վերոյիշեալ պայմանները լրացուցած ըլլալու, իրեն կը վնարուի իր հատուցումի իրաւունքին մէկ մասը.

**Ա. ՊԱՐԱԳԱՅ.-** *Եթէ աշխատաւորը թերաւարժ (stagiaire) է հաստատութեան մը մէջ եւ առաւելագոյն 2 տարին չէ բոլորած: Իրեն կը վճարուի իր հատուցումի իրաւունքին 1/3ը:*

*Երբ աշխատաւոր մը ընկերային ապահովագրութեան Մնտոկին յարած է իր ազատ կամքով ինչպէս նաեւ պաշտօնեայ մը, որ յարած է ընկերային ապահովագրութեան Մնտոկին, տակաւին մէկ տարին չէ բոլորած կ'ուզէ լքել, անոնց կը վճարուի իրենց իրաւունքին 1/3ը միայն:*

**Բ. ՊԱՐԱԳԱՅ.-** *Երբ աշխատաւոր մը վերջնականապէս իր գործը կը լքէ եւ չ'ուզեր այլ տեղ աշխատիլ ուրիշի հաշուոյն, կ'ուզէ անձնական գործ դարձնել, հատուցումի իր իրաւունքը կը ստանայ հետեւեալ ձեւով.*

50% վճարուելիք գումարէն, եթէ 5 տարիէն վար ծառայութիւն ունի:

65% վճարուելիք գումարէն, եթէ 5-10 տարուան ծառայութիւն ունի:

75% վճարուելիք գումարէն, եթէ 10-15 տարուան ծառայութիւն ունի:

85% վճարուելիք գումարէն, եթէ 15էն վեր ծառայութիւն ունի:

**Գ. ՊԱՐԱԳԱՅ.-** *Մնտոկին յարած աշխատաւոր մը, եթէ անգործութեան մատնուի եւ պէտք ունենայ դրամի, կրնայ, եթէ առնուազն 3 տարիէ ի վեր յարած է Մնտոկին, իր հատուցումներուն հաշուոյն 3 ամսուան համապատասխան գումար ստանալ, ամէն ամիս 1/2 ամսական եւ այս՝ մէկ անգամ միայն:*

3 տարիէ աւելի Մնտոկին յարած աշխատաւոր մը, եթէ տուն

չինել ուզէ, կրնայ իր հատուցումի իրաւունքին կէսը քաշել Մնտուկէն, պայմանով սակայն, որ նախորդ յօդուածի տրամադրութեանն օգտուած չըլլայ:

Եթէ կարգ մը հաստատութիւններ հատուցումի գծով աւելի նպաստաւոր պայմաններ կ'ընծայեն աշխատաւորին, այս վերջինը իրաւունք ունի օգտուելու այդ առանձնաշնորհումներէն:

Մնտուկին յարած աշխատաւոր մը ո՛չ մէկ կապ ունի իր գործատիրոջ հետ իր հատուցումներու առընչութեամբ: Ան իր հատուցումի իրաւունքը կը ստանայ ուղղակի Մնտուկէն:

#### ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐՈՒ ՀԱՇՈՒՅՓԱԿԸ

Մնտուկը ինչպէ՞ս կը վճարէ օրինական պայմանները լրացնող աշխատաւորի մը հատուցումը:

Մնտուկը նախ կը ճշդէ, վերոյիշեալ բացատրութիւններուն հիման վրայ, աշխատաւորին հատուցումի իրաւունքը: Ապա կը գումարէ անոր հաշուոյն գանազան գործատէրերու կողմէ Մնտուկին վճարուած մասնավճարները:

Երկու պարագաներ կրնան ներկայանալ:

ա) Աշխատաւորին վերջին թոշակը բարձր ըլլալով իր նախորդ թոշակներէն, եթէ Մնտուկ հաւաքուած գումարը ենթակային պահանջէն վար ըլլայ, վերջին գործատէրն է որ պարտաւոր է վճարելու տարբերութիւնը որմէ կը գեղչուի, սակայն, այն տոկոսը (5%), որ աշխատաւորին հատուցումներու հաշուոյն Մնտուկ վճարուած գումարներէն գոյացած է:

բ) Եթէ աշխատաւորին վերջին թոշակը ցած է իր նախորդ տարիներու թոշակներէն, անոր կը վճարուի իր հաշուոյն հոն փոխանցուած հատուցումին բոլոր գումարները, որոնց վրայ կը բարդուի 5% տոկոս:

#### Գ) ԳՈՐԾԱՏԻՐՈՋ, ԱՇԽԱՏԱԻՈՐԻՆ ԵՒ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍՆՏՈՒԿԻՆ ՀԱՆԴԷՊ

Պետութեան կողմէ ճշդուած սակի մը հիման վրայ, գործատէրը Մնտուկին կը վճարէ ապահովագրութեան չորս պարագաներուն

անխտիր, իսկ գործաւորը եւ պետութիւնը կը վճարեն միայն հիւանդութեան եւ ծննդաբերութեան պարագային:

Առաւելագոյն թոշակը, գոր Մնտուկը նկատի կընայ ունենալ իր գանձումներուն համար, 750 լ. ոսկի է:

Թերավարժ աշխատաւորի մը պարագային, որ արհեստի կը վարժուի, որքան ալ քիչ ըլլայ իր թոշակը, եթէ նոյնիսկ բոլորովին ձրի աշխատի, գործատէրը կը պարտի Ապահովագրութեան Մնտուկին վճարել, հիմք ունենալով 50 լ. ոսկիի ամսաթոշակ՝ այդ թերավարժ գործաւորին համար:

Աշխատաւոր մը առաւելագոյն մինչեւ 20 տարեկան կընայ թերավարժ նկատուի, եթէ մինչ այդ աշխատաւորի նուագագոյն թոշակ չգանձէ:

1.- Ընտանեկան յատկացումներու պարագան

Ընտանեկան յատկացումներու պարագային, գործատէր մը պարտաւոր է Մնտուկին վճարել իր բոլոր պաշտօնէութեան վճարած թոշակներու գումարին 7,5%ը, եթէ նոյնիսկ անոնք ամուսնացած չեն: Օտարահպատակ աշխատաւորներու համար եւս գործատէրը պարտաւոր է վճարելու, թէեւ այս վերջինները չեն օգտուիր ընտանեկան յատկացումներէն:

Հաստատութիւն մը, որ տասէն աւելի աշխատաւորներ ունի, պարտաւոր է իր հաշիւները Մնտուկ ներկայացնել ամէն ամիս: Մնտուկին կողմէ պատրաստուած ցուցատախտակին վրայ կը յայտարարէ իր աշխատաւորներուն թիւը, անոնց վճարած օրավարձերուն կամ ամսաթոշակներուն գումարը եւ Մնտուկին իրաւունքը՝ 7½ առ հարիւր: Այս գումարէն կը գեղչէ ինչ որ ինք կը վճարէ, համաձայն Մնտուկին կողմէ ճշդուած սակերու, իր ամուսնացած աշխատաւորներուն ընտանեկան յատկացումները:

Եթէ հաստատութիւնը տասը հոգիէն վար թիւով աշխատաւորներ ունի, այդ պարագային, ան իր վճարումները կը կատարէ Մնտուկին երեք ամիսը անգամ մը: Մնտուկէն կը ստանայ վճարման տետրակ մը, որմէ ամէն ամիս թերթ մը կը փրցնէ ու կու տայ իր ամուսնացած աշխատաւորին, որպէսզի ան կարենայ Մնտուկէն գանձել իր ընտանեկան յատկացումները: Գործատէրը պարտաւոր է աշխատաւորին տուած այդ թերթիկին վրայ յիշատակելու անոր

Մնտուկ արձանագրութեան թիւը, լման ամիս մը աշխատած ըլլալու վկայութիւնը, եւ այլն:

Եթէ աշխատաւորը 16 տարեկանէն վեր դպրոց յաճախող տղայ ունի, գործատէրը անկէ կը պահանջէ դպրոցական վկայագիր եւ զայն կը փոխանցէ Մնտուկ:

Ամէն անգամ, որ աշխատաւորին ընտանեկան վիճակը փոփոխութեան ենթարկուի, ամուսնանալով, գաւակ ունենալով եւ կամ մահով, գործատէրը աշխատաւորէն կը պահանջէ համապատասխան պաշտօնական վկայագիր, զոր իր կարգին կը ներկայացնէ Մնտուկի սպասարկութեան:

Այն աշխատանոցը, որուն աշխատաւորներուն թիւը հինգէն վար է, դրամագլուխը 20 հազարը չէ անցած եւ ուր գործատէրը ձեռային աշխատանքով կը մասնակցի արտադրութեան, գործատէրը կը վճարէ փոխան 7,5%ի, միայն 5% վերոյիշեալ Մնտուկին:

2.- Հիւանդութեան եւ ծննդաբերութեան պարագան

Այս Մնտուկին կը վճարեն գործատէրը, աշխատաւորը եւ պետութիւնը:

Գործատէրը կը վճարէ աշխատաւորին թոշակին 5,5%ը, իսկ աշխատաւորը՝ 1,5 առ հարիւրը: Գործնականին մէջ սակայն, գործատէրը, ինքը կը վճարէ 7 առ հարիւր Մնտուկին եւ կը գեղջէ աշխատաւորին թոշակէն 1,5 առ հարիւր:

Պետութիւնը յանձնառու է վճարելու, ամէն տարի, այս նպատակներուն համար ծախսուած ընդհանուր գումարին 25 առ հարիւրը: Արդարեւ, սա միակ վճարումն է, որով պետութիւնը նիւթապէս կը մասնակցի Ընկերային Ապահովագրութեան Մնտուկի ծախսերուն:

3.- Վերջ ծառայութեան

Գործատէրը՝ աշխատաւորի հատուցումին հաշույն կը վճարէ Մնտուկին անոր թոշակին 8,5 առ հարիւրը: Եթէ աշխատաւորը 1965 Մայիս 1էն առաջ գործի էր արդէն եւ չէ յարած սնտուկին, ան իր հատուցումի իրաւունքը կը ստանայ ուղղակի գործատէրէն, համաձայն 1946ի աշխատանքի օրէնքին: Այս պարագային, գործատէրը Ընկերային Ապահովագրութեան Մնտուկին որեւէ վճարում չի կատարեր, այն ինչ որ կը վերաբերի անոր հատուցումին:

Ամէն անգամ, որ գործատէր մը նոր աշխատաւոր մը գործի առնէ, պարտաւոր է յաջորդ 10 օրերու ընթացքին զայն Մնտուկ յայտարարելու: Նոյնն է պարագան, երբ աշխատաւոր մը գործը լքէ եւ կամ, երբ գործատէր մը զայն օրինական պայմաններու մէջ գործէ արձակէ: Այս վերջին պարագային, եթէ աշխատաւորը մէկ տարիէ աւելի ծառայութիւն ունի, գործատէրը պարտաւոր է անոր մէկ ամսուան վճարեալ պայմանաժամ շնորհելու: Երբ ան 4 տարիէն աւելի ծառայութիւն ունի, այս պայմանաժամը երկու ամիս է:

60 տարեկանը անց աշխատաւորի մը հաշուոյն գործատէրը հատուցումներու Մնտուկին բան չի վճարեր: Այս յօդուածին նպատակն է դեռ աշխատաւորներուն առիթ ընծայել, որ աւելի դիւրութեամբ գործ ձարեն, երբ անգործ են եւ աշխատելու անհրաժեշտութիւնը կը զգան:

4.- Աշխատանքի արկածներու եւ արհեստի վերաբերեալ հիւանդութեանց պարագան

Մնտուկը տակաւին չսկսաւ աշխատաւորը ապահովագրել այս պարագաներուն: Համապատասխան Մնտուկին վճարողը միայն գործատէրը պիտի ըլլայ: Կը կարծուի, որ այդ գումարը աշխատաւորին թոշակին 3%ը ըլլայ միայն:

Ինչպէս երեւան կու գայ վերոյիշեալ տուեալներէն, Ընկերային Ապահովագրութեան գործադրութիւնը Լիբանանի մէջ այնքան ալ պարզ եւ հեշտ ձեւնարկ մը չէ: Անոր յարած են ներկայիս շուրջ 220 հազար աշխատաւորներ: Անոր պաշտօնէութեան թիւն է 820 եւ իր տրամադրութեան տակ ունի մօտաւորապէս 100 միլիոն Լ. ոսկի: Մօտ ատենէն, ան պիտի ապահովագրէ նաեւ երկրագործութեամբ զբաղող աշխատաւորները:

Եւրոպական երկիրներ տարիներ ճգնեցան, հսկայական օրէնսդրութիւն մշակեցին եւ տակաւին միշտ ալ ուսումնասիրութեան առարկայ հարցեր ի յայտ կու գան գործի ընթացքին:

Այսուհանդերձ, ան անհրաժեշտութիւն մըն էր: Ճիշդ է որ ան իսկական եւ բացարձակ ապահովագրութիւն մը չէ եւ կարելի չէ ընկերային եւ տնտեսական այս կառույցին մէջ մտածել անոր մասին: Պէտք չէ զայն շփոթել բարեսիրական հաստատութեան մը հետ եւ ոչ ալ պետական հանրօգուտ սպասարկութեանց հետ: Ընկերային Ա-



*պահովագրութիւնը գթութեան գործ մը չէ, ո՛չ ալ առեւտրական կոչում ունի:*

*Ինչպէս կ'ըսէ Փրանսացի մասնագէտ Ժազ Տոլպլէ (Սէֆիւրիթէ Սոսիալ, 1957), «ան աշխատաւորին վճարուելիք զանազան հատուցումներուն ընկերային դառնալն է»:*

*Աւելի պարզ խօսելով, ան կազմակերպութիւն մըն է, որուն շնորհիւ աշխատաւորը որոշ իրաւունքներու կը տիրանայ, այլապէս, եկամուտներու աւելի լաւ եւ արդար վերաբաշխումի ձեւ մըն է:*

*Լորտ Պիվրիճ, այս դրութեան ռահվիրաներէն մէկը, բնութագրելով ընկերային ապահովագրութեան նպատակը, կ'ըսէր. «Ան պէտք է անհետացնէ ֆաղափացիին կեանքէն թշուառութեան վիճակը, անոր ապահովելով ամէն վայրկեան բաւարար եկամուտ, որպէսզի ի վիճակի ըլլայ իր կարիքներուն մարդկայնօրէն գոհացում տալու»:*

*Ինչպէս որեւէ մեծ ձեռնարկի պարագային, անհրաժեշտ է սակայն, որ ան առողջ հիմերու վրայ դրուի, անոնց սպասարկութիւնները լաւ կազմակերպուին եւ արդիւնաւէտ աշխատանքի լծուին: Որպէսզի ան յաջողի, անհրաժեշտ է մանաւանդ, որ աշխատաւորը եւ գործատէրը, լիովին գիտակցելով իրենց փոխադարձ պարտաւորութիւններուն, անսակարկ ենթարկուին օրէնքի տրամադրութիւններուն:*

## ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ազատ տնտեսութիւնը լիբանանեան իրականութիւնը յատկանշող հիմնական երեւոյթներէն մէկն է: Իր ընկերային խառն կառույցը, հողին փոքրածաւալ ըլլալը, բնական հարստութեանց անբաւարարութիւնը եւ աշխարհագրական գիրքը այնպէս մը դասաւորած են այս երկիրը, որ իր պատմութեան ընթացքին, կարենալ ապրելու համար, միշտ ալ ուզած է ինքզինք ներմուծել միջազգային փոխանակութեանց ծիրին մէջ, ըլլան անոնք տնտեսական կամ մշակութային:

Այս իսկ պատճառով, հակառակ տնտեսապէս թերաճ երկիր մը ըլլալուն, ան նպաստաւոր պայմաններ կը ներկայացնէ անհատական ձեռներէցութեան ծաղկումին համար: Հետեւաբար, բլանաւորումը տակաւին անհանդուրժելի գաղափար մը կը թուի ըլլալ ներկայիս երկիրն տնտեսական հատուածին:

Այսուհանդերձ, մարդկային ընկերութեան յարատեւ զարգացումը, տնտեսական բարգաւաճման համար անհրաժեշտ նկատուած միջոցառումները, միջազգային յարաբերութեանց մէջ կառույցներու փոփոխութիւնը Լիբանանին կը պարտադրեն փոփոխութիւններ ի՛ր իսկ ընկերային եւ տնտեսական կառույցներուն մէջ եւ պատշաճեցում՝ ընդհանուր հոլովոյթի կշռոյթին:

Այս պատշաճեցումը կ'ենթադրէ, որ պետութիւնը ինքզինք պատասխանատու զգայ ժողովուրդին զարգացումին եւ առ այդ՝ ձեռնարկէ իրատես գործունէութեան մը, հիմնուած տնտեսական եւ ընկերային գիտակից քաղաքականութեան մը վրայ:

Լիբանան իր տնտեսական ու մշակութային զարգացումը կը պարտի գլխաւորաբար անհատական ձեռնարկներու կենսունակութեան:

Տնտեսական մարզին մէջ, առեւտուրի եւ ծառայութեանց բա-

ժինը երկրին տնտեսութեան կարեւոր մէկ մասը կը ներկայացնէ եւ կ'ապահովէ ազգային եկամուտներուն 60-70 առ հարիւրը:

Տնտեսութիւնը, այս երկրին մէջ, իրերու բնական դասաւորումով եւ իր բացակայութեան պատասխանատուներու գիտակից եւ ազդու միջամտութեան, չէր կրնար այլ կերպ ընթանալ: Արդարեւ, երկրին մշակելի հողերուն տարածութիւնը, շատ սահմանափակ է հողագործութիւնը զարգացնելու համար եւ ներքին առեւտրական շուկան նոյնպէս շատ նեղ՝ ճարտարարուեստը զարգացնելու համար:

Տնտեսական այս անհաւասարակչուութիւնը, կեանքի մակարդակի տեսակէտէն, անխուսափելիօրէն յառաջ կը բերէ ընկերային անհաւասարակչուութիւն: Արդարեւ, տրուած ըլլալով հողերու պատիկ շերտաւորումները, ժողովուրդին աճը եւ հողմշակութեան համար տակաւին գործածուած նախնական միջոցները, բնակչութեան հողամշակութեամբ զբաղող մասը (աշխատող ձեռքերուն 49-50%) համեմատաբար շատ ակելի ցած եկամուտներ կ'ապահովէ՝ քան մնացեալ մասը: Պարզ խօսելով, կեանքի մակարդակի զգալի տարբերութիւն կայ հողամշակութեամբ զբաղող ժողովուրդին որ բնակչութեան կէսը կը հաշուէ եւ սակայն ազգային եկամուտներուն միայն 15% կ'ապահովէ եւ քաղաքներու մէջ տեղաւորուած ժողովուրդին միջեւ:

Այս անհաւասարակչուութիւնը հետզհետէ ակելի մտահոգիչ երեւոյթ կը ստանայ անոր համար՝ որ քաղաքներու բնակչութեան եւ հողամշակութեամբ զբաղող ժողովուրդին յարաբերութիւնները զարգանալով, այս վերջիններուն կեանքի պահանջները կ'աճին, երբ իրենց եկամուտները համեմատաբար չեն ակելցած:

Միւս կողմէ, Լիբանանի ժողովուրդը կ'աճի 2.8-2.9% համեմատութեամբ: Այս պարագան, որեւէ թերաճ երկրի նման, Լիբանանի համար ալ լուրջ հարցեր կը ստեղծէ: Հարկ է մտածել, թէ ի՞նչ կերպով պէտք է ժողովուրդին աճէն յառաջ եկող, ամէն տարի, 15.000 նոր ձեռքերու գործ ապահովել: Լիբանանեան տնտեսութեան զարգացման հեռանկարները այս ուղղութեամբ լաւատեսութիւն չեն ներշնչեր: Պէտք չէ նոյնպէս մոռնալ, որ ժողովուրդին ուսման մակարդակին բարձրացումը, ինչպէս նաեւ անոր յարաբերութիւնները արտաքին աշխարհի հետ, գայն ակելի պահանջկոտ կը դարձնեն իր

սեփական կեանքը կազմակերպելու տեսակէտէն: նկատի ունենալով այս բոլորը, եթէ լիբանանեան տնտեսութիւնը նոր հիմերու վրայ չդրուի, մէկդի դրած քաղաքական ազդակները, տնտեսական ներկայ պայմանները ինքնին բաւարար են գաղթ յառաջացնելու համար, սկսելով նախ ուսեալ տարրերէն:

Վերոյիշեալ տուեալները նոյն հետեւանքը կրնան ունենալ որեւէ երկրի մէջ, այն տարբերութեամբ սակայն, որ այդ գաղթը եթէ մեր երկրին մէջ կ'ըլլայ միայն արտագաղթով: Պետութիւնը ըստ երեւոյթին, կ'ուզէ զբաղիլ այս բոլոր հարցերով, որոնք հետեւանք են երկրին տնտեսական եւ ընկերային հոլովոյթին: 1954ին ստեղծուեցաւ Բլանի խորհուրդ մը, որուն տարիներ ետք հետեւեցաւ Բլանի նախարարութիւնը: Երկրին տնտեսութիւնը ապահով հիմերու վրայ դնելու համար, Բլանի խորհուրդը 1958ին պատրաստեց տասնամեայ ծրագիր մը: Այս ձեռնարկին իրագործման համար ան դիմեց օտար մասնագէտներու խմբակցութեան «Mission IRFED», որ պիտի օգնէր իրեն՝ ձգելու եւ որդեգրելու տնտեսական եւ ընկերային զարգացումի քաղաքականութիւն մը եւ անոր յատուկ բլանաւորում: Այս մասնագէտները երկրին տնտեսական պահանջներն ու կարելիութիւնները հանգամանօրէն ուսումնասիրելէ ետք, պետութեան ներկայացուցին հնգամեայ ծրագիր մը 1964-68 շրջանին համար:

Այս առաջին ծրագրին նպատակն էր համադրել պետական սպասարկութիւնները, համակարգել անոնց գործունէութիւնը եւ ապա ներդաշնակել զանոնք անհատական ձեռնարկներու հետ, այլ խօսքով՝ գործակցութիւն ստեղծել պետական եւ անհատական հատուածներուն միջեւ, գիտական ըմբռնումով:

Սակայն, երբ պետութիւնը կ'ուզէ անհատական ձեռնարկներուն հետ համախորհուրդ երկրին տնտեսութիւնը բլանաւորել, անհրաժեշտ է որ ինքը կարենայ հակազդել անոնց որդեգրած տնտեսական միակողմանի ուղղութիւններուն: Այդ ընելու համար, անհրաժեշտ է որ ինք եւս հական դեր մը ունենայ երկրին տնտեսական կեանքին մէջ, այլապէս այդ գործակցութիւնը կը դառնայ լոկ խաբկանք:

Տնտեսապէս զարգացած եւ հարուստ երկիրներուն մէջ, ուր գոյութիւն ունին կամակերպուած դրամատիրութիւն, գիտական

հասկացողութեամբ պատրաստուած մասնագէտներ, ըլլան անոնք պետական թէ անհատական սպասարկութեանց մէջ, համագործակցութիւնը կրնայ իրապէս արդիւնաւէտ հետեւանքներ ունենալ երկրին տնտեսական քաղաքականութիւնը ճշդելու եւ անոր բլանաւորումը պատրաստելու համար:

Լիբանանը, նկատի ունենալով իր տնտեսական յատուկ պայմանները, իր ժողովուրդին ընկերային փոխհարաբերութիւնը, չի կրնար ընդունիլ կեղծոնացեալ պարտադիր պետական բլանաւորում, եթէ այդ չէ պատրաստուած մեծ ճկունութեամբ՝ համագործակցաբար անհատական ձեռնարկներու մասնագէտ ներկայացուցիչներուն:

Կարելի չէ մոռնալ, որ արտաքին առեւտուրով եւ ելեւմտական ճարպիկ գործունէութեամբ, անհատական ձեռնարկները մղիչ ուժը դարձան Լիբանանի տնտեսական վերելքին: Ինչպէս նաեւ կարելի չէ նկատի չունենալ պետութեան բերած նպաստը այդ ուղղութեամբ: Ներքին Ֆիզիքական կարոյցի եւ սարքաւորման աշխատանքներ (եւլետրակայաններ, ճամբաներ, ջրուղիներ, նաւահանգիստ, օդակայան), պետական հիմնարկներ (պետական դրամատուն, ընկերային ապահովագրութիւն) եւ այլն...:

Որպէսզի պետութիւնը կարենայ իրապէս գործակցիլ անհատական ձեռնարկներու հետ եւ հակազդել ի հարկին անոնց, անհրաժեշտ է որ ան դրական կերպով մաս կազմէ երկրին տնտեսական դեկավարութեան: Այդ կրնայ ընել այն ատեն, երբ իր գործօն մասնակցութիւնը կը բերէ արդիւնաբերական մեծ ձեռնարկներուն, շահաբաժինի դրութեամբ:

Պետութեան դերը պէտք է ըլլայ որդեգրել տնտեսական քաղաքականութիւն մը՝ համախորհուրդ անհատական ձեռնարկներու, եւ բլանաւորել զայն: Բլանաւորման աշխատանքներուն մէջ ան պէտք է նկատի ունենայ ամբողջ շրջանի տնտեսական եւ ընկերային հոլովոյթը: Լիբանանեան տնտեսութիւնը պէտք է կապել շրջանային տնտեսութեան: Այս իրատես ըմբռնումը պէտք է հիմք ծառայէ տնտեսական քաղաքականութեան:

Եթէ կ'ուզենք գոնէ մասամբ զարգացած տարրերու արտագաղթը մեղմել երկրին մէջ եւ պահել տնտեսական բարգաւաճման նախորդ տարիներու համեմատութիւնը, անհրաժեշտ է որ այս երկրին

*տնտեսութիւնը գարգանայ ճարտարարուեստի գծով, պահելով  
հանդերձ իր աւանդական կոչումը՝ առեւտուրի եւ ծառայութեանց:*

*Պէտք է արտադրել այն առարկաները, որոնց պէտք ունին ո՛չ  
միայն Լիբանանը, այլ մեզ շրջապատող այլ երկիրներ, ըլլան անոնք  
միջին արեւելեան կամ արեւմտեան:*

*Պետութիւնը պարտաւոր է իր մասնագէտներով հետեւիլ այդ  
երկիրներու ընկերային եւ տնտեսական հոլովոյթին եւ, անհատա-  
կան ձեռնարկներու հետ համախորհուրդ, վերակազմել երկրին  
տնտեսական կառոյցը՝ համաձայն իր որդեգրած տնտեսական քա-  
ղաքականութեան եւ ճշդած բլանին:*

## ԸՆԿԵՐԱՅԻՆ ԱԶԴԱԿՆԵՐՈՒ ԴԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԳԱԲԱՃՄԱՆ ՄԷՋ

20րդ դարու այս երկրորդ կիսուն վարկերու եւ դրամագլուխներու հարցը հիմնական մտահոգութեան նիւթ կը կազմէ տնտեսագէտներուն, ըլլան անոնք թերաճ երկիրներու եւ կամ տնտեսապէս զարգացած երկիրներու մէջ:

Եթէ տնտեսապէս զարգացած երկիրներուն համար հարցը կը կայանայ աճման չափանիշը եւ հետեւաբար արտադրութեան քանակը առնուազն նոյնը պահելու մէջ, թերաճ երկիրներուն համար ան բոլորովին այլ երեւոյթ կը ներկայացնէ: Այս վերջիններուն համար էականը նախ երկրին տնտեսութիւնը զարգացումի եւ բարգաւաճման ուղիին մէջ դնելն է:

Արդարեւ, ինչպէս կ'ըսէ այս հարցերու մասնագէտներէն Վելլաս, որպէսզի երկիր մը կարենայ կուրծք տալ իր տեւապէս աճող ժողովուրդին ընկերային պահանջներուն եւ ապահովել անոր գործ, պէտք է որ իր տնտեսութեան զարկ տայ, որպէսզի այս վերջինը բարգաւաճի ամէն տարի 5-10% համեմատութեան:

Տնտեսական բարգաւաճում առաջացնելու բազմաթիւ եղանակներ կան, որոնց սակայն բոլորն ալ կը ձգտին մէկ նպատակակէտի դրամագլուխ գոյացնել զանազան ձեւի խնայողութիւններով եւ զայն շահարկել՝ յատկացնելով արդար դրութեան:

Պետութիւնը կրնայ անուղղակիօրէն միջամտել ժողովուրդի խնայողութեան, զանազան հաստատութիւններու խողովակով, յատկացնելու համար արտադրական ձեռնարկներու, ինչպէս նաեւ կրնայ, թերաճ երկիրներու պարագային, ուղղակի միջամտել, ինքը դրամագլուխ գոյացնելով եւ զայն յատկացնելով երկրին նիւթական եւ ֆիզիքական սարքաւորումներուն (infrastructure materielle) եւ ընկերային սարքաւորումներուն (infrastructure sociale) բարելաւման (ձամբաներու շինութիւն, էլեկտրական ցանցի տարածում,

չրաբաշխութիւն, հիւանդանոցներու կառուցում, ուսման եւ մասնագիտութեան տարածում, նոր դպրոցներու բացում եւ այլն...):

Այս պարագային ան կրնայ աւելցնել դրամի քանակը, ինչ որ յառաջ կը բերէ դրամի արժեզրկում, կրնայ պարտքեր կնքել, ինչ որ պետութեան ելեւմտական սնտուկը կը թողու պարտքի տակ եւ կամ հարկային յատուկ քաղաքականութեամբ տուրքերը բարձրացնել, ինչ որ մենք կը տեսնենք ներկայիս Լիբանանի մէջ:

Բոլոր տնտեսագէտներն ալ համակարծիք չեն որ դրամի քանակին յաւելումը, նկատի ունենալով անոր յառաջ բերած դրամական արժեզրկումը, անհրաժեշտ միջոց մը ըլլայ ի սպաս տնտեսական բարգաւաճման:

Այսպէս, Հիկինս, այս ուղղութեամբ իր տարած աշխատանքներէն կ'եզրակացնէ, որ երբ երկրի մը մէջ դրամական տարեկան արժեզրկումը աւելի քան 15% եղած է, անոր բարգաւաճումը եղած է միայն 1,5 առ հարիւր (ինչպէս՝ Արժանթին, Ինտոնեզիա, Գոլոմպիա): Այն երկիրները, որոնց դրամական արժեզրկումը եղած է 7-10%, բարգաւաճումը եղած է 1,7 առ հարիւր, այն երկիրները, որոնց արժեզրկումը եղած է 3-7%, բարգաւաճումը եղած է 2,8 առ հարիւր (Ալճերիա, Մարօք), իսկ այն երկիրները, որոնց արժեզրկումը եղած է 3% միայն, աճումը եղած է 1,5%: Կ'եզրակացնէ, ըսելով որ որոշ արժեզրկում մը 3-7 առ հարիւր համեմատութեամբ օգտակար կը նկատուի տնտեսական բարգաւաճման:

Սակայն թիւն Վայ, ուրիշ մասնագէտ մը, այլ եզրակացութիւններու կը հասնի:

Անոր համար 10%էն վեր արժեզրկում եղող երկիրներու համար բարգաւաճումը 3% է: 5-10 առ հարիւր ըլլալու պարագային, բարգաւաճումը 2,5% է, իսկ արժեզրկումը 5 առ հարիւրէն վար ըլլալու պարագային, բարգաւաճումը 4,5% է:

Իսկ Տորրանս, այլ մասնագէտ մը կ'ըսէ, թէ այս տեսութիւնները բացարձակ չեն կրնար ըլլալ, կախում ունին խնդրոյ առարկայ երկիրներէն:

Այսպէս, Պրագիլիա կը բարգաւաճի իր դրամական արժեզրկումով միատեղ, իսկ Ինտոնեզիայի դրամը կ'արժեզրկուի առանց երկրին բարգաւաճման:

Պետութեան ուղղակի միջամտութեան երկրորդ պարագան այն



է, երբ ան փոխառութեան կը դիմէ: Այդ փոխառութիւնը կրնայ ըլլալ արտաքին, եթէ ան կը դիմէ օտար պետութեան եւ կամ միջազգային համապատասխան կազմակերպութեան եւ կամ ներքին, երբ սնտուկի դրամանիշներ (bons de trésor) հրապարակ կը հանէ:

Այս եւս երկու ձեւ ունի: Կամ այն է որ այդ դրամանիշերը պարտադրաբար կու տայ, փոխան դրամի եւ որոշ տոկոսի ընկերութիւններու եւ կամ այն է՝ որ գայն ժողովուրդի տրամադրութեան տակ կը դնէ:

Այս բոլոր ձեւերն ալ կրնան օգտակար ըլլալ, եթէ պետութիւնը օժտուած է առողջ սպասարկութիւններով եւ վարչութեամբ, այլապէս կը դառնայ աղիտաբեր:

Արդարեւ, անհրաժեշտ է որ պետութիւնը, երբ դրամի յաւելումով եւ կամ դրամանիշերու դրութեամբ արժեզրկում յառաջ բերած է երկրին մէջ, կարենայ տէր կանգնիլ կացութեան եւ կասեցնել գայն պէտք եղած պարագային:

Ըլլա՛յ անհատական ձեռներէցութեամբ, ըլլա՛յ պետութեան ուղղակի միջամտութեամբ գոյացած դրամագլուխը ու անոր յատկացումը արտադրական ծրագիրներու, որքան ալ ընդունուած ըլլան իբրեւ անհրաժեշտ միջոցներ տնտեսական բարգաւաճման համար, առանձինն արդիւնաւէտ չեն:

Երկար ատեն, տնտեսագէտները կը կարծէին ու կը հաւատային, թէ ընկերային զարգացումը եւ, հետեւաբար, ժողովուրդին յարաբերական բարօրութիւնը կապուած են հետեւեալ ֆորմիւլին.

Դրամագուլուխի եւ վարկերու յատկացում + աշխատանք = տնտեսական բարգաւաճում + ընկերային զարգացում:

Ներկայիս կ'անդրադառնան, փորձառութեան լոյսին տակ, որ կան նաեւ ընկերային ազդակներ, որոնց շնորհիւ դրամագլուխն ու աշխատանքը աւելի օգտաշատ հետեւանքներ կրնան ունենալ եւ կամ որոնց անտեսումով՝ տնտեսական զարգացման ծրագիրները կրնան ձախող արդիւնքներու յանգիլ:

Այս հարցերու մասնագէտներէն Միւնդ կ'ըսէ, թէ շարժման մէջ պէտք է դնել երկրին մտաւորական եւ զարգացած ուժը: Տնտեսական աճման որեւէ ծրագրի յաջող իրագործում կ'ենթադրէ շատ մը որակական ազդակներու գոյութիւնը, ինչպէս՝ պետական պաշտօնէութեան պարկեշտութիւն եւ հասկացողութիւն, ժողովուրդի կր-

թական մակարդակի բարձրացում, անոր Ֆիզիքական եւ առողջապահական պայմաններուն բարելաւում, երկրին քաղաքական եւ դրամական վիճակին կայունութիւն:

Սա կը ցուցնէ, թէ որքան շեշտուած է յարաբերականութիւնը տնտեսական բարգաւաճման եւ ընկերային զարգացման: Այս վերջինը պէտք չէ նկատուի տնտեսական բարգաւաճման իբրեւ տրամաբանական լոկ մէկ հետեւանք, այլ՝ գայն պայմանաւորող գլխաւոր մէկ ազդակ:

Արդարեւ, արտադրութիւնը անխուսափելիօրէն պիտի աւելնայ եթէ տրամադրուած դրամագլուխը շահարկելու կոչուող անձերը ըլլան գիտակից, եթէ աշխատանքը տանող ձեռքերը ըլլան մասնագէտ: Առաւել եւս աճումը պիտի զարգանայ, եթէ ստեղծուին աշխատանքի նպաստաւոր պայմաններ, առողջապահական եւ սննդական գետնի վրայ:

Այսպէս, ՄԱԿի մասնագէտներէն մին՝ Միրտալ, իր տարեկան տեղեկագրին մէջ կ'ըսէ, եթէ մալարիայի դէմ եղած պայքարը, Ֆիլիպեան կղզիներու մէջ աշակերտութեան բացակայութիւնը դպրոցներէն՝ 40-50%էն վերադարձուցած է 3%ի: Իսկ արդիւնաբերութեան մէջ, այդ բացակայութիւնը որ 35% էր, եղած է միայն 4%: Նոյնպէս, ամբիկեան բազմաթիւ երկիրներու մէջ Տի-Տի-Թի-ի սրսկումը առողջապահական աւելի բարւոք պայմաններ ստեղծած է եւ գործաւորներուն բացակայութիւնը 25-35%էն իջած է 2-3%ի:

Եթէ այս բաղդատութիւնները վերածենք նիւթական արտադրատուութեան, պիտի տեսնենք որ, օրինակի համար, Բերուի մէջ Տի-Տի-Թի-ի սրսկումի համար թէպէտեւ ծախսուած է մէկ միլիոն 400 հազար տոլար, սակայն ժողովուրդին գործէ բացակայութեան նուազումով ան յառաջ բերած է 27 միլիոն տոլարի յաւելեալ գումար:

Այլ փորձառութիւններ ցոյց տուած են, որ երբ աշխատաւորին տրուի բաւարար օրավարձ, երբ անոր բնակարանային դժուարութիւնները հարթուին, անոր արտադրական կարողութիւնը զգալապէս կը բարձրանայ:

Կան նաեւ բազմաթիւ այլ դժուարութիւններ, որոնք կը խափանեն տնտեսական բարգաւաճման ծրագիրներուն առողջ գործարդութիւնը եւ որոնք յառաջ կու գան ժողովուրդի մտայնութենէն,

եւ ականդուլթիւններուն ու սովորութիւններուն կառչած մնալէն եւ մանաւանդ իր կրաւորական, անհաղորդ եւ բացասական դիրքաւորումէն՝ զարգացումի եւ բարգաւաճման վերաբերեալ արդիական գաղափարներու հանդէպ:

Այս դժուարութիւնները կ'անհետանան ժողովուրդին զարգացումով: Պետութիւնը կը պարտի, առ այդ, առնուազն նախակրթութիւնը պարտաւորիչ եւ ճրի դարձնել թերաճ երկիրներուն մէջ: Ան կը պարտի, նոյնպէս, բոլոր գաւառները ղրկել ընկերային հարցերու յատուկ յանձնախումբեր, որոնք ժողովուրդին հետ շփման մէջ մտնելով՝ գայն կը համոզեն արտադրութեան նոր ձեւերու կիրարկման օգտակարութեան մասին եւ կը փոխեն անոր հնամենի մտայնութիւնը:

Ընկերային այս յանձնախումբերուն աշխատանքին ձեւերը բազմաթիւ են, սակայն բոլորն ալ կը ձգտին նոյն նպատակին վերցնել նախապաշարումները, հաւատք ներշնչել աշխատաւորին իր ապագային նկատմամբ եւ գայն դարձնել կենդանի գործունեայ տարր եւ ոչ թէ կրաւորական մարդ՝ հանդիսատեսի դիրքին մէջ:

Որպէսզի տնտեսական բարգաւաճման նուիրուած ծրագիրներ յաջողութեամբ պսակուին, անհրաժեշտ եւ էական է, որ ընկերային հիմնական աշխատանքներ տարուին նախքան այդ ծրագիրներու կիրարկումը:

Ընկերային աշխատանքներուն համար տրամադրուած վարկերը կորսուած գումարներ չեն, քանի որ ասոր անդրադարձը մենք կը գտնենք տնտեսական համեմատաբար աւելի բարգաւաճ արդիւնքներու մէջ: Այդ պարագային է, որ եկամտուններու արդար վերաբաշխումով, տուրքերու տրամաբանական, ընկերային մէկ գրութեամբ, ժողովուրդին տնտեսական վիճակը կը բարձրանայ ու կը ձգտի բարօրութեան:

Ընկերային ազդակներու դերը զարգացման մէջ այնքան հիմնական դարձած կ'երեւայ ներկայիս, որ բազմաթիւ մասնագէտներ հարցին այս երեւոյթներու ուսումնասիրութեան լծուած են՝ յառաջ բերելով նոր թեքնիքներ, որոնց մասին կ'անդրադառնանք ուրիշ առթիւ: Այսուհետեւ, ընկերայինն ու տնտեսականը իրարու հետ շատ սերտ կապեր ունեցող հարցեր են եւ կարելի չէ մէկուն մասին խօսիլ առանց անդրադառնալու միւսին:

## ՈՒՂԵՂՆԵՐՈՒ ԱՐՏԱԳԱՂԹԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՐԱԳԱՆ

Մարդոց գաղթելու սովորութիւնը այնքան հին է, որքան մարդկութեան պատմութիւնը: Մարդիկ միշտ տեղափոխուած են: Բնակչութեան ընկերային եւ տնտեսական տազնապները եւ քաղաքական վերիվայրումներն ու աննպաստ պայմանները մարդիկը մղած են տեղափոխուելու, գաղթելու նիւթապէս աւելի բարգաւաճ եւ քաղաքականապէս աւելի ապահով վայրեր: Վերջին դարերջրջանի փոխադրական միջոցներուն ընծայած դիւրութիւնները մեծապէս նպաստեցին այդ տեղափոխութեանց:

Մեզ հետաքրքրող նիւթը, սակայն, մարդոց եւ ժողովուրդներու գաղթին պատմութիւնը չէ, այլ ուսումնասիրութիւնը վերջին 25 տարիներու ընթացքին մարդկութեան պատմութեան մէջ երեւան եկած նոր երեւոյթի մը: Աշխարհի բազմաթիւ երկիրներէն՝ գիտնականներու, մասնագէտներու եւ մտաւորականներու հոյեր անվերջ կը տեղափոխուին: Անոնք կը լքեն իրենց երկիրը եւ կ'երթան հաստատուելու աւելի բարգաւաճ երկիրներ: Թէեւ այս գաղթը սկիզբը աննշան մնաց, սակայն, ան մտահոգիչ դարձաւ, երբ ճշդուեցաւ ՄԱԿի գրասենեակներուն աշխատանքով, անվերադարձ մեկնող մասնագէտներուն պատկառելի թիւը եւ անոր ահաւոր հետեւանքները:

Արդարեւ բոլոր թերաճ երկիրներն ալ հետզհետէ կ'անդրադառնան, որ տնտեսական եւ ընկերային զարգացման համար էական է ունենալ մարդկային որակեալ ղրամագլուխ: Ան նախ անհրաժեշտ է՝ երկրին բնական եւ մարդկային հարստութիւնները կարենալ լաւագոյն շահագործելու համար: Ան անհրաժեշտ է նաեւ օտար պետութիւններէն ստացուած տնտեսական եւ էլեւմտական նպաստները արդիւնաւոր կերպով օգտագործելու համար: Անոնք կը գիտակցին նոյնպէս այն իրողութեան, որ ոեւէ մարդկային հաւաքականութիւն, ժողովուրդ կամ երկիր, կարենալ ապրելու եւ զարգանա-

լու համար, պէտք ունի որոշ չափով մարդկային որակեալ դրամագլուխի, որուն պակասով՝ ան կը կորսնցնէ իր կենսունակութիւնը, ամլութեան կը դատապարտուի եւ ապա կը փճանայ:

Մասնագէտներու մեկնումով թերաճ երկիրներու աստիճանական բարձրացումը դէպի տնտեսական զարգացում կը կաղայ, եւ հետզհետէ կը խորանայ այն խրամատը, որ գիրենք կը բաժնէ զարգացումի մէջ գտնուող այլ երկիրներէն:

### **ԻՆՉՊԷՄ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՆԱՅ ՇԱՐԺՈՒՄԸ**

*Ըստ ՄԱԿի վիճակագրութեանց*

1) Կարեւոր թիւով մասնագէտներ կը գաղթեն, ամէն տարի, թերաճ երկիրներէն դէպի տնտեսապէս զարգացած երկիրներ:

2) Ամէն տեղ, մեկնողներուն մէջ տիրական թիւ կը կազմեն բժիշկները, հիւանդապահուհիները, գիտնականները եւ այլ մասնագէտներ:

3) Գաղթելու ձգտում մը կայ միշտ համալսարանական զարգացած տարրերու մօտ:

4) Եւրոպայէն Ամերիկա մեկնողներուն թիւը քիչ է՝ սակայն, ստուար է թիւը անոնց, որոնք կը մեկնին թերաճ երկիրներէն դէպի Ամերիկա, Ֆրանսա, Գերմանիա:

5) Այն երկիրները, ուրկէ համալսարանական զարգացած տարրերը կը մեկնին, գլխաւորաբար կը ներկայացնեն Չինաստանը, Քորէան, Իրանը, Հնդկաստանը, Միջին Արեւելեան երկիրները, Թուրքիան եւ Յունաստանը:

6) Ուսման համար Ամերիկա մեկնողներուն 40%ը հոն կը մնայ: Ըստ Տոքթ. Շարլ Թիտի ուսումնասիրութեան, գաղթողներուն 25%ը միայն կը վերադառնայ:

### **ՈՐՈՂՔ ԵՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԱՅՍ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ**

Այս հարցին աւընչութեամբ, Փրոֆ. Քաննասան, իր 1968ին հրատարակած գրքին մէջ կ'ըսէ. «Այն հոսանքը, որ կը տանի մասնագէտները աղքատ երկիրներէն դէպի հարուստ երկիրներ, ցոյց կու տայ պարզապէս առաջիններուն տնտեսապէս յետամնաց ըլլալը՝

բաղադրամասեր միասնորոշում: Հետեւաբար, ան մասնագէտներու արտագաղթը կը վերագրէ խնդրոյ առարկայ երկրին տնտեսապէս աղքատ ըլլալուն:

Ա.-- Արտաքին պատճառներ.-- Բոլորիս համար ալ յստակ երեւոյթ մըն է, որ տնտեսապէս զարգացած եւ հարուստ երկիրները իրենց կը քաշեն թերաճ երկիրներու մտաւորական ընտրանին: Ասիկա առաջ կու գայ՝

1) Տնտեսապէս բարգաւաճ երկիրներու համալսարաններու անբաւարարութենէն: Արդարեւ, հոն գտնուող կրթական բարձր հաստատութիւնները ի վիճակի չեն իրենց սեփական միջոցներով ապահովելու երկրին այն մասնագէտները, որոնց պէտք ունի ան:

Հիւսիսային Ամերիկան, օրինակի համար, իր բոլոր համալսարաններով, կու տայ տարեկան 8000 բժիշկ, երբ երկիրը պէտք ունի 12 հազարի:

Անգլիան, իր կարգին, բժշկական անձնակազմի պահանջին 1-3ը կ'ապահովէ դուրսէն ներգաղթող բժիշկներով:

Ամերիկայի աշխատանքային ուսումնասիրութեանց յատկացումած պետական գրասենեակը կը նախատեսէ, որ 1975էն սկսեալ Ամերիկան պիտի ստիպուի ընդունիլ տարեկան 40 հազար մասնագէտներ, որոնց վստահաբար 20 հազարը թերաճ երկիրներէն:

Միւս կողմէ, Ամերիկայի գիտական հետազօտութեանց մեծ կեդրոնները, որոնք կ'աշխատին շնորհիւ պետական վարկերու, պէտք ունին միշտ աւելի մեծ թիւով գիտնականներու: Թերաճ երկիրներու գիտնականները նկատի ունենալով առաջարկուած պայմանները կը լքեն իրենց երկիրը:

2) Ներգաղթի քաղաքականութիւն մը.- Ջարգացած երկիրները իրենց տնտեսութիւնը զարգացնելու համար, մեծ կարեւորութիւն կու տան օտար մասնագէտներու ներգաղթին: Այսպէս՝ Գանատայի ներգաղթի նախարարը, իր «Ճերմակ գրքին» մէջ (1968), կը յայտարարէ. «Ներկայիս Գանատայի ճարտարարուեստական տնտեսութիւնը, աշխատանքի համար, կարեւորութիւն կու տայ զարգացած եւ մասնագէտ անձերու: Այն մեծ ծախսերը, զորս մենք պէտք է ընէինք մասնագէտներ պատրաստելու համար, կը մնան խնայուած, երբ զանոնք բերենք արտասահմանէն»:

*Ամերիկայի արտաքին գործոց նախարարը, 1963ին, ներգաղթի օրհնքներուն ուսումնասիրութեան առիթով յայտարարած է. «Լա կազմակերպուած ներգաղթը կրնա՞նք նկատել իբրեւ ազգային եկամուտի մեծագոյն աղբիւր...»:*

*Տնտեսապէս բարգաւաճ երկիրներու հետապնդած ներգաղթի վերոյիշեալ քաղաքականութիւնը, անկասկած իր դերը ունի թերաճ երկիրներու մասնագէտներու մեկնումին մէջ:*

*Բ.- Ներքին պատճառներ.- Բոլոր ներքին պատճառները կապ ունին թերաճ երկիրներու տնտեսական աղքատութեան հետ: Պիտի խմբենք զանոնք երեք բաժիններու մէջ:*

*1.- Կրթութիւնը եւ ուսումը.- Թերաճ երկիրներու մէջ, առհասարակ ուսանողներուն տրուած ուսումը չի համապատասխաներ անոնց պահանջին: Հոն՝ համալսարաններու թիւը կը բազմապատկեն՝ ազգային արժանապատուութեան նկատմով, եւ անոնցմէ դուրս եկած մեծ թիւով մասնագէտներ կը ստիպուին գաղթել, տրուած ըլլալով, որ երկրին ընկերային եւ տնտեսական զարգացումը նոյն համեմատութեամբ չէ աճած: Ասոր պէտք է աւելցնել նոյնպէս սխալ ուղղութիւն մը: Վարչական եւ պետական պաշտօններու համար կը պատրաստուին մեծ թիւով համալսարանականներ՝ երբ երկիրը պէտք չունի անոնց, այլ պէտք ունի գործնական գիտութեանց մասնագէտներու:*

*Օրինակ մը տալու համար՝ յիշենք Լատին Ամերիկայի պարագան, ուր 600 հազար համալսարանական պատրաստութեամբ մարդոց մէջ՝ 3%ը միայն կը զբաղին երկրագործութեամբ եւ գիւղատնտեսութեամբ, երբ աշխատաւորութեան 46%ը կը պարապի երկրագործութեամբ: (Տեսնել ՄԱԿի ընդհանուր քարտուղարին տեղեկագիրը):*

*Ուրեմն համալսարանական մասնագիտութիւն մը կայ. որուն արտադրութիւնը բաւարար չէ, իսկ այլ արտադրութիւն մը կայ, որ անհրաժեշտ չէ:*

*Լեզուն, իր կարգին, կը նպաստէ ուղեղներու արտագաղթին: Բոլոր գաղթողները քաջածանօթ են՝ կամ անգլերէնին եւ կամ ֆրանսերէնին:*

Արտասահման ուսում ստացող երիտասարդութեան 40%ը չի վերադառնար: Այս կացութեան կը նպաստեն հետեւեալ պատճառները.

ա) Ուսումը որքան երկար միջոցի վրայ տարածուի արտասահմանի մէջ, այնքան կ'աւելնայ հոն մնալու հաւանականութիւնը:

բ) Որքան ենթակային ուսանած երկիրը հարուստ ըլլայ, այնքան մեծ կ'ըլլայ անոր գրաւչութիւնը:

գ) Զարգացած երկիրներուն մէջ ուսանողին ստացած ուսումը ներդաշնակ է երկրին պահանջներուն հետ: Ան համապատասխան գործ կը գտնէ իր ընտրած որեւէ ճիւղին համար:

2.- Աշխատանքի հեռանկարները եւ եկամուտը.-

Երբ երկրի մը մէջ, որոշ ճիւղերու համար մասնագէտներու թիւը աւելի է, քան պահանջուածը, անգործ մնացողները բնականաբար գաղթելու մասին պիտի մտածեն:

Թերաճ երկիրներու մէջ աշխատանքի պահանջները յստակ կերպով ժողովուրդի սեփականութիւն չեն դառնար: Բարեկամներու եւ ծանօթներու միջամտութեամբ է, որ մարդիկ յաճախ գործի կը մտնեն: Թէեւ աշխատանքի մասնաւոր գրասենեակներ կան, սակայն, անոնք անբաւարար են եւ լաւ չեն կազմակերպուած: Վկայեալ անձ մը երկար ժամանակ կը տրամադրէ գործ մը ճարելու համար:

Մասնագէտ մը, որ իր ճիւղին մէջ չէ յաջողած, ի վիճակի չէ իր ընտրած ճիւղին նմանող այլ ճիւղի մը մէջ աշխատելու, չտառապելու համար ստորակայութեան բարդոյթէ, որ առաջ կու գայ անգործութեամբ:

Եկամուտները մեծ դեր կը խաղան թերաճ երկիրներու մէջ:

Նախ անհաւասարութիւն կայ նոյն երկրի մէջ երկու նոյն պաշտօնները վարող մարդոց թոշակներուն միջեւ: Աւելի մեծ է տարբերութիւնը, երբ այդ թոշակը կը բաղդատուի արտասահմանի մէջ նոյն պաշտօնը ունեցող անձի մը թոշակին հետ, նոյնիսկ, եթէ նկատի ունենաք այդ երկրին դրամին գնողական արժէքը եւ տուրքերու դրութիւնը:

Այսուհանդերձ, թոշակները միակ պատճառները չեն ժողովուրդի մը գաղթը բացատրելու համար:



*Օրինակ, Ճափոնի մէջ, թոշակները համեմատաբար ցած են. սակայն, շատ քիչեր կը լքեն իրենց երկիրը ու կը մեկնին, որովհետեւ գործերը աւելի կանոնաւոր հիմերու վրայ դրուած են, եւ ընկերա-յին կարգերը եւ արհեստակցական խմբաւորումները աւելի ներ-դաշնակօրէն զօդուած են իրարու:*

*Անգլիոյ պարագային, հոն կատարուած ուսումնասիրութիւն մը՝ ներգաղթող մասնագէտներու մասին, ցոյց կու տայ, որ անոնց 25%ը միայն նիւթական նկատումներով գաղթած են:*

*Այն երկրին մէջ, ուր մեծ քաղաքները քիչ են, եւ հետեւաբար ըն-կերային եւ մշակութային կեդրոնները հազուադիւտ, զարգացած մարդը, երբ կը զրկուի մտային սնունդէն, կը մտածէ գաղթելու մասին:*

*Աշխատաւորներու համախմբումը քանի մը մեծ կեդրոններու մէջ եւ անոնց վատ ու անհամեմատական բաժանումը աշխարհագ-րական տեսակէտէն, նոյնպէս առիթ կ'ընծայեն արտագաղթի: Օրի-նակի համար, Սենեկալի մէջ բժիշկներուն 96% կը գտնուի Տաքար, որ կը հաշուէ բնակչութեան 1/6 տոկոսը միայն: Ասիկա պատճառ կը դառնայ, որ հոն աշխատող բժիշկներուն եկամուտը նուազի: Մինչդեռ, Տաքարէն դուրս, բնակչութեան 5/6ին կը մնայ բժիշկնե-րու թիւին 4%ը:*

*Փրոֆ. Քաննաբան կ'ըսէ. «Աղփատ երկիր մը երբ շատ մեծ է, պատճառ կը դառնայ իր զարգացած տարրերու մեկնումին, որովհե-տեւ ընկերային եւ մշակութային կեանքը կեդրոնացած կը մնայ քանի մը քաղաքներու մէջ, ուր կը համախմբուին մասնագէտները, անգոր-ծութիւն առաջացնելով: Հնդկաստանի պէս երկիր մը, որ աղփատ է, բայց միեւնոյն ատեն մեծ, փոքր կ'երեւայ մասնագէտներուն, եթէ նկատի ունենանք անոր տնտեսական եւ մշակութային սեղմ գործու-նելութիւնը»:*

*Կան հետեւաբար զանազան այլ պատճառներ, որոնք սերտօրէն կապուած են երկրի մը ընկերային, տնտեսական եւ վարչական կա-ռուցին հետ:*

*Վալթըր Էտրմդ իր ներգաղթի եւ արտագաղթի ազդակներու ուսումնասիրութեան նուիրուած գրքին մէջ կ'աւելցնէ. «Երբ երկու երկիրներ իրարու բաղդատենք, որքան աւելնայ ընտրութիւնը մէկէն միւսին, այնքան կ'աւելնայ վկայեալ մարդոց գաղթելու փափաքը»:*

Այս տեսակէտը ան մաթեմատիքական Փորմիւլի վերածած է, եւ անով կը ճշդէ զանազան երկիրներու համար մասնագէտներու գաղթի հաւանականութիւնը եւ անոնց մօտաւոր թիւը:

## ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՐԱԳԱՆ

Լիբանանը, նկատի ունենալով իր աշխարհագրական գիրքը, ընկերային, տնտեսական, եւ քաղաքական կառույցը, հինէն ի վեր ճանչցած է արտագաղթը: Տնտեսական տազնապները եւ քաղաքական անհանդուրժելի իրադարձութիւնները, պատճառ եղած են, որ իր ժողովուրդին մէկ մասը գաղթէ: Այս պարագային, արտագաղթը ունեցած է յաճախ բարերար հետեւանք: Ան առիթ տուած է տնտեսական որոշ հաւասարակշռութեան եւ բարեկարգութեան: Սակայն, 1945էն ստղին, կատարուող գաղթը կը զանազանուի նախորդներէն անով, որ մեկնողներուն մեծ մասը կազմուած է արդէն իսկ պատրաստուած համալսարանականներէ, մասնագէտներէ, այսինքն՝ ուղեղներէ:

Արդարեւ, ամէն տարի, շուրջ 12-13 հազար հոգի կը գաղթեն, որոնց 7 հազարը դէպի տնտեսապէս զարգացած եւ բարգաւաճ երկիրներ, եւ 6 հազարը՝ արաբական երկիրներ:

Ըստ Փրոֆ. Զահլանի, Լիբանանի մէջ ներկայիս կան 3 հազար երկրաչափ եւ 1600 բժիշկ, որոնց վրայ կու գան աւելնալու, ամէն տարի, 60 նոր բժիշկներ եւ 120 երկրաչափներ: Եթէ անոնց միայն 40ը մեկնին, ամէն տարի, պիտի ըսենք թերեւս, որ պարագան ծանր չէ: Սակայն, հարցը կը ստանայ լուրջ բնոյթ, երբ այդ մեկնողները որակական իմաստով լաւագոյններն են:

1962էն մինչեւ 1966, Հիւսիսային Ամերիկա եւ Գանատա մեկնած մասնագէտներուն թիւը կը հասնի 1912 հոգիի:

Ամերիկա գաղթողներու ընդհանուր թիւը, երբ 1960ին 2951 հոգի էր միայն, 1968ին բարձրացաւ 6436 հոգիի, այսինքն՝ 219% յաւելում արձանագրելով: Եւ այս շարժումը կ'աճի հետզհետէ՝ մտահոգիչ վիճակ մը ստեղծելու աստիճան: Երկրաչափներու, բժիշկներու եւ այլ գիտական ճիւղերէ վկայեալ անձերու մեկնումը, 1956ի եւ 1967ի միջեւ, աւելցած է հինգ անգամ, ինչ որ կը համապատասխանէ մօտաւորապէս ժողովուրդին աճման համեմատութեան: Այսպէս՝ 1962էն 1966 տարիներուն մեկնած են.

	Ամերիկա	Գանատա	Ֆրանսա
Ընկեր․ գիտութեանց	41	11	1
Բնագիտութեան մասնագէտ	72	8	24
Երկրաչափ	177	19	129
Բժիշկ	89	41	1
Վկայեալ հիւանդապահուհի	62	10	---

Օտար երկիրներ ուսումը շարունակելու գացած լիբանանցի ուսանողներ կը բաժնուին հետեւեալ կերպով․-

1964ին, Աւստրալիա՝ 34, Աւստրիա՝ 105, Գանատա՝ 41, Ֆրանսա՝ 920, Արեւմտեան Գերմանիա՝ 221, Իտալիա՝ 17, Սպանիա՝ 17, Զուիցերիա՝ 98, Սուրիա՝ 139, Եգիպտոս՝ 493, Չեխոսլովաքիա՝ 40, Ամերիկա՝ 700, Ռուսիա՝ 48, ընդհանուր գումար՝ 2933:

Այս ուսանողութեան աւելի քան 25%ը ապահովաբար չի վերադառնար:

Գաղթողներուն մէջ մեծ թիւ կը կազմեն բարձրագոյն ուսումը աւարտած լիբանանցիները: Երբ երկու լիբանանցիներ գաղթեն, ըստ Փրոֆ. Զահլանի, պէտք է ընդունիլ, որ միայն երկու հոգի չէ՛, որ կը պակսի երկրէն, այլ, անկասկած, մէկ արհեստաւոր եւ մէկ բժիշկ, կամ՝ մէկ արհեստաւոր եւ մէկ երկրաչափ, եւ կամ այլ գիտական ճիւղէ վկայեալ մը:

Արտագաղթի արտաքին պատճառները մնալով նոյնը, ինչ որ են միւս երկիրներուն համար, այսինքն՝ տնտեսապէս զարգացած երկիրներու որդեգրած յատուկ քաղաքականութիւնը ներգաղթի նկատմամբ, տեսնենք, թէ որո՞նք են, Լիբանանի պարագային, ներքին պատճառները:

Ա. - Կրթութիւն եւ ուսում.

Լիբանանի մէջ գոյութիւն ունին եօթը բարձրագոյն ուսման գլխաւոր կեդրոններ.

- Ամերիկեան համալսարան, հիմնուած՝ 1866ին,
- Սէն ժոզէֆ համալսարան, հիմնուած՝ 1881ին,
- Լիբանանեան համալսարան, հիմնուած՝ 1953ին,
- Արաբական համալսարան, հիմնուած՝ 1960ին,
- Պէյրութ Գոլէճ Ֆոր Ուիմէն, հիմնուած՝ 1924ին,

- Հայկական ԳոլֆՃ, հիմնուած՝ 1955ին,  
- Բարձրագոյն ուսմանց Ֆրանսական կեդրոն, հիմնուած՝  
1946ին:

Ասոնց վրայ պէտք է աւելցնել նաեւ քանի մը այլ՝ նուազ կարեւոր կեդրոններ:

Վերոյիշեալ բոլոր համալսարաններու ուսանողութեան թիւը 1968-1969 տարեշրջանին՝ կը հասնէր 32.376 հոգիի:

Կրթական նախարարը ուղղակի որեւէ հեղինակութիւն չունի այս կրթական բարձրագոյն կեդրոններուն վրայ, որոնք ազատ կերպով կը ճշդեն իրենց կրթական ծրագիրները, աւանդուած երեք տարբեր լեզուներով՝ արաբերէն, ֆրանսերէն, անգլերէն:

Այս զանազանութիւնը ծրագրի, լեզուի, ներմուծուած մտայնութիւններուն կողմէ տայ կրթութեան եւ ուսման մակարդակի տարբերութիւն եւ աններդաշնակութիւն: Լեզուներու զանազանութիւնը երբեմն յառաջ կը բերէ կղզիացում: Այս բոլորը պատճառներ են, որոնք կը նպաստեն արտագաղթին:

Միւս կողմէ ցաւալի է նկատել, որ մեր համալսարաններուն մէջ դասաւանդուած նիւթերը չեն համապատասխաներ երկրին պահանջին:

Այսպէս, 1968-69ին գոլտ լիբանանցի 15.637 ուսանողներուն՝

26.1%ը գիտական ճիւղ արձանագրուած էին,

68,2%ը մարդկային եւ ընկերային գիտութեանց, եւ

5,7%ը բժշկութեան:

Խճողում կայ եւ հետզհետէ կ'աւելնայ այն ճիւղերուն մէջ, որոնց երկիրը պէտք չունի, մինչդեռ աւելի կարեւոր ճիւղերը կուտան նուազ թիւով վկայեալներ:

Օրինակի համար, գիւղատնտեսութեան, առեւտրական հաստատութիւններու վարչութեան եւ զանազան թեֆնիֆներու վկայական ունեցողները քիչ են, մինչդեռ բանակ կը կազմէ գրականութեան, փիլիսոփայութեան, ընկերաբանութեան, քաղաքական գիտութեանց եւ իրաւաբանութեան արձանագրուած ուսանողներուն թիւը:

Արտասահման ուսում առած երիտասարդութեան պարագան.

Ըստ Փրոֆ. Չահլանի, 1969ին, 3 հազար 500 ուսանողներ արտասահման գացած են իրենց ուսումը կատարելագործելու համար:

1964ին՝ 3 հազար ուսանողներ գացած էին, որուն 1/4ը Ամերիկա: Այս թիւին 20%ը չէ վերադարձած:

1969ի վիճակագրութեանց համաձայն, Լիբանանի մէջ համալսարանական վկայական ունեցողներու թիւն է, այս տարի, 24.431 հոգի, որուն 40%ը արտասահման ստացած են իրենց ուսումը: Ասոնց գրեթէ բոլորն ալ գացած են իրենց անձնական միջոցներով: Պետութիւնը ոչ մէկ կապ պահած է անոնց հետ:

Ըստ Հարպիսոնի եւ Մայերսի, երկիրները պէտք է դասաւորել իրենց տնտեսական եւ ընկերային մակարդակով: Ժողովուրդի մը յառաջդիմութիւնը կապ ունի երկրին տնտեսական մակարդակին հետ:

Այսպէս, որոշ ցուցանիշով մը, կարելի է բացատրել որեւէ երկրի զարգանալու կարողութիւնը, եւ իր տրամադրութեան տակ գտնուող կարելիութիւնները: Լիբանանի համար այդ ցուցանիշը 24,3 է, Ֆրանսայի համար՝ 107,8, Ամերիկայի համար՝ 261,3: Լիբանան կը գտնուի զարգացման երկրորդ փուլին մէջ. պէտք է ան աստիճանաբար յառաջդիմել եւ անցնի 3, 4, 5, 6րդ փուլերուն:

Որքան երկիր մը յամենայ իր զարգացման յաջորդական փուլերուն մէջ եւ կամ դադրի յառաջդիմելէ, այնքան մեծ կ'ըլլայ թիւը գաղթող մասնագէտներուն: Միաժամանակ, որքան մեծ թիւով մասնագէտներ գաղթեն, այնքան ուշ կ'ըլլայ զարգացումը, որովհետեւ առանց մարդկային որակեալ դրամագլուխի, փուճ է խօսիլ զարգացման մասին:

Ընդունելով հանդերձ, որ տնտեսական հաւասարակշռութեան հետեւանքով՝ երբ ժողովուրդի մը թիւը անհամեմատօրէն աւելի աճի, քան իր տնտեսութիւնը, որոշ թիւով մարդոց արտագաղթը կրնայ օգտակար հանդիսանալ. կը մնանք, սակայն, այն տեսակէտին վրայ, որ պետութիւնը իր բոլոր միջոցները պէտք է ի գործ դնէ, կարենալ պահելու համար երկրին մէջ գիտնականներու եւ մասնագէտներու փաղանգ մը, անոնց ապահովելով գործ, պաշտօն: Պէտք է համալսարաններու ծրագիրները բարեկարգել այս հեռանկարով եւ առաջնորդել ուսանողութիւնը դէպի առողջ ընտրութիւն: Պէտք է ընտրել այն ճիւղերը, որոնք կը նպաստեն երկրին զարգացման, եւ որոնց համար աւելի հեշտ է գործ ճարել:

Բ.– Աշխատանքի հեռանկարները եւ եկամուտները.

*Մեր աշխատանքի շուկան աններդաշնակ է մատուցուած աշխատանքին եւ համալսարանականներուն ընտրած մասնագիտութեան.*

1969ի վիճակագրութիւնները ցոյց կու տան, որ Լիբանանի մէջ շուրջ 500 հազար աշխատող ձեռքեր կամ, որոնց 34%ը կը զբաղին գիւղատնտեսութեամբ եւ երկրագործութեամբ: Գիւղատնտեսութեան եկամուտներով կ'ապրին նոյնպէս երկրին բնակչութեան 51%ը: Իսկ համալսարաններու ուսանողութեան 0,4%ը միայն կը ստանայ համապատասխան վկայական:

Առեւտուրը եւ այլ կարգի պաշտօնները գործ կը հայթայթեն մեր պաշտօնէութեան 45%ին, մինչդեռ մեր ուսանողութեան 75%ը կը դիմէ այսպիսի վկայականներու, որոնք անխուսափելիօրէն գիրենք կ'առաջնորդեն պաշտօնէութեան: Հետեւեալը ցոյց կու տայ յիշեալ պատկերը.

1969ին, գիւղատնտեսութիւն եւ հողագործութիւն – ազգային եկամուտ՝ 13, աշխատաւորութեան թիւ՝ 34, համալսարաններէ վկայեալներ՝ 0,4, ճարտարարուեստ – ազգային եկամուտ՝ 25, աշխատաւորութեան թիւ 20,9, համալսարաններէ վկայեալներ՝ 24,5, առեւտուր եւ պաշտօնէութիւն – ազգային եկամուտ՝ 64,6, աշխատաւորութեան թիւ՝ 45,1, համալսարաններէ վկայեալներ՝ 75:

Լիւսիէն՝ Պէյրութի, Լիբանանի աշխատանքի շուկային նուիրուած իր տոքթորայի թեզին մէջ կ'ըսէ. «1944-1980ին, 160 հազար նոր պաշտօններ կրնան ստեղծուիլ Լիբանանի մէջ, ըլլայ պետական կամ ոչ-պետական մարգերու մէջ: 18 տարեկանէն վեր աշխատող ձեռքերու թիւը այդ շրջանին պիտի հասնի 735 հազար հոգիի, ինչ որ կը նշանակէ, թէ 450 հազար աշխատող նոր ձեռքեր յառաջ պիտի գան: Եթէ կ'ուզենք աշխատանքի շուկան առնուազն այսօրուան վիճակին մէջ պահել ու խուսափիլ տնտեսական սուր տագնապներէ, որոնք կրնան յառաջ գալ անգործութենէ, անհրաժեշտ է այն ատեն ամէն տարի 18 հազար հոգիի գաղթը»:

Գալով եկամուտներու եւ օրավարձերու տարբերութեան, Տելբար գրած է «Լը Քայէ տը Լ'Օրիան Քոնթանրոբէն»ի Ապրիլ 1969ի թիւին մէջ. «Լիբանանի բաղաժողովուն բնակչութիւնը երկրին ընդհանուր բնակչութեան 57,8%ը կը ներկայացնէ, իսկ ազգային ընդհանուր եկա-

մուտններուն 75%ը կ'ապահովէ: Վնարուած օրավարձերուն սակերը շատ կամայական են եւ յաճախ մասնագէտներու արժէքին չեն համապատասխաներ»: **Իր պատրաստած վիճակագրութիւններէն ի յայտ կու գայ, որ՝**

1) **Արդիւնաբերութեան մէջ աշխատավարձերուն միջինն է 233 լ. ոսկի:**

2) **Առեւտրական հաստատութեանց մէջ՝ 336 լ. ոսկի:**

3) **Փոխադրական ընկերութիւններու մէջ՝ 423 լ. ոսկի:**

**Փրոֆ. Չահլան կ'ըսէ, որ Ե.Ա. ունեցող ուսանողներ դեռ եւս տարեկան 4500-5000 լ. ոսկիով կ'աշխատին, ինչ որ ներելի չի գտներ: Ան կ'աւելցնէ, որ Ամերիկա հաստատուած մասնագէտներուն երկու երրորդը պիտի ուզէր վերադառնալ Լիբանան, եթէ վստահ ըլլար, որ տարեկան 2000էն 6000 տոլար կարելի է ստանալ:**

**Ամերիկա կատարուած ուսումնասիրութիւն մը, իրենց համալսարանական ուսումը հոն ամբողջացնող երիտասարդ լիբանանցիներուն մօտ, կը յանգի նոյն եզրակացութեան:**

**Իրական գաղափար մը տուած ըլլալու համար աշխատավարձերուն մասին, հակիրճ ակնարկ մը նետենք պետական սպասարկութեանց մէջ կիրարկուած սակերուն վրայ:**

**Ըստ պետական թիւ 8167 հրամանագրին, 21-2-1961, համալսարանական պաշտօնեայ մը, երբ գործի նոր սկսի, կը ստանայ հետեւեալ թոշակը:**

**505 լ. ոսկի՝ առաջին երկու տարիներուն համար, որոնց վրայ կ'աւելնայ ամէն երկու տարին 45 լ. ոսկի: Տասը տարի ետք, այդ յաւելումը 70 լ. ոսկի կ'ըլլայ՝ երկու տարին անգամ մը:**

**Եթէ համալսարանական պաշտօնեան 46 տարի անընդհատ ծառայած է, կը ստանայ 1965 լ. ոսկի: Այս պարագան երրորդ կարգի պաշտօնեաներուն համար է:**

**Եթէ ենթական երկրորդ կարգի կը պատկանի,- տնօրէն, սպասարկութեան պատասխանատու-, իր թոշակը կը սկսի 730 լ. ոսկիով: Եթէ ան առաջին կարգին կը պատկանի՝ ինչ որ է պարագան ընդհանուր տնօրէնի մը, կը սկսի 1080 լ. ոսկիով, որուն վրայ կ'աւելնայ ամէն երկու տարին անգամ մը 100 լ. ոսկի:**

**Այս թոշակներուն վրայ պէտք է աւելցնել յաւելեալ գումար մը, իբրեւ վարձատրութիւն ենթակային մասնագիտութեան:**

*Այսպէս, երկրաչափները կը ստանան 40% յաւելում՝ առաջին ութ տարիներուն ընթացքին: Այս յաւելումը 50% կ'ըլլայ ութ տարի ետք:*

*Կրթական նախարարութեան մէջ պաշտօնավարող երկրաչափները կը ստանան 30% սկիզբը եւ 40%՝ ութ տարի ետք:*

*Բժիշկները, ատամնաբոյժները, դեղագործները կը ստանան 30% յաւելում:*

*Գ.- Այլ պատմաոններ.- Բազմաթիւ այլ պատճառներ կան, որոնք քիչ թէ շատ, ուղղակիօրէն կը նպաստեն մասնագէտներու արտագաղթին: Անոնք մօտէն կ'ապուած են երկրին միջ տիրող քաղաքական եւ ընկերային վիճակին: Կրնանք թուել քանի մը հատը, որոնք մեզի համար կարեւորագոյնը կը թուին ըլլալ:*

- 1) Պետական մեքենային ներսէն վիճակը.
- 2) Գիտական հետազոտութեանց կեդրոններուն պակասը.
- 3) Մեծ քաղաքներու սահմանափակ թիւը:

*Մասնագէտները երբեմն կը մերժեն գաւառներու մէջ աշխատիլ: Լիբանանի բնակչութեան շուրջ 40%ը կը բնակի Պէյրութ եւ իր արուարձանները:*

4) Ազգային զգացումի, քաղաքացիական պարտականութեան գիտակցութեան պակաս.

- 5) Միջին Արեւելիի քաղաքական անկայուն վիճակ, եւն.:

#### **ՈՒՂԵՂՆԵՐՈՒ ԱՐՏԱԳԱՂԹԻՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ**

*Մասնագէտներու մեկնումը ունի օգտակար եւ միաժամանակ վնասակար հետեւանքներ:*

*Ա.- Օգտակար հետեւանքներ.- 1) Օտար երկիրներ գաղթողները առ հասարակ իրենց շահին մէկ մասը կը փոխադրեն Լիբանան, ուր կը դնեն կամ կը կառուցանեն շէնքեր, կը հաստատեն առեւտրական եւ արդիւնաբերական հաստատութիւններ, եւ կամ պարզապէս խնայուած գումարները կը փոխադրեն Լիբանան գտնուող դրամատուները: Ըստ Փրոֆ. Զահլանի, այս փոխանցումները երկրին ազգային ընդհանուր եկամուտին 10-15% կը ներկայացնեն: Սակայն, յստակ կերպով դեռ կարելի չէ եղած ճշդել, թէ այդ փոխանցուած*



գումարներուն ո՞րքանը գաղթած մասնագէտներէն եկած են եւ որքանը՝ առհասարակ գաղթող սովորական աշխատաւորներէն:

2) Անոնց մեկնումով անգործութիւնը կը թեթեւնայ, տնտեսական տագնապը կը կորսնցնէ իր սուր հանգամանքը առժամայէս եւ աշխատանքի կլիման կը դառնայ շնչելի:

Բ.- Վնասակար հետեւանքները.- 1) Նախ պէտք է տեսնենք, թէ ամէն մէկ մասնագէտ, որ իր երկիրը կը լքէ, ի՞նչ կրնայ արժած ըլլալ անոր, իր համալսարանական պատրաստութեան ընթացքին: Ըստ Փրոֆ. Ջահլանի, որ իբրեւ չափանիչ առած է ամերիկեան համալսարանի ուսանող մը, երեւան կու գայ, որ նախակրթարանի եւ միջնակարգի համար կը ծախսուի 14.700 տոլար, համալսարանի համար՝ 9.300 տոլար: Ինչ որ կը նշանակէ, թէ բժիշկ մը իր երկրին արժած է շուրջ 24.000 տոլար: Իրաւաբանութեան, ինչպէս նաեւ գրականութեան, փիլիսոփայութեան եւ ընկերային գիտութիւններ ուսած մէկը, արժած է 18 հազար տոլար. երկրաչափ մը 19 հազար տոլար: Եթէ այս գումարները կը բազմապատկենք ամէն տարի գաղթողներու թիւին հետ, մօտաւորապէս գաղափար մը կրնանք ունենալ, քանակական իմաստով, այն կորուստի մասին, որուն կ'ենթարկուի երկիրը ուղեղներու արտագաղթով: Միայն 1967ին, 39 բժիշկներ մեկնած եւ հաստատուած են Ամերիկա:

Պետական վարժարաններու մօտ նախակրթարանի աշակերտ մը պետութեան կ'արժէ տարեկան 250 լիբ. ոսկի, երկրորդական աշակերտ մը՝ 750 լիբ. ոսկի: Ոչ պետական վարժարաններու մօտ այս չափանիշը աւելի բարձր է:

Ըստ Մորին Վուտհոլի, վերոյիշեալ գումարներուն վրայ պէտք է բարդել նաեւ գրքերուն եւ գրենական պիտոյքներուն ծախսերը եւ ընկերային ծախսերը:

Մակօ, այլ մասնագէտ մը, ՄԱԿին համար պատրաստած իր ուսումնասիրութեան մէջ կ'ըսէ. թէ կարելի է գտնել թուանշաններու հիման վրայ ան կորուստը, որ երկրի մը արտադրութիւնը կրնայ ունենալ իր մասնագէտներու մեկնումով: Նկատի կ'ունենայ արդիւնաբերութեամբ պատրաստուած առարկայ մը: Կը քննէ, թէ երբ ան պատրաստուած է միջակ որակ ունեցող անձի մը կողմէ, որքան ժամանակ անհրաժեշտ է գայն արտադրելու համար, եւ ի՞նչ կրնայ

արժեք, ապա գայն կը բաղդատէ այն պարագային հետ, երբ այդ առարկան պատրաստուէր որակեալ մասնագէտի միջոցաւ: Կը չափէ խնայուածը եւ կը գնահատէ արտադրուած առարկային որակը:

Փրոֆ. հարպիսոն կ'առաջարկէ նախ ճշդել երկրին մէջ գըտնուող մասնագէտներուն թիւը: Որքան բարձր ըլլայ ան, նոյնքան նուազ կ'ըլլայ երկրին կորուստը՝ իր արտադրողական կարողութեան մէջ:

## ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Եթէ Լիբանանը անցեալին մէջ եղած է երկիր մը, ուր արտագաղթը հասած է մեծ համեմատութեանց, ան պատճառ մը չէ, սակայն, որ շարունակէ կորսնցնել հետզհետէ աւելի մեծ եւ մտահոգիչ համեմատութեամբ համալսարանական պատրաստութեան տէր գիտնական երիտասարդները՝ ուղեղները:

Մենք տեսանք այս ուսումնասիրութեամբ, որ արտագաղթը երթալով աւելի լայն ծաւալ կը գտնէ, եւ թէ մեկնողները, որոնցմէ շատ քիչեր միայն կը վերադառնան, բաղկացած են գլխաւորաբար գիտնականներէ:

Ամփոփ կերպով, այս մեկնումին առիթ տուող հիմնական պատճառները հետեւեալներն են.

1.- Մեր կրթական դրութեան սխալ ուղղութիւնը: Անհրաժեշտ են կրթական ծրագիրներու փոփոխութիւնը եւ ներդաշնակութիւնը բոլոր համալսարաններու գործակցութեան մէջ:

2.- Մեր աշխատանքի շուկային անկապակցութիւնը: Մատուցուած գործերն ու պաշտօնները չեն համապատասխաներ ներկայացուած մասնագիտական վկայականներուն:

3.- Մեր օրավարձերու սակերուն կամայական վիճակը եւ անբաւարարութիւնը: Անոնք որեւէ գիտական հիմք չունին:

4.- Ազգային եկամուտներու անարդար բաժանումը: Անհրաժեշտ է, որ տուրքերու գանձումը կատարուի աւելի արդար եւ իրատես քաղաքականութեամբ, որուն հետեւանքով կարելի է նախակրթութիւնը բոլորովին ձրի դարձնել եւ աւելցնել թիւը թեքնիք վարժարաններուն:

Տեսանք նոյնպէս այն բոլոր վնասները, որոնց կ'ենթարկուի Լիբանանը իր ուղեղներու մեկնումով: Կայ նախ կորուստը անոնց կրթութեան եւ պատրաստութեան համար ծախսուած գումարներուն: Ապա կայ կորուստը մարդկային որակեալ դրամագլուխին, որուն կարիքը ունի երկիրը իր տնտեսական զարգացման եւ յառաջդիմութեան համար: Այս վերջինները ընդունելով աղբիւրը՝ երկրին բարգաւաճման ու գործելու եւ պաշտօններու թիւի բարձրացման:

Անհրաժեշտ է, որ պետութիւնը լրջօրէն զբաղի այս հարցերով: Ան, մանաւանդ պետական աստիճանաչափով եւ սպառիչ կերպով ուսումնասիրէ հարցը իր բոլոր երեւոյթներով, եւ դիմէ անյապաղ այն բոլոր շինիչ միջոցներուն, որոնք կրնան սատարել երիտասարդ ուսանողներու երկրին մէջ մնալուն:

Այնքան ատեն, որ հիմնուինք այն իրողութեան վրայ, թէ ասոնք կը մեկնին երկրին միջոցներուն սահմանափակութեան պատճառով, եւ հետեւաբար կրնան անգործ մնալ, պիտի մնանք միշտ նոյն կացութեան մէջ եւ մեկնողներուն թիւը մեզ պիտի առաջնորդէ հետզհետէ աւելի մտահոգիչ վիճակներու: Պէտք է փոխել, աստիճանաբար, երկրին տնտեսական կառույցը, ստեղծել գործ հայթայթող գրութիւն մը եւ շահագրգռել գիտնականները:

Այս բոլորը կը պահանջեն գիտակցութիւն եւ համագործակցութիւն՝ պետութեան, համալսարաններու ղեկավարութեան եւ ժողովուրդին միջեւ:

## ՄԱՐԴԿԱՅԻՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԸ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Տնտեսական զարգացումը, որուն կը ձգտին բոլոր երկիրները, անկասկած եւ մասնաւորաբար թերաճ երկիրները, հիմնական միջոցներէն մէկն է երկրի մը ընկերային վիճակին զարգացման ու կեանքի մակարդակի բարձրացման: Ան յառաջ կը բերէ եկամուտներու յաւելում, որ իր բնական անդրադարձը կ'ունենայ ժողովուրդին գնելու, ծախսելու կարողութեան վրայ. առիթը կ'ընծայէ անոր օգտուելու գիտութեան նուաճումներով ձեռք ձգուած այն բոլոր սարքաւորումներէն, որոնք կոչուած են կեանքի պայմանները բարելաւելու եւ գայն մասնակից կ'ընէ աւելի մեծ տարողութեամբ այլ կարգի հաճոյքներու:

Անցեալի պատկերը բաւական պերճախօս է՝ բացատրելու համար այս գրութիւնը: 19րդ եւ 20րդ դարու տնտեսական աճումները առիթ տուին աշխատավարձերու բազմապատկման եւ կեանքի մակարդակի հիմնովին բարձրացման: Սակայն ստեղծուած նոր կացութիւնը զարգացուց անհատներու մօտ նոր ձգտումներ, յառաջ բերաւ նոր պահանջներ եւ հետեւաբար պետութիւններուն ուշադրութեան յանձնեց մարդկային նոր հարցեր, որոնց լուծումէն՝ միմիայն տնտեսական զարգացումը իր ներկայ եղանակով, բաւարար չի նկատուիր:

Նկատի առնուած է, որ տուեալ որեւէ տնտեսական կացութեան եւ ժողովուրդի ընկերային վիճակին մէջ գոյութիւն ունեցած է որոշ ներդաշնակութիւն մը, հաւասարակշռութիւն: Այս հաւասարակշռութիւնը խախտած է ամէն անգամ, երբ նոր ուստում մը եղած է տնտեսական զարգացման ի նպաստ, այսինքն նոր վարկեր յատկացուած են, սարքաւորումներ եղած, մեքենակազմ եւ այլ նիւթերու մթերքներ ապահովուած այդ նպատակով: Այդ վարկերը անտարակոյս վերցուած են նախապէս ձեռք ձգուած շահերու գումար-

րէն, որոնք այլապէս պիտի դրուէին շրջանառութեան մէջ՝ ծախսուելու համար: Այս պարագան շատ լաւ կը ներկայացնէ Քէյնզ, երբ կ'ըսէ, թէ տնտեսական վարկերու համար կատարուած յատկացումը կամովին պարտադրանք մըն է աւելի սեղմ կեանքի վերադառնալու, ինչպէս նաեւ հեռացումն է ծախսերէ, այսինքն վայելքներէ, ի խնդիր հետագայ բարգաւաճ վիճակի եւ հետեւաբար բարւոք կեանքի:

Տնտեսական զարգացման համար արդիւնաբերութեան յատկացուելիք գումարները պէտք է ուրեմն, նախ գոյացնել իբրեւ դրամագլուխ, պակսեցնելով ծախսերը եւ աւելցնելով խնայողութիւնները, ապա ձգտիլ առաւելագոյն արտադրութեան, առաւելագոյն եկամուտներու հեռանկարով:

Այսպէս ուրեմն, ինչպէս կ'եզրակացնէ Շամբիթըր, երկրի մը զարգացումը, տնտեսական եւ ընկերային կալուածներու մէջ ունի երկու գլխաւոր հանգրուաններ.

Ա) Նախ կազմել դրամագլուխը եւ գայն յատկացնել արդիւնաբերութեան,

Բ) Ապա ստեղծուած բարգաւաճ վիճակէն գոյացած եկամուտները վերաբաշխել ժողովուրդին:

Ասկէ պէտք է ուրեմն հետեւցնել, որ նախ պէտք է տնտեսական բարգաւաճում, յետոյ՝ ընկերային զարգացում:

Այսպէս եղաւ Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ: Ռուսիոյ մէջ, մինչեւ Ստանլինի մահը, տնտեսական բարգաւաճումէն բխած արդիւնքները վերաբաշխուեցան ժողովուրդին եւ այս վերջինը մնաց յարաբերաբար իր ընկերային նախկին մակարդակին վրայ, տրուած ըլլալով որ իր ծախսելու կարողութիւնը մնացած էր գերթէ անփոփոխ: Ասիկա հետեւանք էր այն իրողութեան, որ այդ երկրին մէջ արդիւնաբերութեան եկամուտները կը յատկացուէին կա'մ բանակին եւ կամ նոր հիմնարկներու:

Էականը սակայն կը մնայ այն՝ որ տնտեսական զարգացման համար թափուած որեւէ ճիգ կ'ենթադրէ անխուսափելիօրէն նոր զրկանքներ ժողովուրդէն, երբ այս վերջինը քաջալերուած նախապէս իր ձեռք ձգած դիւրութիւններէն, կ'ունենայ նոր ձգտումներ եւ նոր պահանջներ: Նոր վարկերու գոյացումը, անոնց յատկացումը զուտ արդիւնաբերութեան, յառաջ կը բերէ վազք մը տնտեսա-

կանին եւ ընկերայինին միջեւ, որուն մէջ թերաճ մնացողը անկասկած ընկերայինն է:

Ընկերային հարցերու մասնագէտներ հարց կու տան իրարու, թէ կարելի չէ՞ արդեօք, օգտուելով անցեալի փորձառութիւններէն, որոնք նոր ձեւ մը, որդեգրել տնտեսական նոր ուղեգիծ մը, պետական չափանիշով, ուր ընկերայինը գուգահեռաբար աճի եւ զարգանայ տնտեսականին հետ. այսինքն, երբ վարկեր կը յատկացուին տնտեսական վերելքին, յատկացնել միեւնոյն ատեն այլ վարկեր ընկերային զարգացման: Այս տեսութիւնը մասնաւորաբար օգտակար կրնայ հանդիսանալ թերաճ երկիրներուն, որոնք զարգացումի ընթացքին մէջ են:

Սակայն պէտք է նախ սահմանել ընկերային զարգացումը: Գիտնանք թէ ինչ պէտք է հասկնալ ընկերային զարգացում ըսելով: Հեղինակները այս մասին տարակարծիք են անոր համար՝ որ տնտեսականն ու ընկերայինը շատ մօտէն աղերս ունին իրերու հետ եւ անոնց ընդգրկած կալուածները տեղ տեղ կը նոյնանան: Այսուհանդերձ, ըստ Բոնսիոնի, որ կը համադրէ զանոնք, «Երբ տնտեսական զարգացում կը նպաստէ աշխատանքի արտադրողական կարողութեան, ընկերային զարգացումը ի մտի ունի:

1) Ժողովուրդին ծախսելու կարողութիւնը աւելցնել,

2) Ապահովել ամէն անհատի այն՝ ինչ որ կը նկատուի անոր կողմէ իբրեւ կենսական պահանջ,

3) Կատարել եկամուտներու վերաբաշխումը աւելի մեծ արդարութեամբ,

4) Եկամուտները ծախսել աւելի մարդկային պահանջներուն գոհացում տալու համար, օրինակ, կրթութեան, բնակարանին, առողջապահութեան, մշակոյթի տարածման եւայլն...

5) Իրագործել մարդկային աւելի գոհացուցիչ յարաբերութիւններ, ըլլան անոնք անհատական թէ հաւաքական»:

Այս նոր տեսութեան մասնագէտները կը մեկնին այսն իրողութենէն, թէ արդիւնաբերութեան մէջ, դրամագլուխը, նիւթը գործին յառաջդիմութեան միակ մղիչ ոյժը եւ գլխաւոր գործօնները չի ներկայացնեն, այլ կայ նաեւ մարդկային դրամագլուխը, զոր նոյնպէս պէտք է զարգացնել եւ որուն վրայ գուրգուրալ: Վերջին հաշուով, նիւթական դրամագլուխը մեծ բան պիտի չարժէր առանձին, եթէ

գոյութիւնն չ'ունենար զայն արժեւորող մարդը, իբրեւ մտածում եւ մղիչ ոյժ:

Արդիւնաբերութեան մէջ, նկատուած է, առնելով Ամերիկան եւ Նորվեկիան իբրեւ օրինակ, որ 55 տարուան ընթացքին, երբ դրամագլուխը աճած է 1% համեմատութեամբ, ձեռք բերուած արդիւնքը աճած է նոյնպէս 0,30 առ հարիւր, իսկ երբ աշխատանքի ոյժը աճած է 1%, արդիւնքը աւելցած է 0,70%: Այս պարագային, երբ աշխատանքը աւելի լաւ կազմակերպուած է եւ ղեկավարուած մասնագիտօրէն, աճումը եղած է 1,80%: Այս համեմատութիւնները ցոյց կու տան որակեալ անհատին դերը արդիւնաբերութեան մէջ:

Շատ մը հեղինակներու համար, ուսումը, իբրեւ դրամագլուխ, իր կարգին կը մասնակցի արդիւնաբերութեան 10-40% համեմատութեամբ: 30-40% նախակրթարանի պարագային, իսկ 10-12% երկրորդականի եւ համալսարանի:

Ներկայիս մասնագէտները ի վիճակի են գիտնալու զանազան երկիրներուն դրամագլուխը ո՛չ միայն իբրեւ աշխատող ձեռք, այլ իբրեւ որակեալ գործօն տարր: Այսպէս կ'ըսուի, թէ Ամերիկայի մարդկային դրամագլուխը արդիւնաբերութեան մէջ 900 միլիոն տոլար է, Ռուսիոյ մէջ՝ 1100 միլիոն տոլար եւ այլն:

Ուրեմն եթէ մարդը արդիւնաբերութեան կարեւոր դերակատարներէն մէկն է, իբրեւ մարդկային դրամագլուխ եւ իր ուսումով տնտեսութիւնը կրնայ աճիլ 10-40%, տեսնենք հիմա, թուանշաններու լեզուով, մէկզի ձգելով հարցին բարոյագիտական երեւոյթները, թէ պետութեան համար արդեօք մշակուած մարդ մը պատրաստ՞լը աւելի շահաբեր է, թէ անոր յատկացուելիք գումարներուն ուղղակի շահարկումը:

Փոլ Կլիք եւ Միլլէր իրենց ուսումնասիրութիւններով ցոյց կու տան, որ Ամերիկայի մէջ, ուսանողի մը համալսարանական ծախսերը կ'արժեն 9000 տոլար: Իսկ ուսանողը երբ համալսարանը աւարտէ եւ գործի ձեռնարկէ, իր ձեռք ձգած մասնագիտութիւններով, 50 տարուան ընթացքին պիտի կարենայ իր եկամուտները աւելցնել շուրջ 100 հազար տոլարով: Մինչդեռ, եթէ այդ 9000 տոլարը ուղղակի շահարկութեան դրուէր, նոյն ժամանակամիջոցին մէջ, պիտի հայթայթէր 24.000 տոլար: Ուրեմն, կ'եզրակացնեն, պետութիւններուն ուշադրութեան պէտք է յանձնել այն իրողութիւնը, թէ

կրթութեան համար յատկացուած դրամագլուխը անարդիւնաւէտ չէ, ընդհակառակը, աւելի շահաբեր է անհատին համար:

Մուշկին, ընկերային հարցերու այլ մասնագէտ մը ցոյց կու տայ նոյնպէս, որ եթէ Ամերիկան իր առողջապահական պայմաններով մնար այնպէս ինչպէս որ էր 1940ին, իր ազգային եկամուտները այսօր աւելի քան 1400 միլիոն տոլար պակաս եղած պիտի ըլլային, իսկ աշխատող ձեռքերը 964.000 հոգիով պակաս:

Եզրակացնելով այս բոլորը, կարելի է ըսել, որ ներկայիս մասնագէտները հետամուտ են գտնելու նոր միջոցներ, որպէսզի տնտեսական զարգացումին առնթեր կատարուի նոյնպէս ընկերային զարգացումը եւ տնտեսական զարգացումը չզրկէ մարդ անհատը իր ամենակենսական պահանջներէն:

Տնտեսական զարգացումի կողքին, պէտք է ճիգ թափել, մէկ կողմէն ժողովուրդին կրթութիւնը դիւրացնելու, անոր առողջապահական պայմանները բարելաւելու եւ բնակարանային հարցերը լուծելու, միւս կողմէ ապահովելու անոր բաւարար եկամուտ՝ որպէսզի ան կարենայ ապրիլ մարդկայնօրէն եւ ծախսել այն բաներուն համար, զորս ինք կը նկատէ իբրեւ կենսական անհրաժեշտութիւն, ըլլան անոնք Ֆիզիքական պահանջներու գծով թէ հոգեկան եւ մշակութային գոհացումներու տեսակէտէն:

Այս կ'ենթադրէ տնտեսական եւ ընկերային յատուկ քաղաքականութիւն մը, որուն մէջ պետութեան դերը կը մնայ անփոփոխ:



## ԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԳԱԲԱՃՈՒՄ

Ընդունուած իրողութիւն է, որ երկրի մը տնտեսական բարգաւաճումը սերտօրէն կապուած է անոր ունեցած նիւթական կարելիութիւններուն, բնական հարստութեանց եւ մանաւանդ մարդկային որակեալ ուժին:

Տնտեսագէտները ներկայիս ի վիճակի են թուական տուեալներով ցոյց տալու արդիւնաբերութիւններուն արտադրողականութեան բարձրացումը, երբ սովորական աշխատաւորները փոխարինուին որակեալ տարրերով: Աշխատաւորները եթէ մասամբ կ'որակաւորուին տարիներու իրենց փորձառութեամբ, անոնց աշխատանքը սակայն աւելի արդիւնաւէտ կը դառնայ՝ եթէ անոնք զարգացած են եւ օժտուած համապատասխան թեքնիք պատրաստութեամբ:

Բարգաւաճ են այն երկիրները, որոնց ազգային ընդհանուր եկամուտին մէկ կարեւոր մասը կը գոյանայ ճարտարարուեստական արտադրութեամբ:

Թերաճ երկիրները, որոնց տնտեսութիւնը հիմնուած է գլխաւորաբար հողամշակութեան, առեւտուրի եւ ծառայութեանց վրայ՝ որպէսզի բարգաւաճին, պարտին մէկ կողմէ մեքենականացնել իրենց հողամշակութեան եղանակը, ապա միւս կողմէ՝ աստիճանաբար զարգացնել ճարտարուեստը: Հողամշակութենէն ճարտարարուեստ այս փոխանցումը կը կիրարկուի, սովորաբար, երկու եղանակով:

Ըստ Թինպերկէնի, անհրաժեշտ է նախ պատրաստել մարդկային որակեալ ուժը, միջին եւ բարձր մասնագիտութեան տէր աշխատաւորներու թիւ մը (պահետ), որուն մէջէն պիտի առնուի անհրաժեշտը, երկրին յարմար նկատուած ճարտարարուեստը զարգացնելու համար: Այս ձեւով երբ նիւթական ներդրումներ կ'ըլլան, ճար-

տարարուեստը, շնորհիւ նախապէս պատրաստուած մասնագէտներու, կը զարգանայ առանց յապաղումի եւ կաշկանդումի: Ուրիշներ, ինչպէս Հարրոտ-Տոմար, անհարաժեշտ չեն նկատեր այս նախապայմանը: Անոնք կը խորհին, որ կարեւորը նիւթական ներդրումն է: Երկրին մէջ գոյութիւն ունեցող որակեալ ձեռքերը կ'օգտագործուին, իսկ մնացեալ անհրաժեշտ տարրը դուրսէն կը բերուի: Հետագային, միայն զարգացող ճարտարարուեստը որոշ շահագրգռութիւններ յառաջ կը բերէ, որոնք կը մղեն աշակերտները հետեւելու այս կամ այն թեքնիք ճիւղին:

Մօտեցումի այս երկրորդ եղանակին կը հետեւին յորդանանեան եւ սուրիական տնտեսական բարգաւաճման պետական ծրագիրները, ինչ որ կը բացատրէ Սուրիոյ թեքնիք վարժարաններուն աշակերտութեան սակաւաթիւ ըլլալը: Արդարեւ, վիճակագրութեանց համաձայն, Սուրիոյ թեքնիք վարժարաններու աշակերտութիւնը, 1961-1968 շրջանին ո՛չ միայն չէ աւելցած, այլեւ 3,37 առ հարիւր նուազած է: Այս երեւոյթը կը բացատրուի մասամբ ալ այն իրողութեամբ, որ թեքնիք վարժարաններու մակարդակը բարձրացնելու համար մոտաքի պայմանները հոն վերջին տարիներուն խստացան:

Ներկայիս սակայն, տնտեսական զարգացումի փլանաւորումը պատրաստող պետական սպասարկութեանց մտահոգութիւնը հետըզհետէ կը կեդրոնանայ կրթական ուղղութեան ճշդումին վրայ, որպէսզի ան ներդաշնակ ըլլայ որոշուած տնտեսական զարգացման ծրագիրներուն եւ նպաստէ անոնց իրագործման:

Պէտք է, նկատի ունենալով կրթական ուղղութեան ազդեցութիւնը տնտեսական կառոյցին վրայ, ապահովել երիտասարդութեան մասնագիտական որոշ պատրաստութիւն, որպէսզի ան կարենայ ինքզինք պատշաճեցնել երկրին տնտեսական պայմաններուն:

Այսպէս, եթէ ճշդուի որ երկրին տնտեսութիւնը պէտք է հիմնուի գլխաւորաբար առեւտուրի եւ ծառայութեանց վրայ, այդ պարագային պէտք է զարգացնել զրական եւ մարդկային գիտութեանց ճիւղերը: Իսկ եթէ ճարտարարուեստն ու հողամշակութիւնը պիտի կազմեն երկրին տնտեսութեան հիմնական տարրերը, այդ պարագային անհրաժեշտ է զարգացնել գիտական եւ թեքնիք ճիւղերը:

Պետական մակարդակով, կրթութեան եւ ուսման փլանաւորումը Լիբանանի մէջ թերեւս ամենատարրական վիճակի մէջ է: Պա-

տանին իր ուսումը կը շարունակէ այնքան ուտեն, որ իր նիւթական միջոցները կը ներեն: Համալսարանական ուսումը կը ստանայ կա'մ համաձայն իր նախասիրութեան եւ կամ համաձայն ծնողքին ընտրութեան, եւ երբեմն ալ՝ ըստ պատահականութեան: Արդիւնք՝ այս ձեւով հրապարակ եկած համալսարանական որակեալ տարրին մէկ մասը միայն կ'օգտագործուի տեղական տնտեսութեան կողմէ, իսկ միւս մասը կը գաղթէ եւ կամ լաւագոյն պարագային կը մեկնի արաբական այլ երկիրներ, ապահովելու համար իր ապրուստը եւ ապագան:

1970ին, ՄԱԿի կողմէ կատարուած ուսումնասիրութիւն մը ցոյց կու տար Լիբանանի ճարտարարուեստի զարգացման կարելիութիւնները եւ կը յայտնէր, թէ ո՛ր մարզերուն մէջ անիկա առաւելագոյն զարգացումը պիտի կարենար արձանագրել: Նոյն շրջանին, Լիբանանի ազգային վիճակագրութեանց կեդրոնական տնօրէնութիւնը որոշ ուսումնասիրութիւններ կատարած էր՝ ճշդելու համար Լիբանանի մէջ աշխատող անձերուն թիւը, համաձայն անոնց տարիքին, մասնագիտութեան եւ կրթական մակարդակին: Այս վերջին ուսումնասիրութենէն ի յայտ կու գար, որ նոյն թուականին աշխատող անձերու ընդհանուր թիւը 538.410 էր, որուն 29,40 առ հարիւրը անգրագէտ, 35,30 առ հարիւրը նախակրթարանի մակարդակէն վար, 15,20 առ հարիւրը նախակրթարանի մակարդակով, 15,80 առ հարիւրը միջնակարգի եւ երկրորդականի աստիճանով, եւ 4,30 առ հարիւրը համալսարանական են:

Աշխատող անձերու վերոյիշեալ թիւին 20 առ հարիւրը, այսինքն շուրջ 110 հազարը, կ'աշխատի ճարտարարուեստի մէջ, որուն 13,80 առ հարիւրը անգրագէտ է, 23 առ հարիւրը նախակրթարան չէ աւարտած, 24 առ հարիւրը նախակրթարանի մակարդակ ունի, 9,9 առ հարիւրը միջնակարգի վկայական եւ 5,5 առ հարիւրը բարձրագոյն վկայական ունին:

Համաձայն 1969ի վիճակագրութեանց, աշակերտութեան ընդհանուր թիւին 2,6 առ հարիւրը միայն արձանագրուած է թեքնիք վարժարաններ, մինչ 18,6 առ հարիւրը կը յաճախէ երկրորդական վարժարան եւ 4,5 առ հարիւրը համալսարան:

Տարօրինակ չէ, որ երբ մեր աշխատաւորութեան ընդհանուր թիւին 20 առ հարիւրը, ճարտարարուեստի մէջ կ'աշխատի, աշա-

կերտութեան թիւին միայն 2,6 առ հարիւրը թեքնիք վարժարան յաճախէ: Ֆրանսայի մէջ, օրինակ, աշխատաւորութեան թիւին 39 առ հարիւրը կը զբաղի ճարտարարուեստի մէջ, եւ աշակերտութեան թիւին 62 առ հարիւրը արձանագրուած է թեքնիք եւ գիտական վարժարաններ:

Առաջին ակնարկով, անհրաժեշտ կը թուի նախ ճիգ թափել՝ ջնջելու համար անգրագիտութիւնը, որ այսօր Լիբանանի մէջ 15-24 տարիք ունեցող գործաւորներու թիւին մօտաւորապէս 10 առ հարիւրը կը կազմէ: Անշուշտ այս համեմատութիւնը աւելի շեշտուած է Սուրիոյ մէջ՝ 56 առ հարիւր, Եգիպտոսի մէջ՝ 75 առ հարիւր, եւ Մէքսիկոյ Արաբիոյ մէջ՝ 95 առ հարիւր:

1970ին, աւելի քան հարիւր հազար մանուկներ, 5 տարեկան, դպրոց չէին արձանագրուած, իսկ 7-14 տարեկան բնակչութեան շուրջ 52 առ հարիւրը միայն դպրոց կը յաճախէր:

Յիշեցնենք, որ զարգացած աշխատաւորին արտադրական կարողութիւնը աւելի բարձր է, քան անգրագէտ եւ ոչ-մասնագէտ աշխատաւորինը: ՄԱԿի վիճակագրութիւններէն երեւան կու գայ, որ Սուրիոյ եւ Յորդանանի մէջ աշխատաւորի մը տարեկան արտադրութիւնը կը գնահատուի 600էն 900 տոլարով, մինչդեռ Լիբանանի մէջ, ուր աշխատաւորը համեմատաբար աւելի զարգացած է, այդ գումարը կը բարձրանայ 2000 տոլարի: Ի գուր չէ, որ Ֆրանսացի մեծ տնտեսագէտ՝ Ա. Մարշալ ըսած է, թէ «մարդկային դրամաշուխարհ աւելի կարեւոր է՝ քան Ֆիզիքական որեւէ ներդրում»:

Ճարտարարուեստի զարգացման համար չի բաւեր համալսարանականներու թիւը աւելցնել՝ եթէ նոյնիսկ անոնք գիտական կամ թեքնիք ճիւղեր ընտրած ըլլան: Անհրաժեշտ է նախ ջնջել անգրագիտութիւնը, ապա օղակաւորումը ապահովել, սկսելով պարզ մասնագէտներէն մինչեւ բարձրագոյն մասնագէտները:

Վերոյիշեալ բոլոր տուեալները ցոյց կու տան, որ Լիբանանի ներկայ կրթական քաղաքականութիւնը չի համապատասխաներ իր տնտեսական կոչումին եւ չի նպաստեր արտադրող ուժերու զարգացման, այլ յառաջ կը բերէ ուսեալ բայց անգործ տարրերու բազմութիւն մը:

Պէտք է քննել երկրին ճարտարարուեստականացման պահանջին համապատասխանող տուեալները, ապա նիւթական միջոցներ

տրամադրել նախակրթութիւնը պարտադիր եւ ձրի դարձնելու համար: Զարգացնել թեքնիք վարժարաններ (միջնակարգ, երկրորդական եւ բարձրագոյն) եւ բազմապատկել անոնց թիւը: «Մարդկային դրամագլուխը ազգային հարստութեան մաս կը կազմէ», կ'ըսէ նշանաւոր տնտեսագէտ Ա. Սմիթ:

Այս ձեւով, կարելի է մասամբ առաջըր առնել արտագաղթին, աւելցնել երկրին արտադրողականութիւնը, աւելի ապահով եւ բարգաւաճ ուղիի մէջ դնել ազգային տնտեսութիւնը, ստեղծել գործ եւ պաշտօն ապահովող մարմիններ, եւ ազգային եկամուտներու աւելի արդար բաշխումով՝ բարելաւել ժողովուրդին ընկերային բոլոր խաւերուն նիւթական վիճակը:

## ԳՈՅԱՊԱՇՏ (EXISTENTIALISTE) ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԻՐ ԾԱԳՈՒՄԸ

*Տասնեակ մը տարիներէ ի վեր գոյապաշտ բառը կը շրջի իմաստասէր ու գրասէր անձերու գրեթէ բոլորին ալ շրթունքներուն վրայ: Յաճախ գրական թէ իմաստասիրական երկի մը, թատերգութեան մը, մինչեւ իսկ շարժանկարի մը մասին կը լսուի սա խօսքը թէ ան գոյապաշտ խորք ունի եւ կամ գոյապաշտ ձգտում:*

*Բայց ի՞նչ է գոյապաշտութիւնը (existentialisme).*

Existentialisme բառը յառաջ եկած է գերմաներէն existential ածականէն, որ ճարտարօրէն դարձնուած է գերմանացի նշանաւոր իմաստասէր Հայտրիկերի (Heidegger) կողմէ existanz (գոյութիւն) գոյականէն:

*Ասիկա գաղափարական շարժում մըն է որ սկսաւ Գերմանիայէն, արմատ նետեց եւ կազմաւորուեցաւ Ֆրանսայի մէջ, ապա գարմանայի արագութեամբ մը տարածուեցաւ ամբողջ Արեւմտեան Եւրոպա, Ամերիկա, մինչեւ իսկ Եգիպտոս եւ Լիբանան: Տարօրինակ չթուի ընթերցողիս՝ եթէ ըսեմ թէ Պէյրութի մէջ կը գտնուի այժմ գրօսավայր մը գոր կը կոչեն Club des existentialistes.*

*Ըստ Հայտրիկերի, գոյապաշտութիւնը վերլուծումն է մարդկային գոյութեան կազմուածքին. իմ անձնական գոյութիւնս պայման մըն է որուն համար գոյութիւն ունին աշխարհի վրայ մնացած բոլոր նիւթերը: Աւելի բարորոշ կերպով, գոյապաշտութիւնը իմաստասիրութիւնն է մարդկային գոյութեան, բառիս առարկայական եւ անմիջական իմաստով:*

*Պատմականօրէն այս շարժումը իր ծագումը կը պարտի գերմանացի իմաստասէր Հայտրիկերի (Sein und zeit, 1927) որ իր կարգին կրած է զգալապէս տանըմարքացի Քիրքըկաարտի, Բասգայի եւ Սուրբ Օգոստինոսի ազդեցութիւնները:*

*Ներկայիս ան կը բաժնուի, որպէս իմաստասիրական շարժում,*

երկու ճիւղերու: Առաջինը Քրիստոնեայ գոյապաշտ դպրոցն է, որուն պետն է Կապրիէլ Մարսել իր հետեւորդներով, ինչպէս Ժասպէր, Վալլ, Վալ, Եւայլն... իսկ երկրորդը՝ անաստուած գոյապաշտ դպրոցն է զոր կը ղեկավարի Ժ.Ք. Սարթր (J.P. Sartre) իր հետն ունենալով բազմաթիւ գործակիցներ, ինչպէս Տիկ. Պովուար, (Mme Beauvoir), Փամիւ (Camus), Եւայլն:

Այն միակ սկզբունքը՝ որ հաւասարաբար կ'ընդունուի այս գոյգ շարժումներու համախոհներուն կողմէ, հետեւալն է՝ թէ գոյութիւնը կը կանխէ էութիւնը:

Ներկայ յօդուածով պիտի ջանանք, կարելիութեան սահմաններուն մէջ, ներկայացնել հակիրճ կերպով անաստուած գոյապաշտ դպրոցը եւ միայն որպէս գրական շարժում: Առ այժմ զանց կ'առնենք իմաստասիրական մասը որ ստուարագոյն էջեր պիտի պահանջէ:

#### ԳՈՅԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԾԱԳՄԱՆ ՇԱՐՓԱՌԻԹՈՐ

1930էն ասդին եւ աւելի ակնբախ կերպով Բ. համաշխարհային պատերազմին սկիզբէն ի վեր, բազմաթիւ Ֆրանսացի երիտասարդ գրողներ փորձեցին հակազդել տիրող ճնշիչ պայմաններուն, անտեսելով աւանդական հիւմանիստ ուղղութիւնը:

Այս մարդիկը, դիտելով որ ներկայ աշխարհիս վրայ կը բացակային կանոն եւ տրամաբանութիւն, ուր կը տիրեն վայրագաբար բիրտ ուժն ու բնագոյները, ուր անհատական ճակատագիրները կուրօրէն կը տրորուին պատմական ալիքներու ներքեւ, չեն ուզեր այլ եւ չեն կրնար հաւատալ իտէալ մարդու մը գոյութեան, մտքի հեղինակութեան եւ անոր հետեւանքով բարօր կեանքի կարելիութեան: Անոնք չեն իսկ հաւատար մարդու գերիվերութեան (transcendance), անդենական աշխարհին ուր կը խոստացուի արդար վարձատրութիւն ամէն մարդու, նայած իր արժանիքին:

Մշտնջապատ դէպքերու ընդմէջէն անոնք կը տեսնեն ու կ'ուզեն միայն տեսնել մարդը ինչպէս որ է՝ իր տկարութիւններով, դժբախտութիւններով, բայց նաեւ իր ապրելու վճռական կամքով եւ վայելքի ու տիրապետութեան գոյգ բնագոյներով: Այս մարդիկը իրենք զիրենք կը նկատեն իբր թէ նետուած անողոք ճակատագրի մը ճի-

րաններուն մէջ: Հետեւաբար, ըստ իրենց, աշխարհն ու պատմութիւնը անդարմանելիօրէն անհեթեթ են, այլանդակ (absurde) եւ թողլքուած ոչ թէ թաքուն օրէնքի մը իշխանութեան, ոչ եւս նախախնամութեան, - այլ սոսկ ու սոսկ դիպուածին: Այս իսկ պատճառով, ամէն քայլափոխին կը կարծեն իյնալ ողբերգական գրութեան մէջ:

Մեր ցարդ ըսածներէն իսկ կ'ընդնշմարուի արմատական յոռետեսութիւն մը որմով պարուրուած է վերոյիշեալ մարդոց էութիւնը: Անոնց խիղճը կը տառապի անօրինակ անձկութեամբ մը (angoisse) որ աւելի եւս կը շեշտուի հաւաքական արկածախնդրութեան մը անխմաստ եւ անվախճան զգացումով:

Այս է ահաւասիկ մեկնակէտը գրականութեան մը որուն մէջ զարհուրելի կերպով պիտի արտայայտուի քաղաքակրթութեան տագնապը: Սակայն, հակառակ այս բոլորին, պէտք է ապրիլ նոյնիսկ այդ քառսին մէջ:

Յուսահատ գոյապաշտներուն համար, կեանքը տանջանքի, զրրկանքի եւ կասկածի խառնարան մըն է, ուր՝ որպէս վստահելի յենարան՝ ունին լոկ իրենց նիւթական եսը: Իրենց միտքն ու բանականութիւնն անգամ գիրենք կը դաւաճանեն, քանի որ անոնց միջոցով կարելի կ'ըլլայ թափանցել իրենց ներքնաշխարհը ու հոն եւս գտնել դարձեալ կասկած, յուսախաբութիւն եւ անձկութիւն: Անոնք անվարան կը խոստովանին թէ իրենց անձին ամենավստահելի եւ հաւատարիմ մասն է իրենց կենդանական, զգայական եւ սեռային կեանքը: Գոնէ այս իրենց կը պատկանի, որպէս անուրանալի ու բացարձակ ստացուածք մը: Իրենց կը պատճառէ վայելքի հեշտանքը, հոգ չէ թէ վաղանցուկ, սակայն բաւականին գոհացուցիչ՝ գիրենք մահափորձէ հեռացնելու համար: Ասիկա երեւոյթ մըն է պատմութեան տագնապներուն եւ քաղաքակրթութեան անկաման շրջաններուն յատուկ:

Դարերու ընթացքին պատահած են գերզգայուն, իրենց ապրած ժամանակաշրջանէն գերիվեր եւ մենակեաց խառնուածքի տէր անհատներ որոնք իրենց հանճարին ամբողջ տարողութեամբ փորձած են հակազդել դէպքերու եւ գաղափարներու անկանոնութեանց դէմ, ինչպէս՝ Բասգալ, Քիրքրկարտ, Նիչէ եւայլն...:

1930էն ասդին տեղի ունեցած պատմական մեծ վերիվայրումներ-



ըր, այն սրտաճմրիկ տազնապը գոր մարդկութիւնը անցուց վերջին քառորդ դարուս, Սպանիոյ պատերազմէն մինչեւ Հիւրոշիմայի փլուզումը մեծագոյն ազդակները պիտի ըլլային փութացնելու համար կարգ մը մարդոց անկումը դէպի յուսահատութիւն:

Այսուհանդերձ, գինուորական եւ քաղաքական դէպքերու առընթեր կային նաեւ ուրիշ պատճառներ որոնք նոյնքան եւ աւելի վճռական դեր խաղացին այս հարցին մէջ:

Մօտաւորապէս դարէ մը ի վեր, արեւմտեան մարդուն գիտակցութիւնը արտակարգ բախում մը ունեցաւ բազմատարբար այն դանդաղ ու խաղաղ ցնցումներուն, որոնք երեսուն դարերէ ի վեր կատարուած էին: Նորանոր գիտական թէ թեքնիք հսկայական գիւտեր պատճառ դարձան որ մեր աշխարհը ներկայանայ մարդոց որպէս անհունօրէն վերացական եւ բարդ պատկեր մը: Նոյն այդ գիւտերը մարդուս հայհայթեցին զարմանալի կարողութիւններ՝ կատարեալ ազդելու աշխարհին ու զայն փոխակերպելու համար: Այն պահուն երբ բնագիտութիւնն ու պատմութիւնը հսկայաքայլ կը յառաջդիմէին, հոգեվերլուծական աշխատանքները նուազ չէին զարգանար: Հոգեբաններ եւ վիպասաններ կը ձգտէին թափանցել հոգիին ամենամութ բաւիղներուն մէջ, տիրանալու համար անոր զաղտնի ծալքերուն: Մինչ անդին, կարգ մը բնագանցական միտում ունեցող բանաստեղծներ, արհամարհելով տրամաբանական մտքի սահմանները, եւ շփոթելով բանականութեան օրէնքները բարոյագիտական սկզբունքներու հետ, փորձեր կը կատարէին հասնելու համար բացարձակին, գերիվերին եւ գերիրականութեան (surréalisme):

Բնականաբար այսքան տարածուն ուժերու ազդեցութեան ներքեւ, թանկարժէք՝ բայց եւ դիւրաբեկ բանական համադրութիւնը պիտի ընկրկէր կասկածի եւ խառնակութեան յորձանքներուն առջեւ:

## ԳՈՅԱՊԱՇՏՆԵՐՈՒՆ ԳՐԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ

Գոյապաշտ գրողի մը նիւթը առ հասարակ շփոթ, դիպուածային եւ անկապակից իրականութիւն մըն է, իր մեկնակէտը բացարձակապէս անձնական փորձառութիւնն է, որ չի համակերպիր ոչ

մէկ ընդհանուր օրէնքի: Անոր համար գրական երկի մը արժէքը կը կայանայ դէպքերուն եւ նկարագրութեանց ճշգրտութեան մէջ: Հետեւաբար գոյապաշտ գրագէտը սկզբունքով կը մերժէ գրական թէ գեղագիտական բոլոր յարմարութիւնները, ինչպէս ոճը, ճաշակը, լեզուն...:

Ոճը պէտք է ըլլայ, ըստ անոր, կարելի եղածին չափ, անձնական, մանրամասնուած եւ ժամանակագրեալ: Ան պէտք է ձգտի կատարեալ իրապաշտութեան: Նախասիրաբար պիտի գործածէ ժողովրդական բարբառը, պիտի իւրացնէ խօսուած լեզուին անկանոնութիւնները, առանց խուսափելու խրթնութիւններէ: Պիտի ըլլայ կոշտ, եթէ ոչ միշտ անբարոյական, գոնէ յաճախակի կերպով սիրային պատկերներով գունագարդուած: Մենք կը տեսնենք յաջորդաբար այս բոլորը, գոյապաշտ գրողներու զանազան երկերուն մէջ, ինչպէս՝ Vaillandի, Drôle de Jeu», Maraisի «La rage des Innocents», Fisson, «Voyage aux horizons», Mme Beauvoir, «L'invitée» եւ այլն, եւ այլն...: Նոյնիսկ իրենց մեծագոյն վարպետին Ժ. Բ. Սարթրին, «Le Sursis»ին մէջ կը գտնենք, նախադասութիւններու systématique աղճատում մը, ներքին անհատնում մենախօսութիւն, անձնական դերանուններու ալ խառնաշփոթութիւն մը, նոյն հեղինակին «Le sang des autres» գրքին մէջ:

Շատ ստուար է թիւը այն բոլոր գոյապաշտ գրողներուն՝ որոնք ոչ միայն կը գոհանան իրենց գիրքերը արտառոցութեամբ խճողելով, այլ եւ բացառիկ հաճոյք մը կը զգան զանոնք մշակելու եւ ժողովուրդին ներկայացնելու:

Քննադատները բնականաբար պիտի չկարենային հանդուրժել այս բոլորին: Մասնաւորաբար կիներն են որ շատ աւելի կ'ընդվզին գրելու այս եղանակին դէմ:

Այսպէս՝ Տիկ. Ժերմէն տը Պոմոն (Germaine de Beaumont), քննադատելով գոյապաշտ գրականութիւնը, «Les Nouvelles Littéraires»ի մէջ, կ'ըսէ ի մէջ այլոց՝ «Յուսահատ վիպասաններուն մօտ անսահման ճաշակ մը կայ ցեխի, շտեմարաններու, կոյուղիներու եւ տարբեր տեսակի ստորերկրեայ աղտոտ վայրերու ընդհանուր հակում մը դէպի թուքը, կապոյտ ճանճը, ժանտախտը եւ գարշանքը»:

Առաջին վարպետներուն համար, հարցը իր մակերեսային երեւոյթէն դուրս շատ մեծ եւ լուրջ խորք ունէր: Անոնք կ'աշխատէին,

իրենց գերզգայութեամբ մարդկային տանջանքները նկարագրելէ ետք, վերակազմելու մարդկային գոյութեան գործելու եւ ապրելու ձեւը: Դժբախտաբար անոնց յաջորդեցին տասնորդական կարգի գրողներ՝ որոնք որպէս մեկնակէտ ունենալով գոյապաշտութիւնը, մէկզի չպրտեցին գեղեցիկի, ազնիւի ու ճաշակի գաղափարը: «Ասիկա դաւաճանութիւն մըն է որքան արուեստին նոյնքան ճշմարտութեան», պիտի ըսէր Շամսոն (Chamson), Les Nouvelles Litteraires, 1949, Ապրիլ 7ի թուին մէջ:

Չ. Բ. Սարթր կը ջանայ բարոյական եւ հիւմանիստ խորք մը գտնել իր դեկավարած դպրոցին մէջ: (L'Existentialisme est un humanisme, 1946):

Պատմութեան դիպուածին եւ աշխարհի քաոսին մէջ ձգուած գոյապաշտ մարդը, կծկուած ինքնիր գիտակցութեան վրայ, պիտի կարենա՞յ արդեօք խուսափիլ անիշխանականութեան փորձութիւններէն ու հասնիլ բարոյականի: Աստուծոյ գոյութիւնը եւ հոգիի համաշխարհային եւ գերիվեր արժէքները ուրանալէ յետոյ, ո՞ր աստիճան կարելի պիտի ըլլայ, գոյապաշտ գրողներուն, բարոյական եւ հիւմանիստ հիմք դնել իրենց շարժման մէջ:

Աս ամենակարեւոր հարցն է գոր ներկայ գրականութիւնը իր առջեւը կը դնէ եւ որուն համար հիւմանիստ գրողները չեն վարանիր այժմէն իսկ իրենց բացարձակ կասկածը արտայայտելու:

2 Օգոստոս 1950

## LES ÉCOLES ARMÉNIENNES

Les Statistiques établies en 1975-76 par les services compétents de la Prélature arménienne du Liban chiffraient à 20.000 le nombre des élèves arméniens fréquentant les 58 écoles arméniennes qui existent au Liban. Depuis, le nombre des élèves a diminué d'environ 15% en raison du départ d'un certain nombre de familles à l'étranger du fait de la guerre civile et du déplacement d'autres familles d'une région de confrontation rendue inhabitable à une région relativement plus stable. Ce mouvement a, dans certains cas, favorisé le développement de quelques écoles au détriment d'autres qui, ayant perdu plus de la moitié de leurs effectifs, se sont installés dans des localités dont l'emplacement leur paraissait susceptible de leur permettre de recueillir sans entrave le plus possible de leurs élèves.

Le tableau ci-dessous trace à titre indicatif la répartition par secteur et par catégorie du nombre des écoles arméniennes.

	Prélature arménienne (secteur orthodoxe)	Communauté catholique	Eglises protestantes Armén	Secteur privé	Total
Primaire	16	6	2	5	29
Complé-	-	2	4	1	7
Secondaire	4	5	4	5	18
Technique	-	-	-	4	4
Total	20	13	10	15	58

Quatre orphelinats arméniens dont deux mixtes abritent plus d'une centaine d'orphelins de la Communauté. Chaque orphelinat possède sa propre école où s'instruisent les enfants confiés à ses bons auspices. Ces écoles sont de niveau différent.

L'une primaire, appartient à l'orphelinat de la Communauté arménienne orthodoxe, une autre, de niveau secondaire, appartient à

l'Église arménienne protestante et deux autres, de niveau complémentaire dont l'une est dotée d'une section technique, appartiennent à la Communauté arménienne catholique.

Elles sont toutes incluses dans le décompte précédent.

Des cours spéciaux d'instruction religieuse à l'intention des adolescents et des jeunes sont prodigués tous les dimanches dans les églises paroissiales relevant de la Prélature arménienne. Ils sont organisés par la hiérarchie de la Communauté arménienne-orthodoxe sur la base d'un programme déterminé et visent à assurer aux candidats un complément d'instruction sur la liturgie, l'histoire de l'Église, la vie et l'œuvre des saints et des Pères de l'Église etc. Leur durée est de deux ans. Les études sont sanctionnées par un diplôme correspondant.

Durant l'année 1975-76 des candidats des deux sexes ont fructueusement suivi les cours et obtenu des diplômes durant la même année.

Les deux séminaires, celui de Bikfaya pour la Communauté arménienne orthodoxe et celui de Bzommar pour la Communauté arménienne catholique ne figurent pas sur le tableau ci-dessus.

Il faut noter aussi, qu'abstraction faite de la chaire d'Arménologie de l'Institut de Lettres Orientales qui relève de l'Université Saint-Joseph, il existe à Beyrouth au niveau de l'enseignement supérieur 2 Instituts arméniens d'Arménologie (Hamazkaine et Hussissian) et le Haigazian Collège. Ce dernier dans le cadre de ses divers enseignements maintient une chaire d'Arménologie et délivre des diplômes du premier et du second cycles universitaires (B.A. et M.A.) officiellement reconnus.

Les Instituts préparent surtout des futurs enseignants à une connaissance approfondie de la langue, de l'histoire, de la littérature ancienne et moderne et de la culture arménienne. Ils se proposent de conduire les candidats à l'obtention d'un diplôme universitaire.

### **Structure des écoles arméniennes**

Les écoles relevant de la Prélature arménienne, appelées communément écoles nationales, appartiennent toutes à la Communauté. Une Commission de l'Education, nommée par la Prélature, supervise

leur fonctionnement et contrôle, par le truchement d'un inspecteur culturel et des services adéquats, l'application fidèle des programmes officiels et de ceux relatifs à l'enseignement de la langue, de l'histoire et de la culture arménienne. Un conseil d'administration nommé par la Commission de l'Education, au niveau de chaque école, s'occupe des problèmes de gestion et des finances de l'école dont il a la charge.

Le Prélat de la Communauté arménienne orthodoxe est d'office le Président de la Commission de l'Education.

Les écoles de la Communauté arménienne catholique sont rattachées à diverses congrégations religieuses. Cependant une Commission de l'Education placée sous l'autorité de l'Evêque diocésain coordonne la politique générale de l'enseignement dans les différentes écoles de la Communauté.

Les écoles protestantes appartiennent aux Eglises arméniennes protestantes. Chaque école est administrée par son propre conseil d'administration dont les membres sont nommés par le conseil de l'Eglise concernée.

Une Commission de l'Education élue par le conseil des Eglises protestantes au Proche-Orient, veille aux problèmes de l'Education dans l'ensemble des écoles appartenant aux églises arméniennes protestantes.

Les écoles du secteur privé appartiennent soit aux différentes organisations culturelles ou charitables soit aux partis politiques ou aux particuliers.

### **Nombre d'élèves**

Des 20.000 élèves fréquentant les écoles arméniennes en 1975-76, 15.135 se trouvaient dans le cycle primaire, 3417 dans le cycle complémentaire 950 dans le cycle secondaire et 500 dans l'enseignement technique.

48% des élèves étaient du sexe masculin et 52% du sexe féminin. Ils se décomposaient comme suit:

Dans le cycle primaire 50,31 % appartenaient au sexe masculin et 49,69% au sexe féminin.

Dans le cycle complémentaire 46% étaient du sexe masculin et

54% du sexe féminin et dans le secondaire 50.47% du sexe masculin et 49.53% du sexe féminin.

Dans les écoles techniques, 45,22% étaient du sexe masculin et 54,78% du sexe féminin.

### **Niveau des enseignants**

Le nombre des enseignants en fonction dans les écoles arméniennes s'élevaient en 1975-76 à 1210 dont 41 % du sexe masculin et 59% du sexe féminin.

Voici par ailleurs leurs niveaux de formation:

25% étaient universitaires.

34.90% étaient titulaires du baccalauréat ou de son équivalent.

29% étaient titulaires du brevet ou de son équivalent.

11.60% étaient au niveau du primaire.

Les enseignants en fonction dans les écoles relevant de la Préfecture arménienne présentaient à l'époque les qualifications suivantes:

15% étaient universitaires.

41.90% étaient titulaires du baccalauréat ou de son équivalent.

15.10% étaient titulaires du brevet. 28% avaient le niveau du primaire supérieur et primaire.

La moyenne d'âge des enseignants étaient pour la même année de 45. Il y avait, en moyenne, 1 enseignant pour 16 élèves, alors que dans le secteur public il y en avait 1 pour 16.07 élèves et pour le Liban 1 pour 19 élèves.

### **Résultats obtenus aux examens officiels**

En 1972-73, la réussite aux examens officiels du Brevet a été de 75.70%, pour les élèves des écoles de la Communauté alors qu'elle n'a été que de 67% pour l'ensemble des candidats libanais.

En ce qui concerne le baccalauréat 1ère partie, série scientifique le succès a été de 55% pour les écoles de la Communauté et 33.94% pour le Liban. Pour le baccalauréat 2ème partie, série math. élém., le succès a été de 72% pour les écoles de la Communauté et 60.25% pour l'ensemble des candidats libanais. Pour les Sc. Exp., il a été de 76% pour les écoles de la Communauté et 71.04 pour le Liban.

L'un des collèves arméniens appartenant à la Prélature arménienne a eu droit aux félicitations du ministre de l'Education Nationale pour les excellentes notes que l'un de ses candidats avait obtenues aux examens de la 2ème partie du baccalauréat (série math. élémentaires).

Il faut remarquer que les exigences du travail scolaire pour les élèves arméniens sont certainement plus grandes que pour ceux qui fréquentent d'autres écoles ou qui relèvent d'autres communautés. Ils doivent en effet étudier l'arménien ce qui implique de la littérature, de l'histoire et des cours de religion. Ils leur faut ensuite se préparer aux examens officiels. Le nombre d'heures hebdomadaires de cours dans le primaire est de 38 et dans le secondaire de 40.

Certains collèves assurent à leurs élèves la connaissance simultanée après l'arménien et l'arabe, du français et de l'anglais, si bien que les élèves bacheliers peuvent, sous réserve de remplir les conditions d'admission, postuler indistinctement des diplômes tant à l'Université Libanaise qu'à l'Université Saint-Joseph ou à l'Université Américaine.

Il nous paraît étonnant que l'arménien moderne ne soit pas agréé comme langue vivante pour le baccalauréat au même titre que l'allemand ou le russe. Il en avait été question en 1929, mais la décision semble ne pas avoir été retenue.

En revanche, depuis une dizaine d'année, pour le baccalauréat classique, l'arménien classique fait partie de la liste des langues ancienne telles que le grec, le syriaque, l'hébreux. En effet, plusieurs textes syriaques ou grecs ne sont conservés qu'en langue arménienne. De plus la part des historiens arméniens à l'élaboration de l'histoire des arabes n'est pas négligeable.

### **Aspect physique des écoles arméniennes**

Les écoles arméniennes qui étaient autrefois construites avec des moyens de fortune ont presque totalement changé leur aspect physique. En effet, grâce aux donations de généreux bienfaiteurs tant au Liban que dans la Diaspora, les vieilles écoles délabrées ont cédé la place à des constructions confortables dont plusieurs n'ont rien à envier aux meilleures écoles du secteur privé.

Par ailleurs, la communauté a entrepris elle-même la réparation de



toutes les écoles arméniennes qui ont été endommagées durant les derniers événements.

### **Budgets**

Le budget des écoles arméniennes était évalué en 1975-76 à environ 15 millions de livres libanaises.

Parmi les 20 écoles relevant de la Prélature arménienne, 15 sont gratuites. Leur déficit annuel s'élève à 500.000 Livres libanaises que la Communauté s'évertue à combler par ses propres moyens. Il faut reconnaître, à cet effet, que la subvention allouée par le gouvernement est insuffisante pour équilibrer les budgets des écoles gratuites.

La Communauté a également fait de grands efforts durant tout le cours des événements et elle continue encore à le faire pour que les enfants des familles nécessiteuses ne soient pas privées de l'instruction primaire en raison de leurs situations financières.

### **Perspective d'avenir**

La Prélature arménienne se propose d'ouvrir aussitôt que ses possibilités financières le permettront, une école technique et professionnelle. La création d'une école normale et d'un nouveau collège est également en vue. Elle projette de même et ceci à partir de la prochaine rentrée scolaire de transformer certaines écoles primaires en complémentaires.

Les cours de formation pédagogique des institutrices et des instituteurs en fonction dans les écoles primaires seront repris bientôt.

Le Centre pédagogique de la Prélature créé en 1969-70 dans le but de s'occuper des enfants en retard scolaire avait cessé de fonctionner depuis 1976. Il reprendra ses activités prochainement.

### **Le Problème de la langue arabe**

Le problème de l'enseignement de l'arabe qui jadis constituait un souci réel pour un Directeur d'école ne se pose plus avec la même acuité. Un très net progrès a été enregistré durant la dernière décennie et les élèves du secondaire n'éprouvent plus les mêmes difficultés.

En effet, convaincus de l'importance du problème, les respon-

sables voudraient pouvoir tout faire pour que les élèves arméniens qui ne vivent pas en général dans un milieu arabophone connaissent bien l'arabe et s'intègrent le mieux possible à la Communauté libanaise sans pour autant relâcher l'étude de l'arménien, car pour la plupart des arméniens l'intégration ne peut être pensée qu'à partir de l'affirmation nécessaire de la personnalité arménienne. S'intégrer ne veut pas nécessairement dire que l'on cesse d'être arméniens, c'est pourquoi tout en reconnaissant que la dualité des programmes d'enseignements dans les écoles arméniennes surcharge les élèves, nous demeurons attachés à l'idée que l'enseignement et le développement de la culture arménienne sont importants et les efforts que nous déployons pour améliorer nos instruments de formation et de culture sur le double plan (libanais et arméniens) ne devraient s'affaiblir. Les résultats prouvent d'ailleurs que le travail n'est pas démesuré. Les arméniens ont besoin de garder leur entité; le Liban ne pourra d'ailleurs qu'y gagner en richesse.

Ainsi donc, soucieuse d'enseigner l'arménien à ses élèves, la Communauté arménienne l'est davantage pour leur apprendre l'arabe, car elle estime qu'une bonne connaissance de la langue et de la littérature arabe est effectivement essentielle et aidera, à coup sûr, les générations montantes à s'intégrer mieux à la société libanaise, peuple et institutions.

Elle est aussi consciente du rôle dévolu à l'école qui ne doit pas demeurer simplement un instrument de transmission du savoir mais bien mieux, elle doit être un instrument de culture et d'éducation, un creuset dans lequel doit se forger le futur citoyen libanais, conscient de ses obligations et des ses droits et prêt au sacrifice pour les besoins de la société et pour la sauvegarde des valeurs morales et spirituelles tout particulièrement après les rudes et pénibles épreuves que le pays vient de supporter.

*Elias Hanna*

Ministre d'Etat

Allocution de son Excellence le Ministre d'Etat  
Mc. Elias Hanna  
à la décoration de Mr. Vosguéperan Arzoumanian  
au nom de son Excellence  
le Président de la République Mr. Elias Hraoui

*Révérénd Père Recteur,  
Excellences,  
Mesdames et Messieurs,*

*J'ai été honoré d'être aujourd'hui parmi vous, représentent son excellence le Président de la République, décorant en son nom, notre cher ancien et néanmoins perpétuel ami, Mr. Vosguéperan Arzoumanian.*

*Son nom, à lui seul, crée dans notre mémoire un certain arôme nostalgique qui nous rappelle ces années bien lointaines déjà, où nous nous retrouvions des étudiants encore, à la faculté de droit de l'Université Saint Joseph, ne pouvant cependant pas relater cette ère sans toutefois retracer dans notre commémoration la présence si proche, mais aussi si ferme, de notre cher Mr. Arzoumanian, qu'on honore aujourd'hui en commémorant ces beaux souvenirs.*

*Administratif méticuleux, assidu et combien consciencieux, il ne fut pas par hasard, ni par chance ni par piston, que Mr. Arzoumanian escalada d'échelle: Secrétaire de l'Institut des Lettres Orientales de l'U.S.J. de 1945 à 1953, puis secrétaire général adjoint de la faculté de Droit et des sciences économiques de 1953 à 1964, ensuite Secrétaire Général des facultés de Droit et des Sciences*

*Politiques, des Sciences Economiques et de Gestion des Entreprises de 1965 à 1977, pour être nommé Administrateur du Campus des Sciences Humaines de 1977 à 1996, lui qui est, depuis plus de 30 ans consécutifs, membre du comité exécutif du Catholicoscat Arménien.*

*Une vie dense et fructueuse, pour quelqu'un qui fut secondé par une épouse assidue elle aussi, Mme Chaké Mahdessian qui sut comment élever ses quatre enfants, tous déjà mariés, à l'image de leur père si idéal et si pertinent.*

*Plus de 50 ans déjà, comme mentionna le recteur Révérend Père Sélim Abou dans sa lettre au ministre de la Culture et de l'Enseignement Supérieur Mr. Faouzi Hobeiche, lui proclamant une décoration, pour un demi-siècle plein de services qui de fois bénévoles, aux étudiants aussi bien qu'aux professeurs, à tel point que nul ne dirait qu'il passa par l'U.S.J., étudiant ou professeur, sans avoir graver dans sa mémoire la présence de Mr. Arzoumanian dans la plus belle image de la mémoire.*

*C'est qu'il fut, lui, à la hauteur de toutes les responsabilités qu'il assumait, à la hauteur de la confiance qui lui a été attribuée, aussi bien de la conscience communautaire digne de son peuple et son patrimoine.*

*Bien plus encore, Mr. Arzoumanian a pu, et que miraculeusement!!! écarter du campus universitaire toutes les fissures qui y auraient pu le démembrer durant les années noires de la guerre. Au contraire, il veilla assidûment à ce que l'U.S.J. reste hors de toute sortes de politisation nocive. Ceci est immanquablement dû à la forte personnalité de Mr. Arzoumanian qui a su à être ferme quand il le faut, diplomate quand il fallut, ou les deux ensemble dans la plupart des cas.*

Beyrouth, le 21.6.1997

**Monsieur le Ministre,**

*Permettez-moi de vous remercier d'avoir bien voulu me remettre les insignes des hautes distinctions dont je suis honoré.*

*Je vous prie d'avoir l'obligeance de bien vouloir transmettre à Son Excellence Monsieur le Président de la République, l'expression de ma profonde gratitude.*

*Je suis très touché des propos bienveillants et chaleureux que votre Excellence a eu la magnanimité de prodiguer à mon égard et pour lesquels je vous remercie vivement.*

*En ce moment solennel qu'il me soit permis d'évoquer le souvenir rayonnant de tous les anciens recteurs, chanceliers, directeurs, professeurs et secrétaires que j'ai eu l'honneur et la joie de connaître dans l'exercice de mes fonctions et dont plusieurs sont déjà appelés à Dieu. Qu'ils veuillent bien les uns et les autres trouver ici l'expression de mes hommages les plus respectueux et reconnaissants.*

*Je remercie la Compagnie de Jésus à qui je dois la base de mon éducation et de ma formation.*

*Je remercie tout particulièrement le Révérend Père Ducruet, le Recteur émérite dont la ténacité devant les épreuves et le dévouement ont permis à cette Université de surmonter les vicissitudes des périodes sombres et déchirantes de l'histoire de notre pays.*

*Son attitude déterminante de reconstruire et de bâtir au prix d'énormes sacrifices, révèle sans conteste, sa volonté inébranlable de continuer à assurer la pérennité de cette Institution consacrée à la formation des générations montantes.*

*Son contact quotidien durant plusieurs décennies a été pour moi une source constante de formation et de renouveau pour lesquels je lui reste redevable.*

*Je remercie le Révérend Père Sélim Abou, le Recteur actuel dont l'ardeur et l'enthousiasme donnent une nouvelle dimension et un nouvel éclat à l'Université.*

*Ma collaboration avec lui depuis près de 20 ans m'a permis d'apprécier en lui des valeurs culturelles et humaines enrichissantes qui m'ont vivement marqué.*

*Je remercie tous les membres du Conseil de l'Université et du Conseil de coordination du Campus des Sciences Humaines avec lesquels j'ai eu l'honneur de participer pendant plus de 15 ans aux réunions consacrées à l'étude des différents problèmes qui se posaient à l'Administration de l'université et du Campus des Sciences Humaines.*

*Je remercie le Révérend Père Vice-Recteur, M., le secrétaire général et le personnel administratif du Rectorat pour leur comportement exemplaire, MM. les doyens et enseignants dont plusieurs par **leur publication et leur participation à des Congrès et Colloques internationaux ont contribué et contribuent encore au rayonnement de cette Université dans le monde**, maintenant ainsi les vieilles traditions de cette cité millénaire de juristes, d'hommes de lettres et de sciences. Je remercie le personnel administratif et de service du Campus des Sciences Humaines pour leurs appréciables services.*

*Mes efforts personnels ne m'auraient pas permis d'accomplir un travail utile si je n'avais pu être secondé dans ma tâche par de précieux collaborateurs dont le dévouement n'avait d'égal que la satisfaction du travail accompli. Je suis conscient que cette marque d'honneur s'adresse à travers ma personne à eux, tous.*

*Au terme de ma carrière , j'ai quitté mon emploi, mais pas l'Université SaintJoseph qui demeure en moi comme une partie intégrante de ma vie. Je ne peux pas oublier dans la hiérarchie de l'administration de l'Université toutes les personnes avec lesquelles j'ai partagé de vieux souvenirs communs des jours heureux et difficiles. L'U.S.J. reste dans mon coeur et dans mon esprit.*

*Semblables à ces vieux troncs d'arbres dont les branches, suivant les lois de la nature et les règles de la vie, perdent leur feuillage pour en retrouver de plus verdoyants, l'Université Saint-Joseph restera toujours vivante et resplendissante étant donné que ses racines sont solidement implantées dans les coeurs de tous ceux qui l'ont connue, l'ont aimée et continuent à apprécier la compétence et le dévouement de ses enseignants et de ses responsables.*

*Je remercie sa Sainteté le Catholikos Aram Ier et Son Eminence le Patriarche Kasparian de m'avoir honoré de leur haute présence. Je remercie leurs excellences les dignitaires religieux, les ministres, les députés, toutes les personnalités et mes amis qui en voulant me témoigner leur sympathie par leur agréable présence à cette cérémonie ont tenu à souligner leur **attachement** à l'Université Saint-Joseph et leur foi en sa mission. J'en reste profondément touché.*

Merci à tous

V. ARZOUMANIAN

Beyrouth, le 21.06.1997

**Révérend Père Recteur**

*Je vous remercie des propos bienveillants que vous avez eu la délicate attention de prononcer à mon égard. Je suis très sensible aux sentiments d'appréciations et d'affection que vous y avez témoignés.*


*Les cinquante années de ma vie que j'ai consacrées au service de l'Université Saint-Joseph se sont écoulées comme un rêve. Elles m'ont cependant laissé de précieux souvenirs me rappelant des événements importants, d'éminentes personnalités envers lesquelles je garde beaucoup d'estime et d'attachement indéfectible et surtout la vie de l'Université en tant qu'Institution devenue pour moi un petit univers que je ne pourrais jamais oublier. Elle restera, en effet, toujours dans mon cœur et dans mon esprit.*

*Mes Révérends Pères, Mesdames et Messieurs les doyens et directeurs, Monsieur l'Administrateur.*

*Je suis profondément confus pour tous les égards qui m'ont été prodigués à cette occasion tant **par mes supérieurs directs que par mes collaborateurs.***

*Envahi par une intense émotion, permettez-moi de vous **exprimer en un mot** venant du plus profond de mon cœur, Merci pour tout et meilleurs vœux pour vous tous et pour l'Université afin qu'elle puisse continuer à accomplir sans entraves sa noble mission.*





**Ա Ր Ա Մ**

**ՃԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՍՕՔՆ  
ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԸՆՏՐՈՒԹԵԱՄԲ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ  
ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՅ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

ՇՆՈՐՀՔ, ՄԷՐ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ Ի ՏԵԱՌՆԷ ԵՒ ՈՂՁՈՅՆ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ի ՄԷՆՁ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ  
ՅԱԶՈՅ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ

**ՍԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՒՄ ԵՒ  
ՀԱՐԱԶԱՏԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ  
ՏԻԱՐ ՈՍԿԵՔԵՐԱՆ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆԻՆ  
ՈՐ Ի ՊԷՅՈՒԹ, ԼԻՔԱՆԱՆ**

Հայրապետական օրհնութեամբ եւ քրիստոնէական ջերմ սիրով կ'ողջունենք Ձեզ: Մեր բարձր գնահատանքը կ'ուզենք յայտնել Ձեզի անցնող շուրջ յիսուն տարիներու ընթացքին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Լիբանանի հայ համայնքին Ձեր կատարած նուիրեալ ծառայութեան համար: Արդարեւ, թէ՛ մեր Ս. Աթոռի կեանքէն ներս եւ թէ՛ Լիբանանի թեմի սահմաններէն ներս Ձեր ստանձնած պատասխանատու պաշտօնները՝ կրթական, մշակութային, վարչական, տնտեսական ու ազգային բնագաւառներէն ներս, կատարեցիք բարձրագոյն աստիճանի պատասխանատուութեամբ, նախանձախնդրութեամբ ու յանձնառութեամբ:

Առ ի գնահատանք Ձեր բազում տարիներու նուիրեալ ծառայութեան ու Ձեր բեղուն վաստակին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բարձրագոյն աստիճանի շքանշանը՝

**ԻՇԽԱՆԻ ԿԱՐԳԻ ՇՔԱՆՇԱՆ**

Այս առիթով նաեւ Մեր գնահատանքը կը յայտնենք Ձեր ազնուա-  
փայլ Տիկնոջ եւ սիրելի զաւակներուն, որոնք աջակից դարձան Ձեզի  
Ձեր եկեղեցանուէր ու ազգանուէր ծառայութեանց ընթացքին:

Ողջ լերուք ի Տէր, գորացեալ շնորհօք Ս. Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ  
ի Սէնջ. Ամէն:



**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ**  
**ՄԵՃԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակս ի Կաթողիկոսարանիս  
Ի դուռն Մայր Տանարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին  
Որ յԱնթիլիսս, Լիբանան  
Ի 19-ն Մարտի, 2004 թուին Քրիստոսի, եւ  
Ի թուին Հայոց ՌՆԾԳ.  
Ընդ համարաւ Շ/ՄԾԳ.*

*Վեհափառ Տէր,*

Շնորհապարտ եմ ձեր ցուցաբերած շատ ազնիւ վերաբերումին համար շնորհելով ինձի Կիլիկեան բազմադարեան Ս. Աթոռին այս բանկարժէք շքանշանը: Չափազանց ազդուած եմ գնահատանքի ձեր գեղեցիկ խօսքերէն եւ այն պարունէն զոր կը շնորհէք անձիս նկատմամբ:

Չերդ վեհափառութիւնը ազնւօրէն յիշեց կաթողիկոսարանի եւ Լիբանանի թեմին ազգային իշխանութեան ըրած ծառայութիւններս երբ զանոնք կատարելու պատեհութիւնը տրուեցաւ ինձի գործունէութեանս զանազան բնագաւառներէն ներս:

Արդարեւ օգտուելով ազատ պահերուս ընձեռած առիթէն, շուրջ կէս դարի համեար ծառայութիւնը զոր կրցայ Աստուծոյ շնորհիւ նուիրել ազգիս եւ եկեղեցւոյ, երազի մը նման անցան չգելով այսուհանդերձ բանկագին յիշարակներ լուսահոգի եւ անմոռանալի վեհափառ հայրապետներէ, բոլորանուէր եւ անխոնջ սրբազան հայրերէ եւ վարդապետներէ եւ համբաւատր ու վաստակաշատ ազգային անձնատրութիւններէ որոնց հետ գործակցելու պարիսը եւ հաճոյքը ունեցայ եւ որոնցմէ շատեր դարձած են այսօր յարեհնականութեան բնակիչ, յարգանք իրենց հոգեզմայլ յիշարակին:

Կաթողիկոսարանը առօրեայ զբաղումներու մաս կազմեց: Ան յարուկ աշխարհ մը եղաւ ինձի համար, կեանքի նոր դպրոց մը ուր կրցայ զարգացնել այլապէս սրացած կազմաւորումս:

Այս պահուս թոյլ տուէք որ յիշեմ հնդիկ նշանատր բանաստեղծ եւ գրագէտ Ռասպիւրանաթ Թակորի հետեւեալ մտածումը, «Թունի մէջ էի եւ երազեցի որ կեանքը ուրախութիւն է, արթնցայ եւ նկատեցի որ կեանքը ուրիշ բան չէ եթէ ոչ ծառայութիւն, ծառայեցի եւ միայն այն արեւն հասկցայ որ ծառայելը հաճոյք է»:

Ինչ որ ըրած եմ իբրեւ համեար ծառայութիւն, ըրած եմ համոզումով եւ ուզելով ազգային պարտականութեանս գիրակցութեամբ եւ տակաւին պարբար եւ ծառայելու այնքան արեւն որ կը ինդորոյի ինձմէ եւ առողջութիւնս կը ներէ:

Չար յուզում եմ այս պարգեւատրութեան եւ յարգանքին համար որոնց չէի սպասեր: Այս բոլորը անձիս ընդմէջէն կ'երթան նախ կնոջս որուն ծառայասիրութիւնը եւ համբերատար բնատրութիւնը թոյլ տուին որ յաճախ ցերեկներ եւ երբեմն գիշերներ յարկացնեմ յանձնատրութեանս մաս կազմող այս աշխատանքներուն ապա կաթողիկոսարանի համապարտասան պաշտօնէութեան որոնք իրենց գնահատելի գործակցութեամբ մասնակից դարձան կատարուած աշխատանքին եւ իրագործուած վաստակին:

Չեմ կրնար չյիշել մեր աննման կաթողիկոսները, լուսահոգի Չարեհ, Խորէն եւ Գարեգին վեհափառ հայրապետները որոնց ազգային շունչով սրեղծուած սիրոյ եւ զոհաբերութեան շինիչ մթնոլորտը յարգանք եւ ծառայութիւն կը պարտադրէր բոլորին: Ամէն մէկը իր իրայարուկ նրբազգա-

ցութեամբ, ոճով եւ իմաստութեամբ կը պայծառացնէր եւ բարութք լուծումի կ'առաջնորդէր մեր ազգային եկեղեցական նուրբ հարցերը:

Չեմ կրնար մոռնալ Արամ Կաթողիկոսին ծառայական օրինակը: Արդարեւ շնորհիւ իր վարչական եւ կազմակերպչական բացառիկ կարողութեան, աննկուն կամքին, խորաբաւասաց մտքին, իմաստութեան եւ գոհողութեան ոգիին, ան նոր եռանդ եւ բաւի րոտաւ կաթողիկոսարանի աշխատանքներուն: Ընդլայնեց իր գործունէութեան բնագաւառը: Օրարներուն իսկ ներշնչելով պատկառանք եւ յարգանք մեր ազգային-եկեղեցական արժէքներուն նկատմամբ: Մեր պատմական իրաւունքներուն ծանօթացումը եւ ճանաչումը յարկապէս օրարներուն մօտ իր հետապնդման կարելորդ նպատակներէն մէկը մնաց միշտ:

Շնորհիւ ազգանուէր ազնիւ բարերարներու մեծագումար նուիրատուութիւններուն, ան կաթողիկոսարանը բարգաւաճեցուց նոր կառոյցներով, օժտեց նոր սարքերով, հիմնեց մշակութային նոր ֆոնդեր, դպրեւանքի կրթական մակարդակը բարձրացուց, համալսարանական բարձրագոյն ուսման կարելիութիւնները աւելցուց եւ գործակցութեամբ միաբանակից եկեղեցականներու եւ պատկան ժողովականութեան ծառայութեան նոր փորձութիւն ճշդեց ի սպաս Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցոյ եւ մեր աննման ժողովուրդին:

Փակելէ առաջ խօսքս անգամ մը եւս շնորհակալութիւն կը յայտնեմ վեհափառ հայրապետին մատթելով իրեն քաջառողջ եւ երկար կեանք որպէսզի կարենայ իրագործել իր աստուածահաճոյ ծրագիրները եւ րեսիլքը:

Յաւելեալ բարգաւաճում եւ ծաղկում կը մատթեմ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան որպէսզի առանց խոչնդոյի շարունակէ իր պատմական առաքելութիւնը ի ինդիւր աշխարհացրի հայութեան ամրակուռ պատկանման, մեր եկեղեցոյ պայծառութեան եւ մեր հայրենիքի անսասան գոյարեւման:

Շնորհակալութիւն կը յայտնեմ ամենապատիւ Գասպարեան պատրիարքին, Գերաշնորհ Սրբազան Առաջնորդներուն, բարձրաստիճան եկեղեցական հայրերու, բարձրամեծար Հայաստանի դեսպանին, եւ մեծարգոյ անձնատրութիւններուն որոնք իրենց գնահատելի ներկայութեամբ յաւելեալ փայլք րոտին այս ջերմ հասարոյթին, պատուեցին զիս եւ շեշտեցին այն կարեւորութիւնը որ Կիլիկեան Ս. Աթոռը գլխատրութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի կը վայելէ մեր ժողովուրդին կեանքին մէջ:

Շնորհակալութիւն բոլորիդ

**Ո. ԱՐՉՈՒՄԱՆԵԱՆ**

19-3-2004



Տպարան  
Կարողիկոսութեան Հայոց  
Մեծի Տանն Կիլիկիոյ  
Ամբիլիաս

